61

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Նախապես վորոշված եր Մուրացանի «Հնտիր յերկերը» լույս ընծայել յերեք հատորով։ I, II յեվ III հատորները լույս ընծայելուց հետո Պետհրատը գտավ անհրաժեշտ ժողովածուն ամբողջական դարձնելու նպատակով լույս ընծայել նայեվ IV յեվ V հատորները։

Զորրորդ հատորը, վոր այժմ առաջարկվում ե ընթերցողի ուշադրությանը, ընդգրկում ե հեղինակի «Գեվորգ Մարզպետունի» պատմական վեպը։

Ներկա հրատարակության համար ոգտագործված ե «Գեվորգ Մարզպետունու» 1912 թվի հրատարակությունը։


Խմբագրություն

A 28699



Ա 11 98699

„ԴԵՎՈՐԴ ՄՈՐԶՊԵՏՈՒՆԻՆ“
ԻՐՐԵՎ ՊԵՏՄՈՒԿԸՆ ՎԵՊ



I

«Գևորգ Մարզպետունին» հայ գրականության լավագույն պատմական վեպերից մեկն է:

Լավագույն է այդ վեպը այն իմաստով, որ դա իսկական ժողովրդական պատմական վեպ է: Այդտեղ պատմված է ոչ մի՛ն ժողովրդի կռիվը իր դարավոր ճնշողների դեմ, այլ և հիշնակը պատմելու ժամանակ հիմնականում կանգնած է ժողովրդի տեսակետի վրա, նայում է կյանքին և բնությանը աշխատավորության աչքով: Ճիշ զարմանալի չէ, որ հայ դեմոկրատական քննադատությունը՝ վիսսարիոն ժողովրդայնությունը նկատի առնելով, նրա այդ խոշոր պատմական վեպը համարել է մեր պատմահեղափոխական ստեղծագործության ամենահայրենական նմուշը:

Ի՞նչն էր վեպը տալիս այդ կերպին:

Ամենից առաջ այն հանգամանքը, որ Մուրացանը պատմական կյանքի դեղարվեստական լուսաբանության մեջ էս չոշափել է իր սիրած գյուղացիական թեման.— հողի աշխատավորի կերպանկությունը ազատ քաղաքական պայմանների մեջ: Այդ իմաստով վո՛չ թե նա փախել է իրականության հրատապ հարցերից պատմության խորքերում թաղվելով, այլ ընդհակառակն իր նշանավոր գյուղացիական կերպերի հիմնական գիծերն արդարացրել է «Գևորգ Մարզպետունու» մեջ արծարծված պատմահայեցողության մեջ:

Ճերկրորդ՝ պատմական վեպի մեջ հեղինակը հարատացրել է իր գյուղացիական թեման՝ լայն ժողովրդական հիմքի վրա դնելով դրա լուծման հնարավորությունները: Մասսայական չարժ-

ման ֆոնը վիպասանը տվել է այնպիսի դեղարվեստական մեկնությամբ, որ ընթերցողին համոզի, թե խաղաղ աշխատանքի ապահովության համար անհրաժեշտ է հետևողական պայքար ամեն տեսակի շահագործման և զրկանքների դեմ:

Ճեվ յերրորդ՝ «Գեվորդ Մարզպետունին» դրելուց առաջ Մուրացանը շատ խոշոր ուսումնասիրական աշխատանք է կատարել, նպատակ ունենալով վոչ միայն «դարի վոդին» հարազատությամբ տալու, այլ և մանրամասների մեջ համոզիչ և հիմնավոր լինելու համար: Պատմագիտական ջանասիրությանը տաղանդի թափը միացնելով, վիպասանը կարողացել է ավանդական պատմագրությանը նոր շունչ հաղորդել, վեր հանելով պատմական հոսանքը հիմնականում ճշմարտացի և դեղարվեստորեն շոշափելի ու կոնկրետ:

Գրելով իր վեպը ցարական ռեակցիայի ամենադաժան տարիներում, այսինքն տասնևիններորդ դարի վերջերում, Մուրացանը մեզ վոխադրում է մի դարաշրջան, ուր «Մոնրլաններ ու կաղբեկներ» են շուռ տալիս, և դրանով իսկ ապացուցում է, վոր «ժողովուրդների բանտի» դռները մեկ որ պիտի բացվեն, ինչպես վոր դա տեղի ունեցավ արաբական խալիֆաթի քանդման որերում:

Հենց այդ քաղաքական լավատեսության մեջ է Մուրացանի պատմավեպի բարձր գրական և իդեական արժեքը, մի արժեք, վոր խորապես զգացել է ինքը հեղինակը, զգացել և խանդավառվել է, գրելով իր ստվարածավալ վեպը գրեթե մի շնչով, ապրելով ուժգին ստեղծագործական վերելք:

Ցլորբերը իր «Սալամբոն» դրելու ժամանակ խոստովանել է, թե ժամանակակից կյանքից զզվելով և այն ատելով, ինքը դիմել է պատմական թեմատիկային:

Ի հարկե, Մուրացանն էս դրա չի դեղել իր ապրած կյանքից, և անցյալին դիմելով՝ վորոշ չափով նա իր դժգոհությունը և ատելությունն է յուրց տվել ներկայի նկատմամբ: Բայց, ինչպես վերև էլ ասացինք, սխալ կլիներ դրանից յեզրակացնել, թե նա փախչում է իր ապրած դարաշրջանի ակտուալ խնդիրներից:

Իր դարաշրջանի ակտուալ խնդիրների հետ վաղվելով միայն՝ նա հնար է ունեցել ստեղծելու դրական «գլուխ դործոց», մի հսկայական եպիկական կտավ, ուր պատմագիտական համառությունը մրցում է դրական վարպետության հետ:

Մուրացանն իր ինքնակենսագրության մեջ խոստովանում է, որ ինքը կրավորական դերը մի՛շտ էլ անարժան և համարել դրականության համար: Նա ցույց է տալիս, որ իր բոլոր դրվածքները դրել է «առիթներով»: Ի՞նչն էր հիմնականը այդ առիթների մեջ:— Հիմնականն այն էր, ինչ որ չեչտացինք վերևում,— ժողովրդական հայացք ներկայի և անցյալի վրա, դրա հետ մխասին քննելիք նյութի պատկերացումը ժողովրդի շահերի նկատառումով:

Իր այդ հասարակական կողմորոշումը իրագործելու համար վիպասանը ընտրել է հայոց պատմության ամենադրամատիկական մոմենտներից մեկը, յերբ հայ ժողովուրդը կռվի դրոշ է պարզում ոտար տիրապետության դեմ՝ իր խաղաղ աշխատանքի արդյունքը պաշտպանելու համար հափշտակությունից: «Առևլի» ներկային «սերբելի» անցյալը հակադրելով, Մուրացանը իր իդեալիզացիային տալիս է խոր կրթական, դաստիարակչական արժեք, խրախուսելով պատմական լավ օրինակից դաս առնել ներկայի համար: Գուցե «պահպանողական» հեղինակը նման հրատակ նպատակադրում չի ունեցել. բայց նրա տաղանդը ավելի բան է տվել, քան սոսկ նրա անձնական մտադրումը:

Գերմանական ռոմանտիկների մասին Ֆ. Մերինգը դրել է, թե նրանք չկարողանալով դիմադրել Նապոլեոնի լծին, սկսել են թևաքել իրենց յերևակայից և որհնելով մի՛ջնադարը, նրա արժեքները:

Բայց մենք դիտենք, որ այդ ռեակցիոն ռոմանտիկների հետ միասին յեղել են նաև առաջավոր ռոմանտիկներ, որոնք հակադրվել են առաջինների կրավորականությանը, անպատուղ նեռանձնացմանը և աշխատել են ուժեղացնել մարդու դիմադրական զորությունը տիրող վարդերի և չհադրծման դեմ:

Ցեթե Մուրացանի «Գեվորդ Մարզպետունու» մեջ կա վորոշ ռոմանտիզմ,— դա, անպայման, «ակտիվ ռոմանտիզմ» է, որի մասին այնքան դովասանքով է խոսել Մ. Գորկին, ինքն էլ յերիտասարդության տարիներում տուրք տալով դրան:

Բայց պատմական վեպի ժանրը վո՞ր չափով է ողնել հեղինակին իր առաջադիր նպատակը իրագործելու համար:

Գրականության տեսության մեջ շատ մեծ վեճեր են յեղել այդ ժանրի շուրջը: Նույնիսկ այսօր, մեր խորհրդային գրականության մեջ այդ վեճերը առկա չեն, և կան մտդողներ, որ այդ ժանրի ինքնուրույն գոյությունը կասկածելի չի:

Այդ վիճի այս կամ այն ձեվի լուծման համար խոշոր դեր կարող է կատարել նաև հայ դրականության պատմավերլուծական ստեղծագործությունը, և հատկապես Մուրացանի «Գևորդ Մարզպետունին»:

Մենք ունենք մեր ձեռքի տակ Մուրացանի պատկերագրած պատմական դարաշրջանի մի քանի դրավոր վավերաթղթերը— հայ պատմիչների աշխատությունները: Կամենալով դաղափար տալ ընդհանրապես արաբական տիրապետության մասին՝ վիպասանը դիմավորապես ոդտագործել է Ղևոնդ Ցերեցին, Հովհաննես Դրասխանակերտցուն և Թովմա Արծրունուն: Այդ պատմագրերի մոտ պատմությունը տրված է հանդիսավոր կերպով. դրանց մոտ բացակայում է ամենօրյա, սովորական, առանին կենցաղը: Մուրացանը հրաժարվում է պատմել պատմական տկլոր փաստերը. նա մասնավոր, սոսկական մարդկանց շրջապատի մեջ է մտցնում այդ փաստերը, աշխատելով տալ դրանց նեղրին կողմը, աստառը: Աչոտ Ցերկաթը հանդես է գալիս ո՛չ միայն պատերազմի դաշտում, ղորահանդեսների և պալատական ընդունելությունների ժամանակ, այլ և իրրև սովորական մահկանացու, ամուսին, սիրահար: Բայց դրա հետ միասին գործող անձերը սովորությունների, վարք ու բարքի շրջապատում են դուրս տրվում վիպասանի կողմից, այդ կերպ ստեղծելով «դպրի վոդին» կամ կոլորիտը: Հեղինակը ոդտվում է պատմական դիմությունից, բայց դա առաջին քայլն է. այդ դիտությանը զուգրվեստական հագուստ հագցնելը— սա էլ յերկրորդ քայլն է: Վերջին այս հանդամանքը մեզ հնար է տալիս պատմության մասին ավելի կոնկրետ դաղափար կազմելու, քան հիշյալ պատմիչների տված. վո՛չ միայն դաղափար ենք կազմում մտավին, այլ և նկարագրված անցքերին, ասես, ներկա յենք լինում իրրև ժամանակակիցներ, դեպքերին մասնակիցներ: Այս մասնակցությունը հնարավոր է դառնում նրանով, որ հեղինակը կարողանում է տալ դարի արոմատը, վոդին, հերոսներին պատկերացնում է, տեղափոխվելով նրանց ապրած դարաշրջանը, նրանց մտավոր և զգացական աշխարհը:

Գեղարվեստական նկարագիրը պահանջում է նախապես դիտական ճիշտ ուսումնասիրություն: Ուսումնասիրելով Մուրացանը արժեքավորել և դնպքերը, այսինքն ցույց է տվել, թե դրանցից վո՞րը ժողովրդի ոդտին և ծառայել, իսկ վո՞րը— ընդհակառակ: Ուրիշ խոսքով՝ նա ճիշտ պատկերացնելով անցյալը

աշխատանք և ծառայել նպատակին ոչ թե հնարավորություն ստանալով պատմական ֆոնը կենդանացնելու իր ժամանակաշրջանի շնչով:

Այդ բոլորը նկատի առնելով, մեզ համար պարզվում է պատմական վեպի ինքնուրույն դոյության խնդիրը: Բայց դա խնդրի մի կողմն է: Ինչպես ճիշտ կերպով նկատել է Մայակովսկին «վեպերը ժանրի մեջ չեն, այլ նրանում թե՝ յերբ ի՞նչ ժանր և հարկավոր»:

Այդ նկատառով Մուրացանը շատ տեղին և ժամանակին բանեցրել է այդ ժանրը, մասսայական շարժման միջոցով կոնկրետացնելով իր աշխարհայացքը, տվյալ դեպքում՝ իր պատմության մեկնաբանությունը կամ պատմահայեցողությունը:

II

Մուրացանի պատմահայեցողության մեջ արժեքավորը մեզ համար այն է, վոր նա պատմական իրադարձությունների վրա նայում է ժողովրդի շահերի տեսանկյունից:

Նկարագրելով ֆեոդալական Հայաստանի ընդհանուր վիճակը, նա վճռական դատապարտել է իշխանության համար մղվող կռիվները արյունոտ սարսափները, վորոնց մեծ մասամբ յենթակա յեր հողի և արհեստի աշխատավորը, վորոնցից մեծ մասամբ տուժում, զրկանքներ եր կրում վերջինս: Ճորտատիրական պայմանները վողջ զարգացությունը յերեկում և մանավանդ այն յերեք դեպքերում, յերբ «փառքի ճղտող» ճորտատերերը մասնակից անխնա կերպով զոհեր են առնում և այդ զոհերի գնով «բարձրանում»:

Ճիշտ է, Մուրացանը այդ զոհերի դժգոհությունն ուղղել է մեկին և յերեք «արտաքին» թշնամու դեմ, աչքաթող անելով «ներքին» դասակարգային թշնամու դեմ ընդվզումները, բայց և այնպես վորոշ և հեղինակի բացասական վերաբերմունքը դեպի հակաժողովրդական իշխանությունը՝ լինի դա «հայրենի» թե «տարբ—ալիևնություն է: Նա ժողովրդասիրական իշխանության կողմնակից է: Ներա մոտ, ինչպես և Ղ. Աղայանի մոտ, իշխանավորը լավ է, յերե բարեդործ է: «Ամեն կարոտյալ» դիմում է Հայկանուշին (Ղ. Աղայանի «Տորք Անգեղ» պոեմում): Նույնպես և Մուրացանի ժողովրդասեր իշխան Մարզպետունին դործում և հաշվի առնելով նաև, թե վորչափով պիտի ոգտվին իր ձեռնար-

կումներից «կարոտյալները»: Նա վորքան հակառակ է խալիֆաթին, վոստիկաններին, նույնքան էլ խաղաղ արաբական ժողովրդի բարեկամն է: Աստղ չուզե, վոր վեպի հերոսը իր այդ ժողովրդասիրությամբ շատ ավելի արտահայտում է հնդկական պատմահայեցողությունը, նրա պահանջը իշխանությունից, քան որևէիցէ պատմական տիպիկ իրականությունը, ուր Մարդպատունիները անպայման բացառիկ յերևույթ էին ներկայացնում:

Ժողովրդի չհավերի տեսանկյունից նայելով պատմության վրա, Մուրացանը իր պատմավեպի մեջ դրել է հայերի և հարևան ազգերի փոխհարաբերության խնդիրը: Մեր ժողովրդական եպոսը՝ «Սասունցի Դավիթը» ցույց է տվել, թե արաբական խալիֆաթի դեմ կովկասյան ժողովուրդները կռվել են միահամուռ ուժերով: Մուրացանի պատմավեպի մեջ կա դրա արձագանքը: Հայերը ոգնում են վրացիներին, իսկ վրացիք հայերին՝ արաբների դեմ միասնական ճակատ կազմելու: Հաղթանակ տանելուց հետո ժողովուրդը վայելում է իր հաղթանակի պտուղները: Մուրացանը պատմում է, վոր հայերի և հույների միացյալ ուժի առաջ տեղի չեն տալիս արաբները: Դրանից հետո, ինչպես վկայում է վիպասանը՝ «մեր աշխարհը կրկին խաղաղեց, ժողովուրդը շունչ առավ, արաբն ու այգինները կանաչեցին, յերկիրը բերքերով լցվեցավ և մարդիկ սկսան վո՛չ միայն առօրյա հանգստություն վայելել, այլ և ուրախության տոներ կատարել»: Այդպես է նաև Հովհ. Թումանյանի մշակած «Սասունցի Դավիթ» II մասի սկիզբը. ժողովուրդը հաղթանակ տանելուց հետո սկսում է ուրախության տոներ սարքել...

Մուրացանի մոտ ժողովուրդը կռվում է ինքնապաշտպանության նպատակով. վորևէ նվաճողական նպատակ նրան խորթ է: Նույնիսկ արաբական վոստիկանը խոստովանում է, թե հայ ժողովուրդը «խաղաղասեր բնավորություն ունի»: Ժողովուրդը վո՛չ միայն պաշտպանում է իր արդար դատը, այլ և նա ոգնում է հարեվանին, ոտարին, ազատության համար կռվողին, յեթե վերջինս դիմում է նրա ոժանդակության: Մուրացանը հաճույքով պատմում է, վոր մեր ժողովուրդը սիրով ընդունել է հռոմեական բռնակալության դեմ դուրծող Աննիբալին և նրա ռազմական տաղանդից ոգտվել է իր ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար:

Վորքան հայ ժողովուրդը սիրում է ազատության համար կռվողներին, այնքան էլ նա ատում է ազատությունը խեղդող

նների: Վերև մենք տեսանք, որ հայ ժողովուրդը կամ նրա հերոսը խաղաղ ապրող արաբ ժողովրդի դեմ մոչ մի թշնամություն չեն տածում: Բայց նույն ժողովուրդը ատում և արհամարհում է բռնակալներին, վատերին, որոնք կրակով և սրով հաստատում են իրենց բռնությունը, նյութական վնասներն հետ միասին դործում են բարոյական ավերածներ, դարձնում են կռանից, տանջում են անպետ դյուղացիներին: Ճիշտ այնպես վիպասանը վատերից մեկին «ժողովրդի դաղան» է անվանում, որը չենք բողոքում նրա դեմ, որովհետև նրա ներքին հոգեբանական հատկությունները հետևյալ չարիքներն են դործում. «Ով է մի դեղեցիկ կին կամ աղջիկ չաղատվեցավ նրանց ձեռքից. պատանիները մայրերին սպանում էին աղջիկներանց առաջ, հայրերին՝ որդիների առաջ. առնում կանանց դրկից հափշտակում էին ծծկեր յերեխաներ և դետին խփելով ջախջախում... ամեն տեղ արյուն, ամեն տեղ կրակ և պղծություն, անկյուն չկար, որ ազատ լիներ այդ հրեշների արհավիրքներից...»:

Դժվար է Մուրացանի այդ խառացրած նկարագրի մեջ մեծ չափազանցություն տեսնել. հիմնականը ճիշտ է. այդ մասին վկայել են մոչ միայն հայ, այլ և արաբացի պատմիչները: Վերջիններս խոստովանել են, որ արաբական հեծյալների սրբակիների առաջ ավերակ էր դառնում Հայաստանը, փշանում էին մարդաշատ վայրերը, ծաղկած այդիներն ու դաշտերը: Այդ պատմիչներն, մեկը՝ Բալաձորին վկայում է, որ արաբական վոստիկանները հարկերի հետ միասին դերում էին «անվահեր, աչագին և վոչնչակազմ» կանանց: Հայ պատմագիրներից՝ Ղևոնդը տալիս է հարկահավաքության նողկալի ձևերն նկարագրելը, որ՝ սրանք՝ ամեն մի հարկատվի վզից արճճե համարակալած հինգ կտավներ էր և այլն:

Այդ բոլորն, ի հարկե, ցասում պիտի առաջ բերեր ժողովրդի մեջ և նա պիտի ընդվզեր իր ազատությունը բռնաբարողների դեմ: Մարքսը ուսա ժողովրդի պատմության պայծառ եղևրից մեկն է համարել մոնղոլների դեմ ընդվզումը: Հայ պատմությունն էլ այդպիսի մի պայծառ եղ ունի. դա հայ ժողովրդի հպումն է իր ազատության համար, որ նյութ է տվել նաև մեր հանճարեղ նկարչին:

Բայց Մուրացանի պատմավեպի մեջ միայն և յեթե արաբացի իշխանները չեն մերկացված, այլ և չեչտված են հայ իշխանների ազազակող պակասությունները, չեչտված և այն ճշմարտու-

թյունը, վոր հաճախ հայ և արաբ տիրապետողները միացել են՝ ժողովրդի դեմ մի ֆրոնտ կազմելով: Որինակ. Ծուռուֆ վոստիկանի հետ միանում է Գագիկ Արծրունին...

Մուրացանը պատմելով այդ մասին մի կծու ակնարկ և անում հայ յեկեղեցական պատմագրության հասցեին, առանձնապես հիշատակելով, վոր Թովմա Արծրունի պատմիչը գովել է դավաճան Գագիկին: Պալատական նման պատմիչներին ծաղրել և Նաև Պուշկինը իր «Գավրիլիադայի» մեջ՝ նրանցից մեկին հեղնորեն անվանելով придворный историк:

Մուրացանը հակառակ և այն կարծիքին թե մի քնաստարը քնաածության չորյան և յեղել· նա ցույց և տալիս, հակառակելով մի քանի ուսումնասիրողների, թե՝ քնաածությանը խանգարող հանդիսացել և ժողովուրդը, վոր պաշտպանել և իր իրավունքները, և վոչ թե «նոր ծագող բուրժուական հարաբերությունները», ինչպես պնդում են Պոկրովսկու կողմնակիցները, վորոնք պատմությունը ամբողջապես մոդեռնիզացիայի յենթարկելով, գրկում են անցյալը յուրահատկությունից, առարկայական արժեքից:

Մուրացանի պատմահայեցողության մեջ հիմնական խնդիրներից մեկն և անհատի դերը պատմության մեջ; Այս հարցում վիպասանը բավական աղճված և յերեվում նարոդնիկական աշխարհայացքից: Չնայած իր ժողովրդասիրության՝ նա վճռական դեր և նշանակություն և տալիս «ընախաձեռնող փոքրամասնության», հաճախ Մեկին, վոր ունի կամք և անսակաց վճռականություն իր մտադրությունը իրագործելու համա : «Քննադատորեն մտածող» այդ Մեկի առաջին պլանի վրա քաշելը՝ Մուրացանի կամքից անկախ՝ մասսային դրել և հետին պլանի վրա, դերազնահատելով անհատի դերը պատմության մեջ: Մուրացանի մոտ, ինչպես և Պ. Լավրովի «Պատմական նամակներից» մեջ, պատմության շարժիչ ուժը անհատական նախաձեռնությունն և. դաղափարը ծագում և մի անձի գլխում, հետո սկսում և դա տարածվել և վարակել մյուսներին: Մուրացանը նույնպես ապացուցում և, վոր «մի ծաղկով գարուն կլինի», ընդդեմ ժողովրդական մտայնության, վոր հակառակն և պնդում:

Մուրացանի այդ ինդիվիդուալիզմը մենք նկատում ենք նաև Բաբենի մոտ, վորի համար՝ կարևորը մարդկային կամքն և, սրա դրոշմը պատմության վրա: Լավ են ասել թե՝ դերմարդի մասին շատ են խոսում այն հասարակության մեջ, ուր սովորական

մարդը չափից դուրս աննշան և դատելի: Մուրացանի պատմահայեցողության մեջ, անշուշտ, մանր բուրժուական նեղ հայեցողության տարրեր կան, որ նա չի կարողացել վերջնականապես հաղթահարել:

Մուրացանի պատմահայեցողության մեջ մի ուրիշ թերությունն այն է, որ նա որոշ դեպքերում չի կարողացել հաղթահարել ազանդական պատմության մի քանի ըմբռնումները, և կարողացել լուսաբանել որոշ «դավաճանությունների» սոցիալական ստատուսը և յեկեղեցականության հիմնականում դրական դերը և վերագրել: Այնուհետև պետք է հիշատակել, որ նորալները, ասես, ճշնական կյանք են վարում. հեղինակը չի տալիս տիրողների պարազիտական այլասերման նմուշներ, նրանց ապրանքանքները, ցոփությունը: Մի տեղ միայն Թոռոցիկ կպատմի հիշատակում և թե Գագիկը իր հյուրերի համար սարքեց «զվարճալի խրախճանքություններ, համեմված ճոխ հայկաբույժներով և դուռանական յերգերով» ու կայթերով: Հեղինակը պնդում է, բայց մենք չենք տեսնում այդ բոլորը: Մուրացանի դրիչը, որ իր «Հարուստները զվարճանում են» վիպակի մեջ դրեթե նատուրալիստական կտավ է նկարել, «Դեվորդ Մարդ» մեջ չատ վողջախոհ է և դրեթե ռեալիստական, ինչպես և՝ Շերենցը իր պատմավեպերում:

Վոչ միայն հայ, այլ և ուրարտցի ֆեոդալները հանդես են տալիս միևնույն հանդուգնության մեջ, նրանց ներքին, ընտիր կյանքի ստորադասությունը շատ քիչ է բուրժուացնում հեղինակը: Վերջինս, ոգևորված, ասում է. «Ուրարտացիք մի առաջմամանակ սկսան անհոգության տալ ինքնց և կերուխումով զվարճանալ»: Այս դեպքում էլ պնդումը կա, բայց հաստատումը բացակայում է: Այս բոլորը ասելով, մենք, ի հարկե, չենք մոռանում Աշոտ Երկաթի բնաոնական արարելության, նրա անհամատարմությունը, և այլն, որ համեմատ դեպս դուռ միջնադարյան կամ ֆեոդալական յերևույթ չեն: Եթե, պետք է ասենք, «Դեվորդ Մարդիկեան» վիպակ հատարակական արժեքը չի կարելի տեսնել այդ ըմտանեկան դրամայի մեջ, որին հեղինակը տվել է այնքան տեղ և նշանակություն: Եթե դա չէ, ապա ո՞ւր պիտի փորոնել այդ արժեքը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈՔՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈՒՆ ԱՄՓՈՓՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

«Գեվորգ Մարզպետունի» պատմավեպի հասարակական արժեքի մեխը— դա ազգային ճնշման դեմ բողոքն է:

Արաբները վողջ Հայաստանը և հարեվան յերկրները դարձրել էին կատարյալ մի բանտ: Արաբական պետության վոչ արաբ ժողովուրդները լիովին իրավազուրկ էին, յենթարկվում էին ամեն տեսակ զրկանքների ու վիրավորանքների: Տիրապետողները հպատակների նկատմամբ տածում էին արհամարհանքի զգացմունք: Վորպեսզի արաբական տիրապետության տակ դտնվող ժողովուրդները իրար հետ չմիանան և մի ճակատ չկազմեն հափշտակիչների դեմ, արաբացի դիվանագետները լարում էին ազգամիջյան հարաբերությունները, վախենալով ազգային–ազատագրական շարժումներից, վորոնք առաջ էին գալիս հաճախ տարերայնորեն, յերբ այլևս անհնար էր լինում տանել դարշելի լուծը:

Ահա՛ հենց դրանումն է Մուրացանի պատմավեպի հասարակական–քաղաքական արժեքը, այսինքն այն պայքարի մեջ, վոր տասներորդ դարի առաջին քառորդում և մի վոտքը եվ ուշ՝ հայերը մղել են ոտարերկրյա բռնակալական լուծի դեմ, աշխատել են ազատվել դրանից և սեփական քաղաքական, կուլտուրական կյանքը ազատորեն, անկաշկանդ տնօրինել:

Արաբական տիրապետության շրջանի հայ պատմիչները նկարագրել են մի շարք ապստամբություններ արաբական լծի դեմ: Նրանք բավմաթիվ վիճաբերով ցույց են տալիս, վոր ապստամբությունները ծայրահեղ շահագործման և կեղեքման հետևանք էին: Ղեվոնդ պատմագիրը հիշատակում է, թե՝ ապստամբները գլավ համարեցին քաջարար մեռնել, քան տեսնել վտանգավոր կյանքով»: Ապստամբությունները, միշտ էլ լայն մասսայական բնավորություն են կրել, վորոնց մասնակցել են նույն պատմագրի վկայությամբ «բազումք ի ոամիկ ժողովոց»:

Ահա հենց այդ ոամիկների ցասումը ոտարերկրյա տիրապետության դեմ կազմում է Մուրացանի պատմավեպի գաղափարական հենքը:

Բայց վիպասանը, ի հարկե, հասկանում եր, վոր հայ իշխաններից վոմանց շահերը շատ ավելի ներդաշնակվում էին արաբական տիրապետների, քան ժողովրդական ապստամբության հետ: Այդ դեպքում Մուրացանը մերկացնում է տիրապե-

Ազգային-ազատագրական շարժումը ,,Հայոց Մարտիկներ,, միջուկը դարձնելով, լուրջ ազդեցություն էր ժողովրդի շահերը և հանգեպ է բերել իր գեմոկրատական կենսագործունեությունը:

Ժողովրդի տեսակետից ճակատագրական կյանքին վիպասանը ,,աշխարհի համար բեռ,, է համարում ժողովրդի բշնամիներին: Նրա համար ճշմարիտ ՀՅՈՒՆ չունի ազգային պատկանելիություն: Օրինակ- սարսափելի ցավի համար, որ այնպես ցնցող կերպով նկարագրել է ժամանակակից պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին, լուսրացանը մեղադրում է ըե Օսար և ըե հայ տերապետներին: Ահա ըե ինչ է գրում նա- ,,Ամբողջ երկու տարի քուն հայաստանը կռվի և արյան գետ էր դարձած, քաղաք այգ ժամանակ գյուղացիք վարել, ցանել և հնձել էլին կարողացել: Եվ ինչպես կարող անային, քանի որ գաշտ ու ձոր, լեռ ու անտառ հազարացի դարքերով ու հեղուկներով էին քոնված, իսկ ազատ անկյուններում էլ հայ զորքերն էին միմյանց կտտրում, հայ իշխաններն իրար ջնջում: Այս պատճառով երկրագործները ցրվեցան, այգիները ու գարմտատները անխնամ մնացին, ժողովրդի վերջին պաշարը վայրկենի զարքերը սպառե-

ցին և սովն իր զարհուրելի հետևանքներով բըռնացավ Հայաստանի մեջ,,:

Աշխարհի համար բեռ եղողներին տեսլով, Մուրացանը շերմ սիրով սիրում է հայրենի բնությունը և այդ բնության մեջ ապրող ժողովրդին: Ինչպես և Հովհ.Թումանյանի մոտ Մուրացանի հայրենասիրությունը հակադրում է մեր երկրի գեղեցիկ բնությունը և այդ բնության մեջ ապրող ժողովրդի թշվառությունը.

Ով քաց աչքով ես տեսնում եմ
Հայրենիքըս ճաշկավետ.
Այն հեռ երկրից ես լսում եմ
Անհոգ ծիծաղ լացի հետ ...

,,Ինչպես դեղեցիկ, ինչպես հրաշալի է մեր երկիրը,- ասում է Մուրացանը,- ինչու, ինչու չենք կարողանում հանգիստ սրտով ապրել այստեղ. ինչու անիրավ ճակատագիրը հալածում է մեզ,,:

,,Լքյալ և աննօգնական, որքան գեղջուկ ժողովուրդը,, - վիպասանը այդ խոսքերով ցուցց է տալիս, թե ճաշկավետ բնության մեջ ով է լաց լինում: Դակ, իհարկե, ծիծաղում են աշխարհի համար բեռ եղողները: Քայց ազգի հիմքը, միշտուկը դրանք չեն. նրա սիրած հերոսը պնդում է. ,,Ես պիտի ապացուցեմ, որ ամրացների և իշխանական ղո-

րութեան մեջ չի ամփոփում հայրենիքի ուժը, այլ նրա որդիների անձնվիրութեան մեջ,,...

Մուրացանը ղեպքերից ազնվագույնը համարում է սերը դեպի հայրենիքը:

Մտալինը հարց է տվել, թե ինչ է ազգությունը: Իվ պատասխանել է – դա մի պատմականորեն ճապաձ հանրութիւն է լեզվի, տերիտորիայի, տնտեսական և հոգեկան կյանքի, որոնք ի միասին արտահայտում են կուլտուրական համակենցաղ: Այս գծերից մեկը հանել կամ այս գծերից միայն մեկի վրա հենվել /ինչպես անում է Օատո Բաուերը՝ հոգեկան գիծը միայն/ – դա արդեն նշանակում է ազգությունն չլինել:

Մուրացանի պատմավեպում հայ ժողովուրդը կատաղի կերպով կռվում է իր ազգության գործոնները պաշտպանելու համար: Շատ սուր կերպով վիպասանի մոտ տրված է տերիտորիայի հարցը.

,,Հաջարացին իրավունք չունի այս երկրի վրա մի հափշտակիչ է, մի ավազակ է: Այն հայը, որ տիրապետ է անվանում նրան՝ մի գավառան է. իսկ գավառացին իրավունք ունի մեռցնել առաջին պինվորը, ուռաց արդարության դեմ մեղանչելու ... Հայոց երկիրը հայերին է պատկանում ... Աստքացին պիտի էշխի Ադաբիայում և ոչ թե հայոց երկրում,,:

ցին և սովն իր զարհուրելի հետևանքներով բըռնացավ Հայաստանի մեջ,,:

Աշխարհի համար բեռ եղողներին տեսլով, Մուրացանը շերմ սիրով սիրում է հայրենի բնությունը և այդ բնության մեջ ապրող ժողովրդին: Ինչպես և Հովհ.Թումանյանի մոտ Մուրացանի հայրենասիրությունը հակադրում է մեր երկրի գեղեցիկ բնությունը և այդ բնության մեջ ապրող ժողովրդի թշվառությունը.

Ով քաց աչքով ես տեսնում եմ
Հայրենիքըս ճաշկավետ.
Այն հեռ երկրից ես լսում եմ
Անհոգ ծիծաղ լացի հետ ...

,,Ինչպես դեղեցիկ, ինչպես հրաշալի է մեր երկիրը,- ասում է Մուրացանը,- ինչու, ինչու չենք կարողանում հանգիստ սրտով ապրել այստեղ. ինչու անիրավ ճակատագիրը հալածում է մեզ,,:

,,Լքյալ և աննօգնական, որքան գեղջուկ ժողովուրդը,, - վիպասանը այդ խոսքերով ցուցց է տալիս, թե ճաշկավետ բնության մեջ ով է լաց լինում: Դակ, իհարկե, ծիծաղում են աշխարհի համար բեռ եղողները: Քայց ազգի հիմքը, միշտուկը դրանք չեն. նրա սիրած հերոսը պնդում է. ,,Ես պիտի ապացուցեմ, որ ամրացների և իշխանական ղո-

րութեան մեջ չի ամփոփում հայրենիքի ուժը, այլ նրա որդիների անձնվիրութեան մեջ,,...

Մուրացանը ղեպքերից ազնվագույնը համարում է սերը դեպի հայրենիքը:

Մտալինը հարց է տվել, թե ինչ է ազգությունը: Իվ պատասխանել է – դա մի պատմականորեն ճապաձ հանրութիւն է լեզվի, տերիտորիայի, տնտեսական և հոգեկան կյանքի, որոնք ի միասին արտահայտում են կուլտուրական համակենցաղ: Այս գծերից մեկը հանել կամ այս գծերից միայն մեկի վրա հենվել /ինչպես անում է Օատո Բաուերը՝ հոգեկան գիծը միայն/ – դա արդեն նշանակում է ազգությունն չլինել:

Մուրացանի պատմավեպում հայ ժողովուրդը կատաղի կերպով կռվում է իր ազգության գործոնները պաշտպանելու համար: Շատ սուր կերպով վիպասանի մոտ տրված է տերիտորիայի հարցը.

,,Հաջարացին իրավունք չունի այս երկրի վրա մի հափշտակիչ է, մի ավազակ է: Այն հայը, որ տիրապետ է անվանում նրան՝ մի գավառան է. իսկ գավառացին իրավունք ունի մեռցնել առաջին պինվորը, ուռաց արդարության դեմ մեղանչելու ... Հայոց երկիրը հայերին է պատկանում ... Աստքացին պիտի էշխի Ադաբիայում և ոչ թե հայոց երկրում,,:

Մուրացանը մեկից ավելի անգամ շեշտում է իր պատմվածքի մեջ, թե ժողովուրդը հակառակ է օտարին հնազանդելու և նրան հարկ տալու անխորհուրդ մտքին: Օտարին սիրաշահելու խորհուրդը ֆեոդալների շահերից էր բխում: Որևէ իշխանի նախանձ գահը պահպանվում է արաբական սրի օժանդակությամբ և հասկանալի է, որ բարերարված տիրապետը պետք է երախտապիտությանը զգացմունք արթնացնի խալիֆաթին՝ նրան ,,ներեր,, ուղարկելով, իսկ ժողովրդական ապատամբությանը ժամանակ արաբներին օգնելով: Հայ պատմիչները արձանագրել են նաև բազմաթիվ նման փաստեր: Նշել են ապատամբություններ, որոնք ճնշվել են հայոց ստանի տիրող դասերի դավադիր աջակցությամբ: Ժողովուրդը ճառացել է ոչ միայն զրսի, այլև ներսի շահագործողների դեմ: Նվ ահա, երբ պաշտոնական գրականության մեջ առիթված են եղել խոսել նման ընդվզումների մասին, պատմիչներից ոմանք /օրինակ՝ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը, որին ճաղրել է Մուրացանը իր պատմվածքում/ ղեկավարներին ,,դավաճան,, են անվանում, ինչպես բազրատ բազրատունուն, որ ,,անհավատ,, է կոչվել՝ կաթողիկոսի դեմ ելույթ ունենալու պատճառով:

Այդ քոլորը նկատի ունենալով՝ Պուրացա-
նը իր վեպի վերջաբանում արդարացի կերպով
գրում է. ,,Այն գեղջուկի խրճիթները, այն ան-
շքան տնակները, որոնց մեջ ապրում են ցնցոտի-
ներով ծածկված մանկտիք և որոնց շատ սեզամ ար-
համարհում են մեծամեծ իշխանները, նուլյնիսկ
գրանք են, որ ամփոփում են իրենց մեջ հայրենի-
քի ուժը,,:

Այդ մեծանուն իշխանների շարքումն են
դասում նաև հոգևորականները, որոնց գեկավա-
րին մտրակել է Պուրացանը իր այս վեպի մեջ,
նրան մեղադրելով էգոիզմի և մոլեռնպաշտության
մեջ: Վիպասանը ցուցցի է տվել նաև, որ հայ
նկեղեցին միշնադարում եղել է ֆեոդալիզմի
դասակարգային հիմնարկություն. Քազմվորները
են նշանակել և հեռացրել կաթողիկոսներին, կեղ-
ծելով ինչ որ ,,համազգային ընտրություն,,:
Նույն դարաշրջանում հորինված մեր մեծադույն
ազգային էպոսի — ,,Սասունցի Դավթի,, մեջ ևս
հոգևորականությունը հանդես է բերված հիմնա-
կանում բացասական գծերով: հոգևորականը մատ-
նիչ է և դավաճան. փոքր մհերին մատնություամբ
թշնամիների ձեռքն է ձգում վանքի մի վարդապետ,
մհերը խիստ պատժում է նրան և վանքը վերանվա-

նում պատնեշներ: Ինչպես հայ ժողովուրդը իրավացի կերպով հոգևորականին ևս մարդ է անվանում: Այդ ևս մարդկանց շատ լավ է ճաշակել մեր 17-րդ դարի տաղանդավոր բանաստեղծ Նաշաշ Հովնաթանը.

Տիրացուն քանց ժողովուրդ շատ,
Չի ճանաչիլ գրած գիրն ...
Աղքատ մեռելին խոտովին
Հարստին վրա ժողովին:

Շատ հետաքրքրական է մի հանգամանք. Ինքնեղը ցույց է տվել, որ Բաղդասը իր սիրած արիստոկրատներին մերկացրել է հզոր տաղանդի շնորհիվ: Դույն քանը կարելի է տալ ,,պահպանողական,, Մուրացանի մասին — նրա մոտ հոգևորականությունը ծաղրված է և նրա ծաղրը ավելի համոզիչ է, քան երբեմն թքով կպցրած գովաբանքը, որ այնպես հիմնավոր էր, ինչպես մտրակումը: Մուրացանի տաղանդը նրան խոսել է տվել ժողովրդի ոգով, նրա մեջ առաջ բերել հպարտության զգացմունք դեպի մեր հարուստական անցյալը և դրա հետ միասին այդ անցյալի արատների նկատմամբ խարանելու կարողություն:

Պատմական անցյալի մեջ ժողովրդական հերոսներ որոնելով, վիպասանը մի հայտնի չափով հակա-

դերվել է իր ժամանակվից բուրժուական կյանքի մանրուքյանը: Գագոլը ասել է թե՝ ,,Ծարաս բուլբաքին պիտի լսել, ես հանգստացել եմ: Ըմեն հոգեվարքյան մեջ է գտնվում նաև լրագրությունը, որի խանգավառությունը նկատելի է և նույնիսկ ընթերցողի համար՝ վտանգիչ: Օրինակ. ճնշողների դեմ պատերազմը միշտ լուսնդ է հանում լրագրության ոգին: Ըմ, իհարկե, պիտե, որ պատերազմը ,,արհավիրքներ,, է բերում, բայց դրա հետ միասին արոմ ձեռք բերած երջանկությունը գերազանցում է առըկանան սակրությունից: Հաղթանակից հետո ,,շինականը ազատ արտաքրում ու սերմանում էր ոտը, այգեպանը՝ դարմանում էր ագրեները, պարտիզպանը՝ իր ծառերը, առանց երկյուղ կրելու թե՝ ահա մի որևէ անակնկալ հարձակում կսվերե, կոչնչացնի իր նեղության և քրտանց արդյունքները,,: Երկյուղի այդ բացակայությունը բնականոր կյանքի հիմքն է ըստ լրագրության: ,,Ապատնցի դավի,, մեջ ևս բացատկան է մեր ժողովրդի վերաբերմունքը շահագործական պատերազմի դեմ: Սարդ մեկնիքի դարքի ծերունի պինդարը շանշափել քննադատության է ենթարկում այն հարկագրական միջոցները, որոնցով հավաքագրել են մարդկանց. գինվորները հարկադրված են եղել դալ, տանը թողնելով սուաճ

պի ինքը, դեպի իր ուժերը: Այդպես օպտիմիստորեն
ես միայն օպտիմիզմ է, այլև առողջ հավատ դե-
զա էլ ամենայն հավատ ունի
հան երանդավորում — ,,Սիրը ընկերով հարատևիք
է,, ասում է մեր ժողովրդական իմաստուն առածը:
իր լավատեսությունը կարողացել է տալ ժողովրդա-
պատմությունը, ուստի և նրա
ժողովրդի վերջնական հաղթանակին,
Ցանկացողը երգում է ինքնապաշտպանության պայքարը
հափշտակիչների դեմ: Իսկ նա ամուր հավատ ունի
ցանը երգում է ինքնապաշտպանության պայքարը
Շահագործական պատերազմը ժխտելով, մուրա-

երեխաներ, վար ու ցանք ...

են տվել, որ քանակությունից առաջել են նաև հա-
պատմի էջերը և թե հայ ժողովրդական վեպը ցույց
են տվել և լուսաբանել հանգեցք հարցը։ Թե հայ
համար շատ կարևոր է նաև այն, թե ինչպես է
Արարատյանի հատուկանական աշխարհագրի
լուծել հայերի դատը արաբացիների դեմ, այն-
շուշան, Արարատյանը հասկանալ էր տալիս իր ժա-
մանակակիցներին, թե՝ ժամանակավոր է ոչ միայն
միջնադարյան աշխարհակալությունը, այլև ներկա
ցարտական իմպերիալիզմը իր մոդեռն սատրապներով,
ինքնաթռիչքներով, ներանգազեներով և ատոմական
սեռներով...

Պատմական իրադարձությունների այդ լավա-
տեսական ելարտագրությունը Արարատյանի պատմավե-
պի հարիզոնն ընդլայնում է և այն զարձնում
ավելի լայն և ներուժ, հիմնականում չմնալով
խորհրդային ընթերցողի տրամադրության և հե-
տաքրքիր, թե ինչպես իմպերիալիզմն ևս պի-
տի վերջանալի։ Այսպես տեղին է հիշեցնել Ռուբե-
ստյի հայացքը քանակալության մասին։ Քանակալ-
ներն այն պնդումին, թե՝ իշխանությունը ստաեղ-
ծուց է, ընդհանուն պատասխանում է՝ հիմնադրու-
թյունն էլ ստաեղծուց է, բայց մարդ ձգտում
է այն ոչնչացնել...

Արարատյանի հատկանական աշխարհագրի
համար շատ կարևոր է նաև այն, թե ինչպես
նա պնդում և լուծում հանգեցք հարցը։ Թե հայ

և լուսավոր կերպով ամենքը իրավունք են տալիս

ինչպես պիտանք, էպոսի մեջ յանգուր յոթուհը
ամրոցներից մեկի բերդապահն է նշանակել տալիս:
Հավատարիմ մնալով պատմությանը և էպոսին՝ մու-
րացանը իր հերոսուհիներից մեկին՝ շահանդուխտին
Մուրացանի պատմական համակրելի կանացից
մեկը, ժողովրդի ծոցից դուրս եկած Աբգան ասում
է՝ ,,Ե՛ն հայ գինվորը հովի գաշտում վերք է
ստանում, հայ կնոջ պարտավորությունն է կապել
ու դարմանել նրան: Այդ պարտքը մենք պիտի կատա-
րենք մինչև անգամ հովի գաշտում,,:

Բայց դա մեզ այլ մի կողմն էր: Կար և
կնոջ տարբերում: Նա այլ կերպ էլ լինել չէր
կարող: Կնոջ վիճակը, նրա ազատությունը չափա-
նիշ է ընդհանուր ազատության: Ֆեոդալիզմի դա-
րաշրջանում այդ ազատությունը չէր կարող կնոջ
համար լինել բուրժուականներ: Այդ պատճառով էլ կինը
հաճախ զոհ էր դառնում դանդաղ հատարակչական և
պետական կոմբինացիաների: Ցեխիկ Ամրամի կինը՝
Ապրամը ուրիշին սիրելով, զոհվում է օրինավոր
ամուսնու ձեռքով, եղբարկվելով անլուր տանջանք-
ների: Ոչ ոք չի պաշտպանում ,,հանցավոր,, կնոջը

խանդոտ զգացմունքներ իր ,,հարճին,,:
Ընդհակառակը, ,,Մոնոգամիան ավելի շուտ
գոյություն է ունեցել կնոջ, քան թե տղամարդու համար,,: Կա հավանություն հայտնել, որ միայն
սոցիալիստական կարգերում հնարավոր կլինի մոնոգամիան պատշաճի համարել նաև տղամարդու համար:
Այդ բանաձևը նկատի առնելով, ընդհակառակը կնոջ դաժան ստրկության վրա այն խիստ հայացքը չունի, որ
արտահայտում են բուրժուական գիտնականները և
փիլիսոփաները: Կա կին, ասում է նա՝ ,,որի
ամուսնական դավաճանությունը լոկ ինքն իրեն
պաշտպանելու եղանակ է և լիովին ճշմարտանմանում է այն գրությանը, որը նրան հատկացված
է ամուսնության մեջ,,: Կնոջը հարկադրում են
ամուսնանալ հնարավոր տղամարդու հետ՝ պարզ է,
որ նա պետք է ինքն իրեն պաշտպանի, և երբեմն
այդ ինքնապաշտպանությունը ստանում է ,,ամուսնական առագաստի,, անհավատարիմ լինելու բնույթ:
Ապրումը եղել է Աշտի նշանաբանը, բայց ինչ ինչ
քաղաքական նկատառումներով Ապրամը ամուսնացել է ցևիկ Ամրամի հետ, որին ինչպես երևում
է, չի կարողացել սիրել և դավաճանել է իր օրինական ամուսնուն՝ նախկին սիրածի հետ կապ հաստատելով:

Մուրացանը էր կամքից անկախ՝ Ապրամի զոհաբերության միջոցով քննադատել է այն կարգը, ուր կինը հիմնականում երավաղուրկ էր Ասում ենք՝ էր կամքից անկախ, որովհետև վիպասանի հայացքները կնոջ մասին զերծ չեն որոշ մանր-բուրժուական նախապաշարումներից, որոնք կնշվեն քիչ ներքև, երբ խոսք կլինի նրա մոտիվրիպակների նկատմամբ:

Մուրացանին ըն տվյալ խնդրում և ըն առհասարակ գաղափարների փոխհարաբերության լուսաբանման մեջ առաջնորդում է մանր-բուրժուական հումանիզմի փիլիսոփայությունը, որ առկա է ոչ միայն նրա պատմավեպում, այլ նաև նրա ժամանակակից կյանքից նյութ վերցրած երկերի մեջ, Օրինակ, նրա գյուղագրական աշխատանքներում: Նա գաղափարում է աշխարհի հղոր երի կոշտ վերաբերմունքը ,,իրենց եղբայրների,, նկատմամբ: Վիպասանը պահանջում է անկեղծություն. ոչ միայն սեռերի փոխհարաբերությունը, այլև առհասարակ մարդկայինն կենցաղը տոգորված պիտի լինի սրտացավությամբ: Նա դեկավարվում է փիլիսոփայի այն խոսքով ըն՝ ,,երես պարտություն է կրում քո գործը, ըռղ հաղթանակ տանի քո անկեղծությունը,,: Մուրացանը մի աշխարհում ուներ, որ

հիշեցնում է ժողովրդական ասացվածքը թե՝ փուշը մատիցդ հանիր, որ չընկնի... ,,Ճաճուկ վերքը ավելի ցավ ու տանջանք է պատճառում, քան հայտնին,,:]

Տիրոզների և ժողովրդի փոխհարաբերությունը տարով՝ մուրացանը աշխատել է միջնադարյան հատուկենտ պայմանների բերանգավարումը պահել: Դատակարգային հերհակությունները, իհարկե, նա նկատում է, բայց աշխատում է շատ չխորացնել դրանք և հիմնականում տալիս է ժողովրդի և տերերի հարերաշխ գործունեության արտաքին բնութագրեմ: Ուրոշ էջերում նույնիսկ ժողովրդի մարդիկ տիրասեր են գուրս բերված: Մինչդեռ մենք պատմությունից գիտենք, որ միջնադարում տիրապետությունը տիպական երևույթ չի եղել և ընդվզումները հաճախակի են տեղի ունեցել իշխողների դեմ: Մուրացանի տվյալ վեպում մենք շատ անգամ հանդիպում ենք տիրասեր ժողովուրդ, տիրասեր գործ, և այլն արտահայտություններին: Երբ վիպասանը ցայտուն կերպով տալիս է Օտարի լծի առկայությունը, ,,հայրենի,, իշխողների լուծը չի քաշել առաջին պլանի վրա և թողել է ընթերցողին որոշում: Այդ ինչ մենք պատմությունից գիտենք, որ

հայ աշխատավոր ժողովուրդը, ,,ռամիկները,, կրկնակի լծի տակ են եղել՝ խալիֆաթի լուծը և հայրենի հոգևոր ու մարմնավոր ավատականությունը: Հայ պատմությանն նույն զարաշրջանում, որ նկատվում է Մուրացանը, ռամիկները ապատամբել են թե խալիֆաթի և թե հայրենի քանակալության դեմ:

Այդ բոլորից ակներև կերպով երևում է, որ վիպասանը հայ ժողովրդի ակտիվությունը լիակատար ճավալով չի տվել՝ ռամիկների հասար ներքին թշնամին նույնքան ատելի է եղել, որքան և արտաքին քանակալությունը: Ներքին թշնամուց տուժելը ճավալուն կերպով արտահայտված չէ: Ինչպես, այստեղ կա որոշ արգարացուցիչ հանգամանք՝ տվյալ մոմենտում բոլորի ուշադրությունը սևեռված էր արտաքին թշնամու դեմ, ուստի և ներքին տարաձայնությունները, ասես, առժամապես տեղի են տվել: Բայց այդ մեղմացումը նկատի առնելով հանդերձ՝ պետք է նկատենք, որ տվյալ խնդրում հեղինակի մոտ շատ ավելի ուժեղ է հնչել ոչ թե ազատագրական, այլ ,,ազգասիրության,, մխումը, հայրենի փուշը լավ է, քան օտարի նուշը մտայնությունը:

Իսկ ահա հենց այդ հանգամանքը նկատի առնելով, պետք է ասենք, որ Մուրացանի պատմավեպը

հիմնականում զրաղեցնել է տրափիճի ուղիով այդ տեղ առևտուրն ու սերը և պատերազմը, բայց բացակայում են աշխատանքը, ճորտատիրական պայմանների հիմնաշենքը, ֆեոդալիզմի ակնբախ բացասական կողմերը, ինչպես են տերերի դաժանությունը, խոշտանգանքները և այլն: Մուրացանը իբրև դեմոկրատ հեղինակ հենց այդ բաժնում պիտի տարբերվեր այն պիսի պատմաիրատաններից, ինչպես են Լիստոնը, Ընկևիչը, և այլք, ուրանց գործերում չկա ավատական շահագործման և ճնշման դեմ սոցիալական բողոք կամ անցյալի «վհռական գնահատություն», ինչպես կասեր Մարքսիմ Գորկին:

Համաժողովրդական կռիվը ազգային անկախության համար առաջին պլանի վրա դնելով, Մուրացանը հետևել է նաև ժողովրդի ցասումը հնդկեցուցանել դեմ, բայց հանդես չի եկել ընդհանուր ապստամբության կոչով: Մինչդեռ ֆեոդալական հնդկեցին ոչ այլ ինչ էր, բայց եթե մի զարթիք ազնվականության ձեռքին ճորտ գյուղացիության և քաղաքային դեմոկրատիան ճնշելու և սանձահարելու համար: Մուրացանի մոտ բացակայում է այդ նախատրամական հնդկեցուցումը, իբրև հիմնարկության դեմահաղերծումը: Հայտնի է, որ հնդկեցին

,,մարմնավոր,, էշխանությունից հետ մինչև ճշմարիտ գյուղացիությունից ,,երեք կաշի,, էր պահում: Նույնիսկ եկեղեցական պատգամիրները տվել են ժողովրդի ցասումը այդ կաշի պահանջների դեմ, ոչ այն պատճառով, որ նրանք սրտացավ վերաբերմունք ունեն նրա տանջանքների նկատմամբ, ոչ այլ խրատելու, պատպարտելու, զգուշացնելու համար: Այսպես օրինակ, հոլհաննես Դրաստխոսակտացին և Նեսփանոս Օրբելյանը պատմել են գյուղացիական ընդվզումների մասին: Ըստ Ջինը ակնարկել է, թե տրեխավորը նախարարին ձիուց իջեցնում է և ինքը ձին նստում: Իսկ երկրորդը պատմել է, թե ինչպես ապստամբ գյուղացիները հարձակվում են վանքերի վրա և այդտեղ կուտակված հարստությունը խլում միաբանության ձեռքից: Այս նույն գարշելիանում է տեղի ունեցել բռնդրակեցիների շարժումը, որի մասին սոսկ խուլ ակնարկություն կա Մուրացանի վեպում, բայց դա, իհարկե, բավական չէր այս ընդարձակ ժողովրդական ընդվզումը պատժաքարելու համար: Այդ շարժման մեջ, ինչպես գիտենք, շատ ակտիվ դեր են կատարել նաև կանայք, որոնք եկեղեցական պատմիչների կողմից հայհոյվել են իբրև

պառնիկներ, անառակներ: Ցեղ եկուղ յուններ կան, որ կանանց հարդարանքով տղամարդիկ հարճակիր և շարժել են եկեղեցական հուշարձանները: Բռնդրակեցիները պաշտպանում էին կանանց իրավունքները, ուստի և հանկանալի է պառնում նրանց ջերմ մասնակցությունը այդ արտաքուստ կրոնական կեղևի տակ հանդես եկող սոցիալական ընդվզումին, որ հիմնականում ուղղված էր ֆեոդալական ռեժիմի դեմ: Այստեղ ճշտվում է ինքնելսի այն խոսքը, թե մինչնաշարում հասարակական շարժումները կրոնական զգեստ են հագել: Եվ այդ կրոնական զգեստ հագած շարժումը դատապարտել են եկեղեցու պաշտոնական ներկայացուցիչները, պատմագիրները, որոնք դրա վնասվարներին ,,գայլակղիչ,, են անվանել, կամ ոգի կոտրելու եւ այլն:

Եվ հանկանալի է, որ նուրբ պատմիչները արտաքին շահադրդումները նկարագրելով, խուսափել են եկեղեցական կեղեքումները նշելուց: Բայց ֆեոդալը – ֆեոդալ է, լինի հայ, թե արաբ: Ուստի և մի շարք փաստեր, որ բերում են հայ պատմիչները, օրինակ, հարկահավաքության ձևերը

Այդ տեսակետը մուրացանը պաշտպանել է նաև իր

Մուրացանի աշխարհա-

Ահա հենց այդ է, որ մտցնում է

[ամաենումը չկա...

իսկ հետաքրքրականն այն է, որ Աշոտի կինը

իր այդ թեորիան մուրացանի վեպի մեջ գործ է

դարձնում: Այսինքն գործում է, ոգևորվում,

սիրում հայրենիքը գեթ այն ժամանակ, երբ ամու-

սինը նրան սիրում է, բայց հենց որ նրա սերը

պաղում է՝ այդ կինը /անհավանությամբ/ հայտարա-

րում է թե՝ դրա հետ միասին „աշխարհը կոր-

ծանվեց„: Ամբողջ վեպի մեջ ևս իրար հենդանի

դիակի տպավորությունն է գործում. անունն կա՝

յացքի մեջ այդ մասը քաղաքական ներմուծություն կանանց հարցի քննարկման: [Կինը դառնում է տան տղամարդի տվերը: Երբ նա գործում է, անպատժելիության վարագույրի ետևում մի տղամարդ է թաքնված: Երբ նա կրավորական է, նշանակում է այդ տղամարդը հեռացել է վարագույրի ետևից...

Մուրացանը իր այդ համոզումը արտահայտել է մի շարք տիպեր կերտելով, որոնց մասին մենք պետք է հիմա խոսենք նրա պատմական գեղարվեստական արժեքի հաշվառման:

4

Խոսել պատմական վեպի գեղարվեստական արժեքի մասին նշանակում է ամենից առաջ ցույց տալ, թե ինչպիսով որ չափով հեղինակի հերոսով է վերարտադրվել այդտեղ, հեղինակի տեղեկատվական նյութը որ չափով է արտացոլել պատմական իրականությունը հարուստ որեն, պահպանելով նկարագրված դարի ընդհանուր կոլորիտը, երանգավորումը:

Այդ քաջ է անում տալանդը և դիտողությունը քայլում են զուգընթաց: Ասում են, որ ,,Շալամբոն, երեսուց առաջ վեպերը գրվել են մի ոճով գրաշարան պիրք է կարդացել, չի բավականացել դրանով և սկսել է ճամբորդել հյուսիսային Աֆրիկայում, հին

կարճագեղի տեղագրությունն է ուսումնասիրել, եղել է թուխիսում և այլն:

Մուրացանն ըս հայ միջնադարի կոլորիտը տալու համար չի բավականացել միայն իր ստեղծագործական երևակայության վրա հույս դնելով, այլ սկսել է մի հետաքրքիր գիտական աշխատանք, ինչպես որ անում են գեղագիտական վեպ գրողները, օրինակ՝ Գևորգ Եքսերսը և Մյասնիները: Այդ աշխատանքի հետքերը երևում են ,,Գևորգ Մարզպետունու,, մեջ:

Գրպի որոշ խնդիրներ իր ամբողջ սուբեկտիվիզմով հանդերձ՝ Մուրացանը նպատակ է դրել և որոշ չափով հաջողել է տալ պատմական օբեկտիվ իրականության մի քանի հիմնական գծերը առանց կանխակալ կարծիքների, ելնելով իստորիզմի գիտությունից և պատմական որոշ հետևանքներից: Առանց դրան նրա վեպը չէր կարող մեզ համար այն արժեքն ունենալ, ինչ որ ունի և ուրախալի չի կարելի:

Մուրացանի պատմավեպը կարդալով, դուք տեղափոխվում եք այն դարաշրջանը, որ նկարագրում է հեղինակը: վերջինս կարողանում է տեղեկել որոշ տիպական հանգամանքներ, որոնց շրջապատում հանդես է բերում իր տիպերը:

Գնա՛ տեսնենք շրջապատը, պատմական ուղղությունը, ապա կխոսենք այդտեղ գործող մարդկանց, ավելի շուտ՝ ,,հերոսների,, մասին:

Մուրացանը կարողանում է տալ ջրի բուր-
մունքը, անցյալի զգացմունքը նրա մեջ կենդանի
է և նա կարողանում է գրանով վարակել իր ընթեր-
ցողին:

Ամենից առաջ նա տալիս է ճորտատիրական ընդհ
հանուր մթնոլորտի պատկերը: Հպատակների հնազան-
դությունը տերերին՝ տեղ-տեղ հասնում է աստիճա-
թյանը: Ամենամեծ ընծան մեկի համար — մի արտա-
վար հոգ առնալն է: Ախտ որոշ են գյուղին բա-
ժանումները: Քե նստելիս, քե վեր կենալիս հաշ-
վի են առնում քե ով է դիմացինը և ըստ այնմ վե-
րաբերմունք են ցույց տալիս: Տիտղոսները, կո-
չումները խիստ պահպանվում են: Ընկերական թաղման
ժամանակ երևում է գյուղին պետության բնույթը:
Իրենց համար հոգեպես թանկագին բանը տանում են
գերեզման. կտակում են, որ իրենց հետ թաղեն
այնպիսի առարկաներ, որոնց հետ լավ հիշողու-
թյուններ են կապված:

Մուրացանը տալիս է նաև ճորտատիրական
կարգի ներքին հակասությունները, այն կենտրո-
նախույս ուժերը, որոնք կրծում են ասպատական.
պետության հիմքերը: Եվ վիպասանը, ինչպես մի
ժամանակ Նիշե պատմագիրը՝ երգում է միության-
ը, միության ուժը: ,,Միությունն է մայր բար-

ժաց, անմխիթարելի — ճնող չարժաց»: Ահա մի նման մխիթարելի սիրած հերոսը, որ կատարում է իր մահվանից առաջ հետևյալը. «Ամենից ավելի սիրեցեք միությունը, որովհետև դա այն ուժն է, որ լեռներ է պատռում, ամբարտակներ է կործանում, գետերի ընթացքն է կասեցնում: Սովորեցեք գոհել այդ միությանը ամենը՝ ինչ որ ունեք աշխարհում բանվային և նա կբերի ձեզ և ձեր որդոց այն երջանկավիճակը, որին շատերն են ձգտում, բայց քչերն են ժառանգում»: / Բուրջանը «միությունը» գրում է գլխատառով. Ա.Տ./:

Ճորտատիրական կարգի ներքին հատկությունների հետ միասին Բուրջանը տալիս է վարք ու բարքի մեջ որոշ դաժանության առկայությունը: Հունաց պատմությունից հայտնի է մի սպանիսի դեպք. հայսրներից մեկը՝ Բազելիս Ճրդը քուշդարների հաղթելուց հետո տանձահինդ հազար գերի կուրացնում է և

հայրենիք վերադարձնում: Մուրացանի մոտ ևս թշնամու նկատմամբ այդ խստությունը դրծ են ածում՝ առանց նույնիսկ հաշվի առնելու հարազատական կապերը. օրինակ. այդպես է վարվում Աշտոը իր աներոջ և աներձադի, իսկ Աբասը իր ամուսնու յեղբոր նկատմամբ: Ռուս պատմությունից հայտնի յե մի այսպիսի դեպք. իշխան Սվյատոսլավին պեչենեգները սպանում են և վերջիններիս առաջնորդը նրա կաուսփից իր համար գինու թաս է պատրաստում: Մուրացանի նկարագրած ավատական Հայաստանում թշնամուն սպանելով, նրա կաշին տիկ են չինում և ամբողջ աշտարակից կախում...

Այդ բոլորը նկարագրելով՝ վիպասանը աշխատում է տալ պատերազմի սարսափները ցնցող կերպով և տեղ տեղ նա քնթերցողի մեջ առաջ և բերում դայրույթի զգացմունք սիրող հարդելի դեմ:

Վո՛չ միայն պատերազմի սարսափները, այլ և պատերազմական տեխնիկան Մուրացանը աշխատել է տալ հարազատորեն, նկարագրելով ավատական ղորքը, դինվորների հագուստը, դինավառուքյունը, դենքի և պաշարման դործիքների տեսակները, ղորքերի տարբեր բաժանումները և դրանց դործառնությունները, և այլն: Այդ իմաստով Մուրացանի նկարագրություններից մեկը շատ հաջող է. դա Բյուրականի կռվի նկարագիրն է, որի մեջ յերևում է վիպասանի ընդհքը՝ ընթերցողին հետաքրքիր անցյալը վոսկերիչելու իմաստով:

Թեև Մուրացանի լեզվի մասին առանձնապես պիտի խոսենք, բայց այստեղ նկատենք, որ ժամանակի կոլորիտը տալու համար նա շատ հաջող կերպով ոդտվել է դրաբարից և հին դրականությունից: Դրաբար բառերն ու արտահայտության ունները, ոճորինվածքներն այս վեպի մեջ շատ ավելի տեղին են և նպաստում են ժամանակի յերանդավորումը հորինելուն, քան հեղինակի քանիերորդ դարի սկզբից նյութ վերցրած դործերում, ուր դրանք ընթերցողի ականջն են ծակում: Նույնպես և մի շարք կլասիկական յերկերի և հեղինակների հիշատակումները նպաստում են դարի կոլորիտը հարազատորեն տալուն, ինչպես Հոմերոսը, Խորենացին, Դավիթ Մարզարեն, և այլն: Դարի մտավորականների դրույցի մեջ դրարար դրականությունից ցիտատներ վերցնելը՝ իրենց մտքերը ապացուցելու համար— շատ տեղին է և միանդամայն սաղական խոսողների դիրքին:

Դարի կոլորիտը պահպանող այդ բոլոր միջոցները դործա-

դրելով՝ Մուրացանը իր պատմավեպին չոր դիտքրատական բնույթ չի տալիս, այլ յուրաքանչյուր դեպքում, որը նա պատահաբար է՝ գնում և կենդանի պատկերացման կոնկրետ ձևի մեջ։ Դարի վոգին հարազատ պահպանելով, հեղինակը համոզիչ և զարձնում այնպիսի բարոյական ըմբռնումներ, որը այսոր հակընդդեմ են մեր հայացքներին։ Բնչինակին Համերոսի մասին նկատել է — այսոր, յերե մեկը իր ընկերոջ դեմքին վրա անգին դերիներ մորթռած, զղվելի յե. բայց այդ նույն յերեսույթը Համերոսի հին հույների մոտ ներքողի յե արժանացել։ Նույնպես և Մուրացանի մոտ թշնամու նկատմամբ կատարված դաժանությունը վոչ վոքի կողմից չի դատապարտվում։

Դարի կոլորիտի հետ մխամին այդ բանի համար դեր են խաղում նաև լայն ժողովրդական շարժումը, բարձր վորևե նպատակի հետապնդումը, հեղինակի պատմելու լիրիկական խանդավառությունը, մանավանդ շահերի սուրբ ընդհանուրին, հայրենիքին — այս ամենը սահեցնում են դրվթե եպիկական մթնոլորտ, ուր զրացմունքի և դրվթի չափազանցումը սովորում են վորոշ հոգեբանական հիմնավորում, հերոսությունը դարձնելով սովորական յերևույթ։ Կռիվը, վոր մղում են հայերը արտքների դեմ, առեղծում և դյուցազներ և դյուցազնական իրագործություններ։

Ցնել հենց այդ կետում անդոր են դառնում դրական ուղղության մասին մի քանի նախապաշարումներ։ Մուրացանը իր բոլոր հավատացումներով՝ հիմնականում ճիշտ և արտացոլում պատմական իրավիճակը։ Նրա նկատմամբ ճշտորեն և Մաքսիմ Գորկու խոսքը, թե՝ խոշոր դեղագեհներին մոտ ռեալիզմը և ռոմանտիզմը միշտ եղ միացած են յեղել։ Այսինքն սոցիալիստական ռեալիզմին հանճարեղ ներկայացուցիչը դրանով շեշտում էր այն կարևոր միտքը, վոր խոշոր վիպասանը վոչ միայն պետք է տա սոսկ վիպասերի ռեզիստրացիան, այլ և ուղղություն ցույց դնելի ապագան։ Նման հեղինակի դրական ուղղությունը Բելինսկու եսթետիկայի մեջ անվանված է ռեալիստական սուբյեկտիվիզմ։

Մուրացանի մոտ ևս լիրիկական և իդեական պաշտոնի հետ միասին առկա յե իրականության ժուժկալ արտացոլումը։ Նրա լիրիզմը ծայր է առնում բոլոր այն դեպքերում, յերբ նկարագրում է ժողովրդի հերոսական գործերը, նրա հզորությունը և խանդավառությունը։ Այնուհետև նա տալիս և այդ բոլորի դաստիարակիչ մղիչները — հայրենասիրությունը, ազատ ապրելու

հեռանկարը հայ ժողովրդի հերոսական պատմության օրինակներ: Վիճելի նյութ ընտրելով՝ X դարի պատմական տեղանունների մեկը պատմելով՝ բնական է, որ Մուրացանը չէր կարող չօգտագործել սովորական նկարագրական միջոցներով. արտահայտչական միջոցներով՝ նա դրեց և ածում արտասովոր միջոցներ, չափազանցումներ՝ ամենևին աչքը չփակելով հարաբերություններից:

Այստեղ կարևոր է հիշել նաև վարպետությունը: Մուրացանի «Գնելորդ Մարդպետունին» երբև պատմավեպ շատ հաջող է հատկորոշված: Չնայած առատ և բազմակողմանի բովանդակությանը, այդ ուսումնասիրվող դեպքերը դասավորված են կանոնավոր կերպով, շփոթ և խառնակ չեն, երբեք վրա չեն կուտակված: Ընտրել պատմական դեպքերը և շատ հատարակ ոյժով պատմական կյանքի հարստությունը պատկերացնելու համար. այդ ձևով, ասես, նա պատմական հետաքրքրության վրայից խորհրդավորության քողը հանել և և իրերը ցույց տվել վերին աստիճանի ժխտաբար:

Թե Շեքսպիրը և թե ժամանակակից հակաֆաշիստ պատմափղոսական առեղծագործողները հին պատմական անցյալը պատկերացնում էին՝ դրվատում են ազգային մխածույլ պետականության ձևավորվելուն փոշիացնող ուժերի դեմ: Այդ իմաստով շատ հետաքրքրական և Հենրիխ Մաննի պատմական նշանավոր վեպը՝ «Հենրիխ IV-ի յերիտասարդությունը»: Հայ պատմավիպասանների Մուրացանը, ինչպես և Շերենցը մտածում են նման սկզբունքով: Նոր, առաջավոր տեսակետների դրծածությամբ պատմական անցյալի լուսաբանման համար՝ անպայման իշված հարցնակների վեպերը դարձնում են վերին աստիճանի արտահայտչական:

Ուշադրավ և դասախարակչական է «Գնելորդ Մարդպետունին» վեպ միայն իր լուսական հաղեցվածությամբ, այլ և դրա վերաբերմունքի ճնշվորությամբ: Առանձնապես պիտի շեշտել Մուրացանի դասակերպելու կարողությունը, իրար հաջորդող դեպքերի հանդիպում և անընդհատ շարադրանքը, որը նրա դեղարվեստական ձիրքի մեծն է: Դա բղխում է նրա դիտելու և պատկերացնելու ընդունակությունից, այն կարողությունից, որը ընթերցողին հետաքրքրում է իրերը տեսնել այնպես, ինչպես ինքը՝ հեղինակը: Պատմողի համբերություն ունենալով՝ Մուրացանը չի շտապում, նա սպասում է, որ դեպքերը հասունանան և լու-

ծումը դառնա ներքին անհրաժեշտություն: Այդ կողմից շատ բնորոշ են Մուրացանի ռազմական նկարագրությունները: Ամենից առաջ նա չի նկարագրում պատերազմը— պատերազմի համար. ամեն մի նկարագրության մեջ նա պարզում է իր հերոսների այս կամ այն առանձնահատկությունը: Իր վերջնական նպատակը չմերկացնելով և միաժամանակ պահպանելով «հավիտական դանդաղկոտության», Մուրացանը կարողացել է ստեղծել մի հետաքրքիր վեպ, որը չի ձանձրացնում նույն իսկ մի քանի անգամ կարդացողին: Դա նրա գեղարվեստական արժեքի ցուցանիշներից հիմնականն է:

Վեպի արժանիքներից մեկն էլ պիտի համարել ընդարձակ ֆոնը, որը շատ սազ է դալիս ժողովրդական ցասման ուժգնությանը: Վո՛չ միայն հասարակության մի նեղ խավը, այլ ողջ հասարակությունը շահագրգռված էր խալիֆաթի լուծը թոթափելու մեջ. դա ստեղծում է ընդհանուր աղդային դժգոհության մթնոլորտ:

Այնուհետև պիտի խոսել վեպի ամուր կոմպոզիցիայի մասին: Չնայած լայն կտավին, բազմակողմանի նյութին, գործող անձերի բազմությանը, այնուամենայնիվ վեպը ունի պինդ կողնաշար. դա մի ամբողջական և վերջավորված գործ է, գրեթե մի րոմանի արձան: Հեղինակը մեծ փորձ ունենալով, վոչինչ աչքից չի վրիպցնում և նույն իսկ «երկրորդական» անձերը ուշիմ և տալիս, եպիզոդիկ դեպքերը— գործնում է անմոռաց: Մանրամասը միանգամայն յենթարկվելով ամբողջին, բայց և այնպես չի կորցնում իր յուրօրինակությունը. Մուրացանի մոտ բացատրությունն է սկսնակ հեղինակի անճարակությունը. վիպասանի այս գործը նրա ստեղծագործական ծառի աշնանային պտուղներից է:

Մուրացանը գործադրում է վեպը հետաքրքիր դարձնելու մի շարք պրիոմներ: Նրա դլխավոր հերոսը՝ Դեվորգը շատ ուշ է հանդես դալիս վեպի մեջ. բայց յերբ հանդես է դալիս, ընթերցողը արդեն նրան ճանաչում է, հեղինակը կարողացել է նախապատրաստել և սպասողական վիճակի մեջ դնել ընթերցողի ուշադրությունը: Նույնպես և Սահականուշի հոր և յեղբոր կուրացման մասին մի քանի անդամ խոսում է, բայց չի պարզում պատճառը, կամենալով ընթերցողի հետաքրքրությունը վառել և վեպի ընթերցումը դարձնել անձանձրույթ: Այնուհետև Մուրացանը գործ է ածում արկածային վեպի պրիոմներից մեկը. դլխի վերջում մի հարց դնել, որը հաջորդ դլխում պետք է պարզվի:

Հետաքրքրական և նկատել, որ Գուշկինը իր «Կապիտանի աղջիկը» պատմական վեպում այդ պրինցը դարձ և ածում, ինչը իրեն ծաղրելով թե՝ դա հին վիպասանների հնարքներից է...

Պետք է հիշատակել Մուրացանի վեպի գեղարվեստական ամբողջի մեջ նրա կատարած մի քանի խոր հոգեբանական վերլուծումները, որոնք ցույց են տալիս նրա գեղարվեստական ճիրքի լայն դիապազոնը: Ճերը Աչոտը նայում է Սահականույշին մի քացակա հայացքով, վերջինս խոհուն դեմքի չի ընկնում, որ «նրա սիրտը, ուր կամենում ես մուտ դործել, դրավված է ուրիշի սիրով»: Այնուհետև նա այլևս չի ճնշվում իր ամուսնու վտանգով, որովհետև դա այլ ևս իրենը չէր— Մուրացանը հայտնում է հետևյալ միտքը. «Ճշմարիտ է, արհեստական միջոցներով դժվար և սեր զարթեցնել, բայց նույն այդ միջոցներով կարելի չի հանդցնել հին սիրո կայծերը կամ արդելել նրա բռնավառվելը նորից»: Այս հոգեբանական թեզը նա գեղարվեստորեն ապացուցել է իր վեպում:—Սիրո մեջ դժբախտ մի կին՝ լսելով ուրիշ մի դեղջի սիրային դրույցը, նկատում և ինքն իր մասին. «Աշխարհի վրա նայում եմ կարծես դաղաղի միջից. մի՞թե չես ապրում եմ»...

Ուշադրության արժանի չի նաև Մուրացանի երգիծանքը: Այս բաժնում նա ոգեշունչ է ծաղրել և ժողովրդական բառ ու բանը, ժողովրդի հեդնության ձևերը: Երդի բանալիները պահանջում և սարք դորավարը. «Մեր բերդի բանալիները խիստ ծանր են, տանել են դեղեցիք բանբերին, դու միայնակ տանել չես կարող. տար Բեշիրին, որ ինքը դա այն առանալու»: Շատ սուր և նաև կաթողիկոսի նկատմամբ դործադրած ծաղրը, որ հասնում և սարկազմի:

Անցնելով Մուրացանի տիպական արվեստին, հենց սկսենք դա՝ ցույց տալով թե ինչպես և ովքեր Մուրացանը հիշված Հովհաննես Դրասխանակերտցու յերգիծական պորտրետը:

Մուրացանը չի սիրում այդ նշանավոր պատմագրին, չի սիրում, որովհետև նա անճնասաչա և, յեսասեր: Ճեսասիրությունը, եդոյիզմը ակռանքի բամբակ են համարում. ուրիշների տառապանքի ճիչը չլսելու համար եդոյիստը այդ բամբակը խըրում և իր ականջների մեջ: Բայց բամբակի հետ միասին Դրասխանակերտցին բանեցնում և նաև յերեսի քող. վո՛չ միայն լսել, այլ և տեսնել նա չի ուղում: Ուստի և շարունակ փախչում և գժբախտության վայրերից. մի կատարյալ «Թափառական հրե-

ած, վոր ավայտում է վոչ թե մի լեգենդական անհնձքի պատմառով, այլ իր ներսը յեղած «փոքրիկ հոգու» հարկադրանքով։ Մարքսը փոքրիկ Նապոլեոնի մասին դրել է. «Ամենաանշնան ֆրանսիացին լինելով՝ դարձավ ամենանշանավոր սիմվոլը, Մուրացանը իր կամքից անկախ սիմվոլացրել է Դրասխանակերտցուն, նրան դարձնելով հոգևորականության հակաժողովրդական ընթացքի մարմնացում։

Եթե պատմական վեպը— դա նշանակում է պատմության անց կացրած մարդկանց միջով, ապա հենց Հովհաննես Կոթողիկոսը իր եղոյիզմով՝ յեկեղեցական դասի այլասերման ցուցանիշ է, պատմականորեն ստույգ այն ճշմարտության արտահայտությունը, վոր յեկեղեցին ֆեոդալիզմի դասակարգային հիմնարկն էր և կրում էր իր վրա նրա բոլոր հակաժողովրդական արատները։ Շատ զավեշտական է այն մոմենտը, յերբ կաթողիկոսը վտանգից խուսափելով՝ իրեն նետել է ուղում ամբոցարնակ կանանց շրջանը։

Մուրացանի յերգիծական պորտրետը տպավորիչ է նրանով, վոր հեղինակը հմուտ կերպով կաթողիկոսի աղտու արտաքինին հակադրել է նրա ծիծաղելի ներքինը՝ վախկոտության մանկան։ «Նրա բարեկազմ, հաղթանդամ և արտաքուստ զորավոր մարմնի մեջ ապրում էր մի տկար սիրտ և յերկչոտ հոգի» ասում է վիպասանը Հովհաննեսի մասին։

Ասացինք, վոր Դրասխանակերտցին պատմադիր է։ Մուրացանը այդ հանդամանքն էս հաշվի յե առել և նկարագրել է դրողի ու քաղաքական գործչի պայքարը այդ մարդու հոգում։ Նա իր կիսատ «Պատմությունը» հետը ման է ածում, և յերբ հնարավորություն է ստանում շարունակել, յերեխայի պես ուրախանում է. «Եթե այդ բանով նա այնպես ուրախացավ, ինչպես մի մանուկ, վոր գտնում է հանկարծ իր կորցրած խաղալիքները»,— հեգնում է Մուրացանը, և ապա շարունակում. «Կարծես այլ ևս չէր մնում ուրիշ ցավ, վոր կարողանար տանջել իր հոգին, կամ թե հայ աղգի դժբախտությունը սլիտի վերանար, յեթե նա իր թերի պատմությունը ավարտեր»։

Այդ վախլուկ և եղոյիստ մարդու հակապատկերն է Գևորգ Մարզպետունին, վոր նրա նկատմամբ տածում է դաբշանքի զգացմունք։ Այդ առելության մեջ միայն քաղաքական գործչը չի հանդես գալիս, այլ և ժողովրդասեր Մուրացանի համոզ-

ձունքը, վոր ցույց և տալիս յեկեղեցու և դյուղացիության մի-ջև ստեղծված ճեղքվածքը:

Վիլասանը Գեվորդ Մարզպետունուն հակադրելով եզոյիստ մարդուն, նրան դարձրել է իր ալտրուիստական համակրանքների կրողը: Նա Մուրացանի հավատարմատարն է: Այդ տիպի մեջ հեղինակը դրել է իր համակրանքը և հակակրանքը, սերը և զայրույթը, նրան հանձնարարելով արտահայտիչ հանդիսանալու իր հասարակական և բարոյագիտական հայացքներին, դատողություններին: «Պատերազմ և խաղաղություն» վեպի մեջ Տոլստոյը կուտուզովին նույնպես իր վորոշ համոզումների հավատարմատարն է դարձրել և դրա հետ միասին տվել և մի կենդանի, առարկայական և համոզիչ տիպ:

Նույնը պիտի ասենք նաև Գեվորդի մասին, վոր չնայած իր սոցիալական ծագմանը՝ կատարյալ ժողովրդական հերոս է, հիմնականում ռամիկների բարեկամը և նրանց շահերի արտահայտիչը, ինչպես վոր նրան ըմբռնում է Մուրացանը և պատկերացնում:

Լասսալի «Ֆրանց ֆոն Զիկինգեն» պատմական տրագեդիայի մասին խոսելով՝ Մարքսը նկատում է, վոր վորոշ տիպերի ստրծելու մղիչը հանդիսանում է պատմական հոսանքը, մի տեսակ տարերային բան մտցնելով դրանց մեջ: Բայց պատմական հոսանքի կրող վինելու հետ միասին Մարքսը պահանջում է, վոր հերոսները անհատներ լինեն, վորոշ դեմք ունենան: Վոչ միայն կարևոր է այն, թե ի՛նչ են անում ստրծող անձերը, այլ և այն, թե ի՛նչպես են դա անում. վերջինիս մեջ է անհատականությունը, վոր հարկավոր բան և ամեն մի տիպական պատկերացման բնագավառում:

Մուրացանը Գեվորդ Մարզպետունու մեջ պատմական հոսանքի վո՞ր կողմերն է անձնավորել: Ամենից առաջ հայատակ ժողովրդի բուռն յերազները պաշտպանի, մարտիկի և վրիժառուի մասին: Այդ յերազների մարմնացումը դարձնելով իր հերոսին՝ Մուրացանը նրա դեմքը դծագրել է եպիկական թափով և եմոցիոնալ ուժով: Հեղինակը նրա դործերի նկատմամբ անաչառ դիտողի դերում չի դտնվում:

Բայց հայատակ ժողովուրդը միայն արտաքին թշնամու դեմ չի դործում, այլ և ներքին դասակարգերի դեմ: Մուրացանը Գեվորգին անողոք և դարձրել այն խշխաններին դեմ, վորոնք «պե-

աւելյան ամբողջութեանց դեմ են դործում և դրսի թշնամու ձեռքին դործիք են դառնում:

Մուրացանը նրան մի յեղկաթյա քաղաքական դործիչ դարձնելով, միևնույն ժամանակ նրան ոժտել է անձնական նուրբ և քնքուշ զգացմունքներով: Թեև նրա մոտ անձնականը միշտ ստորադրված է հասարակականին, բայց և այնպես վիպասանը անտես չի արել նրա մոտ նույն իսկ վորոշ նյարդային ընկուզեղյուն. չկարողանալով իրեն զսպել, այդ յեղկաթե մարդը յերբեմն լաց է լինում: Գեվորդը իր մասին նկատում է. «Իմ բերանով խոսում է աղքի ամեն մի թշվառացող անդամ»: Հոդևորականն չատ բնական է, վոր թշվառը կարող է և լաց լինել, ուստի և չատ համոդիչ է նրա մոտ այդ ամբողջության և ընդլայնման ներդաշնակ զուգորդումը: Այդ հայրս հոդին յերբեմն պատրաստ է ծունկ չոքել և աղերսել. բայց ի՞նչ նպատակով, վորպեսզի խավանի այն կոտորածը, վոր «մի որվա մեջ անթիվ ընտանիքներ պիտի կործանեն, բյուրավոր մանուկների պիտի վորբացնեն, կանայք և հարսունք պիտի այրիացնեն»:

Գեվորդը պայքարում է իշխանների դեմ, վորոնք իրենց անձնական վաշքի համար զոհեր են ապրիս, յեղբայրասպան կռիվներ են սարքում, դյուղացուն դյուղացու դեմ են կանդնեցնում, մինչդեռ այդ դյուղացիներն իրար դեմ վոչինչ չունեն: «Նա,— դրում է Մուրացանը,—չէր կարող հաշտվել այն մտքի հետ, թե խելք ու սիրտ ունեցող տղամարդը կարող է ընդհանուր հայրենիքի շահը զոհել իր անձնական չնչին հաճույքին...»: Մարդպետունուն պայքարում նաև այն հանդամանքը, վոր յեկեղե. կրթիկական պայքարներին, ֆեոդալները պատասպարվում եյին իրենց ամրոցներում, իսկ դյուղերն ու ավանները թողնում են անպաշտպան, ուղղակի մերկ ու բաց առաջ...

Այդ հայացքները Գեվորգի մոտ սոսկ խոսքեր չեն, և նա դիտե իր համոզմունքը դործ դարձնել: Իրրև դորավար, որինակ, նա դիտե խնայել իր զինվորներին և ավանտյուրիզմը նրա համար ղվվելի յե: Իր միակ վորդուն պատերազմի դաշտում տեսնելով, մեկ նրա մոտով անցնում է խնայել զավակին, բայց վերջապես հաղթանակում է հումանիզմը եղոյիզմի դեմ և նա ասում է. «Թող բոլորի մայրերը (ուրեմն և իր վորդու մայրը) նահատակների ծնող հռչակվին»:

Իր համազդային արժեք ունեցող դործունեության հետ

մխային Գևորդը շատ հատարակ մարդու պահվածք ունի. ճիշտ է, նա տաղանդավոր հեռատես է, բայց դրա հետ մխային նրա խոսքի մեջ չկա մոլ մի փքուն, «թատերական», կեղծ մետ— վհուկությունը նրա մոտ այնպես բնական է, ինչպես շընչառությունը... Նրա «հատարակ» լինելը շատ տպավում է վեպի մողջ մոտուն, որը համոզիչ կերպով ցույց է տալիս, թե մարդիկ են պատմության մեջ դեր կատարել և մոլ թե «հույր ուժերը», ինչպես պնդում է Պոկրովսկու «մարդավախ» կոնցեպցիան:

Այդ բոլորը նպաստում են այն բանին, որ Մուրացանը տալիս է իր դլխավոր հերոսի պատկերը տաղանդավոր և ճշմարտացի կերպով, դրա հետ միասին վեր հանելով նրա պատմական դործի պրոդրեսիվ բնույթն ու հեռանկարները:

Վերոհիշյալ հակադրությունն այդ հայրենանվեր անձին, Մուրացանը տվել է Սահակ Սեվադայի և Աշոտի ու Ցլիկ Ամրամի տիպերը, մեկի մեջ մարմնացնելով առոհմական պատվի, իսկ մյուսների մեջ անձնական երջի յերկրպադությունը, մեծամասնքը:

Սահակ Սեվադան ասում է. «Ես մի հարվածով կջախջախեի այն ձեռքը, որը կմոտենար իմ առոհմական անարատ անունն արատավորելուն»: Իր առոհմական այդ պատվին նա դոհ է բերում ընդհանրության չահերը, յերբևէն էլ իր կատաղության դոհ դարձնում անմեղ դյուղացիներին. «Իսկ դյուղացիներին խրատելու համար, որ մյուս անդամ չհամարձակվին իշխաններին կռվին խառնվելու, հնձել տվի նրանց արտերը, կրակի մատնեցի և հեռացա...»:

Շատ հետաքրքրական է ֆեոդալական և բուրժուական պատվի հասկացողության մի համեմատություն. Սահակ Սեվադան իր վեհապետի անհավատարմության համար այդքան վայրադություններ է դործում, իսկ Յերվանդ Ոսկանի «հերոսներից» մեկը՝ մի առևտրական, նման դեպքում աղջկան խորհուրդ է տալիս համբերել, որովհետև «բժշկական տեսակետից» ոչ-տակար է կնոջը, յերբ ամուսինը մի առ ժամանակ իրեն հանդիստ է թողնում և ուրիշ տարփածու դտնում (տես «Կատարյալ մարդ ըլլալու արվեստը»):

Ցլիկ Ամրամը Յերվանդ Ոսկանի հերոսի՝ խոշոր առևտրական Գողմայի տեսակետն հակատակ ընթացք է բռնում. նա իր կնոջը դոհում է՝ խանդի կրքից դրդված: Ինանդը Մուրացանի

այդ հերոսը անվանում է «ցավերից ամենաանտանելին»։ «Ես չեմ ցանկանա,— ասում է նա,— վոր նույն խոկ իմ թշնամին տանջվի այդ ցավերով»։ Եվ Սեվադան տոհմական պատվի պատճառով է դառնում եղոյիստ, Ցլիկ Ամրամին խանդն է դարձնում «վայրագ դաղան», վորի սրտի մեջ վառվում է «չարության դժոխքը»։ Շատ ապաշորիչ է այն տեսարանը, յերբ այդ խաբված ամուսինը իրատելությունը տարածում է բոլոր կանանց վրա, իր ամրոցից վռնդելով իր կնոջ, իր Ամրամի բոլոր սեռակիցներին։ Ապաշորիչ են նաև կնոջ հարկադրական մահից հետո նրա խղճի դալարումները և տվայտանքը։

Եվ Սեվադային և Ցլիկ Ամրամին իրենց եղոյիստական կրքերով հանդերձ՝ Մուրացանը կենդանացրել է, այդ նույնը չենք կարող ասել վեպի հիմնական հերոսներից մեկի՝ Աշոտի մասին։

Աշոտ Ցերկաթի տիպը ամբողջապես չի հաջողվել տալ Մուրացանին։ Ամբողջապես ենք ասում, վորովհետև հեղինակին հաջողվել է պատերազմի դաշտում արդարացնել նրա Ցերկաթ մականունը, բայց պատերազմի ճակատից դուրս նա վոչ թե յերկաթ է, այլ՝ ինչպես կասեր Ցեղիշեն՝ «յեղեգն շարժուն ի հողմո»։ Մենք չենք ասում, թե այդպիսի մարդ հնարավոր չէ. այլ պնդում ենք, վոր Մուրացանը չի կարողացել համոզիչ դարձնել իր գծագրած տիպը։

Իր կրքի խաղալիքը դառնալով իրեն մի յերեխա՝ Աշոտը ոչնչացնում է անլուր հանցանքներ, զրպարտում է իր անարատ և առաքինի կնոջը, կալանավորում է բոլորովին անմեղ վաստակին, և այլն, և բոլոր այդ դեպքերում մեղադրում է ներքուստ ինքն իրեն, իր սերը անվանելով «հանցավոր վիրք», խղճի տանջանք ապրելով, չարունակ մահ փնտրելով, և այլն։ Այդ բոլորը հոգեբանորեն և գեղարվեստորեն չեն ներդաշնակված, ուստի և բարդ տիպի փոխարեն ստացվել է միանգամայն դժդուն, ստվերային և, ինչպես ասացինք, անհամոզիչ մտահղացում։ Մինչդեռ Մուրացանը շատ «յերկրորդական» դեմքեր կենդանացրել է, ինչպես որինակ, Գոռը, Սեղան։ Նրան չի հաջողվել Աշոտը։ Նույնպես և նրա կնոջ՝ Սահականուշի դիմագիծը աղոտ է։

Սահականուշին Մուրացանը դարձրել է հավատարմության մի կատարելատիպ, և դրա հետ միասին իրեն «դշխոյական

հայարտությանն» ներկայացուցիչ: Ցերբևեն նա յերաշտում է հովվական խրճիթի մասին՝ խաղաղ և հանգիստ կյանք վարելու համար: Բայց այդ բոլորը իր ամուսնու բացակայությամբ. վերջինիս ներկայությունը նրան դարձնում է մի կամազուրկ էյակ, որ սովերի պես հետևում է իրեն չհերող տղամարդին: Բայց պարզ յերևում է, որ Մուրացանը վոչ թե մի քագուհու որբևիկով տխուր և տվել, այլ հանրագումարի յե բերել իր վորոշ հայացքները կնոջ և սիրո մասին, վորոնց մասին մենք արդեն խոսել ենք: Սահականույշը ասում է իր ամուսնուն. «Ծոստովանում եմ՝ յես զործեցի իրրև թուլ կին, իրրև սիրող սրտի տեր»:

V.

Մուրացանի պատմավեպի գեղարվեստական արժեքը պարզելու համար պետք է մի քանի խոսք էլ ասենք նրա լեզվական հյուսուածքի, նրա վոճի պատկերավորության և նրանից առաջնալիք դրական ժառանգության մասին:

Ինչպես հայտնի յե, լեզվական հյուսուածքին շատ մեծ նշանակություն է տվել Մաքսիմ Գորկին: Նրա կարծիքով դրականության հիմնական առաղձը խոսքն է, վոր ճեվավորում է մեր բոլոր ապավորությունները, զգացմունքները, մտքերը: Գրականությունը խոսքի միջոցով պլաստիկ կերպով պատկերացնելու արվեստն է: Կլասիկները մեզ սովորեցնում են թե՝ վորքան ավելի պարզ է, սուդ և անպաճուճ է խոսքի խմաստավոր և պատկերավոր լեզքը, այնքան առավել ամուր, ճշմարտացի և կայուն է գեղջուժի նկարագիրը և նրա զգեցուկությունը մարդու վրա, մարդու բնավորության և նրա մյուսների հետ ունեցած չափան պատկերը:

Նույն Մ. Գորկին հավանում է Զեխովի լեզուն. նա առաջարկում է նրանից սովորել դրել: Բերելով մի ընդարձակ հատված նույն հեղինակից, խոսքի մեծ վարպետը՝ Մաքսիմ Գորկին հիացած նկատում է. ամեն ինչ պարզ է, բոլոր բառերը— անպաճուճ, ամեն մեկը— իր տեղում:

Լեզվական հյուսուածքի խմաստով Մուրացանի պատմավեպը հայ անցյալ գրականության նշանավոր յերկերից մեկն է: Ցավ զրմանալին այն է, վոր հեղինակը գրական մշակման չի յենթարկել իր վեպը, այլ մաս մաս տպել է 1896 թվականի

«Արձաղանքում» և, ինչպես վկայում են ականատեսները, մաս մաս ել գրել է: Մշակված որինակը, ինչպես հայտնի չե, հըրդևհի ճարակ և դարձել...

Մուրացանը վոճ ունեցող հեղինակ է. այսինքն՝ նա իր լեզվական միջոցներով ընթերցողին հարկադրում է իրերը տեսնել այնպես, ինչպես ինքն է տեսնում:

Վո՞րն է Մուրացանի վոճի հիմնական առավելությունը. դա նրա ժողովրդայնությունն է, աշխարհին ժողովրդի աչքով նայելու կողմորոշումը, ժողովրդի ականջով լսելու մեխումը: Ճիվ չնայած այն հանգամանքին, վոր նա իր յերկը լեզվական առումով չի մշակել, ճլորերի պես մի բառը տասներկու անգամ չի ջնջել կամ Տոլստոյի պես վեպի մի դլուխը տասներեք անգամ չի արտագրել, այնուամենայնիվ Մուրացանի մոտ լեզվի զգացումը առկա լինելով՝ նա իր մշակման թերին լրացրել է վոճի ժողովրդայնությամբ:

Մի-յերկու որինակ բերենք. Աչոտը դժբախտացնում է իր աներոջը, Մուրացանը այս միտքը հայտնում է այսպես. Նա ծյուն բերեց խեղճ մարդու դլխին:— Հերոսը հաղթանակով վերադառնում է. ամբողջ քաղաքը մի աչք, մի շունչ, մի հոգի դարձած նրան էր սպասում:— Դավադիրները չեն հաջողում իրենց սեվ դործի մեջ. նրանց խոփը էարին առավ:— Մեկին սուտ հանել, և այլն:

Վոճի ժողովրդայնությանը ուժ և տալիս նաև խոսուն առնականների դործածությունը: Հուժկու և դորավոր Ամբամին Մուրացանը՝ պատմագրին հետևելով ճլիկ և անվանում, արաւդալազ նժույդին—ողապարիկ, և այլն: Վեպի մի քանի դլուխները խոսուն վերնադիրներ ունեն,—«Կուլը աչքը կներե, կուլը սիրտը չի ներիլ»,— «Մի դալար բողբոջ չորացած ծառի մոտ»,— «Մի ծաղկով գարուն»,— «Ջրից վախեցողը կրակի մեջ», և այլն:

Մուրացանը իր վեպի մեջ լեզվաչինարարական աշխատանք է կատարել. նա վոչ թե բավականացել է յեղած և դործածական լեկսիկայով, այլ կամ դա թարմացրել է նոր առումներով կիրառելով, կամ նույն իսկ նոր բառեր, արտահայտություններ և հորինել:

Հետաքրքրական և նկատել, վոր հայ լիբերալ քննադատությունը, վոր այնքան խիստ և յեղել Մուրացանի նկատմամբ, այնուամենայնիվ նա ձեռք չի բարձրացրել մեր վիպասանի լեզ-

վի վրա: Նրա լեզվի մի քանի արժանիքներին, ինչպես են՝ ճշտություն, մաքրություն, սահունություն, միանում է նաև վոճի որիգինալություն, նրա մաքի անկրկնելիությունը, վոր լավագույն կերպով վոչ թե դրում է, այլ, ասես, վրձինով նկարում է, իշխելով ճկուն լեզվի դաղտնիքներին: Մուրացանը հաճախ լեզվի միջոցով կարողանում է տալ դործողության դինամիկան: Որինակ. ձնծրևն կռիվը բորբոքվեց. նորեն խմբերն ընդհարվեցան: Հաղաբաժավոր արևը շողում էլին ու հարվածում, նիզակները՝ ճոճում ու շամփրում, սաղավարտներ ճեղքում, պրահներ պատառում, վահաններ ջախջախում... Հաղթողների աղաղակը, ընկնողների վայնասը, ղենքերի շաչյունը թնդացնում էր ողը և դաշտը...

Սա, ասես, հիշեցնում է Պուշկինի Պոլտավյան մարտի նկարագիրը:

Մուրացանը վոչ միայն կարողանում է իրերը կենդանացնել, այլ և իր հերոսների հոգեկան հուզումը հաղորդել ընթերցողին. այդպես է նա, յերբ նկարագրում է կույր Սեվադայի ապրումները կամ պատանի Գոռի սիրո խանդավառությունը:

Առանձնապես պետք է խոսել բնության մասին, վոր Մուրացանի վեպում, ինչպես և ժողովրդական ստեղծագործության մեջ, վոչ թե մեռած դեկորացիա չի, այլ կենդանի դործոն: Մուրացանը բնությունը անց և կացնում իր հերոսների տրամադրության միջով. նրանք վոչ միայն բնությունը տեսնում և լսում են, այլ և վերապրում են:

Այդ բոլորով հանդերձ՝ բնությունը Մուրացանին տալիս է պատկերների առատ: Հեղելը պատկերի մասին ասել է թե՝ դա իրականության զդացողական ձեվն է. նա չարժման մեջ է դնում առարկան: Որինակ. Մուրացանը անհանգիստ կուրծքը կռնկրետացնում է փոթորկվող մոտեցած ալիքի նմանողությամբ:— Բարկությունից մեկի շունչը բռնվում է, ինչպես հնոցի մեջ խեղդվող բոցի ծուխը, և այլն:

Վոճի ռեալիզմի կողքին Մուրացանը տուրք է տվել նաև վոճի ռոմանտիզմին, այսինքն բարձր ոդրամատրություն և վոդևորություն, վոր վերին աստիճանի հանդիսավորություն է տալիս արտահայտչական ձեվին: Նա խոսքերի այնպիսի ընտրություն է անում, վորն նպատակին է վորոշ էմոցիայի փոխանցումը ընթերցողին: Նա դործ է ածում հռետորական պարալելիզմ-

ներ, կրկնութիւններ, լիրիկական հարցեր և բացականչութիւններ:

Վոճի հանդիսաւորութիւնը վորոշ չափով արդարացում և դռնում նրանով, վոր հեղինակը պատկերացնում է հայ պատմութեան դրամատիկ մոմենտներից մեկը, ապա՝ դրծող անձերի մեծամասնութիւնը իր դարաշրջանի սխոլաստիկական կըրթութեան ղպրոցն եր անցել: Դրանով պիտի բացատրել նաև դրաբար բառերի և արտահայտութիւնների առատ դործածութիւնը, վոր տեղ տեղ դրվածքի մեջ մուծում է վորոշ արխայիզմ: Մենք արդեն ասել ենք, վոր դարի կոլորիտը հարազատ պահելու համար դրաբարի ոգուտագործումն անհրաժեշտ է: Այստեղ միայն դրվում է չափի խնդիր. և մեզ թվում է, վոր Մուրացանը դա ավելի մեծ չափով է արել, քան հարկավոր եր: Ցնթն հերոսների դրույթի մեջ դրաբարի վորոշ դործածութիւն թուլլատրելի յե, ապա միանգամայն անտեղի կերպով Մուրացանն ինքն իր կողմից խոսելով՝ բանեցնում է անգործածական արտահայտութիւններ, անհասկանալի բառեր, քիչ դործածական տերմիններ: Ժողովրդին մատչելի լինելու համար Մուրացանը մի շարք բառեր, ինչպես են՝ աղեբեկ, անժույժ, դառապիղ, սղոխ, կապուտ (=կողոպուտ), վառ (=դրոշակ), և այլն, կարող եր աչխարհաբար թարգմանութեամբ տալ, առանց դարի կոլորիտը վնասելու:

Նույնը պիտի ասենք մի շարք հռետորական, հանդիսավոր արտահայտութիւնների մասին, վորոնք պարզ մարդկային հարաբերութիւններին տալիս են վոչքր ինչ արհեստական, չինծու բնույթ: Պուշկինի «Կապիտանի աղջիկ» կամ Տոլստոյի «Պատերազմ և խաղաղութիւն» վեպերի մեջ ազնվական դասի մարդիկ մեծ մասամբ խոսում են առանց հռետորական պաֆոսի, նույն իսկ ծայրահեղ լարված մոմենտներում: Մուրացանի տիրուհին իր աղախնին ասում է. «Ցնես հպարտ եյի այն ժամանակ, ինչպես լեռան կրծքին բուսած բարձրաբուն կաղնին, վոր արհամարհում է իր կողերը քերող սղոխներն ու քամին, բայց վորին վերջապես կործանում է բքաբեր հողմը...»:

Վո՛չ միայն վոճի այդ վերամբարձութիւնը տեղ տեղ դեղարվեստորեն անհամոզիչ է, այլ և հոգեբանորեն պատճառաբանված չեն հետեվյալ դրույթները:—

Նախ՝ Սեդայի վողջ պատմածները մանրամասն տալը արդարացնելու համար, Մուրացանը Սահականույշին ցույց է տա-

լիս, վորպես անտեղյակ մեկը իր շուրջը կեղած անց ու դարձին, վոր միանգամայն անհավանական է, նկատի առնելով ամենից առաջ այդ կինոջ խելքը և ուշիմությունը, ապա՝ այդ աշխարհասաստան դեպքերի նկատմամբ անտեղյակ լինելու կատարյալ անհնարինությունը:

Ցերկրորդ՝ նույնպես անհամոզիչ է այն, վոր Սեվադան մանրամասն կերպով պատմում է Դեվորդ Մարզպետունուն իր ապստամբությունների պատմությունը, և վերջինս նրան լսում է մեծ ուշադրությամբ, ասես, անտեղյակ մեկը, մինչդեռ նա չեր կարող այդ բոլորը չիմանալ իբրև Աշոտ Ցերկաթի մտերիմը և պետության առաջին մարդը:

Թե առաջին (Սեդա) և թե յերկրորդ (Սեվադա) պատմությունը շատ ավելի ընթերցողների համար է, քան թե այդ պատմությունները լսողների համար...

Ցեվ, վերջապես, յերրորդ՝ Սահականույշի ամուսնության պատմության մեջ մեզ վոր հակասություն կա. նախ՝ հայրը աղջկան և թողնում իր համար վեհատ ընտրել, բայց հետո յերևում է, վոր ինքը, այդ հայրը վորոշում է իր աղջկա վեհատացուն ով լինելը:

Մի դիտողություն էլ պիտի անել վեպի կոմպոզիցիայի նկատմամբ: Մուրացանը հայ մյուս պատմավիպասաններից տարբերվում է նրանով, վոր իր վեպի մեջ խուսափում է ընդարձակ մեջբերումներ անել պատմիչներից: Ցեվ դա նրա վիպական տեխնիկայի պլյուսներից պիտի համարել. տեղ-տեղ պատմագրի վրա հենվելով, վիպասանը, ասես, ընթերցողի մեջ հատիճ և զարթեցնում, թե մյուս դեպքերում յերբ նա ցիտատ չի բերում, նկարագրվածը ճիշտ չի, ստույգ և պատմական չէ: «Դեվորդ Մարզպետունու» մեջ Մուրացանը արևի խավարման մասին խոսելով՝ չդիտես ինչո՛ւ ստիպված և յեղել դիմել ժամանակակից պատմագրին և նրանից մի յերկար քաղվածք անել...

Ցեթե արևի խավարման նկարագիրը Դրասխանակերտցուն և հիշեցնում, Մուրացանի մի-յերկու նկարագրերները եղ հիշեցնում են մի շարք կլասիկական դրողների համապատասխան նկարագրերները: Որինակ. Սահականույշին նկարագրում է՝ նրա շրթերն ու զարդարանքները հանելու պահուն, ինչպես Հոմերոսը իր հերոսներից մեկին պատկերացնում և հագնվելու ժամանակ: Սեր և խանդ նկարագրելիս՝ Մուրացանը քննադատորեն ոգտագործում և Շեքսպիրին. Ցլիկ Ամրամի այն խոսքը թե Աստրա-

մին սիրում է այնպես, ինչպես չեխին կարող սիրել տասն ան-
գամ տասը սրտով,— բա հանճարեղ դրամատուրգի հայրենի
«տասը հազար յեղբոր» պերիֆրազն է: Սահականույշի խանդը,
նրա կասկածոտութիւնը, ծիծաղելի լինելու վախը և այլն, ո-
թեվոյական շատ գծեր ունի... Կուրացած Սեվադայի ապրում-
ները, նրա բողոքը իրեն աչքի լույսից զրկողի դեմ, նրա այն
կսկծալի խոսքերը, թե «առավոտյան արևը բերում է ինձ նույն
խավարը, ինչ վոր բերել եր դիչերը», և այլն, հիշեցնում են
Շեյլերի «Վիլհելմ Տելլի» համապատասխան նչերը, ուր պատ-
ճրված և գեների վոճրագործության մասին: Ճեվ, վերջապես,
Մուրացանի այն համոզումը, թե աստված թեպետ ուշ, բայց
պատժում և հանցավորին, սա Տոլստոյի հայրենի պատմվածքի
մի սերիֆրազն է, և այլն:

Այդ բոլորը, ի հարկե, կարող են պատահական նմանու-
թյուններ լինել. բայց մի բան պարզ է, վոր Մուրացանը իր
պատմավեպը գրելուց առաջ ուշադիր կերպով ուսումնասիրել
և վոչ միայն հայ պատմագիրներին, այլ և ոտար համապատ-
ասխան գրականությունը:

Հոդվածի սկզբում ասացինք, վոր Մուրացանի պատմավե-
պը հայ գրականության լավագույն յերկերից մեկն է. լավա-
գույն է, վորովհետև ստեղծված է ժողովրդայնության ոգով: Վե-
պասանը վո՛չ միայն ժողովրդի ցավերն է նկարագրել, այլ և
վերապրել և այդ ցավերը: Այդպիսով նա դարձել է հայ դեմո-
կրատական գրականության յերախտավորներից մեկը:

Մուրացանի պատմավեպի մեջ և կազմում ժողովրդի
պայքարը ոտարերկրյա բռնակալության դեմ: Այդ կռվի մեջ
հեղինակի համակրանքը աշխատավոր մեծամասնության կողմն
է: Բայց դա խնդրի մի կողմն է. բացի այդ ոգետակար միտ-
միից, նրա վեպը տալիս է ընթերցողին նաև ոգետակար դի-
տողություններ, պատմական եպոխայի ճշդրիտ իմացություն: Մու-
րացանը մի այնպիսի վեպ է գրել, վոր կարող է բավարարել գի-
տունին և սովորական ընթերցողին: Լիոն Ֆեյխտվանգերը հենց
դրա մեջ է տեսնում պատմավեպի կարևոր արժեքը: Վեպը վոչ
միայն պետք է ուսուցանե անցյալի մասին, այլ և դնահատի
այդ անցյալը: Մուրացանի մոտ այդ դնահատությունը կա, վո-
րովհետև նա դնդքերին նայում է ժողովրդական տեսանկյու-
նից, պատմելով հայ դեհվավարների առաջ բերած ազդային շար-
ժումը խալիֆաթի դեմ: Այդ իմաստով Մուրացանի յերկը դա-

գիտական արժեք և ստանում, ուսուցանելով ժողովրդական, դեմոկրատական հայրենասիրություն, մեծարելով հավաքական ուժի թովչանքը: Վեպի բարոյական-հումանիստական հիմնական այդ մտահղացումը պայմանավորում է դրա գեղարվեստական արժեքի և նշանակության մի խոշոր մասը:

Մուրացանը վո՛չ միայն իր ժամանակակիցներին, այլ և այսօրվա մեր խորհրդային հասարակայնությանը առողջ գեղարվեստական սնունդ է տալիս, հայրենիքի սերը զգացմունքներից լավագույնը հայտարարելով, հայրենիքի ուժը աղբի մեծամասնության մեջ տեսնելով: Այդ բոլորով հանդերձ՝ նա իր ընթերցողին դնում է հայրենիքի թշնամիների դեմ, պնդելով թե՝ «Ո՛չ քան քիչ լինի թշնամիների թիվը, այնքան ավելի հանգիստ կլինի հայրենիքը»:

Մուրացանի «Դևավորդ Մարզպետունի» պատմավեպը կարդալու հետո դուք նոր լեզք եք ստանում սիրելու մեր ժողովրդի հերոսական անցյալը և բուռն ատելությամբ լցվելու նրա անողոք թշնամիների դեմ: «Սիրել իր մեծ, ազատ հայրենիքը— նշանակում է դիտենալ նրան, հետաքրքրվել նրա անցյալով, պարծենալ նրա պայծառ, հերոսական եղերով և ատել նրան ճնշողներին, տանջողներին» («Պրավդա»):

Պրոֆ. Ա. Տերտերյան

1939 թ. V. 21.

X ի

Ե

ԳԱՌՆՈ ՄԱՐՏՈՑՈՒՄԸ

Հայկազն նահապետի այս դաստակերտը, որ Տրդատ մեծի ձեռքով ավելի չքեղ վերաշինվելով՝ թե՛ հայոնի պատերազմների մատնակ ծառայել եր պետությանը իբրև անառիկ ամրոց և թե՛ խաղաղության միջոցին պատսպարել յուր մեջ արքունական դահճերն ու հարստությունները, ինչպես և վտանգների յերեսից փախչող իշխանական ընտանիքները, ընդմիմին մնալով և ապահով ձեռքց հայ ղորքերի համար,—չնայելով ապիրատ Վատակի ձեռքից Վարդանաց որերում կրած հիմնական ավերմունքներին—տակավին շեն եր և կանգուն այն որերում, յերբոնցից սկսվում և մեր պատմությունը:

Նա գտնվում եր Այրարատ նահանգի Մաղաղ ու Վոստան գավառների մեմյանցից բաժանող Գեղամ լեռան մի վոտի վրա, դեպը վերջին զարերում, յուր ծոցում գտնվող Ս. Գեղարդի անունով, Գեղարդատար կոչվելով:

Բարձրադիր սարավանդակը, վորի վրա կառուցած եր ամրոցը, շրջապատված եր բնության փառահեղ և ահարկու տեսարաններով:— Հսկայակերպ ժայռեր, անհեղեղ հողաղանգվածներ, ահավոր անդունդներ, խորաձորեր, իսկ ավելի հեռվից՝ գեղատեսիլ լեռներ խրոխտ ու կոհակավոր գագաթներով՝ ծածկում եյին նրա շրջակայքն ու հանդիսակաց հորիզոնը:

Ամրոցի առջևից՝ վրիվրադեղ ալիքները գարնանդներից գահավիժելով՝ հոսում եր Ազատ գետի արընթաց մի վտակը, վոր սարավանդակին ընդդրկող ձորակից անցնելով՝ մեանում եր Ազատի յերկրորդ վտակի հետ և ապա ոճապատում պատահեռելով՝ դուրս գալիս Դվինա ընդարձակ դաշտը՝ Վոստան գավառի արտասահմաններին ջուր ու դյուղություն մատակարարելու:

Հինավուրց ամրոցը, վոր յուր հինգ յեկեղեցիներով, քաղաքաթիվ շինութիւններով ու պահականոցներով հանդիսում եր մի-ապաղաղ ժայռերից ու ամբարտակներից զանդված բարձրութեան վրա, պատսպարված եր ամեն կողմից թե՛ բնութեան և թե՛ արհեստի ամրութիւններով։— Հյուսիսային կողմից՝ պաշտպանում եյին նրան, բացի հինաբոլոր պարիսպներն ու աշտարակները, այլև Գեղարդաւանի այն պահավանդները, վորոնք աստիճանաբար բարձրանալով՝ հգվում եյին Գեղամ լեռան հետ։ Արևելյան և արևմտյան կողմերից՝ շրջապատում եյին հսկայական պարիսպներ և հզոր աշտարակներ, վորոնք շինված եյին կոփված ու հղկված խանձաքար ժայռերից և ամրացրած կապարով ու յերկաթով։ Իսկ հարավային և մասամբ արևելյան կողմից՝ բարձրանում եյին միակտուր քարաժայռերի բնական պատնեշներ, վորոնք խորաձորի մէջից՝ հսկայական բուրգերի նման դեպի վեր ձգվելով, ընդգրկում եյին ամրոցի այս շրջապատը և այդպիսով դարձնում նրան ահարկու և անմատչելի։

Հարավ-արևելյան այս բարձրութեան վրա, ամրոցի գրեթե ծայրին, իրրև զուտ ոդաչուս հսկաներ, կանգնած եյին առաջին՝ արքունական դղյակը յուր մոտյալ շինութիւններով ու աստանավոր աշտարակներով, և յերկրորդ՝ Տրդատա հոյակապ հովանոցը քսանևչորս հոնիական բարձրաքանդ սյուներով, տակավին անեղծ արձաններով և բարձր ու քանդակազարդ ձեղունով, վոր հովանավորում եր արքայական դաստակերտի՝ հռոմէական արհեստի առեղծագործած՝ ուրիշ բազմաթիվ զարդարանքները։ Նրա սյուներազարդ և ընդարձակ սրահից յերևում եյին, ինչպես ափի մեջ, թե՛ ամրոցը յուր բնակարաններով ու պահականոցներով և թե՛ շրջակա լեռներն ու ձորերը իրանց դեղեցիկ կամ անհեղեղ տեսարաններով. այսպիսով, արքայաշեն տարածութիւնը ղէարճալի դրոսավայր մի լինելուց զատ, ծառայում եր նաև ինչպես մի գեղեցիկ դիտարան թե՛ վտանգի և թե՛ խաղաղութեան ժամանակ։

923 թվականի աշունն եր։ Գեղարդաւանը մերկացել եր արդեն այն աղքատիկ կանաչները, վորոնք հազիվ դաբնան վերջերին համարձակվում են ծածկել յուր ժայռատյաո լանջերը։ Նա այժմ ամբողջապես վոխարկվել եր քարակարկառ թմբերի ու ամբարտակների, վորոնց խոշորագեղ խստութիւնը չեյին մեղմում նուրբնիկ գառնո գեղեցիկ շինութիւնները։

Որը տարաժամել եր։ Սարի կրճերից անցնող ճանապարհների վրա շնչավոր եակ չեր յերևում։ Դիվնո դաշտից դարձողները վա-

դուց հասել էին տուն և կամ դադարել Այրիվանից խորշերում, ուր հովվերը ոչխարն և կերակուր էին տալիս ուշացած հայ անցորդներին, թույլ չտալով, որ նրանք, մուրը կոխելու վրա անցնեն Գառնո կրճեքից. վորովհետև հաղարացի ավազակախմբերը հետևում էին այդպիսիներին ամեն տեղ:

Այս պատճառով չրջակա ձորերի ու անդունդների վրա թագավորում էր ահարկու լռություն, վոր հաղիվ յերբեմն ընդհատվում էր լեռների մեջ շառաչող աշնանային քամուց, կամ դարևանդներից դահավիժող Աղատ գետի խոխոջներից:

Բաղմամարդ Գառնո մեջ անդամ դադարել էր չարժումը: Աշնանային խոնավ ու լեռնային ցրտությունը հավաքել էր ամբողջ բնակիչներին իրանց բնակարանները: Ցերեկում էլին միայն մի քանի պահապաններ, վորոնք յերկաթե դլխանոցներով, ծանր արևը դոտիներից կախած և պղնձապատ վահաններն ու յերկար նիզակները ձեռքներին՝ անցուդարձ էլին անում, վոմանք ամբողջ դռների մոտ, կամ պահականոցների առաջ, և վոմանք դղյակի շուրջը, ուր այդ ժամանակ ապրում էր Աչոտ Ցերկաթի ամուսինը, Սահականուշ Թագուհին:

Զնայելով վոր Թագավորը դեռ նոր էր հաշտվել յուր հորեղբոր վորդի Աչոտ բռնավորի հետ, և նրա հետ միասին էլ Դվին մայրաքաղաքը նորից նվաճելով՝ այլազգիներից մաքրել այն, այուամենայնիվ, ժամանակի վատթարության պատճառով, անկարելի յեր Թագավորական ընտանիքը Դվինում պահել. հաղարացի բռնավորները ամեն ժամանակ կարող էլին հարձակվել այդ քաղաքի վրա, վոր ժամանակի կռվածաղիկն էր: Ցեվ վորովհետև Թագավորը շարունակ դրաղված էր յուր տերության այս ու այն մասում բռնկող ապստամբությունները նվաճելով, ուստի Թշնամիների հասած ժամանակ Թագավորական ընտանիքը կարող էր մայրաքաղաքում վտանգի յենթարկվել: Ահա՛ այդ պատճառով Սահականուշ Թագուհին էլ ապրում էր Գառնո ամրոցում և նրա հետ էլ ուրիշ շատ ազատանի կանայք:

Զնայելով յեղանակի ցրտության և որվա տաբաժամելուն, այուամենայնիվ Թագուհին դեռ չէր հեռացել Տրդատա հովանոցից: Վերջին մի քանի որը նա անց էր կացնում այդտեղ յերկար ժամեր, դրեթե միայնակ, յերբեմն այունապարդ սրահի մեջ ճեմելով, իսկ հաճախ դնալի խորաձորը նայող պատշգամի վրա բազմելով: Այդտեղից նա լուռ և մտախոհ դիտում էր՝ մերթ ձորի մեջ շառաչող Աղատի ալիքները, վորոնք դեռատիկյա ուռենիները

քերելով և հանդիսակաց ծառերը կոծելով առաջ եկին վաղում, և մերթ գեղա լեռան բարձունքներից իջնող ճանապարհը, ուր ամեն մի հեծյալ անցորդ զբաղում եր նրա ուշադրությունը: Թաղուհին աչքերը հառելով՝ աշխատում եր վայրկյան առաջ այդ անցորդի ո՞վ կամ ի՞նչ ազգից լինելն իմանալ. և նայում եր այնքան, մինչև վոր վերջինս Ազատի խորաձորն իջնելով՝ խոտորում եր դեպի Գառնո արահետը և աչքից ծածկվում:

Աղջեն լրանում եր յերկրորդ շաբաթը, ինչ Թաղուհին սրտի անձկությամբ սպասում եր մեկին, բայց նա չեր յերևում: Այդ հանդամանքը տանջում եր նրան սաստիկ և ավելացնում մանավանդ այն վիշտը, վոր վաղուց ի վեր կրծում եր յուր սիրտը:

Կար ժամանակ, յերբ Թաղուհին ինքը հեռանում եր մարդկանցից վոչ վոքին չտեսնելու, յերբեք չխոսելու և միայն յուր հոգետանջ մտածմունքներին անձնատուր լինելու համար: Այդ ժամանակ նա մինչև իսկ զայրանում եր, յեթե մեկը համարձակվում եր խանգարել յուր մենավոր մտածությունները, կամ հոգեկան հուզմունքներից առաջացող տանջանքները: Իսկ ա՛յժմ. այժմ նա հոգնել, վհատակել եր հարատև տխրության տանջանքներից. այժմ նա վորոնում եր մինչև անդամ մեկը, վորին կարողանար յուր սիրտը բանալ, յուր վշտերը պատմել: Նրան թվում եր, թե այդ միջոցը կմեղմե յուր ցավերը...: Բայց ավա՛ղ, ամբողջ ղղյակում չկար մինը, վո՛չ կանանց և վո՛չ որբորդների շրջանում, վորին նա յուր սիրտն ու դաղտնիքը հավատալ կարողանար: Ցեվ ցավալին այն եր, վոր յեթե դտնվեր իսկ այդպիսին, դարձյալ ինքը չեր հայտնիլ նրան վոչինչ, վորովհետև չեր հավատում վոչ մի կնոջ անկեղծության, մանավանդ յեթե այդ կինը իշխանական ցեղից եր, և հետևապես, ծագմամբ իրան հավասար: Թաղուհին հավատացած եր, վոր այդպիսինները յեթե առերես իսկ կարեկցեին իրան, այսուամենայնիվ ներքուստ հուրախանային յուր թշվառության վրա, վորովհետև նրանցից ամեն մինն ուներ դրա համար յուր սրտին մոտիկ պատճառները: Նա հույս ուներ միայն մի մարդու վրա, վոր, կարծում եր, վոչ միայն կվշտակցե իրան սրտի անկեղծությամբ, այլև դուցե կկարողանա թեթևացնել այդ վշտերը: Ահա՛ այդ մարդուն եր սպասում Թաղուհին այնքան անձկությամբ, վոր, ասկայն, հակառակ յուր խոստման և սուրհանդակի բերած տեղեկության, չեր յերևում տակավին:

Բայց ահա՛ մոտենում եր Թաղուհուն տարիքավոր մի կին,

մ[illegible]ին հասակով, բարի դեմքով, աղու աչքերով, ժպիտը շրթունքներին և կարծես վախենալով՝ թե մի՛ դուցե յուր մոտենալը դրդուն թագուհու զայրույթը։

Այս կնոջը հայտնի էին թագուհու ցավերը, տանջող վշտերը։ Նա սկզբից արդեն ամեն բան տեսել, քննել և ստուգել էր։ Նա անկեղծ սրտով վշտացել և արտասվել էր մեծ տիկնոջ համար դեռ այն ժամանակ, երբ նա ինքը, տիկինը, անտեղյակ յուր դժբախտությանը, զվարճանում էր արքայական զբոսանքներով մերթ Սյունյաց և մերթ Գուգարաց լեռներում։— Այդ կինը Սեդան էր, թագուհու զրուկադուքի դայակը, դղյակում յեղող կանանց մեջ ամենից բարին և աղնվասիրտը։ Ներան, այո՛, հայտնի յեր ամեն ինչ վաղուց. բայց նա այդ մասին վոչինչ չէր խոսել մինչև այժմ թագուհու հետ այն պարզ պատճառով, թե յերբ մարդ չի կարող (տեսավին իրան անհայտ) յուր դժբախտության առաջն առնել, ապա լավ է, վոր նա յերբեք այդ դըժբախտությունը չիմանա և կյանքը լիզուր չդատապարտե։ Իսկ այժմ, յերբ արդեն թագուհին ամեն բան դիտեր, Սեդան հա՞րմար էր նրա հետ խոսել, ցավակցել նրան կամ մխիթարել։ Ձե՞ վոր նա մի որ յուր կաթնատունն և յղիել, յուր զրկումն և մեծացել։

Այսպես էր մտածում Սեդան, բայց և հետո խղճալի խելքերում, վոր Սահականուշը՝ Գարդմանու իշխանի դուստրը, այլևս կաթնատուն չէ, վոր նա այսոր յուր թագուհին և, վոր ինքը կարող և միայն նրա վոտքերը համբուրել. բայց հավասար նստել նրա հետ, կամ վշտակից նրան, իհարկե չէր պիտի համարձակվեր։ Այդ որից, յերբ Սեդան իմացավ, թե թագուհին ծանոթացել և արդեն յուր դժբախտությանը, խեղճ կինն այլևս հանգստություն չուներ։ Ճշմարիտ է՝ նա վոչնչով չէր կարող ոգնել յուր թագուհուն, բայց միակ խնամքը, վոր նա կարող էր և պարտավոր էր տանել, տանում էր։ Այդ այն էր, վոր նա չվաքի այնս հետևում էր մեծ տիկնոջը ամեն տեղ, և աշխատում հասկնալուն չափ հանգիստ խանգարել նրա մենավոր մտածությունները, վորով, կարծում էր, թե կարող և վոքրի չափ պահպանել նրա առողջությունը։

— Որը տարաժամել է, սիրելի թագուհի, չեմ՞ր հաճիլ դղյակը վերադառնալ, մոտենալով պատշգամին հարցրեց դայակը։

— Դու այստե՞ղ ես, Սեդա, անհանգստությամբ դարձավ դեպի նրան թագուհին։

— Այո՛, մեծափառ տիկին. յեկա հայտնելու...

— Ցնվ վազո՞ց ես դու այստեղ, ընդհատեց նրան Թադուհին կասկածոտ յեղանակով, վախենալով, կարծես, վոր դայակը լսած լինի յուր վշտերը մատնող մի վորևե խոսք կամ հառաչանք:

— Հենց վոր արևը սարի յետևն անցավ:

— Իսկ յես պատվիրել եմ, վոր վոչ վոք իմ միայնությունը չխանգարե:

— Այո՛, մեծափառ տիկին, քո պատվերը յես դանց անել չեյի համարձակվիլ, բայց որը ասրաժամել եր և քամին բարձրացել, դու կարող եյիր մրսել, յեկա հիշեցնելու, վոր դղյակը վերադառնալու ժամանակ է:

— Հիշեցնո՞ղ, ի՞նչ է նշանակում այդ, Սեդա, կես զարմացած և կես բարկացած հարցրեց Թադուհին:

Բարի դայակը չլսեց Թադուհին: Նա իրավունք չուներ ասել Թադուհուն այն ամենը, ինչ վոր ինքը ճշմարտություն եր համարում: Նա զգաց յուր սխալը, ճնշվեցավ, և յուր քաղցր աչքերը կարծես թաղնվեցան արդեն կիսոցված վոսկիների մեջ. մի թեթև տատադուն փայլեց յուր դալկացած այտերի վրա, ինչպես ճմեռվան դժգույն արշալույս, վոր զարկում և ճյունապատ ժայռին: Բայց յուր անուշ ժպտով, վորից անբաժան եր մայրական խանդն ու գորովը, նա ծածկեց չուտով յուր ներքին ճնշման արտաքին պատկերը: Թադուհու լուրջ և անթարթ հայացքը, վոր տակավին սևեռած եր յուր վրա և դեռ, կարծես, բացատրություն եր պահանջում իրանից, յուր այդ քաղցր ժպտի շնորհիվ հեռուհետե մեղմացավ. Սեդան համարձակություն առավ խոսելու: Ցնվ իրավ, չե՞ վոր նա սիրում եր Թադուհուն և նրա զաղանիքներն իմանալու համար չեր, վոր հետևում եր նրան, այլ պահպանելու նրա թանկագին առողջությունը, վորի վրա դողում եր ինքը, իբրև վորդեգորով մայր: Մի՛թե, արդարև, անկեղծ սիրո այս արտահայտությամբ նա մի հանցանք եր գործում: Հարկավ վոչ, ուստի և հաստատուն ձայնով պատասխանեց.

— Ցնկա հիշեցնելու, վոր ցուրտ է և Թադուհին կարող է մրսել:

— Այդ յես ինքս կարող եյի իմանալ, նկատեց Թադուհին:

— Վոչ, Թադուհի. յերբ դու ընկղմում ես սխուր մտածմունքների մեջ, այլևս չես զգում, թե ի՞նչ է կատարվում քո շուրջը...:

— Սեդա՛, մայր Սեդա, դու զառանցում ես, ընդհատեց Թադուհին դժգոհությամբ:

— Այդպես է, իմ սիրելի Թադուհի, կրկնեց Սեդան ավելի հաստատ ձայնով,— անցյալ որը առաջին տեղատարափի ժամանակ ամենքը քաշվել էին տուն, նույնիսկ դղյակի առաջ վոչ մի պահնորդ չեր յերևում, իսկ դու դարձյալ ճեմում էիր այստեղ. կարծես զարնան որերը լինեին և դու մեր Գարդմանա դրախտներում...:

Թադուհին մի անհանգիստ շարժում արավ. նրան թվաց, թե դայակը կշտամբում է իրան՝ անուշադրության համար, թե նա այդ անում է դուրն հակառակորդ իշխանուհիներից մեկին հաճոյանալու մտքով, թե ուրեմն յուր դժբախտությունը հայտնվել է արդեն բոլորին և նախանձոտ հակառակորդուհիներն սկսում են անարգել իրան, վիրավորելով յուր դշխոյական հպարտությունը յուր խոր սառորդյալների ձեռքով:

Այս մտքերը վայրկենապես վրդովեցին Թադուհու սիրտը. բայց նա յուր հուզմունքը ծածկելով՝ մեղմ ձայնով հարցրեց.

— Սեդա, ո՞վ ասաց քեզ, թե Թադուհին ընկղմում է ախորժանքների մեջ, և թե այդպիսի ժամանակներում նա չէ իմանում, թե ի՛նչ և կատարվում յուր շուրջը:

— Վոչ վոք, իմ սիրելի աղջին, այդ յես ինքս եմ տեսնում: Սեդան պետք է կույր լինի, վոր յուր սերուհու դեմքի մշտական թախիծը և նրա ճակատի սխոր կնճիռները չտեսնե... Վաղուց, վաղուց դիտեյի, թե ի՛նչ վիշտ և կրծում քո աղնիվ ու բարի սիրտը, բայց վոչինչ չեյի համարձակվում առել քեզ, վորովհետև դիտեյի, վոր քո ցավերի մասին խոսելով՝ միայն քո՛ քո՛ սիրտդ պիտի վշտացնեյի, առանց տակայն իմ Թադուհուն մի ոգուտ տալ կարողանալու:

Թադուհու սիրտը չդիմացավ: Նախկին կասկածոտ մտածմունքները տեղի տվին հանկարծ մի վստահության, վոր կարծես հենց նույն րոպեին ծնվեց յուր մեջ դեպի բարի դայակը. նրա ձայնի մեջ նա այնքան անկեղծություն ու դորով զգաւ, վոր նրան թվաց, թե իրան հետ խոսողը հարազատ մայրն է և վոչ յուր սանուհին:

Բայց և այնպես վոչինչ չպատասխանեց, այլ լուռ և մտախոհ բարձրացավ բազմոցից, և ուղղվելով յուր սեղ ու վայելուչ հասակի ամբողջ վեհությամբ, նայեց դայակի վրա քաղցր և վստահությամբ լի աչերով: Այդ րոպեին նա կցանկանար լսել նրանից ամենը, ինչ վոր նա դիտեր յուր վշտերի մասին, կցանկանար առուղիղ նորից այն բոլորը, ինչ վոր վաղուց և ավելի

առուգությամբ հայտնի չեր իրան։ Բայց յուր դյուցազական հպարտությունը չեր ներում իրան այդ թուլությունը. նա մինչև այժմ վոչ վոքի հետ չեր խոսել այդ մասին, ուրեմն և դայակի հետ չեր խոսել, բայց կցանկանար, վոր սա ինքը սկսեր խոսել, առանց իրանից հրամանն առնելու։

Սեդան չհասկացավ Թադուհու լուռ և մտախոհ հայացքի նշանակությունը. նրան թվաց թե յուր համարձակ խոսքերից վշտացել է նա արդեն. ուստի և Թադուհու հայացքից խուսափելու համար շտապեց վերցնել և ձգել նրա ուսերին պերճ ամուրենին, վոր Թադուհու բարձրանալու ժամանակ սահել, ընկել եր բազմոցի վրա։

— Դրա համար դու արդեն անցրել ես տարիքդ, մայր Սեդա, ո՞ւր են իմ նաժիշտները... հարցրեց Թադուհին մեղմությամբ։

— Ո՛, Թո՛ւյլ տուր, վոր միայն յես ծառայեմ քեզ, իմ քաղցը, իմ աննման Թադուհի. մի՞թե Սեդան պատասխել է այնքան, վոր այլևս վոչ մի բանի պիտանի լինել չե կարող։

— Մայր Սեդա, ա՛յդ չեյի կամենում ասել...

— Թե՞ իմ ներկայությունը հաճելի չե Թադուհուն։

— Սեդա, դու ինձ ընդհատում ես...

— Կամ դուցե անզգույշ խոսքեր արտասանեցի, վորոնք վշտացրին իմ Թադուհուն։

— Վո՛չ, վո՛չ, իմ Սեդա՛. քո ներկայությունը միշտ հաճելի յե ինձ. ասացույց, վոր յես իմ մեհնավոր զբոսանքների ժամանակ վոչ վոքին Թույլ չեմ տալիս լինել ինձ հետ, բայց դու միշտ կաս և ամեն անգամ, յերբ կամենում ես, խանգարում ես ինձ, առանց նայելու, թե Թադուհին ցանկանո՞ւմ է այդ, թե վոչ։

— Այդպես ել պիտի անեմ, մեծափառ տիկին. բարկացի՛ր ինձ վրա, յեթե հաճելի յե քեզ. բայց Թույլ տալ, վոր ժամերով տխուր մտածմունքների մեջ խորասուզվես, չեմ կարող. այդ կվնասե քո Թանկագին առողջությանը։

— «Թանկագին»... այո՛, դուցե քեզ համար, իմ բարի Սեդա. միայն քեզ համար... չշնորհց Թադուհին ինքն իրան և ասաց դայակին դառնալով հարեց.— իրավունք ունիս, մայր Սեդա. յես քեզ վրա չեմ բարկանում... Բայց յես արդարև յերկար մը-նացի բացօթյա. ո՞ւր են նաժիշտները։

— Դու հրամայել ես, վոր նրանք չերևան, մինչև կոչի ձայն չառնեն։

— Կանչիր ուրեմն. թող դահավորակս բերեն։

Այս ասելով Թադուհին առաջացավ դեպի հովանոցի անկյունը, և այնտեղից մոտ կանդնելով՝ սկսավ դիտել շառագույն լուսինը, որ կամաց-կամաց բարձրանում էր հանդիպակաց լեռների յետևից։ Թեպետ ցուրտն արդեն զգալի չէր, և քամին փըչում էր հաճախ, բայց յերկինքը վճիտ էր և անամպ. աստղերն սկսել էին վայլել, և լուսնի սկավառակը, որ կարծես կախված էր լեռան գագաթին իբր մոգական մի լապտեր, սկսում էր լուսավորել պարեխառը լեռներն ու ըլուրները։ Դարեվանդներից դահավիժող Աղատ գետի վրտփրտխառն ալիքները տեղ-տեղ վալվլում էին ինչպես արծաթի սահանք։

Թադուհին զբաղվելուց լուսնկա յերեկոյի դեղեցկությամբ և կրկին խորասուզվեց մտածությունների մեջ։ Փոքր մի ևս և նա նորեն դեպի պատշգամբը պիտի դառնար և բազմոցի վրա ընկնելով անճնաոաուր լիներ յերևակայության ասպնջող թռիչքներին. բայց նաժիշտների ձայնը և լույսը ջահերի, որ դղյակի սպասավորները ձեռքերին բերում էին, սթափեցրին նրան։

Թադուհին յետ նայեց։ Նաժիշտների և դայակի հետ միասին գալիս էր նաև տիկին Գոհար, Մարզպետունի իշխանուհին, որ հասակաջանալով՝ ակնածությամբ դլուխ խոնարհեց Թադուհուն և հաճոյական խոսքերով սրտունջ հայտնեց նրան յուր չափազանց մենասիրության համար։

— Այստեղ նստած դիտում եմ Գեղա լեռան ճանապարհը, որպեսզի Գևորգ իշխանի դալստյան լուրն ամենից առաջ հաղորդիմ քեզ, պատասխանեց Թադուհին անուշ ժպտալով։

— Շնորհապարտ կլինիմ, յեթե միայն ուրախ լուր բերե նա մեզ, հարեց Գոհար իշխանուհին և ձեռքը տվավ Թադուհուն՝ ոդնելու նրան հովանոցի աստիճաններից իջնելու։

— Իսկ յեթե ուրախ լուր չբերի՞, հարցրեց Թադուհին։

— Այն ժամանակ կցանկայի, որ ամբոցի դռները չբանային նրա առաջ, հատակեց իշխանուհին։

Թադուհին ժպտաց և վոչինչ այլևս չխոսեց։

Հովանոցի առաջ կանդնած էին չորս հուժկու սպասավորներ, ձեռքերին բռնած Թադուհու վոսկեղոծ դահավորակը, զարդարված ծաղկանկար մետաքսով և վոսկեթել վինջերով։

Նաժիշտների ոդնությամբ Թադուհին բազմեց նրա վրա։ Ջահընկալ սպասավորները լուսավորեցին ճանապարհը, որի տատածությունը մինչև դղյակը հաղիվ մի քանի տասնյակ քայլ էր։

Թահավորակին առաջ անցավ իշխանուհու և նաժիշտների ընկերակցությամբ։

Դղյակի լայնակամար դռան առաջ նույնպես վառվում էին ղամբարներ. և մի խումբ զրահավոր պահապաններ անցուդարձ էին անում այդտեղ։ Ցերբ Թագուհու դահավորակը մոտեցավ, նրանք խնկուն շարվեցան կարգով և ի նշան հպատակության, նիզակները խոնարհեցին այնքան, որ նրանց տեգերը կպան գետնին։

— Ձեր հիանալի՞ տը, հարցրեց Թագուհին, մոտենալով պահապաններին։

— Այստեղ եմ, մեծափառ տիկին, այս խոսքերով մոտեցավ Թագուհուն մի բարձրահասակ և զեղադեմ յիրխատասարդ, որ մյուսներից զանազանվում էր յուր զենքերի փայլունությամբ և դվիանոցի վրա ծածանող ցցունքով։

— Բերդակալից լո՞ւր...

— Տեր բերդակալը պատվիրեց հայտնել, որ աղեղնավորներն ու զեղարդավորները զրկված են մարտիկոցները, բերդապահները հսկում են պատնեշները, պահակախմբերը դանվում են աշտարակներում։

— Ամրոցի բանալինե՞րը...

— Սպասում են Թագուհու հրամանին վիականքները դնելու համար։

— Ինչո՞ւ այսքան ուշ. արդեն մթնել է։

— Այրիվանքից բանբեր յեկավ և հայտնեց, որ այս գիշեր վեհը պիտի ժամանե այստեղ։ Տեր բերդակալը ցանկանում է իմանալ, թե արդյոք բանալինները յուր մոտ պիտի մնա՞ն մինչև վեհի գալը։

— Հայտնի՛ր բերդակալին, որ վիականքները դնե և շուտափ ինձ մոտ։

Հիանալիսը գլուխը խոնարհեց և ուղղվեցավ դեպի Ամոդ դռան վողոցը։

Հասնելով դղյակի դռանը, Թագուհին իջավ դահավորակից և ներս մտավ կամարակապ սրահը։ Սա մի ընդարձակ և բոլորշի սենյակ էր, համակ քարաշեն։ Նրա աջ ու ձախ կողմերից բացվում էին չորս վոքրիկ և խորշավոր դռներ, վորոնցից ամեն մինը տանում էր դեպի դղյակի ներքին հարկերի զանազան բաժանմունքները կամ ծածկարանները։ Դռների մեջտեղից բարձրանում էր վորձաքարե լայնադիր սանդուխտ, որ յուր վերին

Բ

ԸՆՏՄՈ ՆՈՐՈՒԹՅՈՒՆ

— Ախ, թաղուհին չի՛ դուշակում վհուկի դիշեր ժամանակ մեր ամրոցը դալու պատճառը, հարցրեց Մարդպետունի իշխանուհին, կամենալով կարծես ընդարձակ դահլիճի՝ նորեկներին շրջապատող անհաճո լռությունն ընդհատել և ապա խոսքն էլ նստելով թավշապատ յեռտանու վրա, որը դանվում եր թաղուհու բազմոցի հանդեպ՝ ուշադիր աչքերը հառեց թաղուհու վրա, սպասելով նրա պատասխանին։

— Անշուշտ արտաքո կարդի մի նորություն ունի հոդևոր հայրը մեղ հաղորդելու, պատասխանեց թաղուհին տարակուսական յեղանակով։

— Թո՛ թաղուհուն այցելության ե դալիս։

— Դրա համար կարիք չկար դիշերանց յերևիլ վանքից. վատ առաջ, Այրիվանքը հեռու չե մեղանից։

— Ձախաղանց անհանդստացնում ե ինձ այս լուրը։

— Իսկ ինձ անհանդստացնում ե Գևորդ Իշխանի ուշանալը։ Արդեն յերկու շաբաթը լրացավ, ինչ նա հեռացել ե մեղանից։ Եվթե կաթողիկոսի դալը կապ ունի մի նոր դժբախտության հետ, ապա ուրեմն Իշխանի բացակայությունը կրկնակի վտանգի մեջ ե դնում մեզ։

— Մի՛թե դու, մեծափառ տիկին, կասկածում ես թաղավորի հավատարմության վրա։

— Ուսիքի կուսակալին նվաճելը մեծ դործ չե, բայց հավատարմությունը ապրված ե տալիս։ Եվթե թաղավորը հանդիսավոր չլիներ անհավատարմության, ապա Գևորդ Իշխանն այստեղ կլիներ, կամ դոնե սուրհանդակը լուր կբերեր, թե Ցլիկ-Ամբամը հալածված կամ ղերված ե։

մասում բաժանվում էր յերկու ճյուղերի. դրանցից մինը հանում էր մինչև հարկը, ուր իշխանաղուն տիկնանց և որիորդների կացարաններն էին, իսկ մյուսը՝ դեպի վերին դատիկոնները, ուր ապրում էր Թագուհին յուր նաժիշտներով: Սանդուխները վերից ի վայր ծածկված էին այունական գորգերով և լուսավորված կամարներից կախած պղնձե կանթեղներով:

Թագուհին նաժիշտների ուղեկցությամբ սկսավ սանդուխները բարձրանալ և խոտորելով դեպի աջ, հասավ վերնասրահին, որ լուսավորված էր կրկին աշտանակներով: Սա մի դեղեցիկ և զմայելիք շինություն էր, զարդարված վորմնասյուներով, խորշավոր անկյուններով, քանդակազարդ ձեղունով և մյուսներն քարերից կերտած հատակով: Սրա վրա նույնպես բացվում էին կամարակապ դռներ, վորոնք հանում էին դեպի այդ հարկի զանազան բաժանմունքները:

Ամենից մեծ դռնով մտնելով՝ Թագուհին անցավ յերկու փոքրիկ սենյակներ, վորոնց պատերը չինված էին ապակեբուռ դույնզդույն աղյուսներից և դեղեցիկ կերպով փակվում էին արծաթե կանթեղների լուսի առաջ: Այդ սենյակները զարդարված գորգերով ու ոթոցներով՝ ծառայում էին սենեկապան նաժիշտներին:

Այդտեղից Թագուհին անցավ մի ընդարձակ զարդարուն դահլիճ, վոր լուսավորված էր չորս մեծամեծ արծաթե ճրագարաններով: Դահլիճի պատերն ամբողջապես չինված էին նրբատաշ սպիտակ քարից, զարդարված հարուստ դրվագներով և կարմրաքարե վորմնասյուներով ու դռներով: Ձեղունը նույնպես քարաշեն էր և քանդակազարդ: Նրա չորս անկյունները պաճուճած էին դույնզդույն քարերի դոդավոր և ուռուցիկ մյուսիսներով. իսկ միջավայրը, ուր լուսանցքն էր գտնվում, բարձրանում էր դմբեթաձև, դռներով շրջանակներով ու նույնպես զարդարված դույնզդույն և խորշավոր մյուսիսներով: Դահլիճի հատակն ամբողջապես ծածկված էր գորգերով. պատերի տակ շարված էին բազմոցներ ու տախտեր, վրաները ծածկած դիպակե բարձեր ու մետաքսյա ոթոցներ:

Թագուհին բազմեց դահլիճի ճակատին դրված դիպակազարդ բազմոցի վրա, և նաժիշտներից մինը խոնարհելով՝ դրավ նրա վոտքերի տակ մետաքսյա փինջազարդ բարձը:

— Անհաջողությա՞ն... Ո՛չ, մի՛ ասիր, սիրելի Թադուհի։ Ասելած չեմն, որ Թադավորը Ցլիկ-Ամրամի հետ ունեցած ընդհարման մեջ անհաջողության հանդիպեց. այդ արդեն մեծ նախատինք է թե՛ Թադավորի և թե՛ զորքերի համար։

— Ամենից առաջ ա՛յն իշխանները, որոնք անոգնական են թողել Թադավորին և դրաղվեր են միայն սեփական ամրոցները պահպանելու հոգսերով, դառնությամբ նկատեց Թադուհին։

— Հարկավ, ամրոցների պահպանությունը նույնիսկ կանանց կարող էլին հանձնել, հարց իշխանուհին, ցանկանալով ուղղել յուր սխալը։

— Ուրեմն հաջողության ապատևու իրավունք չունինք։

— Բայց լեթե առածուն հաճելի լինի...

— Այո՛, լեթե միայն հաճելի լինի... հեղնական ժպիտով ընդհատեց Թադուհին։

Այդ միջոցին ներս մտավ սենեկապան ապատուհին և հայտնեց Թադուհուն, որ բերդակալը Թուլլոլուբյուն և խնդրում ներկայանալու։

— Թո՛ղ ներս գա, հրամայեց Թադուհին։ Մի քանի րոպեյից ներս մտավ բերդակալը։ Դա մի տարիքավոր, բարձրահասակ, լուրջ ու պատկառելի դեմքով և ալևխառն մազերով տղամարդ եր, դուռնալինդ հագնված, արծաթապատ սուրը ձգդրին և պղնձե ձաղավարտը ձեռին։ Նա համաչափ ու հաստատուն քայլերով մտավ Թադուհուն և խորը գլուխ տալով խնդրեց ընդունել ամրոցի բանալիները, որ յուր հետ բերել եր ապատավորը ներկայացնում եր արծաթեն սկուտեղի վրա։

Թադուհին վերցրեց բանալիները և հանձնեց դայակին, որ կանգնած եր իրանից փոքր ինչ հեռու։ Վերջինս առնելով այն, տարավ Թադուհու առանձնարանը։

Սա մի ծեռ եր, որ կատարվում եր ամեն յերեկո միևնույն կարգով։

Քանի Մարզպետունի իշխանը՝ Աշոտ Թադավորի հավատարիմը՝ գտնվում եր Գառնո մեջ, բերդակալական պաշտոնը վարում եր նա անձամբ և ամրոցի բանալիները գտնվում էլին նրա ձեռին։ Այդ այն որից, որ նա Թադուհու հրամանով գնաց Ուտիք, Աշոտ Թադավորի արշավանքի մասին տեղեկություն առնելու, և, լեթե կարիք կար, ոշնական զորք հասցնելու, այդ որից Թադուհին բերդակալության պաշտոնը հանձնեց Մուշեղ անունով այս հինավուրց զորականին։ Նա իշխանական ծագումից չեր,

բայց թագավորական տան բազմամյա և հավատարիմ ծառայողներից մինն եր։ Թագուհին թելետ կարող եր ամրոցի բանալիները ընդմիշտ հավատալ նրան, իրրև բերդակալի, բայց վորովհետև ժամանակը չար եր, և շարունակ լուրեր էին հասնում, թե այս ու այն բերդը գրավվել և թշնամուց բերդակալի թուլությամբ կամ պահնորդների մատնությամբ, ուստի թագուհին, վորքան էլ վոր մեծ հավատ ուներ Մուշեղի վրա (վոր հենց յուր հավատարմության շնորհիվ էլ արժանացել եր այդ բարձր պաշտոնին), այնուամենայնիվ, վորպեսզի դիշերը հանգիստ քուն վայելե, կարդադրել եր, վոր ամրոցի դռները վակելուց հետո բանալիները դրյակը բերվեն։

— Դու կամենում էիր, վոր մինչև վեհի գալը բանալիները քեզ մո՞տ լինեին, հարցրեց թագուհին բերդակալին։

— Այո՛, մեծափառ տիկին։

— Ինչո՞ւ։

— Վորպեսզի դիշերանց բանալիներն առաձնալու պատճառով թագուհու քունը չխանգարեմ։

— Իսկ դու չդիտե՞ս, վոր բերդի դռները բացվելիս թագուհին քնած լինել չե կարող։

— Այդպես է, մեծափառ տիկին, ների՛ր քո ծառայի միամտությունը։

— Միամտությունը հանցանք չե, իմ բարի Մուշեղ, բայց թուլություն է։ Իսկ մենք չար ժամանակում ենք ապրում և ամեն մի քայլերնիս զգուշությամբ պիտի փոխենք։ Վո՞ր ժամին պիտի գա վեհը։

— Գաուիլրակը ժամը չորոշեց, այլ հայտնեց միայն, վոր պիտի հաճի ժամանել այս դիշեր։ և խնդրեց, վոր ամրոցի դռները բանալու պատրաստ գտնվինք։

— Իսկ դու չե՞ս կարողանում նրա գալստյան պատճառը դուշակել։

— Անշուշտ նա գալիս է թագուհուն այցելելու։

— Բայց ինչո՞ւ դիշերանց։

— Նորին սրբությունը շատ անփառասեր է։ Նա վախենում է տալիս հանդիսավոր ընդունելությունից և ժողովրդյան ցույցերից։

Այս միջոցին կրկին ներս մտավ սենեկապանը և հայտնեց, վոր Գոռ իշխանը ցանկանում է ներկայանալ թագուհուն։

— Թող գա, աչսոց Բագուհին ժպտալով, և նրա դեմքն ուրախ արտահայտություն ստացավ:

Թարգմանության իշխանուհին սկսավ ծիծաղելի դեպքի դուռը նայել: Զարմ արտահայտություն առացան նաև օրիորդ ներիշտների և գայակի երեսները: Նրանում էր, որ ներս մտնողը բոլորին էլ սիրելի մի անձնավորություն էր:

Եվ ահա ներս եկավ քսանամյա մի պատանի. բարձրահասակ, գեղեցկադեմ, վառվռուն աչքերով, համակ ջրահազդեստ, ոսկեզարդ սուրը մեջքին, նուշեպիսի բազպաններ ու սռնաճաններ հագած, և վայելուն սաղավարտը ձեռին:

Քայտալով նա մոտեցավ Բագուհուն և համբուրեց նրա ձեռը: Ապա մոտեցավ յուր մորը, Թարգմանության իշխանուհուն, համբուրեց նուշեպես նրա աչը, և հանգչեց բերդակալի կողքին:

— Ամեն անգամ, երբ քեզ տեսնում եմ, գոռ, ինձ թվում է, թե կամ պատերազմ ես գնում, կամ ճակատամարտից վերադառնում: Ինչու, միշտ զրահազգեստ ես, հարցրեց Բագուհին ժպտալով:

— Այդպես պատվիրել է ինձ իմ հայրը, մայր-Բագուհի:

— Բայց այս ժամին ... փակված ամրոցում, Բագուհու պղյակի մեջ ... Մեծ կարիք կա:

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ա 28699

— Ամեն վայրկյան պատրաստ պիտի լինեմ ձիմապրավելու: Ով գիտե, գուցե հենց այստեղ, ղշլակի գտի՛նեններից մինում, Թաքչող մի սպիրտի հետ պետք է լինում մենամարտել:

— Օ, վտանգավոր մարդ ես դու; Դու իշխան Նկատեց Բադուհին:

— Իմ Բադուհու և Թագավորի Շնամիների համար:

— Որոնց երևի դու չես ճանաչում:

— Ով որոնց երբեք չէի կամենալ տեսնել այս ղշլակում:

Արտպետուհի իշխանուհին, որ մայրական խանգում էցված նայում էր որդուն, նրա վերջին խոսքից հրճվեցավ և ակ. Բադուհին ուրախությամբ ծիծաղեց:

— Բայց գիտես, սիրելիս, որ այդպիսի մի Շնամի գտնվում է այժմ մեր ղշլակում, ասաց Բադուհին կեղծ լրջությամբ:

— Ինչը, եռանդով հարցրեց Գուրը:

— Որ Թագավոր ներքին խուցերից մինում, անշուշտ հարմար առիթի է սպասում մեզ վնասելու...

— Բայց ով է դա, անհամբերությամբ հարցրեց պատանին:

— Օրիորդ Շահանշահանը:

Իշխանիկը ժպտաց և շարունակեց· բայց Բա-
ղուհին ու Իշխանուհին ակամա ճիչ արձակեցին:

— Ինչ այժմ արտեղից ես գալիս· ուրախ
լուր չես բերել մեզ, հարցրեց կրկին Թագուհին:

— Այո, տխուր լուր է հաղորդելիքս, պա-
տասխանեց Իշխանիկը: Վեհից երկրորդ պատգամավոր
եկավ, որ հայտնում է, թե հայրապետն այլևս
չի գալիս մեր ամրոցը:

— Ինչ պատճառը:

— Պատճառը չհայտնեց պատգամավորը· որովհե-
տև ամրոցի դուռը փակ էր, ես աշտարակի պատու-
հանից էի խոսում նրա հետ:

Բացուհուս ուրախ տրամադրությունը կրկին
խանգարվեց· նա ընկավ մտածության մեջ: ,,Արդ-
յոք ինչ տարօրինակ և գուցե տխրահիմ ներո-
ւթյուն էր պատահել, որ կաթուղիկոսը փիշերանց
գալիս էր. Գառնի և այժմ ինչչ է տեղի ունե-
նում մտավորությունը Բուշնեւում, մտածում էր
նախնջե իրան· արդյոք ,,ստեփանց մի տխուր լուր
առավ, թե Քշնամիների մտավորությունը հարձակման մա-
սին մի բան է լսել,, ...

— Բայց ինչու համար ասացիր, թե տխուր
լուր չէ հաղորդելիքդ· մինթե վեհի գալուստն
անհաճո է քեզ, հարցրեց Բագուհին:

— Այո, Բագուհի, կարուկ պատասխանեց Իշխանիկը:

— Զարմանում եմ ... ասաց Բագուհին և մի տարակուսական հայացք ձգեց պատանու վրա:

Ինկ բերդակալը զեմքը խոժոռեց, կարծես վախեցավ գուռի նոր սահմանքներից, ուստի կարագ էին յուր առ կաթուղիկոսն ունեցած սրտային զգացմունքը վիրավորել, հրամայեց խնդրեց Բագուհուց և ոգջունելով նրան՝ հեռացավ դահլիճից:

Մարդպետունի Իշխանուհին այդ նկատեց և վշտանալով որպես անհամեստ պատասխանի վրա, շտապով հարցրեց նրան:

— Ինչպես կաթուղիկոսի զալուստը անհաճո է քեզ:

— Երբ մայր-Բագուհին կհրամայե, ինձ անկեղծորեն խոսել ...

— Խոսիր, մեզ հանգամանքներից բերված՝ անկեղծորեն խոսելն է, ասաց Բագուհին:

— Ցնծում եմ, որ վերջապես նա գալիս է մեր ամքացը ոչ մայր-Բագուհուն այցելելու և ոչ մեզ որհնելու ...

— Գո՛ռ, զգուշությամբ խոսիր, ընդհատեց մայրը վորդուն՝ հանկարծական հուզմունքից չառաջունելով:

— Գոհար իշխանուհի, թող վոր նա յուր մխքն ազատորեն հայտնե, նկատեց Թադուհին ծանրությամբ:

— Անկեղծորեն խոսելու համար, չպետք է զգուշության ուշ դարձնել, մայրի՛կ, յես խոսում եմ իմ Թադուհու և մոր առաջ: Այո՛, կրկնում եմ, կաթուղիկոսը դալիս է վոչ թե մեզ որհնելու, այլ Գառնիում ամրանալու:

— Ինչպե՞ս թե ամրանալու, հարցրեց Թադուհին:

— Անշուշտ նա լսել է, վոր հարձակում է պատրաստվում մեր լեռների վրա, և ահա՛ ապաստանում է Գառնիին:

— Ցնթե նա լսել է այդպիսի բան, ապա ուրեմն խոհեմություն է անում մեր ամրոցը դալով, նկատեց իշխանուհին:

— Վոչ, մա՛յրիկ, նա չպետք է յուր միաբաններին անհույս ու անողնական ձգե Այրիվանքում և միայն յուր անձի փրկության համար հոգա:

— Իսկ դու այդպիսի մի բան լսե՞լ ես, հարցրեց Թադուհին անհանդստությամբ:

— Վոչ, Թադուհի, յես այդպես չենթադրում եմ:

— Բայց պետք է խոսել ապացույցների և վոչ թե ենթադրությունների վրա հիմնված, ծանրությամբ նկատեց իշխանուհին:

— Մայր–Թադուհի, կհրամայի՛ք ինձ պատասխանել, դարձավ Գոռը Թադուհուն:

— Խոսի՛ր, պատասխանեց վերջինս:

— Ապացույցն այն է, մա՛յրիկ, վոր Վեհը Ցուսուփի տեղեկացից, մի վորևե Նոբրից վախենալով, անտեր և Թողել Դվինի կաթուղիկոսարանը և ապաստանել Այրիվանքի ծորձորներին: Իսկ Նոբրը վաղ թե ուշ կմտնե Դվինն և կգրավե թե՛ կաթուղիկոսարանը և թե՛ նրա կալվածները:

— Ցնթե վոստիկանը կտիրե մայրաքաղաքին, վորի պաշտպանը բացակա Թադավորն է, ի՞նչ կա զարմանալու, յեթե նա դրավե նաև կաթուղիկոսարանը, վորի պաշտպանը մի անզեն հոգևորական է, հուզված խոսեց իշխանուհին, առանց մտածելու, վոր այդ խոսքերով վշտացնում է Թադուհուն:

Իսկ վերջինս վոչ միայն խոցվեց իշխանուհու խոսքերից, այլև ներքին վրդովմունքից դրեթե այլայլունեց: Բայց չկամենալով յերևան հանել յուր հուզմունքը, կամաց–կամաց բարձրա–

ցավ բաշխուցից և անուշադիր դնչի իշխանուհին՝ մեղմ ձայնով ասաց դայակին.

— Մայր Սեդա, չես հոգնած եմ. պատրա՞ստ և արդյոք հանդստատրանս:

— Այո՛, սիրելի թագուհի, պատասխանեց դայակը:

Թագուհին մի բռնազբոսիկ ժպիտով վողջունեց իշխանուհուն և իշխանիկին, և բարի դիշեր մաղթելով նրանց, ուղղվեցավ դեպի առանձնարանը: Սեդան և նաժիշտները հետևեցին նրան:

— Ի՞նչ արիր դու այդ, մայր իմ, ինձ նյիր զդուշացնում ազատ խոսելուց, իսկ դու սուր ցցեցիր թագուհու սիրտը, վրդովված բացականչեց Գոռը:

Գոհար իշխանուհին, վոր յուր պատասխանը տվել եր միայն յուր վորդու համարձակախոսությունից զրդռված և վոչ թե թագուհուն վշտացնելու մտքով, հիշեց նորից յուր խոսքերը և մըտաց կարծես չանթահար:

— Ճես չեյի կամենում նրան վիրավորել... յես չմտածեցի... հանկարծ դուրս թռան իմ խոսքերը... ընդհատելով և նվազած ձայնով պատասխանեց վորդուն Գոհարը և աստիճ տխրեց:

Իշխանիկը բարկացած անցուդարձ եր անում դահլիճի մեջ: Հանկարծ նա կանգ առավ և դիմելով մորը՝ հարցրեց.

— Մայրիկ, բոլո՞ր կանայք մոռացկոտ են քեզ պես:

— Ինչո՞ւ համար ես հարցնում:

— Ինչո՞ւ համար... Հիշո՞ւմ ես. հայրս յուր հրաժեշտի ժամին խնդրեց քեզ և դղյակի մյուս կանանց՝ աշխատել ուրախ պահել թագուհուն. ասաց, վոր նա ծանր վշտեր ունի և ինչ պետք և մոռացնել տալ նրան այդ վշտերը... Ճես ծանոթ չեմ թագուհու վշտերին, վորովհետև այդոնք ծածկում են ինձանից. բայց դու և քո բարեկամները, անշուշտ, ծանոթ եք. դու չպետք և մեղանչեյիր վո՛չ թագուհու հանգստության և վո՛չ հորս պատվերի դեմ:

— Դո՛ւ եյիր հանցավորը, Գո՛ռ. ի՞նչպես կարողացար լոկ յենթադրությանց վրա հիմնված, թագուհու ներկայությամբ ասել, ինչ կաթուղիկոսը փախչում և Այրիվանքից...

— Ճենթադրության վրա չեյի հիմնված, մայրիկ, այլ խոսկության, ընդհատեց Գոռը:

— Խոսկությո՞ն. ինչպե՞ս:

— Այո՛, ճշմարտությունը յես ծածկեցի թագուհուց, վորովհետև չեյի կամենում անհանգստացնել նրան:

— Ի՞նչ ճշմարտություն:

— Այն, որ շուտով մեր լեռներն վրա հարձակում կլինի:

— Ի՞նչ ես ասում, Գոռ, և ո՞վ պիտի հարձակի:

— Ինքը Նըսրը: Նա արդեն դուրս է եկել Նախիջևանից և գալիս է Դվին:

— Աստվա՛ծ իմ, ի՞նչ ասացիր, բացականչեց իշխանուհին:

— Այո՛. և այդ պատահում է հենց ա՛յն ժամանակ, երբ բացակա չեն վոստանից թե թաղավորը և թե զորքերը:

— Ի՞նչ պիտի անենք ուրեմն:

— Դու պիտի ծածկես թաղուհուց այս նորությունը և ուրիշ վոչինչ. իսկ մենք կանենք ա՛յն, ինչ որ պարտավոր ենք: Այժմ չես գնում եմ բերդակալի մոտ:

Այս ասելով իշխանիկը վողջունեց մորը և շտապ քայլերով դուրս գնաց դահլիճից:

Գոհար իշխանուհին չվարած և մտածկոտը ուղղվեցավ դեպի յուր կացարանը:

Գ

ԴԱՇՏԿԻ ԶՐՈՒՑՑՆԵՐԸ

Դահլիճից հեռանալով, Թադուհին մտավ յուր առանձնարանը հոգնած հուզված: Առաստաղից կախած արծաթե կանթեղի լույսը տկար ու դժգույն թվաց նրան, թեպետ յուր հրամանովն էր, վոր մխայն մի ճրագ եր վառվում յուր քնարանում: Ուրիշ անգամ այդպիսի թերություն նա չեր նշմարիլ այդտեղ. բայց այժմ չկարողացավ հաշտվել վոչքրիկ ճրագի հետ:

— Լույս տվեք, առանց այն էլ սիրտս մթապատ է, բացականչեց Թադուհին և դիմեց դեպի նեղ, կամարակապ պատուհանը, վոր նայում եր լուսնի լուսով լուսավորված Գեղա լեռան բարձունքներին, և վորտեղից հով եր առնում սենյակը:

Կանգ առնելով այդտեղ, նա սկսավ անհագաբար շնչել թարմ ոդը, կարծես կամենալով մեղմել նրա զովությամբ յուր սիրտը վառող կրակի տապը:

Նաժիշտներից մինը նեղս բերավ խոշոր վոսկեզօծ հընդճյուղյան ճրագարանը և դրավ ընկուզենուց շինած և սատափով ու փղոսկրով զարդարած նգույրի (բոլորշի սեղան) վրա:

Սենյակը լուսավորվելով՝ յերևան հանեց հինավուրց արհեստի ներքաճյակ զարդարանքները, վորոնցով դեղարվեստասեր Տրդատը զարեր առաջ պաճուճել եր տվել յուր սիրարժան քեռ՝ հայոց թագածին որիորդի և հավերժական կուսի դիշերային հանգստարանը: Դիշյակը ուրիշ շատ սենյակների նման քարաշեն եր և այս առանձնարանը, միայն այն զանազանությամբ, վոր սա կերտված եր ընծիր, դուրնդուրն քարերից: Պատերից յուրաքանչյուրը բաժանվում եր չորս կամարամասի, հնգակաղ զուրգ վոլմնասյուներով, վորոնք հատատաված եյին դոտեզարդ պատվանդանների վրա: Նրանց հոնիական խոյակները մխավորում եյին

չորս կիսաբոլոր կամարներ։ Պատերի հարթ ու վողորկ մասերը չինված էին սպիտակ, սյուներն ու կամարները՝ դեղնագույն քարից, իսկ պատվանդաններն ու խոյակները՝ հրաշեկ պորփյուրից։ Վարպետասյուներով բաժանված մասերում մեջ ընդ մեջ չինված էին կամարաձարդ խորշեր, որոնց ներսը կերտված էր հախճապակյա դույնզգույն աղյուսներից, իսկ յեղերքը զարդարած ծիրանաքարի մանեկաձև դոտիներով։ Ծուրաքանչյուր յերկու խորշերի մեջտեղը դանվող հարթ տարածությանց վրա քանդակված էին դրասանդներ ու ծաղկանկարներ։

Սենյակի ճեղունը դմբեթարդ եր, զարդարված սև ու կարմիր քարերի ծաղկաձև շարվածներով. իսկ առաստաղը պատերի հետ միավորող քառանկյունները՝ պճնված խորչխորչյա վոսկեզոծ մյուսխոններով։

Պատերից յերկուսի վրա չինված էին յերկ-յերկու նեղ, բայց յերկար ու կամարաձեր պատուհաններ, յեղերված պորփյուրյա մանեկաձև դոտիներով։

Համակ քարաշեն այդ սենյակի հետ դեղեցիկ հակադրություն եր կազմում թագուհու քնարանը, վոր բռնած եր սենյակի աջ անկյունը սքողված մետաքսյա ծիրանագույն առագաստներով և զարդարված վոսկեթել ծոպերով ու փնջերով։ Դահլիճը մոտենալով մահճին՝ բացավ նրա ծանր առագաստները և յերևան հանեց հարուստ դիպակներից ու ներքահյուս բեհեզներից պատրաստված անկողինը, զդված պարսկական թավշյա ծաղկանկար բարձերով։ Այդա դառնալով թագուհուն՝ մեղմ ձայնով հարցրեց.

— Կհամենայի՞ր, մեծափառ, այժմեն իսկ հանգստանալ։

— Այո՛, այժմեն իսկ, առաստիկ հոգնած եմ, պատասխանեց թագուհին և յերեսը պատուհանից դարձնելով, հրամայեց նաժիշտներին յուր հանդերձը հանել։

Բայց նրա յերևան այդ մինչոցին արտահայտում եր վոչ թե հոգնածություն, այլ ներքին, հոգեկան հուզմունք, վոր սակայն մի դրավիչ փայլ եր տալիս նրա դեղանի դեմքին, լուսավոր աչքերին, նաղելի հասակին և դշխոյական սիրաճեմ շարժմանը։

Յերկու նաժիշտները միաժամանակ մոտեցան նրան։ Հանեցին նախ թագուհու սովորական զարդերը, վորոնք եյին յուր բյուզանդական ծանրագին ապարանջաններն ու դինդերը. ապա վոսկեհուռ մանյակը, վոր դրկում եր նրա փղոսկրյա պարանոցը, զոհարդարող զոտին, վոր սեղմում եր նազիկ իրանը մետաքսե նուրբ պատմուճանի մեջ, և ձախ ուսի վրա փայլող հակինթե ճարման-

դէպ, վորով կոճկված եր յուր հարուստ կուրծքն ազդող վոսկեայ մեդալիոնակը: Արձակեցին նուշնակես մարզարտյա վարսակալը, վոր ամփոփում եր նրա մազերը հունական տարազով: Հարուստ հյուսերը վոսկե կապերից աղատվելով՝ ալեծածան սիրվեցան նրա կիսամերկ ուսերի և կրծքի վրա:

Կիսով չափ հանվելով, Թագուհին նստեց մահճի վրա և սկսեց հանձնել յուր սաղմոսարանը:

Նաժիշտներից մինը մոտեցավ քնարանի տնարին և այդտեղ դրված փոքրիկ դարակից հանելով վոսկեկազմ և ակունքներով զարդարած մի գիրք, համբուրեց այն և տվավ Թագուհուն, ընդմիմին մոտեցնելով նրան ճրագարանը:

— Այժմ արդեն գոհ եմ, գնացեք և հանգստացեք, այս գիշեր ինձ մոտ կմնա Սեդան, ասաց Թագուհին նաժիշտներին:

— Բայց մի՞թե չեիր կամենալ մի բան ճաշակել, դորովալից ձայնով և հոգատար յեղանակով հարցրեց Սեդան, մոտենալով Թագուհուն:

— Ճաշակե՞լ... վո՛չ:

— Կամ ըմպել մի գավաթ ոշարակ:

— Լա՛վ. բերեք ինձ զովացուցիչ մի բան, ասաց Թագուհին, կարծես կամենալով չնորհ անել դայակին:

Նաժիշտները դուրս գնացին Թագուհու հրամանը կատարելու:

Առանձնարանի մեջ լուսթյուն տիրեց: Թագուհին բացավ սաղմոսարանը իբր թե կարդալու համար. բայց նրա աչքերը խաղում եյին գրվածքի վրա մեքենայաբար. նա վոչինչ չեր կարդում, այլ միայն այդպիսով կամենում եր հեռացնել յուր աչքերը Սեդայից, վորպեսզի մինչև նաժիշտների գալն ու վերադառնալը վո՛չ մի զրույց չկռվե նրա հետ: Բայց նա ընդում եր անհանդիստ և յուր կուրծքը, փոթորկելու մոտեցած ալիքի նման, անընդհատ բարձրանում և իջնում եր:

Վերջապես վերադարձան նաժիշտները, բերելով իրանց հետ ափսեի մեջ տեղի վրա վոսկե գավաթով զովացուցիչ ոշարակ, վոր պատրաստված եր մրգերի հյութից ու մեղրաջրից, այլև Արարատյան այգիների ընտիր պտուղներ:

— Այժմ գացեք, ասաց Թագուհին նաժիշտներին, յերբ նրանք բերածները դրին սեղանի վրա:

Նաժիշտները գլուխ խոնարհեցին Թագուհուն և «Հանգիստ գիշեր» մաղթելով նրան՝ հեռացան:

Թադուհին խորը շունչ քաշեց, վորպես թե մի ճնշող ծանրություն աղատված։ Ապա դիրքը դնելով նդուլբի վրա և յենելով դարձնելով դեպի Սեդան, վոր ձեռքերը խաչած կանգնած եր յուր սնարի մոտ, հարցրեց.

— Սեդա, դու լսեցի՞ր ինչ ասաց Գոհար իշխանուհին։

— Այո՛, տիկին, լսեցի։

— Բայց հասկացա՞ր այն ակնարկությունը, վոր քո Թադավորին եր վերաբերում։

— Ա՛յն, վոր ասաց, թե «բացակայում է Դվինի՞ց»։

— Ցնվ թե՝ «չարունակ չրջում է Ուտիքում»։

— Վո՛չ, Թադուհի. նա Ուտիքի մասին վոչինչ չասաց։

— Ի՞նչպես թե չասաց, ուրեմն յես սխա՞լ լսեցի։

— Նրա բոլոր խոսքերը մի առ մի կարող եմ կրկնել. նա Ուտիքի անունը չտվավ։

— Ի՞նչ ես խոսում. ա՛յ կին, ուրեմն յես... բայց անկարելի յե, յես հիշում եմ, վոր նա Ուտիքի մասին եր ակնարկեց։ Մի՞թե դու չտեսար, թե ինչպես այլայլվեցա յես։

— Այո՛, սիրելի Թադուհի, յես տեսա թե «Թագավորի բացակայության» մասին իշխանուհու արած ակնարկությունն ինչպես տակն ու վրա արավ քեզ։ Բայց Ուտիքի մասին խոսք չե յեղել։ Ցնվ իշխանուհու ակնարկությունից դու այն ես յեզրակացրել, թե իբր նա ասում է՝ «Թագավորը բացակայում է մայրաքաղաքից», վորովհետև «ցանկանում է Ուտիքում լինել...»։ Ցնվ ահա՛ այժմ քեզ թվում է, թե վերջին խոսքը նույնպես լսել ես նրանից. բայց յես լավ հիշում եմ, վոր նա այդ խոսքը չարտասանեց։

Դայակի դիտողությունը լուսավորեց Թադուհու միտքը, նրա հիշողությունը բացվեցավ, նա զգաստացավ և միևնույն ժամանակ սաստիկ ամաչեց, տեսնելով, թե վո՛ր աստիճան ինքն անճանաչում է յեղել յուր յերևակայությանը։

Բացի այդ, նա մտաբերեց հանկարծ, վոր ինքը Սեդայի հետ դեռ վոչինչ չունի խոսած յուր վշտերի մասին, ուրեմն ինչո՞ւ Ուտիքի վերաբերմամբ խոսում և այժմ այնպես ազատ, վոր կարծես թե նրանից ծածուկ վոչինչ չունի այլևս։ Այդ հանգամանքը ճնշեց նրան սկզբում։ Բայց հետո մտածելով, վոր բաժակն արդեն լցվել է և վոր այսուհետև դաղտնի կերպով տանջվելը վոչ մի ոգուտ չի բերելու իրան, հարցրեց հանկարծ դայակին.

— Սեդա, դու ի՞նչ դիտես Ուսիքի մասին։

Սեդան նայեց Թադուհու աչքերին մի հայացքով, որը թե՛ զարմանք և թե՛ անվստահություն էր արտահայտում, և վոչինչ չպատասխանեց։

— Սեդա, քեզ հարցնում է Թադուհին, ինչո՞ւ չես լսում։

— Ուսիքի մասին, սիրելի Թադուհի, չես շատ բան դիտեմ, չես ամեն բան դիտեմ...

— Այո՛, հիշում եմ. մի յերկու ժամ առաջ հովանոցումն էլ նույնը ասացիր... Ասացիր, թե վաղուց հայտնի չի քեզ, թե ինչ վիշտ է կրծում իմ սիրտը, բայց թե չես համարձակվել այդ մասին խոսել ինձ հետ, վորովհետև հավատացած ես յեղել, վոր դրանով միայն իմ վերքերը պիտի նորոգես, առանց ինձ մի ուրուտ տալ կարողանալու... Այսպես չասացի՞ր, Սեդա։

— Այո՛, իմ սիրելի Թադուհի, այդպես ասացի։

— Ե՛հ, խոսի՛ր այժմ համարձակ. քո խոսքերով դու այլևս չես նորոգիլ իմ ցավերը, այլ դուցե և մեղմես նրանց։

— Իսկ յեթե...

— Վո՛չ, ասում եմ քեզ. այժմ չես կարոտում եմ մի հավատարիմ բարեկամի, մի ընկերուհու, վորին սիրտս բանալ կարողանամ. դո՛ւ յեղիր այդ բարեկամը, մայր Սեդա. չես արդեն հոգնել, թուլացել եմ իմ վշտերը մի այնպես տանելուց։

— Բայց չի՞ վոր ամեն ինչ հայտնի չի քեզ արդեն. ինչո՞ւ ինձանից ես կամենում քո ցավերի պատմությունը լսել։

— Ինչո՞ւ, այդ մի՛ հարցնիր, մայր Սեդա. կամենում եմ լսել նորից այն բոլորը, ինչ վոր ինքս դիտեմ. այլև այն՝ ինչ վոր մինչև այժմ ծածկված և մնացել ինձանից։

— Բայց... չդիտեմ թե ո՛րտեղից սկսեմ։

— Սկզբից. բոլորովին սկզբից։ Գիշերը յերկար է. չես չի պիտի կարողանամ քնել։

— Բայց... ի՞նչ ասեմ... այդ բոլոր պատմությունը կարելի չե ամփոփել մի քանի բառերի մեջ։ «Թադավորը սիրում է Ճլիկ-Ամրամի կնոջը...». այս չե՞ բոլորը։

Թադուհին րոպեապես ցնցվեցավ։ Մի գաղտնի հուզմունք անցավ նրա սրտից ինչպես մի կայծակ, և նրա հոգին խռովվեցավ նման ծովափյա ջրին, վորի մեջ հանկարծ դլորվում է լեռան կողմերից պոկված մի քարաժայռ։ Մի թեթև վարդագույն նրա այտերը ծածկեց և ճակատը տամկոցավ աննշմարելի ցոդով։ Ըստ յերևույթին նա չեր սպասում դյակի այս կարճ և ամեն ինչ

մերկացնող պատասխանին: Նա կամենում եր, այո՛, լսել նրանից բոլորը. բայց այսքան շո՞ւտ, այսքան մերկասարանո՞ց... Չե վոր յուր ականջները դեռ սովոր չեյին այդ բանին...: Հանկարծ մի դայակ համարձակվի յուր ներկայությամբ անպատշաճ խոսքեր ասել յուր թագավոր ամուսնու մասին, մի՞թե այդ հնարավոր եր. մի՞թե թագուհին այդ կարող եր լսել...:

— Լո՛ւր, Սեդա, վոչինչ մի՛ խոսիր, հանկարծ հրամայեց նա, ինքն ևլ չիմանալով, թե ի՞նչու համար և լռեցնում խեղճ կնոջը:

Դայակը մնաց ապշած: Նա յերկյուղածին ու անթարթ աչքերով նայում եր թագուհուն, առանց նրա բարկության պատճառը դուշակել կարողանալու:

Բայց թագուհին լուռ եր: Նա դվխակոր և աչքերը խոժոռած նայում եր հատակին:

Անցան մի քանի վայրկյաններ: Հուղմունքը տեղի տվավ առողջ դատողությանը: Թագուհին բարձրացրեց աչքերը և նայեց Սեդային, վորի յերկչոտ հայացքը և այլայլված դեմքը ճնշեցին յուր քնքուշ սիրտը:

«Աւրժե՞ մի թե նրա պատճառով վիրավորել այս խեղճին: Ինչո՞ւ կեղծության քողը այսքան համառությամբ սեղմել իմ յերեսին...», մտածեց ինքն իրան թագուհին և ձեռքը պարզելով դեպի դայակը, դորովալից ձայնով ասաց.

— Սեդա, մոտեցի՛ր, տո՛ւր ինձ քո ձեռը:

Սեդան մոտեցավ բռնադրոսիկ քայլերով, բայց ձեռքը թագուհուն տալ չհամարձակեցավ:

— Մոտեցի՛ր, ասում եմ, և տո՛ւր ինձ քո ձեռը:

Սեդան մոտեցավ և յուր փափուկ ու սպիտակ ձեռը պարզեց դեպի թագուհին:

Վերջինս բռնեց այն քնքշությամբ և սիրալիր հայացքով նայելով դայակի աչքերին, ասաց.

— Մայր Սեդա, յես քեզ վշտացրի, ների՛ր ինձ. և այս ասելով ջերմությամբ համբուրեց նրա ձեռքը, բայց այնպես աղաղակ, վոր դայակն արդելել չկարողացավ:

— Իմ թագուհի, իմ մեծափառ տիկին, ի՞նչ ես անում, այլայլված բացականչեց Սեդան և խոնարհելով թագուհու առաջ, փարեց նրա ծնկներով և սաստիկ հուզմունքից սկսեց արտասվել:

— Մայր Սեդա, մի՛ հուզվիր, մի՛ վրդովվիր. յես համբուրե-

ցի այն ձեռքը, վոր շատ անգամ համբուրել եմ մանկությանս ժամանակ, վոր այնքան շատ դղվել, դրկել ու պահպանել է ինձ. համբուրեցի այն կնոջ ձեռքը, վոր ինձ կաթ է ջամբել, վոր ինձ յերկրորդ մայր է յեղել... Վե՛ր կաց, Սեդա, դրկի՛ր քո Սահանուշին. հիշո՞ւմ ես, վոր ասում էիր, թե Սահականուշը խիստ յերկար է, դու ինձ Սահանուշ պիտի անվանես... Ո՛հ, ի՛նչպես անդառնալի անցան մանկական այդ քաղցր որերը. և վո՛րքան փոքրիկ յերջանկություններ կորան անհիշատակ... Այդ բոլորից միայն դու մնացիր ինձ, իմ բարի Սեդա, վե՛ր կաց, դրկի՛ր և համբուրի՛ր ինձ...:

Սեդան բարձրացավ և բազուկները տարածելով, յուր դիրկն առավ Թազուհու դեղեցիկ դլուխը և սկսավ համբույրներով ծածկել նրա շուշան ճակատը և մարմարիոնի պես սպիտակ ւսերը, վորոնք կիսով չափ ազդվում էին յուր հարուստ, ալեծածան մազերով:

— Ա՛խ, այսպես ուրեմն քաղցր են մայրական համբույրները... շշնջաց Թազուհին և ջերմությամբ փարվելով դայակին՝ «յես մայր չունիմ, Սե՛դա, դու ինձ մա՛յր յեղիր», ասաց նա և հեկեկաց:

— Մի՛ լար, իմ անգին Սահանուշ, յես քո մայրն եմ, քո աղախինն եմ, քո ստրուկն եմ. մի՛ լար, իմ աննման Թազուհի...

Ցերկար նրանք դրկախառնված մնացին և հորդ արտասուքներով իրար կուրծք թրջեցին: Ապա դայակը առաջինը հեռանալով, մոտեցավ սեղանի վրա դրած ոշարակին և վոսկե ըմպանակն առնելով, լցրավ ու բերավ Թազուհուն:

— Խմի՛ր այս ջրից մի բաժակ. սա կհանդստացնե քո հուզմունքը, խնդրեց նա Թազուհուն:

Բայց նա, կարծես, ոշարակը չտեսնելով և նույնիսկ Սեդային չլսելով, սկսավ խոսել նրա հետ մի տեսակ ինքնամոռացության մեջ:

— Լսի՛ր, Սեդա. մի՞թե յես ավելի բախտավոր չեյի լինել, յեթե մի հովվի կին լինեյի...:

— Ի՞նչ ես ասում, Թազուհի, հարցրեց Սեդան տարակուսած:

— Այո՛. այն ժամանակ մեր իշխանները կծաղրեյին Սահակ Սևադային. կասեյին թե՝ Գարգմանա հզոր իշխանը յուր դուստրը տվել է լեռներում ապրող մի հովվի. այնպես չէ՞... Այո՛, և այն ժամանակ յես, հայոց Թազուհին, Աշոտ-Ցերկաթի ամուսինը չեյի լինել. ինձ չեյին շրջապատել այս հոյակապ զարդա-

բանքները, այս վոսկեճամուկ դիպակները, այս արծաթե ու վողոսկրյա կարասները... այո՛, և դրանք չէին խոնարհել իմ առաջ իրանց դրոշն ու նիզակները... Բայց հովվական խրճիթի մեջ իմ հոգին խաղաղ և սիրտս հանդիստ կլիներ... իմ հայրն ու սիրելի քեղրայրը աչքերի լուսից չէին զրկվել, և չես չարունակ, զաղտնի հառաչանքներով, թաղուն արտասուքներով չէին վողբալ մեկի ծերությունը և մյուսի ծաղիկ հասակը... Ճեմ այս բոլորը մի անզգամի, մի կնոջ համար... Ո՛հ, խելքս թըռչում է, չկըր սկսում եմ մտածել...:

— Թաղուհի, դու դարձյալ վրդովվում ես. խմի՛ր այս բաժակը, աղաչում եմ, նա կհանդստացնե սիրտդ, խնդրեց Սեդան, ոչխարակի բաժակը մոտեցնելով նրան:

Թաղուհին բաժակը վերցրավ և խմեց մինչեվ ի: Չուվարար ըմպելիքը մեղմացրեց նրա սրտում վառվող կրակը: Նա լռեց մի վայրկյան: Սեդան հանդամանքից ոգտվելով, ընտրեց նաժիշտներն բերած մրգերից ծերանեղուշն խաղողի մի զեղեցիկ վողկույզ և բերավ Թաղուհուն:

— Այս նուշնակս կհանդստացնե սիրտդ. ճաշակի՛ր մի քանի հատ, խնդրեց նա Թաղուհուն:

— Լա՛վ. բայց նստի՛ր դու այստեղ, իմ առաջ, և պատմի՛ր բոլորը, ինչ վոր պիտես, հրամայեց Թաղուհին:

Սեդան հնազանդվեցավ. և մոտեցնելով Թաղուհու մահճակալին մի յեռոտանի աթոռ, նստեց նրա վրա:

— Այդպես. այժմ սկսի՛ր:

— Դու հուզված ես, իմ սիրելի Թաղուհի. ավելի լավ կըլիներ, յեթե մենք ցավերից չխոսեյինք... հոգատար յեղանակով աղաչեց Սեդան:

— Ճես կամենում եմ անպատճառ իմանալ, թե վո՛րքան բան դիտեն ուրիշները իմ ցավերի մասին. այդ անհրաժեշտ է. այդ կարող է ոգնել գործին և հենց այդ պատճառով դու պիտի պատմես ինձ վոչ միայն քո դիտցածները, այլև լսածները:

— Ցեթե այդ կարող է ոգնել գործին...

— Այո՛, անպատճառ կոգնե, ասաց Թաղուհին այնպիսի մի յեղանակով, վոր մեջ նկատվում եր նրա անդառնալի հրամանը՝ չհրկնել ասլ իրան այլևս միևնույն պատվերը:

Սեդան դլուխը խոնարհեց և սկսավ մտածել: Ըստ յերևույթին նա վերադառնում եր դեպի անցյալը և աշխատում եր զարթեցնել յուր մեջ հին հիշողությունները: Դրա համար, իհարկե,

ժամանակ չէր հարկավոր. այն, ինչ վոր նա պիտի պատմեր, կատարվել էր ընդամենը չորս կամ հինգ տարվա ընթացքում. ուրեմն, հազիվ թե Սեդան մի վորևե դեպք մոռացած լիներ: Բայց նրան տանջում էր այն միտքը, թե արդյոք պատմի՞ թադուհուն ա՛յն ամենը, ինչ վոր ինքը դիտե, թի՞ միայն այն, ինչ վոր կարող է դոհացնել նրա հետաքրքրությունը, առանց, սակայն, նրա սիրտը խռովելու:

Թադուհին դուշակեց Սեդայի տարակուսանքը և դիմելով նրան՝ տխուր ժպիտով՝ ասաց.

— Գիտեմ, իմ բարի Սեդա, թե ինչո՛ւ համար ես դժվարանում խոսել: Ա՛յո՛, չես կամենում ինձ վրդովել, այնպես չէ՞. բայց ծածուկ վերքն ավելի ցավ ու տանջանք է պատճառում, քան հայտնին: Խոսի՛ր ազատ և անկեղծորեն: Դրանով դու ավելի թեթևություն կբերես իմ սրտին. և չես խոստանում եմ լսել քեզ առանսարսուռությամբ:

— Ա՛յո՛, իմ մեծափառ թադուհի, ինձ պաշարել է այն յերկյուղը, թե դուցե իմ պատմածներով վրդովմունք պատճառեմ քո սրտին: Այժմ՝ վորովհետև դու այդ դուշակեցիր, և խոստանում ես առանսարսուռությամբ լսել ինձ, ապա ուրեմն կպատմեմ քեզ դիտեցածներս, առանց վորևե մի բան թաղցնելու. մանավանդ վոր ասում ես, թե իմ տված տեղեկությունները ոդուտ պիտի բերեն դործին:

Այս ասելով Սեդան ուղղեց յուր դիրքը, ծնկների վրա բերավ կապույտ պճղնավորի քղանցքները և աչքերը մի քանի վայրկյան դետնին հառելուց հետո նորից բարձրացրեց նրանց և թադուհու սպասող հայացքին ուղղելով՝ սկսավ մեղմ և հանդիստ ձայնով շարունակել:

ԹԵ ԵՐԲ ՈՐՈՇՎԵՑ ՍԱՀԱՆՈՒՑՉԻ ԲԱՑԸ

– Այո, ինչ պիտի պատմեմ, սիրելի Թագուհի, շատ տարվա քաճեզ չեն։ Երանցից շատերը գուցե և հիշում ես դու, այսպես շարունակեց Ներսես յուր զրույցը։ Թեպետ անցյալը նորոգելը շահ չունի քեզ համար, քայց քո վշտերի արմատը նրա մեջ է թաղնված, ուստի եթե կամենում ենք այդ վշտերը մեղմել, պետք է որ մի փոքր անցյալով զբաղվենք։

– Այո, Ներսես, անցյալից պիտի սկսես, որովհետև իմ ներկան մեռել է այդ անցյալով... Գուցե քո պատմածների մեջ ես գտնեմ ապացույցներ, որոնք արդարացնեն Երան իմ առջև... Օհ, ինչպես կկամենայի որ Նա արդար լիներ...

– Թագավորի համար է խոսքդ, այնպես չէ՞

– Ջրույցդ շարունակիր, Ներսես, այդ մասին հետո...

– ... Այո, այն ժամանակ դու դեռ Նորատի աշշիկ էիր և ապրում էիր հորդ ապարանքում ուրախ ու անհոգ, ինչպես գարնան առավոտի մի թիթեռնիկ... Հանգուցյալ մայրդ սիրում էր

քեզ կաթոգին, է սակ գարգմանա իշխանը յուր ամենաքնքուշ պզտիկները միայն քեզ համար էր պահում: Դու էիր նաև եղբարցդ հրճվանքի միակ առարկան: Ինչ զվարճալի յուներով, ասես, էին շրջապատում երանք քեզ: Ամհակ Ալաչայի ապրանքը մի ղարդ ուներ միայն, այդ զեղանի Ամհականուհին էր: Ամբողջ ընվանքը մի պատ ուներ, այդ գարգմանի օրիորդն էր:

Հիշում ես դու այն խնջույքներն ու հանդեսները, որ հաճախ տրվում էին քո հոր ապարանքում: Այն ձիարշավներն ու զինախաղերը, որ կատարվում էին մեծ բերդի առջև ... Դրանք բոլորը պատրաստվում էին միայն քո պատճառով:

— Ինչու իմ պատճառով, մայր Ամհահայրս զբոսաքեր էր ի քնե:

— Ոչ, իմ սիրելի: Այդպես համարում էին նրան ուրիշները: Նուշինակ զրացի իշխանները քամբասում էին հարդ աներեի զբոսաքորոշյանց համար: Բայց գարգմանա սերը ոչ պատեղ էր և ոչ զբոսասեր: Ընդհակառակը նա միակ իշխանն էր հայոց երկրի մեջ, որ խոհեմուշյան, էափավորուշյան և քաջարուշյան հետ միասին ուներ նաև ուսումնասեր ոգի, որ յուր

տան մեջ դպրոց հաստատեց, դպրապետներ կարգեց և Գարդմանա վանքերում ուսումը ճաշակեցուց։ Դրանք հոգ քաջ հայտնի է քեզ։

— Անշուշտ։

— Բայց միևնույն ժամանակ նա հյուրասեր և շքեղասեր մարդ էր։ Հաճախ նրան այցելում էին Աղցախու, Այուենյաց, Վասպուրականի և ուրիշ շատ տեղերի աղնվատոհմ իշխաններ։ Նույնպես և Ղատանի արքայազուններ։ Գարդմանա տերը չէր կարող չընդունել նրանց յուրաքանչյուրին ու հրաժարվել շռայլությունից։ Մանավանդ որ դրանցից շատերը նրա զեղանի դստերը փեսացուելան պարծանքը վաստակելու նպատակով էին հաճախում Գարդման։ Ինդրեմ և ես այս մասին ոչինչ չէինք հայտնում քեզ։ Քայց տեղի ունեցող հանդեսները, պինախաղերն ու ձիարշավները պատրաստվում էին նրա համար, որ դու մեջտեղ ունենաս մրցող իշխանազուններին միջից քո սրտի սիրելին և քո սիրույն արժանի փեսացու ընտրելու։

Հայրդ չէր կամենում խոի դնել քրոջ ներկայացող և քո ձեռը խնդրող երիտասարդների մեջ, որովհետև նրանք բոլորն էլ քաջ, բոլ-

Լորդն էլ գնդեցիկ, հարուստ և համբավավոր իշխաններ էին։ Միևին ընդունելով և մյուսին մերժելով նա կարող էր նախանձի և թշնամության գրգիռ հարուցանել այդ քաջերի մեջ, հետևապես և վտանգի ենթարկել թե յուր և թե նրանց երկրների խաղաղությունը։ Դա տեսնում էր, որ մեր աշխարհի կործանչէ խռովությանց մեծագույն մասը նմանօրինակ չնչին պատճառներից է առաջացած։ Այդ իսկ պատճառով պայման էր դրել և, ամենքին էլ պարզ ասում էր, թե ,,իմ Ահականությունը հարս կլինի այն իշխանին, որին ես ինքը կհավանեմ,,։ Այս պայմանին նախպես և անտրտունջ համաձայնվում էր ամեն մի իշխան։

Բայց դու, հիշում ես, չհավանեցիր ոչ Սյունյաց Սմբատ իշխանին, ոչ արքաեղբայր Գուրգեն Ամծրունուն, ոչ քաջ

Աստմ Անձևացուն, վո՛չ Մոկաց–աեր Գրիգորին և վո՛չ աղվանա–կան պարմի վորևե մի սեպուհի:

— Հիշում եմ, այո՛. չհավանեցի և վոչ մեկին... Ցես հպարտ էլի այդ ժամանակ ինչպես լեռան կրծքին բուսած բարձ–բարուն կաղնին, վոր արհամարհում և յուր կողերը քերող սը–ղոխներն ու քամին, բայց վորին վերջապես կործանում և բզաբեր հողմը... Ո՛, ինչպե՛ս չարաչար պատժվեցա ցես իմ հպարտու–թյան համար...:

— Թադուհի, ցեթե դու վրդովվում ես, ապա հրամայ տուր վոր լռեմ:

— Չե՛, Սեդա, խոսի՛ր, բայց այդքան հեռվից մի՛ սկսիր:

— «Այդպես հարկավոր և, սիրելի տիկին. ավելի լավ և կարդով պատմել և վոչինչ չմոռանալ, քան շտապել և կարևորը չասել:

— Ցերևի դու կամենում ես, վոր ցես իմ ցանկացածները դես քեղանից չլսած քո՞ւն մտնեմ... այնպես չե՞, Սեդա, հարցրեց Թադուհին ժպտալով:

— «Վոչ, ցես... բոլորը կպատմեմ... դժվարանալով պա–տասխանեց Սեդան և նույնպես ժպտաց:

— Հասկացա, նպատակդ հասկացա...: Բարեսիրտ կին. ինչ–ու՞մ շատ ես հոգում դու իմ մասին... բայց մխիթարվի՛ր և. ցես չի պիտի քննեմ այս դիշեր. ուրեմն պատմի՛ր՝ ինչ վոր դիտես. ցես ապասում եմ:

— «Այդպես, սիրելի Թադուհի, դու բոլոր վեհացուններին մերժեցիր, և մենք մնացինք չվարած: Մայրդ դժգոհ եր, վոր իշ–խանը ընտրության իրավունքը ավել եր քեզ: Ցես ել, ի՞նչ մեղքս Թագցնեմ, համաձայն էլի մեծ իշխանուհու հետ: Բայց հայրդ դլուխը շարժեց և ասաց — իմ Սահանուշյանը կգտնե յուր արժա–նավոր վեհացուն. նրա ամուսինը յերևի իշխանականից մի փոքր ավելի բարձր տիտղոս կունենա:

— Ի՛նչ մարդ. մարդաբեացել և... բայց ցեթե կարողանար դուշակել նաև այն, թե իշխանականից ավելի բարձր կոչում ունեցող այդ վեհացուն ի՛նչ ձյուն պիտի բերեր յուր, խեղճ հորս դլխին...

— Թողնենք, ուրեմն, Թադուհի, այս պատմությունը: Ցես տեսնում եմ, վոր վորքան էլ դդուշությամբ խոսիմ, դարճյալ պիտի վրդովիմ քեղ. դու ասունասրտությամբ լսել չես կարողա–նում... Կուզե՞ս, ցես պատմեմ Գնունի իշխանների, վորբացյալ

Դավթի ու Գուրգենի նահատակության պատմությունը... Ո՛հ, ինչպես սրտաշարժ և մխիթարող է նա... Այդ կատարվեց Դվինում, ութ տարի սրանից առաջ... դժոխային գաղան Ցուսուխի ձեռքով...:

— Սե՛դա, սկսածդ չարունակիր, նահատակության պատմություններ լսելու ցանկություն չունիմ. չարունակի՛ր, կես այլևս չեմ վրդովվիլ:

— Լա՛վ, տեսնենք, ասաց Սեդան ժպտալով և նորից սկսավ յուր ըրույցը՝

—Եվ այդպես՝ մեծ իշխանի դուշակությունը կատարվեցավ: Հիշում եմ, ինչպես այսօր... Այո՛, յերջանիկ որեր եյին... և անցան: Բայց ի՞նչը չէ անցնում այս աշխարհում... Ունայնություն ունայնությանց, ամենայն ինչ ընդունայն է, ասել է Սողոմոնը:

Թադուհին ժպտաց: Սեդան կանգ առավ և նայեց նրան: Նա կամենում. եր իմանալ, թե ինչո՞ւ համար է թադուհին ժպտում: Վերջինս դուշակեց դայակի տարակուսանքը և ծիծաղելով ասաց.

— Ինչպե՞ս ծանր ես պատմում դու, Սե՛դա:

— Իսկույն, իսկույն, իմ սիրելի թադուհի, այլևս չեմ ծանրացնիլ, ասաց Սեդան նույնպես ժպտալով. բայց մի՛ ճանճրանար, յերե մի քիչ հեռվից սկսեմ... Ի՞նչ անեմ, չեմ կարողանում մոռացության տալ հիշատակաց արժանի պատմությունները:

— Խոսի՛ր, չեմ ձանձրանում:

— Հա. յերբ Սմբատ թագավորին խաչեցին Դվինի առաջ... ո՛, ի՛նչ ծանր որեր ենք անցրել. հիշել անգամ սարսափում եմ... այդ ժամանակ Աշոտ դյուցազնը դեռ գտնվում եր Ուտիքում...

— Դարձյա՞լ Ուտիքում.... Ա՛խ, Սե՛դա, այդ անունը մի՛ տար, չեմ կարող լսել...

— Թա՛գուհի...

— Այո՛, կործանվի Ուտիքը, վոր յես նրա անունը այլևս չլսեմ... նյարդային ցնցումից վրդովված բացականչեց թադուհին և ներքին հուզմունքից բոլորովին այլայլվեց: Մի յերկու վայրկենի մեջ նա այնպես փոխվեցավ, վոր Սեդան քաշվեցավ ճնշվեցավ ինչպես մի հանցավոր. նա լռեց և դիտում եր թադուհուն յերկչոտ հայացքով: Վերջինս, սակայն, ել չեր նայում դայակի վրա: Ցուր դեղնել, բայց թախիծով լի աչքերը ուղղե

եր պատուհանին, վորի նեղ ու յերկար անցքի միջից թափանցում էին լուսնի կաթնագույն շողերը։ Թվում եր թե նա դիտում է լուսնոտքի պատի վրա այդ շողերի նկարած կամարաձարդի պատկերը, կամ հեռվում, աղոտ կերպով նշմարվող մթնաձատ լեռների արտևանունքը... Բայց նա խնկապես վոչինչ չեր տեսնում և մինչև անգամ վոչինչ չեր մտածում. նրա սիրտը հուզված, հոգին խռովված եր, ուստի և միտքը սլանում եր խավար ու անպարունակ դատարկության մեջ, ուր մերթ ընդ մերթ հանդիպում էին նրան լուսավոր ջերտեր, վորոնց վրա նկարված էին յենում յուր վշտերի դանազան պատկերները, բայց նա կանդ չեր առնում նրանց առաջ, և չարունակ թռչում եր հեռո՛ւ, հեռո՛ւ, դեպի խավար, անսահման տարածությունը, ուր հետզհետե նվազում էին անհաճո պատկերները, ուր թագավորում եր միայնություն, լռություն և մոռացումն...։

Ցերկար այս դրության մեջ մնաց թագուհին և ապա վերջապես խոր հոգվոց հանեց։ Կարծես ծանր աշխատությունից վատահակաբեկ նա յուր աչքերը դարձրեց դեպի Սեդան հոգնած ձևով. նայեց և դլուխը շարժեց։

Սեդ դայակը դեռ լուռ, անշշունչ և ձեռքերը կրծքին խաչած՝ նայում եր թագուհուն։ Մի վոքր առաջ նրան թվացել եր, թե յուր սիրասուն Սահանուշը՝ չդիմանալով վշտերի ծանրության, խնդրատրվում և արդեն... չի՞ վոր նրան յուր հոր տանը պահել, մեծացրել էին այնպես վայելուչ, այնպես քնքուշ, ինչպես արքայական բուրաստանի մի դողտրիկ շուշան, վորին միայն դարնան հովը կարող եր շարժել և այդածին ցողը՝ կամ մեղմով ճնշել, բայց յերբեք դեղջուկի կոշտ, կոպիտ ձեռքերը...։ Սակայն այդ բուրաստանի ծաղիկը, այդ ճյունաթույր շուշանը կքում և այժմ յուր դլուխը դառնաչունչ հողմի, ծանր վշտերի հարվածների տակ. մի՞թե կարող եր նա դիմանալ... Այդպես եր մտածում Սեդան։

Բայց յերբ տեսավ, վոր թագուհին նայում և իրան խաղաղ և անվրդով հայացքով, վորովհետև նյարդների դրդռումն անցել եր արդեն, նա հանդիստ շունչ քաշեց և ձեռքերի խաչը լուծեց։

— Սե՛դա, շարունակիր պատմությունդ, ասաց թագուհին մեղմ և հանդիստ ձայնով։

— Շարունակի՞մ... բայց... չդիտեմ, չեմ հիշում, թե վո՞ր տեղ մնացի. այնպե՛ս չփոթեց ինձ քո վրդովմունքը...

— Պատմում էիր՝ Սմբատ Թագավորի մասին, թե խաչեցին Դվինի առաջ...

— Այո՛, հիշում եմ. բայց... ի՞նչ ասեմ, ի՛մ Թագուհի, ի՛մ հրեշտակ, դու նեղանում ես, վրդովվում ես... քո Սեդան պատռավել է. չի կարողանում այնպես հարմարեցնել յուր զրույցները, վոր հաճույք պատճառե քեզ... ի՞նչպես անեմ...:

— Չե, Սե՛դա, այդպես լավ է. այժմ տեսնում եմ, վոր զրույցներն ոչնչանում են ինձ. յես կամաց-կամաց ընտելանում եմ իմ վշտերը հիշեցնող ակնարկներին. այդ լավ է. յերևի յես այժմ կսովորեմ հաշտվել իմ դրության հետ. դու չարունակի՛ր:

— Իհարկե, իհարկե. չպետք է հո միշտ տանջվել. աստված վոչ վոքին առանց ցավերի չէ ստեղծել... Բայց դու, իմ հրեշտակ, խմի՛ր դարձյալ մի բաժակ ոչարակ. նա ավելի կտ կհանդստացնե քեզ, ասաց Սեդան, սիրտ առնելով Թագուհու խոսքերից. և ապա վեր կենալով բերավ նրան ոչարակը:

Թագուհին թեպետ ախորժանոք չվայելեց առաջարկված ըմպելիքը, բայց դայակի սիրտն ամոքելու համար տրտունջ չհայտնեց: Բաժակը դարձնելով Սեդային՝ նա հենվեցավ թավշյա բարձերին և սկսավ լուռ նրա զրույցը լսել:

— Այո՛, այդպես. անխոհեմ և ամբարիշտ իշխանների չընորհիվ այդ զարհուրելի և անարդ հարվածը հասավ մեր գլխին. սուրբ և առաքինի Թագավորին խաչեցին վայտի վրա, յուր խակ մայրաքաղաքի առաջ...

«Բայց այդ դաղանային վրեժխնդրությունը տեղի չեր ունենալ, յեթե հայ իշխանները միանային, թև ու թիկունք լինեին իրանց դյուցազնասիրտ Թագավորին և ընդհանուր ուժով դեմ դնեին հայրենիքի թշնամուն... Այդ թշվառությունը չեր պատահիլ, յեթե տիրանենդ և դավաճան Գադիկ Արծրունին, վասպուրականում Թագավորելու փառամոլությամբ կուրացած՝ չմիանար Ծուռուի վոստիկանի, յուր հայրենիքի անհաշտ թշնամու հետ, չկրկնապատկեր նրա կործանիչ ուժը, չբանար նրա առաջ փակված ճանապարհները, վորի արդյունքը յեղավ բազմաթիվ հայ զորքերի կոտորածը, բերդերի և ամրոցների առումը, ժողովրդյան ջարդը... Այս ամենը տեսավ առաքինի Թագավորը, վոր ամրացած եր Կապուտ բերդի մեջ, և վորին, հարկավ, թշնամին վնասել չեր կարող, բայց չդիմացավ. չկարողացավ առանսպրությամբ նայել բյուրավոր զոհերին, անընդհատ հոսող արյանը, և մտածեց. «Թշնամին իմ անձին է հետամուտ,

— Ա՛խ, Սեդա, այսուհետև այլևս ի՛նչ զղուշություն... Իմ վիշտը ուրեմն հայտնի չե ամենքին...

— Դեռ վոչ, թա՛դուհի... դեռ...

— Լա՛վ, պատմի՛ր. հետո ի՞նչ ասաց իշխանը:

— Այն ասաց, վոր արքայորդին սիրում եր այդ աղջկան:

— Այդ լմացա: Բայց հետո չհարցրի՞ր, թե ի՞նչպես և սկըսվել այդ չարաբաստիկ սերը:

— Ինչպե՛ս չե, հարցրի և նա հետևյալն ասաց.

«Գևորգ Նահապետի մահվանից առաջ Աշոտ արքայորդին դեռ պատանի եր Անիշինի մոտ: Նույն այն ներքինապետը, վոր Սևորդյաց Նահապետին սպանեց, մտերիմ բարեկամ եր Սմբատ Թագավորին: Վերջինս յերբ Նահապետի մահվան լուրը լսեց, մեղադրական դրեց ներքինապետին՝ այնպիսի անմեղ մարդը սպանելուն համար: Ներքինապետը վորպեսզի Թագավորի սիրտն ամոքե, Աշոտ արքայորդուն և մի քանի իշխանաղն հայ կանանց և ուղարկեց Սմբատին: Թագավորն իհարկե շնորհակալ յեղավ ներքինապետին: Իսկ Աշոտ արքայորդուն անմիջապես ուղարկեց Ուտիք Սևորդյաց տղավոր իշխանուհուն մխիթարելու: Այստեղ ահա՛ յերիտասարդ Աշոտը տեսնում է Սևորդյաց դեղանի որբորդին և վրան սիրահարվում:

— Ցնվ հասատատալե՞ս սիրահարվում:

— Այո՛, և իրրև տպացույց՝ Մարզպետունի իշխանը հիշում է մի դեպք, վոր արժանի չե ուշադրության:

— Այսի՞նքն:

— Ցերբ Բուսուսիի հրամանով բռնավոր Գագիկ Արծրունին յուր և հպատակի զորքերով ընկնում է Սմբատ Թագավորի յերեսից նրան բռնելու կամ սպանելու համար, Սմբատ Թագավորը յուր զորքերը տալիս է Մուշեղ և Աշոտ վորդիների ձեռքը և ուղարկում նրանց Գագիկի դեմ: Ցերկու յեղբայրները հանդիպելով բռնավորին՝ սկզբում զորավոր ջարդ են տալիս հպատակի զորքերին: Բայց վերջը Սևորդիների դունդը, վորին զորավարում եր Աշոտը, դավաճանում և յուր զորապետին և խույս տալիս կըռվի ճակատից: Այդպիսով հայոց բանակը թուլանում և հաղթվում և, իսկ Մուշեղը, վոր առյուծի պես եր կռվում, զերի յե ընկնում Բշնամու ձեռքը:

«Մարզպետունի իշխանն ասում եր, թե այդ դեպքը մինչև անգամ չսասկացրեց Աշոտին դավաճան Սևորդիներից և նա նրանց

հետ միասին վերադարձավ Ուտիք, հնազելով վոր յեղբայրը դեր յեր տալվել Դվին։

— Ուրեմն այդ վաղո՞ւց է սկսվել իմ դժբախտությունը...

— Հապա յես վոր ասում եյի, թե անցյալի մեջ են ծածկվածք ո ցավերի արմատնե՞րը։

— Բայց հետո՞, հետո ի՞նչպես յեղավ, վոր Աշոտը թողեց Սևորդյաց որիորդին և ինձ, դժբախտիս հետ ամուսնացավ։

— Պետական շահերը, սիրելիս, պետական շահերն այդպես եյին պահանջում... Աշոտը միայնակ եր զորավոր Բշնամիների առաջ։ Իսկ Սահակ Սևադան յուր զորքերով կարող եր արքայական բանակն ասվարացնել...

— Եեվ ուրեմն Սևադայի աղջիկը զոհ պետք է լիներ այդ պետական հաշիվների՞ն...

— Ատոնցո տնորինություններ եր այդ։

— Ի՞նչ ատոնցո տնորինություն, մայր Սեդա, խնկապես դու յես իմ դժբախտության պատճառը։

— Եե՞ս. ի՞նչ ասացիր, Թադուհի. Սե՛դան, յուր Սահանուշի դժբախտության պատճա՞ռը... Ո՛չ, մի՛ ասիր... մի՛ ասիր... այդ մի անեծք է... հուզված բացականչեց Սեդան։

— Այո՛, մայր Սեդա, դու յես պատճառը, բայց մի՛ վշտացնար։ Եեթե դու Մարզպետունի իշխանից լսածդ խնկուշն ևեթ հայտնեյիր հորս, նա կզգուշանար և Աշոտ Թադավորի պետական հաշիվներին չեր զոհվիլ յուր աղջիկը։

Սեդան լուռ և խորհրդավոր նայեց Թադուհուն և վոչինչ չպատասխանեց։

— Այնպես չե՞ս, Սե՛դա։

Դայակը լուռ եր։

— Ինչո՞ւ չես պատասխանում, հարցրեց Թադուհին։

— Եերանի՛ կլիներ, Թադուհի, թե ա՛յդ լիներ իմ հանցանքը։

— Հապա, ուրիշ ի՞նչ ես արել։

— Դժբախտաբար յես խոստմնալանց յեղա. Մարզպետունի իշխանին տված խոսքը չպահեցի, և նրա հաղորդած դաղտնիքը հայտնեցի հորդ, հենց այն որը, վոր Մարզպետունի իշխանը հեռացել եր մեր ամրոցից։ Ի՞նչ անեմ, խնդիրը քո ապագա բախտին եր վերաբերում, չկարողացա լռության տալ։

— Եեվ ի՞նչ ասաց հայրս։

— Ծիծաղեց. մանավանդ յերբ յես յերկյուղ հայտնեցի, թե

Սահականուշը ապագայում կդժբախտանա, յեթե այդ միությունը կայանա։

— Ինչո՞ւ համար ծիծաղեց։

— Ասաց, թե գրոլոր յերիտասարդները մինչև ամուսնությունը ունենում են հաղար և մի այդ տեսակ կապեր, վորոնք վոչընչանում են որինավոր ամուսնության սուրբ սրահի դռությամբ. թե արքայորդու այդ սերն անցողական տպավորության արդյունք և, և անշուշտ առաջացել է նրանից, վոր Սևորդյաց որիորդը՝ տխրության որերում, սգավոր հանդերձների մեջ, ներկայանալով արքայորդուն՝ շարժել է նրա դութը, իսկ սերը շատ անգամ ծնվում և, ասաց, այնտեղ, ուր ապրում և կարեկցությունը։ Յեվ թե վերջապես արքայորդին կդրաղվի չուտով յուր պետական գործերով և կմոռանա այդ որիորդին։ Իսկ մինչև այն՝ յես կպատրաստեմ ճանապարհը այնպես, ինչպես համելի յե ինձ։

— Յեվ հետո ի՞նչ արավ նա։

— Անմիջապես դնաց Ուտիք Սևորդյաց դավառը, և համոզեց Գևորգ Նահապետի կնոջը՝ ամուսնացնել յուր դուստրը մի քաջ իշխանի հետ, վորպեսզի նա խնամե յուր կալվածները, վորովհետև Գևորգ Նահապետի միակ ժառանգը այդ աղջիկն եր։

— Հետո՞։

— Սևորդյաց իշխանուհին ընդունեց այդ խորհուրդը չնորհակալությամբ։ Միևնույն ժամանակ նա խնդրեց մեր իշխանին, վոր նա ինքը անորինե այդ գործը։ Իսկ Սևադա իշխանը ժամանակ չկորցրեց. նա համոզեց Տաշրաց սեպուհ Ցլիկ-Ամրամին և ամուսնացրեց նրան այդ իշխանուհու հետ։

— Իսկ այդ աղջիկը, ինքը, ի՞նչ արարած եր ուրեմն, վոր արքայորդու նման դյուցազնի սերը փոխում եր Ցլիկ-Ամրամի հետ...։ Իմ թագավոր ամուսինը նվաստանում է իմ աչքում, Սևադա, յերբ մտածում եմ, թե նա այդ կնոջն է սիրում...։

— Այդպես չպետք է դատել, թագուհի։ Առաջին, ամեն իշխանազն որիորդ այնպես ազատ չե մեծանում, ինչպես մեծացել և Գարդմանա որիորդը, վորին մինչև անգամ տրված եր ինքնա ընտրելու իրավունքը. յերկրորդ՝ Ամրամ սեպուհը մի հասարակ մարդ չե. թե՛ քաջությամբ, թե գեղեցկությամբ և թե հարբուսությամբ նա յետ չի մնալ մեր արդի ամենանշանավոր իշխաններից. յերրորդ՝ յեթե Սևորդյաց որիորդը մինչև անգամ խելագարված սիրում լիներ արքայորդուն, այսուամենայնիվ, դըժ-

վար չէր նրա սերը տառեցնել, քանի վոր մեջտեղ Սևադա իշխանը կար՝ յուր ճարտար ու համոզիչ լեզվով...

— Նրա սերը չէյին կարող տառեցնել. Աշոտին մի անգամ սիրողը՝ չէր կարող այլևս դադարել սիրելուց. յերևի այդ աղջկանը հուսահատեցրել են, անհնարին համարելով նրա ամուսնությունը արքայորդու հետ:

— Ցերևի:

— Այդ հաստատ է. և ապացույցն այն է, վոր նույն սերը շարունակվում է տակավին, չնայելով վոր ամուսնացած են՝ թե՛ Աշոտը և թե՛ նահապետի աղջիկը:

— Ինձ էլ այդպես է թվում:

— Ցավ այդպես ուրեմն Սահակ Սևադան ինքը յուր ձեռքով սեփական տունը քանդեց. զղջուբն, զոր վորյաց և պեղյաց՝ ի նույն անկյն ի խորխորատ, զոր և զործյաց»... ահա սրա. համար է ասել մարգարեն:

— Այո՛, դժբախտաբար, այսպես յեղավ վախճանը... բայց ո՞վ կկարծեր...

— Ա՛խ, Սե՛ղա, դուն մի կերպով հասկացնեյիր ինձ այդ գաղտնիքը:

— Թագուհի՛... հապա իմ տված խոսո՞ւմը... կարո՞ղ եյի մինչև դրժել նրան:

—Ա՛յ կինն, չի՞ վոր հոգու հայտնելով՝ դրժել ես արդեն:

— Հո՞րդ... Այդ ուրիշ է, Թագուհի, նա տղամարդ էր. նա հեռատեսություն ուներ:

— Ցավ ա՞յս է հեռատեսությունը. ինքդ հո տեսնում ես վախճանը:

— Մենք կանայքս շատ մոտացկոտ ենք. ներկայի փոքրիկ գառնությունները հեշտությամբ մոռացել են տալիս մեզ անցյալի բյուրավոր քաղցրությունները... Սևադա իշխանը մեծ վաճառք պատրաստեց յուր գառեր համար. այդ վաճառքը վայելեց իմ Թագուհին...

— Այո՛, և, սակայն, ներկան մոռացնել տվավ անցյալը:

— Ինձ թվում է, թե առավել արդարացի կլիներ, յեթե ներկայի փոքրիկ վշտերը աշխատեյինք մեղմացնել անցյալի քաղցր հիշատակներով:

— Վորո՞նք են դրանք, Սեղա, յես չեմ հիշում. յես քաղցրություն չեմ տեսել իմ ամուսնական կյանքում:

Սեղան խորհրդավոր յեղանակով ժպտաց:

— Դու ծիծաղո՞ւմ ես, մայր Սև՛դա. հապա հիշի՛ր, թվի՛ր այդ քաղցրությունները, դուցե յես այնոնք մտաբերելով իմ այժմյան ցավերը մոռանամ:

— Ո՛, շատ յերկար կտևե այդ, Թաղուհի՛. դու պետք է հանդստանաս:

— Վոչ, ասա՛, պատմի՛ր. իմ հանդստությունը քո ըրույցների մեջ եմ դտնում. այս դիշեր քունը չի մտներալ աչքերիս. պատմի՛ր, յես լսում եմ:

Այս ասելով Թաղուհին նորեն պառկեց՝ հոլանի թևը բարձերին և ձեռքը ծնոտին հենելով: Սեդան վերկացավ և ծածկեց նրան մի ներքազրծ շղարշով:

— Ցավ այդպես, ուրեմն, մոռացել ես դու բոլորը, իմ սիրելի Թաղուհի, այժմ կհիշեցնեմ...

— Հապա:

— Մտաբերո՞ւմ ես այն որը, յերբ դու և մեծ իշխանուհին վերադարձաք Աշեններից:

— Հիշում եմ. յերկու որ եր ինչ Մարզպետության իշխանը հեռացել եր մեր ամրոցից:

— Ցավ յես պատմեցի քեզ բոլորը, ինչ վոր ձեղանից հետո անցել եր Գարդմանում:

— Այո՛ և յես շատ վշտացա, վոր արքայորդուն չեյի տեսել:

— Ցավ ինչպե՞ս նրա մասին արած իմ նկարագրությունները վոդևորում եյին քեզ:

— Հիշում եմ:

— Հենց այդ որը սուրհանդակ հասավ Բագրեւանից, վոր հայտնում եր, թե Ցուսուսիը Աշոտի դալը լսելով՝ խուսյ և տվել դեպի Աթրպատական. իսկ արքայորդին հասնելով Բագրեւանդ՝ դորեղ կռիվ և ունեցել Ցուսուսիի թողած զորքերի հետ, վորոնց և խոպատ ջարդել ու ցրել է. իսկ նրանց դլխավոր իշխաններին բռնելով՝ տվել և հանել և ամրոցները աշտարակներից կախել: Այս առաջին վրեժն եր, վոր քաջ վորդին լուծեց յուր հոր սպանիչներից: Այս լուրը սարսափ եր դցել հազարացիների վրա:

— Հիշում եմ. և ինչպե՞ս մեղ ամենքիս վոգևորում եր այդ: Ցնա ինքս մեծագին նվեր տվի սուրհանդակին այդ անդրանիկ բերելուրի համար:

—Այնուհետև հետզհետե դալիս եյին լուրեր, թե արքայորդին մտավ Շիրակ, անցավ Գուղարք, թե ամեն տեղ զորավոր կռիվ և մղում հազարացիների դեմ, ջարդում, վոչնչացնում և նրանց,

քերդերն ու քաղաքներն առնում, գերիներն ու բանտարկյալներն ազատում, ավերակ ամրոցները վերանորոգում, ամեն տեղ պահապան զորքեր կարգում և արշավանքը առաջ է տանում։

— Հիշում եմ...Ասում էին, որ Թուսուփը, լսելով արքայորդու քաջագործությունները, սարսափել էր, վախենալով թե գուցե նա յուր սուրը դարձնե դեպի Ատրպատական, ուր որջանում էր ինքը։

— Այդպես ասում էին. բայց արքայորդին դեռ սեփական յերկիրը պետք է մաքրեր հաղարացի հրեշներից։ Այդ էր պատճառը, որ Գուդարքը նվաճելուց և Վասակ ու Աշոտ Գնթունի իշխաններին հանձնելուց հետ՝ նա անցավ Վրաստանի սահմանը, Տփխիսն ազատելու։ Այդտեղ էլ հաղարացիք մեծ ույժ ունեյին։ Վրացի ազգերը հեծում էյին նրանց բարբարոսական լծի տակ։ Մեր ուղղությունը ինչպես մի կատաղի փոթորիկ հասավ Տփխիս։ Նրա հուժկու բանակի առաջ, որ սովարացել էր հետզհետե, հաղարացոց զորությունը չկարողացավ դիմանալ։

«Հայերը ջարդեցին նրանց, ցրեցին, արաբացի իշխանները գերելով՝ շղթայի զարկեցին, իսկ Տփխիսը ազատելով՝ վերադարձան Ուտիք։

«Այստեղ էլ, ինչպես դիտես, ուտիացիք էյին ապստամբել։ Սակայն նրանց նվաճելու համար մեծ աշխատանք գործ չդրավ արքայորդին։ Մի քանի սրիկայական դնդեր ցրելուց հետո ամենքը խաղաղեցան, մանավանդ որ վիթխարի Մուխանը վերակացու կարգվեցավ նրանց վրա։

«Փառավոր եր արքայորդու հաղթությունը Աղստևի խորաձորում, ուր ընդհանուր բանակից վերցրած վեց հարյուր զինվորներով միայն սպառսպուռ ջնջեց այդտեղ թաղնված հաղարացիների վերջին զորաբանակը։ Ասում էյին, որ նրանցից չեր ազատվել մինչև անգամ մի զորական, որ դույժ տաներ Թուսուփին իրանց կրած պարտության համար։

— Այդ բոլորը յես բերան դիտեմ, Սե՛դա, դու ինչո՞ւ համար ես կրկնում, հարցրեց Թագուհին։

— Ցույց տալու համար այն բնական ճանապարհը, որով առաջացել է Գարդմանա որբորդի դժբախտությունը, պատասխանեց Սեդան խորհրդավոր յեղանակով։

Զ

ՔԱՂՑՐ ՀԻՃՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՇՆԱՄՐՈՒԹՅԱՆ ԵՒ ՆՀԱՆԱՊՐՈՒԹՅԱՆ

— Շարունակի՛ր, ասաց թագուհին։

Սեդան առաջ քաշեց աթոռակը, և յուր դիրքը-նորից ուղղելով՝ շարունակեց զրույցը։

— Աբգայորդու հաջողությունները վոգևորում էին քեզ։ Առանց նրան տեսած լինելու, դու հիանում էիր այդ դյուցազնով։ Քանի՛ քանի անգամ կրկնել ես ինձ այն պատմությունները, վոր լսել էի Մարզպետունի իշխանից։ Ճերևում եր, վոր մի զաղանի զորություն շարունակ քո սիրտը քաշում եր դեպի նրան։ Աբգայորդու ձեռնարկությանց ամեն մի հաջողությունը լցնում եր հոգիդ ցնծությամբ։ Հիշո՞ւմ ես. Աղատևի հաջողության լուրը բերող դարձմանացի զորականին մի արտավար հող ընծայել տվիր։

«Հարիավ, իշխան Սևադայի արտասես աչքերից չեկին կարող ծածկվիլ այս բոլորը։ Ցեվ Նա, վոր յուր ուրախությունը քո խղճերը կատարելու մեջ եր տեսնում, անուշադիր չի սլուտի Թողներ քո զղացումները, մանավանդ վոր նրանք չեկին հակառակում յուր վսեռասիրական նպատակներին։

— Ցեվ յերևի այդ պատճառով ել չտապեց նույն նպատակներին հակառակող արդելքը բառնալու...։

— Այո՛. Սևորդյաց որիորդը ամուսնացրեց Ցլիկ-Ամրամի հետ։ Ցեվ ճշմարիտ, սա, մինչև անգամ, մի հայրենասիրական զործ եր։ Աբգայորդին միանգամ ընդմիշտ այդ աղջիկ կապանքներից ազատվելով՝ ավելի յեռանդով զբաղվեց յուր զործերով։ Սիրո չղթաները շատ անգամ ամենածանր կապանքներն են, վո-

բոնք արդելում են տղամարդուն վաճքի սահմաններում շահատակելու...

— Բայց շատ անգամ էլ նրանք թևեր են տալիս նրան, ընդհատեց Թագուհին:

— Այո՛, միայն թուլ արարածներին. նրանց, որոնց մեջ մարած է բնական աշխուժի կրակը և որոնց դեպի գործունեություն մղում է միայն արհեստական դրդիչը, ինչպես յերկչոտ զորականին քաջություն և տալիս դինին...

«Այո՛, իմ Թագուհի, արքայորդուն չվնասեց այդ դեպքը, նա շարունակեց յուր հաղթական արշավանքները, մինչև որ բոլոր Թմրածներին ցնցեց: Նրա որինակից խրախուսս առան և ա՛յն իշխանները, որոնք հազարացոց սրից ահաբեկ, իրանց փրկությունը միայն բերդերի մեջ էին որոնում.—Գագիկ բռնավորը, Սյունյաց տերերը դուրս յեկան ամրություններից և սկսան նույնպես հալածել Թշնամուն: Հայոց յերկրին տիրեց ընդհանուր վոգևորություն, խաղաղության արևը ծագեց. ժողովուրդը շունչ առավ...

— Յերջանիկ որեր եյին...

— Այո՛, մանավանդ վոր այդ միայլուն հաղթանակներից հետո՝ արքայորդին հոր գահն ու գավազանը ժառանգեց:

— Ա՛խ, ինչո՞ւ հիշեցրիր ինձ այդ բոլորը, Սեդա... Ինչո՞ւ հիշեցրիր յերջանկության այն ժամերը, վոր յես անցրել եմ այնտեղ...

— Դժվինում, այնպես չե՞:

— Ո՛, և ինչպե՛ս բախտավոր եյի յես... Ինչո՞ւ, Սեդա, ինչո՞ւ աստված մարդուն տալիս է յերջանկություն; և հետո խլում այն նրանից...:

— Աստուծո կամքն անքննելի և խորհուրդներն անհասանելի յեն:

— Հիշում եմ: Յերբ առաջին անգամ հայրս հայտնեց, թե հայոց իշխանները վրաց Թագավորի և ամիրապետ Գուրգենի հետ միասին պիտի ժողովվին Աշոտ արքայորդուն Թագավոր պսակելու և թե մենք, իբրև Գարդմանա տան տյարք, ներկա պիտի լինինք այդ հանդիսին, ուրախությունից, քիչ մնաց, խելքս պիտի թռչեր...Ո՛, միայն այդ ժամերը...վո՛չ, նրանցից դոնե մի քանի վայրկյան վերադարձնելին այժմ ինձ... Ի՛նչպիսի ուրախությամբ, ի՛նչ աննման վոգևորությամբ եյի պատրաստվում յես արքայի Թագադրության ներկա լինելու, յերևակայել չես կա-

քող։ Ցերբ բերին ինձ ա՛յն զոհարներն ու վոսկյա զարդերը, վոր հայրս պատրաստել եր տվել հատկապես այդ հանդիսի համար, հրճվեցա ինչպես մի մանուկ, վոր հանկարծ գնդեցիկ խաղալիքներ և ատանում, և վազելով փարեցի հորս պարանոցով և համբույրներով նրա յերեսը ծածկեցի։ Ցես հո դիտես կարոտ չեյի այդ զարդերին և զրանք ղին չունեյին իմ աչքում իրրև քարեղեն. այլ ուրախացա այն պատճառով, վոր դիտեյի, թե նրանց շնորհիվ ավելի չքնդ և ավելի վեհ պիտի յերևամ այն հանդիսում, ուր ներկա պիտի լինի համայն հայոց իշխանապետությունը և ուր շուքով ու պերճությամբ պիտի վայելեն վրաց ու ախխազաց արքայազուն ընտանիք...

— «Ո՛, ի՛նչպես ցանկանում եյի, վոր բոլոր իշխանազն կանանց մեջ ամենից բարձր հանդիսանայի յես, վոր ամենքի աչքերն ինձ վրա նայեյին, վոր ամենքն ինձմով զբաղվեյին և վոր այդ ամենը Աշոտ-Ցերկաթը տեսներ...։

— Ցևվ հայրդ այդ բոլորը նկատում եր. ուստի և ինքն եվ աշխատում, վոր Գարդմանա տունը՝ հայոց մյուս իշխանական տներից ավելի զերազանց յերևա Դվինում՝ թե՛ հարստության և թե՛ զորության կողմից։ Այդ եր պատճառը, վոր նա Գարդմանա հզոր բանակը յուր հետ միասին բերավ Վոստան։ Գարդմանում միայն բերդապահ զնդերը մնացին։

— Ցևվ իրավ, Սեդա. Դվինում արքայավայել ընդունելություն արին մեզ։ Ծնողներս վոչինչ չեյին հայտնում, բայց ինձ թվում եր, թե արքայի մերձավորներին հայտնի յե անչուշտ մի խորհուրդ մեր ապագա միության մասին։ Աչքի յեր ընկնում մանավանդ այն հանդամանքը, վոր հայոց իշխանական ընտանիքներից՝ միայն մեզ համար եյին բնակության տեղ պատրաստել արքունական պալատում։ Նույնիսկ վրաց Ատրներսեհ թագավորին կաթուղիկոսարանում ընդունեցին, իսկ ախխազաց Գուրդեն իշխանին՝ Աբաս արքայեղբոր ապարանքում։

— Ցերևի այդտեղից եվ սկսվեցավ կաթուղիկոսի բարեկամությունը Ատրներսեհ թագավորի հետ։

— Այո՛, ինչպես վոր իմ տատը Աբասի բարեկամությունը՝ ախխազաց Գուրդեն իշխանի հետ։ Բայց առաջինի բարեկամությունը դոնե վնաս չբերավ մեզ, մինչդեռ յերկրորդը յուր ծանր հետևանքներն ունեցավ։

— Միակ պատճառը զարձյալ մի աղջիկ։ Ցեթե Աբաս ար-

քայքայելը չամուսնանալ Գուրգենի հետ, ծանր հետևանքները տեղի չեին ունենալ։

— Հարկավ. հայ աղջիկը դժուարություն չեր զգալ հարազատ ընտրելու մեջ։ Բայց Թողնենք այդ... ի՞նչ եյի ասում։

—Գաղտնի եյիր, թե ձեղ ընդունեցին արքայի պալատում...

— Այո՛, այնտեղ ընդունեցին։ Չեմ կարող նկարագրել, թե ի՛նչպիսի անձկությամբ եյի վախենում տեսնել յերիտասարդ թագավորին. այն դյուցազնին, վոր այնքան կարճ ժամանակում ընկճեց, խորտակեց Քշնամու զորությունը. մաքրեց յերկիրը բռնավորներից, ազատեց ժողովուրդը ստրկությունից, դրավեց ու գերեց իշխանների սիրտը և նրանց բոլորին վոգևորեց այնքան՝ վոր մի մարդ չեմ ունեցած ամեն դժուարություն մոռանալով՝ յեկան ժողովվեցան յուր շուրջը արքայական թագով յուր՝ աբժանավոր գլուխը պսակելու։

«Առաջին անգամ, յերբ պիտի ներկայանայինք իրան, սիրտս սրսփում եր ուրախությունից և յերկյուղից։ Ուրախ եյի, վոր վերջապես պիտի տեսնեմ այդքան ժամանակներից ի վեր ցանկացածս դյուցազնին և... վախենում եյի, թե մի՛ գուցե նա անտարբերությամբ ընդունե ինձ... Ո՛, Սեդա. չգիտե՛ս, թե վո՛րքան հպարտ եյի յես այն ժամանակ. ամոթից կարող եյի մեռնել...։

— Ցավ ինչո՞ւ, թագուհի. մի՞թե արքայորդին կղլանա՞ր յուր իշխանացն հյուրերին պատշաճավոր հարգանք նվիրելու։

— Բայց յես, Սեդա, չեյի կամենում հասարակ հյուրերի կարգը դասվիլ. յես ուրիշ ընդունելություն եյի ակնկալում նրանից. ինչո՞ւ, չգիտեմ, յես այնպես եյի համոզված՝ թե անպատճառ նրա ապագա ամուսինը պիտի լինիմ... Հպարտ, հանդուգն միտք եր այս, այնպես չէ՞. բայց իմ յերազներն իրականացան... Արքայական դահլիճի ավագ դռան առաջ ընդունեց նա մեզ։ Ցավ հանկարծ, ի՞նչ պատահեց ինձ, դիտե՞ս... այժմ եմ միայն կարողանում պատճառը բացատրել.— յերբ արքայորդուն տեսա, կանգ առա մուտքից մի քանի քայլ հեռու. նա հորս հետ զբաղվախոսեցավ. մորս ձեռքը համբուրեց, բայց յես չմոտեցա նրան. ամաչեցի, վոր ինքը հառաջինը դեպի ինձ... Ի՞նչ զգացում եր այս, Սեդա, կարո՞ղ ես բացատրել։

— Ինձ թվում է, թե Գարդմանա ազն ազնվական հպարտության զգացում և ուրիշ վոչինչ։

— Չե, սխալվում ես. հոգիս յերևի գուշակեց, վոր նրա

սիրտը, ուր կամենում էի մուտ գործել, գրավված և ուրիշի սիրով... և այդ եր պատճառը, վոր այդ պերճահասակ, վեհագեմ, դյուցազնուկի և քաջությամբ ու իմաստությամբ այնքան հատաջադեմ արքայորդի հանդիպումն ինձ չճնշեց։ Սկզբում, ճշմարիտ է, իմ աչքերը դրավվեցան նրանով. մի քանի վայրկյան յես հափշտակված դիտեցի նրան, վորովհետև ավելի գեղեցիկ և ավելի աննման եր, քան վորքան նկարագրել էին դուռ. բայց հենց վոր յուր հայացքն ուղղեց ինձ, յես նորեն իմ նախկին հպարտ դիրքն ընդունեցի։

«Սակայն նա մոտեցավ ինձ սիրաժպիտ և քաղցրահայաց. վողջունեց այնքան հարգանոք և այնպես վայելչաբար, վոր յես իսկույն զինաթափ յեղա...։

«Ես մենք, մայր Սեդա, համարձակվում ենք հպարտությունից խոսել... Ի՞նչ կլինը. մի՞թե կարող է նա հպարտ լինել. մի՞թե կարող է նա արժանապատվության զգացումով դյուցազնանալ։ Մի քաղցր հայացք, մի անուշ ժպիտ՝ ա՛յն տղամարդու կողմից, վորին յուր սրտի խորքում սիրում է կինը, և ահա՛ ամեն բան վերջացավ. նա կդառնա այդ տղամարդու և՛ դերին և՛ սորուկը... Այդպես չէ՞, Սեդա։

— Դժբախտաբար այդպես է, սիրելի Թաղուհի, առաց Սեդան խորը հառաչելով։

Խեղճ կինը, յերևի, հիշեց յուր անցյալը և մտաբերեց նմանորինակ դեպքեր յուր կյանքից։

— Արքայորդին առաջնորդեց մեզ դահլիճ, ուր նստած եր մայր-Թաղուհին։ Ի՛նչ բարի, ի՛նչ հրաշալի կին եր նա։ Թեպետ Թաղավոր ամուսնու նահատակությունը ժամանակից առաջ ընկճել եր խեղճին, սակայն նախկին դեղեցկության հետքերը նրշմարվում էին տակավին յուր աղնվաշուք և վեհապանծ դեմքի վրա։

— «Ե՛կ, իմ հպարտ որխորդ, վաղուց կամենում էի տեսնել քեզ, վոր այնքան համառությամբ մեր բոլոր իշխաններին մերժեցիր»... ասաց նա ծիծաղադեմ և գրկելով ինձ՝ ջերմությամբ համբուրեց։

«Մինչև այսոր ել իմ միակ սիրելի զարդը ա՛յն վոսկի մատնյակն և, վոր նա նվեր տվավ ինձ, իբրև նշանառուքի առհավատչյա... Տո՛ւր ինձ այդ մանյակը, Սեդա, յես կամենում եմ նայել նրան, հրամայեց Թաղուհին։

Սեդան վեր կացավ և բերավ այն մանյակը, վոր մի յերկու ժամ առաջ հանել էին նաժիշտները Թադուհու պարանոցից։

— Տե՛ս, փոքր է նա, բայց գողտրիկ, դեղեցիկ։ Ցերքի՛ք, յերբեք չպիտի բաժանվեմ նրանից. և յերբ մեռնեմ, Սեդա, անպատճառ ասա՛, վոր դնեն այդ իմ դագաղում...

— Սիրելի Թադուհի, ի՞նչ տխուր բաներից վրա յես մտածում. Թող մեռնեն քո թշնամիները. կամ նրանք, վորոնք բեռն են աշխարհի համար։

— Բայց չե, ի՞նչ եմ ասում, նա ինձ չե պատկանում։

«Այո՛, այն վայրկյանը, վոր այս մանյակը իմ պարանոցը պատեց, կայնքից մեջ ունեցած ամենայերջանիկ վայրկյանն եր։ Ո՛, յերբի՛ք, յերբեք չի պիտի մոռանամ սրան։

— Ինչպե՞ս. մայր–Թադուհին հենց առաջին այցելության ժամանա՞կ նվիրեց այդ, հարցրեց Սեդան հետաքրքրությամբ։

— Վոչ. յես դեռ չպատմեցի։ Ցերկու որից հետո կատարվեց արքայական հանդեսը։ Սուրբ Գրիգոր կաթուղիկեն լցված եր ծայրե ի ծայր։ Այդտեղ եյին՝ Հովհաննես կաթուղիկոսը, բոլոր նախաթոռ յեպիսկոպոսները, արքայազուններ, նախարարներ, իշխաններ, ազատ տիկնայք, իշխանուհիք և իշխանազն որիորդներ։ Բայց այդ բոլորի մեջ միակ ընտրյալը, միակ դեղանին Աշոտ դյուցազնն եր։ Բոլորի հայացքը նրան եր հառած, բոլորի ժպիտը նրան եր ուղղված, բոլորի միտքը նրանով զբաղված։ Ցեվ հանդիսի սկզբից մինչև վերջը դեղանի իշխանուհիների աչքերը չհեռացան նրանից։ Ո՛, յես դեռ չդիտեի, թե ի՛նչ իրավունք ունիմ նրա վերաբերմամբ, բայց և այնպես նախանձում եյի, վոր նա դեղեցիկ և հրապուրիչ եր այդքան շատ աչքերի համար... Որհնության վեմ աղոթքները միայն մեղմեցին մի փոքր մեր հափշտակության խանդը և ստիպեցին մեզ սուրբ հայրերի հետ միասին աղոթել նորապսակ թագավորի կենաց և հաջողության համար։ Ո՛հ, ինչպե՞ս վեմ, ի՛նչպես ներկայացնել այդ աղոթքները։

— Ցերանի՛ք քո աչքերին, Թադուհի, վոր տեսել ես այդ հանդեսը, և ականջներին՝ վորոնք լսել են այդ որհնությունները. չեռնեի և արժանապատիվ մի որ... Բայց ի՞նչ եմ ասում. ասուածք Թող իմ Թագավորի կյանքը յերկարե...

— Այո՛, Սե՛դա, վեմ և սրտաշարժ մի հանդես և դա։ Զարմանում եմ, թե ի՛նչպես այդ հանդիսով ոծվող Թագավորը կա-

բողանում և խոտորել ուղղութեան ճանապարհից, և ինչպէ՞ս այդ հանդիսին յերդվող իշխանները դավաճանում են նրան։

«Ներք կաթուղիկոսը արքային յուր հարցերն անելուց հետո՝ դարձավ և հարցրեց ժողովրդին—«Ընդունե՞ք կալ ի ներքո սորին իշխանութեանն, վորպես խոստացաւն պահել ղձեղ. և ուղիղ հավատով կամե՞ք հաստատել զսորա թագավորութեան. և կատարեցե՞ք զսորա հրամանն՝ հնազանդութեամբ—բոլոր յեկեղեցին միաբերան գոչեց. «Այո՛, այո, տեր մեր և և թագավոր մեր»։

«Բայց այսոր քանի՞սն են նրան հնազանդ և վո՞ր իշխանը չէ ապստամբ։

— Ա՛խ, սիրելի թագուհի. պատմի՛ր աղաչում եմ, ի՞նչպես են թագավ պահում. խոկ աղոթքներից վոչ մեկը չե՞ս հիշում...

— Դրանք շատ յերկար են, Սեդա, պատմել անկարելի յեւ պետք և տեսնել, լսել։ Ամենից առաջ սուրն են տալիս թագավորին...

— Սո՞ւրը։

— Այո՛, անպատճառ սուրը. հետո արքայական. մատանին, ապա թագը։

— Խոկ աղոթքնե՞րը։

— Ամեն մեկի համար առանձին են կարդում։

— Որինակ՝ ի՞նչ են ասում սուրը տված ժամանակ. այդ շատ հետաքրքրական է. իրավունք են տալիս նրան կոտորելու, այդպես չե՞։

— Անշուշտ։ Բայց... ի՞նչ եմի ուզում հիշել, մոռացա... Սպասի՛ր...Հա՛, Ուրա հայցքը. այդ եմի ուզում հիշել, Սե՛դա։ Զե՞ վոր նա վոչ վոքին չէր նայում. բոլորը կամենում եմին նրա առաջին հայացքը հափշտակել. բայց ո՞վ էր այն ընտրյալը, վորին արքան յուր անդրանիկ հայացքը պիտի նվիրեր. հայտնի չէր։

«Ներք յեպիսկոպոսները սուրը մատուցին և կաթուղիկոսը բարձր ու հնչեղ ձայնով կարդաց՝ «ընկալ զսուրս զայս ի ձեռանէ առաքելական յեպիսկոպոսացս. և սովաւ թագավորեացես ի փրկութիւն յեկեղեցւոյ և ժողովրդեանս, վոր ընդ ձեռամբ քո հովվին։ Ած զսուր ընդ մէջ քո, հզոր, և թագավորեա՛ այսու ճշմարտութեամբ. և բարձրացիս սովաւ ի վերա անիրաւից և անհավատից և խնդրեացես զվրէժ քո հայնցանե, վորք զչարն զործեացեն... և փրկեացես սովաւ զաղք քո և զեկեղեցի և զդաշնակեալս լեցիս այրյաց և վորբոց, և աղատարար լերևիր և մխի-

Թարիչ վշտացելոց...» և այլն, Թագավորը բարձրացրեց աչքերն առաջին անգամ և յուր հայացքը սևեռեց ինձ վրա...Ինձ թվաց, թե նա ասում էր ինձ՝ «այս բոլորը քեզ հետ միասին ալիսի կատարեմ...»: Ցավ ամենքն այդ տեսան, և շատերն ինձ նախանձեցին... Այո՛, նրա այդ միակ, ինձ բարձրացնող և հպարտացնող հայացքի համար արքայազուն իշխանուհիները իրանց կյանքը կտային. և սակայն նա միայն Գարդմանա որիորդին ընծայեց այդ պարծանքը... Ի՞նչ եյի զգում յես այդ վայրկյանին, չեմ կարող բառերով արտահայտել. յերկինքը կարծես յերկրի վրա իջավ, կամ թե յես վերնային զավառները բարձրացա...

—Տեսնո՞ւմ ես, Թագուհի, այդ բոլորը մոռացել եյիր դու...

— Սպասի՛ր, մի՛ ընդհատիր ինձ... Այնուհետև, Սեդա, յես այլևս վոչինչ չեյի լսում. բոլոր եյությունս պատել եր մի յերանական և հափշտակող զգացում:

«Մայր–Թագուհու չշունչը հանկարծ սթափեցրեց ինձ. յես նրա մոտ եյի կանգնած:

— Տո՛ւր իմ ինձ հետ և աղոթի՛ր առածուն, վոր նա յերկարե իմ և քո Թագավորի կենաց որերը, ասաց նա ինձ մայրական սիրաշունչ ձայնով...

«Ցավ մենք միասին ծունր իջանք. յես աղոթեցի ջերմեռանդությամբ. աղոթեցի այնպես, վորպես չեմ աղոթել յերբեք իմ կյանքում. և արտասուքը հոսեց աչքերիցս ինչպես աղբյուր... Ուրախության արցունք եր դա, թե՞ ապագա վշտերի նախազգացման, չկարողացա իմանալ:

«Ցերբ հանդեսն ու պատարագը վերջացավ և դպիրներն սկսան մեղեդիները յերգել, Թագավորին մոտեցան համբուրելու նախ յեպիսկոպոսները, հետո մայր–Թագուհին, վրաց Թագավորը, ապա իշխանները և վերջը իշխանազուն տիկնայք և որիորդները:

«Որիորդների մեջ առաջինը յես համբուրեցի Թագավորի աջը և շրթունքներս դողդողացին... Ցերբ հեռացա, զգում եյի, վոր յերեսս վառվում է, չտպավեցի մորս հետ միասին խոսք տալ զսպի ժողովրդի հետին շարքերը, վորոնք վայրկենաբար ճանապարհ եյին բանում մեր առաջ և որհնանքներ ուղղում իմ անվան:

«Թագավորը դուրս յեկավ յեկեղեցուց շրջապատված յեպիսկոպոսներով ու իշխաններով: Հեծավ արքայական վոսկեսար յերիվարը, վորի վրա բարձրացած պահում եյին Թիրանեզույն վոսկեկար հովանին: Թագավորին շրջապատեցին առաջից սպարա-

պետը, աչ ու ճախ կողմից թագակիրն ու նշանակալը և ապա թիկնապահների զրահազգեստ դունդը։ Նրանց հետևից արքայազուն և իշխանազուն աղատանին։

«Իսկ թե ի՞նչ եր կատարվում կաթուղիկեյից դուրս, քաղաքի փողոցներում, անկարելի յե նկարագրել. ամբողջ Դվինը մի աչք, մի շունչ և մի հոգի դարձած՝ յուր թագավորի յելնելուն եր սպասում։ Ցերբ սպարապետի դրոշը յերևաց, մի վորոտընդոստ դղրդյուն կարծես Դվինը շարժեց. վորոտում եյին փողոցները, վորոտում եյին հրապարակները, բուրդերը, աշտարակները և մինչև անդամ քաղաքից դուրս դտնվող մարտկոցները—և ամենքը միաբերան որհնում և փառաբանում եյին նրան։

«Ցերբ վերադարձանք պալատ, դնացինք իսկույն թագավորին շնորհավորելու։ Այդտեղ եյին բոլոր նախագահ իշխանները և արքայազուն տիկնայք։ Մեր շնորհավորանքը մատուցանելուց հետո մայր-թագուհին նստեցրեց ինձ յուր կողքին, վոսկեկար ոթոցի վրա և մտերմական զրուցով սկսավ ինձ զբաղեցնել։ Ի՞նչ եր զանել նա իմ մեջ, չգիտեյի. բայց տեսնում եյի, վոր հոգվով ու սրտով կապված և ինձ հետ։ Ընդունված սովորության համաձայն յերկար պահեց նա մեզ յուր մոտ։ Ցետ յերբ հեռանում եյինք՝ հանեց պարանոցից այս մանյակը և անցնելով իմ պարանոցը՝ ասաց.

— «Սա վասիլ Արշակունի կայսեր ընծան և Աշոտ առաջնո թագուհուն. յես նվեր ստացա այս նրանից, և ինքս էլ հանձնում եմ քեզ՝ իբրև ապագա թագուհուն։ Ցո հալոցդը Թող քեզնից ժառանգե այն և Արշակունյաց վերջին շառավղի նվերը Թող անկորուստ մնա Բագրատունի թագավորաց ընտանիքում»։ Այս ասելով նա գրկեց ինձ և ջերմագին համբուրեց։

«Արդեն ամեն բան վորոշված եր։ Ցես ուրեմն արքայի նշանածն եյի։ Այնուհետև, ինքդ կարող ես դուշակել, թե յերջանկության ի՛նչ հովեր եյին դուրգուրում ինձ Դվինո արքայական պալատում։

«Բայց, ավա՛ղ, վախենում եմ հավատալ, թե այդ բոլորից միայն մնալու յեն քաղցր հիշատակները... և այս մանյակը, վոր առաջին անդամ գրկեց իմ պարանոցը կենացս ամենայերջանիկ վայրկյաններում...

Ե

ՑԵՐԵՔ ՏԸՐՎԱԾ ԸՆԹՈՑՔՈՒՄ ՀՈՑ ԱՋԴԻ ԿՐԾԱ ՑԵՎ ՀԵՐՍ ԹԱԳՈՒՀՈՒՆ ԱՆՀՈՑՏ ՄՆԱՑԱԾ ԴԺԲԱԽՏՈՒԹՑՈՒՆՆԵՐԸ

Թագուհին լուռ։ Անցյալի քաղցր հիշատակները վոչ միայն չամոքեցին նրա վշտերը, այլ ընդհակառակը նորոդեցին դրանց։ Գլխակոր և ձեռքը ճակատին հենած՝ նա մի քանի վայրկյան մնաց լուռ. ապա սրտի հուզման ու հոդևկան խռովության դիմադրել չկարողանալով՝ սկսավ արտասվել։

Սեդան տեսավ այտերի ծորող արցունքները և մորմոքելով հարցրեց.

— Այդ ի՞նչ է, մեծափառ տիկին. մի՞թե արտասվում ես. չես կարծում եյի, թե անցյալից խոսելով սիրտ ուրախանաս, ընդհակառակը տխրում ես...

— Մտածում եմ, թե այս բոլորը կորել և անդարձ... թե այն դյուցազնը, վորի միայն մի հայացքը ինձ հաճարտացնում, մի ժպիտը ինձ յերջանկացնում եր՝ այլևս իմը չե... և չպիտի լինի...

— Մի՛ ասիր այդ, թագուհի, մի՛ ասիր. յեթե յերջանկությունը տևողական չե, ապա վշտերն ել հավիտենական չեն. նրանք չարունակ տեղի յեն տալիս միմյանց, վորովհետև ամենի սկիզբն մի վախճան ունի. տխրության հաջորդը ուրախություն է. սիրածդ դյուցազնը քոնն է և կվերադառնա դեպի քեզ...

— Ա՛խ, Սեդա, ավելին մի՛ ասիր...

— Կամենում եյի ասել, թե պետք է համբերել. որինակ առ հենց մեր թագավորից և քո ամուսնուց. քանի՛ քանի տեսակ փոփոխության և հանդիպել նրա բախտը, վորպիսի՛ անհաջողություններ են չրջապատել նրան, և սակայն վորպիսի՛ համբերությամբ ու տոկունությամբ է նա հաղթել ամեն դժվարության։

— Ա՛խ, Սե՛դա, ինչպե՛ս քիչ ես ղրում... բայց նա այսպիսի վիշտ, այսպիսի կորուստ չէ ունեցել, նա յուր յերջանկութեանն ու յերկինքը չէ ամփոփել մի սրտի մեջ, վոր խլած լինելին իրանից...

— Ցավ դու, Թադուհի, ինչպե՛ս քիչ ես ղրում... Ների՛ր համարձակութեանս...

— Ի՞նչ, Սեդա:

— Ա՛յն վշտերի ծանրութիւնը, վոր մի որ նրան եր ճնշում:

— Այսի՞նքն:

— Դու ինքդ նկարագրեցիր ա՛յն յերջանիկ որը, յերբ Դվինում Թադավոր սպասիցին բաղմահաղթ Աշոտին. այնպես չէ՞:

— Այո՛:

— Բայց հետո, ամբոխներ չանցած, ի՞նչ ծանր վշտեր չպատահարեցին նրան:

— Գիտե՞ս, Սեդա, այդ ժամանակվա դեպքերից յես քիչ բան դիտեմ:

— Այո՛, վորովհետև շատ բան ծածկում եյին քեզանից:

— Ձեմ մոռացել միայն այն, վոր յերբ Դվինից վերադարձանք Գարդման, հայրս ասաց, թե մեր զորքերից մի քանի դունդ շուտով պիտի հասցնենք Թագավորին, վորովհետև ներքին դավառներում ապստամբութիւն և ծագել:

— Այո՛, միայն այդքան. և նրանից հետո ել ուրիշ տեղեկութիւններ չհաղորդեցին քեզ:

— Ցերբեմն հարցնում եյի, թե ինչո՞ւ Աշոտը չէ գալիս մեր յերկիրը, կամ թե...

— Ցե՞րբ պիտի կատարվի մեր հարսանիքը: Այդ հարցը ինձ արիր մի որ և՛ ծիծաղելով և շոյադունելով:

— Այո՛, հիշում եմ:

— Ցավ իշխան Սևադան յերբեմն կգիտուր, յերբեմն մանավանդ պատասխաններ եր տալիս. մերթ հուսադրում, մերթ վհատեցնում եր քեզ, բայց վոչ տխրեցնելու չափ:

— Ցավ իրա՛վ, այդ բոլորի մասին ինձ հետո բացատրութիւններ չտվին, վորովհետև ուրիշ կարևոր դեպքեր սկսան մեղ պրպղեցնել:

— Այո՛. բայց յերե՛ս տված լինելին, այն ժամանակ կիմանայիր, թե խեղճ Թագավորը, յերեք յերկար տարիների ընթացքում, վորպիսի՛ ծանր չարիքների ու վտանգների դեմ և մաքառել. թե մարդկանց և բնութեան ձեռքով յուր յերկրին հասած

Թշվառությանց առաջն առնելու համար՝ լ՛նչ հերոսական կռիվ-ներ և մղել։

— Պատմի՛ր մի քանի խոսքով, լ՛նչ եր պատահել թագադրու-թյունից հետո։

—Թագադրությունից հետո՞, ո՛, մեծ բաներ։ Աասնք մի յերկու խռովությունների պատճառն էլ իմ նորատի տիրուհին եր։

— Ցե՞ս։

— Այո՛, իմ թագուհի. դո՛ւ։

— Ի՞նչպես, Սեղա. պատմի՛ր, այդ հետաքրքրական է։

— Դու հո լ՛ոնքդ ես տեսել, թե հայոց իշխանները ինչպե՛ս մի սիրտ ու հոգի յեղած հավաքվել եյին Դվին Աշոտ Ցերկաթը թագավորացնելու։

— Այո՛. և ամենքը ուրախ եյին այդ համաղգային տոնա-խմբությանն ժամանակ։

— Բայց շատ շուտով նրանցից մի քանիսի ուրախությունը փոխվել եր տխրության։ Ա՛յն իշխանները, վորոնց դու մերժել եյիր քո ձեռը, վորքան վոր ուրախ եյին Աշոտի թագավորելուն, այնքան էլ հակառակ՝ վոր նա ամուսնանար քեզ հետ։ Նրանք կը-ցանկային, վոր Սահակ Սևադայի հպարտ աղջիկը, վոր մի որ մերժել եր իրանց յուր ձեռը, դառնար մի հասարակ ազնվակա-նի կին և վոչ թե հայոց թագուհի։ Ցեվ սակայն արքայի մայրը Դվին յեկած բազմաթիվ իշխանազն որիորդների մեջ միայն քեզ եր հարմն ընտրել յուր համար։ Բացի մերժված իշխաններից, թագավորի դեմ գրգռվել եյին նաև նրանք, վորոնք հարսնացու որիորդներ ունեյին և զգվել եյին իրանց այն հուսով, թե դուցե թագավորը կիեսայանա իրանց։ Սակայն այդ մանյակը, վոր այժմ այդքան սիրելի յե քեզ, բոլորի հույսը ի դերև եր հանել։

«Ցեվ ահա՛, յերբ նրանք ցրվում են իրանց գավառները, սկսում են հետզհետե լարվել թագավորի դեմ. մայր-իշխանու-հիները մանավանդ սկսում են ամուսինների պատասխրությունը գրգռել և հնացած բարկությունը փոխել ատելության։

«Այս ամենի հետևանքը յեղավ այն, վոր Հայաստանի մի քա-նի անկյուններում միաժամանակ մի քանի խռովություններ փըր-թեցան։ Մի քանի իշխաններ ուղղակի թագավորի դեմ գնալ չհա-մարձակվելով, սկսան հավասարապահ իշխանների հետ կռվել՝ հաշվելով, թե մի ևնուն է, այդպիսով էլ թագավորի հանդստու-թյունը կվրդովեն։

«Այսպես՝ Աբծրունյաց Գուրգեն արքայեղբայրը ոգուտ քա-

զնելով Սյունյաց Սմբատ իշխանի բացակայությունից, գրգռեց յեղբորը, բունավոր Գագիկին, պաշարել Նախիջևանը և առնել։ Վերջինս լսեց յեղբորը։ Սմբատ իշխանն այդ իմանալով՝ մեծ պատրաստությամբ յեկավ Արծրունիների վրա՝ յուր կալվածքն աղատելու հուսով։ Ցերկու կողմից էլ կատաղի ընդհարում, մեծ ջնասաներ և կոտորածներ յեղան։

«Ուրիշ մի քանի իշխաններ, վորոնք ըստ որինի պարտավոր եյին միաբանել իրանց թագավորի հետ և հարկավոր ժամանակ զորք հասցնել նրան, հայտնի կերպով բաժանվեցան թագավորից և մի քանիսն էլ ապստամբության փորձ արին։ Թագավորն ըստիպված յեղավ շատ քաղաքներ ու բերդեր նորից պատերազմով նվաճելու, շատ տեղեր ավերելու և յուր իսկ յերկրի մեջ կոտորածներ անելու, պետության խաղաղությունը վերականգնելու համար։

«Նույնիսկ վրաց Աբրներսեհ թագավորը հայ իշխանների դրդմամբ՝ Քշնամացավ Աշոտ արքայի հետ և մեր հյուսիսային գավառներից մի քանիսը փորձ արավ սեփականելու։ Այս փորձը խնամակալ ուղղված եր Սևադա իշխանի, իբր արքայի անեոլ դեմ։ Թագավորն ստիպված եր վրաց մի քանի գավառներն ավերելով Աբրներսեհին խրատել։

«Վերջապես խռովությունները խռովություններ հարուցին։ Շատ իշխաններ էլ թագավորի խառնված գրությունից ոգուտ քաղելով՝ սկսան իրար դեմ դինվել, հին տոհմական վրեժխնդրի ծարավը հագեցնելու, կամ միմյանցից յերկրներ հափշտակելու համար։

«Այսպիսով բոլոր յերկիրը տակն ու վրա յեղավ և թագավորը մնաց համարյա միայնակ։

«Այս խռովությունների լուրը հասավ հազարացոց Յուսուֆ վոստիկանին, վոր սկզբում, Աշոտ թագավորի քաջագործությունների զարհուրած՝ կծկված եր Արտպատականում։ Բայց ժամանակ եր ինչ նա յուր առաջները կրճատում եր Աշոտ թագավորի վրա, վորովհետև չեր կարողանում յուր զորաց կոտորածը մոռանալ, բայց միևնույն ժամանակ վրեժ առնելու էլ առիթ չեր ներկայանում։ Թագավորը հաջողության մեջ եր և բոլոր իշխանները հետը միաբան։ Ի՞նչ կարող եր անել։— Բայց այժմ, յերբ արդեն տեղեկացավ, թե հայ իշխաններից շատերը հեռացել են թագավորից և շատերն էլ միմյանց դեմ յելած կարդում են իրար և մեկնելու միջոց չունին, հարմար առիթ համարեց թագավորի յերկիրը արշավելու։

Վիակ Քե այնուհետև հաղարացիք ինչո՞ր կատարեցին մեր գալառներում, նկարագրելն անկարելի չե։ Ասում չուա, վոր այդպիսի տարիները նորից վերադառնան։

— Բայց ինչո՞ր կատարեցին, Սեդա. քեզ ասացի, վոր այդ ժամանակվա դեպքերից շատ քիչ բան գիտեմ։

— Ո՛, վո՞ր մեկը պատմել, վո՞ր մեկը հիշել... Այդ տարիների թշվառության պատմությունը գրքեր կլցնեն. մինե չես կարող եմ բոլորը պատմել... Ինչպես սովալլուկ գաղաններ ներս խուժեցին գրանք մեր յերկիրը. դիմացները արդելք չդտնելով՝ ազատ համարձակ տիրեցին, վո՛ր տեղին վոր կամեցան. գյուղերն ու ավանները քանդեցին, քաղաքներն ավերեցին, յեկեղեցիները հրձիզ արին, ժողովրդի մի մասը կոտորեցին, մի մասն ուրացության տարեցին, ընդդիմացողներին նահատակեցին, իսկ շատերին գերի տարան հետավոր յերկրներ։ Վոչ մի գեղեցիկ կին կամ աղջիկ չազատվեցավ նրանց ձեռքից. պաշտպանող մայրերին սպանում եյին աղջկերանց առաջ, հայրերին՝ վորդիների առաջ. ատամոռ կանանց գրկից հափշտակում եյին ծծկեր յերեխաներ և գետին խփելով ջախջախում... ամեն տեղ արյուն, ամեն տեղ կրակ և պղծություն. անկյուն չկար, վոր ազատ լիներ այդ հրեշների արհավիրքներից...Ձերբ անպաշտպան ավաններն ու քաղաքներն ավերեցին, այնուհետև դիմեցին բերդերի և ամրոցների վրա։ Մի քանի տեղ, ճշմարիտ է, պաշարյալները քաջությամբ դիմ դրին թշնամուն և մեծ կոտորած արին նրա զորքի մեջ. բայց շատ տեղ էլ բունությամբ կամ մատնությամբ գրավեցին նրանք ամրոցները և միջի բնակիչները անխնա կոտորեցին։

— Ի՞նչ եր անում, ուրեմն, այդ ժամանակ Թագավորը։

— Ի՞նչ պիտի աներ, իշխանների մի մասը միացել եր Քըշնամու հետ, կամ անձնատուր եր յեղել նրան. մի մասը յեղբայրասպան կռվով եր զբաղված յուր գրացու կամ ազգականի հետ. այսինքն, այն միջոցին, վոր ոտարը մի կողմից ավերում եր իրանց յերկիրը, իրանք էլ մյուս կողմից եյին ավերում։

Մի քանի ուժ ունեցող իշխաններ ամրացել եյին իրանց բերդերում և կռվի դաշտը չեյին իջնում։ Մնացել եյին Թագավորի հետ՝ հայրդ՝ յուր զարմանացի գնդերով, Սիսակյան իշխանները՝ այսունեցի վաշտերով և Մարզպետունի իշխանը՝ պետական զորքերով։ Իսկ այս միության ուժը համեմատելով Քըշնամու զորության հետ, մի վոչնչություն եր։

«Հարցնում ես, ի՞նչ եր անում Թագավորը. համարյա Քե

վոչինչ, կամ ա՛յն, ինչ վոր կարող եր և պարտավոր եր անել — յուր սահմանթիվ զորքի մի մասը զինակից իշխաններին հանձնած և մյուս մասը հետը վերցրած ինչպես մի վիրավոր առյուծ՝ արշավում եր յերկրի այս կամ այն կողմը: Թշնամու հետ ճակատ առ ճակատ պատերազմել չեր կարող, ուստի յերբեմն հանկարծական հարձակումներով չվոչնչում եր նրա զորքերի կարգը, յերբեմն մենավոր զնդերի վրա ընկնելով՝ ջարդում նրանց, յերբեմն պաշարված բերդերն ողնության հասնելով՝ հարվածում պաշարողներին, միով բանիվ զործում եր իբրև ասպատակ գընդերի հրամանատար, հուսալով, թե այսոր կամ վաղը խելքի կըգան իշխանները և յուր հետ միաբանվելով՝ կանոնավոր ճակատամարտով կարասքանն հայրենիքից ընդհանուր թշնամուն:

«Հայց արքայի համար ամենամեծ հարվածն յեղավ աչն, վոր յուր հարեղբորվորդի Աշոտ ասպարապետը, յուր ձեռքն ունեցած պետական զորքերով անձնատուր յեղավ Յուսուֆին և նրա հետ միասին մտավ Դվին, իբրև վոստիկանի հլու հպատակը:

«Մյուս կողմից եվ մեր կաթուղիկոսը փոխանակ սրան և նրան դիմելու, իշխանները հաշտեցնելու և զրանց բոլորին միացնելով՝ թագավորին թե ու թիկունք կանգնեցնելու, յերկիրը թողեց տագնապի մեջ, ժողովուրդը հուսահատության մեջ, զորքը՝ մահու և կյանքի հետ կռվելիս և ինքը յուր անձի անդորրությունը խնդրելով՝ հեռացավ Վրաստան, Ատրներսեհ թագավորի մոտ ապահովության մեջ ապրելու:

«Ի՞նչ աներ այդ ժամանակ թագավորը. ի՞նչ կարող եր անել նա:

— Տե՛ր աստված.. և այդ բոլորի մասին ինձ զրեթե վոչինչ չեք հայտնել... Ա՞յդ եր ուրեմն պատճառը, վոր հայրս համարյա Գարդմանում չեր մնում, յերբեմն գնում եր Այունիք, յերբեմն Գուգարք, յերբեմն Վոստանի կողմերը, մերթ փոքրիկ վաշտով, մերթ մի մեծ զնդով...

— Ցավ քո անհանգիստ հարցերին՝ հանդստացնող պատասխաններ եր տալիս. ասում եր, վոր թագավորն զբաղված է կարսա բերդը և Ցերասղավորքը ամրացնելով, թե Դվինի շուրջը նոր խրամ և վորել տալիս, թե ինքը յուր վաշտերով արքունական ահամաններքը չրջապատելու յե գնում, և այլն և այլն:

— Այո՛, և նրա այդ պատասխաններն ինձ հանդստացնում եչին:

— Իշխանը հրամայել եր մեղ ամենիս՝ վոչ մի տխուր լուր

չհաղորդել քեզ. մանավանդ պատերազմի արհավիրքներից բնավ չխոսել քեզ մոտ: Աղախինները մի անգամ սխալվել՝ լուրերը հին բեր՛ել քեզ: Մենք ամեն ջանք դործ դրինք սուտ հանելու լայծ-ները:

— Հիշում եմ. այդ Դվինում նահատակված յերեխաների մասին եր: Բայց ինչո՞ւ այդ բոլորը ծածկում եյիք ինձանից:

— Վորովհետև վերին աստիճանի դյուրազդաց եյիր. ամենաննշան կոտորածի լուրը լսելուց ժամերով լաց եյիր լինում և յերբեմն հոդնակես այնպես ընկճվում, վոր սոխալված եյիր լինում անկողին մտնել:

— Ցավ, իրավ, Սեդա, լավ ե, վոր այդ բոլորն այն ժամանակ չեք հայտնել ինձ. յես արդի կսկծից կարող եյի մեռնել...

— Ո՛, և դեռ չդիտես, թե ուրիշ ի՛նչ զարհուրելի բան ենք ծածկել քեղանից:

— Ի՞նչ, Սեդա, վախեցած հարցրեց Թադուհին:

— Սովը, սարսափելի սովը. հետո վայրենի դաղանների, դայլերի ու բորենիների յերևան դալը և քաղաքներում ու դյուղերում մարդիկ հափշտակելը:

— Սովի մասին յես լսել եմ:

— Ի՞նչ ես ասում, Թա՛դուհի, ի՞նչպես կարելի յեր խոկությունը քեզ հայտնել. սիրտդ կտոր-կտոր կլիներ: Դու ծանոթ եյիր մեր Գարդմանա սովի հետ. բայց դա սով չեր, այլ հացի Թանդություն: Տրտու դեմը և Գարդմանա քաջերը Թուլ կըտային, վոր մեր յերկրում սով լիներ: Սովը, սարսափելի սովը սկրում եր Գարդմանից այս կողմը դտնվող յերկրներում:

«Ամբողջ յերկու տարի բուն Հայաստանը կռվի և արյան դաշտ եր դարձած, բոլոր այդ ժամանակ դյուղացիք վարել, ցանել ու հնձել չեյին կարողացել: Ցավ ի՞նչպես կարողանային, քանի վոր դաշտ ու ճոր, լեռ ու անտառ հազարացի զորքերով ու հեղուդակներով եյին բռնված, իսկ ազատ անկյուններումն էլ հայ զորքերն եյին միմյանց կոտորում, հայ իշխաններն իրար ջնջում: Այս պատճառով յերկրագործները ցրվեցան, այդիներն ու դարաստաններն անխնամ մնացին, ժողովրդի վերջին պաշարը վայրենի զորքերը սպառեցին և սովը յուր զարհուրելի հետևանքներով բռնացավ Հայաստանի մեջ: Կարոտությունն իրրև մի վրեժխնդիր ժանտախտ՝ աղքատների խրճիթից հարուստների ապարան-

քը մտավ. ամեն տեղ տիրեց քաղցը, թշվառությունները դառնացրեցին...Ո՛, յերանի՛ նրան, ով աչքերով չէ տեսել այդ աղետը... Մարդիկ քաղաքների ու գյուղերի մեջ ունեցածները սպառելով՝ ցրվեցան դաշտերը, ձորերն ու լեռները, վորպեսզի դոնե կանաչ խոտ կամ բանջար ճարակելով քաղցերնին անցնեն: Ընտյելով, վոր շատերը այդ խոտաճարակներից մեռնում էին վնասակար խոտեր ուտելուց, այսուամենայնիվ քիչ ժամանակի մեջ դաշտերի ու լեռների կանաչը սպառեցին: Այնուհետև սկսան անասուրբ կենդանիներն ուտել. այն է՝ եշ, ձի, կատու, շուն, մինչև անգամ վորդեր, ճիճուներ...

— Ա՛խ, Սեդա, ինչի՛ր ես ասում, դադարի՛ր, լսել չեմ կարող...

— Այո՛, իմ տիրուհի, ուտում էին... բայց ավելի սարսափելին, ավելի զարհուրելին կա... Ո՛, կին արարածի ականջը լսել չէ կարող...

— Ի՞նչ, Սեդա:

— Կարսակես. չեմ կարող ասել:

— Ասա՛, Սեդա, պատմի՛ր, դու արդեն այդ տեսակ բաները լսելն ինձ սովորեցրիր:

— Ասում էին, թագուհի, վոր հրապարակները լցվել էին մերկ, կամ հագիվ ցնցոտիներով ծածկված սովատանջ մարդկանցով, վորոնք չրջում էին իրրև ուրվականներ և միմյանց դիպչելուց՝ անշնչացած ընկնում փողոցի մեջ... Փոքր ի շատե ուժ ունեցողները հարձակվում էին այդ դիակների վրա և նրանց մեջը առամներով հոշոտելով լափում: Ամեն մի ընկած դիակի վրա հավաքվում էին բազմաթիվ դիշատիչներ, ինչպես դժոխային չարաճաճանչ վոգիներ...

— Ո՛, զարհուրելի չե...

— Իսկ ի՞նչ կասեիր կաճենակը յերեխաների համար, վորոնք յերկարատև լալուց նվաղած ձայնով հրում էին մայրերի չորացած սուինքները. փոքրիկ մանուկների համար, վորոնք արտասուքը դալկացած ծնոտներից ծորելով և չորացած շրթունքները թրջելով հա՛ց դոչելով ողը լցնում էին աղեխարշ աղաղակներով, իսկ շատերը նվաղած դետին դլորվում և անշնչանում...

— Ո՛, սիրտս մաշվեցավ, Սեդա, բավական է:

— Ցավ հետո... բան զարհուրելին դեռ չասացի... Գոնևեցան մայրերը, վո՛չ, դաշան արարածներ, վորոնք իրրև ինչ իրանց

մանուկների տանջանքը չտեսնելու համար, մոլքեցին նրանց և կերան...

— Լռի՛ր, Սեդա. այլևս վոչ մի խոսք...

Ցնվ թագուհին ասստիկ հուզումից այլազունելով ընկավ բազմի վրա։

Ը

ՀՇԻՄԻ ՀԻԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՎՈՂՁՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԵՍՏԻ ԳԱԼՍՏՅԱՆ ՍԻՒԹՈՎ

Դիշերից բաւական անցել էր. հաւերը խոսնել էին վաղուց. Սեդան սպասում էր, վոր Թադուհին յուր պատմութիւններից հոգնած՝ կսպառվի վերջապես հանդստանալու և իրան էլ հնարաւորութիւն հնռանալ:

Բայց նրա հույսը չարդարացավ: Վերջին պատմութիւնները, ճշմարիտ և, դրդռել էին Թադուհու ջղերը և այդ պատճառով մի առ ժամանակ լռութիւնը նրանց ղրուցին ընդհատեց, բայց յերբ Սեդան բարձրացավ ճրագարանի պատրույգներն ուղղելու և նորին դեպի յուր աթոռակը դարձավ, Թադուհին հարցրեց.

— Այդ ժամանակ չէ՞ր, Սեդա, վոր Թագավորը կոստանդնուպոլիս գնաց:

— Այո՛, Թադուհի, հենց այդ թշվառութիւնների ժամանակ, պատասխանեց Սեդան և ապա նորեն նստելով՝ շարունակեց.

«Ես վոր ասում էի, թե վէշտերը հավիտենական չեն, թե խավար դիշերին հաջորդում է լուսավոր որը և բուքին ու փոթորկին՝ պայծառ արևը... Դու քո վէշտերից, քո տանջանքներից ես խոսում. բայց դրանց կարելի՞ է համեմատել այն վէշտերի հետ, վորոնց տանում էր Թագավորը... Անցյալ պատերազմների և սովի արհավիրքների լոկ պատմությունը ճնշում է քո սիրտը. հապա ի՞նչ աներ նա, վոր այդ ցավերի դառնությունը կրում էր անձամբ, իրրև Թագավոր, իրրև ժողովրդյան հայր. դեպի վորը դիմում էին բոլոր տառապյալները, դեպի վորը բյուրավոր թշվառներ կարիառում էին իրանց ձեռքերը...

Բայց և այնպես նա այդ նեղութիւնները տարավ հերոսաբար, և վորովհետև յուր հույսը դրել էր աստծու վրա, ուստի նա չթողեց արքային: Այն միջոցին, վոր յուր իշխանները հե-

ռացած էին իրանից, և յերկիրը հեծում էր թշնամու և սովի արհավիրքների յերեսից, հունաց կայսրը և պատրիարքը կարեկցական և մխիթարական նամակ գրեցին Թագավորին, նույնպես և կաթուղիկոսին, հորդորելով սրան աշխատել, միացնել հայոց իշխանները Թագավորի հետ, և հորդորել նրանց ընդհանուր ուժով դեմ դնել հասարակաց թշնամուն։

«Կաթուղիկոսը այդ նպատակով շատ աշխատեց, բայց իշխաններն անսաստեցին նրա խրատներին և մերժեցին վեհի խընդիրները։ Վերջին մինչև անդամ իջավ Տարոն և աշխատեց այդտեղի մի քանի հզոր իշխաններին հաշտեցնել իրար կամ Թագավորի հետ, սակայն այդ աշխատանքն էլ անցավ ապարդյուն։

«Վերջը ստիպված յեղավ յուր իշխանների՝ ազգի համար անպատվաբեր հակառակության մասին զեկուցանել կայսրին և պատրիարքին, և նրանց ողնությունը խնդրել Թագավորի հպմամբ ներքին թշնամիների դեմ։

«Ոտարները արդահատեցին մեր թշվառության վրա և կայսրը հրամայեց թե՛ Թագավորին և թե՛ կաթուղիկոսին դնալ յուր մոտ, վորպեսզի անձամբ խորհրդակցեն իրանց անելիք ողնության համար։ Կաթուղիկոսը չուզեց դնալ, վորովհետև վախեցավ, թե հայոց յեկեղեցին հունաց յեկեղեցու հետ միացնելու առաջարկություն կանեյին իրան։ Ուստի հրավերը չընդունեց։ Բայց Թագավորն այդպիսի բանից քաշվելիք չուներ, ուստի և յուր իշխաններով ու չքաղիր խմբով յելավ դնաց Կոստանդնուպոլիս։

«Այնուհետև արդեն հայտնի յե քեզ, թե ի՛նչ փառավոր ընդունելություն արին նրան Բյուզանդիոնում, թե ի՛նչ տոնախմբություններ կատարեցին հայոց Թագավորի պատվին, թե ի՛նչպես արքայական թագով ու ծիրանիով պսակեցին նրան, թե ի՛նչ մեծագին ընծաներով մեծարեցին թե՛ իրան և թե՛ յուր իշխաններին։

— Այո՛, այդ ամենի մասին պատմել է Գևորգ իշխանը, հարցրեց Թագուհին,

— Այս հաջողություններն արդեն բավական յեղավ ոգևորելու հայոց իշխաններին իրանց ծմրությունից, շարունակեց Սեդան։ Բոլորը կարծես միաժամանակ վոգևորվեցան։ Գագիկ Արծրունին վասպուրականից սկսավ վռնդել հազարացիներին։ Անձևացյաց և Մոկաց իշխանները՝ իրանց յերկրներից հալածեցին Թուսուխա զորքերը։ Հյուսիսային նահանգներից էլ մեր ասպատակները քշեցին նրանց։ Այնպես վոր Թուսուխը հան-

կարծակիի յեկածի նման մնացել էր չվարած։ Ցերբ խմացավ, վոր Աչոտ Թաղավորն էլ հունաց ոգնական զորքերովն է վերադառնում Հայաստան, էլ սարսափը պատեց նրան. առանց ժամանակ կորցնելու յելավ և յուր մնացած զորքերով փախավ Դվինից դեպի Արտաշատական։

«Թաղավորը վերադարձավ՝ հաջողություններով պսակված։ Առանց աշխատության տիրեց կրկին հաղարացիների դրաված յերկրներին։ Մի քանի տեղ, ճշմարիտ է, փոքրիկ ընդդիմություններ յեղան, բայց հունաց և հայոց միացյալ ուժի առաջ ամեն արգելքներ հարթվեցան։ Մեր աշխարհը կրկին խաղաղեց, ժողովուրդը շունչ առավ, արտերն ու այդիները կանաչեցին, յերկիրը բերքերով լցվեցավ և մարդիկ սկսան վոչ միայն առօրյա հանդստություն վայելել, այլև ուրախության տոներ կատարել։

— Կարծեմ ամենից առաջ իմ տաղը Աբասը սկսավ։

— Արքայեղբա՞յրը... Այո՛։ Թաղավորը դեռ չեր վերադարձել՝ վոր նա դնաց և ամենազաց Գուրգեն մեծ իշխանի դստեր հետ ամուսնացավ։ Ձի՞ վոր վաղուց սիրում էլին նրանք իրար։

— Գիտեմ. Թաղավորի Թաղադրության որերից։ Իմ աչքի առաջ սկսվեցավ նրանց բարեկամությունը...։

— Այո՛, Դվինում. մի փոքր առաջ պատմում էիր։ Բայց ժողովուրդը չամբառում էր նրան, վոր մեծ և Թաղավոր յեղբորից առաջ պսակվեցավ։

— Իզուր։ Ցերևի Ախթամարի որիորդը առավել գրավիչ և գորեղ էր, քան Սահակ Սևադայի աղջիկը. ի՞նչ կա այդտեղ չամբառելու։

— Վո՛չ, իմ Թաղուհի, անակնկալ դեպքերն ուշացրին ձեր հարսանիքը։ Ձի՞ վոր Ցուսուֆ վոստիկանը՝ Թաղավորի հունաց հետ մխարանելը լսելով՝ չտապել էր մի ընտանի և գորեղ ձիաման պատրաստելու նրա դեմ։ Սառնասյական խորամանկությամբ նա Թաղ գրավ Աչոտ սպարապետի գլուխը և ուղարկեց Հայաստան։

— Այո՛, վորպեսզի հարազատը հարազատի դեմ կանդնեցնելով՝ յերկուսին էլ ուժաղուրկ անե։

— Ցեվ յեղբայրասպան կռվով հայոց զորքերը տկարացնելով՝ անաչխատ տիրե մեր յերկրին։

— Հասկանալի յե։ Այդպես էլ նա արավ Գագիկ Արծրունու հետ, վորպեսզի Սմբատ Թաղավորի ուժը չլսատե։ Բայց վեր-

ջում, վորովհետև Գադիկը հեռացել եր իրանից, սպարապետին առաջ քաշեց։ Դա մի հին խաղ է, վորով մեր Թշնամիները աշխատել են միշտ մեզ տկարացնել։ Ջի՛ վոր ավելի ճեռնտու չի նրանց, վոր հայերը միմյանց ջարդելով վոչնչանան, քան թե իրանք սեփական զորքեր բերեն այստեղ հայերի հետ կռվելու։ Ի՞նչ է պակասում Թշնամուն. մեկին թագ կընծայէ, մյուսին իշխանություն կտա. այդ միջոցներով նրանց վառամոլությունը կգրգռե և միմյանց դեմ կղինե։ Իսկ յերբ նպատակին կհասնե, թագն էլ կվերե, իշխանությունն էլ։ Այդպես անում են բոլոր խարդախ տիրապետները. իսկ վառքի և անձնական շահու համար աղգ վաճառողներ ամեն յերկրում կան։

— Այո՛, թագուհի. սպարապետը դիտեր Բուռուժի խորամանկ նպատակը, բայց և այնպես չկրճատվեցավ հայրենիքի շահը յուր վառամոլության զոհելու։ Իբր հակառակաթոռ թագավոր՞ ակսավ յեղբայրասպան կռիվ մղել յուր հորեղբոր վորդու և աղգի որինավոր թագավորի դեմ։ Կոտորածներ արավ, գյուղերու ավանները քանդեց, քաղաքները առավ, մինչև վոր վերջապես Վաղարշապատի մոտ թագավորական զորքերից չարաչար հաղթվելով փախավ Դվին։

«Ահա՛ Աշոտ–բռնավորի այս չարիքները եյին պատճառ, վոր արքայական հարսանիքն ուշացավ։ Թագավորը կամենում եր յերկիրն ամեն կերպ խաղաղացնել և ապա թե ոտնակոն հանդեսներով զբաղվիլ։

— Ճեվ դու, Սեդա, հիշում ես բոլորը, այնպես չէ՞...

— Ո՛, այնպես, վորպես թե յերեկ կատարվեցավ։

— Ճեվ իրավ, վո՛րքան քիչ ժամանակ է անցել. ընդամենը յերկու տարի... ասում՞ած իմ... Ճեվ այս կարճ ժամանակում այսքան յերկա՛ր ապրել...

— Ի՞նչ, յերկար ապրել ասացի՞ր...

— Այո՛, Սեդա, շատ յերկար տանջվեցի... Ինձ թվում է, թե տասնյակ տարիներ են անցել։ Քանի՜ ամյակս դեռ չէ բոլորել, և սակայն վաղուց պառավել եմ յես...

— Դու դեռ այնպես դեղեցիկ ես, ինչպես մի հրեշտակ։

— Հա՛, հա՛, հա՛... խեղճ Սեդա... դեղեցիկ եմ, բայց ո՞ւմ համար, ո՞ւմն է պետք քո թագուհու դեղեցկությունը։

— Դու դարձյալ տխրում ես...

— Հիշում եմ ինչպես այսօր։ Ճես կանգնած եյի դղյակի վերին դռսիկոնում. ինձ հետ եյին մանկահասակ նաժիշտներս...

Ներքև, ամբոցի բակում, հայրս պատվիրներ եր տալիս մի խումբ զարդմանացի հնձյալներին, վորոնք նույն դիշերն ևեթ պիտի ճանապարհվեյին դեպի Աղստև, վորպեսզի այնտեղ գտնվող մեր մի ղորապետներն առաջնորդեյին դեպի Վաղարշապատ, Թագավորին ողնության հասցնելու:

«Հանկարծ հեռվում, Գարդմանա կամրջից այն կողմը, մի կարմիր դրոշակ նշմարեցի, վոր կարծես թռչում եր ոդի մեջ:

— «Աղջիկները, ի՞նչ բան է այն, հարցրի նաժիշտներիս: Բոլորը միասին այն կողմը նայեցին: Ես մինը, վոր ամենից սրատես եր, հանկարծ աղաղակեց.— «Ավետաբեր է»:— «Ավետաբե՞ր...», հարցրի մեքենայաբար և սիրտս սկսավ տրոփել... Սա ուրեմն Թագավորի կողմից է, մտածեցի յես, և ուրախություն չունեյի բռնկեցավ...

«ԵՒեթ հիշում ես, քիչ ժամանակ առաջ ասպատմբեցան Գուղարաց վերակացու Գնթունի իշխանները: Թագավորը Աբաս տղերս հետ միասին զնաց և նվաճեց նրանց: Ապա յերկուսը միասին հյուր զնացին ավխազաց Գուրգենն մեծ իշխանին: Ահա՛, Թագավորի այդ բացակայությունից ոգտվելով՝ բռնավոր-Աշոտ յեկավ և Վաղարշապատը գրավեց:

«Թագավորը և Աբաս յեղբայրն անմիջապես վերադարձան Ամիսաղիայից և դիմեցին Վաղարշապատ: Գարդմանից նրանք անցել եյին դիշեր ժամանակ: Հորս հետ տեսնվել եր Թագավորը միայն մի քանի վայրկյան, իսկ ինձ Թույլ չեր տվել, վոր արթնացնեյին: Նույնիսկ ձեղանից վոչ վոք չեր իմացել Թագավորի գալն ու Գարդմանից անցնելը:

— Այո՛, վորովհետև նա նպատակ եր ունեցել հանկարծ հարձակվելու Աշոտ բռնավորի վրա: Վոչ վոք չպետք է այդ իմանար:

— Այդպես է. բայց ճանապարհվելուց հայտնել եր հորս, թե «ԵՒեթ սուրը կաթուղիկեն ոգնե ինձ այս անդամ բռնավորը յուր գործիսպներից վանելու, ավետաբեր կուղարկեմ քեզ կարմիր դրոշով, և ապա կվերադառնամ Գարդման մեր հարսանիքը տոնելու»:

«ԵՒեվ այդ դիտեյի յես, Սեդա. հայրս հայտնել եր ինձ արդեն. ուրեմն կարող ես յերևակայել, թե ի՛նչ հրճվանք, ի՛նչ ուրախություն տիրեց իմ հոգուն, յերբ կարմիր դրոշը նշմարեցի...

— Ներևակայում եմ:

ԵՒեվ այս բանը հորս հայտնել չկարողացա. լեղուս կար-

կամել էր, ուրախությունից։ Վերջը յերբ նաժիշտներից մինը ճչաց վերևից՝ «Իշխան, ավետաբեր և դալիոն», և հայրս կաթնես չհավատալով նրան՝ հարցական հայացքով նայեց դեպի ինձ, յես ուրախությունից կիսահառաչ՝ «Այո՛, այո՛, կարմիր դրոշով», ճչացի նույնպես և վազեցի ներքև։ Ցերեսս հրճվանքից վառվում էր։ Հիշո՞ւմ ես դու այդ որը, Սե՛դա։

— Ցավ կարելի՞ չի մոռանալ այն։ Բոլոր ամբոցը ցնծում էր ուրախությունից։ Իշխանը մի ընտիր ասւր, մի նժույգ և շատ վոսկիներ պարգևեց ավետաբեր զորականին։ Նա մեր այժմյան բերդակալը, Մուշեղն էր, այնպես չե՞։

— Այո՛, նա ինքն էր։ Ցես կամենում էյի, վոր ավելի մեծագին ընծաներով պարգևատրվի նրան, բայց հորս վոչինչ չառացի. խնդիրն ինձ էր վերաբերում, ամաչում էյի։

— Ցավ յերկու որվա մեջ, հարակից Սեդան, ամբողջ Գարդմանը տոնական կերպարանք առավ։ Աղտաև դնալու նշանակված հեծյալները դրկվեցան Գուգարք, Սյունիք, Արցախ և ուրիշ հեռավոր տեղեր՝ հայոց իշխաններին հարսանիքի հրավիրելու։ Թագավորը դիմամարգ ուշացավ վաղարշապատում։ Ցավ յերբ նա յեկավ, արդեն բոլոր իշխանները, սեպուհները, նախարարական տանուտերերը և բոլոր իշխանական ընտանիքները դռնելում էյին Գարդմանում, Ախխալցիայի իշխանը միայն մի որ առաջ հասավ. իսկ վրաց թագավորը դիմամարգ ուշացել էր Գանձակում, վորպեսզի մեր թագավորի հետ միասին մտնե Գարդման, չնայելով, վոր ինքը նրա յերկրորդն էր։ Բայց Արծրունյաց Գուրգեն իշխանը, չնայելով քեզանից մերժված լինելուն, այսուամենայնիվ, յուր բարյացակամությունը թագավորին ցույց տալու համար՝ վոչ միայն շքադիր խմբով յեկավ հարսանիքին, այլև Գանձակ դնալով՝ հնարներ գործ դրավ, վոր վրաց Արներսեհին թագավորից դռնե կես որ առաջ բերե Գարդման։ Ցավ հաջողեց էլ։ Արներսեհը յերեկոյան յեկավ, իսկ թագավորին հետևյալ առավոտը ընդունեցինք։

— Ընդունեցիք... Այո՛, դուք ընդունում էյիք թագավորին։ Գարդմանը յերիտասարդացել էր. լեռները ու բլուրները հրճվում էյին. ժողովուրդը շլանում էր հայոց իշխանապետության փառահեղ պերճությամբ, իսկ իշխաններին չլացնում էր Սահակ Սևադան յուր հարուստ և մեծավայելուչ հանդերձանքներով... Իսկ յե՞ս, Սեդա, յես ընդունում էյի, վո՛չ միայն հայոց թագավորին, հայոց իշխանապետության պաթծանք Աշոտին, այլև...

Ա՛խ... և այժմ չես կարողանում եմ այս բառերն արտասանել... Այո՛, Սեդա, չես ընդունում նրան, որը բերում եր յուր հետ իմ վարդածին հուշերի պատկը, իմ անսահման յերջանկությունը, իմ յերանության յերկինքը... Ընդունում նրան, որը կրում եր յուր մեջ իմ սիրատատար սիրտը, իմ սիրաշունչ հոգին... որի հայացքը հաճշտակում եր իմ երջությունը, որի ձայնը հնչում եր իմ ականջին քնչպես քերոբենների մեղեդին... և այդ դյուցազնը, այդ դերբնական արարածը, Սե՛դա, իմ փեսան, իմ ամուսինն եր... Ո՛հ, մինե՞ կարելի՞ չեր այդքան յերջանկության դիմանալ...

«Եվ այն բոլոր փառահեղ պատրաստությունները, իշխանների ցույց տված հարգանքը, զորքմանցոց ու հայ զորաց վոգևորությունը չատ փոքր բաներ եյին յերևում իմ աչքում: Ցես կամենում եյի, որ Աչոտ-Յերկաթի համար այդ ամենը կըրկնապատկվեր, յեռապատկվեր. չե՞ որ նա բոլոր ընտիր հայերից ընտրելագույնն եր, համայն հայ իշխաններից՝ բարձր ու դիրաղանցն եր... Ա՛խ, Սեդա. յերե դիտենայիր տղամարդիկ, թե ինչպե՞ս մենք հպարտանում ենք նրանցով, թե՛ ինչպե՞ս կնոջ սիրտը զառնում և աղամանդ՝ յերբ կապվում է նա ճշմարիտ արժանյաց տեր հերոսի հետ... Ո՛հ, այն ժամանակ նրանք յերբեք չեյին իշնիլ սեղանի այն բարձրությունից, որի վրա մեր բարեպաշտ սիրտը յերկրպագում և նրանց...:

— «Հեղճ կին...», չշնջաց ինքն իրան Սեդան:

— Հայրս պահանջող զնդով թագավորին դիմավորելուց առաջ՝ պատուիրել եր, որ յես, իբրև արքայի հարսնացու և Գարդմանա հզոր իշխանի աղջիկ, չելնեմ իմ դատիկոնից և չերևամ ժողովրդին, մինչև որ ինքն արքան դղյակը գալուց հետո չպատրաստվեր ինձ ընդունելու: Պատշաճից որենքը այս է պահանջում, ասում եր նա: Բայց յես... ո՛վ յերջանկության անդարձ վայրկյաններ...չկարողացա դիմանալ և պատշաճից որենքները չանսասանել: Բոլոր Գարդմանը իմ արքայի ու փեսայի ընդունելության փառքը պիտի տեսներ, ի՞նչպես կարող եյի յես զուրկ մնալ այդ հաճույքից: Եվ ահա փակել տվի յես իմ դըռնակների մուտքը, նաժիշտներին հրամայեցի վոչ վոքի չընդունել և յես նրանցից մինին վերցնելով, դղյակի դաղտուկ ներքնոցքով բարձրացա մեծ աշտարակի դլուխը: Այնտեղ բարձրացե՞լ ես դու, Սե՛դա:

— Վո՛չ. կինն ի՞նչպես կարող է բարձրանալ։ Ներղսպահ նետաձիգները հալիվ են սողում այդ անցքերից։

— Բայց մենք բարձրացանք՝ ինչպես այժյամ։ Գարդմանա շրջականները յերևում են այնտեղից՝ ասես թե ափի մեջ։ Դաշտը, պետակը, լեռները, բոլորը մեր առջևն էին։ Ժողովուրդը խռնված էր ամեն տեղ։

«Ցերբ առաջին անգամ դեպի կամուրջը նայեցի, հառաջապահ հեծյալների դունդը տեսա, վորոնք սպիտակ դրոշը ծածանելով թռչում էին հողմի պես։ Նրանց հետևում եր արքան, շրջապատված յուր դեղահասակ թիկնապահներով, վորոնց փայլուն զրահները շողշողում էին արևի առաջ և կարծես իրանց շուրջը կայծակներ թոթափում։ Թաղավորը նստած եր սպիտակ և վոսկեսայր նժույգի վրա, հագած վոսկեփայլ զրահներ և ծածկած նույնպիսի սաղավարտ, վորի վրա ծածանում եր՝ արծվաձև զարդմանակը հովանավորող՝ ճյունաթռուչը ցցունքը։

«Արքային հետևում եր հայրս՝ յուր զարդմանացի ասպետներով. ապա Սիսակյան իշխանները, վոստանիկների խումբը, Աղվանից սեպուհը, Գուգարաց բդեշխը, Արծրունյաց ու Մոկաց իշխանները, Աբցախու և Ռաշենի տանուտեռերը, և այլն և այլն։

«Այնուհետև գալիս էին պետական ու տանուտիրական զորքերը, սեպուհ, դրանիկ և վոստանիկ գնդերը, և վերջապես շրջակայքներից հավաքված ժողովրդի ստվարախումբ ամբոխը։

«Ցերբ առաջապահ հեծյալների խումբը մոտեցավ բերդին և փողերը արքայի գալուստն ավետեցին, Գարդմանը հեղնող իշխանների, զորքի և ժողովրդյան բազմությունն անհետացավ իմ աչքից։ Իմ աչքերս ու անհագ հայացքը հառեցի միայն իմ փեսայի և սիրարժան թագավորի վրա։ Թիկնապահների խումբը բերդի դռանը հասնելով՝ կանգ առավ յերկու կարդի վրա։ Թագավորն առաջ անցավ։ Նրա ահռելարանոց նժույգը՝ զգալով կարծես թե ի՛նչ դյուցազն է հրում յուր վրա, մոտենում և դարբասին ավելի սիզապանծ և վորոտաձայն խրխնջյունով։ Եզեքայրներս իրենց հետևորդներով ընդառաջեցին թագավորին՝ բերդի հանդիսակաց դռներում. իսկ մայրս ընդունեց նրան դղյակի մուտքի առաջ, շրջապատված Գարդմանի ավագանիներով և նրանց տիկիններով։

«Եթե համոզված չլինեյի, վոր այս շլացուցիչ փառքին հաղորդ սիրուի լինիմ յես, յեթե չդիտենայի, վոր ինձ է պատկանում այն անձը, վորին ամենքն աշխատում են մոտենալ, վորի հայաց-

քը այնպես ճղնում են հավիտահիլ, և չես մխենուչն ժամանակ տեսնելի լինճ այնքան նրանից հեռու, աչտարակի մեջ բանտարկյալ, ո՛, ղուցե, այդ բարձրությունից իսկ դլորելի լինճ ներքև... բայց յերբ մտածում եյի, թե նա իմն է, թե այդ բազմամբոխ ղոլքի ու ժողովրդյան հրամայողը իմ ապագա ամուսինն է, յերբ տեսնում եյի, վոր յերբեմն իմ ճեռքը խնդրող իշխաններն այժմ անհուն մեծարանքով ու ակնածությամբ դլուխ են խոնարհում նրա առաջ, և այդ բոլորը չես տեսնում եմ՝ ներքինի հրճվանքից սիրտս կամենում եր դուրս թռչիլ... և այդ միևնույն սիրտը, յերե դռնվեր այդ բոպեյին իմ ճեռքում, հավատացիր, իմ բարի Սեդա, չես կդլորելի նրան այդ դյուցազնի ոտաքերի առաջ...

Թ

ԱՆՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ ՀԱՑՏՆՈՒԹՅՈՒՆԸ

Թագուհին ընդհատեց խոսքը մի քանի վայրկյան, կամենալով, կարծես, յուր աչխուժը չափավորել և ապա նորին յեռանդով շարունակեց.

— Այո՛, Սե՛դա, դու իրավունք ունիս։ Արդարև, կարելի յե անցյալ գաղտնութիւնները հիշելով՝ մոռանալ մի փոքր ներկայի դառնութիւնները... Ցեղ ինչպե՛ս սիրելի յե ինձ այժմ անցյալը... Մտաբերում եմ այն յերջանիկ վայրկյանը, յերբ առաջին անգամ ներկայացա Թագավորին։ Նա նստած եր այդ ժամանակ դղյակի մեծ դահլիճում, շրջապատված յուր ավագանիներով և իշխաններով։ Բոլորն էլ ինձ նայում էին։ Հենց վոր հորս հետ դահլիճի դռներում յերևացի, Թագավորն խնդուն բարձրացավ աթոռից և դիմավորելով մեզ՝ վայելչաբար վողջունեց։ Անշուշտ յես չառաջունեցի, վորովհետև յերեսս սկսավ այրվել... Ի՛նչպես լավ հիշում եմ այդ վայրկյանը... Հայրս հանձնեց նրան իմ ձեռը ասելով։— «Ահա՛, արքա, իմ դուստրը և քո հարսնացուն»։

Թագավորն ուրախ և ժպտադեմ առավ իմ ձեռը, ջերմութեամբ համբուրեց և առաջնորդելով ինձ՝ տարավ մինչև յուր դահույքը, վորից քիչ հեռու պատրաստված եր ինձ համար ծիրանիով ծածկված աթոռ։

— «Ներկայացնում եմ ձեզ, իշխաններ, ձեր ապագա թագուհուն», հանդիսավոր յեղանակով ասաց Թագավորը, և ամենքը միաբերան դոչեցին՝ «կեցցե՛ Թագավորը, կեցցե՛ Թագուհին»...

«Հետո բոլոր իշխանները մոտեցան և վողջունեցին ինձ ավագութեան կարգով։ Այդտեղ եյին, Սեդա, ինձանից մերժված բոլոր իշխանները... Ո՛, ինչպես ամենում եյի, վոր այդ րոպեին լինեյի յես աշխարհի մեկ դեղեցկուհին, վոր ամենքը

հիանային ինձմով և ասելին, թե հայոց թագավորը ընտրել է, որովհետև, չուր անվան արժանի հարսնացու։

— Դու զեղեցիկ եղիր ինչպես ավետարերը քեզորեն...

— Ցնվ ուրախ եղի, վոր չեզի ամաչեցնում իմ վեհապին։

— Այո՛, նա հայտնել եր Մարզպետունի իշխանին, թե չերքանիկ և համարում իրան, վոր դու զեղեցկությամբ գերազանցում ես Արտաշ ամուսնուն։ Ալիսաղիայի մեծ իշխանը, ասել եր թագավորը, այլևս չի պարծենալ, թե չուր դուստրն և միայն հայոց արքունիքի զարդը։

— Ցերբ պատկի ժամանակ չեպիսկոպոսը առնելով իմ ձեռը ուզում արքային, չես բարձրացրի աչքերս և նայեցի նրան... Ո՛հ, ինչպե՛ս վհհաշուք չերևաց նա ինձ այդ րոպեին, և չես, վորքա՛ն նրանով բարձրացած... «Ահա՛ վերջապես մարմին առան իմ հուչերը, չես չերջանիկ եմ», մտածում եզի ինքս ինձ և ապա հանդուգն մոքեր հղանում.— «Ամա, այս Աշոտը, այս չերկաթի թագավորը, լմն և. վոչ վոք այլևս չի կարող խլել նրան ինձանից. մենք արդեն պատկվում ենք. մեր միության դաշնագիրը վավերանում և ստորագրվին ինքով... «Զոր ստորագ դուդյաց, մարդ մի՛ մեկնեսցե», ասում և չեպիսկոպոսը։

Չհայց այսորը, Սեդա, չես զրկված եմ նրանից, նա այլևս իմը չե. ինչպե՛ս դառն և հավատալ այդ ճշմարտությանը... Բայց չե՞ վոր «ստորագ մեզ զուգեց», ո՞վ չեղավ բաժանողը. ի՞նչպես պատահեց այդ. ասա՛, Սե՛դա, ասա՛, չե՞ վոր դու եզ այդ գիտես, չե՞ վոր խոստացար պատմել...

— Ցես շատ բաներ պատմեցի, սիրելի թագուհի։

— Վո՛չ. դու ինձ չպատմեցիր, թե ի՞նչպես սկսվեցավ մեր դժբախտությունը. չե՞ վոր նախկին կայծերի հրդեհը մի հայտնի պատճառից բորբոքվեցավ։

— Այո՛. պատճառը դարձյալ մեր թշնամին չեղավ...

— Ո՞վ։

— Ցուսուֆը։

— Ի՞նչպես։

— Հիշո՞ւմ ես, վոր ձեր հարսանյաց որերը նա մեծապին ընծաներ ուղարկեց թագավորին։

— Այո՛, արքայական թագ, ականակուռ սուր, Արաբիայի վոսկեհատ նժույգներ և ուրիչ շատ թանկագին զարդեր։

— Այլև մի մեծ դունդ հազարացի հեծելազոր, իբրև արքունական բանակի սատար։

— Այո՛, հիշում եմ։

— Ի՞նչ եր այդ բարեկամության նպատակը։

— Ասում էին, վոր Ռուսուխը Պարսկաստանին ինքնուրույնություն տիրելու համար կամենում և ամբարտավանից ազատամարվել։ Ցնծ վորովհետև այդ ժամանակ հայոց թագավորը հաղորդության մեջ եր, հունաց կայսրը դաշնակից եր նրան, հայոց իշխանները միաբան էին հետը, հաշտվել եր նա, մինչև անգամ, Դադիկ Արծրունու հետ, իսկ նրա միակ թշնամին, Աշոտ բռնավորը չարաչար հաղթվելով՝ փախել եր Դվին, ահա՛ այդ պատճառով կամենում եր նա թագավորի բարեկամությունը վաստակել։ Ցնծ մեր հարսանիքը հարմար առիթ յեղավ նրա համար։ Ռուր այդ հարուստ ընծաներով, արդարև, Ռուսուխը թագավորի սիրտը շահեց։

— Բայց տես, թե այդ ընծայաբերության մեջ ուրիշ ի՛նչ դաղտնիք եր թաղնված։ Հպատրաց վոստիկանը, հարկավ, հայոց թագավորի հաջողության ցանկացող չեր, սակայն խնդրում եր նրա բարեկամությունը, վորովհետև այդ միջոցին հաջողության մեջ եր Աշոտ թագավորը։

«Բայց այն հնծելազորը, վոր Ռուսուխը ուղարկել եր թագավորին, իրր նրա բանակին ոգնություն, պատճառ դարձավ մեծ դժբախտության։ Թագավորը չեր կարողանում համբերել Աշոտ բռնավորի ապստամբական չարժումներին։ Ուստի յերբ հարսանյաց տոները վերջացան, նա վորոշեց դնալ Դվին և հալածել նրան մայրաքաղաքից։

«Ցնթե հիշում ես, այդ մտքին հակառակ չեր Սահակ իշխանը։ Ուստի նրանք մխասին բանակ կազմեցին. արքայական զորքին միացրին զարմանացի դնդերը և Ռուսուխի հնծելազորը և այդ միացած ուժերով դիմեցին Դվին։

«Կաթուղիկոսը, սակայն, ընդդեմ եր այդ կռվին. ուստի շատացե պատերազմն արդելելու։ Ցնչ վոր յերկու կողմից էլ հայ զորքերը պիտի կարդվելին։ Վեհի բոլոր ջանքը, հաշտեցնելու հակառակորդներին, անցավ ապարդյուն։ Թագավորը մի կողմից յուր ուժի վրա վստահացած և մյուս կողմից, ասում են, քո յեղբորից՝ Գրիգորը իշխանից՝ գրգռվելով, սկսում և պատերազմը։

«Բայց վորովհետև Ռուսուխը դեռ դաղտնի բարեկամ եր Աշոտ բռնավորին, ուստի նրա զորքերը, համաձայն նրանց դրսավարի թագուն հրահանգին, դաշտանեցին թագավորին։ Կռվի սկզբնատաք ժամանակը նրանք թողեցին ճակատը և թիկունք

վարձնելով՝ վախան։ Այդ հանկարծական դիմադարձությունը շփոթել էր Թաղավորական զորքերին, վորով նրանք բռնավորից շարաչար հաղթվեցան։

«Ահա՛ Ցուսուխի խարդախության շնորհիվ ստեղծված այդ անհաշտությունը յեղավ պատճառ, վոր Թաղավորը նոր պատերազմ սկսելու պատրաստություններ անում։ Նա ոչնչական զորք բերել ավալ ամենուրեք. ապա մեծ բանակ կազմեց ազգական զորքերից։ Մոտիկը եր ահավոր կռվի սկսել հակառակորդի հետ։ Բարեբախտաբար, այս անգամ կաթուղիկոսը կարողացավ յուր աղերսախոսն Թախանճանքներով համոզել նրան և հաշտեցնել բռնավոր հակառակորդի հետ...

— Սե՛դա, բոլոր այդ պատմածներդ հայտնի յեն ինձ. բայց դ ուրիշ բան չունեին իմ դժբախտության հետ։

— Ընդհակառակը, Թաղուհի, շատ մոտիկ կապ ունին։

— Ինչպե՞ս։

— Հապա՛։ Թաղավորի այս անհաշտ ընդհարումը յեղավ պատճառ, վոր Ուտիքում վերակացու կարգված Մովսես իշխանը տղատամրվեցավ Թաղավորից։

— Ցնվ հետո՞։

— Թաղավորը և Սահակ իշխանը դնացին միասին նրան նվաճելու։

— Ցնվ նախճեցին։ Թաղավորը կռվի մեջ սրտին սրով կխոցե եր նրա զլուխը և վերջը աչքերը հանել։

— Այո՛, բայց Մովսես ապստամբի վոխարեն նա Ուտիքում վերակացու կարգեց Ցլիկ-Ամրամին։

— Ցլիկ-Ամրամի՞ն... Այո՛, հիշում եմ. ուրեմն այդտեղից ակռվեցավ հա՞...

Թաղուհին մի անհանդիստ շարժումով մի կողմ հրեց բարձերը և մահճի մեջ ուղիղ նստելով, հառեց աչքերը դայակի վրա։

Սեդան վոչինչ չեր խոսում. ըստ յերևույթին նա աշխատում եր վախուստ տալ նոր մերկացումներից, վորովհետև վախենում եր՝ չլինի թե Թաղուհին նորից վրդովվի։

— Ինչո՞ւ լռեցիր, Սե՛դա, հարցրեց Թաղուհին։

— Ձգիտեմ, թե ուրիշ ի՞նչ խոսեմ, պատասխանեց դայակը ախուր ժպտալով։

— Այացիր, վոր Թաղավորը Ուտիքում վերակացու կարգեց Ցլիկ-Ամրամին, այնպես չի՞։

— Այո՛։

— Ինչո՞ւ անպատճառ նրան և վո՛չ մի ուրիշին։ Ի՞նչ գիտես դու այդ մասին։

— Ասում էին, որ Ամրամի մասին բոլորն էլ դուվեստով ճին խոսել Թագավորի հետ։

— Այո՛, նա հուժկու և զորավոր մարդ է, և հենց յուր զորության համար էլ նրան ճլիկ են անվանում։ Բայց մի՞թե մի այն այդ էր պատճառը։

Սեդան լուռ էր։

— Պատմի՛ր ինչ որ գիտես, առանց մի կետ թաղցնելու, հրամայեց Թագուհին այնպիսի խիստ յեղանակով, որ Սեդան այլևս հապաղել չհամարձակվեցավ և պատմեց նրան հետևյալը։

— «Մովսեսի ապստամբությունը Ուտիքում ճնշելուց հետո յեղբայրդ՝ Գրիգոր իշխանը՝ վերադարձավ Գարդման միայնակ, առանց մեծ իշխանի։ Մորդ հարցին՝ Քե ո՞ւր մնաց Սևադա իշխանը, նա պատասխանեց, Քե Թագավորի հետ միասին պիտի գնա Ներքազավորս Թագուհուն տեսնելու։ Բայց վո՛րքան մեծ յուզավ մեր զարմանքը, յերբ մեծ իշխանը յերկու որից հետո վերադարձավ նույնպես Գարդման, վերին աստիճանի տխուր և հուսահատ։

«Իշխանուհին շատ անհանգստացավ, կարծելով Քե վորևե մի տխուր լուր և առել նա քեզանից։ Բայց իրան, իշխանին սիրտ չտվավ բան հարցնել, վորովհետև, ինչպես գիտես, հայրդ սովորություն չուներ յուր տխրության մասին բացատրություններ տալ մարդկանց և շատ զայրանում էր, յերբ մեկը համարձակվում էր հարցեր անել նրան դրա համար։

«Ներկու որ շարունակ իշխանը դուրս չեկավ։ Ներքորդ որը դաղտնի խորհուրդ ուներ մորդ և յեղբորդ հետ։ Այնուհետև, համարյա, բոլոր տունը տխրեց։ Այդ հանդամանքը անհանգստացնելու չափ ինձ հետաքրքրեց։ Սակայն իշխանուհին վոր ինձանից ծածուկ վոչինչ չուներ, հայտնեց շուտով իրանց տխրության պատճառը։— «Իմ Սահականույշը, Սե՛դա, դժբախտացավ արդեն...», ասաց նա ինձ մի որ։

— Ինչո՞ւ, հարցրի յես զարմանալով։

— «Ամուսնույս դործ դրած նախազգուշություններն ապարդյուն անցան, ասաց նա տխրությամբ։ Իշխանը կարծել եր, թե Աևորդյաց որիորդին ճլիկ-Ամրամի հետ ամուսնացնելով, կկնքի արքայի սրտից նրա սիրո հիշատակը. բայց սխալվել և չարաչար

նախկին սիրո կայծերն սկսել են արդեն յերևան գալ և, դուցե, հրդեհ առաջացնեն...

— Ի՞նչպես, վանենալով հարցրի յես:

— Մովսես ապատամբին նվաճելուց հետո Թագավորն իջնել և Սևորդյաց ձորը զորքին հանդստություն տալու: Այդտեղ դիմավորել և նրան Ցլիկ-Ամրամը՝ Սևորդյաց իշխաններով՝ և հրավիրել Թագավորին յուր ամրոցը Տավուշ: Սևաղան աշխատել եր, վոր նա այդ հրավերը չընդունե, վորովհետև դուշակել և գալիք դժբախտությունը, բայց յուր ջանքն ապարդյուն և անցել: Աստված, թե Թագավորը, վոր մինչև այն չտապում եր Թագուհուն տեսած յուր խոստումը կատարելու, այն է՝ նշանակած ժամանակին Ցևրագլավորս վերադառնալու, սիրով ընդունեց Ամրամի հրավերը և գնաց Տավուշ:

— Հետո՞, հարցրի յես:

— Իշխանն ընկերացել և նրան, չարունակեց մայրդ, և ահա՛ թե ի՛նչ և պատմում.— Այնտեղ եր, ասում և, արքայի նախկին սիրելին, Ցլիկ-Ամրամի կինը: Սա ինքը դիմավորեց Թագավորին ամրոցի դռների մոտ: Այնպես դեղեցկացել և հրապուրիչ եր դարձել, վոր անկարելի յեր տեսնել նրան և չհիանալ: Ցերբ առաջին անգամ հանդիպեց Թագավորին, յես տեսա, թե ինչպե՛ս նա այլայլվեցավ և չատապտնեց: Նայողները կկարծեյին, թե ամաչելուց, կամ Թագավորի ներկայությունից ճնշվեցավ. բայց ինձ հայտնի յեր պատճառը: Իմ վորձված աչքերից, ասաց հայրդ, չթաղնվեցավ նույնիսկ Թագավորի հուզմունքը: Ամրամի կինն այդ վայրկենին այնքան հրապուրիչ եր, վոր յես չեյի զարմանալ, յեթե Թագավորը դրկախտանվեր նրա հետ: Ցես պարզ տեսա, վոր նախկին սիրո կայծերը ցոլացին յերկուսի աչքերումն էլ և նրանց խորհրդավոր հայացքները հասարակ աչքերի համար աննշմարելի մոքեր հաղորդեցին միմյանց...: Բայց Թագավորը կարողացավ զսպել իրան. նա այնուհետև այլևս իշխանուհուն չեր նայում և յերևի Ցլիկ-Ամրամը նեղանում եր, վոր յուր տիկինը Թագավորի ուշադրությունը չեր դրավում:

«Սակայն չատով իմ կասկածները մարմին առան: Թագավորը, վոր մտադիր եր Ուտիքի վերակացությունը հանձնել իմ վորդուն՝ Գրիգորին, հանկարծ միտք հղացավ այդ իշխանությունը տալ Ցլիկ-Ամրամին: Ցես չհակառակեցի նրա այդ դիտավորությանը, վորովհետև պարզ տեսա, վոր դեղեցիկ իշխանուհու մի լուռ հայացքն ավելի շատ բան պիտի ասեր և ավելի չուտ համո-

ղեր նրան, քան իմ ճարտարախոսությունը: Հետևյալ առավոտը Թագավորն ստորագրեց «Ուտիքի իշխանությունը» Ամրամին հանձնող հրամանը: Իշխանուհին անձամբ յեկավ արքային յուր շնորհակալությունը հայտնելու՝ ղրահավորված յուր բոլոր զեղով և կանացի դրավչությամբ: Ինչ վերաբերում է Ցլիկ-Ամրամին՝ ուրախությունից քիչ եր մնում Թագավորի ձեռքերը համբուրեր:

«Նույն ավուր յերեկոյան յես հիշեցրի Թագավորին Թագուհուն արած յուր խոստումը՝ Եերազդավորս դառնալու մասին և զարմացա, վոր նա հայտնեց, թե ցանկություն ունի յերկու որ ևս Տավուշ մնալու, վորպեսզի կարգադրություններ անե Ուտիքի մասին և կարևոր հրահանգներ տա Ցլիկ-Ամրամին:

«Եես այլևս չեյի կարող մնալ այլտեղ, ասում է իշխանը, և հանդիսատես լինել, թե նախկին սիրահարներն ինչպես են նորոգում իրանց բարեկամությունը. ուստի վեր կացա և յեկա այստեղ, վորովհետև Եերազդավորս դնալու այլևս սիրտ չեր մընում. ինչ յերեսով յերևայի յես իմ աղջկան, Սահանուշչին և ինչպես արդարացնեյի Թագավորի Տավուշ բերդում ուշանալը»:

— Եերկու որից հետո մեծ իշխանը կանչեց ինձ և ասաց.— «Սե՛ղա, իմ դուստրը և քո Սահանուշչը միայնակ են. այստուհետև նա ավելի կարոտ է քո խնամքին. պատրաստվի՛ր վաղը ևեթ ճանապարհվել Շիրակ»: Եես ուրախությամբ համաձայնվեցա, վորովհետև վոչ մի պաշտոն չեր կարող ինձ համար ավելի սիրելի լինել, քան իմ Թագուհուն ծառայելը:

«Իշխանն արդեն իմացել եր, վոր մայրդ պատմել է ինձ ամեն բան: Ուստի ճանապարհվելուս ժամին կանչեց ինձ - իշխանուհու մոտ և ասաց.— «Սե՛ղա, դու արդեն գիտես, թե ի՛նչ վտանգ է սպասում իմ դստեր ընտանեկան յերջանկությանը. նա դեռ յերիտասարդ է և կարող է յուր վարմունքով չտալեցնել վերահաս վտանգը: Գնա՛ և հսկիր նրա ամեն մի քայլին: Դու փորձված և կյանքը ճանաչող կին ես: Աչխատի՛ր, վոր քո Թագուհին զինված լինի միշտ կնոջ ամենանուրբ հրապույրներով, վոր նրա ամեն մի քայլը, խոսքը, հայացքը սեր զարթեցնեն յուր ամուսնու մեջ և մոռացնել տա նրան Ամրամի կնոջ հրապույրները, նրա դյութող ու կախարդող աչքերը...Ճշմարիտ է, արհեստական միջոցներով դժվար է սեր զարթեցնել, բայց նույն այդ միջոցներով կարելի յե հանդցնել հին սիրո կայծերը կամ արդելել նրա բուցավառվիլը նորից: Գոհակը չի ապահովում ամուսնու սերը. և ամուսնացյալները չպետք է յերբեք բարձի թողի անեն միմյանց

սիրելի լինելու և չարունակ մխիթարից հրապուրելու միջոցները։ Սովորական կյանքի ընթացքում հարկավոր և չարունակել նույն սրբությունը, վորով վոր մարդ ձեռք և բերել յուր սիրած անձին։ և պետք և չարունակել այդ ավելի յեռանդով, վորովհետև բնությունը մարդուն առեղծել և այնպես, վոր ցանկալի նպատակին հասնելուց հետո, դադարում և այլևս նույն նպատակով դրավելուց և վոգևորելուց։ Ճիշտ ահա՛ հենց այս ժամանակին և, վոր փորձությունը վրա յի հասնում։ Ինչ թագուհին այս բաները չդիտե և յերանի թե՝ յերբեք էլ չիմանա... Նա, արդարև, սիրում և անկեղծությամբ. և հենց այդ պատճառով էլ մեծ հավատա ունի թագավորի վրա։ Բայց ով վոր անկեղծությամբ և սիրում, նա էլ հեշտությամբ այնպիսի սխալ քայլեր և անում, վորոնք հեռացնում են իրանից յուր սիրած անձին, մանավանդ յեթե վերջինի մեջ բուռն չի փոխադարձ սերը, կամ պատրաստ չա մի հակառակորդ, վոր կարող և հրապուրել նրան։ Շատ անգամ մի անզգույշ խոսք, մի անվայել ծիծաղ, մի կոպիտ շարժում, նույնիսկ հագուստի մի տգեղություն, բավական և լինում, վոր քեզ սիրող սրտի մեջ կաթե դղվանքի թույնը. առաջին կաթիլին հետևում և յերկրորդը, յերրորդը, և այնուհետև այլևս հեռացող սիրան անհնար և լինում դրավել։

«Այս բոլորը դիտես դու, Սեդա, դնա և պատմպարծ՛ր քո Սահանույշը վերահաս վտանգներից։ Թագավորի սիրտը սառնած և արդեն. այդ յես հստակ տեսա. աշխատիր, վոր իմ դուստրը վերջին հարվածը չտա... Իսկ յես իմ կողմից հնարներ կմտածեմ ապառնացող վտանգի առաջն առնելու...»։

— Այս խրատներով ճանապարհ դրավ ինձ մեծ իշխանը։ Այնուհետև, ինչպես դիտես, յես յեկա Շիրակ։ Թագավորն արդեն քեզ մոտ Բերդաղավորաումն եր։ Բայց Նա դուրդուրում եր քեզ ջերմ սիրով։ Դու դոհ եյիր թախտից։ Իշխանի հայտնած կասկածները չեյին արդարանում. դրնե յես վոչ մի փոփոխություն չեյի նշմարում Թագավորի մեջ, վորովհետև նրան միշտ քաղցր և սիրալիր եյի տեսնում քեզ հետ։ Բայց յերբ Նա նույն ամրանը դրոսանքներ պատրաստեց քեզ համար Սյունյաց և Գուղարաց լեռներում և ընկերուհիներ կարգեց քեզ Սյունյաց իշխանուհիներին, իսկ ինքը դնաց Սևորդյաց կողմերը, իբր թե Ուաիքի մեջ կարևոր կարգադրություններ անելու, այն ժամանակ արդեն կասկածը պաշարեց ինձ։ Իհարկե յես քեզ վոչինչ չհայտնեցի. դու այնպես ուրախ և յերջանիկ եյիր... վոր վոչ մի ա-

պատաժ սիրտ չեր հանդգնիլ կասկածի անմաքուր շնչով քո ա-նարատ հոգին թունավորելու, քո հաստատուն հավատը տատանե-լու... Բայց թե թագավորի սիրտը դրավված եր Ամրամի կնոջ-մով, այդ բանին յես հավատում եյի արդեն...

«Այնուհետև թագավորի այցելությունները Ուտիքին կրկնը-վում եյին հաճախ. դու վոչինչ չեյիր կասկածում, բայց մենք, այսինքն ծնողներդ՝ Գարդմանում, իսկ յես՝ արքունիքում, դրե-թե հալ ու մաշ եյինք լինում: Վերջերում թագավորի այդ այ-ցելությունները այնքան հաճախ կրկնվեցան, վոր արքունիքի կա-նայք և նույնիսկ արքայի թիկնապահներն ասում եյին, թե «Թա-գավորը սիրահարվել է Սևորդյայ աշխարհի վրա...»:

— Ցավ իհարկե դրանք. բոլորը դիտեյին, թե ինչո՛ւ թագա-վորը հաճախում է Ուտիք, այնպես չե՞, հարցր՛ց թագուհին, դրեթե հուզմունքից դողալով:

— Վո՛չ... կարծեմ միայն յերկու հոգի յուր թիկնապահ-ներից...

— Ա՛խ, Սեդա, ել ինչո՞ւ համար ես ծածկում, յերկու հոգին ել բավական են յերկու հարյուրին խմացնելու համար: Իսկ ար-քունիքի կանանցից վո՞րին եր հայտնի իմ դժբախտությունը:

— Այն ժամանակ կարծեմ վոչ վոքին: Բայց յերբ Աբաս ար-քայեղբայրը յուր աներոջ, ասիսպազց Գուրդեն իշխանի հետ մի-նալով՝ դավադիր յեղավ արքային և կամենում եր բռնել նրան կամ սպանել, թագավորը խուլս տալով նրանցից: Դավադիրները պարեցին նրան նախ Շիրակում և ապա զորքերով դիմեցին Ցե-բաղավորս: Անշուշտ հիշում ես, վոր մինչև նրանց գալը՝ թա-գավորը մեզ բոլորիս վերցրավ և շտապով հասցրեց Ուտի, Սե-վորդյայ ձորը: Այդտեղ մենք ամրացանք Տավուշ բերդում, Ճլիկ-Ամրամի մոտ: Ահա՛ այդ ժամանակ մեր տիկիններից յերկուսը նկատել եյին թագավորի և իշխանուհի Ասպրամի մտերմական հարաբերությունը և բամբասում եյին, վոր նա այդ տաղնապի ժամանակ մեզ յուր սիրուհու տանն է պատսպարել և վոչ թե Սյունյաց բերդերից մինում:

— Ո՞վքեր եյին այդ տիկինները, Սեդա, ասա՛, յես կամե-նում եմ անպատճառ իմանալ, հարցրեց թագուհին:

— Մինը մեր Շահանդուխտի մայրը, մյուսը՝ Գոհար իշխա-նուհին:

— Ցավ նրանք քեզ հե՞տ խոսացին այդ մասին:

— Այո՛, բայց դաղանիք: Մեզանից զատ վոչ վոք չդիտեր այդ

բանը։ Սակայն յես իմ կողմից աշխատեցի ցրել նրանց կասկածները։

— Իզուր. դու նրանց աչքերը փակել չեյիր կարող... Բայց դու, Սե՛դա, ինչո՞ւ նույնիսկ այդ ժամին չհայտնեցիր ինձ այդ դաշտնիքը։ Ցնծե յես դիտենայի, թե ինձանից զատ ուրիշներն ել են նկատել այդ բանը, այն ժամանակ յես դաշույն կցցեյի նախ այդ անղդամի և ապա իմ սիրտը. այն ժամանակ Աշոտ-Ցերկաթի իշխանությունը չեր վտանգվիլ, Սահակ Սևադան և յուր վորդին չեյին կուրանալ...։

— Ինչպես, Քա՛ղաքի, մի՞թե դու ել այդ բանը Տավուշ բերդում իմացար։

— Այո՛, Սեդա. նույնիսկ այն անղդամի ապարանքում, մեր այնտեղ հասնելուց մի քանի որ հետո։

— Ինչպե՞ս։

— Այն որը, վոր մենք հյուր եյինք Ամրամի մոտ, և այդ իշխանը դինով վոգևորված մոռացել եր յուր կոչումը և հաճոյական զրույցներ եր անում ինձ հետ յեղող իշխանուհիների հետ, հիշո՞ւմ ես, հետացա յես նրա դահլիճից։ Մի ինչ վոր տխրություն պաշարել եր հանկարծ իմ սիրտը, չդիտեյի ինչով փարատել նրան. իշխանուհիներից վոչ մեկին չեյի կամենում ընկերացնել ինձ։ Ուստի միայնակ յելա և սկսա Ամրամի ապարանքը շրջել։ Հուշտ ունեյի պատահել մի տեղ Թաղավորին, վորովհետև նա առանձնացել եր՝ վոստանից հասած նամակները կարդալու համար։

«Մի նրբանցքից անցնելու ժամանակ, հանկարծ իմ ականջին հասավ Թաղավորի ձայնը. յես ուրախությամբ դիմեյի դեպի հանդիպակաց դուռը, վոր Ասլրամ սուկնոջ դատիկոնն եր հանում։ Այդտեղ լսեցի նրա ձայնը։ Ասլրամին յուր առանձնության հոգսերով զբաղված եյի կարծում, բայց զարմացա, վոր նա այստեղ խոսակցում եր Թաղավորի հետ։ Մի տխուր նախազգացում պաշարեց իմ սիրտը. չունեյա կարծես բռնվում եր. առաջ անցա հուսո և յերկյուղի մեջ. բացի այն դուռը, վորտեղից զրույցի ձայնն եր դալիս...և ի՞նչ տեսա, Սե՛դա... Ո՛, ինչպե՛ս այդ ժամին ընչաստատ չեղա յես, ինչպե՛ս չմեռա... Ասլրամ իշխանուհին, Սեդա... Թաղավորի գրկում...

— Աստվա՛ծ իմ...

— Այո՛, իմ Աշոտը, իմ անսահման սիրո և յերջանկության Թաղավորը դրկախառն Ցլիկ-Ամրամի կնոջ հետ... Ա՛խ, Սեդա,

դո՞ւմ ես արդյոք, թե ի՛նչ հարված եր սա ինձ համար... Վո՞ր չանթը, վո՞ր կայծակը կարող եր մարդկային սիրտն ավելի անողորմ կերպով հարվածել...

— Ցավ հետո ի՞նչ արիր:

— Վո՛չինչ: Նրանք յերկուսն էլ մեռելի դուխն առան. խակ յես համր ու անխոս դուրս յեկա այդտեղից և ապաստանեցի մոտիկ աենյակներից մինին:

— Այդ յերևի այն ժամանակին եր, վոր դու հիվանդացար:

— Այո՛. հիվանդացա հենց այդ չարագուշակ դիպքի պատճառած ցավից... յերկու ամիս չարունակ տանջվեցա իմ այդ ծանր վշտի դաշտնի վերքերից...:

— Զարմանալի յե. և մեղանից վոչ վոքին վոչինչ չհայտնեցիր:

— Չհայտնեցի, վորովհետև չկամեցա հայոց խաղավորի ընտանիքը կործանել. չկամեցա Սահակ Սևադայի դստեր ձեռքով՝ հայոց թագին ու գահին անարգանք դրոշմել և... ա՛խ, ինչո՞ւ թագնեմ, Սե՛դա, չհայտնեցի, վորպեսզի իմ հակառակորդուհիները չուրախանան, վորպեսզի հաչաղկոտ իշխանուհիները ցնծության առն չկատարեն և իմ նախկին փեսացուները իմ հպարտությունը չծաղրեն...

— Իմ խե՛ղճ սիրուհի... չչնչաց Սեդան ինքն իրան:

— Ցավ սակայն իմ հպարտությունն ինձ չարաչար պատժեց...:

— Ասում ես ողորմած ե, սիրուհի. դու, վոր այդպես հերոսաբար տարել ես այդ ցավերը, անկարելի յե, վոր նախկին յերջանկությունը նորեն չճաշակես:

— Խե՛ղճ Սեդա, ինչքա՜ն բարի յես դու... Բայց մի՞թե յուած կաս, վոր մեր որերում մեռելները հարություն առնեն... Վե՛ր կաց, մայր Սեդա, վե՛ր կաց և գնա՛ հանգստացիր, քեղ շատ հոգնեցրի. պիտի ներես ինձ...

Սեդան, վոր վաղուց սպասում եր այդ հրամանին, մոտեցավ Թագուհուն, հանեց նրա մնացորդ չորերը, ուղղեց մահճի անհարթությունները և գթարի դիշերն մաղթելով նրան՝ քաշվեցավ քնարանի մոտ դանվող խուցը:

Թագուհին նույնպես պատրաստվեց քնելու: Բայց տխուր մտածմունքները յերկար տանջեցին նրան: Լույսը բացվելու մոտ եր, վոր նրա աչքերը ծանրացան. մինչդեռ Սեդան վաղուց վայելում եր խաղաղության հրեշտակի բարիքը:

ԾՈՒՑՐ ՎՐԻԺԵՑՈՒՆ

Արևը մայր մտնելու վրա էր։ Ցերկու հնձյալները արշավասույր անցնում էին Գանձակու դաշտից։ Նրանցից մինը տարեքսավոր և աղնվական դեմքով աղամարդ էր, ծածկած սպնձե թևթև սաղավարտ և զինված արծաթապատ սրով ու փոքրիկ, փայլուն վահանակով. մյուսը՝ ղրահագնեստ, պողպատե գլխանոցով, ծանր առագաստով, վաղահասակ աղջկին և յերկար նիզակը ձեռին՝ հաղթանդամ մի յերիտասարդ։ Տարիքավոր աղամարդը, վոր ըստ յերևույթին իշխան էր, ընթանում էր առաջից. իսկ յերիտասարդը, վոր նրա թիկնապահն էր, հետևում էր նրան։ Ցերկուսի ձիաներն էլ ապտակ քրտնած էին և փրփուրով ծածկված։ Ցերևում էր, վոր նրանք յերկար ճանապարհ էին կտրել։

Ցերբ հնձյալներն ընդարձակ դաշտն անցնելով Գարդմանա ձորը մտան, իշխանը թիկնապահին դառնալով ասաց.

— Ցե՛ղնիկ, արևն արդեն մայր մտավ, պետք է չտապել հասնել մեր տուն. մութը չկոխած. յես չեմ կամենում, վոր բերդապահներն աղմուկ հանեն դռները բանալու պատճառով։

— Ինչի՞ց ես քաշվում, տեր, հարցրեց թիկնապահը։

— Չեմ կամենում, վոր մեր այստեղ գալը Սահակ իշխանն իմանա. մտադիր եմ նենգավանալ նրան իբրև մի անծանոթ։

— Բայց մի՞թե նրա դղյակում վոչ վոք չի ճանաչում քեզ։

— Կարծեմ, վոչ վոք։ Ութ տարուց ավելի յե ինչ յես Գարդմանն չեմ մտել։ Նույնիսկ թագավորի հարսանիքին չկարողացա ներկա լինել։ Ո՞վ կարող է ուրեմն ինձ հիշել։ Իշխանի տան հին ծառայողներից մեկը Սեղան է, վոր մեզ մոտ, Գառնիումն է։ Ինձ կճանաչեր իշխանուհին, բայց նա էլ կենդանի չե։ Իշխանի Դավիթ վորդին Ամրամի բանակումն է. մնում է ինքը իշխանը և յուր

Գրիգոր վորդին։ Իսկ Նրանք յերկուսն էլ կույր են. հետևապես չեն կարող ճանաչել ինձ, յեթե յես ո՛վ լինելս ծանուցից։

— Եվթե այդպես է, ուրեմն յես չպետք է բերդը բարձրանամ, այլ պետք է դիմերեմ ավանում։

— Ինչո՞ւ, հարցրեց իշխանը։

— Վորովհետև ինձ ճանաչում են վոչ միայն Սևադա իշխանի ծառաները, այլև բերդապահ զինվորները։

— Ի՞նչ վնաս։

— Նրանք գիտեն, վոր յես ծառայում եմ իշխան Մարզպետունուն, ուրեմն և իմ պատճառով կճանաչեն նաև քեզ։

— Եվթե այդպես է, մնա՛ ավանում։

— Ծառա յեմ հրամանիդ։

— Այդ լավ է. դուցե քեզ հաջողվի նաև տեղեկություններ հավաքել Սևադա իշխանի մասին, թե ի՞նչ չափով նա մասնակից է այս ապստամբության դործին։

— Անշուշտ. Եզնիկը չի հանդստանալ, մինչև վոր ամեն բան տեղն ու տեղը չիմանա։ Այստեղի քահանան շատախոսի մեկն է, յես նրա մոտ կիմնեմ։

— Բայց քի՛չ խոսիր և շա՛տ լսիր։

— Կարող եմ բոլորովին չխոսել, սակայն առատ աշխատություր կտամ։

— Այդ էլ լավ է. պատրաստ արծաթ ունի՞ս։

— Գեղջուկ քահանային պղնձե դրամներով էլ կդոհացնեմ։

Հեծյալները խոսակցելով հասան Գարդմանա վտակին։

— Դե՛հ, էլ մի՛ ուշանար. անցի՛ր դետակը, հրամայեց իշխանը։

Թիկնապահը վողջունեց սիրոջը և մտրակելով ձին՝ անցավ վտակը և ուղղվեցավ դեպի ձախ, Գարդման ավանը դնալու համար. իսկ իշխանը բռնեց ամրոցի ճանապարհը։

Եերբ հասավ բերդատարի ստորոտին, յերևաց Գարդմանը յուր սպիտակ պարիսպներով և հզոր աշտարակներով, վորոնք ամբառնում էին բերդի արևմտյան կողմից և այ ու ձախ ձգվելով՝ միանում հյուսիսային մասի անմատչելի լեռնալանջին և հարավային ու արևելյան կողմերի՝ վիմահերձ ժայռերի բնական պատնեշներին։

Լեռան դագաթին թառած այդ անառիկ ամրոցը, վոր մութը կոխելու վրա, մանավանդ, ահարկու տպավորություն էր անում ամեն մի անցորդի վրա, մոտեցող իշխանի սիրտը սիրությամբ

համակից: Նա հիշեց ութ տարի առաջ յուր և արքայորդի Աշոտի մուտքն այս ամրոցը: Այդ ժամանակ, արդարև, նուիրական ուրախ չէր յուր սիրտը. հայոց թագավորը նահատակված, իշխաններն անմխիթար, արքայորդին անողնական, ինքը վիրաւոր... հարկաւ, ուրախ լինել չէր կարող: Բայց Գարդմանն այդ ժամանակ հույս ու հոգի չէր ներշնչում մտերցողին. Սահակ Սևադան հսկում էր այդտեղ ինչպես մի հզոր առյուծ. նրա համբաւը ահաբեկում էր թշնամիներին և խրախուսում լքվածների սիրտը: Իսկ ա՛յժմ... Այժմ կարծես, թե ամրոցը սուզ էր մտել և նրա արտաքին պատկերը վոչ թե զորութիւն, այլ լքումն ու հուսահատութիւն էր արտահայտում:

Որը տարաժամել էր: Զնայելով վոր իշխանի նժույգը հոգնած և ճանապարհը զառիվայր էր, այսուամենայնիվ նա չտապեցնում էր խելք կենդանուն, վորպեսզի ամրոց հասնե մի քանի վայրկեան առաջ:

Զնայելով իշխանի այդ ջանքերին, բայց դեռ ամրոցի աստրոտին չհասած, նա լսեց, վոր մինչդեռ ից վողը փչեցին: Այդ արդեն ամրոցի դռները փակելու նշանն էր: Ուրեմն եվ շտապելու հարկ չէր մնում:— «Անիծյալնե՛ր, ի՞նչ դռնփակի ժամանակ է...», քրթմնջաց ինքն իրան իշխանը, և ձիու սանձը ձգեց: Կենդանին կարծես զգաց, վոր տիրոջ յեռանդը մարեց, ուստի ինքն եվ իր ծանր քայլափոխն սկսավ:

Դժյակում արդեն ճրագները վառել էին, յերբ իշխանը հասավ ամրոցի դռանը, վոր դռնվում էր արևմտյան կողմից բարձրացող յերկու աշտարակների մեջտեղը:

Իջնելով ձիուց, նա մոտեցավ աշտարակի դրսի պահարանին և վերցնելով այդտեղ պահվող փայտե մեծ մուրճը, յերեք անդամ ամուր զարկեց պատի վրա ամրացրած տախտակե կոշնակին:

— Ո՞վ է, խստում ձայնով հարցրեց մի պահապան:

Իշխանը վարանեց պատասխանելու, վորովհետև չէր մտածել, թե ի՛նչ անուն պիտի տա իրան:

— Ո՞վ է կոչ անողը, հարցրեց կրկին պահապանը վոչ ինչ պայրացած և այս անգամ աշտարակի նեղ պատուհանից դուրս հանեց իր ահագին գլուխը:

— Արքայի բանբերը... պատասխանեց իշխանը, առանց մտածելու:

— Արքայի բանբերը չի կարող մտնել մեր ամրոցը, պայրացած պատասխանեց պահապանը. մի՞թե թագավորը չգիտե,

վոր Գարդմանն արդեն իր հին տիրոջն է պատկանում։ Այս ասելով նա իր դլուխը ներս տարավ դեպի աշտարակը և լռեց։

Իշխանը մնաց շվարած։ Նա չէր սպասում, վոր Գարդմանցիք միաբանած լինեին ուտիացիների հետ։ Թեպետ հասատատ դիտեր, վոր Ցլիկ-Ամբամի սպասամբության դործում խառն է նաև Սահակ Սևադան, մանավանդ վոր նրա Դավիթ վորդին հայտնի կերպով միացած եր Ամբամի հետ, այսուամենայնիվ հույս ուներ, վոր Գարդմանա ամրոցի բերդակալը, վոր կարդված եր Թագավորից, չի դավաճանիլ յուր տիրոջը, վորովհետև նրա բազմամյա հավատարիմներից մինն եր։ Բայց յերբ պահապանի պատասխանը լսեց, համոզվեցավ, վոր բոլոր յերկիրն ուրեմն Ամբամի հետ է։

«Ինչ անել այժմ», մտածեց ինքն իրան իշխանը և ապա վորոշեց խորամանկության դիմել։ Նա կրկին մուրճը առավ և առաջվանից ավելի ամուր զարկեց կոչնակին։

— Բարեկամ, յերևի քո Թագավորի սպասավորները սիրում են աշտարակներից կախվել, հանդստության համար դոշեց վերևից պահապանը և դլուխը կրկին պատուհանից հանելով՝ ավելացրեց. ցանկանո՞ւմ ես, վոր մի փքին ուղղեմ կրծքիդ։

— Հիմա՛ր, քեղ վորձում եյի. քեղ նման անասունը միայն կարող է անօրեն Թագավորին սպասավորել։

— Ո՞վ ես դու ուրեմն, հարցրեց պահապանը ձայնը մեղմացնելով։

— Ամբամ իշխանի համհարդը։ Անագա իշխանին կարևոր լուր եմ բերել։

— Իսկ յերբե՞ս լինի այդ։

— Տխմար. ձեր բերդն ուրեմն մի դորակո՞ն ել կարող է առնել. ինչի՞ց ես վախենում։

— Սպասի՛ր, պետք է բերդակալից հրաման առնենք։ Այս ասելով պահապանը հեռացավ։

Մի քառորդ ժամից հետ աշտարակի պատուհանից կախեցին մի վառած գամբար, տեսնելու համար, թե արդյոք ուրիշ մարդիկ չկա՞ն դրան առաջ. և յերբ ստուդեցին, վոր սպասողը միայն մի հեծյալ է, յեկան և ամրոցի դուռը բացին։

Պահապանները տեսնելով, վոր ներս մտնողն իշխան է և վոչ հասարակ դինվոր, պատշաճ հարդանք մատուցին նրան, բայց միևնույն ժամանակ խնդրեցին, վոր բարեհաճե նախ բերդակալին ներկայանալ, վորովհետև իրանց այդպես եր հրամայված։

Իշխանի նպատակն էլ այդ էր: Նա կամենում էր տուդել, թե արդյոք բերդակալն իսկապես միացո՞ծ է ապստամբների հետ, թե՞ սուխլված և տեսնես և հպատակում նրանց ճնշումներին:

Պահապաններն առաջնորդեցին իշխանին դեպի մոտիկ դիտանոցներից մինը, որի վերնահարկում ապատում էր նրան բերդակալը: Փոքրիկ և ցածր դռնից ներս մտնելով՝ նա սկսավ բարձրանալ քարյա նեղ և ոճապուտյա սանդուխքներով: Առաջնորդ պահապանը կանգ առավ վերնահարկի մուտքի առաջ և խնդրեց իշխանին, որ բարևհաճե նախ հանձնել իրան յուր սուրը և ապա մտնե ներս:

Իշխանը հնազանդվեցավ՝ ղդուշության համար ընդունված՝ այդ սովորությանը և հանձնելով զինվորին յուր սուրն ու վահանակը, մտավ բերդակալի մոտ: Վերջինս մի բարձրահասակ, խոշորադեմ, խելոք աչքերով և ըստ յերևույթին բարեսիրտ տղամարդ էր, որ փոքրիկ, կամարակապ սենյակի մեջտեղը կանգնած՝ ապատում էր յուր խորհրդավոր հյուրին:

Հենց որ իշխանը ներս մտավ, բերդակալը դրկաբաց վազեց դեպի նրան և բացականչեց.

— Գևորդ իշխան, ապա դո՞ւ յես, ի՞նչ հողմ, ի՞նչ դիպված: Այս ասելով, նա դրկախառնվեցավ իշխան Մարզպետունուն և համբուրվեցավ նրա հետ:

Իշխանն այս սիրալիր ընդունելությունից զարհեն զուշակեց, որ բերդակալն ապստամբների հետ չէ, ուստի նշանացի հայտնեց նրան, որ պահապանը կանդնած է դռան առաջ, և խնդրեց, որ հեռացնե նրան:

— Ո՞վ կա այդտեղ, դոշեց բերդակալը դեպի դուռը դնալով:

— Ցե՛ս եմ, տեր, պատասխանեց պահապանը և ներս մտավ:

— Դի՛ր ապտեղ իշխանի սուրն ու վահանակը և իջի՛ր ներքև, հրամայեց բերդակալը և պահապանը էլատարելով նրա հրամանը հեռացավ:

Ցերբ նրանք միայնակ մնացին, բերդակալն առաջինն սկսավ խոսել.

— Զեյլ կասկածում, որ այստեղ յեկողը սրքայլ մարդկանցից է. պահապաններն ասացին, որ դու քեզ նախ սրքայլկան և ապա Ցլիկ-Ամրամի համհարզն ես անվանել: Սկզբում չըփոթվեցի, կարծելով, թե յեկողը Ամրամի մարդկանցից է. բայց հետո իմացա, որ մեր պահապանի՝ սրքայլի հասցեին ուղղած

անդրադարձ խոսքերից հետո չես խոսքդ փոխել, խնդրեցի դուշակեցի, որ մեր հավատարիմներից մինն ես չկորչես:

«Այժմ ասա՛, որտեղից և ինչպես հասար այստեղ. ինչո՞ւ միայնակ ես. ո՞ւր են թիկնապահներդ. ինչ լուր ունես արքայից. արդյոք չեղբայրներից հույս կա՞, թե՞ վռատանում պետք է դրաժողով անել... շտապավ և իրար չեռևից հարցեր արավ բերդակալը:

Մարդպետունի իշխանը, ըստ չերևույթին, հեղինակավոր անձն եր բերդակալի համար: Վերջինի հարցերին նա չշտապեց պատասխանել. այլ նստելով տախտակե աթոռակի վրա, որ այդտեղի միակ կարասին եր, առաջարկեց խոսակցին նույնպես նըստել յուր հանդևում՝ դիտանոցի պատուհանին:

— Դու դեռ չերևույթասարդ ես, վահրամ, իսկ չես տարիքս անցրած: Ճանապարհի չերկարությունն ինձ հոգնեցրել է. քո՛ղ որ մի փոքր հանգստանամ և ապա խոսեմ, նկատեց Մարդպետունին:

— Ա՛խ, ների՛ր ինձ, իշխան, քո ներս մտնելով չես այնպես ուրախացա, որ մինչև անգամ չփոթվեցա և տանուտիրական պարտավորություն մոռացա... նույնիսկ նստել չառաջարկեցի քեզ... ների՛ր ինձ, աղաչում եմ: Բայց մենք ինչո՞ւ այստեղ ուշանանք. չնորհ արա՛ ինձ չե՛կ իմ տուն, այնտեղ հոգնությունդ կառնես և ավելի հանգիստ կխոսակցես:

Այս ասելով բերդակալը վեր կացավ և կամենում եր առաջնորդել իշխանին: Բայց նա տեղից չշարժվելով, նրան ել առաջարկեց նստել:

— Վահրամ, չես քո տունը դալ չեմ կարող, ասաց իշխանը. ինձ չպետք է տեսնեն քո տանը: Մի քանի տեղեկություններ ունիմ քեզանից առնելու և փոխարենը քեզ հաղորդելու. այդ վերջացնենք, և այնուհետև չես պիտի գնամ Սևադա իշխանի մոտ: Մենք այժմ այնպիսի տագնապի մեջ ենք, որ հյուրասիրական իրավանց ու պարտավորության ուշադիր լինել չենք կարող:

— Շատ լավ, արա՛, ինչ որ հաճելի չե քեզ, պատասխանեց բերդակալը և տեղը նստեց:

Մարդպետունի իշխանը հառեց աչքերը բերդակալի վրա և մի խորհրդավոր հայացքով նայելով նրան վոտքից մինչև դլուխ, լուրջ ձայնով հարցրեց.

— Վահրամ իշխա՛ն, կարելի՞ չե այժմ վստահանալ քեզ վր-

քա այնպես, ինչպես վատահանում եյինք տարիներ առաջ Վահրամ սեպուհի վրա:

— Իշխան, չնորհակալ եմ այդ անկեղծ հարցի համար: Այժմ այնպիսի ժամանակում ենք ապրում, որ Մարզպետունի իշխանն իրավունք ունի կարծելու, թե նախկին Վահրամ սեպուհը դարձել և արդեն մի մատնիչ, մի տիրադրուժ. մանավանդ որ այժմ ծառայում և ապստամբների դրոշակի տակ: Բայց չես կարող եմ հավատացնել քեղ, որ վոչ տարիները և վոչ հանդամանքները չեն փոխել իմ մեջ վոչինչ: Արքայի նախկին հավատարիմը այսոր եյ նրա հավատարմատուր ծառան է: Թե ինչո՛ւ ապստամբների հետ եմ այժմ, դրա պատճառը վոչ թե իմ, այլ արքայի շահն է, որ չես չկարողացա անտեսել:

— Ի՞նչպես. բացատրի՛ր ինձ:

— Ցերբ լուր հասավ այստեղ, թե Ցլիկ-Ամրամը ապստամբութեյան դրոշ է պարզել, Սևադա իշխանը հարմար առիթ համարեց ողուտ քաղել այդ դեպքից՝ յուր վաղուց դուրդուրած նպատակին իրագործելու համար: Անմիջապես նա հրավիրեց յուր մոտ Գարդմանա աղնվականները և ժողովրդի դլխավորները: Հրավիրվածների մեջ եյի և ես: Իշխանն այնպիսի ճառ խոսեց մեր առաջ, որ զարդմանացի հայրենասերները բոլորովին խեղդվելացան...

— Ի՞նչ եր ասում:

— Զեմ կարող բոլորը հիշել, բայց ինչ որ չեմ մոռացել, այն կհաղորդեմ: Աղնվականները խմբված եյին իշխանի պատըշդամում, իսկ ժողովրդի դլխավորները՝ ապարանքի բակում: Ցերկու ծառաներ թևերից բռնած դուրս բերին Սևադա իշխանին. յերկու ուրիշ ծառաներ ել՝ Գրիգոր իշխանին: Ծանր, սարսափելի ծանր ապաշորութեյուն արավ մեզ վրա կուլր հոր ու վորդու յերևալը: Դեռ Սևադա իշխանը բերանը չբացած, բակում խոնըված ժողովրդի մեջ թաղավորի անվանն ուղղված անեծքներ լըսվեցան: Սևադա իշխանը դեպի պատշդամի յեղերքը հառաջանալով, հենվեցավ դավաղանի վրա և մոտավորապես հետևյալը խոսեց.

«Իշխաններ և ժողովուրդ. ձեր աչքով ահա՛ տեսնում եք, որ հզոր Սևադան, զարդմանացոց պարծանքը և թշնամիների սարսափը, ապիրատ վենայից կուրացած՝ յուր ծառաների չընորհիվն և միայն ձեր աչքին յերևում: Չեյի կամենալ, որ իմ ժողովրդի ամենից սինելքոր անդամը հանդիսկեր այսպիսի դըժ-

քախտութեան, վոր ծերունի հոր և յերիտասարդ վորդու համար առեղծեց հարազատի ձեռքը: Ծանրոտար մի վիշտ և այս: Դուք տեսնում եք Գարդմանը, նրա յերկինքն ու արևը, լեռներն ու դաշտերը, նրա ծաղիկն ու դարունը... Ցեռ զրկված եմ այդ բոլորից, բայց այդ չի միայն իմ ցավը: Ցեռ չեմ կարողանում իմ ժողովուրդն անձամբ խնամել. նրա վշտերն ամոքել, իմ հայրենակիցներին այցելել, իմ վորբերին պատսպարել, իմ այրիների արտասուքը սրբել, իմ զերյալներին վերադարձնել... Սևադան, կարօտ և այժմ յուր ծառաների շնորհին. յեթե նրանք չկամենան, ա՛յլ զարդմանացիք, յես չեմ կարող մինչև անգամ արևի ճառագայթներով իմ առած մարմինը ջերմացնել... Իմ առյնը, վոր մի որ կենդանութեան հնոց եր, այժմ կուչ բուիճակների կացարան և դարձել: Այս ամենը տեսնում եմ յես, զորովհետև զրկված եմ աստծո լուսը տեսնելու կարողութեունից: Բայց դուք, զարդմանացի քաջեր, դուք, վոր առողջ աչքեր, զորեղ բազուկներ, աննկուն կորով ունեցիք և ունիք, ի՞նչպես եք կարողանում տանել ա՛յն անարդանքը, վոր Աշոտ-Ցերկաթը դրոշմեց ձեր ճակատին, ձեր հայրն ու առաջնորդը կուրացնելով, ձեր ազատութեունը չղթայելով...

«Ժողովուրդ Գարդմանա, բացակայեցէք իշխանը, յես բարձրացրի քո անունը իմ հաղթութեուններով, դու ստորացրիր նրան քո անմտութեամբ... Ցեթե քաջութեուն չունիս դեն ձգել այդ անարդանաց լուծը, քաջութեուն ունեցիր գոնե մի սուր ցցել իմ կրծքին, վորպեսզի Սահակ Սևադայի վշտերը գոնե նրա մահվամբ անհետանան աշխարհից. վորպեսզի քո վորդիները Սևադայի բողոքը չլսեն և քեզ չանիծեն...»:

Իշխանը դեռ չեր վերջացրել խոսքը, վոր բոլոր ամազանին և նրա հետ ել ժողովուրդը միաբերան աղաղակեց.

— «Կորչի՛ բռնավորը. Գարդմանն ազատ է այս վայրկեանից և մեր իշխանն է Սահակ-Սևադան...»:

«Մի քանի րոպեյից հետո ամբողջ ամբոցը խռովյալ ծովի կերպարանք առավ. ժողովուրդը դուրս յեկավ զենքերը ձեռին, կարծես, թե թագավորի բանակը պաշարել եր նրան: Պատնեշներից դուրս վոնդեցին վանականոցի պահապաններին, ազատելով կուսորել բոլորին, յեթե չեյին հնազանդվել Սևադայի հրամանին: Իսկ կատաղած ամբոխը դղյակի բարձունքից հափշտակելով արքայական դրոշը, նրա տեղ Գարդմանա վիշապանիշը պարզեց...:

— Ո՛, այդ արդեն չափազանց է, բացականչեց Մարզպետունին։

— Այո՛, և ուրիշ մեծամեծ ավերումներ կանեին, եթե չես խնայեր իմ պահնորդների խումբը հավաքելով՝ հպատակության երդում չերդվելդ Սևադային։

— Ավելի լավ չե՞ր լինել, եթե քո խմբով հեռանայիր ամրոցից, քան հպատակության երդվեիր։

— Վաչ. այն ժամանակ արքայի ոտին դրծելու կամ ուրախացող շարժումները դիտելու հնարավորություն կղրկվեի։ Իսկ այժմ ապատամբների մեջ դանվելով՝ կարողանում եմ շատ բան տեսնել և իմանալ։

Բերդակալի պատասխանները ծանր տպավորություն արին Մարզպետունու վրա. նա գլուխը կախեց և ընկավ մտածության մեջ։

— Մի՞թե դու ինձ մեղադրում ես, հարցրեց բերդակալը վշտի լուրթյունից հետո։

— Այո՛, մեղադրում եմ, պատասխանեց իշխանը գլուխը վեր բարձրացնելով։

— Բայց չե՞ր տոր տես տեղի յեմ տվել տխտղողական հանդամանքներին։

— Միշտ և ամեն տեղ լինում են այդպիսի հանդամանքներ։ Եթե ամեն մի բերդակալ տեղի տա տխտղողական հանդամանքներին, այն ժամանակ բոլոր պետական ամրոցները թշնամու ձեռը կանցնեն։

— Ես տեղի յեմ տվել վոչ թե արտաքին, այլ ներքին թշնամիներին։ Ես չեյի կարող իմ վոգբիկ դնդով դեմ դնել բազմաթիվ ամրոցականներին. չեյի կարող նաև յեղբայրասպան կռիվ մղել իմ հարազատների դեմ. բավական է, վորքան միմյանց արյուն թափեցինք...։

Բերդակալը վերջին խոսքերն արտասանեց ջերմությամբ։

Մարզպետունին նայեց նրան մի խորհրդավոր հայացքով և գլուխը շարժեց։

— Մի՞թե ինձ վրա բարկանում ես դու, հայր, դուցե, անհեղձ չե՞ս դոնում իմ պատասխանը։

— Ընդհակառակը, շատ անհեղձ եմ դոնում. ինքս լավ ըմբռնում եմ մեր դրության ծանրությունը։ Թշնամին աչքերը հառած սպասում և հարմար առիթի՝ մեր յերկիրն արշավելու, մենք էլ մեր ձեռքով պատրաստում ենք այդ առիթը։ Դու, բարեկամ,

չես կամենում յեղբայրասպան կռիվ մղել հարազատիդ դեմ, մի՞թե չես կարող եմ այդ արդար իրավանց հակառակվել. չի՞ վոր յեղբայրասպանությունը նուիլնիակ անձնասպանություն է...

— Շնորհակալ եմ, վոր հասկանում ես ինձ: Ճես իրավունք կտայի քեզ սուր ցցել իմ կրծքի մեջ, յեթե այդպիսի թուլություն արտաքին թշնամու դեմ անելի. բայց ի՞նչ մեղքս թաղցնեմ, հարազատի վրա ձեռք բարձրացնել չեմ կարող:

— Ճեվ յերբեք էլ չպիտի բարձրացնես... բայց դուցե կարողանայիր խոհեմությամբ ճանապարհով այս պատահման առաջն առնել: Գետնքյան ամբողջությունը պահպանելու համար, այո՛, չպետք է յերբեք հարազատի արյուն թափել, բայց ապրատամբ հարազատին զինաթափ անելու նպատակով՝ կարելի յե խորամանկել: Սիրոխն ամեն տեղ էլ նման է այն վոչխարներին, վորոնք դայլի խոսքերից խաբվելով՝ նրա ձեռքն են մատնել պահապան շներին, վորպեսզի այդպիսով դայլի բարեկամությունը վաստակեն. իսկ վերջինս, պահապան շները խեղդելուց յետո, սկսել է հիմար վոչխարները կոտորել: Կռվելու արժանի յեն այն իշխանները, վորոնք հարստահարում են ամբոխի այդ անմտությունը: Մեղանից ամեն մինը յուր բոլոր զորությամբ պիտի ղեկավի այդ դավաճաններին դեմ: Ով վոր հայրենական դահի թշնամին է, նրան ամեն մի հայ յուր իսկ անձի թշնամին պիտի համարե: Վորովհետև այնքան ծանր զոհաբերություններով ձեռք բերած այս հարստությունը կորցնելուց հետո, մեզ դարձյալ գերություն և սարկություն է սպասում:

— Այդ ամենը դիտեմ. բայց յես խորամանկելու էլ ճանապարհ չունեյի, սիրելի իշխան:

— Լավ, քեզ չեմ մեղադրում. անցածն անցել է: Այժմ ի՞նչ պես, ի՞նչ ձևով միացնենք մեր այս պատակոսումները. մտածե՞լ ես յերբևիցե սրա մասին. չի՞ վոր շարունակ դեպի կործանումն ենք դնում:

— Մտածել եմ, այն էլ յերկար ժամանակ: Մինչև անգամ վորոշ ծրագիրներ եմ կազմել, թե ի՞նչ դեպքում ի՞նչ ձևով պիտի գործենք: Բայց դու, իշխան, ամենից առաջ պատմիր ինձ, թե ի՞նչ գերության մեջ է այժմ Վոստանը. ո՞վքեր են թագավորի հետ միասան. վո՞րքան զորք կարելի յե անջատել բերդերից. և հետո, թե ինչո՞ւ դու միայնակ գտնվում ես այժմ այստեղ. միով բանիվ, ծանոթացրու ինձ մանրամասնորեն մեր արդի գերության հետ, վորովհետև այս հեռավոր անկյունում յես շատ

քիչ տեղեկություն եմ առնում ձեր կողմերից, և այնուհետև չեմ իմ խորհուրդները կհայտնեմ քեզ. չեմ բանավոր կշտնես նը– րանց, կղործադրենք միասին, չեմ վոչ, կասեմ ա՛յն, ինչ վոր դու հրամայես:

Բնդունակալի հետաքրքրությունն ու արած հարցերը կարծես տարակուսանքի մեջ ձգեցին Մարզպետունի իշխանին. նա կասկածում էր, թե չլինի՞ յուր ծրագիրները խանգարելու նպատակով և բնդունակալն այդ հարցերն ուղղում էրան:

Այս մտքերն սոսկացին իշխանին լռել մի քանի վայրկյան:

Բնդունակալը դուշակեց նրա լռության պատճառը և ժպտալով նկատեց.

— Թող կասկածները սիրտդ չպղտորեն, սիրելի իշխան. իմ հավատարմությունը մի՛ չափիր ա՛յն դրությունից, վորի մեջ գտնում ես ինձ, այլ չափիր ա՛յն անցյալից, վոր ծանոթ է քեզ և արքային: Առաջի, վոր խոնարհել եմ Սևադային՝ իմ թագավորի չահն ունենալով ի նկատի, և այս և միակ ճշմարտությունը, վոր հայտնեցի քեզ. ուրիշ դիտումներ մի՛ վորոնիր վարմունքիս մեջ: Եթե ամբողջ Գարդմանն ինձ նվիրելու լիներին, դարձյալ այդ նվերը իմ աչքում չէր գերակշռիլ ա՛յն անարդանքին, վորին կես արժանի կհամարեցի ինձ, եթե իսկապես դավաճանած լինեի իմ արքային...:

— Այս խոսքերն արտասանվեցան այնքան անկեղծորեն, վոր Մարզպետունի իշխանի կասկածները փարատեցան:

— Այո՛, Վահրամ, չեմ ծածկում քեզանից իմ կասկածը. վախենում եմ ամեն բան հայտնել: Ժամանակը և մարդիկ կործանել են իմ հավատը: Բայց քեզ վրա, այս վայրկյանից սկսած, տածում եմ արդեն մեծ վստահություն: Այսուամենայնիվ, շատ բան չպիտի խոսեմ քեզ հետ, վորովհետև ժամանակը կարճ է. պետք է շտապել Սևադայի մոտ: Կաշխատեմ կրկին վերադառնալ այստեղ, իսկ եթե այդ չհաջողի, այսուամենայնիվ պիտի հավատամ, վոր Գարդմանի մեջ արքան յուր հավատարիմն ունի:

— Ամենաանձնվեր հավատարիմը:

— Շնորհակալ եմ. լսի՛ր: Վռամանն առայժմ խաղաղ է: Ինչպես դիտես, Թագավորը վաղուց հաշտված և Աբաս յեղբոր հետ՝ շնորհիվ Սյունյաց Վասակ իշխանի: Միակ չարիքը Աշոտ սպարապետի դժոխությունն եր, այդ էլ մեջտեղից վերացավ: Ես և կաթուղիկոսը ամեն հնար գործ դրինք մինչև վոր հաշտեցրինք նրան Թագավորի հետ: Ներկուսը մխածիլ մինչև անգամ Դվինը

պաշարելով դրավեցին և հաղթողներին դուրս քշեցին նրա սահմաններից: Սպասում էինք, որ երկար ժամանակ այլևս մի խռովություն չի ծագիլ մեր սահմաններում: Մինչև անգամ առնախմբություններ սարքեցինք Դվինում և քանի որ եր, որ դրանով էինք զբաղված: Ցեղ ահա՛ հանկարծ Ցլիկ-Ամրամի ապստամբության լուրն առանք: Թագավորը չեր հավատում, թե ապստամբության լուրն առանք: Թագավորը չեր հավատում, թե ապստամբությունն այդքան մեծ ծավալ կլիներ ստացած, ուստի մեկն յուր Թիկնապահների խմբով դուրս չնկավ Շիրակից: Նա այն կարծիքին եր, թե Ուտիք հասնելով՝ տեղական բանակի գլուխը կանցներ և, դուցե, առանց արյունհեղության ապըստամբը կնվաճեր: Բայց գնալով այդտեղ, դտնում և ամբողջ նահանդն ապստամբած: Ցերբ նա լուր տվավ ինձ այդ մասին, ես արդեն Թագավորական ընտանիքը բերած էի Գառնի, վորովհետև Ցևբազդավորի ամրությանն այլևս վստահանալ չէ կարելի: Աբասն ու ափխազաց Գուրգենը բավական անխղճորեն ավերել են նրան: Այդտեղ, սակայն, ես Թագուհուն չհայտնեցի ապըստամբության վտանգավոր կերպարանք առնելու լուրը, վորպեսզի չանհանգստացնեմ նրան. բայց բանն այնպես սարքեցի, վոր նա ինքն առաջարկեց ինձ գնալ Ուտիք՝ Թագավորի արշավանքի մասին տեղեկություն առնելու և, եթե հարկավոր եր, ոգնական զորք հասցնելու նրան: Ցեվ ես լեկա: Բայց ի՞նչ տեսա. վոչ միայն ամբողջ Ուտիքը, այլև Արցախու և Գուղարաց մեծ մասը ապստամբած: Արքային հանդիպեցի Գարդարացոց ձորում: Նա հուսահատված եր և կամենում եր վերադառնալ Վոստան: Բայց այս մի վտանգավոր ձեռնարկություն եր: Ցեթե առանց Ցլիկ-Ամրամը նվաճելու նա մտներ Շիրակ, հավատացած եմ, ապըստամբությունն ավելի լայն ծավալ կստանար, և պետության ամբողջությունն անդարմանելի կերպով կքայքայվեր:

«Բայց ի՞նչ անեյինք, զորք չկար. յերկրի բերդերն ու ամրություններըը փակած էին Թագավորի առաջ. հավատարիմ ճանապվածներն անգամ միաբանել էին Ամրամի հետ:

«Այսուամենայնիվ, հարկավոր եր ցույց տալ, թե Թագավորն անուղնական չե Ուտիքում և ապստամբին պետք եր տեղն ու տեղը նվաճել:

«Ահա այս նպատակին հասնելու համար խորհուրդ արինք, վոր Թագավորը շարունակե յուր ճանապարհը դեպի յեղերացոց աշխարհը, ցույց տալու համար, թե այցելության է գնում նրանց Թագավորին և թե Ուտիքում կանգ առնելու նպատակ բնավ չե

ունեցել: Իսկ յեղերացոց թագավորը, հավատացած լինք, ոչ-նահան զորք կատր արքային, վորովհետև նա շնորհատարա եր նրան այն բարութեյան համար, վոր նա արավ իրան, ազատելով Գուրդեն իշխանը յեղերացոց սահմաններից հալածելով և նրա ասպատակները ցրելով:

Թագավորը յուր թիկնապահներով ճանապարհ ընկավ: Իսկ յես սկսա Ուտիքը շրջել իմ մի հավատարիմ հետ միասին: Բոլոր շնորհն ու ավանդները անցա, բերդերը դիտեցի, ապատամբության սահմանները քննեցի և տեսա այն յեղբակացության, վոր չկա այս կողմերում մի կետ, վորին ապատամնել կարողանայինք, զորքը խաղաղության միջոցներով ավարտելու համար: Մնում եր ուրեմն հայանի պատերազմ մղել ապստամբի դեմ: Այս միջոցում ահա Յեղերացոց աշխարհից արքայի սուրհանդակը հասավ, վոր ավետում եր ինձ, թե յեղերացոց թագավորը մեծ զորք և հանձնել նրան, և թե ինքը շուտով կճանապարհվի այս կողմերը:

— Ուրեմն թագավորը դալիս է յեղերացոց զորքերո՞վ, ուրախացած հարցրեց բերդակալը:

— Այո՛: Ցեղ յես հենց մի քանի որ առաջ սուրհանդակ ուղարկեցի թագուհուն հայտնելով նրան, թե շուտով Ամրամի ապստամբությունը պիտի ճնշենք. բայց չհայտնեցի նրան, թե գիմել ենք յեղերացոց ողնության:

—Ցարիք ել չկար: Բայց չո՞ւտ կհասնեն արտաքեղ թագավորը:

— Անշուշտ մի քանի որից. բայց ինձ հարկավոր եր՝ մինչև նրա հասնելը՝ մի վերջին զաղանիք ևս բանալ. այն է՝ թե ի՞նչը դրդից Ցլիկ-Ամրամին ապստամբել արքայի՝ յուր բարերարի դեմ: Զի՞ վոր Աշոտ-Ցեղիաթի աննախանձ բարութեյան շնորհիվ և, վոր նա այսոր Ուտյաց աշխարհի կուսակալը և հյուսիսային բանակի հրամանատարն է: Ինչո՞ւ նա չարութեյամբ և վոխարինում բարութեյունը:

— Այո՛, Ամրամի այդ վարմունքը զարմացրել և նաև ինձ:

— Դու վոչ մի պատճառ չդիտե՞ս, հարցրեց Մարզպետունի իշխանը մի տեսակ կեղծ պարզութեյամբ:

— Վո՛չ:

—Ինձ թվում է, թե նա ապստամբել է Սևադայի խորհրդով:

— Իսկ յես ընդհակառակը՝ կարծում եմ, վոր Սևադան ապստամբներից զարմանացիներին՝ միմիայն Ամրամի համարձակությունից խրախուսվելով:

— Ցեվ չե՞ս սխալվում։

— Ինձ թվում է թե՝ չեմ սխալվում։ Սևադան նրան գլուխ չեր կարող։

— Բայց չես հենց այդ հանելուկը լուծելու համար չեկա այստեղ։ Ցես կասկածում եյի Սևադայի վրա. և մի քանի տեղեկություններ էլ, վոր քաղեցի իմ ճանապարհորդության ժամանակ, հաստատեցին իմ կասկածները։ Ցես տակավին չդիտես, թե նա գարշմանն էլ է սրբքայից ազատամբեցրել, վորովհետև, ինչ մեղքս ծածկեմ, չեյի կարող հավատալ, թե վահրամ բերդակալը թուլլ կտար նրան այդ քայլն անել...

— Ցես բացատրեցի քեզ, թե ի՛նչ հանգամանքներ ստիպեցին ինձ վարվել այդպես...

— Մի՛ ընդհատիր. չես քեզ չեմ մեղադրում. արդեն ծանոթացա այդ հանգամանքներին և տեսնում եմ, վոր Գարշմանն էլ ազատամբների հետ է. և վոր մեզ մնում է բարեկամ մնալ վահրամ բերդակալը։

— Վորի վրա կարող է թագավորը վստահանալ ամեն դեպքում։

— Անշուշտ։ Այժմ ուրեմն դու մնա այստեղ և հրամայիր, վոր պահապաններից մինն առաջնորդե ինձ դեպի Սևադայի ապարանքը։ Ցես նրան պիտի ներկայանամ իբրև մի անծանոթ կամ ոտարական. և ամեն հնար գործ պիտի դնեմ ինձ համար այդ անհայտ դաղտնիքը պարզելու։

— Բայց դրանից ի՞նչ ոգուտ։ Մի՞ևնույն չե՞ քեզ համար, թե ո՛վ ո՞ւմ է դպրոցել. ազատամբությունն ակներև է. դրա՝ դեմ պետք է գործել։

— Դրա դեմ, այո՛, պետք է գործել յեռանդով. բայց կաթելով և նաև այս դաղտնիքը լուծել, վորպեսզի չարիքը կարողանանք արմատից խլել։

— Ավելին հարցնելու իրավունք չունիմ. արա՛, ինչ վոր հաճելի յես քեզ։ Հարկավ, քո վորձառությունը չի կարոտում իմ խորհրդին, պատասխանեց բերդակալը, և պահապաններից մինին կանչելով՝ հրամայեց առաջնորդել իշխանին մինչև Սևադա իշխանի ապարանքը։

Մութը կոխել եր և ամրոցի նեղ ու մանրածապատ ուղիները անտեսանելի դարձրել։ Բնակիչները քաշվել եյին տուն. լռությունը տիրում եր ամեն տեղ և մենավոր անցքերում լսվում եր միայն իշխանի ձիու քայլատրոփը, վոր մի-մի տեղ

սովորում էր պահապան շներին հարձակվել անցորդների վրա և իրանց աղմկարար հաջյունով խանգարել ամրոցականների խաղաղությունը:

Սահակ Սևադյի ապարանքին հառնելով, իշխանը հրամայեց յուր առաջնորդին վերադառնալ և ինքը միայնակ առաջ անցավ:

Իշխանի ապարանքը, որը միևնույն ժամանակ ղորավորը մի ղղյակ էր, դիշերվա այդ ժամին ոչնաձ էր ոչ մի կողմից: Ըստ յերևույթին նրա կույր աչերը չեյին սպասում ոչ մի հարձակման և չեյին իսկ յերազում, թե կդտնվի մի տմարդ թշնամի, որը սիրտ կանե դիշերվա այդ ժամին յերկու դժբախտների դիշերվա խաղաղությունը վրդովելու:

Իշխանը մտավ ապարանքի բակը ղղյակի մեծ դռնով: Ցերեկ-հարկյան այդ ընդարձակ շինությունը յուր մեծամեծ դահլիճներով, բազմաթիվ սենյակներով և աղ ու ձախ թևերին դրված հզոր աշտարակներով թաղված էր համարյա խավարի մեջ: Զըննալով որ Սևադան այդ միջոցին արդեն յուր յերկրի ու ամրոցի տերն էր, այստեղ նրա ապարանքում կենդանություն չեր յերևում, ձայն ու շշուկ չեր լսվում: Ապարանքի մի կողմի վրա դտնվող մի քանի նեղ պատուհանների մեջ միայն յերևում էր նվազ լույս. իսկ ստորին հարկի խցերում խլրտում էյին ծառաները:

Իշխանը նայեց այդ հսկայական շինության վրա և նրան շրջապատող տխուր լռությունը ճնշեց յուր սիրտը: Նա հիշեց այն յերջանիկ որը, յերբ ինքը առաջին անգամ վոտք դրավ այդ տան դռանը: Ի՛նչ կյանք, ի՛նչ աշխույժ, ի՛նչ վոգևորություն էր թագավորում այն ժամանակ այդ տան շուրջը. իսկ ա՛յժմ. վորքան՛ մեռելություն... Կարծես թե իրոք մահվան ավերիչ ձեռքը ծանրացել էր այդ իշխանական ղղյակի վրա:

«Եվ այս բոլորի պատճառը մի ապօրինի քայլ, վողջախոհության դեմ մի հանցանք...», չշնջաց ինքն իրան իշխանը և խոր հոգվոց հանեց: Այդ մոռնալով ներքին հարկի խցերից մինին, մարակի կոթով դուռը թակեց:

Դուռս յեկողը իշխանի հին ծառաներից մինն էր. Մարզպետունին իսկույն ճանաչեց նրան, վորովհետև ճրագը նրա ձեռքումն էր: Այդ անհաջող հանդիպումը տխուր տպավորություն արավ իշխանի վրա, վորովհետև յեթե իրան ճանաչելին, այլևս յուր ծրագիրներն առաջ տանել չպիտի կարենար: Մի նվազ հույս

եր միայն մնում նրան, այն է՝ քե դուցե այդ ծառան մոռացած լինի իրան։

Վերջինս, երբ իշխանի արտաքինից արդեն տեսավ, քե հասարակ մարդ չե իրանց այցելողը, խնդրեց դուրս կանչից ընկերներին, երբոնք այս ու այն կողմերից հավաքվելով՝ վառեցին բակի մեջ պատրաստ եղող կրակ֊ի֊ութի֊ի ղամբարը, և սկսան իրանց ծառայութ֊յունը մատուցանել իշխանին։

Լուր հասցրին խնդրեն ևեթ իրանց տիրոջը, երբ մի նշանավոր հյուր է եկել իրանց։

Իշխան Սևադան հրամայեց հայտնել հյուրին, երբ «սիրով սպասում է յուր հին բարեկամ և ամենասիրելի իշխան Գևորդ Մարզպետունուն»։

Իշխանը շեմքի վրա մնաց զարմանքից սառած։

— Վո՞րտեղից իմացավ իշխանը, քե Մարզպետունին է յուր հյուրը, հարցրեց նա լուր բերող ծառային, երբը ինչ այլայլված։

— Ո՛չ, չե՛ս տվի նրան այդ ավետիքը. կամեցա ուրախացնել իմ իշխանին, ինքնագոհ ժպիտով պատասխանեց ծառան։

— Իսկ դո՛ւ, տղա՛, ճանաչո՞ւմ ես ինձ։

— Սա իմ վորդին է, տե՛ր, մոտենալով իշխանին՝ ժպտալով խոսեց հինավուրց ծառան. չես հայտնեցի նրան, քե մեզ հյուր կեկողը վառավոր Մարզպետունին է... Տեսնո՞ւմ ես, իշխան, վորդիս մեծացել է. այն ժամանակ, վոր դուռ հիվանդ պառկած եյիր մեզ մոտ, սա դեռ փոքր եր. խնդրեք, պառավիկան տղա չե...

Իշխանը տեսավ, վոր ել ծածկելու տեղ չմնաց։

— Այո՛, կերևում է, ասելիած պահե, արագ֊արագ պատասխանեց նա շատախոս ծառային և նեբքին դժդոհութ֊յամբ բարձրացավ վերին դռնիկոնը։

«Ապարդյուն այցելութ֊յուն... դուցե և իմ ճեռնարկութ֊յանց համար խափանարար հանդիպումն...», մտածեց ինքն իրան իշխանը և նեբս մտավ Սևադայի առանձնարանը։

Գարզմանա հինավուրց իշխանը նստած եր այդտեղ, առանձնարանի անկյունում դրված և թավիշներով զարդարած մի տախտի վրա ծալապատիկ, համակ սևազգեստ, համարիչը ճեռքին։ Նա դլուխը բարձր բռնած և ուշադրութ֊յունը լարած, ինչպես առհասարակ անում են բոլոր կույրերը, ուղղել եր դեմքը դեպի

առանձնասքանի դուռը: Հենց վոր ներս մտնող քայլերի ձայնն առավ, ժպտալով հարցրեց.

— Իշխա՞ն և յեկողը:

— Այո՛, քո խոնարհ ծառան, պատասխանեց Մարզպետունին և արագ քայլերով սկսավ մոտենալ:

— Ե՛կ, իմ սիրաբժան հյուր. Ե՛կ, մոտեցի՛ր ինձ, չես չեմ կարող քեզ ընդառաջել. ասաված ղրկել և ինձ այդ ուրախությունից. յեկ և ղրկիր ինձ...

Այս խոսքերի հետ նա բացավ յուր ղիրկը և Մարզպետունի իշխանը, վոր արդեն մոտեցել եր՝ ներմաղին ղրկախառնվեցավ նրան:

Սևադան սեղմեց նրան յուր կրծքին, համբուրեց մի քանի անգամ և հեկեկալով ասաց.

— Կերջապետանքդ չեմ տեսնում, իմ աղնիվ բարեկամ, բայց հոգիս մխացած և հազուդ և նա ինձ չչնջում և, թե սիրտդ խըռսված և Սևադայի դժբախտությամբ և թե աչքերդ արտասվում են արդեն...

Ցավ էրավ, Մարզպետունի իշխանը չկարողացավ զսպել էրան. Սևադայի դրկում արդեն նա վղձկվեցավ և լուռ, անմռունչ արտասվում եր:

Այդ մարդը, վոր արտաքուստ այնքան ղորեղ և աննկուն եր յերեում, մի նորատի հնոջ չափ փափուկ սիրտ ուներ:

— Նստի՛ր այստեղ, ինձ մոտ. քա՛յլ յեղիր. արհամարհի՛ր ճանապարհի հարվածները, միայն թե... նստի՛ր, սիրելիս, (այս ասելով նա իշխանին նստեցրեց յուր կողքին)—միայն թե՝ մի՛ արհամարհիր յերբեք առաքինությունը... Աշխարհում վոչ մի հանցանք անպատիժ չե մնում... Անշուշտ, Սևադան ել գործել և այս պատմին արժանի մի հանցանք...:

— Ձեզի ասպասում, թե այդքան դառը խոսքերով ինձ կընդունես, նկատեց Մարզպետունին դիտմամբ, վորպեսզի առիթը յուր դժբախտ հյուրընկալին փոխել դրությի տխուր յեղանակը:

— Չե՛, բարեկամ. դառնություն չի կարող լինել իմ խոսքերում, քանի վոր քո գալուստը լցրել և իմ սիրտը ուրախությամբ... Ցավ այդպես, Գևորդ իշխան, դու ուրեմն ինձ մոտ, իմ տանն ես, մենք գարձյալ միասին ենք... Ի՛նչպես ուրախ եմ... Տո՞ւնդ, ընտանի՞քդ, վորդի՞դ, առողջ են բոլորը, այնպես չի՞: Գուռը անշուշտ մեծացել և, սուր ու վահան և կրում...

— Այո՛, սեր, քո բարի որհնությամբ:

— Աստծո որհնությամբ... Ցեղ բոլորն այժմ պռնվում են Երուղդավորսո՞մ...

— Վո՛չ, Գառնիում, Թագուհու մոտ:

— Թագուհո՞ւ... իմ Սահականույշի՞...

Այդ բոպեին Սևադա իշխանի դեմքը վայրկենապես այլայլվեց. կարծես, թե հանկարծ մի սուր ցցեցին նրա թոքերի մեջ, բայց իսկույն էլ իրան զսպելով՝ նախկին հանդիստ կերպարանքն առավ և շարունակեց.

— Իմ Սահանույշն էլ առո՛ղջ է, այնպես չե՞...

— Այո՛, իշխան, յես նրան շատ առողջ թողեցի Գառնիում:

— Շատ առո՞ղջ... այդ լավ է. շատ լավ է... յես չէի կարծում... ընդհատելով պատասխանեց Սևադան, կարծես թե չըկամենալով, որ Մարզպետունին այդպիսի լուր հաղորդեր իրան: Վորովհետև ծանր էր դալիս նրան լսել, թե յուր Սահականույշը առողջ և այնպիսի մի ժամանակ, յերբ նրա հայրն ու յեղբայրը կուրացած, նստած են Գաղթմանում... Չե՞ վոր այդ դժբախտությանն հանդիպել էին նրանք նույնիսկ այդ Սահանույշի յերջանկության արդելքները քանդելու պատճառով...

Հավիտյան են աշխարհում այնպիսի մարդիկ, վորոնք իրանց կոչման վերաբերյալ մի վորևե պարտավորություն բարեխղճաբար կատարելուց յետո, յեթե մանավանդ այդ պարտավորությունը լինում է բոլորանվեր մի անձնազոհություն, չպահանջեին, վոր մարդիկ անմոռաց պահեն հիշողության մեջ իրանց արածը, կամ հավիտյան յերախտագետ լինեին իրանց: Մեծամասնությունը, ընդհակառակը, անում է այդ պահանջը նույնիսկ յուր հասարակ պարտավորությունները բարեխղճաբար կատարած ժամանակ: Ցեղ կարծես հենց մարդկանց այդ բնական ցանկությունը խեղդելու համար է, վոր աշխարհում, ընդհանրապես, վոչ միայն յերախտագետ չեն լինում անձնվեր մարդկանց, այլև նրանց ծառայությունը վոխարինում են միշտ ևս ավելի խոսքերով:

Սևադա իշխանի համար ծանր էր, արդարև, հավատալ, թե Սահականույշը կարող էր մի վայրկյան անգամ հոգվո խաղաղություն ունենալ այն օրից յետո, վոր յուր հայրն ու յեղբայրը կուրացել էին յուր պատճառով. թե նա կարող էր ժպտալ, ծիծաղել, ուրախանալ... թե ամեն առավոտ ծագող վոսկեշող արևի ճառագայթները չէին համակիլ նրա սիրտը տխրությամբ,

հիշեցնելով նրան, որ յուր հայրն ու յեղբայրը զրկված են այդ ճառագայթներից հավիտյան...

Ահա՛ այդ պատճառով նրա վրա անախորժ տպավորություն արավ Մարղսեանենց այն պատասխանը, թե «Սահականուշին շատ առողջ թողեցի Գառնիում»:

Բայց Գևորգ իշխանը վոչ մի հուշման նշան չնկատեց Սևվաղայի վրա: Նրան զբաղեցնողն այդ բոլորից Սևադայի հոգևոր աշխարհը չեր, այլ այն միտքը, թե ի՞նչ սիրուն պատասխանե իշխանին, յեթե նա յուր այցետղ գալու մասին հարցնե: Արդյոք ուստ պատճառներ հորինե՞, թե՞ անկեղծությամբ խոստովանե ամեն բան:

Ցավ ահա՛ նա դեռ այդ վարանման մեջ եր, որ Սահակ իշխանն ասաց.

— Մի լավ սովորություն կա մեր ժողովրդի մեջ, իշխանները հեռու յերկրից մի հյուր և գալիս դրանց մոտ, չեն հարցնում վո՛չ անունը, վո՛չ դյուղն ու քաղաքը՝ վորտեղից գալիս և նա, վոչ դործը՝ վորի համար յեկել և, մինչև վոր մի հարուստ ճաշով կամ ընթրիքով չեն հյուրասիրում նրան: Այդ սովորությունը յուր շահավոր պատճառներն ունի, վորոնք հայտնի յեն քեզ: Բայց յես, այժմ, հյուրասիրական այդ պարտավորության պատկառ մնալ չեմ կարող. առաջին՝ վոր մենք ոստաններ չենք, և շատ տարօրինակ կլիներ, յեթե մի վայրկյան առաջ չհամենայնինք տեղեկություն առնել միմյանցից այն խնդիրների մասին, վորոնք հետաքրքրում են մեզ. և յերկրորդ՝ այն որից ի վեր, վոր այս դժբախտությունն ինձ պատահեց, յես դյուրագրգիռ և անհամբեր եմ դարձել... Անհամբեր, ընդ զարմանում. կույրն իրավունք ունի՞ անհամբեր լինելու... Բայց յես այդպես եմ. և ինձ թվում է, թե դրա պատճառն ա՛յն է, վոր իմ հոգին աշխույժ և աննկուն է դեռ, ուստի իմ անդործունեության ավելի ևս դրդում է իմ մեջ դործելու յեռանդը... Այո՛, այդ որից ի վեր, ասում եմ, յես անհամբեր եմ դարձել. ուրեմն ասա՛, սիրելի իշխան, ի՞նչ դիպված, ի՞նչ պատահար բերավ քեզ իմ ամրոցը, և այն՝ այս տարաժամին... Անշուշտ քեզ առաջնորդել է դեպի իմ տունը մի բարի նպատակ: Մարղսեանների իշխանին, դիտեմ, չեն զբաղեցնում անձնական դործերը: Հայրենիքն ու նրա ցավերն են, վոր ուշ կամ հուսահատություն են բերում նրա վրա. այժմ ասա՛՝ ի՞նչ ցավ դարմանելու համար ես չնորհ բերել մեզ մոտ:

Գևորգ իշխանի տխրամած դեմքը պայծառացավ. կարծես թե Սևադան յուր ձեռքը պարզելով դուրս հանեց նրան մի խավարաչին անդունդից. իշխանի խոսքերը բացին նրա առաջ փակված ճանապարհը և նա վորոշեց ազատորեն խոսել:

— Շնորհակալ եմ, տեր իշխան, վոր այդքան լավ կարծիք ունիս իմ մասին. դու արդեն դուշակեցիր իմ դալստյան պատճառը և լավ ասացիր, թե անձնական դործերն ինձ չեն ղբաղեցնում: Այո՛, անձնական դործի համար չեմ այժմ Գարդմանում: Ցերեկիրը, իշխան, դարձյալ տաղնապի մեջ է. Թշնամիների հաքճակման համար դարձյալ մեր հարազատները ճանապարհներ են պատրաստում. յեկել եմ քո ողնությունը խնդրելու առաջիկա ընդհարումների առաջն առնելու համար:

— Իմ ողնությո՞ւնը... իշխա՛ն:

— Այո՛, քո ողնությունը:

— Դու առողջ աչքեր ունիս, տեր Մարզպետունի, անկարելի յե, վոր ճանապարհից մոլորված լինիս, ժպտալով պատասխանեց Սևադան:

Իշխանի այդ հեդնությունը խոցեց Մարզպետունու սիրտը, բայց նա չվրդովվեցավ:

— Ցեթե մինչև անդամ դուրկ լինեյի այդ պիտանի զդայարանքից, այնուամենայնիվ կարող եյի դարձյալ իմ հոդվո աչքերով դտնել այն ճանապարհը, վոր հանում է դեպի Գարդմանա իմաստուն և հայրենասեր իշխանի դղյակը: Ցավ, դուցե, շատ անդամ մոլորվել եմ ճանապարհից, բայց այս անդամ ճիշտ հասել եմ այնտեղ, ուր վոր իմ ցանկությունն ու արքայան պարտքը առաջնորդում եյին:

— Գարդմանա իշխանը խելադուրկ մարդ չե, այո՛. և դու չեյիր հավատալ, յեթե յես այդ անունը տայի ինձ. բայց նա՝ իշխան, այլևս հայրենասեր չե. մի՛ պատվիր նրան այդ անունով:

— Նա չի կամենալ, վոր հայոց արքայական գահը վտանգվի. յես այդ հաստատ դիտեմ, և յեթե ինքդ իսկ հակառակը պնդես, յես չեմ կարող հավատալ:

— Սևադան մի չարագործ է այժմ, իշխան, հավատա՛ ինձ:

— Վո՛չ. նա միայն վրդովված է, նա սրտմտած և հարազատի անիրավության դեմ... բայց նա այդ ժամանակավոր զայրույքին պատճառով չի պատժիլ հայրենիքը, դլանալով նրա ծառաներին յուր իմաստուն խորհուրդները:

— Որհուրդնե՞ր, դու ինձ մոտ խորհրդի՞ չես կանչել, իշխան, կարծես զարմանալով հարցրեց Սևադան։

— Այո՛, տեր իշխան. Ցլիկ-Ամրամը, Ուտիքի վերակացուն, ապստամբել և աբքայից։ Բոլոր Ուտիքը, Աբցախաու և Գուգարաց մեծ մասը զինք են բարձրացրել իրանց թագավորի դեմ։ Ցնկա խորհուրդ հարցնելու հինավուրց զորավարից, թե ի՞նչ միջոցներ գործ դնենք, վորպեսզի կարողանանք ճնշել այս ապստամբությունը առանց յեղբայրասպան կռիվ մղելու։

— Դու ծաղրո՞ւմ ես ինձ, իշխան, լրջությամբ հարցրեց Սևադան։

— Ի՞նչպես կհամարձակիմ։

— Լա՛վ, տեր Մարզպետունի. յես իրավունք չունիմ ստիպել քեզ՝ բանալ քո սիրտն իմ առաջ։ Դու հայրենիքիդ նվիրված մարդ ես, քո թագավորի հավատարիմ պաշտոնյան ես, Սևադան պարտավոր է քեզ հարգել։ Ցնս չեմ նեղանում, մինչև անգամ, վոր դու ապստամբն չես կչտամբում ինձ, թե ինչո՞ւ միացել եմ յես Ցլիկ-Ամրամի հետ...քաղաքավարությունը, դիտեմ, ոտար ունակություն չե Մարզպետունյաց նախարարական տան ժառանգի համար։ Բայց Սահակ Սևադան իրավունք չունի ծանկել յուր գործերը. Գարդմանա տերը չի կարող յուր քաղաքականությունը բանակամությամբ վարադրել... Ցնս, այո՛, Ցլիկ-Ամրամի հետ եմ. դու այժմ թնդես քո անձնական բանակամի, բայց քո թագավորի քաղաքականությունն ես, խոսի՛ր ինձ հետ ինչպես աբքայի հակառակորդի հետ. դրա համար յես միայն կարող եմ շնորհակալ լինել քեզ։

Մարզպետունի իշխանը հանդիստ չունչ քաշեց. Նա կարծես թեթևացավ յուր սիրտը ճնշող ամենամեծ ծանրությունից։

— Ցնվ այդպես, ուրեմն, Գարդմանա տերը ապստամբների՞ հե՞տ է, հարցրեց իշխանը խաղաղ ձայնով։

— Վո՛չ թե միայն ապստամբների հետ է, այլև նա ինքն է այդ ապստամբությունը վառել, բորբոքել։

— Այդ անկարելի յե։ Ջարիքը դուցե յուր յեղբոր տարել և սրամտությամբ վառված Սևադայի, բայց Սևադան ինքը այդ չարիքը չեր առեղծել։

— Այո՛, յես ինքս առեղծեցի։

— Դու ի՞նքդ։

— Այո՛։

— Պատճա՞ռ։

— Վորպեսզի իմ վրեժխնդրության ծարավը հագեցնեմ։

— Բայց...

— Ինչ եր մտածում Աշոտ-Ցերկաթը, վոր կուրացնում եր Սևադային։ Մի՞թե կարծում եր, թե մարմնո կուրությունը կբոդ և արգելել նրա հոդուն տեսնել ամեն որ յուր առաջ չբաշխրծի արյունաշաղախ ձեռքերը և վրեժխնդրության բոցով չերբրքվել... Ինչ չարիք եյի հասցրել յես նրան. ինչո՞ւ նա իմ տեսությունը խավարեցրեց. ինչո՞ւ ինձ դատապարտեց կենդանի մարմնով հավիտյան գերեզմանի մեջ խրխնջելու...։

— Բայց դու, իշխան, չի՛ վոր ապստամբեցիր նրանից և քեղ հետ եկ միասին բոլոր հյուսխասային դավաճաններն ապստամբեցրիր. դու սպառնում եյիր պետության ամբողջությունը քայքայել, դու արքունական գահի պատվանդանն եյիր փորում. մի՞թե թագավորը պարտավոր չեր պաշտպանել աշխարհը քո փառասիրական վտանգությունից դեմ... Ների՛ր, վոր յես այս խոսքն արտասանում եմ. բայց դու սիրում ես անկեղծությունը։

— Այո՛, այո՛, անկե՛ղծ յեղիր. իշխանազն մարդուն անվայել և կեղծավորության դրդյականերով ծածկվիլը. բայց աշխատիր, վոր անկեղծության անժուժ յեռանդը մինչև դրպարտության սահմանները չտանե քեզ...

— Զրպարտությո՞ւն, ասուլած մի՛ արասցե։

— Այո՛, դու ինձ դրպարտեցիր, հենց այս վայրկյանին։

— Ինչպե՞ս. ասա՛, յես ներողություն կխնդրեմ։

— Ասացիր, վոր քո թագավորը պաշտպանում եր աշխարհը իմ փառասիրական վտանգության դեմ։

— Այո՛, ասացի. դու անարդեցիր նախկին հաշտության ժամանակ տված քո յերդման դիրը և յերկրորդ անգամ ապստամբեցար։ Մի՞թե փառասիրությունը չեր մղում քեզ դեպի այդորինակ ուխտազրժություն։

— Ուրախ եմ, վոր կարողանում ես այդպես անկեղծորեն խոսել. յերկչոտ մարդկանց տանել չեմ կարող, բայց մի՛ևնույն ժամանակ, ախորում եմ, վոր այդքան անձնանո՛ր ես դու ճշմարտությանը։ Անդարմանելի մի վիշտ և այդ ինձ համար... Ցես չեմ վշտանում, վոր հայոց աշխարհն այդ կարծիքն ունի իմ մասին, բայց վշտանում եմ, վոր արքունիքի ամենամոտ անձը, Աշոտ Թագավորի մտերիմը, Մարզպետունյաց Գևորգ իշխանը նույն կարծիքն և պաշտպանում... Ցեվ ուրեմն Սևադան ապստամբել եր այն ժամանակ Թագավորի դեմ յուր փառասիրական

ձգտումներից հետևելով... մի՞թե պիտի զարմանամ, յնթե հայոց աղղի պատմությունը գրող վարդապետներն էլ անարդանաց այդ գրչմը դնեն իմ հիշատակի վրա... Ո՛, Ծանր, շատ ծանր պրպտություն և այդ, իշխան:

— Ի՞նչն եր ուրեմն քո այն ժամանակվա առաջին և յերկրորդ ապստամբության պատճառը:

— Ի՞նչը... Այո՛, այդ պիտի հարցնես, այդ դու պարտավոր ես իմանալ, յնթե դնե չգիտես: Բայց ամենից առաջ ասա՛ ինձ. կկամենայի՞ դու դժբախտացնել իմ հարազատ դուստրը, վոր հայոց թագուհին եր և վորին սիրում եյի դու ավելի, քան իմ գրչդ աչքերի լույսը:

— Վո՛չ:

— Կկամենայի՞ խռովել նրա հանգստությունը, նրա ամբոխելը, և, վերջապես, վտանգել իմ թագավոր փեսայի գահը: Մի՞թե անձնասիրության հավասար մի հանցանք չեր լինել դա ինձ համար:

— Անշուշտ: Մենք էլ հենց դրա համար եյինք զարմանում, վոր Սևադա իշխանը ապստամբության դրոշ եր պարզում յուր դաստր և փեսայի դեմ:

— Ցնել դրա պատճառն էլ իմ վտառասիրական ձգտումներից եյինք համարում:

— Ուրիշ բան մտածել չեյինք կարող:

— Լավ. ուրիշ ի՞նչ փառք եր ինձ հարկավոր... Աղջիկս թագուհի, փեսաս թագավոր, ինքս Գարդմանում աղատ, հարուստ և դարձյալ իշխան: Մի՞թե իրավունք ունեյի այս բոլորից հետո մի ուրիշ պահանջ անել իմ բախտից:

— Հարկավ, վոչ:

— Ցնե՛ վերջապես, մի՞թե Սահակ Սևադան մի հասարակ վինովորի չափ էլ հայրենասիրություն չուներ. մի՞թե յես անծանոթ եյի իմ աղղի պատմության և չգիտեյի, թե վո՛րպիսի թանդ զոհարերության գնով ձեռք բերվեցավ Բագրատունի թագավորության գահն ու թագը, վոր յես թուլլ տայի ինձ վտառասիրության ձգտումներով այդ գահի հաստատությունը խախտելու:

— Բայց ի՞նչ եր, վերջապես, այն ժամանակվա քո ապստամբության պատճառը:

— Իմ ապստամբության պատճա՞ռը, այո՛, այդ կարող ես

հարցնել. այժմ այլևս ծածկելու կարիք չկա... Բայց, կարծեմ, այդ մասին դուռ շատ բան դիտես:

— Դեռ վոչինչ չդիտեմ:

—Վոչինչ չդիտես, ուրեմն լսիր.—Ցես քո արքայից առաջին անգամ ապստամբեցա՝ նրան չար ճանապարհից դարձացնելու համար. յերկրորդ անգամ ապստամբեցա՝ հայոց արքայական գահի պատիվը փրկելու համար. իսկ այժմ ապստամբել և ծլիկ-Ամրամին ել ապստամբեցրել եմ՝ իմ և իմ վորդվո անձնական անարդանաց վրեժը լուծելու համար:

— Ինձ դեռ առաջ բացատրիր նախկին ապստամբությանդ պատճառը: Ի՞նչ կնշանակե, թե կամենում եյիր արքային չար ճանապարհից դարձացնել. ի՞նչ չար ճանապարհ եր այդ:

— Ինչ չար ճանապարհ...

— Այո՛:

— Գեղ հո հայտնի յեր, վոր նա մի ժամանակ սերում եր Սևորդյաց Գևորգ նահապետի աղջկանից:

— Այո՛, մի ժամանակ. բայց այդ չատ առաջ եր:

— Ամուսնությունից առաջ, այնպես չե՞:

— Այո՛:

— Ցերբ մարդ ամուսնանում է, պետք է, վոր պատկառ մնա յուր ամուսնական պարտավորությանց, աստուծո և աշխարհի առաջ արած յերդման, յուր կնքած ուխտին. այնպես չե՞:

— Անշուշտ:

— Ցեթե այդպես անում է հասարակ մարդը, ռամիկը, դեղջուկը, վորքա՞ն ավելի պարտավոր է անել թագավորը, ժողովրդյան հայրը և առաջնորդը. նա՛, վորին թագադրությանն ժամանակ յեպիսկոպոսն արքայական մատանին հագցնելով՝ ասում է.

«Ա՛ռ զմատանի՝ առհավատչյա արդարության թագավորության քո, քանզի այսոր որհնյալ ես իշխան և թագավոր ժողովրդյանս: Հաստատ լեր և ոգևնական բրիստոնեության և բրիստոնեից հավատոյ, զի փառավորեսցես ընդ թագավորին թագավորաց...»: Արդ, նա, վոր կոչված է՝ վո՛չ միայն քրիստոնեական հավատո մեջ հաստատ մնալու, այլև այդ հավատո պահպանության հսկելու և յուր ժողովրդի համար արդարության ու առաքինության որինակ հանդիսանալու, կարո՞ղ է և իրավունք ունի՞ արդյոք անարդել այդ հավատը և դայթակղության քար դառնալ ժողովրդի համար:

— Հարիավ, վո՛չ։

— Բայց Թադավորն այդպես էր անում։ Նա ամուսնացավ իմ դստեր հետ, բայց Սևորդյաց նախկին օրիորդին չմոռացավ։ Այն օրից, երբ նա Ցլիկ-Ամրամին կարգեց Ուտիքի վերակացու, վոտի տակ ավավ աստուծո և աշխարհի առաջ արած յուր յերդումը. նա մոռացավ յուր օրինավոր ամուսնուն, անարգեց նրա մաքուր, անարատ և խանդակաթ սերը, նա դարձավ Ցլիկ-Ամրամի կնոջ սիրահարը... Հայտնի չե՞ն միթե քեզ այս պատմություններըդ։

— Հայտնի յեն. բայց...

— Բայց դատապարտելի չեն քո աչքում, այնպես չե՞։

— Ասաված մի՛ արասցե, վոր յես ամբարշտության գործերը դրվատամ... բայց կամենում եյի ասել, թե մարդկանց չըպետք և խստությամբ դատել, առանց նրանց հանցանքի պատճառները խղճի մտոք քննելու։

— Ցերբ յես կխնդրեմ քեզ պաշտպանել քո Թադավորին, այն ժամանակ կպաշտպանես. այժմ դեռ ինձ լսիր։ Հայ լինելուց առաջ, բարեկամ, յես մարդ եմ և միևնույն ժամանակ սիրող հայր։ Ջեմ ծածկում իմ վատասիրտկան վախկոտը. յես կամենում եյի, վոր հայոց Թադավորը վենայանար ինձ, մանավանդ. վոր ասենում եյի, թե իմ դեղանի դուստրը հիացած է նրանով. խակ իմ աղջկան սիրում եյի յես կաթոգին և իմ ուրախությունը դնում եյի նրա ուրախության մեջ. այդ պատճառով եյ աշխատեցի, վոր Աշոտ-Ցերկաթը ամուսնանար նրա հետ։

«Աշոտը կարող եր բացե ի բաց մերժել այդ միությունը. վոչ վոք իրավունք չեր ունենալ շղթայել նրա սիրտը յուր կամքի հակառակ։ Բայց յերբ մի անգամ կապվեցավ նա իմ դստեր հետ սուրբ ամուսնության կապով, ապա պարտավոր եր պատկառ մնալ աստուծո և մարդկանց բերանով որհնված այդ միությանը։

«Բայց նա անարգեց այդ միությունը։ Կներե՞ նրան աստված թե վոչ, այդ յես չդիտեմ. դուք ել, մարդիկդ, տեսնում եմ, չեք կամենում խստությամբ դատել նրան. բայց յե՞ս... Ցես հայր եմ. սիրտ և զգացմունք ունիմ. հայրական դուք ու դրսոյլ ունիմ. և դրա հետ միասին ել Գարգմանա տան հպարտ իշխանն եմ... Ցես չեյի կարող անտարբերությամբ նայել իմ դստեր դժբախտության վրա և, միևնույն ժամանակ, յերբե՛ք

և վո՛չ մի պայմանով թույլ չէիր տալ, որ յերկրիս ամենապրծող մարդն անպատվության դրոշմ դներ իմ ճակատին։ Ճես մի հարվածով ինքնասիրության այն ճեռքը, որը կմոռնար իմ տոհմական անարատ անունը արատավորելու։ Ճես այդ կարող էի անել։ Բայց ամենից առաջ լռեցի խոհեմության ճայնին։ «Վոչ վոքին դեռ հայտնի չէ իմ դատեր դժբախտությունը—մտածեցի յես,— նա ինքը, նույնպես, վոչինչ չգիտե այդ մասին. ինչո՞ւ ուրեմն հրապարակ հանենք ժահահոտ վերքը. նրան կարելի չէ բուժել նաև մի ծածկարանում. թող հանդիստ մնա իմ գատեր սիրտը և անարատ՝ արքայական գահի պատիվը»։ Այսպես մտածեցի յես և դիմեցի արքային։ Ինտեցի նրա հետ հայրաբար. հորդորեցի նրան չափավորել յուր խանդն ու ավյունը, ստանձնահարել կրքերը, հեռանալ անպատվության ճանապարհից. ազաչեցի, թախանձեցի, որ նա խնայեր իմ դատեր քունքուշ, դյուրաբեկ և վշտերի անտանելի սիրտը, որը նա խնայեր, վերջապես, հայոց արքայական գահի պատիվը... Նա առաջ չկամեցավ խոստովանել յուր հանցանքը. ծիծաղից դառը փորձերից խրատված հզոր կատվածների վրա և կամեցավ յուր ճարտար լեզվով նկարել իմ առաջ կատվածի ճիլվաղային կերպարանքը՝ նրանից ինձ հետու փախցնելու համար...։ Այն ժամանակ յես ապացույցներ գրի յուր առաջ։ Նա չկարողացավ հերքել նրանց և չառարկեց։ Ո՛, չկա ավելի ծանր պատիժ առաքինի մարդու համար, քան հանցավորա ու ամոթահար տեսնել յուր առաջ այն տղամարդին, որի մեջ հարգում եր նա յերբեմն առաքինությունը, աղնվությունը, հավատարմությունը, որի մեջ ամփոփում եր նա յուր վստահության հույսերը, որին նա յուր հերոսը, յուր դյուցազն եր համարում... Ճես այդ ծանր վիշտը կրեցի երբև հայ մարդ. իսկ հետո տանջվեցա երբև ծնող՝ յերբ իմ դստեր տկար սրտին հասնելիք հարվածի ծանրությունը կշռեցի։

«Վերջապես թագավորը խոստովանեց ինձ յուր թուլությունը և խոստացավ խզել Ցլիկ-Ամրամի տան հետ ունեցած բոլոր կապերը։

«Ճես ուրախացա և վերադարձա Գարդման։ Բայց ահա՛ դավիս և ամառը և նա թագուհուն ուղեկցում է Սյունյաց ամրոցները, իսկ ինքը գնում Ուտիք, շրջաբերով նստում Սևվորդյաց լեռներում Ցլիկ-Ամրամի վրաններին տակ, Ասլրամ իշխանուհու դրոսավայրերում...։ Ճես այնուհետև համբերել չկարողացա։ Նախատական մի գիր գրեցի նրան և ազատեցի, որ

գնեք անմիջապես չի հեռանալ Սևորդյայ աչխարհից, չես ինքդ իմ զարդմանացի ընդերով կերթամ և կհալածեմ նրան յուր սեքսան հավիտաններից:

«Ես թագավորը վո՛չ մեկայն անուշադիր եր թողել իմ նամակը, այլև ծիծաղել եր իմ սպառնալիքի վրա:

— «Այդ ի՞նչ է. մեքեն զարդմանացիք սերահարների դի՞մ ել են պատերազմում՝ հեղնելով ասել եր նա իմ հավատարմին:

«Բայց չես, վոր ի քեն կատակ անել չեյի սերում, վորշեցի խրատել իմ սահակ փեսային: Մեկայն քեն՝ խնկուն ևեթ չդարձավ ինձ այդ վորոշումը, վորովհետև դեռ պետք և խեղճ աղջկանա սերը պատրաստակի յուր դժբախտությանը լսելու: ԵՒվ այս մի ծանր պատասխանություն եր սերող հոր համար՝ դուժել ինքն իրեն բախտավոր համարող դավակին յուր դժբախտությունը:

«Մինչ այս, մինչ այն, Արաս արքայերդը և նրա աներջ զավադրությունը չկրնան չեկավ, վորից առելված, ինչպես պետանա, թագավորը քաշվեցավ Ուտիք: ԵՒվ ահա՛ մի դժբախտ որ նամակ եմ առանում իմ դատեր գայակից, քեն թագուհին մերձ է մահ հիվանդ և Տավուշ բերդում և կամենում և ինձ տեսնել:

«Խնկուն ևեթ չառպում եմ Տավուշ: Տեսնում եմ աղջիկս հոդևկան ծանր տաղնապի մեջ: Հարցնում եմ հիվանդության պատճառը. և նա տանջվելով, դառնապես արտասվելով պատմում և ինձ յուր դժբախտությունը...:

«Ի՞նչ անելի չես. չե՞ վոր ել համբերելու տեղը չեր: Հաստկացրի աղջկանս, վոր չվրդովվի, չեքեն իմ և արքայի մեջ բռնկող մի պատերազմի լուրն իմանա: «Այս մեկոցը, ասեցի, գործ եմ պնում ամուսնության ուղղության բերելու համար, բայց արյունհեղություն չպետի անեմ»: ԵՒվ այդ նպատակով ել հենց Տավուշի մեջ կչտամբեցի թագավորին ամենածանր, նախատական խոսքերով և յուր չերկիրն ավերելու սպառնալիք կարդալով նրան՝ հեռացա:

«Ահա՛ այդ եր պատճառը, վոր Գարդման հասնելով՝ զորքերս ժողովեցի և չեկա Ուտիքի մի քանի գավառները դրավելու: Բայց վորպեսզի համոզվես, քեն չես այդ ցույցն անում եյի միմիայն թագավորին ուղղության բերելու նպատակով, կասեմ, վոր թագավորը դեռ նոր եր յուր բանակը Շիրակից հանել, վոր չես ծածուկ սովորեցրի Սյունյաց Սմբատ և Բարդեն իշխաններին՝ գալ և իրանց կողմից հաշտության միջնորդ հանդիսանալ

մեր մեջ։ Նրանց հետ միասին էլիր և դու, այլև մի քանի ուրիշ իշխաններ։ Ցնծեն մինչև ձեր հասնելը ինքս հնարներ դործ չընդնելի ընդհարումը դիտմամբ ուշացնելու, Ախայան դյուղի առաջ յերկու կողմից եղ մեծ կոտորած պիտի լիներ։ Բայց դուք հասաք և գործն ուրիշ կերպարանք առավ։ Սյունյաց իշխանները վոչինչ չեյին հայտնել ձեզ իմ զաղտնի նպատակի մասին, ուստի ձեզանից շատերն ա՛յն կարծիքին եյին, թե Սահակ Սևադան փառասիրական ձգտումներից մղվելով և ապստամբել թագավորի դեմ։ Ցնս հարկավոր չհամարեցի հերքել այդ կարծիքը, վորովհետև ավելի դերադասում եյի այն, վոր իմ դըրսեր դժբախտությունն անծանոթ մնա հայ իշխանական տներին և արքայի անունը չարատավորվի, քան թե յես ազատ լինիմ այն մեղադրանքից, թե փառասիրական ձգտումներ ունիմ։

«Ցնվ յես հրապարակով մշտական հաշտության յերդումն արի և դաշնագիրը ստորագրեցի։ Այդ դուք բոլորդ տեսաք։ Բայց դուք չլսեցիք այն խոստովանությունը, վոր Աշոտ Թագավորն արավ իմ և Սյունյաց յեպիսկոպոսի առաջ և այն յերդումը, վոր նա յերդվեց՝ Թողնել հավիտյան Ախլատում իշխանուհու հետ ունեցած մտերմական հարաբերությունները և ուղիղ սրտով ու մաքուր սիրով վերադառնալ յուր որինավոր ամուսնո գիրկը։

«Այո՛, ինչպես վոր իմ այս ապստամբության խնդիրն պատճառը վոչ թե փառասիրությունն, այլ Թագավորն ուղղության բերելու ցանկությունն եր, այնպես էլ մեր հաշտության խնդիրն պայմանը, և ավելի սրբազան յերդումը վո՛չ թե այն եր, վոր դուք իշխաններդ վավերացրիք, այլ այն, վոր կնքվեցավ արքայի, Սյունյաց յեպիսկոպոսի և իմ մեջ։

— Այժմ կատարելապես ծանոթացա քո առաջին պատմության հետ. յերկրորդն ի՞նչ պատճառներից հառաջացավ, հարցրեց Մարզպետունի իշխանը։

— Ցերկրո՞րդը։

— Այո՛։

— Նրա պատճառներն ավելի ծանրակչիռ են։

— Պատմի՛ր համառոտ, թե չես ձանձրանում։

— Ձանձրանա՞լ. վոչ. Մարզպետունի իշխանի հետ խոսակցելը՝ ձանձրույթի չի պատճառիլ ինձ, պատասխանեց Սևադան և սկսավ յուր յերկրորդ զրույցը։

— Ցես կարծում եմ, ասաց Սևադան, կարելի յե մի քիչ նեղել ա՛յն հանցավորին, վոր կամ հանդամանաց բերմամբ, կամ

տեսական թուլությունից դուրս եմ մի հանցանք, բայց ունի կենդանի խիղճ, դյուրազգաց սիրտ, ճանաչում եմ յուր հանցանքը և զղջում եմ սրանից: Բայց ներել այն հանցավորին, որը ինչ մեկին չեմ խոստովանում հանցանքը, այլև դրվատում և նրան իբր մի առաքինություն, դատեցնում և անփորձ սրտերը՝ յուր օրինակին հետևելու, կամ յուր հանցանքի մեծությունը ծածկելու համար՝ դրպարտում և յուր ընկերասեղներին՝ մեղադրելով նրանց ծանրագույն հանցանքներն մեջ, այդպիսի հանցավորին, ասում եմ, ինչ մեկին չպետք է ներել, այլև անհրաժեշտ է պատժել ամենածանր պատիժներով. հակառակ դեպքում մի հատ չարիքը հարյուր նոր չարիքներ կծնե...:

«Ինձ և քո թշտալորը, բարեկամ, այս վերջին տեսակի հանցավորներն թվին ևր պատկանում: Ցես պարտավոր էյի նրան պատժել. այդ պահանջում ևր իմ արժանապատվությունը, իմ ծնողական և մարդկային պարտավորությունը: Ցես պետք է մխանգամայն վերցնեյի նրան աչխարհի յերեսից. այդպիսով դայթակղության քարը վերցրված կլիներ մեջտեղից... Ցեվ այդ պժվար գործ չեր ինձ համար: Ցեվ մի՞թե կարծում ես, թե մեծ կորուստ կունենայինք. բնավ. հայոց արքայական գահը, միամիտ յեղիր, թագուր չեր մնալ: Թշտալորը, մեկնուն և, ժառանգ չունի. նրա աթոռը, վաղ թե ուշ պիտի յուր յեղբայր Աբասը պատպատեր. ուրեմն վորքան շուտ, այնքան լավ: Գուցե այդպիսով չատ բան դևպի լավը փոխվեր: Բայց յես հիմարացա:— «Պահպանենք դեռ գահը վառնդից, մտածուլ ևյի ինքս ինձ. վատ գործը ամեն վայրկյան կարող ենք անել. պատիժը ամեն րոպե կարող ենք չափել. աշխատենք դեռ գահի փրկության համար...»:

«Ցեվ յես հետաձգեցի պատիժը: Կարծում եյի, թե դժվարին չե «ընծու փոխել դիպլոմագիր՝ զանազանություն»... կարծում եյի, թե իմ ներողամտությամբ, իմ անհիշաչարությամբ կարող եմ կանդեցնել ապստամբ սիրտը, կամ հարություն տալ մեռած ու դիակնացած խղճին: Ցեվ ահա՛ յերբ յես այս մտքերով եյի զրաղված՝ Աչուտ-Ցերկաթը կալանավորեց Սյունյաց վարազի իշխանին, իմ բարեկամին, և դրավ նրան յուր կայան բերդում:

– «Ի՞նչ ևր նրան կալանավորելու պատճառը, ասա՛, տե՛ր Մարզպետունի. անշուշտ քեզ, իբրև արքայի մտերմին, հայտնի յե այդ խորհրդավոր պատճառը:

— Իսկ քեզ մի՞թե անհայտ է։

— Ճեռ կամենում եմ, որ ինքդ առնես։

— Սյունյաց վաստակ իշխանը խառն եր արքայի կյանքի դեմ լարված դավադրության մեջ։

— Ո՞ր դավադրության։

— Այն, որ Աշոտ բռնակորը, արքայեղբայր Աբասը և նրաներ ախխաղաց Գուրգենը կազմել էին մխասին։

— Բարեկամ, խոցը մի կողմը թողնենք և խնդրով դառնանք։ Աբասը և Գուրգենը վաղուց մխացած էին Թաղավորի դեմ. այդ հայտնի չե. ինչպես և հայտնի չե դրա պատճառը — Գուրգեն Ախխազի դուստրը, Աբաս արքայեղբոր կինը, կամենում եր թագուհի դառնալ դեռ իմ դառեր կենդանության ժամանակ։ Հայտարատ ախխազուհին չեր կարողանում հաշտվել այն մտքի հետ, թե հայոց թագուհին հայ իշխանական տան աղջիկ պիտի լինի և թե ինքն արդեն դոհ պիտի լինի նրանով, որ թագավորի հարեմ եւ նրա կեդրոր ամուսինն է։ Զե, ի՞նչպես կարելի չե. նա կամենում եր անպատճառ թագուհի լինել։ Իսկ տղամարդիկ, հո դիտես, կանանց ստրուկներն են. այդ ստրկության պայմանն արդեն նախահայր Ադամն և ստորագրել։ Ճեվ տես յերիտասարդ Աբասը միանում է յուր աներոջ հետ՝ հարազատ յեղբորը դահընկեց անելու, իսկ նրան տպանելու համար։ Արքայաղնը, անշուշտ, շատ եր սիրում կինոջը. չեր կարող անկատար թողնել նրա խնդիրը։ Դրա հետ եվ միացրուլ այդ յերիտասարդի բնական փառասիրությունը, և այնուհետև կպարզվի դավադրության պատճառը։

«Փեսա ու աներ, ինչպես դիտես, իրանց զորքերով դիմեցին Ճերազավորը թագավորին բռնելու կամ տպանելու։ Այդ չհաջողվեց նրանց։ Աշոտը որ առաջ տեղեկացել եր դավադրության մասին և յուր ընտանիքով խույս տվել Ուռհք։ Դավադիրները յեկան և իրանց հետից քարին առած տեսնելով՝ Ճերազավորը ավարի առան և հեռացան։ Այսքա՞ն է թե ոչ։

— Այ՛, այդպես է։

— Ե՛. Աշոտ-Ճերկաթը հո չեր կարող այդ անարգանքը տանել. նա եվ դնաց ախխազից իշխանի յերկրներն ավերեց։ Ճերկու կողմից հրմուն անընդհատ շարունակվում եր։ Ճշմարիտ է, ամեն ճակատամարտում եվ Աշոտ թագավորը հաղթող եր հանդիսանում, բայց այդ միևնույն է. չե՞ վոր հայոց զորքերից եվ

չարունակ ջարդվում էին. մանավանդ վոր Աբաս արքայեղբայրն էլ աներոջ հետ էր և յուր զորքերն էլ հայ կաթնեներից էին։

ԵԱհա՛ այս ավերմանց ու կոտորածի առաջն առնելու համար իմ բարեկամ Վասակ իշխանը մի քնարող դարձավ յերկու պատերազմող կողմերի համար և ամեն ջանք գործ դնելով՝ հաշտեցնել թագավորը յուր յեղբոր և նրա աներոջ հետ։ Այսպե՞ս է թե վոչ։

— Այո՛, այդպես է։

— Սրտ, նույն Վասակ իշխանը, վոր ամեն նեղություն կրել, տասն անգամ մի բանակից մյուսն անցել, հորդորել, հաշտեցրել, կրքերը խաղաղացրել ու հաշտություն էր կայացրել, միթե նույն մարդը ինքը մի ուրիշ նոր դավադրության կընկերանա՞ր. այսինքն այն դավադրության, վոր Աբասն ու Գուրգենը կամենում էին կազմել Աշոտ բռնավորի ընկերակցությամբ...։

— Վո՛չ, չկնոջ է ընկերանար. չէր կարող ընկերանալ. այդպես էլ մենք ամենքս էինք մտածում։ Բայց պատասխանն ասացուցանց։ Վասակ իշխանի մոտ գնան Աշոտ բռնավորի նամակը, վորով նա շնորհակալություն էր անում իշխանին այն բանի համար, վոր նա աշխատել էր կայացնել այդ հաշտությունը ս՛ըն նպատակով, վոր միջոց տա Սահակյան իշխանին և իրան ու Աբասին հղորապես պատրաստվելու և միանգամայն Աշոտ բռնավորին հաղթահարելու. վորովհետև մինչև այն՝ իրրև քե բռնավոր զորքերը հակառակորդների անպատրաստությունից էին ոգտվում և հաղթություն տանում։

— Դե՛հ, այժմ քեզ եմ հարցնում, իշխան, կարելի՞ չեր հավատալ այդ նամակի խոհությանը։— Աշոտ բռնավորը պատերազմում էր թագավորի դեմ, վորովհետև ինքն էր կամենում յերկիրն ոխրել։ Աբասն ու Գուրգենը պատերազմում էին, պատճառը բացատրելի քե ինչո՛ւ։ Վասակ իշխանն ի՞նչ շահամտություն ուներ յուր թագավորի և քեռու հետ։ Միևնույնը չե՛ր նրա համար, քե քեռինեերից վո՞րն և թագավո՞րում, Աշո՞տը, քե՞ Աբասը։ Ձե՞ վոր նա ավելի անդրանիկ յեղբոր և որինավոր թագավորի կողմը կբռներ։

— Այդ այդպես է. բայց նամակին ինքս կարդացի։ Նա Աշոտ բռնավորի գրածն էր և խուզարկության ժամանակ Վասակ իշխանի դրապահակից հանեցին։

— Դու բոլորն ասացի՛ր. դե՛հ, այժմ ինձ լսի՛ր։— Դա մի դրպարտություն էր, ան, չարահնար դրպարտություն։ Թագա-

վորը կամենում եր առակել Թագուհուն, իմ աղջիկան. կամենում եր արատավորել Գարդմանա տան անբիծ անունը և ահա՛ նա այդ նպատակին հասնելու համար աղաչեց և հայրենասեր Վասակ իշխանի համբավը։

— Ի՞նչպես. այս խնդրում Թագուհու անունը խառը չէ գրել բնավ։

— Ձեզ համար, այո՛, միայն Վասակի դավակցության խընդիրը կար. բայց ինձ համար պատրաստված եր և մի ուրիշ խնդիր։

— Ի՞նչ։

— Թագավորը հայտնում եր ինձ, վոր իբրև թե Վասակը մտերմական հարաբերություններ ունի Թագուհու հետ...

— Ի՞նչ հարաբերություններ։

— Սիրային... տե՛ր Մարզպետունի, սիրային հարաբերություններ... Իմ աղջիկը, իմ սուրբ, անարատ Սահականույշը... լսո՞ւմ ես, իշխան։

— Այդ անկարելի չէ։

— Անկարելի՛ չէ. այնպե՞ս չէ... Բայց մի՞թե միայն անկարելի. ուրիշ խոսք չե՞ս ասում. չե՞ վոր դա մի սոսկալի, մի զարհուրելի զրպարտություն է...

— Այո՛, լսողի սարսափման արժանի։

— Ցնել նա այդ զրպարտությունը հնարեց, հասկանո՞ւմ ես. հարուցացավ հնարել. խիղճը յուր սիրտը չկիղելքեց...։ Ցնել այդ խորհուրդը վաղուց եր հղացել։ Հիշո՞ւմ ես, հենց հիշածս հաշտությունը կայանալուց յետո՝ Վասակ իշխանը դադարեց արքունիք հաճախելուց։ Կաթուղիկոսը հարցրել եր նրան, թե ինչո՛ւ Թագավորի մոտ չէ գնում. Վասակը պատասխանել եր, թե «Թագավորը կասկածում է իմ հավատարմության վրա»։ Ցնել այդ այդպես եր։ Մի որ իշխանը Թագուհու հետ միասին յելած և լինում Դվնո շուրջը զբոսանքի։ Ի դարձին Թագավորը դիտողություն է անում նրան, թե Մարիամ իշխանուհին դանդաղում է միշտ, թե դու զբոսասեր չես և թե յերբեք չես ընկերանում իրան զբոսանքների ժամանակ։ Հայտնի՛ր իմ կողմից իշխանուհուն, վոր դրա պատճառը վոչ թե քո անզբոսասիրությունն է, այլ այն, վոր ինքն ավելի զեղեցիկ չե Թագուհուց...»։

— Ցնել այդ խոսքերը կարողացի՞լ է Թագավորն ասել։

— Վասակ իշխանն ինքը պատմեց ինձ այդ բանը վշտահար սրտով։

— Ա՞յդ եր ուրեմն պատճառը, որ կաթուղիկոսը վստահութ-
թյան դիր առավ Թագավորից Վասակ իշխանի համար:

— Այո՛, իշխանն ասել եր վեհափառին, Թե «Մինչև որ Թագավորը յերդմամբ չհաստատա, Թե վստահանում է ինձ վրա երբև յուր հարազատի և հավատարիմի վրա, յես վոտքս արքունիք չեմ դնիլը: Եվ կաթուղիկոսն այդ յերդմնագիրն առավ նրանից: Իշխանն այնուհետև ազատ ու անվախ յերևմուտ եր անում Թագավորի մոտ: Բայց ահա՛ մի որ հրամայեց կալանավորել իշխանին և տանել Կայան բերդը:

Վանվով այդ լուրը, յես վրդովվեցա: Իսկույն ևեթ նամակ գրեցի նրան և հարցրի, Թե ինչո՞ւ իմ բարեկամին և յուր հավատարմությունն բանտարկել է նա: Ո՞րն է արդյոք իշխանի հանցանքը: Եվ նա, ահա՛, Թե ի՛նչ է գրում ինձ:

Այս ասելով իշխանը ծոմն զարկեց:

Ներս մտավ խոհարն մի ծառա:

— Կանչի՛ր այստեղ գրագրին, հրամայեց իշխանը:

Մի յերկու վայրկյանից ներս յնկավ գրագիրը:

— Գնա՛, հանի՛ր իմ գրասպանակից Թագավորի այն նամակը, որ կապած և սև յերիզով և ինքնագիր մոմով, և բեր ինձ:

Գրագիրը գնաց և քիչ ժամանակից յետ բերավ պատվիրած նամակը և տվավ Սևադա իշխանին:

— Այժմ դու գնա՛, հրամայեց իշխանը գրագրին և նա հեռացավ: Ա՛ռ, բա՛ց արա այս նամակը և կարդա: Ես չեմ կամենում, որ քո աչքում կասկածի նշույլ անդամ մնա, ասաց իշխանը, նամակը Մարզպետունուն տալով:

— Քո խոսքն ինձ համար ճշմարտություն է. ի՞նչ կարիք կա հին գաղտնիքները քրքրելու, պատասխանեց Մարզպետունին, չհամաձայնելով նամակը բանալ:

— Ձի՛ր, իշխան, դու Թագավորի մտերիմն ես, իմ եղ, անշուշտ, անկեղծ բարեկամը. կվայելե, որ դու խոհեմությամբ ծանոթանաս մեր Թշնամության պատճառներին, վորպեսզի չարիքներն առաջն առնելու համար՝ ավելի հիմնավոր միջոցների դիմես և ոտնտվածք չլինես հետևյալ ճանապարհ դալ՝ Սահակ Սևադայից խորհուրդ հարցնելու:

— Կկարդամ, յեթե այդպես հաճելի յե քեզ, ասաց իշխանը, և նամակի յերիզն ու կնիքը լուծելով՝ բացավ մատաղաթը:

— Բա՛ծր կարդա. յես միանգամ եվ եմ ուզում այդ խոսքերը լսել:

Իշխանը կարդաց հետևյալը.

«Աչոտ չահնչահ հայոց թագավորից՝

Գարդմանա տեր և իշխան Սահակ Սևադային վողջույն։

«Ստացա քո սիրելության դիրը, վորով խնդրում ես ինձ տեղեկացնել քեզ իմ աղդական և քո բարեկամ Սիսակյան Վասակ իշխանին կալանավորելու և կայան բերդը ղրկելու պատճառը։ Այդ պատճառը վորքան վոր ծանր և և բարյացակամ մի հոր սրտի խաղաղությունը վրդովող, դարձյալ յես ստիպված եմ հայտնելու, վորովհետև այդ խնդրում և ինձանից իմ թագուհու հայրը։ Վասակ իշխանին կալանավորեցի և մահվան պիտի դատապարտեմ յուր այն անպարժան վարքից համար, վորով նա իմ արքայական տան պատիվն արատավորեց, վաղուց ի վեր անպատշաճ հարաբերության մեջ լինելով քո դստեր և իմ ամուսնո հետ։ Նրա հանցանքը ինքս ստուգեցի անձամբ, ուստի և կալանավորել հրամայեցի՝ չարին չարով կործանելու համար։ Բայց վորպեսզի արքայական ընտանիքի պատիվը և Գարդմանա հղոր իշխանի անունը չարատավորվի աշխարհի առաջ, յես այդ իշխանին հրատարակեցի իբրև մասնակից Արասյան դավակցության և պատրաստել տվի դրա համար որինական ապացույց։ Շնորհակալ պիտի լինիս, վոր այդքան հոգատար եմ քո տոհմական անունն անաղարտ պահելու մասին։ Իսկ Վասակ իշխանի մեղսակցին և քո դստերը պատժելու իրավունքը հանձնում եմ քեզ, իբրև մի արդարադատ հոր։

Աչոտ բ. Թագավոր հայոց»։

Մարզպետունի իշխանի վրա արքայի այդ նամակը ամենածանր տագավորություն արավ։ Այն Թագավորը, վոր մինչև այդ՝ այնքան բարձր և վեհ եր յերևում յուր աչքում, կարծես մի ակնթարթում գլորվեցավ, ընկավ այդ բարձրությունից. նրա վեհությունը վոչնչացավ. նա յերևաց այժմ իբրև մի հասարակ, սինլքոր արարած, վորին կրքերը չրջում, տարուբերում են ամեն կողմ, վոր գերի և տորուն է դարձած մարդկային արժանիքը անասնական բնազդին ստորադրող ղգացմունքներին...։

Մինչև այդ, Մարզպետունի իշխանը, արդարև, ներողամիտ եր լինում յերբեմն դեպի Թագավորը՝ նրա Թուլությունը յուր բնական խառնվածքին վերագրելով։ Նա չատ ընտիր մարդիկ եր ճանաչում, վորոնք ազատ չեյին այդ արատից։ Բայց նա յերբեք չեր կարող հավատալ, թե Թագավորը յուր այդ հանցավոր Թու-

լությունը վերադարձնելու համար, կղզիները վոճրագործության, կղզապարանք անարատ և առաքինի թագուհուն, վորին ինքը, Մարզպետունի իշխանը, շատ լավ եր ճանաչում. թե՛ նա վասակ իշխանի նման հայրենասեր մարդուն զուր տեղը կկալանավորեր՝ զրպարտելով նրան չգործած հանցանքների մեջ։

— Ի՞նչ բանի վրա կես մտածում այժմ, իշխան, հարցրեց Սևադան Մարզպետունուն, տեսնելով, վոր վերջինս լռել և արդեն նամակը կարդալուց հետ։

— Վոչ մի բանի վրա։

— Այդ զարմանալի կե։

— Այո՛. կերբ սուրը խոցում և սիրտը, այն ժամանակ ուղեղը դադարում և մտածելուց... Դու սուր ցցեցիր իմ սիրտը, իշխան։

— Վշտացար, այնպես չե՞. կարևեր խոցվեցար... Ո՛, այդ դու կես, դո՛ւ, վոր մեկին թագավորի զինակիցը և հայրենիքի մի զինվորն ես. դու վշտացար այնքան, վոր ուղեղդ զադարեց մտածելուց։ Հապա կեթե զինակից ու զինվոր լինելուց զատ լինելիր նաև սիրող հայր... Ցեթե հանկարծ տեսնելիր, վոր տարիների ընթացքում մեծամեծ աշխատությանց ու զոհաբերությանց գնով սիրածդ դստեր համար ստեղծած փառքն ու կերջանկությունը ջախջախված ընկած են քո առաջ... Թե դրա հետ մեկտեղ փշրված են նաև քո լավագույն հույսերը, անդարձ կորած՝ արժիք անպարտությունը, հոդվածդ ուրախությունը, ապառավորված՝ տոհմիդ պատիվը... Ի՞նչ կանեիր դու այն ժամանակ...

— Մի՞թե ընդհանուր հայրենիքի համար զգացած վիշտը զանազանություն չե, քան թե այդ բոլորը։

— Բայց կեթե ընդհանուր հայրենիքի համար զգացածդ վշտի վրա ավելանային և ա՞յս վշտերը...

— Հարկավ, անտանելի կլինեին նրանք...

— Այո՛, իշխան. կես պակաս հայրենասեր չեյի. և հենց այդ եր պատճառը, վոր այդ անխիղճ ու զրախոս նամակն առանալուց յետ՝ ձի չնստա խելքս, չթռա գնալ Շերակ և սրի մի հարվածով չջախջախեցի մեղապարտի դլուխը. այլ կերկրորդ անգամ ապստամբության դրոշ պարզեցի. հեռատեսությամբ վրաշնելով, թե այս անգամ մի փոքր ավելի խստությամբ կվարվեմ արքունական կալվածների և ժողովրդի հետ, դուրս դրանով

վարողանամ ազդել Թաղավորի քարացած սրտի վրա, ճանապարհ բերեմ մոլորյալին և ազատեմ դահը վերահաս վտանգից։

«Ցավ ահա՛ այդ նպատակավ, ինչպես դիտես, վերցրի Գարդմանում պատրաստ ունեցած զորքս, վորոց թիվը ութ հազարի չեր հասնում և դիմեցի ուղղակի Ջորափոր։ Առաջին զործս չաղալ Կայան բերդը պաշարելն ու առնելը։ Այդտեղ վասակ իշխանի հետ միասին պահեստի մեջ գտնվում էին նաև մի քանի ազատամարտ նախարարաց կանայք։ Վասակ իշխանի հետ միասին նրանց էլ ազատեցի. և մտադիր էի չատանալ միայն այդքանով, մինչև Թաղավորը Ասիասդիայից կվերադառնար յուր զորքերով։

«Բայց Կայան բերդից հետացած զինվորները միացան մասակա դյուղերի բնակիչների հետ և իմ հանդեպ գտնվող լեռան մեջ ամրանալով սկսան իրանց ասպատակներով անհանգիստ անել իմ զորքերին։ Ստիպված հարձակվեցի դրանց վրա, և վռնվհետև դրանք տեղի չտվին, ուստի մի քանի հարյուր հոգի ջարդեցի. իսկ դյուղացիներին խրատելու համար, վոր մյուս անգամ չհամարձակվին իշխանների կռվին խառնվելու, հնձել տվի նրանց արտերը, կրակի մատնեցի և ապա հետացա Գուգարաց լեռները։

«Ահա՛ այս գործի համար եր, վոր մեր իշխաններն սկսան ինձ մեղադրել հետևեալ իրանք այդպիսի դեպքում ասանձատաոիկ ավելի . իքներ են հասցրել։

— Վո՛չ, քեղ ավելի մեղադրում էլինք նրա համար, վոր ապստամբության դրոշ էլիր պարզել այնպիսի մի ժամանակ, վոր Թաղավորը Ասիասդիայում զբաղված եր Գուգրդենի դեմ կռիվ մղելով։ Մենք արդեն հաղթել էլինք նրան։ Վրաց Աբուսերսեհը մինչդորում եր խաղաղության համար, և արդեն դաշնագիրն առորագրելու վրա էին, յերբ դուժկան հասավ և հայտնեց, թե Սահակ իշխանը կրկին ապստամբելով՝ պետության դավառներն ավերում է։ Թաղավորը և մենք, առհասարակ, մնացինք չվռնված. վոչ վոք չեր կարող հավատալ, թե դու կդրժեիր քո յերդման և բոլորիս ներկայությամբ կնքած ուխտին. բայց իրողությունն անհերքելի յեր։ Աբուսերսեհ Թաղավորն ինքը խորհուրդ ավավ արքային կիսատ թողնել Գուգրդենի հետ կատելիք գաշնադրության գործը և չատալել Գուգարք, քո ավերումներդ ազատն առնելու։

— Ցավս ապստողական դերդ եղի առել և վոչ մի ավերմունք չպիտի անեի. իզուր եր ձեր չատալը։ Բայց թե ինչո՞ւ ար-

քայլի բացակայության ժամանակ ապստամբության դրոշ պաթ-
ղեցի, դրա պատճառն այն էր, որ չէի կամենում վորևէ ընդ-
հարում ունենալ արքայական զորքերի հետ. չէի կամենում կո-
տորածի պատճառ դառնալ: Ցնս մինչև անդամ հույս ունեյի,
թե Սարնելսեհ Թադավորը կամ դուք իշխաններդ կհամոզեք թա-
գավորին բանակ չշարժել իմ դեմ, այլ խորհուրդ կտաք երան
միայնակ տեսնվել ինձ հետ և հաշտվել երբև վորդի՝ յուր հոր
հետ: Այն ժամանակ ինարիկե յես նրա հետ կխոսեյի ինչ վոր
պետք էր, և, դուցե, չահավոր ընթացք առներ դործը: Բայց
Թագավորը զայրացած հեղեղի նման հասավ Գուդարք. նրան
այլևս քաղցրությամբ դիմավորել անկարելի յեր:

— Այդ կնտում դու անարդար ես, իշխան: Առաջին՝ մենք
ամբողջ բանակը չշարժեցինք քո դեմ, այլ միայն մի քանի դըն-
դերով յեկանք...

— Այդ ինձ հայտնի չեր. ինձ թվում եր, թե դուք զորքի
մեծ մասը դարանում եք դրել:

— Առում եմ այդպես և. յեկանք միայն մի քանի դնդերով:
Ցետ յերկրորդ՝ Թագավորը բանակի յեպիսկոպոսին ուղարկեց
քեզ մոտ պատգամավոր. հաշտություն խնդրեց. ինչո՞ւ չկամե-
ցար հաշտվել, այլ ասել եյիր յեպիսկոպոսին, թե «Դուս կա՛ց
տյստեղ իմ վրանում, յես կերթամ և նրան իմ ա[illegible]ւ կտամ պա-
տառխան»:

— Այդ ճիշտ և. այդպես ասացի յեպիսկոպոսին: Բայց ին-
չո՞ւ. իմացի՛ր—այժմ, այո՛, զղջում եմ, բայց յես էլ մարդ եյի,
չկարողացա վայրկենական զայրույթս զսպել—յեպիսկոպոսն ինձ
մտնացույց արավ իմ յերդման դիրը, վոր Թագավորը կապել
եր ավել բլրի վրա՝ յուր զորքն առնվ կանդնեցրած խաչի պատ-
վանդանին: «Տե՛ս, ասում եր ինձ յեպիսկոպոսը, դու դրժում
ես այն յերդմնագրին. և յեթե չհաշտվես, աշխարհը քեզ պիտի
դատապարտե իբրև ուխտադրուժ...»: Ցետ զայրույթից կատա-
ղեցի. քո Թագավորը յուր ձեռքում ուներ իմ յերդման հետ-
գիրը և նրան տարածում եր խաչի վրա. դրանով կամենում եր
աշխարհի առաջ դատապարտել ինձ իբրև վոճրագործ, յես ի՞նչ
անեյի, ասա՛, վո՞րտեղից դտնեյի Սյունյաց յեպիսկոպոսին և
նրա ներկայությամբ Թագավորի արած յերդումները դրի անց-
նելով՝ տարածեյի իմ խաչի վրա, վորպեսզի աշխարհը տեսներ,
թե ո՞վ և ուխտադրուժը, ո՞վ և վոճրագործը: Ի՞նչ անեյի, կա-
րո՞ղ եյի նուչնիսկ այս նամակը բանալ և կարդալ նրա դրքի

և իշխաններին առաջ... Թագավորը չուշափեղկ և անսահման ապացույցներ ուներ ձեռքին. յես վոչինչ չունեյի. ինձ մնում եր դալ և սրով պատառել նրա սիրտը, վորպեսզի այնտեղից դուրս հաների յուր ինձ տված յերդման հետևորը և ցույց տայի աշխարհին. ուրիշ բան չեյի կարող անել: Մի թե արդեն անխոհեմ զայրույթի ազացույց չե՞ր այն, վոր յես վոխանակ իմ բազմաթիվ զորքն առաջ մղելու և ձեր մի քանի հարյուրից կազմած դունդն ապատապուռ ընկնելու, առանց մարդկի զորքի առաջն ընկա և միայնակ դեպի բլուրը բարձրացա: Վերևից հարձակվող զորադունդն ինձ չրջապատեց: Վորդիս թողեց ճակատը և վազեց դեպի ինձ. Նա տեսնում եր, վոր յես զայրույթից խելագարված՝ մահվան դեմ եյի դնում, յեկավ ինձ ազատելու, բայց ձեր տապուռ դունդն ավելի քաջ դտնվեցավ. Նա մեզ յերկուսիս էլ մի առնելով դերի բռնեց. իսկ վանանդացի հրոսակները կառնեցին զարմանացիների ճակատը: Ասաված, այո՛, ասաված ինքը մատնեց ինձ իմ թշնամու ձեռքը. Նա կամեցավ պատժել ինձ իմ դրծած հանցանքների համար... Այո՛, ասաված, և վոչ թե Աշոտ Թագավորն ընկճեց Սևադային:

Վինքդ ասում ես, վոր ձեր բանակը թողել եյիք Ախխալցիսյում և միայն մի քանի հարյուր հոգվով յեկել Գուգարք. ուրեմն այդ մի քանի հարյուր հոգին չեյին կարող զարմանացոց ութ հազար հոգուց կազմված բանակը չախչախել: Բայց ասաված ինձ և իմ վորդուն մատնեց ձեր ձեռքը, և զորքն անհաղթ մնալով ցրվեցավ: Այսպե՞ս ե թե վոչ:

— Այդպես ե:

— Լա՛վ, այժմ ինձ ասա՛, յերե թագավորը կամենում եր հաշտվել ինձ հետ, յերե նա վախուստ եր տալիս արյունհեղությունից, ինչո՞ւ ուրեմն չաղաչեց յուր ձեռքերը արյունով հենց այն ժամանակ, յերբ այլևս վոչ մի տեղից վտանգ չեր սպասում նրան: Նա արդեն զերի յեր վերցրել ինձ և վորդուս. Գարգմանաց զորքերը ցրվել եյին անհուվիվ վոչխարների պես. Ի՞նչն ուրեմն ստիպեց նրան կուրացնել ինձ և Գրիգորին՝ յուր հորը և յեղբորը... Մարդո՞ւ, ի՞նչ դազանի սիրտ եր ապրում նրա կրծքի տակ...

— Վախենում եր ապագա ապստամբությունից, ապագա վրեժխնդրությունից:

— Ինչո՞ւ յեր վախենում: Փառք ասատծո, հայոց Թագավորը շատ ամրոցներ ուներ. կարող եր մեզ դնել նրանցից մեկի

մեջ և պահապաններ կարդել մեղ վրա. ինչո՞ւ անպատճառ կուբացնել. ինչո՞ւ յերկու մարդու, յուր իսկ հարազատների արևը հավիտյան խավարեցնել... Ի՞նչպես կարողացավ նա դահճին այդ անազգությունն հրամանը տալ... Ցնս, դեռ վոչինչ. հասակս ա-ռած մարդ եմ. շատ բախտավոր որդի եմ տեսել. յերջանիկ ժա-մեր եմ անցրել և վերջապես հանցանքներ եմ գործել, վորոնց համար դուցե արժանի եյի պատժի. բայց իմ խեղճ դավակը, յերեխաասարդ, ծաղիկ հասակում, դեռ նորապսակ, դեռ սիրտը հուսանրավ լի, դեռ վառքի հետամուտ, ինչո՞ւ, ինչո՞ւ նրան եվ կուբացրավ. չի՞ վոր նա վո՛չ մի հանցանք, վո՛չ մի մանանակ-ցություն չուներ այն դժոխային խռովությունների մեջ, վորոնք ալեկոծում եյին իմ թշվառ և յուր դաժան սիրտը, և վորոնք մեղ միմյանց դեմ գինեցին: Միթե, վերջապես, նա ամենափոքր դո՞ւբ անդամ չուներ յուր թագուհու և ամուսնու, իմ ապա-բախտ դատեր վրա, նրա, վոր այնքան ջերմագին սիրում եր նրան...:

«Սպանում ես, վոր կասկածում եր ապագա ապստամբությա-նի՞ց... Լավ, միթե կուբրը չի՞ր կարող վրեժխնդիր լինել:

— Ձեր ապատում:

— Ձի՞ր ապատում. լա՛վ. այժմ թող տեսնեմ, թե ի՛նչ կարող և անել կուբր վրեժառուն: Գնա՛ և հայտնի՛ր թագավորիդ, վոր յես տանջվում եյի յուր հանցավորությունները լսելով: Ցերբ իմա-ցա, վոր յուր Աբաս յեղբոր և Աշոտ բռնավորի հետ հաշտվել և և նրանց հետ միասին նորին Դվինը գրավելով՝ ուրախություն տոնախմբություններ և կատարում, բորբոքվեցա չարախնդության կրակով. սիրտս «վրե՛ժ» եր դոռում, և յես լսեցի նրա ձայնին: Հրամայեցի ինձ մոտ Ցլիկ-Ամրամին. հայտնեցի նրան յուր կնոջ և թագավորի՝ միմյանց հետ ունեցած սիրահարական գաղտնիք-ները. վառեցի, բորբոքեցի նրա սրտում թունավոր նախանձի, թշնամության ու վրեժխնդրության անչինջանելի բոցը, ապըս-տամբեցրի նրան անորեն թագավորի դեմ. միացա նրա հետ և յես: Իսկ մեղ հետ կմիանան շուտով ուրիշ շատերը: Այն ժա-մանակ թող ջո թագավորը պինդ բռնե յուր դահը և տեսնե, թե կուբր վրեժառուի բազուկները կսասանե՞ն նրան, թե վոչ...:

— Այդպիսով դուք ձեր վրեժը կլուծեք միայն աղջից և վոչ թե թագավորից, վշտահար նկատեց Մարզպետունի իշխանը:

— Վա՛չ, մենք մեր վրեժը կլուծենք միմիայն թագավորից:

— Թագավորը չի հաղթահարվիլ: Ահա՛ նա գալիս և յեր-
դերացոց կատաղի զորքերով և անպատճառ կվանդե Ճլիկ-Ամրա-
մին, կջարդե նրա բոլոր զորքերը, վորոնք դժբախտաբար մի-
միայն հայերը են: Գուցե նաև կսպանե քո Դավիթ վորդուն, վոր
այժմ Ամբամին ղինակից և դաշնակից է:

— Վո՛չ, արդարադատ աստվածը չի հաջողիլ նրանց. յես
դուշակում եմ և դու կտեսնես, վոր այս անգամ, դոնե, աստու-
ծո բաղումը կպատժի նրան...

ԺԱ

ԿՈՒՅՐ ԱՉՔԸ ԿՆԵՐԵ, ԿՈՒՅՐ ՍԻՐՏԸ ՉԻ ՆԵՐԻԼ

Սևադա իշխանի խոսքերը ծանր տպավորություն արին Մարզպետունու վրա։ Զնայելով՝ որ նա բոլորապես դրդռվելով տպատնաց իշխանին, թե ահա՛ թաղավորը կդա յեղերացոց ղորքերով, կվառե Ցլիկ-Ամրամին, կամ կսպանե Դավիթ վորդուդ, և այլն, այսուամենայնիվ, Սևադայի վերջին դուշակությունը յերկյուղ պղտեց նրա սրտին։ Նա վորքան քաջ, նույնչափ և բարեպաշտ ու յերկյուղած եր. նա հավատում եր, վոր աստված լսում է կույր ծերունիներին և կատարում է, որհնությամբ կամ անեծքով, նրանց հայցած խնդիրները։ Այս պատճառով մի դաղտնի և, մինչև այն իրան անծանոթ, կասկած պաշարեց յուր սիրտը։ Նախազդացմո՞ւնք եր այս, թե՞ նախապաշարման աղդեցություն, հարկավ, նա չեր կարող վորոշել. բայց նա դիտեր, վոր թաղավորը հանցավոր է, և վոր աստված, թեպետ յերբեմն ուշ, բայց և այնպես, պատժում է հանցավորներին... Նա մտածում եր, վոր թաղավորը կարող եր հաղթվել, վոր ապստամբները կարող եյին ցրել յեղերացիներին... Ցավ այդ մի անպատվություն կլիներ հայոց արքայի համար, վոր յեկել եր յուր յիններով հետ պատերազմելու՝ ուսար ղորքերով...։ Իսկ այս անպատվության կհաջորդեյին, անշուշտ, նոր կոտորածներ, նոր ավերումներ...։

Այս մտքերը սարսափեցրին իշխանին։ Բայց նա լուռ նստած տպատում եր՝ թե ուրիշ ի՛նչ պիտի ասե Սևադան։ Նա վորոշել եր չհակառակել այլևս նրան, չդրդռել վիրավոր հողին, այլ խոնարհիլ և հետը խոսել վողջամտով։ «Գուցե այդպիսով ամոքեմ կարծրացած սիրտը, կենդանացնեմ ընդարմացած խիղճը և

նրա արդար ցասումից հայրենիքին սպառնացող վտանգը հեռացնեմ...», մտածում էր նա։

Այդ միջոցին ներս մտավ ծառաներից մինը և կուռ բերավ հյուրին՝ լվացվելու համար։ Մարդպետունին ակնարկեց նրան՝ նախ Սևադա իշխանին մատուցանել կոնքը, վորովհետև իրան, իբրև տարիքով նրանից փոքրին, վայել չէր առաջ լվացվել։

Սևադան, վորի ուշադրությունից վոչինչ չէր վրիպում, ժպտալով նկատեց.

— Զարմանում եմ, վոր Թագավորը մանկությունից սկսած մնծացել և քեզ հետ, բայց պատշաճից որևնքները հարդելու մասին վոչինչ չէ սովորել քեզանից։

— Բայց նա ունի և ուրիշ շատ առավելություններ, վորոնց համար կարժէր ներել յուր փոքրիկ թերությունները... մեղմությամբ պատասխանեց Մարդպետունին։

Երբ նրանք լվացվեցան, յերկու ուրիշ ծառաներ ներս բերին ընթրիքը, վոր պատրաստված էր յերկու արծաթյա դրվագազարդ խաների մեջ, վորոնցից մինը դրին Մարդպետունու և մյուսը Սևադայի առաջ։

Մանկահասակ ծառաներից մինը չոքեց Սևադայի հանդեպ, վորպեսզի ոգնե նրան կերակուր առնելու. իսկ մյուսը կանդնած և արծաթե սրվակը ձեռին դինի յեր մատուցանում ինչպես յուր տիրոջը, նույնպես և հյուրին։

Բայց Մարդպետունին հուզված էր և դրեթե վոչինչ չէր ճաշակում։ Սևադան այդ իմացավ մատուցակի մի պատասխանից և ժպտալով ասաց.

— Տեսնո՞ւմ ես, իշխան, հասարակ ժողովուրդն ավելի խելոք և վարվում։ Մի ժամ առաջ ասացի, թե նա յուր տանը մըտնող հյուրի դաշտյան պատճառները չի քննում, մինչև վոր նրան կուշտ չի կերակրում։ Բայց յես չկամեցա նրանց նմանվել։ «Մենք ոտարներ չենք, ասացի. տարօրինակ կյիներ, յեթե մի վայրկյան առաջ չցանկանայինք տեղեկություններ առնել իրարից՝ մեզ հետաքրքրող խնդիրների մասին...»։ Այժմ տեսնում եմ, վոր սխալվել եմ։ Եթե յես քո դաշտյան պատճառը հարցրած և քեզ պատասխաններ տված չլինեյի, այժմ դու սխորժատնոք կերակուր կլսայեյիր իմ տանը։

— Այդպես և, իշխան, կեղծել չեմ կարող, պատասխաններ Մարդպետունին. լավ չէ, վոր մենք առհասարակ չենք հետևում մեր վորճված պատերի խրատներին։

— Այո՛, համաձայն եմ քեզ հետ. այդ խրատները ուրբ խրատներ են. չերթանք չսխտի մոռանանք նրանց:

— Բայց մենք մոռանում ենք հենց ամենից կարևորները: Այդ խրատներից մինն այն է, որ ասում է՝ «Զուգություն և մայր բարյաց, անզուգություն՝ ծնող չարյաց...»:

Սևադան մի վայրկյան լռեց և ապա ժպտալով դարձավ խոսակցին:

— Դու ինձ կշտամբում ես, տեր Մարզպետունի, և իրավունք ունես: Բայց յես խնդրում եմ, որ ընթրիքդ վայելես. այդ ինձ ավելի կուրախացնե, քան թե «զուգություններից» առաջացող բարիքները, որոնց շատ անգամ մենք չենք կարողանում բուն չարիքներից զանազանել...:

Իշխանը հիշեց, որ վորոշել եր չհակառակել, ուստի լռեց և սկսավ ուտել: Բայց նրա վրա, արդարև, ծանր ազդեցություն եր անում Սևադա իշխանի՝ ծառայի ոգևորությամբ կերակրվելը: Միայն այդ տեսարանին ներկա չլինելու համար նա կցանկանար, որ յերրեք մտած չլիներ Գարդման: Չե՞ որ նա տեսել եր այդ իշխանին առողջ ժամանակ, յերբ նա ճեմում եր յուր առաջ ինչպես մի հսկա, կրակոտ աչքերով, հպարտ նայվածքով, դեմքի վրա արտահայտությամբ... Իսկ ա՛յժմ... Այժմ կծկված եր նա տախտի մի անկյունում, ինչպես զառամյալ ծերուկ, նիհարած, գալկացած, և միայն հոգին եր, որ չեր ճնշվում նրա մեջ մարմնո կրած զրկանքներից:

Յերբ ընթրիքը վերջացավ, Մարզպետունին հարցրեց, թե ինչո՞ւ Գրիգոր իշխանը չի կամենում գալ իրանց մոտ:

— Գրիգորը նուլնպես Ամրամի հետ է, պատասխանեց Սևադան: Դավիթ վորդիս առաջնորդում է աղվանից գնդերին, իսկ Գրիգորը՝ զորդմանացիներին:

— Առաջնորդում է զորդմանացիների՞ն...զարմացած հարցրեց Մարզպետունին:

— Այո՛, առաջնորդում է: Մի՞թե այդ խոսքը զարմացնում է քեզ: Դու անչուշտ մտածում ես, թե ի՞նչպես կարող է կույրը առաջնորդել. այնպես չի՞: Բայց իմ զորքերը պատերազմի համար ուրիշ առաջնորդներ ունին: Գրիգորի ներկայությունն անհրաժեշտ է բանակում նրա համար, որ զորդմանացիք ամեն րոպե աչքի առաջ ունենան իրանց կույր իշխանին և սրտերի մեջ վառ պահեն վրեժխնդրության կրակը: Վոչ մի զորավարի խրախուսը այնքան չի զորացնում իմ զորքերի քաջությունը, որ-

քան իմ վորդվո կուրությունը...։ Նրանք տիրասեր են և չեն հանդստանալ, մինչև վոր իմ և նրա վրեժը չառնեն թագավորից։

Մարզպետունին զարմանում եր, վոր Սևադան բանում եր նրա առաջ յուր սիրտն անկեղծորեն, հայտնում եր նրան, մինչև անգամ, յուր նախահոդակ դիտավորությունները. և այդ անում եր առանց քաշվելու կամ նույնիսկ վախենալու, թե ինչը, Մարզպետունին, իբրև արքայի հավատարիմ ու դինակից, կարող է խոչընդոտ լինել իրան՝ յուր նպատակները իրագործելու։ Սևադայի այս վարմունքն ավելի ևս յերկյուղ եր ազդում Մարզպետունու սրտին։

— Ցեվ այդպես. դու ուրեմն հոգացել ես, վոր զարդմանացոց վրեժխնդրությունը լինի անչիջանելի, իսկ ապստամբությունը՝ համաճարակ և կործանի՛չ, հարցրեց իշխանը հուսահատ ձայնով։

— Այո՛, տեր Մարզպետունի, ուրիշ կերպ վարվել չեյի կարող. անիծի՛ր ինձ, յեթե կամենում ես, բայց դիտացի՛ր, վոր յերբ բաժակը լցվում է, այն ժամանակ այլևս անկարելի յե ավելացնել նրա վրա ուրիշ մի քանի կաթիլ և պահանջել, վոր նա չթափվի...։

Մարզպետունին զղաց, վոր հասկ է արդեն ժամանակը՝ գործադրել այն դենքերը, վորոնցով միայն հնարավոր եր անողոք իշխանի սիրտն ամոքել.— այդ դենքերը, յուր խնդիրներն ու աղաչանքներն եյին։ Այդպիսի դենքերով, իհարկե, նա չեր հայցել ոտարից, նույնիսկ հայրենիքի փրկությունը, բայց մի ներքին խոռվություն դադարեցնելու համար՝ նա չեր քաշվում աղաչել հարաղատին, վորովհետև դրանով նա չպիտի նվաստացներ իրան, այլ պիտի բարձրացներ նույնիսկ Սևադայի աչքում։ Այդ պատճառով ասաց.

— Ցեթե յես ծուռը չոգեյի քո առաջ, Սևադա իշխան, համբուրելի քո վոտքերը և աղաչեյի, վոր խնայես դու յեղբարցդ ու վորդկերանցդ արյունը... արդելես այն կոտորածը, վոր մի որվա մեջ անթիվ ընտանիքներ պիտի կործանե, բյուրավոր մանուկներ պիտի վորբացնե, կանայք ու հարսունք պիտի այրիացնե...Ցեթե հիշեցնեյի քեզ նախ քրիստոնեյի և ապա հայ մարդու սրբազան պարտքը, վոր ե՝ չարին չարյավ չհատուցանել և հայրենիքը կործանելու դնով՝ անձնական վրեժխնդրությունը չհագեցնել... ի՞նչ կանեյիր դու, Սևադա իշխան, մի՞թե անողոք կմնայիր իմ աղաչանքների, իմ արտասուքների առաջ...։

— Վո՛չ մի խոսք այդ մասին, տեր Մարղպետունի։ Ինքնիշխանությունն ուրիշ կերպ է ստեղծել մարդուն, իսկ մենք այլ կերպ ենք հասկանում նրան։ Ազատամարտ սիրտը չի հնազանդվել ուղղի հրամանին. իղուր ենք մենք այդ մասին խրատներ կարդում մեզ և իղուր ել քրիստոնյաներ անվանում. մենք մեր կրքերի հպատակներն ենք և վոչ թե Քրիստոսի աշակերտներ։ Քրիստոնյա մարդ չկա աշխարհում։ Քրիստոսի պատվերը կատարում են միայն նրանք, վորոնք ղրկանք չեն կրել ապերախտ ընկերից, կամ չեթե կրել են, չեն կարողանում ջանկ ընդ ական և առատաձեռնությամբ վոխարինել։ Բայց նրանք, վորոնք ուժ ունեն վոխարինելու՝ վոխարինում են ղրկանքը. և այդ ավելի քնաքան է, քան քրիստոնեաբար ներելը։

— Իսկ նրա՞նք, վորոնք ուժ ունեն վրեժխնդիր լինելու և առկայն ներում են...

— Չեթե կան այդպիսի մարդիկ, ապա նրանք գերբնական արարածներ, ճիշտ Քրիստոսի աշակերտներ են, բայց ես այդպիսիներին չեմ ճանաչում։

— Դու յեղի՛ր նրանցից մինը, Սևադա իշխան. մի՞թե քո սիրտն ավելի չի հպարտանալ այն ժամանակ, յերբ մտածես, թե կարող եյիր վրեժխնդիր լինել և առկայն ներեցիր, քան այն ժամանակ, յերբ վրեժխնդիր լինելով՝ չուրջդ ավեր և սրածություն սիտես։ Ով վոր դիտե, թե վո՛րն է բարին և լավագույնը և առկայն դործում է հակառակը, նա մի չարագործ է։ Ինչուշա Գարդմանա տերը չի ցանկանալ, վոր մեղանից մինը համարձակվի նրան այդ անունը տալ։

— Գարդմանա տերը, դժբախտաբար, մի հասարակ մարդ է. քնությունը նրա կրծքի տակ դրել է այնպիսի մի սիրտ, վորպիսին ունին և ուրիշները. նա չի կարող ղրկել այն, ինչ վոր չեն ղրկում յուր նմանները։

— Վո՛չ, Գարդմանա տերը մի սինկլոր կամ դեղջուկ չի, վոր չճանաչե առաքինությունը. նա դիտե, թե վորքան քաղցր և ներելն և դիտի ներե անշուշտ։ Ես խնդրում եմ քեղանից այդ չնորհը այն մայրերի և կանանց բերանից, վորոնց վորդիներն ու ամուսինները դիտի զոհվեն քո վրեժխնդրությանը։

— Տե՛ր Մարղպետունի, դու ինձ դինաթափ ես անում. քո խոսքերը ճնշում են իմ սիրտը, վորովհետև դու նատած ես այժմ իմ առաջ և ես լսում եմ քո կենդանի բարբառը։ Բայց յերբ դու հեռանաս և ես մնամ միայնակ, յերբ այս ահագին սրահի մեջ

չղջիկները դան ինձ ընկերանալու, երբ առավոտյան արևը բերի ինձ նույն խավարը՝ ինչ ավր բերել եր գիշերը, երբ յերկու քայլ փոխելու համար կարոտեմ իմ ծառաների չնորհին, երբ տեղիչանոք տենչամ, բայց չկարողանամ լսել իմ լծակից մխիթարական մի խոսքը և մտածեմ, ավր քո Թաղավորի անողորմ հրամանը դերեզման տարավ նրան՝ այն ամուսնասեր կնոջը, այն ավրդիսեր ծնողին... Ցերբ լսեմ իմ Քշվառ հարսի տխուր յերգերը, կամ կույր ամուսնո սև բախտը ըացող նրա վողբերը... յերբ Գրիգորի վորդին, փոքրիկ Սևադան, դա հարյուրերորդ անգամ ինձ հարցնելու Քե՝ «Պապիկ, դու ծերացար, ասուլած քեզ կուբացրեց. խակ իմ հայրը ինչո՞ւ համար և կույր»: Աստ՛, տե՛ր Մարդկտուն, յերբ այս բոլորը դան և աղմկեն ուղեղս, խռովեն հոգիս, յերբ սիրտս անընդհատ դռռա՝ վրե՛ժ, վրե՛ժ անդլամին...», ի՞նչ անեմ յես այն ժամանակ...

— Ինչ անես այն ժամանա՞կ:

— Ա՛յ, ասա՛, յես ինքս կամենում եմ ինձ հաղթահարել:

— Ի՞նչ արավ Սմբատ Թաղավորը, յերբ յուր աչխարհի ավերումը տեսնելով՝ իջավ Կապույտ բերդից և յուր անձը մատնեց Թշնամուն. ի՞նչ արավ, յերբ դահիճները յուր Թաչիկնակին առնելով՝ վարոցներով բերանը խրեցին. յերբ կղակին գելարաններ դնելով՝ չվանով պարանոցը ալրկեցին. յերբ ծանր բեռներ դլխին Թաւիելով՝ տանջակ հոգի վրան նատեցին. յերբ վերջապես դյուցաղնի չունչը հատեցնել չկարողանալով՝ նրա անդամներն սկսան հոշոտել և վերջը խաչի վրա տարածել...

Սևադան լուռ եր:

— Վոչինչ չարավ. նա ասաց. «Տե՛ր, ընդունի՛ր այս դոհը, ավր բերում եմ իմ աղդի համար, և նրա փոխարեն՝ վերկի՛ր իմ ժողովուրդը պատուհասից...»: Նա ասաց՝ «Վավ և մնդ, դի այր մի մեռանիցի ի վերա ժողովրդյանս և մի՛ ամենայն աղդս կորիցե...», և հոժարությամբ հանձն առավ նահատակությունը: Դու ել, իշխան, ընդունի՛ր, Թե չարագործ հազարացու մինն ե քեզ կուբացրել և այն ժամանակ անտրտունջ կարող ես կրկնել նույն խոսքերը, յերբ տխուր միայնությունը, ցերեկվա խավարը, սիրեցյալ ամուսնուդ հիշատակը, հարսիդ վողբերը և փոքրիկ Սևադայի Թոթովանքը կդան քո սիրտը և հոդին վրդովելու...: Հազարացի դաղաններին աղաչել, համոդել անկարելի եր, նրանց հոդվո ծարավը արյունն եր դովացնում, բայց հայ իշխանին ասված այդ հոդին չե տվել. ուրեմն նա պիտի լսե յու-

խղճի ձայնին, պիտի լսե իմ աղաչանքին և հավատա, որ նույն իսկ իմ բնությամբ խոսում և յուր հետ աղքի ամեն մի թշվառացող անդամ։

Սևադան լուռ եր մի քանի վայրկյան. հանկարծ նա գլուխը բարձրացնելով հարցրեց.

— Ի՞նչ և քո պահանջն ինձանից, Գևորդ իշխան։

— Այն, որ հեռացնես Ամրամից քո դուդ վորդիներին և հետ կանչես Ուռիքից թե՛ Ադոմանից և թե՛ Գարդմանա դնդերը։

Սևադան կրկին գլուխը կախեց և սկսավ մտածել։ Սենյակում մի ուռ ժամանակ լռություն տիրեց։

Բայց Գևորդ իշխանն զգում եր արդեն, որ յուր խոսքերը ցանկալի ազդեցություն արին Սևադայի վրա, ուստի արագ-արագ ավելացրեց եր նրա համաձայնության։

Ճիվ ահա՛, վերջացրեց, Սևադան խոսեց.

— Դու ինձ համոզեցիր, ասեր Մարզպետունի. իմ մեջ չարժեցիր նախանձավորության զգացում. յես չեմ կամենում, որ դու հայրենասիրությամբ գերազանցես ինձ։ Թո՛ղ այդպես լինի. յես թողնում եմ վրեժխնդրությունը... Բայց բոնկած ազատամարտությունը խաղաղելու համար կա և՛ մի ուրիշ արդելք, որ յես բառնալ չեմ կարող. այդ աշխատությունը դու պիտի հանձն առնես։

— Ամենայն ուրախությամբ. աշխատությունից յես չեմ վախչում, միայն թե ասա՛, վո՛րն և արդելքը։

— Ճիս իմ վորդիներին կհամոզեմ և կվերադարձնեմ իրանց զորքերով. բայց Ճլիկ-Ամրամին համոզել չեմ կարող, վորովհետև ինքս եմ թշնամության կրակը վառել նրա սրտում. այժմ ի՞նչպես հակառակ խորհուրդ տամ նրան։

— Այդ նեղությունը յես հանձն կառնեմ, ասաց Մարզպետունին։

— Շատ դեղեցիկ. բայց խնացած յեղիր, որ մինչև Ամրամը չհամոզվի յես կանդնել յուր մտադրությունից, յես իմ զորքերը չեմ բաժանիլ նրանից։ Վորովհետև խոսք եմ տվել աջակցել նրան ամեն դեպքում, ուրեմն և իմ խոսքին դրժել չեմ կարող։ Այժմ դու դնա՛ Ամրամի մոտ. աշխատի՛ր համոզել նրան, որ հնազանդե յուր թագավորին։ Եթե կհաջողես ձեռնարկությանդ մեջ, սուրհանդակ դրկիր ինձ և յես իսկույն հարկ եղած հրահանգները կտամ իմ վորդվոց, որ հեռանան Ուռիքից իրանց զորքերով։ Իսկ եթե չես հաջողիլ, այն ժամանակ խնա-

ցիր, վոր ասուված չի կամենում անցնել փորձությանը բաժակը, և ուրեմն մեղանից մեկը պիտի դատարկե նրան...:

Մարզպետունի իշխանը ասստիկ ուրախացավ և յուր չնորհակալությունը Սևադային հայտնելու համար առավ նրա ձեռը և համբուրեց։ Իշխանի կարծիքով ամենամեծ դժվարությունն արդեն բարձվել եր։ Սևադան, վոր ամենքից ճանաչվուած եր իբր անողոքելի մի քարաժայռ, ահա՛, համողվել եր. ի՞նչ դժվարություն կար ուրեմն Ցլիկ-Ամրամին համոզելու. մի մարդու, վոր համառություն չուներ և վոր ի բնե ստեղծված եր բարի սրտով։

Այս մտածմունքով հեռացավ Սևադայից իշխանը, և դնաց հանգստանալու դղյակի լավագույն քնարաններից մինում, ուր առաջնորդեց նրան իշխանի սենեկապետը։

Փափուկ անկողինը և չրջապատող լռությունը չուտով քնությունն բերին իշխանի հոգնած անդամներին և անուշարար քունը նրա աչքերը փակեց։

Լույսը դեռ նոր եր բացվում, վոր Մարզպետունի իշխանը հաղնվելով՝ իրավ դղյակի բակը և ծառաներից մինին զարթնեցնելով՝ հրամայեց յուր ձին թամբել։ Ցեղանակը ցուրտ եր և յերկինքն ամպամած։ Աշնանային յեղյամը ծածկել եր դետինը և հիլեցնում եր մոտալուտ ձմեռը։ Ծառան, վոր նոր եր տաք անկողնից յելել, ցրտե աղեղուքյունից կծկված, դժվարանում եր շտապով ավարտել գործը։ Իշխանը համբերել չկարողացավ, վայրկյաններըը թանկ նկին նրա համար.—«Այդպե՞ս են գործ կատարում այստեղ», կշտամբեց նա ծառային և նժույգին առավ ձեռքով՝ արագ-արագ ամրացրեց թամբի կապերը։

Այնուհետև նորից բարձրանալով վերին դատիկոնը՝ զարթեցրեց Սևադայի բարեպաշտին, իմանալու համար, թե արդյոք կտրո՞ղ և տեսնել իշխանին։ Նրանց խոսակցության ձայնն առավ սենեկապետը և դուրս յեկավ մի ջանքը։ Նա զարմացավ Գևորդ իշխանին այդպես վաղ այդտեղ տեսնելով։

— Ի՞նչ եք հրամայում, իշխան, հարցրեց նա Մարզպետունուն։

— Եթե կարող ես զարթեցնել իշխանին, հայտնի՛ր նրան, վոր յես կամենում եմ դնալ և կուզեի տեսնել իրան, ասաց իշխանը։

Սենեկապետը ներս մտավ և մի քանի վայրկենից վերադառնալով՝ հայտնեց, վոր իշխանն ազատում է իրան։

Մարդպետունին հետևելով սենեկապետին և մի յերկու վոք-
րիկ խուցեր անցնելով՝ մտավ Սևադայի ննջարանը և սաղավար-
տը հանելով մոտեցավ իշխանի մահճակալին։

Սենյակը լուսավորում եր տակավին փոքրիկ արծաթյա կան-
թեղը. իսկ իշխանը նստած եր մահճի մեջ դիշերային լողիկով։

— Ինչո՞ւ այսպես վաղ, սիրելի՛ իշխան, հարցրեց Սևադան։

— Կամենում եմ այսոր հանգել Ամրամի բանակը. ժա-
մանակը թանկ է, պետք է շտապել։

— Բայց դու դիտե՞ս, թե վո՛րտեղ է նա բանակած։

— Ձերը չըլնում եյի Ուտիքում, ինձ ասեցին, վոր նա ան-
ցել է Աղստև և դանվում է Տավուշ բերդի մոտ։ Իսկ այժմ վո՛ր-
տեղ լինելը չդիտեմ. յևկա, վոր այդ մասին տեղեկություն առ-
նեմ քեղանից։

— Ձերկու որ առաջ մեր դնդերը բանակած եյին Սաղամի ա-
փին. իսկ Ամրամը դանվում եր դեռ Տավուշի մոտ։ Ձեթե թա-
գավորի գալստյան մասին լուր առած լինեին, ուրեմն բանակ-
ները կմիացնեին... Գնա՛ և այդ կողմերը կպատահես նրանց։

— Իսկ դու չե՞ս կարող հայտնել, թե վո՛րտեղ պիտի միա-
նան բանակները, հարցրեց իշխանը ժպտալով։

— Վո՛չ. յես իրավունք չունիմ հայտնելու։ Ցնվ դու, իշ-
խան, այդ չպիտի պահանջես ինձանից։ Դու ինձ համոդեցիր և
յես ավի քեղ իմ համաձայնությունը՝ հաշտվել թագավորի հետ։
Այդ յես կարող եյի անել։ Գնա՛ այժմ համոզիր Ցլիկ-Ամրամին.
յեթե կհաջողես, լավ. յեթե վո՛չ, պատերազմը նրա կողմից ան-
խուսափելի յե. ուրեմն և բանակի դաղտնիքը քեղ բանալն՝ ան-
կարելի։

— Շատ լավ։ Թո՛ղ այդպես լինի։ Շնորհակալ եմ արդեն
քո համաձայնության համար։ Այժմ տո՛ւր ինձ քո որհնությու-
նը և յես կերթամ։ Այդ որհնությունը կհաջողե իմ ճանապարհը։

— Աստվա՛ծ թող որհնե այդ ճանապարհը։ Դու խաղաղու-
թյան և հաշտության միջնորդ ես, անկարելի յե, վոր նախա-
խնամությունը չհաջողե քեղ։ Բայց յեթե նա կանխավ վորոշել
և պատժել հանցավորին...

— Ցնս կանեմ այն, ինչ վոր հրամայում է ինձ իմ պարտքը
և հայրենիքը. իսկ ատածո կամքը... մենք միայն կարող ենք
որհնել։

Այս ասելով իշխանը մոտեցավ Սևադային, գրկեց նրան և
համբուրելով՝ հեռացավ։

Մի քանորդ ժամից նա վահրամ բերդակալի մոտ էր։

Թանձր ու յերկար այծենակաճեի մեջ փաթաթված և խոշոր գլուխը պողպատե գլխանոցով ծածկած՝ անցուդարձ էր անում բերդակալը յուր դիտանոցի առաջ, յերբ մոտեցավ նրան Մարզպետունին։

— *Գիտեմ յի, վոր այդպես վաղ պիտի բաժանվիս իշխանից, ուստի լուսածագին դուրս յեկա տանից, վորպեսզի հրամայեմ ամրոցի դռները բանալու, ասաց բերդակալը իշխանին և մոտենալով նրան, հետաքրքրությամբ հարցրեց, թե արդյոք կարողացա՞վ անծանոթ մնալ Սևադայից, կամ թե տեղեկացա՞վ ցանկացած դաղտնիքներին։*

Իշխանը պատմեց նրան համառոտ ինչ վոր պատահել էր իրան, կամ ինչ վոր խոսել էր Սևադայի հետ և լսել նրանից, ծածկելով, իհարկե, այն ամենը, ինչ վոր ապստամբությունը դրդող գլխավորների դժոխային նպատակներին ու սիրային դաղտնիքներին էր վերաբերում։ Այդ պատճառների հետ, իշխանի կարծիքով, անկարելի յեր ծանոթացնել պատաքին պաշտոնյաններին։

Բարեսիրտ վահրամը գլխով՝ տեսնելով, վոր ինքն այդքան մոտիկ ազդելով Սևադային, չեր կարողացել նրա դաղտնիքները ճանաչել, և դեռ մինչև այդ րոպեն չգիտեր, թե Ցլիկ-Սմբատին ապստամբեցնողը Սևադան է յեղել։

Իշխանը կամեցավ ոդուտ քաղել այդ բանից՝ բերդակալի մտերմությունն ավելի վաստակելու համար։

— *Ի՞նչ ես կարծում, բարեկամ, ասաց նրան ծիծաղելով, յեթե Սևադան ճանաչած չլիներ քեզ, մի՞թե թույլ կտար, վոր դու մնայիր այստեղ՝ այդ պաշտոնում։*

— *Ի՞նչ. մի՞թե նա գիտե, վոր յես դեռ հավատարիմ եմ Թագավորին։*

— *Նա ամեն բան գիտե. բայց նա ճանաչում է քեզ։*

— *Ի՞նչպես թե ճանաչում է ինձ։*

— *Նա գիտե, վոր դու նրան վնասել չես կարող։*

— *Ի՞նչպես թե չեմ կարող. քաջությունն է իմ մեջ պակաս, թե՞ բազուկներս են ծերությունից թուլացել, ջերմությամբ հարցրեց բերդակալը։*

— *Նա մինչև անդամ համոզված է, վոր դու Թագավորիդ պաշտպանել չես կարող, յեթե հարկը պահանջե, հարեց Մարզպետունին, կամենալով զրոել բերդակալի ինքնասիրությունը։*

— Ցնվ նա այդ մասին խոսո՞ց քեզ հետ, հուզված հարցրեց Վահրամը։

— Վո՛չ, հայտնապես վոչինչ չասաց...

— Հայտնապես վոչինչ չասա՞ց, հասկանում եմ. բայց տկնարկութիւնից դու այդ դուշակեցիր... Լա՛վ. յես կստիպեմ այդ մարդուն հարցնել ինձ... Գևորգ իշխան, յես այժմ քեզ հետ եմ, դիմից նա Մարզպետունուն վճռական յեղանակով։ Գնա՛, աշխատի՛ր, վոր նախ հաշտութիւնը կայանա. իսկ յեթե այդ չի հաջողվի, անմիջապես սուրհանդակ ղրկիր ինձ. հետևյալ որը յես ք֊ո մոտ կլինեմ։ Այս սուրը ճանապարհ կբանա իմ թագավորի համար ինչպես Ուտիքը, նույնպես և Գարդմանը նորից դրավելու։ Այս ասելու ժամանակ նա բացավ լայնադուռ այծենիական և դրնդ ձևռքը դրավ վազակավորի յերեսակալի վրա։

Մարզպետունին ուրախացավ յուր սրտում, վոր կարողացավ հուզել Վահրամին և այդ խոստումն առնել նրանից։ Թագավորը, արդարև, կարիք ուներ այդ միջոցին Վահրամի նման անձանց աջակցութեան։ Նա այն քաջերի թվին եր պատկանում, վորոնք սիրում ղղուշութեամբ են մտածում վտանգին, բայց միանգամ մտածելուց յետո՝ այլևս չեն վախենում նրանից։

— Տո՛ւր ինձ ք֊ո ձևռը և յերդվի՛ր, վոր ա՛ւր վոր եկ լինեմ՝ պիտի դաս իմ կոչին, թեկուզ մահվան դիմավորելու համար, ասաց Մարզպետունին, յուր թափանցող հայացքը սևեռելով բերդակալի աչքերին։

— Յերդվում եմ Լուսավորչի սուրբ աջովը... հարեց խնկուն Վահրամը և ձևռքը տվավ Մարզպետունուն։

Վերջինս սեղմեց նրան ջերմութեամբ և ասաց.

— Շնորհակալ եմ, Վահրամ իշխան. մինչև այժմ յես իրավունք ունեյի միայն մի անձի վրա, վորին կարող եյի զոհել զահի և հայրենիքի սերույն։ Այս վայրկյանից ուրեմն իրավունք եմ ստանում յերկու անձի վրա...

— Այո՛, Վահրամ սեպուհը նույնպես քեզ և պատկանում. զոհի՛ր նրան, յերբ հարկը կպահանջե, միայն թե հայրենիքի փրկութեան սեղանի վրա։

— Ե՛ս ուրիշ սեղան չեմ ճանաչում. և ահա՛ այս վայրկյանից ք֊ո ձևռքն եմ հանձնում իմ հույսը և հավատը...։

Այս ասելով իշխանը ղրկեց բերդակալին, համբուրեց նրան ջերմութեամբ և մի քանի ուրիշ պատվերներ ել տալով՝ աշտանակեց յուր նժույգը և սրարշավ դուրս յեկավ ամրոցից։

Իշխանի թիկնապահը, վոր Գարդմանն ավանում անախորժ նորություններ եր լսել, և այդ պատճառով դրնեթեն ամբողջ դիշերն անցրել եր անհանգստության մեջ, վաղ առավոտվանից յելնելով՝ ուղղվեցավ դնալի ամրոցը։ Նա աշխատում եր մի վայրկյան առաջ հասնել այնտեղ, վախենալով՝ թե դուցե յուր տիրոջը մի վտանգ հասնի ապստամբ իշխանից։

Բայց վո՛րքան մեծ յեղավ նրա զարմանքն ու ուրախությունը, յերբ դեռ Գարդմանա դնտակը չանցած՝ տեսավ իշխանին, վոր ինքնում եր ամրոցի զառիվայրից։

— Ո՞ւր և ինչո՞ւ այդպես վաղ, Ցեղնիկ, հարցրեց իշխանը յուր թիկնապահին, յերբ նրանք մոտեցան միմյանց։

— Տե՛ր իմ, յեթե մուքով կարողանայի մտնել ամրոցը, նույնիսկ այս դիշեր կդայի քեզ մոտ, պատասխանեց թիկնապահը. բայց դիտեյի, վոր Գարդմանը անմատչելի յե ծակամուտներին համար։

— Ի՞նչ կա, ինչո՞ւ եյիր չատպում։

— Նորություններ իմացա, դալիս եյի քեզ մոտ. վախենում եյի, թե դուցե մի վտանգ հասնի քեզ իշխանից։

— Ցես, վտանգ աստուծո, ահա՛ վողջ առողջ նստած եմ Սևվուկիս վրա. բայց դու ի՞նչ նորություններ լսեցիր։

— Անախորժ նորություններ։ Իմ հյուրընկալ քահանան վոչինչ չեր կամենում ասել։

— Հետո՛։

— Բոլոր վողերս նրա տանը թողեցի։ Մի մասը աղահամբույր տվի իրան, մի մասը տիրուհուն ընծայեցի. մնացյալն ել աղջկան տվի իրրև վոտնվելի նվեր։

— Իսկ աղջիկը դեղեցի՞կ եր։

— Ո՛հ, տեր իմ, անչուշտ ուրախ և սիրուդ, վոր Ցեղնիկի հետ կատակ ես անում. և իրավ շատ դեղեցիկ եր. սևաչյա, կարմրաթուշիկ, յերկայնահեր...

— Ինչո՞ւ չընդունեցար։

— Հա՛, քահանային կաշառելո՞ւ համար... Բայց յես նրան ուրիշ բանով կաշառեցի. խոստացա, թե ազատելեմ իշխանին, վոր քեզ տեղափոխել տա Դվինը։ Զարմանալի յե. այդ դեղջուկն ել և մայրաքաղաքում քահանայություն անել փափաքում։

— Դու չեյի՞ր ուրախանալ, յեթե քեզ հարյուրապետ կարդեյինք։

— Ինչո՞ւ չե, բայց յես կարող եյի առյուծի պես կռվել։

— Եվ, քահանան էլ կարող է մկրտել, պսակել, թաղել մայրաքաղաքում էլ մարդիկ այնպես են ծնվում ու մեռնում, ինչպես և դյուղերում։

— Այդպես է, տեր։

— Բայց դու ի՞նչ իմացար քահանայից։

— Արքայից ապատամբած են նաև աղվանցիք ու շարժմանացիք։ Եվ այդ արել է Սևադան։ Տեր-Հայրը պատմեց, թե «Մի որ մեր դյուղապետն յեկավ և իշխանի հրամանով հրավիրեց բոլոր դյուղացիներին յեկեղեցվո բակը և յերդվեցրավ նրանց զենք առնել Թաղավորի դեմ։ Բոլորը յերդվեցան։ Մյուս դյուղերում ու ավաններում էլ նույնն են արել։ Ձերնք որվան ընթացքում, ասում եր տեր-Հայրը, չորս հազար մարդ է հավաքվել Դավիթ իշխանի դրոշակի տակ։ Այդ բանակով նա գնացել է Ուտիք։ Իսկ դյուղերում մնացող ժողովուրդը յերդվել է՝ չոր հաց անդամ չտալ արքայական զորքին։

— Այդ բոլոր յես դիտեմ, փողերդ ի դուր ես վատնել, ասաց իշխանը։ Ասա հաղորդելով նրան մի քանի կարևոր նորություններ, հարցրեց։

— Ի՞նչ իմացար դու բանակի շարժման մասին, արդյոք ապատամբները մինչև ո՞ւր պիտի դիմավորեն Թաղավորին, կամ զարմանացիք վո՞րտեղ պիտի միանան ուտիացիներին։

— Այդ մասին վոչինչ չիմացա, չնայելով, վոր հենց այդ նպատակով յերկու ժամ էլ դինեատանն անցրի։ Միայն թե այդտեղ պատահեցի մի դասալիքի դինվորի, վոր փախել եր Տավուշի ճորից։ Նա պատմում եր, թե Ամրամի մի քանի խմբերը շրջում են կուրի յեղեղնուտներում և նպատակ ունին նետահար անել արքային, հենց դնալի վրայից անցնելու ժամանակ, վորովհետև Ամրամը վախենում է յեղերացիներից և չի կամենում աղատ դաշտի վրա ճակատել նրանց դեմ։

— Այդ նրանց չի հաջողիլ, նկատեց իշխանը հանդատությամբ։ Թաղավորի թիկնապահները վանանդացիք են։ Նրանց վահանափակը կյոթական անդամ չի թափանցիլ, ո՞ւր մնաց ուտիացիների նետերը։

— Բայց յեթե ափխազաց զորքերը հասնեն, ասում եր դասալիքը, այն ժամանակ Ամրամը համարձակ կճակատե Թաղավորի դեմ։

— Ի՞նչ, ափխազաց զորքե՞րը, կարծես լսածին չհավատալով հարցրեց իշխանը։

— Այո՛, ափխազաց զորքերը, Ցլիկ-Ամրամը խոստացել է Գուրգենին Ուտինքը հանձնել նրան, յեթե վերջինս կոգնե իրան այս ապստամբության գործում։

— Վո՞րտեղից դիտեր դասալիքը Ամրամի այդ դաշտնիքը։

— Նա մի քանի որ շարունակ Ամրամի հետամուտների հետ միասին՝ շրջել է յեղեգնուտներում։ Նրան ուտիցիք խոստումներ են արել, թե Ամրամ իշխանը նրան էլ իրանց հետ կտանե Ափխազիա, ուր ինքը Ցլիկը պիտի տեղափոխվի Ուտինքը Գուրգենին հանձնելուց՝ և նրա փոխարեն՝ Ափխազիայում ուրիշ յերկիր տանալուց հետ։ Հենց այդ խոստումն էլ պատճառ է դարձել, վոր այդ զորականը հեռացել է նրանից։ Պատվական հայր այդ դասալիքը։ «Ընթե Ամրամը պիտի հեռանա Ափխազիա, մենք ինչո՞ւ նրա պատճառով կռվենք մեր թագավորի դեմ», ասում էր նա ինձ։

Իշխանի դեմքը մռայլվեց։ Թիկնապահի հաղորդածը յերկյուղ ազդեց նրա սրտին։ Մինչև այդ՝ նա պարտություն էր իրան այն հուսով՝ թե գուցե արքայի մեծ ղորքով յերևալն ստիպե Ամրամին հետ քաշվել յուր ամրոցը և պատերազմը տեղի չունենա։ Բայց այժմ յերբ խմացավ, թե ափխազաց Գուրգենն էլ խառն է գործի մեջ, չափազանց տխրեց։ Ամրամը ուտարի այդ աջակցության վրա վստահանալով կարող էր մեծ վնաս հասցնել յերկրին։

Իշխանին մնում էր մի նվազ հույս. այն է՝ ապավինել յուր կորովին և պերճախոսությանը՝ ապստամբի սիրտը կակղացնելու համար։ Դրանից զատ նա չդիտեր ուրիշ մի յելք, վորով կարելի լիներ չարիքի առաջն առնել։

— Տեր իմ, ափխազաց այդ հին գայլը մեզ շատ վնասներ հասցրավ, յե՞րբ պիտի կարողանանք պատժել նրան, հարցրեց Ցեղնիկին իշխանին։

— Ցերբ վոր ատոված կամենա, անուշադիր յեղանակով պատասխանեց իշխանը և սկսավ ճիու ընթացքն արագացնել։

— Բայց մենք ո՞ւր ենք գնում, հարցրեց Թիկնապահը՝ իշխանին հետևելով։

— Մենք այս որ ևեթ պիտի աշխատենք հասնել Ամրամի բանակը, մեր կորցրած ամեն մի ժամը կարող է մի նոր վտանգ ծնել մեզ համար։

— Կերթանք առանց հանդստանալու։ Բայց ճիաներիս ուժը չի բավիլ այդքան ճանապարհը մի որում կտրելու։

— Ինչո՞ւ. քանի՞ վերստ է այստեղից մինչև Տավուշ։

— Հարյուրից ավելի։ Մենք հազիվ կարող ենք յերեկոյան Սադամի ձորն անցնել։

— Իսկ առավո՞տը։

— Այո՛, լուսածագին կմտնենք Տավուշ։

— Այդ էլ բավական է. չտապենք, ասաց իշխանը և մտրակը չարժեց։ Սևուկն սկսավ սուրալ հողմի պես. Քիլինապահը հետևում էր նրան։

Ցերեկոյան դեմ մեր ճանապարհորդները գտնվում էին Սադամի ձորում։ Գետափին հանդստացող մի քանի դյուղացիներ տեղեկություն տվին նրանց, վոր Դավիթ ու Գրիգոր իշխանների բանակը չվել էր այդտեղից հենց մի ևնուշն որը և թե Ամրամի զորքերը գտնվում են այդ միջոցին Աղասև և Կուր գետերի խառնարդի մոտ։

— Ճանկալի յեր իմանալ, թե ինչո՞ւ Ամրամը հեռացել է այդքան յուր ամրոցից, հարցրեց Ցեղնիկն իշխանին, յերբ նրանք դեռևս անցնելով՝ դեմ դրին դեպի դաշտավայրը։

— Այդ նշան է, վոր ախխաղացինները մոռնում են նրան։ Ահա զարդմանացիք էլ այստեղից են չվել։ Կնշանակե նրանք միացնում են բանակները։

— Ուրեմն Թաղավորի դալստյան մասին լո՞ւր ունին առած։

— Անշո՛ւշտ, ասա թե վոչ ինչո՞ւ այդքան զորքերը միասին կվտրեյին. չե՞ վոր մի քանի որվա մեջ բոլոր չրջականների պաշարը կարող էյին նրանք սպառել։

— Տե՛ր, ինձ թվում է, թե մենք պատերազմին ալիսի մասնակցենք և վոչ թե հաշտությանը, այնպես չե՞, հարցրեց Ցեղնիկը մի առանձին անհանդստությամբ։

— Այդ ասածդ է հայտնի, տեսանենք, թե առավոտը ի՞նչ որ կծագե մեզ համար, պատասխանեց իշխանը, ըստ յերևութին անփութի յեղանակով. բայց նա իսկապես տանջվում էր տխուր մտածմունքներից։ Մի ծանր նախազդացում ճնշում էր յուր սիրտը. և կարծես այդ ճնշումից աղատվելու համար էր, վոր նա չարունակ արագացնում էր ձիու ընթացքը։

Իշխանն ու Քիլինապահը անցուցին այդ գիշեր Սևորդյաց ձորի դյուղերից մինում։ Այդտեղ իմացան, վոր Ցլիկ-Ամրամը յուր և իրան հետ յեղող ազատամարտ իշխանների ընտանիքներն ամրացրել և Տավուշ բերդում, իսկ ինքը առալացել և դնալի Աղասև, վորպեսզի Թաղավորին հանդիպե ամրոցից հեռու։ Այդ նրա համար էր, վոր նախ՝ պատերազմի արհավիրքներով չհա-

բեկէ ամբողջական տիկնանց, և յերկրորդ՝ վոր ինքն ավելի ազատ լինի յուր գործունեության մեջ. այսինքն՝ յեթե պարտություն կրելու լիներ, կարող եր քաշվել լեռները, մինչև վոր նրանց կկարդալորեր յուր բանակը. իսկ յեթե թագավորը վորշեր պաշարել յուր բերդը, այն ժամանակ նա կհարձակվեր հեռվից և այդպիսով կազատեր բերդը պաշարումից:

Այդ բոլոր ծրագիրները հայտնի դարձան Մարզպետունուն, հենց վոր նա Ամրամի Տալուշից հեռանալն իմացավ:

— Ուրեմն մենք գործ չունի՞նք նրա ամրոցում, ասաց իշխանը Թիկնապահին. առավոտն արդեն պիտի հասնինք Աղստև:

— Դեռ արևը չծագած կարող ենք հասանի ջուրն անցնել, պատասխանեց Թիկնապահը:

Նրանք պառկեցին մի քանի ժամ հանգիստ առնելու համար:

Հետևյալ առավոտ, հազիվ արևը հորիզոնից մի ասպարեզ բարձրացած, իշխանն ու յուր Թիկնապահը Աղստևի հովիտը հասան:

Դաշնակից ազատամարների վրանները բռնած եյին հովտի բոլոր տարածությունը՝ սկսած Աղստևի դետաբերանից մինչև մոտակա լեռան ստորոտը: Հովտի արեգընդդեմ մասի վրա ցրված եյին ուտիացոց ու սևորդյաց վրանները: Նրանցից մի ասպարեզ հեռու դտնվում եյին զարդմանացիք ու աղվանք: Նրանց բոլորի վրաններն էլ շարված եյին կանոնավոր ուղղությամբ և ներկայացնում եյին մի քանի ընդարձակ քառակուսիներ, վորոնց յուրաքանչյուրի մեջտեղում դտնվում եր զորավարի կամ իշխանի վրանը: Բայց բանակի վոչ մի կողմից պատնեշ չկար դրված. այդ նշան եր, վոր զորքը նպատակ չուներ այդտեղ յերկար մնալու:

Նոր եյին հասել և դաշնակից ավխազինները, վորոնք և խառն ու անկանոն կերպով խփել եյին իրանց վրանները դեպի հյուսիս ձգվող դաշտավայրի վրա:

Ապստամբների այս ահագին պատրաստությունը տեսնելով՝ Մարզպետունի իշխանը զարհուրանքով բացականչեց.

— Ինչպե՞ս լավ համախմբված են՝ իրանք իրանց կործանելու համար:

— Չեյիր ապստամ այսպիսի կազմություն, տե՛ր իմ, այնպես չի՞, հարցրեց Ցեղնիկը ժպտալով:

— Ինա՛վ: Թշվառականները միայն հարատատի դեմ են լավ

զինվում... կամ յերբ հարկավոր է լինում սեփական յերկիրը վտանգից ազատել...։

— Բանակատեղը պիտի մոտենք, այնպես չէ՞, հարցրեց Թիկնապահը։

Իշխանը չպատասխանեց։ Նա ձիու սանձը քաշած և հաստատուն մի ծառի սովերում կանգնած՝ դիտում էր բանակը, նրա տարածությունը, նոր զարկվող վրաններն ու շուրջը տիրող չարժուժը, մի խումբ հնձելադորի վարժությունները և հովտի մի կողմը հավաքված ղորքերի մկնդեղաղը։

Ճերմակ դիտելուց յետո, նա դարձավ Թիկնապահին.

— Տեսնո՞ւմ ես այն ընդարձակ վրանափակը, ուրի մեջտեղը զարկած է իշխանական վրանը։

— Ա՛յն, ուրի վրա ծածանվում է յերկդունյան դրոշակ։

— Այո՛, Ամրամ սեպուհինն է այն. դնա՛, անցիր ուղղակի բանակի միջով...

— Ավելի լավ չէ՞ հովտի յեղերից մոտենալ։

— Վա՛յ, սևորդիները վայրենի մարդիկ են. կարող են մինչև անգամ նետահարել։ Անցի՛ր բանակի միջով, բայց սրարշավ և առանց աջ ու ձախ նայելու. մոտեցի՛ր իշխանի վրանին. ներս մտիր... Ճանաչո՞ւմ ես դու իշխանին։

— Ի՞նչպես չէ. շատ անգամ եմ տեսել։

— Հա՛. նե՛րս մտիր և հայտնիր իմ կողմից, ուր յեկել եմ և կամենում եմ տեսնվել յուր հետ։ Ասա՛, ուր կարևոր դործի մասին է խոսելիքս։

— Կհրամայի՞ս հայտնել իրան պատճառը, յերթե հարցնելու լինի։

— Վա՛յ. պատճառների մասին խոսելը քո դործը չէ. դնա՛, մի՛ ուշանար։

— Իսկույն, տե՛ր իմ։ Այս ասելով Ճեղնիկը մարակեց յուր ձին և սրարշավ դնալի բանակն ուղղվեցավ։

Իշխանի ակնարկած վրանափակը մի ընդարձակ քառակուսի յեր, բաղկացած չորս տասնյակ վրաններից, ուրոնցից յուրաքանչյուր տասնյակը զարկած եր մյուսի հանդեպ յերկչար ուղղությամբ։ Դրանց մեջտեղում դտնվում եր սեպուհի ընդարձակ վրանը, ուրի վրա ծածանում եր ղորավարական դրոշը։ Վրանի ճակատը զարդարված եր իշխանական զինանշանով, իսկ ներսը պատած կարմիր պատառոնեերով։ Վրանը վերամբարձող յերկյակ սյուների վրա, ուրոնք զարդարված էյին ոսկեձև վայլուն

աղակներով, կախված էին զեղեցիկ զենքեր, այն է՝ արծաթապատ սրեր և վաղակավորներ. զրվակաղարդ վահաններ ու տաղարաններ. նետալից կապարճներ, արծաթազարդ աղեղներ, խոյի վրանի մի անկյունում հենված էին կարճաբուն մկնաղներ ու գեղարդներ։

Իշխանական վրանի առաջ կանգնած էին զրահազգեստ պահապանները, յերկաթե գլխանոցներով, յերկար նիզակներ ու տաղարաններ ձեռքներին։ Իսկ վրանի մեջ անցուդարձ եր անում Ցլիկ-Ամրամը, միայնակ և մտախոհ։

Սա մի բարձրահասակ և հաղթանդամ տղամարդ եր, ամուր կազմվածքով և խոշոր ու աղեցիկ դեմքով։ Նրա լայն ճակատը, վոր ծածկված եր կնճիռներով, սուր և թափանցող աչքերը, վորոնց հուխանավորում էին թավամազ և դրեթե միավորյալ հոնքեր, մեծ և առծուռնդն քիթը, վոր իշխում եր կարծես յերկար ու թավ ընչացքին և հարուստ, զորշախառն մորուքը, վոր ծածկում եր պղնձե լանջապանակի կեսը, տալիս էին նրան լուրջ և մինչև անգամ ահարկու կերպարանք։ Նա ամրողջապես զրահազգեստ եր։ Հագած ուներ պողպատից հյուսած վերտ, կրծքին՝ վայրուն լանջապանակ, կռներին՝ բազպաններ, վոտքերին՝ առնապատներ, իսկ աղդրին՝ ծանր, արծաթապատ սուր։ Պողպատե սաղավարտը, վորի վրա վայրում էր պղնձե արծվաճև զարդ-մանակ և վորը զարդարված եր սև, թավամազ ցցունքով, դրված եր վոքրիկ սեղանակի վրա։

Հանկարծ սեպուհը լսեց մի վիճաբանության չչունչ, վոր ուղի յեր ունենում յուր վրանի առաջ։

— Ո՞վ է այդտեղ, դոչեց նա ներսից հզոր ձայնով։

— Մի վոստանցի զինվոր, վոր կամենում է ներկայանալ քեզ, տե՛ր, բայց չի կամենում վաղակավորն ու վահանը ձգել, պատասխանեց պահապանը, մոտենալով վրանի մուտքին։

— Ո՞վ է այդ համառը, թողե՛ք վոր գա, հրամայեց սեպուհը։

Ցեկողը Ցեղնիկն եր։ Նա յուր յերկարաբուն նիզակը հանձնեց պահապանին և ներս մտնելով վրանը, խորը գլուխ տվավ իշխանին։

— Ո՞վ ես դու, հարցրեց Ամրամը, խրոխտ ձայնով։

— Մարզպետունյաց Գևորգ մեծ իշխանի թիկնապահը, պատասխանեց Ցեղնիկը։

— Դու չգիտե՞ս, վոր իրավունք չունիս սրով ու վահանով իշխանի վրանը մտնելու։

— Ցերե՛կ հետացրած չեմ ինձանից այս զենքերը, տեր իմ։

— Ուրեմն յերբեք էլ բանբերի պաշտոն չե՞ս կատարած։

— Առաջին անգամն եմ կատարում և յերկիւղ անգամ չը-պիտի կատարեմ, քանի վոր հարկավոր է դրա համար ինձանից լինել, պատասխանեց Ցեղնիկը վոգը ինչ այլայլված։

Սելուկը ժպտաց։

— Ի՞նչ ունիս ինձ հայտնելու, հարցրեց նա։

— Իշխանը հրամայեց ինձ ասել, վոր յեկել է ձեր բանակը կարևոր գործի համար և կամենում է խոսակցել տեր սելուկի հետ։

— Գնորդ իշխանն այստե՞ղ, մեր բանակո՞ւմն է։

— Այստեղ, բանակից դուրս սպասում է քո պատասխանին։

— Գնա՛, ասա՛, թող շնորհ բերե, պատվիրեց խոհուն սե-լուկը և տալա կանչելով պահապանին հրամայեց, վոր հայտնե յուր թիկնապահներին՝ ընդառաջել իշխանին։

Իսկույն մի խումբ զրահավորներ պատրաստ ձիանը աչուա-նակելով՝ դիմավորեցին իշխան Մարզպետունուն բանակից դուրս և առաջնորդեցին նրան սելուկի վրանը։

— Ամեն մարդու կսպասեցի տեսնել իմ վրանում, բայց Մարզպետունյաց իշխանին, թագավորի դինակիցին ու հավատար-մին յերբե՛ք... ասաց սելուկը ջերմագին վողջունելով իշխանին և հրամցնելով նրան մի վոքրիկ յեղուտանի աթոռ։

— Բարեբախտաբար յես միշտ այնտեղ եմ, ուր ինձ չեն ըս-պասում, ժպտալով պատասխանեց իշխանը։

— Բարեբախտաբա՞ր. ի՞նչ կենշանակե այդ։

— Կենշանակե, թե յերբեք չար գործի համար չեմ այցելում մեր բարեկամներին։

— Բարեկամներին, այո՛, բայց դու Թշնամու վրանումն ես։

— Վո՛չ, Մարզպետունին հայ Թշնամի չունի. նա այլոլիսի Թշնամի չի ճանաչում։

— Իսկ թագավորի Թշնամիները քո Թշնամիները չե՞ն։

— Դու մի որ թագավորի բարեկամն էլիր և գարձյալ բա-րեկամ կլինիս...

— Բարեկա՞մ... գժոխքը տանե նրան... իմ սատանային հաշտութեյան ձեռք կպարզեմ, բայց նրան յերբեք, ուժգին բա-ցականչութեյամբ ընդհատեց սելուկն իշխանին։

Մարզպետունին լռեց և մի տեսակ տարակուսական հայց-

քուվ սկսավ դիտել սեպուհի դեմքը, վոր այլայլվել էր հանկարծական հուզմունքից։

— Ցնթե դիտենայի, թե ովիտի վրդովիմ քեզ... այսքան յերկար ճանապարհ չէյի կոբիլ... մեղմ ու հանդարտ ձայնով նկատեց իշխանը։

— Թագավորը հաղիվ մի ավուր ճանապարհով հեռի յե մեզանից, խոսել սկսավ սեպուհը՝ նույնպես մեղմությամբ, վաղը դուցե մենք ճակատենք միմյանց դեմ. յեթե դու մեղ հաշտեցնելու համար ես յեկել, ցավում եմ, վոր ապարդյուն աշխատանք ես հանձն առել։

— Վոստանում վոչ վոք չէր հավատում, թե սեպուհ Ամբամը կարող է ապստամբել յուր թագավորից...

— Ցես չեմ ապստամբել իմ թագավորից, ընդհատեց սեպուհն իշխանին. հիշում ես, թե ի՛նչպես անձնվիրաբար եյի ծառայում նրան։ Քանի՛ քանի անգամ յուր ապստամբ կողմակալների դեմ պատերազմեցի. քանի՛ վտանգավոր կռիվների մեջ յուր անձը պաշտպանեցի, ի՛նչ հերոսությամբ Շամշուլտեյի վրա յուր դրոշակը պարզեցի. վո՛ր մեկը հիշեմ...

— Ցեվ նա քեզ պարտապան չմնաց. իշխան կարդեց ամբողջ Ուտիքի և Սևորդյաց աշխարհի վրա. հյուսիսային ղորքի հրամանատարությունը հանձնեց քեզ... Դու չպետք է ոդուտ քաղեյիր քո ձեռքում ունեցած իշխանությունից ու պատրաստ ղորքերից և ապստամբության դրոշակ բանալով՝ սուրդ ուղղեյիր քո բարերարի և թագավորի դեմ։

— Ցերբե՛ք իմ թագավորի, մի՛ ասիր այդ. այլ իմ անձնական թշնամու...

— Անձնական թշնամի՛... մի՞թե թագավորը կարող է անձնական թշնամի լինել յուր պաշտոնակալին, նկատեց իշխանը՝ իբրև թե սեպուհի խոսքերը չհասկանալով։

— Իշխա՛ն, յեթե դու վոչինչ չգիտես այն ամենից, ինչ վոր իմ մեջ թշնամություն ե դրդռել դեպի թագավորը, ապա չատացիր այնքանով՝ ինչ վոր յես քեզ ասացի. ավելին խոսել չեմ կարող։

— Ցես չեմ կամենում, վոր շատ բաներ պատմես ինձ։ Գիտեմ, թե առհասարակ ինչ պատճառներ են դրդում մեր իշխաններին թշնամանալ թագավորին, կամ ապստամբել նրա դեմ...

— Գիտես, այնպես չէ՞, ընդհատեց հանկարծ սեպուհը.

ժառանգություն, չհասկրություն, ընչաքաղցություն. ի՞նչ ես կարծում, դրանցից մեկը չե՞, որ դրդել է ինձ թշնամանալ իմ թագավորին...

— Զղիտեմ. և ասացի, թե չեմ էլ կամենում իմանալ. բայց կամենում եմ, որ դու ազատամարտության դրոշակն ամփոփես և թագավորիդ դեմ հանած սուրը յուր պատյանը դարձնես:

— Այդ ապառնալի՞ք է քո կողմից, իշխան:

— Վո՛չ, այլ լոկ խնդիր, աղաչանք...

— Զարմանում եմ. Մարզպետությաց տերը խնդրում, աղաչում է սեպուհ Ամբամին... Այդպիսի խոնարհություն չեն ունենալ, կարծեմ, Մարզպետունի նախարարները... Արդյոք մի խորհրդավոր դաղտնիք չկա՞ թագնված այդ խնդրարկության մեջ:

— Լսի՛ր, Ամբամ սեպուհ. Մարզպետունի նախարարները հպարտ ելին ավելի քան քո նախահայրերը, բայց նրանց ժառանգը դերազատում է հայրենասիրությունը. մի՞թե այդ մի արատ է նրա համար:

— Ինա՛վ. յերա՛նի նրան, ով կարող է անձնվիրաբար ծառայել հայրենիքին:

— Ցավ ահա՛, հենց այդ հայրենիքի չահն է, որ իմ հպարտ ճակատը խոնարհեցնում է քո առաջ: Կարո՞ղ ես արհամարհել այս խոնարհությունը, կամ անարդ դաղտնիքներ վերծանել նրա մեջ:

— Վո՛չ:

— Ուրեմն լսի՛ր ինձ. կակղացրու սրտիդ կարծրությունը և արդելիր այն կատորածը, որ տեղի պիտի ունենա մի կամ յերկու որից հետո:

— Չեմ կարող:

— Ուրեմն հայոց հաղարավոր մայրերը վորդիներ են ծննել քեզնից ու հեծությամբ, մենծացրել են նրանց բազմամյա տանջանքներով, որ դուք իշխաններդ մի որվա ընթացքում զոհեք այդ բոլորին ձեր անձնական կրքերի՞ն:

— Իսկ յերբ նրանց առնում եք հաղարացող ղեմ, յերբ նրանց մաշում և մահմեդականի սուրը, ինչո՞ւ այն ժամանակ էլ չեք հիշում հայ մայրերի ցավն ու հեծությունը:

— Հայրենիքի թշնամու դեմ կռվիլը, նրա աղատության համար մեռնիլը՝ սրբազան պարտք է, այդ պարտքից վեր վոչ վոք չը-պիտի վախչի. բայց յեղբայրասպանությունը մի վոճիր է, սատծուց և մարդկանցից անիծված:

Ամրամը, վոր խոսելու ժամանակ բարձրացել էր տեղից, նստեց նորեն յեռոտանու վրա և լուռ ու մտախոհ, ակռավ դիտել վրանի անկյունին հենած դեղարդները։ Ապա մի վայրկենից յետ ձեռքը դնելի ծնոտը տարավ և յուր հարուստ, երբահեր մորուքը շոյելով՝ մեղմ ձայնով ասաց.

— Տե՛ր Մարդպետունի, շահավոր խոսելն ավելի հիշատ է, քան շահավոր դործելը։ Ես չեյի ցանկանալ չարադործի անուն վաստակել, բայց հանդամանքները չարադործ չինեցին ինձ։ Այսուհետև յես չպիտի մտածեմ, թե ինչ է ասում աշխարհն ինձ համար. յես միայն մի մարդու պիտի հաշիվ տամ. դա իմ ներքին մարդը, իմ խիղճն է...

— Այդ խիղճը Թուլլ չի տալ քեզ, վոր յեղբարցդ կյանքը վտանգի յենթարկես։

— Մի՛ ընդհատիր, իմ խիղճը ավելի ընտանի յե ինձ։ Բայց այդ չէ խնդիրը, յերեք յես, մինչև անգամ, իմ արդար ցասումը ճնշեմ, իմ խիղճը բռնադործեմ, դարձյալ չեմ կարող քո խնդիրը կատարել, վորովհետև միայն յես չեմ, վոր Թադավորի դեմն եմ կանգնած, ինձ հետ են նաև Գարդմանա և Սիփխաղիո իշխանները, իրանց դաշնակիցներով։

«Այնուհետ դու տեսար այս հովտի վրա ղարկած բաղմաթիվ վրանները. այստեղ խմբված են այն իշխանները, վորոնք հին հաշիվներ ունին Թադավորի հետ վերջացնելու։ Յերե՛ք յես ամփովեմ ուտիացոց դրոշը, միևնույն է, ինձ չեն հետևիլ վո՛չ սևորդիները, վո՛չ դարդմանացիք, վո՛չ աղվանք, վո՛չ տայոց իշխանը, վո՛չ ավիխաղաց արքայորդին։

— Բե՞ր իշխանը... Նա ե՞լ այստեղ է։

— Այո՛, նա ել այստեղ... հայոց Թադավորի տոհմակիան Թշնամին։

— Վորի հետ միացել ես դու։

— Այո՛, և յերդվել եմ, ինչպես նրան, նույնպես և մյուս դաշնակիցներին, կռվել հետերնին միասին, մինչև իմ վերջին շունչը։

— Յեվ յերե՞ք հաշվվե՞ս։

— Այն ժամանակ այդ բոլորի սուրը կղարձնեմ միայն իմ անձի դեմ։ Այս է մեր պայմանը։

— Հիշածներդ մեջ, սիրելի Ամրամ, միայն Սիփխաղիո յերեսատասարդ իշխանն է, վոր դժգոհ կլինա հաշտությունից, վորովհետև նա յեկել է կոտորելու և ավերելու նպատակով։ Ինքդ ա-

սացիը, վոր նա արքայի առհասական թշնամին է, և բնական է, վոր չկամենա ճանաչության վերադառնալ յուր հոր մոտ։ Բայց մյուս իշխաններն ընդդեմ չեն լինել, յեթե դու հաշտվես և արձակես առաջիկա կառաջածը։

— Իսկ Սևադա իշխանը, նրա յերկու վորդինե՞րը, կատաղի զարդմանացի՞ք, վորոնք յեկել են իրանց կույր իշխաններին վրեժը լուծելու Թաղավորից...

— Սևադա իշխանը նեղեց Թաղավորին։

— Ի՞նչ, Սևադան նեղե՞ց, տեղից վեր Թռչելով բացականչեց Ամրամը։

— Այո՛, յես նրա մոտ եյի. նա նեղեց և յես կկանչեի յուր զորքերը, յեթե դու ել վճռանձնարար վայր դնես քո սուրը։

Բարկության հուրը ցոլաց Ամրամի աչքերում, նրա դեմքը տյուրյուրվեցավ և շունչը կարծես թե բռնվեցավ, ինչպես հնոցի մեջ խեղդվող բոցի ծուխը։

Նա մի քանի քայլ առաջ դնաց նորեն յես դարձավ և ապա կանդ առնելով իշխանի առաջ, հարցրեց կրկին.

— Ցնվ այդպե՛ս, նա ուրեմն նեղե՞ց... և զորքերը յես կկանչեն, յեթե յես հաշտվե՛մ...

— Այո՛, նա բոլորովին նեղեց. նա հարդեց իմ խնդիրը, նա ապացուցեց, վոր սիրում է հայրենիքը։

Ամրամը ձգեց յուր ձեռը, բռնեց իշխանի թևից և կամացուկ ձայնով ասաց.

— Այստեղ մեզ կարող են լսել, արի իմ առանձնարանը։

Այս ասելով նա առաջ անցավ և ներքին վարազույրը բանալով՝ մտավ վրանի յերկրորդ բաժանմունքը։ Իշխանը հետևեց նրան։

— Այդ Սևադան, այդ հպարտ զարդմանացին, վոր յերդվել եր պատժել յուր դահճին, ի՞նչ բարիքների հուսով և հաշտվում Թաղավորի հետ, դարձավ Ամրամը Մարդպետունուն։

— Ցուր անձի համար և վոչ մի։ Նա խնայում է յուր հայրենակիցների արյունը։

— Իսկ նա պատմե՞ց քեզ, Թե ինչո՞ւ համար եմ սուր վերցրել յես։

— Պատմեց. յես բոլորը դիտեմ։

— Պատմեց. և դու բոլորը դիտե՞ս... զայրույթից կարծես խեղդվելով հարցրեց Ամրամը։

— Այո՛, բայց մի՛ վրդովվիր։

— Զվրդովվե՞մ. այդ ի՞մ ցանկությունից է կախված. հնարո՞ղ ես հրամայել առյուծին, վոր նա չմռնչե, յերբ դաբանակալ սուրը ցցվում է յուր կողերի մեջ...

— Համբերությունը ամենաղորավոր զենքն է...

— Ի՛նչ համբերությունից խոսելու ժամանակ է, Մարզպետունի իշխան... Այսում ես, վոր Սևադան ներել է նրան. ինչո՞ւ, ինչո՞ւ ուրեմն այդ ծերուկը դժոխք վառեց իմ սրտում՝ ինչո՞ւ իմ հոգու խաղաղությունը վրդովվեց. ինչո՞ւ իմ կյանքը թունավորեց... յեթե այսոր պիտի ներեր:

— Ցերբ մարդու հոգին կուրանում է վրեժխնդրության կրքերից...

— Ել վոչ մի խոսք, Մարզպետունի իշխան: Սևադան թո՛ղ ներե, նրա վորդիքը թո՛ղ ներեն, բոլոր աշխարհը ներե, Ամրամ սեպուհը չի ներել... հաշտությո՞ւն... Աչոտ Ցերկաթի հե՞տ յերբեք... Ցեթե կարողանամ՝ նույնիսկ դժոխքի հետ կմխանամ այդ անարժան թագավորին դահավեժ կործանելու համար... Ցեթե դու կարողանայիր մտնել իմ հոգեկան աշխարհը և տեսնել, թե տանջանքների ի՞նչ հրդեհ է վառվում այնտեղ, կատաղությո՞ւն, կատաստափեյիր...

— Ցիվ ահա՛ հենց այդ ժամանակն է, վոր հերոսը և մեծ հայրենասերը կարողանում է ապացուցանել, թե յուր մայրը հազարակ ծնունդ չի պարգևել աշխարհին:

— Ամենից հազարակ և ամենից սիրելքորը կարող է հանդուրժել այս անպատվությանը. մեծ հոգին, ընդհակառակը, չի կարող տանել նրան:

— Սևադան փոքրիկ մարդ չէ. Աչոտը կուրացրել է նրա յերկու աչքերը, կուրացրել է և նրա վորդուն. և սակայն նա մոռանում է այսոր այդ անփոխարինելի զրկանքը և նեղում է անխիղճ փեսային՝ միայն հայրենիքի սիրուն համար:

— Աչոտը նրա աչքերն է կուրացրել, բայց ի՛մ սիրտը: Գույր աչքը կարող է ներել, բայց կույր սիրտը չի ներել... չի՛ կարող ներել:

— Բայց...

— Տեր Մարզպետունի, այն մարդը, վոր դիտե, թե թագավորն ի՛նչ անարդանք է հասցրել իմ անվանը և սակայն խորհուրդ է տալիս ինձ հաշտվել նրա հետ, նա իմ թշնամին է: Ցեթե դու իմ վրանում չլինեիր, յես կմեռնեմ սրտիկ քեզ հետ...:

— Ուրեմն, յես իմ դործը վերջացրի... ասաց Մարզպետունի

իշխանը և տեղից վերկենալով վողջունեց Ամրամին և վրդովված դուրս դնաց վրանից։

Հաղիվ իշխանը ներքին մուտքից հեռացել էր մի քանի քայլ, սեպուհը բարձրաձրեց վարագույրը և ձայն տվավ նրան.

— Տե՛ր Մարզպետունի։

Իշխանը յետ դարձավ և հարցրեց.

— Դու ինձ ուրիշ ասելիք ունի՞ս։

— Ցես դեռ վոչինչ չեմ ասել քեզ, պատասխանեց Ամրամը։

Իշխանն ինքն էլ նրան ուրախացավ։ Նրա սրտում նոր հույս ծագեց։ «Մի՛ դուցե նա դղյակց յուր սառն ընդունելութեյան համար. մի՛ դուցե նա կամենում է հարդել իմ խնդիրը...», վայրկենապես անցան այս մտքերը Մարզպետունու գլխով և նա հոժարութեյամբ յետ դարձավ և նորեն ներքին վրանը մտնելով՝ հարցրեց.

— Ուրիշ ի՞նչ ունես ինձ ասելու։

—Նստի՛ր այստեղ մի վայրկյան, ասաց սեպուհը ցույց տալով իշխանին յուր մահճակալը։

Իշխանը նստեց։

— Տեր Մարզպետունի, յեթե դու յեկել ես ինձ մոտ երբև պատրաստավոր, ապա ուրեմն պետք է լրիվ պատասխան տանես նրան, ով վոր ուղարկել է քեզ, ապա սեպուհը։

— Վոչ վոք ինձ չէ ուղարկել։ Թագավորը, ինչպես գիտես, նոր է վերադառնում յեղերացոց աշխարհից. իսկ Ուտիքում յեղած ժամանակ՝ յես նրան չեմ տեսել...

— Ցես կարծում եյի, թե դուցե թագուհին...

— Ցնել վո՛չ թագուհին. և վո՛չ կաթուղիկոսը... Ցես ինքս տեսա, թե ի՛նչ ավեր է սպառնում մեր աշխարհին։ Ամեն կողմ անցա, ամեն ինչ դիտեցի. և վերջը վորոշեցի գալ և խնդրել ձեզ յերկուսիդ՝ քեզ և Սևադային՝ խնայել և խաղաղել ձեր բազմաչարչար հայրենիքին...։ Սևադա իշխանը, ընդհակառակ եմ, լսեց ինձ, մոռացավ յուր վիշտը, յուր վրեժխնդրութեյունը... Դու ել, յես հավատացած եմ...

— Վո՛չ, տեր Մարզպետունի, մի՛ հավատար, ընդհատեց հանկարծ սեպուհը. մի՛ հավատար, թե յես կարող եմ քեզ լսել, թե քո խոսքերը կարող են իմ սիրտը շարժել, թե Ամրամ սեպուհը կարող է հայրենիքի համար մոռանալ...

— Ինչո՞ւ ուրեմն յես գարձրիր ինձ. յես այդ համոզմունքով արդեն հեռանում եյի քեզանից։

— Ճիշտ դարձրի, վոր իմ սիրտը բանտում քո առաջ, ցույց տամ քեզ նրա ժահահոտ վերքերը, վորպեսզի թագավորիդ հանդիպած ժամանակ՝ պատմես նրան, թե Ամրամը ինչո՞ւ կործանման սուրը մերկացրեց:

— Նա քեզ չի արդարացնիլ:

— Մի՞թե չես ապաստում եմ, վոր նա ինձ արդարացնե...

— Ինչո՞ւ ուրեմն հայտնում նրան, թե ի՞նչ պատճառով կործանման սուր մերկացրիր:

— Չորպեսզի, չթե ստոված ինձ հալոցն և չես քո թագավորի գրուխքյունը ջախջախեմ, չերկիրն ավերեմ, քաղաքները հրդեհեմ և նրա գահն ու թագը ապականության մոխրով ծածկեմ, նա իմանա, թե վո՛ր անարդանաց վրեժը լուծեց Ամրամը իրանից...

— Այդ նա կիմանա... Անշուշտ կիմանա. բայց դու ել իմացիր, վոր այդպիսի անխիղճ գործերի համար բոլոր աշխարհը ալիւր քեզ անիծե:

— Այդ անեծքները չեն տանջիլ իմ հոգին ավելի, քան վորքան տանջվում և նա այժմ ապերատ թագավորի ինձ հասցրած անարդանքի պատճառով... Նույնիսկ որհնությունները անկարող են բուժել այն վերքերը, վորոնք լսիում, սպառում են այժմ իմ գրությունը...:

— Բայց չթե կարողանայիր մի վայրկյան առաջ ուղեղով դատել, չթե չերևոտասարդական անվորձ չեռանդը տեղի տար խոհեմության և իմաստության... Չթե վրեժխնդրության փոխարեն վառվեր քո սիրտը հայրենիքի սիրով... Այն ժամանակ հավատացած եմ, չեիր կամենալ մի հնոց պատճառով հայրենյաց դավաճանի անունը վաստակել:

Սևպուհը մոտեցավ իշխանին, յուր հրավառ հայացքն ուղղեց նրա աչքերին և ներքին հուզմունքից դողացող ձայնով ասաց.

— Մի հնոց պատճառով ասացիր... Ո՛հ, ինչպե՛ս կիմանենայի, վոր մենք անծանոթ դաշտի վրա լինելինք և չես այդ խոսքը լսեյի քեղանից այնտեղ և վոչ թե իմ վրանում... Հավատա՛ ինձ, Մարզպետունի իշխան, վորքան ել դու հզոր, վորքան ել քաջամարտիկ, բայց չես իմ սրով կպատառես քո հուրծքը, չթե նա մինչև անգամ ծածկված լիներ պողպատե լանջապանով... Դու կարողանում ես ասել մի կին այն սրտածին, վոր իմ տան թագուհին, իմ սրտի աստվածուհին ել մինչև այսոր...:

— Ների՛ր ինձ, սիրելի Ամրամ, չես չեչի կամենում քեզ վիրավորել, վոչ եվ «մի կին» ասելով՝ ուզում եչի Աստրամ իշխանուհուն նվաստացնել...

— Լռի՛ր, աղաչում եմ քեզ. մի՛ հիշիր նրա անունը, գոնե մի՛ հիշիր իմ առաջ, մի՛ խոսիր նվաստության մասին, չես կարող եմ խելագարվել... ընդհատեց իշխանին Ամրամը, ներքին հուզմունքից բոլորովին այլայլվելով։

— Ցնս սենք և կրկին և կրկին անդամ ներողություն խընդրեմ քո վրանը մանելուս համար, մեղմ ձայնով ասաց Մարզպետունին։

Սենուհը չպատասխանեց։ Նա վրդովված սկսավ անց ու դարձ անել վրանում և ձեռքը մերթ ընդ մերթ դեպի ճակատը տանելով՝ չփնել նրան, աշխատելով կարծես յուր ուղեղը ծանրաբեռնող մտածությունները ցրել։

Անցան մի քանի վայրկյաններ։ Լուռ եչին երկուսն եվ։ Վրանի մեջ լսվում եր միայն սենուհի խուլ քայլատրոփը։

Իշխանն աչքերը Ամրամի վրա հառած, հետևում եր նրա քայլերին և միևնույն ժամանակ մտածում, թե ի՞նչպես անե, վոր յուր այցելությունն ապարդյուն չանցնե։ Նա տարող տեսնում եր, վոր յուր խոսքերն ազդեցություն չեն անում սենուհի վրա. բայց և այնպես՝ չեր հուսահատվում։ Նրան ծանր եր դա-լիս մանավանդ այն, վոր համառ Սևադային համոզելուց հետո, ձեռնունայն պիտի հետանար Ցլիկ-Ամրամից։ Նա չեր կարողանում հաշտվել այն մտքի հետ, թե խելք ու սիրտ ունեցող տղամարդը կարող և ընդհանուր հայրենիքի շահը զոհել յուր անձնական չնչին հաճույքին, յուր վրեժխնդրության։ Այս պատճառով եվ նա ստիպում եր, վոր Ամրամի զայրույթն իջնե և ինքը նորից սկսե խոսել նրա հետ։

Վերջապես սենուհը նոտեց յուր մահճակալի ծայրին և կարծես վրդովմունքից հաղնած, լուռ և անթարթ աչքով սկսավ նայել վրանի մուտքին։

— Ամրամ սենուհ, ի՞նչ անուն կտայիր դու այն մարդուն, վոր մի քանի վայրկյան տաքանալու համար՝ հրդեհեր յուր տունը, հարցրեց հանկարծ իշխանը, չսպասելով սենուհի խոսելուն։

— Ներեցեր կանվանեի... պատասխանեց վերջինս՝ առանց աչքերը վրանի մուտքից հեռացնելու։

— Ցնս կարծում եմ մեղանից ամեն մեկի խոհական տունը և հարատև ապաստանարանը ապահով հայրենիքն է։ Ցերեկ մենք

մեր անձնական, մեր անցողական հաճույքի համար վտանգում ենք նրա խաղաղությունը, նմանում ենք այն մարդուն, որը յուր մարմինը առաջացնելու համար վառում է յուր տունը, չմտածելով, թե յերբ այդ կրակը հանդչի, յերբ հարկի այուները մոխիր դառնան, ինքը սիրտ մնա անտուն, անպատսպարան, միշտ հաճախական դառնաշունչ հողմերից, կամ թե արևի կիզիչ ճառագայթներից...

— Այդ այդպես է, պատասխանեց սեպուհը իշխանին դառնալով. բայց կա այնպիսի սառնամանիք, որը յերբ պաշարում է մարդուն, այն ժամանակ սեփական տունը հրդեհելն անհրաժեշտ է դառնում: Մենք ամեն բանից առաջ մարդ ենք, մսից և արյունից կազմված: Բե՛ր խրեմ այս սուրը կողերիդ մեջ և ասա՛ թե մահվան տաղնապը կպաշարե՞ քեզ, թե՞ վոչ:

— Կպաշարե: Բայց հենց այդ տաղնապի մեջ հոգիս ուրախությամբ կբաժանվի իմ մարմնից, յերբ մտածեմ, թե մեռնում եմ հայրենիքի համար:

— Իսկ յերբ դաշույնը ցցվի հոգվո՞ւդ մեջ. յերբ հոգին ինքը տանջանքների մատնվի՞...

— Ցնթե դու սիրտ և զգացում ունիս, յնթե քո յերակներում աղնվական արյուն է հոսում, անկարելի յե, որ քո հոգին ավելի չկոցոտվի այն ժամանակ, յերբ տեսնես, թե քո ձեռքով առնարգանք է հասել հայրենիքին, թափվել է յեղբարցդ արյունը, վտանգվել է սեփական դահը և քո բաց ալած ճանապարհով մըտել է թշնամին, որը ավերում է հայրենի յերկիրը...:

— Դիտես ի՞նչ կա, տեր Մարդպետունի:

— Ասա՛, լսում եմ:

— Դու հունաց դպրության ծանոթ ես ինձանից ավելի: Ասում են, որ Թագավորի հետ Բյուզանդիոն գնացած ժամանակ՝ կայսեր արքունիքում զարմացել եյին քո հունադիտության վրա: Ճշմարի՞տ է այս, թե՞ վոչ:

— Ճշմարիտ է. բայց դու ինչո՞ւ համար ես իմ հունադիտությունը հիշում:

— Ինչո՞ւ համար, ասեմ: Դու հո կարդացի՞լ ես Հոմերոսը:

— Ինչպես չե. նրա հաղներդությունները չատը բերան գիտեմ:

— Ուրեմն և դիտես, թե ինչո՛ւ Տրոյադան կործանվեցավ, և ինչո՛ւ նրա պարիսպների տակ բազմաթիվ հույն զորավարներ իրանց բյուրավոր զորքերով ջարդվեցան:

— Գիտեմ. մի կնոջ, մի Հեղինեյի անհավատարմության պատճառով։

— Վո՛չ, սխալվում ես, մի դավաճան Պարիսի պատճառով։

— Ճես այդպես չեմ հասկանում Հոմերոսը։

— Իսկ հին հույները այդպես էլին հասկանում։ «Հեղինեն մի կին և, ասում էլին նրանք. իսկ կինը վոչ այլ ինչ է, յեթե վոչ նույն ինքն թուլությունը, վորին առաքինությունն ու մոլությունը մխաեռակ են դրավում։ Աղնիվ տղամարդի պարտավորությունն է վոչ թե ոդուտ քաղել կնոջ թուլությունից, այլ խնամել նրան և պաշտպանել, մանավանդ յեթե նա կարող և պաշտպանության։ Պարիսը հակառակը դործեց, նա դավաճանեց յուր հյուրընկալ Մենելավոսին, հրապուրեց նրա կնոջը՝ Ամպիկ դյուցուհուց ստացած կիթառի նվագներով, և փախցրեց նրան Տրովադա։

«Այս պատճառով ահա՛ հունաց քաջերը վոտի կանգնեցան. բյուրավոր դորքերով դիմեցին Պոնտոս. տասը տարի շարունակ պաշարեցին Պրիամոսի վոստանը, առան նրան և հիմնահատակ արին, վորպեսզի դրանով լուծեն վրեժն այն անպատվության, վոր դավաճան Պարիսը հասցրել եր հույն թագավորի ընտանիքին՝ հյուրասիրության սուրբ որենքը պղծելով։ Մեղանից յերկու հազար տարի առաջ մարդիկ ընտանիքի պատիվն անարդող հրեշներից այդ ձևով էլին իրանց վրեժը լուծում և յերկու հազար տարուց հետո դարձյալ նույն ձևով պիտի լուծեն։ Ի՞նչ կարծիք ունես դու այս մասին։

— Ճես մի Հեղինեյի պատճառով նույնիսկ տասը հույնի բյուն չեյի թափել, ո՛ւր մնաց թե բյուրավոր հույների, զորապետների, թագավորների...։

— Հա՞... Ուրեմն դու մեծ մարդ ես.... Բայց Հունաստանը քեզ պես չմտածեց։ Նա ասաց. «Յեթե այսոր Պարիսին թողնենք անպատիժ, վաղն էլ Հեկտորը կգա... ուրեմն լավ է, վոր անդրանիկ հարվածն իջեցնենք անդրանիկ հանցավորի գլխին...»։

— Ճեվ դու ուրեմն արդարացնում ես բյուրավոր մարդկանց կոտորածը մի մարդու պատճառո՞վ։

— Գաուվի պատճառով...

— Ճեվ դու նույնը կարող ես անե՞լ։

— Նույնը պիտի անեմ. պարտավոր եմ անել։

— Ճեվ հանդիստ սրտով կնայես կռվի այն դաշտին, ուր

յեղերացի նիզակները կպատառոտեն հայ կարիճների կուրծքը, որ վայրկեան արերը կկիսեն նրանց գլուխները, որ հայ զորքը յուր դրոշակի պատիվը վերկելու համար կկռվի աննահանջ և կկոտորվի անընդհատ... Իսկ թափվող արյունը, թավալող դիակները, մեռնողների անեծքը, վիրավորների հառաչանքը չէ՞ն կարտիլ քո սիրտը մանավանդ յերբ մտածես, թե այդ բոլորը լինում է մի կնոջ համար...:

— Լսի՛ր, տե՛ր Մարզպետունի: Դու խոսում ես ինչպես մի աբեղա. բայց յես զինվորական եմ...:

— Ամբամ սեպուհ, դու մոռանում ես քեզ, հանկարծ տեղից վեր թռչելով բացականչեց իշխանը, դու պարտավոր ես զանազանել հայրենասերն աբեղայից:

— Ներողություն, տեր Մարզպետունի. յես աբեղա բառը գործ դրի խաղաղասերի մտքով. Ամբամն անծանոթ չէ Մարզպետունյաց ժառանգի քաջարիությյան:

Իշխանն ըստ յերևութին հանդստացավ և նորեն նստեց մահճակալի վրա:

— Ասացիր, վոր պատերազմի արհավիրքները պիտի կեղեքեն իմ սիրտը, յեթե մտածեմ, թե այդ բոլորը լինում է մի կնոջ պատճառով... խոսել սկսավ նորեն Ամբամը.— Այդպես է, իշխան, պիտի կեղեքեն, յեթե հայրենասիրության մի կայծ դոնե մնացել է իմ սրտի մեջ... Բայց յեթե վերջին կայծն էլ մարած է արդեն, յեթե իմ սիրտը բարախում է միայն վրեժխնդրության համա՞ր...

— Դու ուրեմն արժանի չես քաջի և ընկերի անուն կրելու, վրդովված նկատեց Մարզպետունին:

— Ես չեմ ներհանում այդ խոսքից: Ես պարտավոր եմ հարգել տեր Մարզպետունու աստիճանն ու տարիքը... Բայց պիտի դառնամ նորեն Հոմերոսին:— Ախիլլեսը վո՛չ միայն քաջ, այլև դյուցազն էր, այնպես չէ՞, իշխան:

— Այո՛:

— Հունաց հերոսների մեջ վո՞րն էր նրան հավասար:

— Վո՛չ վոք:

— Նա միակն էր, այնպես չէ՞:

— Այո՛:

— Ճիվ տակայն նա յերկար ժամանակ յուր նավի մեջ անգործ նստած, հանգիստ սրտով նայում էր Հելլեների հաղթանակներին. տեսնում էր, թե ինչպե՛ս տրոյացիք ջարդում էին յուր

հայրենակիցներին, հրդեհում էին հունաց նավերը, անպատվում էին նրանց դիակները, տեղում էր, թե ինչպե՞ս դուրս հելլենացիք կծկվել էին ծովեզրի վրա և որոյական սուրը հազթանակում էր ամեն տեղ: Նա դիակը, վոր լոկ յուր դաշտում յերևալը նոր չունչ ու հոգի կտար հույներին, վերջ կդներ նրանց կոտորածին, բայց նա տեղից չէր շարժվում, զորապետների ապաշանքը չէր լսում, կռվի դաշտը չէր լինում... Ինչ էր պատճառը. ինչո՞ւ յուր յեղբարց կոտորածը չէր հուզում նրան:

Իշխանը լուռ էր:

— Պատճառը զարձյալ նույնպիսի մի նախատինք... հարկ Ամրամը. Ագամեմնոն արքան, հունաց դաշնակցության գլխապետը, խլել էր Աքիլլեսից Բրիսեիսն սիրուհին, վոր նրան էրը մրցանակ էր տրված որոյական ամարից: Աքիլլեսը չկարողացավ տանել այդ նախատինքը. նա յուր սուրը պատյանի մեջ դրավ... նա յետ կեցավ պատերազմից և մի Բրիսեիսեյի պատճառով հազարավոր հույներ կոտորվեցան: Այժմ դու կամենում ես, վոր Ամրամ սեղուհը ավելի մեծ և ավելի քաջ լինի քան Թեսալիսի վորդին, դյուցազն Աքիլլեսը:

— Ձեյ՞ր կամենալ նրանից ավելի մեծ և ավելի քաջ հրեշակվել:

— Կկամենայի...

— Ուրեմն մոռացի՛ր քեզ հասած նախատինքը և սեր հայրենիքի և դու ավելի մեծ կլինես, քան Աքիլլեսը:

— Ինձ ընդհատում ես. կկամենայի, բայց չեմ կարող. բնությունն ինքն է քարացնում մարդու սիրտն այսպիսի դեպքում... Ճես հանցավոր չեմ:

— Ուրեմն ի՞նչ ես վորոշել անելու:

— Պատերազմել. ուրիշ մինոց ես չդիտեմ անարժան արքային պատժելու համար: Աչոս-Ցերկաթը կննդանի չպիտի վերադառնա յուր վոստանը: Ճես վորոշել եմ այդպես և այդպես պիտի լինի:

— Ձի՞ս վախենում, վոր դու լինես առաջին զոհը:

— Այդ միևնույն է. կամ յես, կամ նա. մեզանից մինը պիտի մեռնի. յերկուսը միասին աստուածո լույսը չպիտի վայելենք:

— Իսկ յերբ դու միայնակ մնաս, կարծում ես, թե ուրախությա՞մբ պիտի վայելես այդ լույսը:

— Վոչ, ինձ համար այլևս ուրախություն չկա. իմ ուրախությունը դառնացավ. իմ չուրջն այժմ դժոխքն է թագավո-

բում... Ցերեկը, տեր Մարզպետունի, չերբևէք չեմ ցանկանալ, վոր նուչնեակ իմ թշնամին տանջվեր այն ցավերով, վորով այժմ Ամրամ սեպուհն է տանջվում: Դա ցավերից ամենաանտանելին է. դա ատոուծո անեծքը, դա հավիտենականի պատիժն է...:

«Դու ինձ ճանաչում ես. ինձ ճանաչում են բոլոր հայերը: Ամենքն էլ ինձ Ցլիկ-Ամրամ են կոչում, բայց վոչ իմ չարության, կամ անգթության, այլ իմ ուժի և քաջության համար: Դու չեղել ես ինձ հետ պատերազմներում. դիտես, թե վորքան աներկյուղ եմ չես, վորքա՛ն ահարկու և կործանիչ՝ իմ թշնամիների համար: Բայց հայ ժողովրդի, իմ չեղբայրակիցների հետ կենակցելիս, ո՞վ է չեղել ավելի հեզ, ավելի բարի, ավելի սիրող և անձնվեր քան Ցլիկ-Ամրամը: Տեսե՞լ ես իմ մեջ մի ամենաչնչին չարության դեպի իմ ազգակիցը, դեպի ամեն մի մարդ, վոր հայ անունն էր կրում... Հարկավ, վոչ: Բայց այժմ չես դարձել եմ մի վայրագ դազան. սրտիս մեջ վառվում է չարության չժոխքը... Ել չեմ դանազանում, թե վո՞րն է հայը և վո՞րն է ոտարը. իմ աչքերը պտրում են միայն մի մարդու, դա Աշոտ-Ցերևաբն է. հոդիս ճղտում է միայն մի դործի, դա վրեժխնդրությունն է... անողոք, մահաշունչ վրեժխնդրությունը... Ցե՛լ ամեն մի պատճառ, վոր ուշացնում է այդ վրեժխնդրության ժամը, չես կամենում եմ սրով ու հրով վանել... Ցեվ այժմ դու ինձ հաշտությո՞ւն ես առաջարկում. դու ինձ խնդրում ես ներ՞լ նրան... Ներել այնպես, ինչպես, վոր ներեց Սևադա՞ն... և զարմանում ես, վոր յուր տեսությունից, յուր ղուդ աչքերից ղրկված մարդը մոռանում է տեղությունը և ներում չարագործին, իսկ չես չե՛մ ներում... Ո՛հ, ի՞նչ անեմ. ի՛նչպես հասկացնեմ քեղ, թե վորքա՛ն տարբեր է իմ վիշտը Սևադայի վշտից... հանեցե՛ք և իմ ղուդ աչքերը. առեք ինձանից իմ իշխանությունը, իմ հարստությունը, իմ կալվածքները, բոլոր անձնական բարիքները. բայց վերադարձրեք ինձ ա՛յն, ինչ վոր Աշոտը խլեց ինձանից. վերադարձրեք ինձ իմ պատիվը, իմ Ամրամը... կա՞ղ եք այդ անել...:

«Ո՛հ, վորքա՛ն ծանր, վորքա՛ն անտանելի չե այս...:

Ամրամը, վոր խոսելու միջոցին բարձրացել եր տեղից՝ նեքեն ընկավ մահճակալի վրա, հուղմունքից դադրած և գլուխը ձեռքերի մեջ բռնելով՝ սկսավ ծանր շունչ քաշել:

Լռություն տիրեց վրանում: Ջեր խոսում և Մարզպետունին. Նա էլ խորասուզվել եր մտածմունքների մեջ:

Անցան մի քանի վայրկյաններ։ Հանկարծ ճիանների խրխնջյուն լսվեցավ վրաններից դուրս և մի պահապան ներս մտնելով հայտնեց, որ Բեր իշխանը գալիս է սեպուհին այցելելու։

Ցերեկու խոսակիցները միաժամանակ բարձրացրին գլուխները։ Ցերը պահապանը դուրս գնաց, Մարդպետունին վեր կացավ տեղից և ձեռքը դնելի Ամրամը պարզելով հուսահատ ձայնով ասաց.

— Մնաս բարյավ, բարեկամ. յերևի հաճելի չեր աստծուն՝ խնայել այս անդամ մեր ժողովրդին, այդ պատճառով նա քո սիրտը կարծրացրեց։ Բայց դնելի քեզ ունեցած իմ պարտքը յես կատարեցի, իմ խիղճն այլևս չի տանջիլ ինձ։ Մնում է այժմ կատարել դնելի աղջն ու Թագավորն ունեցած իմ պարտքը և յես կերթամ այն կատարելու։

— Ցերթաս բարյավ։ Այս վայրկյանից մենք հակառակորդներ ենք։ Ցես չեմ նեղանալ, որ դու պաշտպանես քո Թագավորին, այլ կհարդեմ քեզ մինչև անդամ այն վայրկյանին, յերբ դու նրան պաշտպանելու համար՝ քո սուրը կմխես իմ կրծքի մեջ... Բայց կցանկանայի, որ Մարզպետունյաց աղնվարյուն ժառանգը պաշտպան լիներ ավելի աղնվասիրտ Թագավորի...

— Ի՞նչ արած, Աչոտ—Ցերկաթն է այժմ դահի վրա, իսկ դահի խոնարհ ծառան եմ։ Մնաս բարյավ։

Այս ասելով Գևորգ իշխանը սեղմեց Ամրամի ձեռը և տխուր սրտով դուրս գնաց վրանից։

Ամրամը ճանապարհ դրավ նրան մինչև մյուս վրանի մուտքը։ Այդտեղ Մարզպետունին պատահեց ափխազաց արքայազն Բեր իշխանին։ Սա մի երբակաղամ, բարձրահասակ և դեղեցիկ յերիտասարդ եր, և հենց նոր ձիուց իջնելով՝ պատրաստվում եր ճանել վրանը։

Իշխանը հառեց յուր աչքերը յերիտասարդի վրա. մի ծանր հայացքով չափեց նրան վոտից մինչև գլուխ և առանց վողջունելու անցավ։

«Գնչի հոտ են առել Թշվառականները և հավաքվել ինչպես անդղներ... Սպասեցեք, կտեսնվինք մի որ ձեղ հետ»... չկնջաց ինքն իրան Գևորգ իշխանը և դուրս ժպիտը բերանին՝ աշտանակից յուր նժույգը և հեռացավ։

Ցեղնիկը հետևեց նրան։

ԺԲ

ՕՆՕԿՆԿԱԼ ՎԱՆՔԸՆ

Աչոտ արքայի թանակը, վոր գլխավորապես կազմված եր յեզերացոց Թաղավորի հեծելազորից, հետզհետե մոտենում եր հայոց սահմանին։ Նրա հառաջապահ գնդերը հասել եյին արդեն այն հովտին, ուր վերջանում եյին Սևորդյաց անտառները և ուր կարկաչահոս Արամը, յուր ծոցն առնելով Զորոդեսի վտակը, թափվում եր հանդարտահոս Կուրի մեջ։

Այստեղ, դետի ափին բանակած՝ նրանք ղբաղված եյին մոտալուտ հարձակման պատրաստությամբ։ Մի քանի որ եր ինչ Զորոդեսի կուսական անտառները մերկանում եյին իրանց բազմամյա ղարդերից։ Հինավուրց մայրիները ու կաղամախները սրաբերան տապարների հարվածներին չդիմանալով՝ ահագին ճարճատմամբ խոնարհում, ընկնում եյին, ինչպես մեռնող հըսկաները և իրանց ծանրամարմին բունների տակ ճնշում ու ջարդում մատաղ ծառերն ու ընձյուղները։ Մոտակա դյուղերից հավաքած յեղանց լուծերով շարունակ դեպի Կուրի ափն եյին կրում հսկայական դերաններ։ Այդտեղ լաստաձրդ յեզերացիք ուռենու դալար վոստերից հյուսած լախտերով կապկպում, միացնում եյին այդ դերանները և նրանցից մեծամեծ լաստեր կազմելով՝ գետն իջեցնում։

Ցերբ լաստերի թիվը մի քանի տասնյակների հասավ, լաստավարները սկսան միացնել այդ բոլորը պարաններով և հետըզհետե դեպի հանդիպակաց ափը մղել։

Այսպիսով լաստ լաստի միացնելով և ամենը միասին գետափի վրա ցցած բիրերին կապելով՝ կազմեցին մի ամրահով կամուրջ, վորի վրայով հեծելազորն սկսավ հետզհետե հայկական սահմանն անցնել։

Շուտով հասավ և Աչոտ Թաղավորը յեզերացոց վերջապահ

զնդերով։ Մի որյա հանդստությունից յետո նա հանդես արավ յուր զորքերին։

Մի քանի հազարից կազմված հեծելախմբերը բռնեցին զետաւի ուղղությամբ ձգվող դաշտավայրը բազմաթիվ շարքերով, վորոնցից յուրաքանչյուրին առաջնորդում եր մի իշխանաղն զորավար։

Այդտեղ եյին յեզդեցիք, խաղտիացիք, քուրիալցիք, մըկրընցիք, ապազցիք և Ձորոխի ձորահովտում բնակվող քաջերը։ Նրանց միացել եյին նաև Տայոց նահանգի հայ հեծելախմբերը։ Այսպիսով Թագավորն առաջնորդում եր մի հզոր բանակի, վորին, ըստ յերևութին, չկարենային դիմադրել ապստամբները։ Դրանք բոլորն էլ հուժկու, հազթանդամ և քաջամարտիկ զորականներ եյին, ամենքն էլ հագած յերկաթե զրահներ և պաշտպանված յերկաթազամ ընդնապաններով, թևկնապահ տախտակներով, խոշոր և ահարկու սաղավարաններով և յերկաթե դիմակալներով։ Նրանք զինված եյին միաժամանակ թե՛ աշտեներով ու սվիններով, վորոնց հետևից ձգում եյին թշնամու վրա և թե՛ յերկար նիզակներով, վորոնցով կռվում եյին հակառակորդի հետ՝ մոտ յեղած ժամանակ։ Ունեյին թևեր վահաններ և ծանր, քառակուսի ասպարներ. զինված եյին սրերով և վաղակավորներով։ Կային և նետաձիգ զնդեր, վորոնք կռվում եյին լայնալիճ աղեղներով և թունավոր նետերով։

Հանդես կազմելով զորքին յուր սահմանի վրա, Թագավորը կամեցավ հավատոխանալ, թե արդյոք այդ հեծելազորը յուր պատասքին կազմությանն և ահարկու տեսքին համեմատ ունի՞ նաև ռազմական հմտություն և կարո՞ղ է ուսիացող ու սևորդյայ զորությունն ընկճել։

Տեղի ունեցող փորձերը համոզեցին Թագավորին՝ թե յեզերացիք արժանի եյին իրանց հռչակին։ Նա ուրախ եր, վոր այսքանազ այդ ռահմանական թշնամիներով ալիսի կարողանար կրկին մի իրաւական դաս տալ Բեր իշխանին, վոր Սևխաղկայից յեկել եր Ուտիք՝ յուր ապստամբ իշխաններին ոչնչելու համար։

Սակայն չնայելով այս բոլորին, չնայելով և այն հանգուցությանը, վորին հանդիպեց արքան յեզերացոց յերկրում՝ առանալով նրա Թագավորից ոչնչական զորք այնպիսի մի ժամանակ, յերբ ինքը մնացել եր մենակ և կարոտ զորավոր բարեկամի ոգնության, այսուամենայնիվ, մի ներքին տխրություն ճնշում եր նրա սիրտը։

Այն միտքը, թե ինքը մտնում է յուր յերկիրը ոտար զորքերով, և մտնում է յուրայիններէն դեմ կռվելու համար, տանջում եր նրան աստիճ։ Բացի հայ զորաց կոտորածը, վոր տեղի պիտի ունենար անշուշտ թե՛ հաղթության և թե՛ պարտության դեպքում և վորի մասին մտածելն անդամ վիշտ եր պատճառում նրան, թագավորը ճնշվում եր նաև ամոթից, այն մասին՝ վոր ինքը մենակ եր, վոր յուր մոտ չկային դեթ մի քանի հայ իշխաններ, վորոնք յուր վանանդացի թիկնապահների հետ միասին արքայական շքախումբը կազմեյին։ Նա ամաչում եր յեղերացի իշխաններից և նույնիսկ նրանց զորքերից։ Բայց աշխատում եր միշտ ուրախ յերևալ և դեմքի վրա ժպիտ ունենալ։

Թագավորին անհանգստացնում եր նաև այն միտքը, թե ինչո՛ւ մինչև այն Մարզպետունին չերևաց։ Ի՞նչ դրության մեջ եր արդյոք յերկիրը. նոր խռովություն հո չե՞ բրդել մի տեղ, կամ վորևե հարձակում չե՞ յեղել յուր բերդերի վրա։

Զորահանդեսը վերջացնելուց և վրանը վերադառնալուց յետո՝ թագավորն զբաղված եր այս մտքերով, յերբ յուր բարեպաշտը, վոր վանանդացի հավատարիմներից մինն եր, ներս մտնելով՝ հայտնեց Գևորգ Մարզպետունու գալուստը։

Թագավորն ուրախությունից վեր թռավ տեղից, կարծես մի նոր և մեծ զորություն ոգնության հասավ իրան վտանգի վայրկենին։

— Ո՞ւր է, կանչիր այստեղ, հրամայեց նա խնդուքն և ուրախ անհանգստությամբ սկսավ անցուդարձ անել վրանում։

Մարզպետունին ներս մտավ և վողջունեց արքային խոնարհությամբ։ Վերջինս, սակայն, դրկեց նրան ինչպես շատ ուրիշներից ի վեր չտեսած յուր մի սիրելուն։

— Վոչ վոք յուր կյանքում այսպես տենչանոք չե սպասել քեզ, իշխան, ինչպես վոր այժմ սպասում եյի յես, ասաց թագավորը ժպտալով։ Վո՞րտեղից և ի՞նչպես հասար այստեղ. մենակ ես, թե՞ զորք ունիս հետդ. ի՞նչ են անում ասպատարները. ի՞նչ դրության մեջ են մեր դավառները... իրար յետևից սկսավ հարցեր անել թագավորը և ապա նստելով բազմոցի վրա՝ իշխանին էլ առաջարկեց նստելու։ Անշուշտ հոգնած ես, չո՛ւնչ առ, հանգստացիր, հետո կխոսես, հարկ նա, բայց առանց յուր հարցական հայացքը իշխանից հեռացնելու։

— Այստեղ յեկել եմ միայնակ, մեծափառ տեր, պատասխանեց Մարզպետունին, աթոռակի վրա նստելով. միակ թիկնա-

պահս Աղտաևից վերադարձրի Գարդմանն՝ Վահրամ բերդակալը յուր վանանդացի հավատարիմներով այստեղ հրավիրելու համար...:

— Ի՞նչպես. Վահրամ բերդակա՞լը, ընդհատեց Թաղավորը անհանդստությամբ. ի՞նչպես կարող է նա դալ այստեղ. ո՞ւմ պիտի հանձնե Գարդմանը. չի՞ վոր Սևադան նստած է այնտեղ յուր դղյակում և կարող է մեքենայություններ նյութել...:

Մարզպետունին սկսավ այնուհետև մանրամասն պատմել Թաղավորին յուր ճանապարհորդության պատմությունը՝ սկսած այն օրից, վոր ինքը Գարդմանացոց ձորում բաժանվել եր արքայից մինչև այն վայրկյանը, վոր վերադարձավ նորին նրա մոտ:

Նա նկարագրեց յերկրի դրությունը այնպես, ինչպես վոր տեսել եր. հայտնեց Սևադա իշխանին և Ցլիկ-Ամրամին արած յուր այցելությունը, նրա նպատակը. տեղեկություններ տվավ ապստամբության արտաքին շարժուձևերի, նրա ծավալման և ապստամբների ունեցած ուժի և ռազմական ծրագրների մասին:

Միով բանիվ հաղորդեց Թաղավորին այն ամենը, ինչ վոր կարևոր եր նրան դիտենալ յուր առաջիկա արշավանքը հաջողությամբ պսակելու կամ վերահաս վտանգներից խուսափելու համար: Բայց չհայտնեց նրան վոչինչ ապստամբության ներքին շարժուձևերի մասին:

Թաղավորն ուշադրությամբ լսում եր իշխանին, առանց սակայն ամենաչնչոքը դժդոհության նշույլ յերևացնելու յուր դեմքի վրա: Նա լսում եր այդ ամենն այնպես, ինչպես կլսեր ամեն մի սովորական և յերկրի դժբախտության հետ վոչ մի կապ չունեցող պատմություն:

Բայց նրա ներքը հանդիստ չեր: Իշխանը թեպետ չհայտնեց նրան Սևադայի կամ Ամրամի իրան հայտնած դաղտնիքները, բայց Թաղավորը դուշակում եր, վոր Մարզպետունին դիտե ամենուրեք մի բան այդ դաղտնիքներից և վոր նա խնամքով ծածկում է այդ իրանից:

Ներք վերջին ավարտեց յուր պատմությունը, Թաղավորը վեր կացավ տեղից և սկսավ լուռ անց ու դարձ անել վրանի մեջ: Նրան հայտնի եյին Ամրամի ապստամբության խնկական պատճառները, բայց հայտնի չեր այն, թե Մարզպետունին ի՞նչ չափ և ծանոթ այդ պատճառներին: Ուստի ինքն իրան մտածում եր, թե արդյոք խոսե՞ այդ մասին իշխանի հետ, թանա՞ նրա առաջ հին վերքերը և դիմե՞ նրա մտերմական ողնությանը՝ այդ վեր-

քերը սպեղանիով ծածկելու համար, թե՞ անվթար պահպանե դեռ յուր արքայական վեհությունը...

Առաջին դեպքում նա կունենար մի հավատարիմ խորհրդական, որը կզգներ իրան տաղնապի ժամանակ թե՛ դործով և թե՛ խորհուրդներով. իսկ երկրորդ դեպքում՝ նա աղատ կլիներ այն մտատանջությունից, թե նվաստացրել և իրան յուր ստորադրյալ մի պաշտոնյայի առաջ։

Նա հպարտ եր և անընկճելի։ Նա կարող եր կործանվել, բայց կուրանա՞լ—յերբե՛ք. այդ պատճառով յուր յերկար մտածություններից հետո նա յեկավ դարձյալ այն վորոշման, վորի վրա յեր և այդ մտածություններից առաջ, այն է՝ չխոսել գաղտնիքների մասին վոչինչ և աներկյուղ դիմավորել յուր ճակատագրին...։

— Ցեվ այդպես. մենք ուրեմն վաղ առավոտ ճանապարհ կընկնենք դեպի Աղտաև, խոսեց թագավորը իշխանի հետ։ Ցեթե ապստամբները չեն կամենում հողնեցնել իրանց, պետք է այդ նեղությունը մենք հանձն առնենք։ Իմ հեծելազորը կարող է կռվի մղել նաև հողնած ժամանակ։

— Բայց և այնպես, պետք է խուսափել դաղտնի կամ անպատրաստ հարձակման յենթարկվելուց. անհրաժեշտ է հետամուտներ ուղարկել թշնամու շարժումը դիտելու համար, նկատեց Մարզպետունին։

— Իմ հետամուտները վաղուց արդեն ապստամբների բանակումն են։ Նրանցից յերկուսը յերեք որ առաջ յեկան և հայտնեցին, վոր Ամրամի ծակամուտները սպասում են ինձ Կողբա ջրի մոտ, Կուրի շամբուտներում։ Այդ պատճառով էլ բանակը յես այս կողմից անցրի։ Ցակավին Աղտաև չհասած՝ ինձ լուր կբերեն մյուսները թշնամու վերջին դիտավորության մասին։

— Պատերազմի համար ի՞նչ ծրագիր ունի կազմած արքան, հարցրեց իշխանը։

— Հարձակողական։ Ձակատել անկարելի յե, պատասխանեց թագավորը։ Այդ պատճառով էլ պետք է խուսափ տալ լեռնամայրում թշնամուն պատահելուց։ Մեր հեծելազորն անշուշտ կհագթանակի, յեթե պատերազմե արձակ դաշտի վրա։

Նույն որը ևեթ թագավորը խորհրդի հրավիրեց յեղերացի իշխաններին և նրանց ու Մարզպետունու հետ միասին վորոշեց հետևյալ առավոտն իսկ առաջ վարել բանակը դեպի Աղտաև։

Ցեվ այդպես էլ արին։ Հետևյալ որը, դեռ կես որ չեղած աբ-

քայական զորքն անցավ Կողբա ջուրը և հանգիստ առավ մեծ ձակա լեռան ստորոտում։ Այդտեղ հանդիպեց արքային Վահրամ անդուհը յուր վանահոգաց հավատարիմներով։ Նա հայտնեց, թե Թշնամին հեռի չե իրանից միայն յերկու ժամվա ճանապարհ, և թե նա սպասում է արքային յերեք կետերի վրա։ Այսինքն բանակի մի բաժինը բռնել է Աղտամի արևմտյան հովիտը, արքայական զորքի հարձակումը յուր վրա դարձնելու համար. յերկրորդ բաժինը ծածկվել է Կուրի մեծ ձակա չամբուտներում. իսկ յերրորդը՝ հանդիպակաց լեռան անտառներում։ Եթե այդ այն նպատակով, վոր յերբ արքայական բանակը ընդհարվի առաջին բաժնի հետ, մյուս յերկուսը հասնեն յետևից և չըրջապատեն նրան չորս կողմից։

Անդուհի բերած տեղեկությունները հաստատեցին նաև արքայի հետամուտները։

Նորից խորհուրդ կայացավ Թաղավորի մոտ։ Վերջինս առաջարկեց զորապետներին՝ խորամանկության դիմել Թշնամուն յուր Թաղտից հանելու համար, այսինքն յետ նահանջել մի քանի ասպարեզ, ցույց տալու համար թե իբր արքան կամենում է անցնել Ուտիք հակառակ ճանապարհով։ Այս միջոցը կստիպեր ապստամբներին ձգել իրանց դիրքերը և հետևել Թաղավորին։

Այդ ժամանակ արքայական զորքը նորից կդառնար և կհարձակվեր նրանց վրա։ Այդ անսպասե հարձակումը կչփոթեր Թշնամուն և կստիպեր նրանց վախչել։

Այս խորհրդին հավանեցին ամենքը, բայց բարվոք համարեցին նահանջը հետաձգել մի որ, վորպեսզի, յեթե հեծելազորն առիթ լիներ հանկարծ վերադառնալու և հարձակում դործելու, դոնե հոգնած չլիներ և կարողանար զորեղ դիմադրության թափն ընկճել։

Բայց վորովհետև լեռան ստորոտը, ուր այդ միջոցին հանդըստանում եր զորքը, զուրկ եր անակընկալ հարձակման ժամանակ պաշտպանվելու հարմարություններից, ուստի վորոշեցին անցնել մոտակա կիրճը և դիչերել լեռան լանջին գտնվող ընդարձակ, բայց ավերակ մի բերդի մեջ։

Այդ բերդը, վոր «ավերակ» անունը կրում եր վաղ ժամանակներից ի վեր և վորը յերկրի իշխաններից վոչ վոք չեր նորոգում ռազմական անհարմար դիրք ունենալու պատճառով, ընկած եր կողբա լեռան լայնալանջ վոտքերից մեկի վրա և դիտվում եր ընդարձակ տարածություն։ Նրա կիսավեր պարիսպ-

ներն ու աշտարակները, վորոնք ախուր տպավորություն էին անում տեսնողի վրա, տակավին պարունակում էին իրանց մեջ բաղմաթիվ տներ ու մարտկոցները, վորոնք կարող էին պիտանի լինել բնակության համար: Բայց վորովհետև Թշնամու սուրն ի՛նքն էր բնակության համար: Բայց վորովհետև Թշնամու սուրն անխնա մաշել էր մի որ այդտեղի բնակիչներին, ուստի վոչ վոք այլևս բնակություն չէր հաստատում այնտեղ, վախենալով բերդի փակված դրությունից: Նրա չեռևից աստիճանաբար բարձրանում էին կոհակավոր լեռները, վորոնք ճանապարհ չունեին իրանց վրա և հետևապես անմատչելի էին թե՛ չեռևից դարանող Թշնամուն և թե՛ բերդից դուրս փախչել ուղղին: Իսկ առաջից ձգվում էր մի անջրդի խորաձոր, վոր ծածկված էր թավուտներով, ժայռերով ու խորափոսներով: Այդ ձորը մտնելու և բերդը բարձրանալու միակ ճանապարհը լերկու ցածուն լեռների կիրճն էր, դեպի վորը դիմում էր թաղավորը, իշխանների ընկերակցությամբ, վորպեսզի զորքի համար դիշերային կայան վորոնե:

Աչերակ բերդը տեսնելուն պես յեղերացի իշխաններն ամենապատահով տեղը համարեցին այն, մտածելով մանավանդ, վոր բերդի շինությունները կպատսպարեյին իրանց աշնանային դիշերվա ցրտից: Մարզպետունին ու Վահրամ սեպուհն, ընդհակառակը, վտանգավոր էին համարում այդտեղ դիշերելը, առարկելով, թե Թշնամին կարող է դիշերանց դալ և կրճի բերանը փակելով՝ բանտարկել իրանց բերդի կամ նուշնիսկ ձորի մեջ:

Թաղավորը համամիտ էր յուր հավատարիմներին հետ. բայց կամենալով շնորհ անել ոտար ղինակիցներին և դրանով նրանց ինքնասիրությունը զգվել, մանավանդ վոր չէր կարծում, թե Թշնամին կարող է դիշերանց յուր դիրքերը ձդել և իրանց դեմ արշավել, համաձայնվեցավ յեղերացի իշխանների հետ:

Սեպուհն ու Մարզպետունին չհակառակեցին արքային, բայց մի զաղտնի յերկյուղ սկսավ անհանդստացնել նրանց:

Ցերեկոյան դեմ հեծելազորը հետդհետե կիրճը մտնելով, սկսավ դեպի ավերակ բերդը բարձրանալ: Այդտեղ հասավ և Թաղավորը յուր և յեղերացի իշխաններով: Կրճի բերանում Թողեցին պահանորդների մի խումբ, վոր անքուն պիտի հսկեր դիշերը և Թշնամու մոտենալը նկատելուն պես իմաց տար իշխաններին:

Ինչ ժամանակից յիա ավերակ բերդը կենդանություն ա-

ասել։ Ամեն կողմ սկսան կրակներ վառել, խարույկները բորբոքել. իսկ ղորքը յուր ձիանը զարմանելուց հետո, սկսավ արքայի նվիրած վոչխարները վողոսել։ Պատերազմի նախապատրաստությունքը հաստատելու հրամանը տվել եր ինքը Թագավորը։

Բայց այդ նա կարդադրել եր, վոր իշխանները յուր հետ միասին վայելեն ընթրիքը։ Նա ուրախ տրամադրության մեջ եր. և այդ հանդամանքը համարում եր մոտալուտ հաջողության նշան։

Անցան ընթրիքի և զվարճության ժամերը. կրակները մարեցին և Թագավորից սկսած մինչև վերջին զորականը ամենքն էլ քնո դիրքը մտան։ Անքուն էին միայն դեռ կարդված պահապանները և Թագավորի թիկնապահներից նրանք, վորոնք հերթով պահապանություն էին անում արքայի վրանին։

Սվերակ բերդի չուրջը խոր լռություն եր տիրում։ Միայն կուրն սպասող ձիանների փռնչոցը, կամ մեկմեկից ընդհատվող նժույգների խրխնջյունն եր, վոր մերթ ընդ մերթ ընդհատում եր այդ լռությունը։

Գուն չեր մտածում, սակայն, իշխան Մարզպետունու աչքերին։ Սկզբում, արդարև, նա մի փոքր նիրհեց։ Բայց կռվող ձիանների մի աղմուկից արթնանալով, այլևս չկարողացավ քնել։ Իշխանին անհանդստացնում եր տակավին այն կասկածը, վոր ղորքի ավերակ բերդում դիշերելու պատճառով պաշարել եր նրան։ Նա վախենում եր ապստամբների անակնկալ հարձակումից և այդ յերկյուղն անտեղի չեր։ Արձակ դաշտի մեջ, արդարև, ապստամբները չէին վնասիլ արքայական բանակին, քանի որ խորախիանների և զահավիժների պատած այս բերդի մեջ նրանք կարող չէին պաշարել այդ ղորքը և չարաչար հարվածել նրան։

Ցերկար այս ու այն կողմը շրջվելուց յետո, իշխանը վեր կացավ տեղից և այծենահագը վրան առնելով դուրս յեկավ ցածուն անտկից, վորի մեջ պատսպած եր ինքը։ Ցեղնիկը նույնպես, վոր դռնվում եր նրա մոտ, վեր թռավ տեղից և հետևեց իշխանին։

— Ո՞ւր, տե՛ր իմ, հարցրեց նա աչքերը արտրելով։

— Անհանդիստ եմ, Ցեղնիկ, քնել չկարողացա. կամենում եմ դեպի ձորի բերանն իջնել, ասաց իշխանը։

— Ինձ էլ թո՛ւյլ տուր հետևել քեզ։

— Ձի՛, այս յերկու որը դու բավական հոգնեցար, պատվի՛ր

և հանդստացիր. վաղը շատ դործ ունիս կատարելու, ասաց Իշխանը։

— Վո՛չ, տեր իմ, յես այլևս հոգնած չեմ. Թո՛ւյլ տուր ինձ հետևել քեզ։

Իշխանը չընդդիմացավ և նրանք միասին դուրս դնացին ճանապից։

Աշնանային ցուրտ դիշեր եր. բայց յերկինքը պարզ եր և աստեղազարդ. լուսինը հանդարտ սահում եր յերկնակամարի վրա և յուր արծաթյա շողերով պայծառ լուսավորում շրջակա լեռները, ժայռերն ու գահավեժները և լայնաղիր բերդի կիսավեր շինությունները, վորոնք այդ բոպեին իրանց տխուր լուսթյամբ, ներկայացնում եյին մի խորհրդավոր և յերկյուղ աղդող տեսարան։

Բերդի ներսն ու դուրսը խումբ-խումբ պառկած եյին զորքերը, այծենակաճներն մեջ վառթաթված և դլուխները պայուսակների, կամ թամբերի վրա դրած. Ձիաները նույնպես խմբերով, կամ զատ-զատ կապված՝ սպառում եյին իրանց կուրը ախորժանքո. իսկ պահապանները, յերկար նիզակները ճոճելով, անց ու դարձ եյին անում ավերակների առաջ և կամ ձորաքանջի դահլիճների վրա, վորտեղից անցնում եր կիրճը տանող ճանապարհը։ Հեռավոր ավերակների միջից լսվում եր բուի կռինչքը, վոր այդ խաղաղական ժամին ծանր տպավորություն եր անում աբթուն յեղողների վրա։

Իշխանն ու Ցեղնիկն անցան քնած խմբի միջից կամացուկ քայլերով։ Արթնացողներ չեղան. միայն պահապաններից մի քանիսը ձայն ավին հեռվից և պատասխան առնելով՝ լռեցին։ Բանակատեղից անցնելով՝ խորաձորն իջան նրանք։

— Շա՞տ սլիտի հեռանանք բանակից, տեր իմ, հարցրեց Ցեղնիկը։

— Վոչ, կերթանք կրճի բերանը և կվերադառնանք, պատասխանեց Իշխանը. կամենում եմ տեսնել, թե մեր պահապանները հսկո՞ւմ են կրճին, թե՞ քնած են արդեն։

Այս խոսքերը դեռ չեր ավարտել Մարզպետունին, յերբ հանկարծ կրճի կողմից հրհրոցի մի աղմուկ լսվեցավ։

— Այո՛ ինչ է. կարծես պահապանները կռվում են, ասաց Իշխանը և կանդ առավ։

— Դեպի մեզ հնձյալներ են դալիս, տեր իմ. ո՞վքեր են արդեք, կասկածավոր յեղանակով հարցրեց Ցեղնիկը։

Ցեղ իրավ այդ վայրկյանին հեծյալները մի խումբ օրորշավ դեպի խորաձորը խուժեց։

— Մեր պահապաններն են, ասաց իշխանը և մի հանկարծահաս յերկյուղ ցնցեց նրան։

— Ուրեմն Թշնամին մոտենում է, դուշակեց Թիվնատահը։

Իշխանը չպատասխանեց, այլ դեպի հեծյալները հառաջանալով՝ բարձր ձայնով հարցրեց.

— Պահապանն՛ը, ո՞ւր եք դիմում։

— Թշնամին այստեղ, մեր առջևն է, տեր, պատասխանեց պահապանների պետը և կանդ առավ իշխանի առաջ։

— Թշնամի՞ն, հարցրեց իշխանը, կարծես չհավատալով յուր ականջներին, կամ կամենալով ուրիշ բան լսել բոթաբեր զորականից։

— Այո՛, Թշնամին, կրկնեց վերջինս. նրա դնդերը կրճի մոտքը վտակելին։

Իշխանն առնս կայծակնահար յեղավ։ Նրա կասկածները մարմին առին։

— Ի՞նչպես հասան նրանք այդտեղ. մի՞թե ավելի վաղ չիմացաք նկատել, վոր լուր տայիք մեզ, հարցրեց իշխանը վայրկենական լուռթյունից յետո։

— Վա՛յ, տեր իմ, դաշտի վրա մենք չտեսանք նրանց։

— Ի՞նչպես թե չտեսաք. ուրեմն յերկնքի՞ց իջան։

— Ճիշտ վոր յերկնքից։ Կրճի բերանը վտակող լեռան բարձունքից խուժեցին։

Իշխանը մնաց շվարած։

— Շտապենք զորքը վոտի հանդնեցնել, տեր իմ, կամացուկ ձայնով ասաց Ցեղնիկը։

— Ավելորդ է. ապստամբներն այս կողմը չեն անցնել. նրանք մեր անզգուշությունը չունին, նկատեց Մարզպետունին և հանդարտ քայլերով յետ դարձավ դեպի բերդը։

Ցեղ արդարև՝ վախստական պահապաններին հալածողներ չեղան։ Ամբամի զորքը շտացել եր կրճի բերանը վտակելով։ Նա այժմ կարող եր նստել այդտեղ հանդիստ կերպով և սպասել հակառակորդի անձնատուր լինելուն։

Գևորգ իշխանը հասնելով Թալավորի վրանին, կանդ առավ այդտեղ։ Նա չեր վստահանում մտնել և արքունացնել նրան։

— «Սևազգի դուշակությունը կատարվեց, մտածում եր ինքն իրան Մարզպետունին, ասելով այս անգամ պատժեց

հանցավորին. իզուր եյինք մենք աշխատում վախչել նրա բարկությունից. այդ բարկությունը հասավ և մատնեց մեզ Թշնամուն...»:

Բայց պահանորդ խմբի քայլատրուխը զարթեցրեց զորականներից չատերին: Թշնամու դալստյան լուրը կայծակի արագությամբ տարածվեց ամեն կողմ և մի քանի վայրկենի մեջ վառքի հանեց թե՛ զորքերը և թե՛ զորավարները:

Աղմուկն ու շշուկը զարթեցրեց նաև Թագավորին: Այդ ժամանակ ահա՛ ներս մտավ Գևորդ իշխանը և հայտնեց նրան տխուր նորությունը:

— Ի զի՞ն ուրեմն... զոչեց Թագավորը և վեր թռավ տեղից: Շա՛ տ չտապալ ծածկվեց սաղավարտը և սուրն ածելով՝ կամեցավ դուրս թռչել:

— Իզուր ե՛ չտապելդ, տեր արքա. Թշնամին չե՛ հասաջանում դեպի մեզ. նա նստած է կրճի բերանում, հանդիստ ճայնով ասաց իշխանը:

— Ի՞նչ յեղանակով ես խոսում, Մարզպետունի իշխան. քնո՞ւմ ես դեռ, նկատեց Թագավորը՝ հավատարմի դանդաղկոտությունը տեսնելով:

— Ձեմ քնել բնավ և չեյի կարող քնել. յես այս դժբախտության սպասում եյի ամեն վայրկյան:

— Ի՞նչ դժբախտություն... Առաջի՞ն անգամն ենք հարձակման հանդիպում:

— Վո՛չ, տեր արքա. բայց մեր այժմյան դիրքը...

— Դատարկ խոսքեր են, ընդհատեց Թագավորը, չկամենալով վրեւե դիտողություն լսել յուր ընտրած դիրքի մասին, գնա՛ հայտնիր իշխաններին պատրաստվել իսկույն հարձակման:

Իշխանն անխոս դուրս գնաց վրանից և հայտնեց պետերին արքայի հրամանը:

Մի քանի վայրկենում զորքը պատրաստվեցավ: Բայց ի՞նչ հարձակում կարող եր դործել հեծելազորը այդ զառիվայրներից վրա կամ խորաւիխներուն մեջ: Նրան հարկավոր եր ընդարձակ դաշտ, լայնաղիր ճակատ. մինչդեռ նա յուր առաջ ուներ միայն մի խորաձոր և մի փակված կիրճ:

Իշխաններն ու զորքի պետերն յեկան Թագավորի մոտ խորհրդի:

— Հարձակումն անհրաժեշտ է, չպետք է հանդստանալ ու ժամանակ տալ Թշնամուն, ասաց Թագավորն իշխաններին: Ես-

Մի վտղյան ոտանանք, ասպատամբները լեռան բարձրությունները կզրավեն և մեզ յերկու կողմից կպաշարեն։ Այն ժամանակ կավելնա ավելի կղժվարանա։

— Մենք անծանոթ ենք մեր այժմյան դիրքին ու չրջականերին, ասացին յեղերացի իշխանները, հետևապես դիշերանց թշնամու դեմ դնալ չենք կարող։ Թողեք առավոտը բացվի, այնուհետև կզործենք, ինչ վոր բարվոք կհամարեք։ Այժմյանից, սակայն, կարող ենք հետազոտել մեր չուրջը, վորպեսզի լուսը բացվելուց զործել սկսենք։

Գևորգ իշխանն ու Վահրամ սեպուհը նույնպես այդ կարծիքին էլին. թագավորն ստիպված եր ղիջանել իշխանների պահանջին՝ անոգուտ կոտորած չանելու համար։

Բայց վորոշվեցավ, վոր Վահրամ սեպուհն ու յեղերացի մի իշխան դնան խոհուն լրանց թիկնապահներով չրջակա դիրքերը հետազոտելու։ Ցերեկ դաշտը յերևելու ճանապարհ դտնվեր, ուրեմն կհանդիպին զորքն այդտեղից և այդպիսով վտանգը կհեռացվեր. իսկ յերեկ ճանապարհ չդտնվեր, այնուհետև պիտի կլրվելին՝ պաշարման չենթարկվելու համար։

Արևելքը հաղիվ սիսեղ եր շառագունել, յերբ Վահրամն ու յեղերացի իշխանը վերադարձան լրանց թիկնապահներով և հայտնեցին Թագավորին ու իշխաններին հետազոտության արդյունքը։

— Մենք վակվան ենք ամեն կողմից, ասաց սեպուհը. այս դիմացի լեռը չունի յուր վրա վոչ մի անցք. յերեկ մենք լինքներս ճանապարհ բանանք՝ Թավուտը կարտևելով, դարձյալ հեծելազորն անցնել չի կարող, վորովհետև լեռան յետևի ստորոտը ծածկված է ժայռերով ու խոխոմներով։ Մեր յետքից բարձրացող այս բլուրները նույնպես խափանում են ճանապարհը, ըստ վորում հետզհետե բարձրանալով՝ մխանում են ուրիշ լեռների հետ։ Միակ յելքը այն կրճիղն է, վորի առաջը բռնած է Թշնամին։ Մեզ մնում է նետաձիգների դունդը հանել կրճի բարձրությունների վրա և այդտեղից, անընդհատ նետաձգությամբ, վանել ճանապարհը փակողներին։ Թուցն այս միջոցով հնար կունենանք Թշնամու շարքերը շփոթել և մի քանի դունդ հեծելազոր դաշտ դուրս հանել...։

— Բայց դրա համար որեր են հարկավոր, ընդհատեց սեպուհին նորան ընկերացող իշխանը։

— Ամբողջ շաբաթով կարող ենք նետաձիգներին պարապեց-

նել այրուձեղ, նկատեց Թագավորը, մենք նետերի մեծ պաշար ունինք։

— Այո՛, տեր, նետերի պաշար ունինք, կրկնեց իշխանը, բայց ջուր չունինք։

— Ի՞նչպես թե ջուր չունինք։

— Այո՛, այդպես է, հաստատեց սեպուհը, այս շրջականերում չկա վոչ առու և վոչ աղբյուր։ Միակ վտակը, վորից ղորքը ջուր առավ յերեկ, կրճի բերանից դեպի այս խորաձորն է իջնում. իսկ նրա ընթացքը թշնամին արդեն դեպի դաշտն և շրջել։

— Անկարելի յե, վոր այս լեռներում ուրիշ ջուր չգտնենք, կրկնեց Թագավորը։

— Ամեն կողմը շրջեցինք, ամեն տեղ պրպտեցինք, մինչև անգամ անձրևաջուր չտեսանք, պատասխանեց յեղերացի իշխանը։

—Ուրեմն կորած ենք... դոշեցին մի բերան նրա ընկերները։

Թագավորը չվարած սկսավ յուր շուրջը նայել։

— Ի՞նչ սիրուն աններ, տեր, հարցրեց յերիտասարդ յեղերացիներից մինը։

— Այո, ինչ վոր պարտավոր ենք, պատասխանեց Թագավորը խաղաղ ձայնով։

—Բայց ի՞նչ ենք պարտավոր, կրկնեց յերիտասարդ իշխանը։

— Հայերն այսպիսի դեպքում կռվում են... յեղերացիք չդիտեմ, թե ինչ են անում... նկատեց Թագավորը, կամենալով կշտամբել անժուժ յերիտասարդին։

— Վոչ մի տղի հեծելազոր, ո՛վ արքա, չի կռվում լեռների լանջին կամ ձորակների մեջ, պատասխանեց յեղերացիների առաջնորդը, կամենալով յուր ընկերների պատիվը պաշտպանել։

Թագավորը չպատասխանեց նրան, այլ դառնալով Մարզպետունի իշխանին և վահրամ սեպուհին՝ հրամայեց.

— Գնացեք և իմ խմբեցեք այս վայրկենին բոլոր վանականներին և Տայոց հեծյալներին. ասացեք, վոր Թագավորը պիտի առաջնորդե նրանց—և թե մի քանի վայրկենից մենք պիտի հարձակվենք մեզ պաշարող ապստամբների վրա։

Իշխանն ու սեպուհը դուրս գնացին խսկուն, իսկ յեղերացի պետերը մնացին կանգնած։

Թագավորը մի քանի վայրկյան լուռ անց ու դարձ արավ նրանց առաջ և ապա առաջնորդ իշխանին դառնալով՝ ասաց.

— Կոստանդին Թագավորն ինձ ուղեկցելիս հայտնեց, թե յեղերացի իշխանների մեջ ամենից ընտիր և ամենից քաջարի

անձինքներին և զինակից կարգել ինձ և թե ամենից աներկյուղ զորաղնդերն և հանճարել այդ քաջերի ձեռքը: Ես չեմ պահանջում, որ դուք ինձ ոչնչեք այս ծանր վայրկենին. կյանքը թանկ պարգև է, ի՞նչպես կարող եք վտանգի յենթարկել նրան... Բայց պահանջում եմ, որ ձեր աշխարհը վերադառնալուց յետ հայտնեք քաջային արքային, թե յուր իշխանները հայոց ազգասիրներին դեմ ճակատել չկարողացան... Այդքանով արդեն կատարեցին Թագավորը կարող է յուր իշխանների քաջության չափը վորոշել:

Այս առնելով Թագավորը դուրս գնաց վրանից: Ցեղերացի իշխանի վրա ծանր ազդեցություն արին այդ խոսքերը: Նրանք չկարծեցին նայում էլին միմյանց՝ առանց խոսել կամ տրտունջ հայտնել կարողանալու:

— Այս անպատվությունը մենք պիտի տանե՞նք... հարցրեց վերջապես յերիտասարդ իշխաններից մինը երանց առաջնորդին:

— Ո՛վ չի կարող տանել, պիտի վերցնե յուր դունդը և հեռանա հայոց Թագավորին, ծանրությամբ նկատեց առաջնորդը:

Բայց վոչ վոք չպատասխանեց նրան, վորովհետև այդպիսի հանդուգն ձեռնարկության վոչ վոք էլ չէր կամենում մատնանիշել:

Իսկ Աշոտ արքան վրանից յելնելով՝ պատրաստ դտավ արշավն վանանդացոց և տայոց քաջերին, վորոնց դլուխ էլին անցել Մարտիկունի իշխանը և վահրամ սեպուհը:

Թագավորն աչառանկեց իսկույն յուր ողապարիկ ձիուդը և առաջ անցնելով՝ բարձր ձայնով դոչեց.

— Ինչե՛ր, ո՞վ և կամենում ձեղանից կռվել և մեռնել Թագավորի հետ միասին:

— Մենք ամենքս... դոռացին միաբերան հայ կտրիճները և նրանց ձայնի արձագանգը վորոտաց հեռուները լեռներում:

— Ո՛ն ուրեմն, հառա՛ջ, դոչեց Թագավորը և սուրը հանելով դիմեց Թշնամու կողմը:

Հնծելազորը հետևեց նրան:

Ասպատմբներից մի խումբ հասցնել եր արդեն մինչև ճոթբի բերանը և դիտում եր հեռվից արքայական բանակի շարժումը: Ցերբ նա հնծյալների այս դունդը տեսավ, սկսավ դեպի կրճի ներսը նահանջել:

Թագավորը յուր զորքով հասավ նրա յետևից ինչ-վոր մի վոհմորիկ և ընդհարվեցավ հետը կրճի մեջտեղը: Արքայի նպա-

տակն էր հանկարծակի բերելով՝ փախուստ դարձնել այդ խումբը և այդպիսով չփոթել կրճի բերանը փակող զորքերին։ Վանդաղցիք ու տայացիք կռվել սկսան կատաղաբար։ Ներանք ճնշաններով կոխկռտում և յերկար նիզակներով չամփրտում էյին անդոր հետևակներին, վորոնք կռվում էյին միայն կարճ սրերով։ Ընդհարումը տևեց հաղիվ կես ժամ. վորովհետև արքայականների հարձակումն այնպես անակնկալ և բաղխումն այնքան զորավոր էր, վոր ապստամբների խումբը յերկար դիմադրել չկարողացավ։ Մի քանի տասնյակ զոհեր տալուց հետո նա թիկունքը դարձրեց և փախավ։ Արքայականները հաղթական աղաղակով սկսան հալածել նրանց։

Թվում էր, թե բախտը ժպտում է Թագավորին։ Կրճի բերանը հասնելուց՝ փախստականները դեպի լեռան լանջերը ցրվեցան։ Արքայի հեծելազորն ընկավ նոր հանդիպող զինվերի վրա, վորոնք արդեն չփոթված էյին թե՛ փախստականների և թե՛ հալածողների աղաղակից և սկսավ տաստկապես հարվածել նրանց։ Ընդհարումը յերկար չեր տևելու. այդ զինվերը նույնպես փախուստ պիտի տային՝ մաքրելով կիրճը արքայական զորքի առաջ. բայց հանկարծ հասան այդտեղ սեպուհ Ցլիկ-Ամրամը և Գարդմանա Դավիթ իշխանը, նստած ամեհի նժույգների վրա և շրջապատված մինը կատաղի սևորդիներով և մյուսը՝ հզոր զարդմանացիներով, վորոնք և վայրկենապես կռվի կերպարանքը փոխեցին։ Ամրամ սեպուհը խրախուսս կարդաց յուր քաջերին և տուսերամարկ ու արագաշարժ ընկավ արքայական զորքի վրա։ Նրա ձայնը վորոտում էր կրճի մեջ ինչպես գարնանացայր հեղեղի չառաչ և այդ ձայնին հետևում էր բազմամարթո զորքի աղաղակը։ Նույնպիսի հզոր գոչյունով խրախուսել սկսան իրանց զինվերին Թագավորն ու Մարզպետունի իշխանը և մարտիկները յերկու կողմից սկսան ընդհարվել նոր ուժով և ավելի կատաղաբար։

Գնդերից վոչ մինը տեղի չեր տալիս մյուսին։ Արքայականներն աշխատում էյին վանել հակառակորդներին կրճի մինչ, իսկ վերջիններս ճգնում էյին յետ մղել նրանց դեպի խորագորը։

Այդպիսով մինյանց դեմ խիղախելով և չարունակ անճուկ կրճի մեջ խառնվելով՝ փակվում էր հեծելազորի ճանապարհը։ Արքայականների դրությունը ծանրանում էր. նրանք հարձակվել չէյին կարողանում և իրանց չուրջը դեռող հետևակների դեմ մարտնչելու համար՝ ստիպված էյին ձգել յերկարաբուն նիզակ-

ները և հովել միայն սրերով։ Այս դրության մեջ դարձյալ նրանք աննահանջ խիզախում էին ապստամբների դեմ։ Ցավ չնայելով, վոր վերջիններն թիվը հետզհետե աճում և լրանցը, ընդհակառակը, նվազում եր, այսուամենայնիվ արքայականները կանդնած էին այդ հզոր հեղեղի առաջ ինչպես անսասան մի հողաթումբ և կռվում էին հուսահատ կատաղությամբ։

Բայց հանկարծ աջակողմյան լեռնալանջից սկսավ սեղալ նրանց վրա նետերի սաստիկ մի տարափ։

Այդ ապխաղցիների դործն եր։ Երբ իշխանը տեսնելով արքայականների համառ դիմադրությունը և այն կատորածը, վոր նրանք անում էին նիղակակից զորքի մեջ, հանեց լեռնալանջի վրա յուր նետաձիգ զորագունդը և սկսավ այդտեղից հարվածել նրանց նետերով։ Ցավ վորովհետև նրանք աջ կողմից էին հարվածում, ուստի արքայականները սաստարափակ անելու հնար չունենալով (ըստ վորում աջ ձեռքով սուրն էին կրում և ձախով՝ սաստրը)՝ մնացին յերկու կրակի մեջ։ Թագավորը տեսավ յուր հավատարիմ զորագնդի հուսահատ դրությունը, չափնց նրա և հակառակորդի անհավասար ուժը և անդուլա հարմարելով յուրայիններին դիմադրությունը, կանչեց Մարզպետունի իշխանին և հրամայեց նրան «նահանջի» փող հնչեցնել։

Այդ հրամանը կարծես կայծակի հարվածի տավալ քաջ իշխանին։ Այն մարդը, վոր մինչ այդ աշխատում եր յեղբայրասպան կռիվները արդելել, այժմ այլևս նահանջի մասին չեր ուղում լսել։ պատերազմի աղմուկն ու արյան դոլորշին արբեցրել էին նրա հոդին։ Այդ վայրկենին նա չեր մտածում, թե կռվում է յեղբայրների դեմ, այլ թե՝ պատժում և ապստամբներին, դահի և հայրենիքի թշնամիներին։ Ուստի վորքան եր յուր զոնդը նվազ, վորքան եր հակառակորդը զորավոր, այսուամենայնիվ նրա անպարտելի հոդին չեր ընկճվում թվի մեծության առաջ։ Նա պաշտպանում եր յուր թագավորին, հայոց դահի վեհ պայազատին և այդ միտքն արդեն բավական եր, վոր նրա սրտում ապրուծ զորանար։ Բայց յերբ թագավորը հրամայեց նահանջել, նրա մարմնով տհաճության դող անցավ, հզոր բազուկը կարկամեց և արյունոտ սուրը կախվեցավ նրա ձեռքում ինչպես մի անզոր դործի...։ Նա մի ծանր հոգվոց հանեց, վոր նման եր ավելի խուլ մռնչյունի, և հեծյալների հետևն անցնելով՝ հրնչեցնել տվավ նահանջի փողը։

Արքայական զորքն սկսավ նահանջել, բայց քայլ առ քայլ

և առանց թիկունք դարձնելու։ Ցերբ նրանք ձորամիջը հասան, նկատեցին, վոր յեղերացիք իջնում եյին բերդից իրանց ոգնելու համար։ Նիղակակից իշխանները թագավորի սկզբի հաջողությունը տեսնելով, վորոշել եյին վերջապես կատարել իրանց դիտակցական պարտքը։ Բայց յերբ արքայական ղորքի նահանջը տեսան, կանգ առան լեռնալանջի վրա։

Այս հանդամանքը պատճառ յեղավ, վոր ապստամբները, յերկյուղ կրելով յեղերացիների հարձակումից, յետ քաշվեցան կռվից, և արքայական դունդը, վոր բավական նվազել եր, բանակատեղը դարձավ առանց դժվարության։

— Մենք գալիս ենք ձեզ ոգնելու, տեր արքա, ասաց յեղերացիների առաջնորդը, յերբ թագավորը լեռնալանջը հասավ։

— Իղուր նեղություն պիտի կրեյիք, իշխան. յեղերացի քաջերի համար կռվելու տեղ չեր լինել կրճում, պատասխանեց թագավորը դառնությամբ։

— Բայց մենք մեր պարտքը պիտի կատարեյինք։ Մենք ուշացանք միայն մեր գնդերը կարգավորելու պատճառով։

— Ցեվ դուք ուշանալով անոգուտ գործ չարիք. դուք վերադեցիք ձեր ղորքի պատիվը՝ հեռացնելով նրան մեր ամոթահար պարտության մասնակցելու դժբախտությունից։

Այս ասելով թագավորը հեռացավ իշխանից՝ հեգնական ժպիտը շրթունքներին։

Առաջնորդ յեղերացին նայեց նրա հետևից վայրենի հայացքով և կարի դայրացած յուր վրանը դարձավ։

Բաժանման վողին, վոր հետևում է, առհասարակ, ամեն անհաջողության, լուծել եր արդեն թագավորի և յուր նիղակակիցների միությունը։ Ցեղերացի իշխանները, վորոնք սկզբում սիրով անսալով Կոստանդին թագավորի հրամանին՝ յեկել եյին Աշոտ արքային ոգնելու, և այդ արել եյին վոչ միայն յերկու աղգերի դաշնակցության հարդելու մտոք, այլև փայլուն հաղթություն և հարուստ ավար ձեռք բերելու հուսով, այժմ արդեն հուսահատ և սրտաբեկ քաշվել եյին իրանց առաջնորդի վրան և խորհում եյին բաժանման կամ փախուստի վրա։

Ցեվ ուրիշ ի՞նչ կարող եյին մտածել այդ ոտարականները, քանի վոր նրանց հրապուրողը յեղել եր վո՛չ թե հայոց գահը անոտան պահելու նախանձախնդրությունը (վոր չեր ել կարող լինել), այլ լոկ անձնական շահը, ավարներով հարստանալու ցանկությունը։ Բայց շահու և ավարի փոխարեն այժմ սպառ-

նում էր նրանց անխուսափելի կոտորած, կամ սովամահ: Բացի այդ, զորքի մեջ նույնպես սկսվել էր տրտունջ: Թեպետ նրանք ունեին մի քանի որվա ուտելու և կարող էին տանել մի չարաթվա պաշարման, բայց վատթարն այն էր, որ ջուր չունեին: Մարտավը հետզհետե տանջում էր թե՛ իրանց և թե՛ ձիաններին: Այդ ծանրության առակ չէր կարող զորականը:

Այս պատճառով, ահա՛, դունդադունդ գալիս, խոնվում էին նրանք իշխանական կացարանների առաջ և պահանջում՝ որ կամ հրաման տան իրանց դինաթափ լինելու և բանակից հեռանալու և կամ հնար ցույց տան ջուր հայթհայթելու:

Ցերեկը խորհրդակցությունից հետո յեղերացոց իշխանապետը որոշեց դիմել Թաղավորին և խնդրել նրանից, որ զորձելու ճանապարհ ցույց տա իրանց:

Նա վերցրեց ընկերը իշխաններին և նրանց հետ միասին մտավ Թաղավորի վրանը հենց այն մի ժամին, երբ վերջինս նըստած յուր յերկու հավատարիմներով, այն է՝ Գևորդ Մարզպետունու և Վահրամ սպասուհի հետ, խորհուրդ էր անում:

—Զորքի մեջ, տեր արքա, սկսվել է տրտունջ, որ հետզհետե ավելանում և սպառնական կերպարանք է առնում. ի՞նչպես կհրամայիք զորձել դրա դեմ, հարցրեց իշխանապետը Թաղավորին:

— Անչուշտ տրտնջում են յեղերացի զորականները, այնպես չե՞, հարցրեց Թաղավորը:

— Այո՛, տեր արքա:

— Ի՞նչ է նրանց պահանջը:

— Ամենահասարակ, ամենաբնական պահանջ:

— Այսի՞նքն:

— Ջուր են խնդրում, տեր արքա և կամ...

— Ցեվ կամ ի՞նչ:

— Ցեվ կամ հրաման, որ զենքերնին հանձնեն Թշնամուն և ազատ յերթեն այս բանտից:

Թաղավորը յուր հայացքը սևեռեց իշխանապետի աչքերին և մի վայրկյան լուռ նայելուց յետո ասաց.

— Զորքի պահանջն անբնական է և անարդար:

— Ինչպե՞ս, տեր արքա. մի՞թե մարդիկ իրավունք չունին ջուր խմելու, հարցրեց իշխանապետն այնպիսի մի ժպիտով, որի մեջ նշմարվում էր և՛ զարմանք և՛ հեղնություն:

— Վո՛չ, պատասխանեց Թաղավորը խիստ ձայնով:

Իշխաններըը աչքերնին սևեռեցին արքայի վրա։

— Դուցե ձեղ զարմացնում է իմ պատասխանը, ասաց թագավորը, բայց չես զարմանալի վոչինչ չասացի։ Ո՛վ վոր անջրդի տեղը ջուր է պահանջում, անբնական պահանջ է անում. ով վոր դինաթափության գնով ազատություն է վորոնում, կարի նվաստացուցն գործ է կատարում։

— Ի՞նչ անենք ուրեմն. հոտորվի՞նք. ավելի լավ չե՞ նվաստանալ՝ քան մեռնել։

— Վո՛չ, ավելի լավ է մեռնել, քան նվաստանալ, պատասխանեց թագավորը ծանրությամբ։

Մի վայրկյան լռություն տիրեց։ Արքայի պատասխանը տպավորություն արավ իշխանապետի վրա. նա գլուխը կախեց և սկսավ մտածել։

Բայց իշխանների խմբից առաջ անցավ մի յերիտասարդ և խոսեց.

— Տեր արքա, դինվորականը նվաստանում է վոչ միայն այն ժամանակ, յերբ միայն թերանում է քաջության մեջ, այլև ա՛յն ժամանակ, յերբ թերանում է անկեղծության մեջ։ Ուստի աղաչում եմ չվշտանալ՝ յեթե համարձակվեմ անկեղծորեն խոստովանել մի ճշմարտություն, վորի ծածկելը, ըստ իմ կարծյաց, հավասար է դավաճանության։

— Խոսի՛ր, ասաց թագավորը։

— Մենք յեկել ենք քեղ ոգնելու մեր արքայի հրամանով և մեր պարտքը կկատարեյինք, յեթե հնար ունենայինք։ Բայց բախտը, կամ դուցե մեր անհեռատեսությունը փակել է մեղ այժմ մի զառաջղի մեջ, վորից ազատվելու վոչ մի հնար չունենք։ Ծարավը տանջում է բազմամբոխ զորքին, թշնամու սուրը սպանում է ամենքին։ Կռվել չենք կարող, վորովհետև զասյարեղ չկա. յելնել չենք կարող, զի ճանապարհ չունենք. իսկ մնանել մենք, ի հարկե, չենք կամենում։ Ի՞նչ և մնում մեղ անել՝ յեթե վոչ զինաթափ լինել և փրկել մեր անձը մեր ընտանյաց համար...

— Փրկել ուրեմն անպատվության գնո՞վ, ընդհատեց թագավորը իշխանին։

— Դրանից մեղ անպատվություն չի կարող հասնել։ Մենք հյուր ենք ձեր յերկրում և պիտի կռվեյինք ձեր մեծախուռության համար։ Հետևապես, վոչ հաղողության փառքը և վոչ պարտության վնասը մեղ չի վերաբերում։

— Ուրե՞մն...

— Ուրեմն կամ պիտի ճանապարհ ցույց տաք մեզ՝ մեր պատուիրած պարտքը կատարել կարողանալու համար և կամ պիտի համաձայնիք մեզ հետ ղենքերը թշնամուն հանձնելու:

Թագավորը հառեց աչքերը յերիտասարդ իշխանի վրա և սպա սկսավ յուր շուրջը դիտել: Ամենքը լուռ եյին և սպասում եյին նրա պատասխանին:

— Դուք յեկել եք այստեղ ձեր թագավորի հրամանով և յեղերական ղրոշակով, սկսավ խոսել արքան մեղմ ու հանդիստ ձայնով: Եեկել եք հայոց թագավորին ոչնչելու, համաձայն ձեր թագավորի և իմ հանդուցյալ հոր կռած դաշնադրության: Հեռանալս, կատարելով ձեր պարտքը, պիտի ապացուցանեք, թե դիտեք ձեզ հարգել. և, ընդհակառակը, վախուստ տալով այստեղից, պիտի անպատվեք ձեր թագավորին և արատավորեք յերերական ղրոշակը: Այս է իմ կարծիքը ձեր առաջադրության մասին: Իսկ դալով նրան, թե արդյոք յես, հայոց թագավորս, կարո՞ղ եմ համաձայնել ձեզ հետ թշնամուն իմ ղենքը հանձնելու, կասեմ, վոր անկարող եմ: Աչուտ թագավորը շատ այսպիսի անհաջողությանց և հանդիպել, շատ անգամ և թշնամիներով ու դավաճաններով պաշարվել, բայց յերբեք և վոչ իսկ մի վայրկյան չե մտածել, թե պիտի անձնատուր լինի թշնամուն: Յես կարող եմ սուրը ձեռքիս և աշտեները կրծքումս ընկել և մեռնել. բայց նախատանալ և ղենք հանձնել թշնամուն, յերբե՛ք: Դուք պաշարման ժամանակ մտածում եք ձեր կյանքն ազատելու, իսկ յես՝ իմ պատիվը փրկելու վրա: Ինչպես տեսնում եք, մենք տարբեր նպատակների յենք ձգտում: Հետևապես չպիտի խանգարենք միմյանց: Յերբ մարդ կամենում է ընկնել, անկարելի յե կանդուն պահել նրան: Դուք այս վայրկենից իսկ ազատ եք ձեր վորոշման մեջ: Հայոց թագավորն ունի դեռ մի քանի տասնյակ քաջեր, վորոնց հետ միասին կարող է մեռնել: Բայց յերբ դուք վողջամբ ձեր յերկիրը հասնեք, հայտնեցեք անպատճառ ձեր կանանց ու վորդվոց, վոր ձեր կյանքը պնել եք ձեր ղենքերի պնով: Այդ նորությունն, անշուշտ, հաճույք կպատճառե յեղբացի սիկնանց:

— Տեր արքա, դու նախատում ես քո ղինակիցներին... վրդովված նկատեց յեղերացի իշխանապետը:

— Դուք վոր անձնատուր լինելու վրա յեք մտածում, իմ ղինակիցը լինել չեք կարող:

— Ուրեմն և չենք լինիլ, զայրացած պատասխանեց իշխանապետը և դառնալով ընկերներին ասաց.

— Իշխաններ, հուսահատ զորականը մեզ է սպասում, ինչպե՞ս մեր վերջին պարտքը կատարելու։

Այս ասելով նա սառնությամբ վողջունեց Թագավորին և առաջ անցավ։ Ընկերները հետևեցին նրան։

Թագավորը, վոր ուշադրություն չդարձրեց վոչ իշխանապետի վերջին խոսքերին և վոչ իշխանների վողջունին, աչքերը վրանի անկյունին հառած՝ խորասուզվել եր մի ինչ-վոր մտածության մեջ։ Եվրը նա զգաց, թե վրանում լռություն է տիրում, դարձավ յուր իշխաններին և ասաց.

— Այո՛, յեզերացիները կփրկեն իրանց։ Ով վոր հանձն և առնում նվաստությունը, նա ձեռք կբերե և այն բարիքը, վոր ձերազատում է պատվից։ Բայց դուք ի՞նչ եք մտածում հայ զորականի մասին։

— Նա պատրաստ է կռվել մինչև վերջին շունչը, ասաց Վահրամ սեպուհը, պետք է միայն առաջնորդել նրան։

— Մենք նրան կառաջնորդենք. բայց ի՞նչ շահ այդ կռվից, նկատեց Մարզպետունի իշխանը. մերոնք այնքան սակավաթիվ են, վոր թշնամին մի քանի վայրկենում կկնջե նրանց։

— Ասում ես, վոր պատրաստ են մինչև վերջին շունչը կռվե՞լ, հարցրեց Թագավորը։

— Այո՛, տեր, պատասխանեց սեպուհը։

— Պետք է ուրեմն ոգուտ քաղել այդ պատրաստակամությունից։ Այս դիշեր մենք ամենախիստ թափով կընկնենք թըշնամու վրա։

— Ընդհարմա՞ն դիտումով, հարցրեց սեպուհը զարմացած։

— Վո՛չ, բանակը ճեղքելու և անցնելու նպատակով։

Իշխանի դեմքը պայծառացավ։ Փրկությանն այդ միջոցը, արդարև, ամենահեշտը և պատվավորն եր։ Մարզպետունին նույնպես համակիր եր այդ մտքին։ Պետք եր միայն զաղտնի կերպով պատրաստվել, վորպեսզի յեզերացիք արդելք չ'նեյնին իրանց։

Թագավորի հրամանով իշխանները դուրս գնացին, վորպեսզի հավատարիմներին հարկ յեղած հրահանգները տան։

Եերեկոյան դեմ մի քանի յեզերացի գնդեր բերդի պարիսպներից իջնելով՝ դեպի խորաձորն իջան։ Այդ շարժումը Գևվորդ իշխանի ուշադրությունը դրավեց։ «Ուրեմն համաձայնու-

թյուն և կայացել թշնամու և յեղերացիների մեջ, մի ածնց նա ինքն իրան՝ յենթադրելով, թե վերջիններըը, յերևի, սկսում են որդևն թշնամու բանակն իջնել։

Դեռ այս մտքի մեջ եր նա, յերբ Ցեղնիկը մոտենալով իրան՝ չշնջալով ասաց.

— Տե՛ր իմ, յեղերացոց իշխանները դավաճանության խորհուրդ են հղացել, սևաք և աշխատել թագավորին սրկել։

— Ի՞նչ խորհուրդ, Ցեղնիկ, հարցրեց իշխանը վախենալով։

— Գայման են դրել Ցլիկ-Ամրամի հետ, վոր թագավորին բռնեն և նրա ձեռը հանձնեն։ Իսկ Ամրամը դրա փոխարեն խոստացել և արձակել յեղերացիներին առանց զինաթափ անելու։

— Ի՞նչպես իմացար այդ լուրը։

— Խորամանկ իշնող զնդերի ամեն մի զորականն այդ դիտե։ Իշխաններըը նրանց պատվեր են տվել՝ հսկել կրճի անցքերին ամենայն զգուշությամբ, սպառնալով, վոր յեթե թագավորը ձեռքից հանեն, այլևս այս բանտից վողջ չվերնե։ Այժմ բանք, զորականներըը, ամեն հնար գործ պիտի դնեն մեր ճանապարհը փակելու, վորպեսզի իրանց խոստացված աղատությունը չկորցնեն։

Ցեղնիկի բերած նորությունը ծանր մտահոգություն պատճառեց արքայի հավատարմին։ Նա պարզ տեսավ, վոր փրկության ամեն հույս կորել է, ուստի նորեն Սևադայի խոսքերը հիշեց.

— «Նա ասաց, վոր այս անգամ ասուված պիտի պատժե հանցավորին, ահա՛ նրա դուշակությունը կատարվեցավ։ Մի՞թե թշվառ մահկանացուն կարող է հավիտենական բարկությունից վախչել...»։

Այս մտածմունքներով նա դնաց Վահրամ սեպուհի մոտ և նրա հետ միասին արքայի վրանը մտավ՝ այս տխուր նորությունը նրան հայտնելու։

Բայց վո՛րքան մեծ յեղավ իշխանի զարմանքը, յերբ թագավորն այդ նորությունը լսելուց յետ անհոգ կերպով ծիծաղեց։

— Այդ թշվառականն, ուրեմն, իմ արյանն է ծարավի, ասաց նա հանդիստ ձայնով։ Վաղուց ճանաչում եմ յես Ցլիկ-Ամրամին. նա փառասիրություն չունի. ուրեմն և չեր կարող փառասիրական նպատակով ապստամբել յուր թագավորից։ Նրան հարկավոր է անշուշտ իմ անձը... Այժմ ուրեմն հանելուկը լուծվեցավ և։

— Քո՞նը, տեր արքա. ինչ թշնամություն ունի Ամրամը քո անձի հետ, զարմացած հարցրեց Վահրամ սեպուհը:

Թագավորը կարծես շփոթվեցավ: Նա զգաց յուր խոսքերի անպատեհությունը և աշխատեց խուսյս տալ բացատրություններից:

— Այդպես ուրեմն, մեր փոքրիկ դունդը նուլնպես վրկված է: Ինձանից հետո թշնամին հանգիստ կթողնե թե՛ նրան և թե՛ յեղերացիներին, ասաց Թագավորը, առանց Վահրամի հարցին պատասխանելու:

Գևորգ իշխանը Թագավորի խոսքը չհասկացավ. ուստի խնդրեց բացատրել իրան, թե ինչ և կամենում անել:

— Այս գիշեր յես պիտի հեռանամ այստեղից, ասաց Թագավորը:

— Դո՞ւ. միայնա՞կ, հարցրեց իշխանը:

— Այո՛:

— Ի՞նչ ճանապարհով:

—Յեղերացոց պահանորդ գնդերի և թշնամու բանակի միջով:

Սեպուհն ու իշխանը զարմացած աչքերնին հառեցին Թագավորի վրա:

— Պիտի հասկացնեմ յեղերացոց ու սևորդյաց իշխաններին, վոր Աշոտ Յերկաթին բռնելն ու Ցլիկ-Ամրամին հանձնելն իրանց ուժից վեր գործ է:

Իշխանի սիրտն ուրախացավ, իսկ սեպուհի խոշոր դեմքի վրա փայլեց գոհության ժպիտ:

— Յես մինչև այժմ հավատարիմների ապահովության համար եյի մտածում, շարունակեց Թագավորը, բայց այժմ տեսնում եմ, վոր հենց իմ անձն է յեղել նրանց վտանգողը: Յես, ուրեմն, կհեռանամ այստեղից, վորպեսզի ձեր ճանապարհի արգելքը վերացվի:

— Դու հեռացիր միայն քո թանկագին անձը փրկելու համար, վորովհետև աշխարհը սպասում է յուր Թագավորին: Իսկ մենք կարող ենք մինչև անգամ մեռնել, հայոց յերկիրը չատ բան չի կորցնիլ, յեթե մահ հասնե մեզ, ասաց սեպուհը անկեղծորեն:

— Բայց հայոց Թագավորը կկորցնե... հարեց խոհուն արքան:

Հասավ յերեկոն։ Թագավորի դիտավորությունը հայտնի յեր միայն Մարդանատնի իշխանին և Վահրամ սեպուհին։ Արքայի տված հրահանգի համաձայն նրանք կանչեցին իրանց մոտ Թագավորի Թիկնապահներից յերկու յերիտասարդների, վորոնց հավատարմության ու քաջության վրա վստահություն ուներ ինքը Թագավորը և հրամայեցին նրանց պատրաստ լինել Թագավորին հետևելու։

Ցերը մութը կոխեց և դիշերվա մի քանի ժամերն անցան, Թագավորն յելավ յուր վրանից՝ վոտից ցդլուխ պողպատով զրահավորված։ Ցերկու քաջամարտիկ Թիկնապահները, վորոնք նույնպես զրահավորված եյին յերկաթով, մոտեցրին արքային յուր ամեհի նժույգը։

Թագավորը քանդակյա յերիտասարդի ԹեԹևությամբ Թռավ ձիու վրա. Թիկնապահները նույնպես աշտանակեցին իրանց նժույգները։

— Գնաք և անցնենք ինչպես փոթորիկ։ Վոչ մարդ և վոչ դև չպիտի մեզ դիմադրե։ Գնդերը ալիսի ճեղքենք, վաշտերը կոխոտենք, կանդնածը գլորենք... Մի քառորդ ժամից յետո Կուրի հովտում պիտի լինինք... հրամայեց Թագավորը և ուրը հանելով՝ գիՀն ուրեմն, քաջերա՛, դոչեց ցած ձայնով և նժույգի կողերը խթելով՝ Թռավ դեպի զառիվայրը։

Թիկնապահները արագաշավ հետևեցին նրան։

Մի քանի վայրկենից յետո յերեք հեծյալներն անհայտացան խավարի մեջ։

Արքայի բախտից յերկինքն ամպամած եր և լուսինն անհայտացած։ Հեռվից վոչ վոք չեր կարող նշմարել նրանց։

Զորակի մեջ միայն ձիանների քայլաարոսիը զարթեցրեց պատահանորդ յեղերացիներին, վորոնք խմբուլին հեծյալների առաջը բռնեցին։ Բայց Թագավորի նժույգը և ահարկու սրի հարվածները ճեղքեցին խումբը, իսկ Թիկնապահների գոռոցը և նիզակների Թափը ցրվեցրին դիմադրողներին։ Հանդիպող շարքերից անցան նրանք ինչպես հողմ և մտան կրճի բերանը։ Ցեղերացիք նոր իմանալով, վոր իրանց գունդը ճեղքողը ինքը Թագավորն եր, ակառն վայրենի աղաղակով նրա հետևից ընկնել։ Թագավորը և յուր Թիկնապահները նույնպես ակառն գոռալ, յերբ հասան ապատամբների գնդերին։ Վերջիններս հանկարծակիի գալով այս բազմաաեռակ աղաղակներից, կարծեցին, Թե յեղերացիք

ն հարձակվում իրանց վրա. ուստի չկոթված և իրար կոխկրտելով՝ սկսան դեպի բանակը փախչել։

Թաղավորն ուղուտ քաղեց այդ խառնակությունից։ Թիկնապահների հետ միասին աջ ու ձախ հարվածելով և հրամանքի նման հանդիպակացները խորտակելով՝ կտրեց, անցավ նա կրճի բոլոր յերկարությունը, ճեղքեց վերջին պահանորդ խումբը և ընդարձակ դաշտը դուրս գալով՝ նույնիսկ Ամրամի բանակի առջևից՝ սլացավ ինչպես կայծակ և անհայտացավ հովտի մթության մեջ։

Հազիվ մի ժամից յետ հայոնի յեղավ ապստամբներին Թաղավորի փախուստը։ Սևորդյաց և յեղերացոց իշխանները մնացին ամրթահար. իսկ Ցլիկ-Ամրամը և ափխազաց Բեր իշխանը դայրույթից դրեթե կատաղեցին։

Հետևյալ առավոտ ապստամբների դրքը խուժեց դեպի ավերակ բերդը։ Ցեղերացիներից խլեցին նրանք բոլոր ղենքերը և միայն ձիաներն իրանց տալով՝ արձակեցին։ Իսկ սակավաթիվ հայ հեծյալներին ձեռնամուխ չեղան, վորովհետև Գևորգ Մարզպետունին և վահրամ սեպուհը խնդրեցին Ամրամին՝ թշնամաբար չվարվել յուր յեղբայրակիցների հետ։ Ամրամը, Թեպետ Թաղավորի դեմ զայրացած, այսուամենայնիվ, հարդեց նրա իշխանների խնդիրը և նրանցից բաժանվեց առանց դժտության։

ՉԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Ա

ՍԵՐԻՎ ԸՆԿՈՒՄ

Այս հրաշակերտ վիպատրանքը, որ ամփոփում եր յուր մեջ հայ ազգի կառավարական և քրիստոնեական կենաց բաղմադարյան հիշատակարանները և որ յերկար ժամանակ հարգվել եր այդ ժողովրդից թե՛ իբր դիցական պաշտպանած վեհապայր և թե՛ ինչպես քրիստոնեական կրոնի սրբարան, դոնվում եր Հայոց Գեղարդավանի լանջին, Գառնո ամրոցի հյուսիս-արևելյան կողմը: Նրա առջևից հոսում եր Ազատ գետի յերկրորդ վտակը, որ հսկայակերպ դարևանդներից իջնելով՝ շառաչում եր քաղցրահաչակ և յուր սիրուժալուր աղմուկով ահավոր ձորն ու շրջականները լցնում: Նախաջրհեղեղյան սառանությունները յերկրի ծոցից հրահոսան հեղեղներ ժայթքելով՝ կազմակերպել եյին այստեղ խոշոր, քարակարկառ բլուրներ, ահավոր ամրաոտակներ, միապաղաղ ժայռերի անհեղեղ ղանդվածներ, բաղալայան այունաձև բուրդեր, վորոնք միմյանց հակորդելով կամ իբար վրա ամբառնալով՝ շրջապատում եյին Այրիվանքը և անհաթապատ այցելուների համար դարձնում նրան անմատչելի: Բնությունը կարծես յուր ղորավոր ձեռքով՝ սիրահարական լեռների ավերակներն ի մի ժողովելով՝ միացրել եր այստեղ աքանչելին և ահավորը՝ սկսր մահկանացուին յուր անհաղթ ղորությունը ցույց տալու համար:

Այստեղ, հսկայակերպ լեռան ծոցում, միապաղաղ ժայռերի մեջ, վորմած եյին հին ժամանակներից բաղմաթիվ այրեր, խուցեր ու մատուռներ, շրջապատած տարիսպներով և հզոր աշտարակներով: Դրանցից վոմանք ծառ ամ եյին մի որ հայ թագավորներին իբր արքայական դանճատուն, խոկ վոմանք իբրև ազոթից տուն, կամ ղոհարերությանց տաճար:

Քրիստոնեության սուրբ նշանը անկեց այստեղ առաջին անգամ ինքը Լուսավորիչը, խաչանելով, անշուշտ, հեթանոսական պաշտամունքները։ Այդ նշանի հովանավորյան ներքո ժողովվեցան բազմաթիվ անապատականներ, վորոնք Այրիվանքը դարձրին խաղաղության ու ճգնության ոթևան։

Այստեղ հանգիստ վորոնեց Հայաստանյաց բարերար մեծն Ներսեսը, անշուշտ, հայրենիքի բարօրության համար դործ դրած յերկարամյա աշխատություններից հետո։ Այստեղ առանձնացավ նրա արժանավոր վորդի մեծն Սահակ՝ յուր վաթսուն խարտյանադեստ աշակերտներով, ազդի լուսավորության դործը ժայռերի ծոցում դարբնելու համար։

Մեր նկարագրած ժամանակում նույնպես գտնվում եր այստեղ հոդևոր հայրերի հարուստ միաբանություն, վոր բարեկարգել ու ծաղկեցրել եր Այրիվանքը։ Այդտեղ եր այդ ժամանակ և հայոց հայրապետը, Հովհաննես կաթուղիկոսը, վոր արաբացոց վոստիկանի հետապնդությունից վախենալով՝ թողել եր Դվինը կաթուղիկոսարանը և յուր հավատարիմ պաշտոնյաներով ու հայրապետական դանձերով պատսպարել Այրիվանքի ամրություններին։

Ցերկու որ եր ինչ լուր եյին բերել հայրապետին, թե Նըսր վոստիկանը, վոր Ծուռուփից հետո տեղակալ եր կարգված և վոր մինչև այն նստում եր Արբատատականում, հասել է արդեն Նախիջևան և հառաջանում է դեպի Դվին։ Վոստիկանին հայտնի եյին հայոց թագավորի անհաջողությունները, հայ իշխանների խռովությունները և յերկրի անտերունչ դրությունը։ Ցեվ ահա՛ նա շտապել եր ողուտ քաղել հաջող հանդամանքից։

Կաթուղիկոսն իմացավ, վոր Նըսրը հետամուտ է կաթուղիկոսարանը և նրա կալվածները գրավելու, իսկ այդ նպատակին հասնելու համար նախ կցանկանար ձեռք ձգել իրան կաթուղիկոսին և հայրապետական դանձերը հափշտակել և ապա թե հանցանքներ բարդելով նրա վրա՝ կաթուղիկոսարանը գրավել։

Այս պատճառով հայրապետը, վոր մինչև այն ապրում եր Այրիվանքի ներքին այրերում, այն է՝ անապատականների միաբանության մեջ, ուր վիմափոր յեկեղեցիներն ու ընդհանուր կացարաններն եյին, յելավ, քաշվեցավ յուր հավատարիմներով դեպի վերին վանքը, ուր անասուններն եյին պահում։

Այդտեղ անբնակ և խավարտիկն այրերի մեջ թաղնվելով՝ կաթուղիկոսը հույս ուներ ապատ մնալ Նըսրի հետապնդությու-

նից և փրկել յուր հետ բերած հայրապետական հարստությունները, վորոնք մեծ մասամբ սրբությանց ժողովածուներ և նախնի պահակներից ժառանգած թանկագին իրեր էին:

Կաթուղիկոսի կարծիքով Երնամին չէր մոռնալ այդ անշուք վայրերին, ուր դրաստներ էին զարմանում, և ուր մուրացիկ խուժանն էր ապրում:

Բայց յերբ հեռվհեռու հասնող լուրերից յերկյուղը զորացավ, նրա մերձականները խորհուրդ տվին իրան հեռանալ Այրիվանքից և ապաստանել Գառնո ամրոցին, ուր այդ ժամանակ ապրում էր Թադուհին:

Կաթուղիկոսին հաճելի չեր հեռանալ այդ խորհրդին. բայց յուր դռան յեպիսկոպոս Սահակը, վոր լուրջ և խմաստուն մարդ էր, հակառակից նրան ասելով.

— Ժողովուրդն արդեն բամբասում է քեզ, վեհափառ հայր, թե դու անաեր ես թողել Դվինո կաթուղիկոսարանը և քո անձի ապահովության համար ապաստանել Այրիվանքի ամրությունները: Այժմ էլ յերթ Գառնի վտխադրվես, կդրդռես քո դեմ նուիրական կղերի զայրույթը:

— Ըներ մի անգամ արդեն հեռու յեմ կաթուղիկոսարանից, կարող եմ լինել և Գառնիում. ինչո՞ւ այս ասելիս պիտի կղերը դրդռվի, հարցրեց կաթուղիկոսը յեպիսկոպոսին:

— Այստեղ մնալու համար դու պատրվակ ունիս, վեհափառ ներ. այդ այն է, վոր դու հովանավորում ես Այրիվանքի հրուշակավոր և բազմամարդ ուխտին: Իսկ Գառնիում ապրում են Թադուհին և ապաստանի կանայք. նրանք պետք չունին քո հովանավորության:

Կաթուղիկոսը ղլուխը կախեց և սկսավ մտածել: Եպիսկոպոսի առարկությունը արդարև բանավոր եր: Կաթուղիկոսը պարտավոր եր յուր ուխտի հետ լինել և վոչ թե ամրոցաբնակ սինկնանց: Բայց մոտալուտ վտանգի յերկյուղը ճնշում եր նրա սիրտը: Նրա բարեկազմ, հաղթանդամ և արտաքուստ զորավոր մարմնի մեջ ապրում եր մի սակավ սիրտ և յերկչոտ հոգի: Նա Թևպես արտաքին սիրում եր յուր հոտը և միշտ աշխատում եր նրա բարվոյի համար, բայց դրա հետ միասին սիրում եր յուր անձը և հետևապես վտանգի չեր յենթարկում նրան, յեթե հոտի շահը պահանջում եր այդ: Նա հայրենիքի հարազատ վորդին և նրա յերջանկության անկեղծ բարեկամն եր: Բայց յեթե այդ յերջանկությանը ձեռք բերելու համար պետք եր լինում զոհել

թագավորող անձի կամ գործող իշխանի դեմն ունեցած բարեկամությունը, նա տատանվում էր և, վերջիվերջո, այդ բարեկամության կորուստը խնայում։ Նա աղքի ոգուն գործում էր բարիքներ յերբեմն մեկին փառք վաստակելու համար. եկ էր բարիքներ յերբեմն մեկին փառք վաստակելու համար. եկ շատ անգամ էլ՝ վորպեսզի յուր փառքը չաղարտե, նա արդելք չեր դնում հասնող չարիքներին։ Նա չուներ վոչ գործող կամք, վոչ հաստատ բնավորություն և այդ պատճառով էլ նրա վրա հավասար ազդեցություն ունեին թե՛ մեծը և թե՛ փոքրը, թե՛ ուժերը և թե՛ գործողը, թե՛ խորհրդախոս բանսարկուն և թե՛ իմաստուն խորհրդականը։ Զորավոր մարդու կամ դեպքի յուր վրա արած ազդեցությունը ջնջում էր միշտ գործավորագույնը։ Եվ շատ անգամ էլ պատահում էր հակառակը, նայելով թե վո՛րն և վերջին անգամ յուր ուժը փորձել նրա վրա։

Ցուր դրան յեպիսկոպոսի վրա, սակայն, կաթուղիկոսը մեծ համարում ուներ. նա հարգում էր նրան իբրև առաքինի և իմաստուն մարդու։ Ցեվ այդ պատճառով, չնայելով, վոր արհավիրքների մասին հասնող լուրերն անհանգստացնում էին նրան, այսուամենայնիվ վորոշեց լսել նրա խորհրդին և մնալ Այրիվանքում, յուր հոգևոր ուխտի հետ։

Բայց ահա՛ հասավ այդտեղ կաթուղիկոսարանի Գևորգ անունով սարկավագը, վոր հաղորդեց վեհափառին տխուր և սպառնական նորություններ։

— «Ընբսրը յեկել և արդեն Դվին, կապած բերելով յուր հետ Սյունյաց Սահակ և Բաբգեն մեծ իշխաններին, վորոնց և դրել և բանտում։ Նա կալանավորել և նույնպես Դվնո հազարապետ իշխաններին՝ Թվով քառասուն հոգի», ասաց սարկավագը։

Կաթուղիկոսը յերկյուղից այլայլունեց։ Կապյալները հայտնի և նշանավոր իշխաններ եյին. ի՞նչպես կարող էր Ներսը կալանավորել նրանց, մանավանդ Դվնո իշխաններին, վորոնցից վոմանք ամբրոպետի սիրելիներն եյին։ Այդ նշան էր, թե վոստիկանը հրահանգներ ունի ստացած հալածանքներ հարուցանելու։

— Ո՞ւր և ի՞նչպես կալանավորեց նա Սյունյաց իշխաններին, հարցրեց կաթուղիկոսը սարկավագին։

— Վոստիկանի Նախիջևանում յեղած ժամանակ, ասաց սարկավագը. Բաբգեն իշխանն ընծաներով յեկել էր նրա մոտ և բողոքել յուր յեղբոր Սահակի դեմ, իբր թե վերջինս զրկել է իրան ժառանգությունից և խնդրում էր Ներսին ոգնել, վերադարձնել իրան հայրենի ժառանգությունը։ Վոստիկանն ուրա-

խությամբ ընդունում է Բարղենի խնդիրը և հրավեր է ուղարկում Սահակ Իշխանին՝ դալ Լրան այցելության։ Վերջինս կասկած չունենալով Նըսրից, ընծաներով դալիս է Նրա մոտ։ Վոստիկանը յերկու յեղբորն էլ սիրով պահում է Նախիջևանում մի քանի որ և ապա առաջարկում նրանց յուր հետ միասին գնալ Դվին, վորպեսզի այդտեղ վերջացնե նրանց ժառանգության գործը։ Իշխանները համաձայնվում են։ Բայց հենց վոր յելնում են Այուձյաց նահանգից և հասնում Դվին, այդտեղ վոստիկանը, միտանակ ժառանգության գործը վերջացնելու՝ յերկուսին էլ կալանավորում ու բանտարկում է։

— Անշուշտ նրանց յերկիրը դրավելու նպատակով, այսպես չի՞, Սահակ սրբազան, դարձավ կաթուղիկոսը դեպի դռան յեպիսկոպոսը, վոր կանգնած լսում էր սարկավագի բերած նորությունները։

— Այդպես է, վեհափառ տեր. վոստիկանը չէր կարող դրավել Այուձիքը, յեթե նրա իշխաններին չկալանավորեր։

— Հարկավ, չի՞ վոր ազատ իշխանը կարող է զորք ժողովել, պատերազմել... Բայց նրանք ղրկվեցան այժմ ազատությունից. սա մի մեծ դժբախտություն է մեր յերկրի համար... նույնիսկ Թագավորի և ինձ համար...

— Իսկ քեզ համար, վեհափառ տեր... կցեց սարկավագը։

—Հա՛, ինձ համար ի՞նչ, չտպպով ընդհատեց կաթուղիկոսը։

— Քեզ համար էլ վոստիկանը վորոդայթներ է լարում։

— Այսի՞նքն։

— կամենում է կալանավորել։

— Ի՞նձ...

— Այո՛, վեհափառ տեր։

— Ի՞նչպես լսացար այդ, հարցրեց կաթուղիկոսը յերկյուղալին։

— Վոստիկանը կանչեց յուր մոտ կաթուղիկոսարանի վերակացուին և պատվիրեց նրան հրավիրակ ուղարկել այստեղ...

— Իմ հետևից, այնպես չի՞։

— Այո՛, վեհափառ տեր, քեզ հրավիրելու համար։

— Ի՞նչ ունի ինձ հետ վոստիկանը, Սահակ սրբազան, կասկածավոր յեղանակով դիմեց կաթուղիկոսը յեպիսկոպոսին։

— Առածուն է միայն հայտնի, տե՛ր, պատասխանեց սրբազանը։

— Վերակացուին առել է, թե կաթուղիկոսը յուր կաթուղի-

հոտարանում պիտի նստե և վոչ թե լեռներում ամրանա, հարցեց սարկավագը։

— Նա ուրեմն պիտի՞, թե չես վո՛րտեղ եմ գտնելու։

— Այո՛, վեհափառ տեր։

Կաթուղիկոսի դուչը թռավ։

— Ցեթե չես այստեղից չհեռանում, նա այսոր կամ վաղը ղրկ կուղարկե իմ չեռից, ասաց հայրապետը դիմելով չեպիսկոպոսին։

Վերջինս լուռ եր։

— Դու այդպես չե՞ս կարծում, սրբազան չեղբայր, հարցրեց կաթուղիկոսը։

— Նա ղրկ կուղարկե և այն ժամանակ, երբ հեռացած կլինես, տեր։

— Բայց այդ ժամանակ նա չի կարող կալանավորել ինձ։

— Կկալանավորե և կկոտորե Այրիվանից միաբանությունը... ծանրությամբ հարեց սրբազանը։

Կաթուղիկոսը հասկացավ չեպիսկոպոսի դիտողության նշանակությունը և լռեց։

— Բայց դու, սրբազան, մի վայրկյան առաջ ասացիր, թե վոստիկանը չեր կարող դրավել Սյունիքը, չեթե նրա իշխաններին չկալանավորեր, խոսեց կաթուղիկոսը րոպեական լռությունից հետո։

— Այո՛, վեհափառ տեր, ասացի։

— Ուրեմն նա մեր կաթուղիկոսարանն ել կդրավե, չեթե ինձ ձերբակալե։

— Անշուշտ։

— Ցեվ չեթե չես այստեղ մնում, այդ մինչնույն է, թե մատնում ինձ Ղըզի դահիճներին։

Ցեպիսկոպոսը չպատասխանեց։

Այդ միջոցին հասավ կաթուղիկոսարանի նվիրակը, վոր Ղըզի կողմից հրավիրում եր կաթուղիկոսին մայրաքաղաք։

Վեհափառն այլևս չերկար խորհուրդների չպատասխանեց։ Նա վորոշեց հեռանալ Գառնի։ Ուստի հրամայեց Գևորգ սարկավագին ձին նստել իսկույն և չտապել ամրոցը՝ բերդակալին ու թաղուհուն յուր գալուստը հայտնելու։ Նա մտածում եր չերթել վանքից հինց մինչնույն գիշերը, վորովհետև համոզված եր, թե վոստիկանը, նվիրակի վերադառնալուց չետո, ղրկ կուղարկե անշուշտ իրան կալանավորելու համար։

Գևորդ սարկավագը փութաց Վահափառի հրամանը կատարելու։

Այդ լուրը հուզեց Այրիվանքի միաբանությանը։ Շատերն սկսան արտնջալ, բայց կաթուղիկոսին դժգոհություն հայտնել չհամարձակվեցան, վորովհետև տեսնում էին, վոր դրան յոպիսկոպոսը նույնպես լուռ է։ Այդ նշան եր, թե նա հույս չունի այլևս հայրապետի վրա աղղելու, վորովհետև յերկյուղն ամեն կողմից պաշարել եր նրան։

Կաթուղիկոսի ձեռնարկությունը քաջալերում էին միայն նրա մերձավորները, վորոնք հողում էին նաև իրանց ապահովության համար։ Նրանք գիտեյին, վոր հազարացիք Այրիվանքը գալով ամեն ինչ սլիտի ավերեն և դուցե սրի անցնեն միաբանությունը և ահա այդ պատճառով աշխատում էին հեռացնել այդտեղից կաթուղիկոսին, վորպեսզի իրանք էլ նրա հետ հեռանային։

Ցերբ յերեկոյացավ, հայրապետը յուր հավատարիմներով լիքը Ներքին Վանք տաճարում աղոթելու և միաբաններին յուր հրաժեշտը տալու համար։

Տեղվույն վանահայրը խնդրեց այստեղ կաթուղիկոսին հետաձգել յուր ուղևորությունը, գեթ մի ժամով, վորպեսզի վերջին անգամ ընթրիք վայելե յուր միաբանության հետ։ Կաթուղիկոսը սիրով համաձայնվեցավ և սեղան նստավ վանքի միաբանական ուխտի հետ։

Ըստ սովորության՝ սեղանատան ամբիոնը բարձրացած կարդում եր սուրբ գիրքը Մովսես անունով մի յերիտասարդ վարդապետ։ Նա ընթեռնում եր առաքելոց դործերը։ Ցերբ ընթրիքը ճոտեցավ յուր վախճանին, նա բացավ Հովհաննու ավետարանը և բարձր ձայնով կարդաց հետևյալը.

«Ես եմ հովիվն քաջ. հովիվ քաջ դանձն յուր դնե ի վերա վոչխարաց։ Իսկ վարձկանն, վոր վոչ է հովիվ, վորո վոչ յուր են վոչխարքն, իբրև տեսանե դղայլն դի գա՝ թողու զոչխարսն և փախչի. և դայլն հափշտակե զնոսա և ցրվե։ Քանդի վարձկան է, և չե փութայ նմա վասն վոչխարացն...»։

Դեռ վերջին խոսքերը չեր արտասանել վարդապետը, յերբ կաթուղիկոսը դենջակը ձգելով այլայլված բարձրացավ աթոռից և բացականչեց.

— Ո՛ն և ո՛ն, թե վարձկան լինիմ յես, ո՛վ Այրիվանից հարք։ Գայլից վախչում եյի, ա՛յո, բայց վոչ թե ձեզ նրա

ձեռքը մատնելու, այլ ինձ հանձնված սրբությունները ազատելու համար։ Վորովհետև այդ դղուշությունը վարձկանի անուն պիտի վաստակե ինձ համար, ասա ուրեմն այս վայրկենից իսկ թողնում եմ յես այդ սրբությունները բախտի կամքին և հանձնում եմ այն ձեր յերաշխավորության։ Ճես այլևս չեմ հեռանում այս ուխտից։

Բարի վանահայրը, վոր յերիտասարդ վարդապետի կողմից չեր սպասում յերբեք այդպիսի նախամտածված և համարձակ քայլ, մնաց բոլորովին ապշած։ Հայրապետի խոսքերն ավելի և ավելի չփոթեցին նրան և խեղճը վազելով ծունկ չոքեց վեհափառի առաջ։

— Աստվածարյալ տեր, բացականչեց նա, այս վարդապետը իմ միաբանների մեջ հայտնի յեր յուր համեստությամբ և առաքինությամբ. բայց փորձիչը յերևի դայթակղել է նրան։ Հրամայեցեք այս վայրկենին իսկ կարգալուշ անել նրան և արտաքսել այն հարկից, վոր նա անպատվեց յուր անպարկեշտությամբ։

— Ձե, սիրեցյալ յեղբայր, պատասխանեց կաթուղիկոսը. այդ վարդապետն անպարկեշտ վոչինչ չառաց. նա կրկնեց ավետարանի ճշմարիտ խոսքերը. նա հիշեցրեց ինձ իմ պարտքը, հնչեցնելով իմ ականջին անմահ և քաջ հովվի պատվերը...։ Խորհելի հանցավոր առաջնորդներին աստված կոչում եր դեպի ուղղության ճանապարհը մարդարեների բերանով։ Գուցե նա կամեցավ մարդարե հարուցանել և մեր մեջ։ Զդատապարտենք այն մարդուն, վոր ճշմարտությունը խոսելու չափ քաջություն ունեցավ։ Մովսես վարդապետը կանգնած եր այդ վայրկենին ամբիոնի առաջ լուռ և անշարժ. նրա դեմքը խաղաղ եր և հայացքը հանգիստ։ Բոլոր միաբանությունը, վոր վոտքի վրա յեր այդ միջոցին, նայում եր նրան ասես թե մի աչք դարձած. բայց յերիտասարդ հայրը բնավ չեր խռովում այդ հայացքներից։ Նա պիտեր, թե ինչո՛ւ համար կարգաց Հովհաննու ավետարանը և համոզված եր, վոր դրանով յուր պարտքը կատարեց։ Իսկ թե այնուհետև վա՞րձք թե պատիժ կչափեին իրան, բնավ հոգը չեր։

Բայց վանահայրը կաթուղիկոսի խոսքերովն անդամ չհանդըստացավ (վորովհետև վախենում եր, թե գուցե վեհափառը յուր նենգամտության վերադրե այս դիպվածը). նա հարցրեց վարդապետին բարձրաձայն.

— Ցեղրայր իմ, ո՞վ պատվիրեց քեզ կարդալ այդ ավետարանը:

— Նա, վոր աներևութաբար բաղմած է այս բոպեին մեր մեջ և վոր կառավարում է մեր սիրտն ու հոգին, պատասխանեց վարդապետը խաղաղ ձայնով:

— Այնուհետև նա է պատվիրողը, հարցրեց դռան յեպիսկոպոսը, յերեք ճշմարիտ և, վոր ծառի տերևը չի շարժվում առանց նրա կամքին, ապա այս սրբազան ակմբի մեջ խոսողը նույնպես ներշնչված է նրա զորությամբ: Աստված կամենում է, վոր վերահաստատ հայրն ասրբե յուր ուխտի հետ և մասնակցե նրա ուրախության ու վշտերին: Ո՞վ կարող է հակառակել նրա կամքին:

— Ցես չեմ հակառակում, ասաց կաթուղիկոսը: Ցես կամենում եյի, այո՛, դիշերն ողնության առնել ինձ և թշնամուց անտեսանելի կերպով հեռանալ. բայց հենց այդ դիշերվա շնորհիվ իմ ուղևորությունն արդելվեցավ: Ուրեմն յես կմնամ: Այն սրբությունները, վորոնց յես կամենում եյի թշնամու հափշտակությունից ազատել, իրանք ուրեմն թող պաշտպանեն իրանց: Ցեվ յերե ասածուն հաճելի լինի իմ հեռանալը, նա պայծառ արևի ժամանակ ել դիշեր կստեղծե ինձ համար:

Այս ասելով կաթուղիկոսը հեռացավ յուր հանդստարանը: Իսկ դռան յեպիսկոպոսը նոր բաներ ուղարկեց Գառնի՝ հայտնելու համար բերդապահին՝ չսպասել այլևս կաթուղիկոսի դարձյան:

Հետևյալ առավոտ, շատ վաղ, կաթուղիկոսը խորհրդի հրավիրեց յուր մոտ միաբանության դլխավորներին, վորպեսզի նրանց հետ միասին հաղարացիների հարձակման դիմադրելու կամ հարձակվողների հափշտակությունից վանական ու հայրապետական հարստությունները ազատելու մասին խորհրդակցե:

Վորոշվեցավ նախ բոլոր մեծագին իրեղենները, յեկեղեցական սպասները ու սրբությունները և մանավանդ սուրբ դրոց ու այլ մատենից ժողովածուները ծածկել հեռավոր և խավարչային այրերի մեջ: Ցերկրորդ՝ բոլոր միաբանության մասնակցությամբ կատարել թափոր և ապա մնացորդ որը անցցնել աղոթքով ու հսկումով, վորպեսզի աստված խնայե անպաշտպան միաբանությանը և չմատնե նրան յուր թշնամու ձեռքը:

Ցեվ, արդարև, անապատականների այս ընկերությունը թաղչելուց ու աղոթելուց դատ չուներ պաշտպանության մի այլ զենք: Թաղավորն պրպղված եր ապստամբ իշխանների հետ կըռ-

վելով, իսկ գործ ունեցող իշխաններն ամբացած էին իրանց բերդերում: Այդ պատճառով վանքերն ու միաբանությունները մնացել էին անպաշտպան: Թշնամու յերեսից փախչող խուժանը, վոր չեր վայելում արքունական զորաց կամ վորևե իշխանի պաշտպանությունը, խուճապելով խոնվում եր դարձյալ այդ վանքերի մեջ և այդպիսով ավելի ևս ծանրացնում միաբանության դրությունը: Վորովհետև վերջինս ստիպված եր լինում վոչ միայն նրանց պաշտպանելու, այլև կերակրելու հոգն առնել, վոր շատ անգամ կարելի եր լինում մեծամեծ դժվարությունների հետ:

Աշնանային գեղեցիկ առավոտ եր: Վճիտ և անամպ յերկնակամարի վրա սահում եր արևի հրավառ գունդը, կարծես, ավելի լուսավոր և ավելի ճառագայթարձակ, քան ուրիշ որերը: Գեղա լեռան լանջերն ու բարձունքները, վորոնց վրա թոշնել ու դեղնել եին արոտն ու թավուտը՝ վառվում եին արդեն յերևնելանդ դունով: Այրիվանից ժայռերը, բուրգերն ու ամբարտակները, վորոնք իրանց քարերեն կրծքում սեղմում եին, կարծես, տխուր մենաստանը, աղատվում եին հեղհեղուկ ժայռապատ լեռան ստվերներից, և առավոտյան անուշ հովերը, վորոնք Գեղա լեռան լանջերը քերելով՝ մտնում եին Այրիվանից ձորը՝ Աղատի ալիքները համբուրելու համար, մեղմում եին արեվի տապը, վոր սկսում եր արդեն զգալի դառնալ այդտեղ: Մենաստանի շուրջը բուսած ծառերի և կարկաչահոս գետի ափունքը հովանավորող թուփերի մեջ սկսել եին թռչուններն իրանց վաղորդյան ճոխորդյունը, վոր խառնվելով գետի քաղցր խոխոջի հետ, լցնում եր շրջապատը մի ախորժաբուր աղմուկով:

Ցեվ ահա վիմափոր տաճարի դռներից դուրս յեկան սպիտակազգեստ գործերը անդաստանի քաղցրանվագ շարականը յերգելով: Նրանց հետևում եին ուրարակիրները, սարկավագները, աբեղաների խումբը, վարդապետները և վերջապես բարձրաստիճան յեպիսկոպոսները, շրջապատած վեհափառ հայրապետին: Նրա առջևից դեմ առ դեմ գնում եին յերկու սարկավագներ, արծաթե բուրվառները ձեռքներին, վորոնք և շարունակ խնկարկում եին կաթուղիկոսին: Սկսած աբեղաներից մինչև յեպիսկոպոսները՝ ամենքն էլ ծածկած եին ևս փիլոններ, վորովհետև վոսկեթել շուրջառները և այլ թանկագին սպասները թաքցրել եին արդեն այրերի մեջ: Միայն կաթուղիկոսն եր կրում սպիտակ, վոսկեթել շուրջառ, վոր մի առանձին շուք ու վայելչու-

քյան եր տալիս նրա բարձր ուղեղային հատակին և քաղցր ու բարի դեմքին, որը զարդարված եր սպիտակափառ և կուրծքը հովանավորող մորուսով։

Հասնելով վանքի պարսպապատի մեջտեղը, շրջան կազմեց միաբանությունը թափորն սկսելու համար։ Բայց հազիվ սկզբնական աղոթքները կարդացին և դրքերի ընթերցումը սկսան, ահա յերկնքի վրա կատարվելիք մի հրաշքի նշանները յերևացին։ Լուսավոր յերկնակամարը դարշ-կանաչադույն սավեր առավ յուր վրա։ Նրա մեջ, զանազան կետերում, սկսան աստղեր նշմարվիլ։ Ողի մեջ հանկարծ ցրտություն տիրեց և քամին ընդհատ կերպով սկսավ շառաչել։ Թուխունները, որոնք մինչ այն ուրախ ու զվարթ ճոխողում եյին, ձայներնին քաշեցին և սկսան վախեցած այս ու այն կողմն ընկնել։ Թափոր կազմող միաբանությունը պաշարվեց բնազդական մի յերկյուղով և դիրք կարդացող վարդապետն ղազ, որը յուր աչքերի տեսությունը նվաղում և։

Հանկարծ կաթուղիկոսը ձեռքերը դեպի յերկինք բարձրացնելով բացականչեց.

— «Ո՛վ ահավոր և ամենակարող աստված, ի՞նչ հրաշք և այս, որը ցույց ես տալիս դու քո արարածներինդ...»։

Բոլորը կարծես այդ ճայնից զարհուրած դեպի վեր նայեցին և սարսափելով տեսան, որ արևի պայծառ դունդը կիսով չափ ծածկվել և սավերով և հրավառ սկավառակը խավարում և արդեն*)։

Մի քանի րոպեյից սվունջյան պայծառ լուսյը խավարեց բոլորովին։ Ամենքը մնացին սառած և միայն յերկյուղի ու զարմացման բացականչություններ եյին, որը լսվում եյին չորս կողմից։

Հանկարծ դռան յեպիսկոպոսն առաջ դալով բարձրաճայն աղաղակեց.

---

*) «Եվ իբրև խավար դիշերին ի բաց յեղյալ և լուս առավոտին ծագեցավ, հանկարծակի հսկան Քրիստոս դարձյալ խավար դիշերային գիշեր արեգակ. ընդ որս առհասարակ սքանչացյալ մեր՝ տեսաք դի խավարյալ եր արեգական Հառավոտին պահու։ Եվ ապա ըստ ընտրողության իրեն խորհրդածյալ, յերե վոչ և ժամանակ խավարելո արեգականն իմացաք հավատով նման բացերևակի մեզ ի այսմանե առաքեր ցուցյալ։ Եվ այնուհետև չուտ առնուզի յեղույթյանն հասարակաց առիպեր դյուրաքանչյուրն ի բաց դնալ ի ապառնալյաց փոքձութիններն անթից»։

Հովհ. կաթ. պատ., եր. 181։

— Վեհափառ տեր, աստված ահա՛ բացահայտ կերպով ցույց է տալիս յուր կամքը Այրիվանից ուխտին, վոր ցանկացավ պահել քեզ յուր մոտ և յուր գրկում պատսպարել հայ յնկեղեցվո սըբբաղան հարստությունը: Դու չընդդիմացար և ասացիր՝ «Ցերեկ աստծուն հաճելի լինի իմ հեռանալը, նա պայծառ արևի ժամանակ էլ դիշեր կաստեղծե ինձ համար»: Ցեվ ահա՛ աստված լսեց քո խոսքը, նրա ամենակարող աչքն աստեղծեց ցանկալի դիշերը, խավարելով տվունջյան պայծառ լուսատուն: Նա ուրեմն կամենում է, վոր դու հեռանաս այս ուխտից և քո անձն ու հայրապետական սրբությունները փրկես վերահաս վտանգից: Հեռացի՛ր, վեհափառ տեր, հեռացիր այստեղից, վորովհետև այդ է աստուծո անքննելի կամքը:

— «Հեռացի՛ր, հեռացի՛ր, մենք որհնում ենք քո ճանապարհը», դոչեցին ամեն կողմից մխաբանները:

— Հնազանդվում եմ աստուծո կամքին, ասաց կաթուղիկոսը և ծունկ չոքելով սկսավ աղոթել:

Բոլոր մխաբանությունը հետևեց յուր հայրապետի որինակին:

Ցերբ արևի խավարումն անցավ, նրանք ջերմեռանդ սրտով թափորի կարգը շարունակեցին և ավարտելով վերադարձան տաճարը:

Այստեղ Մովսես վարդապետը, վոր ընթրիքի ժամանակ կարդացել եր Հովհաննու ավետարանը և դրանով կաթուղիկոսի ուղևորության արդելք դարձել, սարսափահար ու վշտաբեկ յեկավ ընկավ հայրապետի վոտքերը՝ թողություն խնդրելու:

— Ցնս հանցանք գործեցի քո դեմ, վեհափառ տեր, ասաց նա արտասվելով. ինձ թվում եր, թե աստված և ներշնչել ինձ քո ուղևորությունն արդելելու միտքը բայց այժմ տեսնում եմ, վոր յես գործել եմ սատանայի թելադրությամբ: Ների՛ր ինձ և աղոթիր, վոր քո նվաստ ծառան ազատվի վորձչի կապանքներից:

— Դու գործել ես աստուծո թելադրությամբ, սիրելի վորդի, ասաց նրան կաթուղիկոսը մեղմ ձայնով. աստված ինքն է ներշնչել քեզ այն՝ ինչ վոր դու արիր, վորպեսզի ցույց տա մեզ այսոր յուր հաավոր զորությունը: Գնա՛ և զոհություն աղոթք կարդա նրան, վոր արժանի արավ քեզ այդ չնորհին:

Վարդապետը հոգվով չափ մխիթարվելով այս խոսքերից, գլուխ խոնարհեց և հեռացավ:

Քիչ ժամանակից հետո կաթուղիկոսը յուր հավատարիմնե-

բով ու հետևորդներով յելավ Այրիվանքից և ուղղվեցավ դեպի Գառնի։

Հայրապետի հեռանալուց յետո միաբանութեան կերկյուղն ավելի սաստկացավ։ Ներանք հալատում էլին, վոր սատվածն յերկինքի վրա ցույց տված այդ հրաշքով, հայտնել եր իրանց Թշնամիների մոտալուտ հարձակումը։ Ուստի բոլոր այն անպատասխանները, վորոնք Թշնամու հարձակման կամ ներանցից չարչարանք կրելու չափ քաջութիւն չունեյին, խույս տվին լեռները և կամ պատսպարվեցան հեռավոր այրերում։ Ներանց հետևվեց և Այրիվանքին ապաստանած խուժանը։

Մենաստանում մնացին Ծերունի վանահայրը և մի քանի կորովասիրտ ու անձնվեր վարդապետներ, վորոնք ավելի լավ համարեցին մեռնել վանքի պարիսպների մեջ, որբազան տաճարի դռան առաջ, քան Թե իրանց անձի ազատութիւնը վորոնելով՝ Թողնել վանքը բարբարոսների ձեռքում։

Թեպետ ներանք հազարացիներին դիմադրել չէլին կարող և դրա համար չէլին իսկ յերազում, բայց վորովհետև դիտեյին, վոր այդ խուժադուժները, յեթե ամայի և անմարդաբնակ գտաննեյին վանքը, չարաչար պիտի պղծեյին ու ավերեյին ներան, վորպեսզի վախչողների սիրտը կսկծացնելով՝ վրեժ լուծեյին ներանցից, ուստի կարևոր համարեցին մնալ վանքում, դուցե Թշնամու բռնութիւններն իրանց վրա դարձնելով՝ ազատեյին վանքը նրա բարբարոսութիւններից։

Մնացողների Թվումն եր և յերկտասարդ Մովսես վարդապետը, վոր վախչողներին ու Թաղչողներին զանազան ճանապարհներ ու Թաղստյան վայրեր ցույց տալուց և նրանց ուղեվորելուց յետո, վերադարձավ վանահոր և նրա ընկերների մոտ, դալիք հարվածներից յուր քաժինն առանալու համար։

Ծերևցյան դեմ դուժկան հասավ վանքը Թշնամիների հարձակման լուրը դուժելու։

— Վոստիկանը մի քանի դունդ ղրկեց ճանապարհեց այստեղ կաթուղիկոսին կալանավորելու և միաբանութիւնը որի անցցնելու համար, ասաց նա վանահորը։ կաթուղիկոսարանի վերակացուն ղրկեց ինձ այս տխուր Նորութիւնը ձեղ հաղորդելու համար։

— Առաված յերկինքից ավելի չուտ լուր հասցրեց մեղ, վորդի, պատասխանեց վանահայրը։ կաթուղիկոսը և միաբանու-

Քյան մեծ մասն աղաղակած են արդեն. խոհ մենք մնացինք տյառեղ վանքի գրանը մեռնելու համար։

Գուժկանի հեռանալուց յետո վանահայրը ժողովեց յուր հետ յեղողներին և մտավ տաճարն աղոթելու և հոգումն կատարելու համար։

Ներանք դեռ ծնկաչոք աղոթում եյին, յերբ մի զարհուրելի աղաղակ վիմափոր տաճարի կամարները թնդացրեց։

Վանահայրը վեր թռավ տեղից և մեղմ ձայնով Քրիստոսի խոսքերն արտասանեց.

— «Աբիք, յերթիցուք, ահա հասյալ է ժամ...»։ Ցեսվ նա տյլևս չկարողացավ շարունակել, քանյ առաջացավ խռովթա քայլերով։

Բոլորը հետևեցին նրան։ Ցերբ տաճարի գավիթը հասան, նա նորեն դարձավ միաբաններին և հուզված ձայնով ասաց.

— Մենք նվիրված ենք մեր ժողովրդի և այս սուրբ տաճարի սպասավորության և դրա համար ուխտ ունինք դրած նախ աստուծո և ապա մարդկան առաջ. այդ ուխտին դրժելու իրավունք չունինք. դնանք ուրեմն դեպի գոհի այն տեղանը, վորի վողջակեզը մեր անձը պիտի լինի. դնանք ուրախ և անտրտունջ և հավատանք, վոր գոհելով մեր կյանքը այս անցավոր աշխարհում, պիտի վերստանանք նրան անանց և հավիտենական թագավորության մեջ։

— Գնանք մեր սրբազան պարտքը կատարելու, հարեց յեռանդով Մովսես վարդապետը։ Մենք վոչինչ չենք գոհում այստեղ և վոչինչ էլ չենք կորցնում։ Վաղ թե ուշ պիտի մեռնեյինք. հավիտենական չեր լինելու մեր կյանքը։ Որհնենք աստծուն, վոր արժանի արավ մեզ շահավոր կերպով մեր մահկանացուն կնքելու։ Ցեթե այս տաճարի հիմքերը մեր արյամբ ներկվելով ավելի պիտի ամրանան, յեթե դալոց սերունդները՝ չեն գտնելով այս կամարները՝ պիտի աղոթեն նրանց մեջ և այդ աղոթքը յերկնքից պիտի իջեցնե հայ յերկրի վրա հավիտենականի որհնությունը, ապա ուրեմն յերջանիկ ենք մենք, վոր դարձանք հընտրության անոթ և այս անցավոր աշխարհում ապրեցինք ավելի իմաստնաբար՝ հավիտենական բարիքը անցավորից գերադասելով։

— Գնա՛նք, գնա՛նք. թշնամին մեզ չի ահաբեկիլ. գնա՛նք մեր պարտքը կատարելու, բացականչեցին մյուս վարդապետները և խմբովին բակը դուրս յեկան։

Հաղարացիք հասել էին արդեն վանքի պարիսպներին և շրջապատել նրան։ Դռները փակ գտնելով՝ նրանք պայթեցնել, կոտորել էին։ Այդպիսի հանդգնություն չէին սպասում մի խումբ հոգևորականներից։ «Ուրեմն այդտեղ պաշտպանող զորքեր կան», մտածում էին նրանք և իրանց դռռում–դղրդոմով վանքի այրերը թնդացնում։ Նրանք հրամայում, հայհոյում, սպառնում էին։ Ահագին ժայռեր գալիս, զարկվում էին պարսպապատի դռանը՝ նրան ջախջախելու համար։ Քարաձնացները վանքի հանվից բարձրացող ժայռերի վրա յելնելով՝ քարեր էին գլորում այդտեղից, իսկ նախահարձակները պարսպին սանդուխքներ հենելով՝ պատրաստվում էին յելնել նրանց վրա, կամ իջնել վանքի բակը։

Վանականների խմբակը կանգնած եր այդտեղ անդեն, անպաշտպան, ինչպես անմեղ երեխերի մի խումբ՝ սրբությունուշ վրտռոցներով ու բարեկներով չզինված։ Հրոսակների վայրենի աղաղակները և յերկաթապատ դռան բոմբյունը դող ու թունդ եր հանում նրանց սրտերը։ ԵՒ վորքան եր նրանք պատրաստված՝ կամաւոր հոգվով իրանց անձը զոհելու, այնուամենայնիվ նրանք դողում, սարսափում էին։ Մահից ու արյունից կազմված մարդը՝ ընկճվում եր նրանց մեջ։ Քնաղդումը զործում եր ավելի, քան հոգևական կորովը։ ԵՒ նրանցից ամեն մինն ապրծում եր ասածն՝ անցնել իրանից դառնության այդ բաժակը։ Միայն Մովսես վարդապետը կարծես խլացել, անզգայացել եր։ Զորքի աղաղակը, դռան ճարճատյունը, լեռնալանջից գլորվող քարերը նրան վոչ չխոթում, վոչ սարսափեցնում էին։ Նա անվրդով նայում եր այդ ամենին, կարծես սպասելով, վոր հասնի չուսով կատարման ժամը։

— Մենք իզուր ենք կատաղեցնում այդ մարդկանց, զարճավ նա վանահորը։ Ավելի լավ է բանանք պարսպի դռները և ընդունենք նրանց։ վաղ թե ուշ պիտի նրա խուժեն նրանք։

— Վոչ, վոչ։ դուցե ոտնված դեռ կամենում և մեզ փրկել։ դուցե անցնում է փորձության ժամը... պատասխանեց վանահայրը, վոր յերկյուղից դունաթափվել եր արդեն։

Այդ ժամանակ պարսպի և աշտարակների վրա բարձրացան զորքերը և զրամանալով տեսան, վոր բակի մեջ կանգնած էին միայն մի խումբ վանականներ։ Զինային այդտեղ դիմադրող զորքեր և վոչ էլ կռվի կամ պաշտպանության պատրաստություն։ Այդ անակնկալ հայտնությունն իջեցրեց նրանց կատաղության

ցեռանդը։ Մի քանիսը միայն իրանց ավիններըը ձգեցին դեպի խմբակը, այն էլ կաթնես՝ վոչ թե հարվածելու, այլ վանականներին վախեցնելու համար։

Բայց յերբ պարսպապատի դուռը ժայռերի հարվածին չդիմանալով ահագին ճարճատյունով դլորվեցավ, ընկավ և ղորքը բարձրաղոչ ներս խուժեց բակը, վանականները խմբով փախան դեպի դավիթը։

Վայրենի հրոսակներն ընկան նրանց յետևից և մի ակնթարթում չրջապատեցին բոլորին։ Սրերն ու ավիններն սկսան չողալ։ Մի վայրկյան ևս՝ և ամենքը պիտի ընկվեյին։ Բայց խմբապետներից մինն առաջ անցնելով՝ ղորավոր ձայնով դոռաց.

— Վոչ վոքին չսպանեք. այս է ղորապետի հրամանը։

Կարծես կատաղի դայլերի բերանից հանկարծ վորսը խլեցին։

— Ինչո՞ւ չեք թողնում սատակել բոլորին, դոռացին նրանք մխաբերան և սկսան մոմոալ, սպառնալ և անլուր հայհոյանքներ թափել վանականների դլխին։

Բայց չուտով այդտեղ հասավ Բեչիր ղորապետը, նստած արաբական ամենի նժույգի վրա, և վերջ դրավ ղորականի վայրենի յեռանդին։

Դա մի հաղթանդամ և ղորավոր մարդ եր, խոշոր և թուխ դեմքով, հրացայտ աչքերով, հարուստ, ղորշախառն մորուքով, վոր իջնում եր մինչև դոտին. դլխին փաթաթած եր սպիտակ սպարոշ, վորի մեջ ծածանում եր մի վոսկե ցցունք։ Հագած եր թանկագին սպի, և նրա վրա պղնձե ղրահ. կողքից կախած վոսկեզարդ, աղեղնաձև թուր, իսկ ձեռքին բռնած՝ վոքրիկ, պայլուն վահանակ։

— Վո՞րն է ձեր մեծը, հարցրեց նա վանականներին, հասալանալով դեպի նրանց։

— Ցես, խոնարհ ծառադ, առաջ անցավ վանահայրը։

— Վո՞րտեղ է ձեր կրոնապետը, հարցրեց Բեչիրը։

— Նա դնաց Գաանի։

— Գաանի՞։

— Այո՛, տեր։

— Ի՞նչպես հարմարվակվեցավ։ Մի թե Դվինից հրաման չբերի՞ն նրան մեծ վոսոխիկանի վոտքը դալու։

Վանահայրը չպատասխանեց. նա տատանում եր և չդիտեր ի՛նչ ասել։

— Ի՞նչպես չե, բերին, հառաջ անցավ Մովսես վարդապետը։

— Ինչո՞ւ ուրեմն նա այդ հրամանը անսաստեց։

— Նրան կարելի չէր խնդրել, բայց չէրիք՝ հրամայել։

— Դու համաձայնվում ես այդ լեզվով խոսի՞լ ինձ հետ։

— Սմեն լեզու իրավունք ունի ճշմարտությունը խոսելու։

— Ցավ չի՞ս վախենում, որ այդ ճշմարտախոս լեզուն արժամից հանեմ։

— Մենք սպասում էինք արշևն մեռնելու համար։

— Կյանքը չէրևի շատ է ձանձրացրել քեզ, Թշվառական։

— Վոչ մեկն ձանձրալի, այլև նվաստացուցիչ է այն կյանքը, որ մարդ վայելում է յուր Թշնամու առաջ խոնարհելով. մահն այդպիսի կյանքից ավելի դերադաս ենք համարում մենք։

— Հրամայեցե՛ք, տեր, որ այս ապերասանի կառուիը ջախջախեմ, դուռց մի զորական, սուրը չերկտասարդ վարդապետի գլխին շողացնելով։

— Թո՛ղ մեկն դա ապրի յուր ընկերներից, որպեսզի կյանքի նվաստությունները չարաչար տանջվի, պատասխանեց զրաքաշտը և ապա վանահորը դառնալով հարցրեց — վո՞րտեղ են գտնվում ձեր վանքի և կրոնապետի դանձերը։

— Մենք դանձեր չունինք, պատասխանեց վանահայրը։

— Մի՛ համաձայնվիր ասել իմ առաջ,

— Ցավ չեմ ասում, վոչ Թե նրա համար, որ վախենում եմ, այլ վոր մեր կրոնն արգելում է այդ։ Մենք դանձեր չունինք, վորովհետև անասպատականներ ենք. իսկ անասպատականը անհրականություն չի կարող ունենալ։ Մենք պահպանում ենք միայն մեր ժողովրդի մեզ ուղած ավանդները և այն պարտաւորում ենք զարձյալ նրա ոտքին, չէրը կարիքը պահանջում է։

— Դե՛հ ուրեմն, հայտնի՛ր ինձ այդ ավանդների տեղը, հրամայեց զորապետը։

— Ցավ իրավունք չունիմ, պատասխանեց վանահայրը։

— Ցավ հրամայում եմ քեզ։

— Ցավ պիտի անսաստեմ քո հրամանին։

— Կապեցեք դրանց բոլորին և ձգեցեք մի անկյուն, հրամայեց զորապետը. իսկ դուք մտեք սրանց կացարանները, աղոթարանները, պտրեցեք, վորոնեցեք ամեն տեղ, քրքրեցեք ամեն անկյուն, հանեցեք ծածկած իրերը, դուրս քաշեցեք Թաղնըվածներին։

Զորապետը դեռ չէր ավարտել յուր խոսքը, վոր գործքերն իրար անցան։ Կարծես վոսկե բեռներ հափշտակելու հրամանը

արվեցավ լրանց։ Բայց Բեչլերը թույլ չտվավ, որ ամեն ցանկացող ներս մտնե վանքը։ Նա պիտեր, որ զորականը խիղճ ու օրենք չունի. հետևապես զոհած քանկազին իրերը պիտի ծածկեր և սեփականեր։ Ուստի ընտրեց մի քանի խումբ խուզարկուներ և նրանց ուղարկեց դեպի ծածկարանները։

Զորքերը խուժեցին վիմափոր տաճարը, փոքրիկ մատուռները, մխիթարական խուցերը. յելան լեռան լանջերում փորված այրերը. մինչ բանիլ Թափանցեցին ամեն ունդ, ուր որ մի ծածկված հարկ կամ զաղտնի անկյուն զտան։ Նրանք տեղեկացին յեռանդով խուզարկում եյին այդ տեղերը, քրքրում եյին ծակամուտները, փորում եյին դետինը, թափում եյին վայրերի կույտը կամ ցրվում աղյուսը, կարծելով թե նրանց տակ թաղված պիտի դտնեն մեծամեծ գանձեր։ Բայց յերբ մեծագին զանձինչ չդտան, դուրս բերին և ժողովեցին բակի մեջ յեկեղեցու հասարակ շալիկներ, փիլոններ, զանազան հնոտիք և խուցերից հավաքած ցնցոտիներ ու կարպետներ։

Բեչլերն այդ տեսնելով սկսավ կատաղել։ Ուղարկուները մինչև անդամ չեյին դտել վանքի մեջ դործածվող պղնձեղենը, որ, յուր իմանալով, ահագին քանակութեյան եր հասնում։ Հռոստա Այրիվանքում, ուր մի քանի հարյուր միաբաններ կային, ուր ինքը կաթուղիկոսն եր ապրել, չդտան մինչև անդամ մի պղնձե դավաթ, մի սկուտեղ։ Բակի մեջ ընկած եյին միայն մի քանի հատ փայտյա խաներ, ափսեներ և հողե ամաններ։

— Ճիվ այդպես, դուք ուրեմն ամեն ինչ ծածկե՞լ եք, զայրացած հարցրեց զորապետը դիմելով վանահորը։

— Ծածկել ենք ա՛յն ամենը, ինչ վոր այս մենաստանին և վոչ թե ձեղ և պատկանում, պատասխանեց Ծերունին։

— Այս բոպեիս պիտի հայտնես տեղը, զարշելի Ծերուկ, զոռաց Բեչլերը և մարակի ծանր հարվածը իջեցրավ վանահոր դլխին։

Արյառի ջիղը, վորից հյուսած եր մարակը, դալարվելով դիպավ Ծերունու դեմքին, վորից նրա դալկահար յերեսի վրա կապեց դորշ-կապույտ պալար։ Ծերունին յերերաց և հենվեցավ յեկեղեցու պատին։

Մի յերկտասարդ աբեղա սաստիկ զրդռվելով այդ բանից, առաջ անցավ և աներկյուղ ձայնով դոչեց.

— Դա՛ւ, վոր զառամյալ Ծերունուն խնայելու չափ խիղճ

չունէս, արժանի չես զորապետի անվան։ Առաւած կպատժե քեզ մի որ, վախենցիր նրա բարկութիւնից։

Բնչիրը դեռ չէր պատասխանել, որ մի ծանր որդի հարւած իջնալ աբեղայի դլխին և նա արյունաթաթախ գլորվեցաւ գետինն։

Գաղան զորականը, որ այդ հարւածն իջեցրաւ, արժանացաւ զորապետի դասուիթեան։

— Այսպիսի հարւած կստանաք ամենքդ, յիշեք կհամառեք պանձերի տեղը ծածկել, սպառնաց Բնչիրը. հայտնեցեք ինձ ամեն ինչ ճշտութեամբ, և դուք կազատուիք մահից։

— Մենք չենք մատնել ձեզ՝ վո՛չ մեր յեղբայրներին և վո՛չ մեր սրբութիւնները. արեք մեզ հետ ինչ որ հաճելի կ՚ ձեզ, պատասխանեց մի ուրիշ վանական։

— Դո՞ւ ել նույնն ես կրկնում, յերկտտարդ կրոնաւորը, գոռաւ Բնչիրը Մալեսս վարդապետին։

— Այո՛, տեր, մատնութիւնը գարշելի գործ է և մեղանից վոչ վոք չի մատնել ձեզ վոչինչ։ Ծածկված մարդիկը մեր յեղբայրներն են, ծածկված իրերը՝ մեր սրբութիւնները կամ ժողովրդի դուքը։ Մենք նրանց ձեզ հանձնելու իրաւունք չունինք։ Մեր անձնականը, ահա՛, այս մարմինն է. դուք կարող եք նրան անշնչացնել. բայց ընկճել մեր հոգին՝ յերբե՛ք։

— Տարեք, տանջեցեք այս մարդկանց ամենասոսկալի տանջանքներով, մինչև վոր նրանք կհայտնեն ձեզ ծածկված գանձերի տեղը, հրամայեց զորապետը և հեռացաւ։

Նրա դլխում չարունակ պատկում եր այն միտքը, թե Այրվանքը մեծ գանձեր ունի և ինքը պիտի հափշտակե նրանց։ Վանականների համառութիւնն ել ավելի յեր գրգռում նրա ախորժակը։

Բայց վերջիններս համառում եյին դլխավորապես այն պատճառով, վոր այն ծածկարաններում, ուր վանքի և կաթուղիկոսի գույքերն եյին գտնված, պատսպարված եյին և չատերը իրանց կարդակիցներից։ Իրեղենների տեղը հայտնելով՝ պիտի մատնեյին նրանք և թագնված մարդկանց, վորոնց և թշնամու սուրն անխնա պիտի ջնջեր։ Այս պատճառով ավելի լավ համարեցին միայն իրանք գոհվել, քան իրանց յեղբայրներին ել մատնակից անել մահվան։

Անխիղճ գորքերը գաշկոտեցին միաբաններին այս ու այն կողմը։ Նրանցից մինին ծառի վրա պրկելով պիտան հարւածել. մյուսին ձիու պոչից կապելով, քաշքշեցին դետնի վրա, յերբոր-

դին մերկացնելով՝ սկսան խաբաններով այրել. չորրորդի մարմինը սվիններով ծակծկեցին. հինգերորդինը՝ ակցաններով պատկեցին, և այլն և այլն: Բայց և այնպես արիասիրտ մխաբաններից վոչ վոք հանձն չառավ զորապետի հրամանը կատարելու:

Այն ժամանակ Բեչիրը նորեն յեկավ տանջվողների մոտ. տեսավ թե ինչպե՞ս տված չարչարանքներն արյունոտել, այլանդակել եյին թշվառ զոհերին. կարծես խիղճը ղարթնցավ բարբարոսի մեջ և նա հրամայեց, Ն անց տանջանքները կարճելու համար, մխանդամից սրի անցցնել բոլորին:

Զորապետի հրամանը մի ակնթարթում կատարվեցավ. բոլորին եվ մխանվագ դլխատեցին: Կենդանի մնաց միայն Մուսես վարդապետը, վորին Բեչիրը, ըստ յուր խոստման, հրամայեց վողջ պահել, վորպեսզի նա յուր վերքերից տանջվի չարունակ: Բացի այդ, զորապետը հրամայեց նրան չտապել Դաունի և խաբաններով ու ակցաններով կեղեքված յուր մարմինը կաթուղիկոսին ցույց տալով հայտնել նրան, վոր իրան եվ զորապետը այդ որին պիտի հասցնե, յեթե յուր կամքով չկամենա Դվին վերադառնալ և վոստիկանին հնազանդություն յերդվել:

Այնուհետև Բեչիրը հրամայեց զորականին ավարել վանքը, չթողնելով այդտեղ նույնիսկ խեցի մի կտոր:

Զորքերը հափշտակեցին ինչ վոր դտան. թե հավաքած իրեղենները, թե հավ ու ճիվը, թե մեղվի փեթակները, վորոնք խիստ բազմաթիվ եյին, և թե մինչև անդամ անասուններին համար ամբարած խարն ու պաճարը:

Մխաբանների նահատակության համբ զորքերը իրանց զրկանաց վրեժը հանած լինելով, ուրիշ ավերումներ չարին տաճարի կամ մատուռների մեջ: Այդպիսով անապատականների անճվիրություն յուր ոդուտը բերավ: Այրիվանից ճարտարապետական բարեզարդություն մնաց անաղարտ:

Բ

ՆՈՐ ԴԻՄՈՒՄՆԵՐ

Արևի խավարումը ծանր տպավորություն էր թողել Գառնո ղղյակում։ Իշխանուհիները թագուհու մոտ ժողովված՝ զանազան դուշակություններ էին անում բնության այդ խորհրդավոր երևույթի մասին։ Նրանք հավատացած էին, որ արևի խավարումը նշան է մոտալուտ մի պատուհասի կամ ծանր դժբախտության։ Բայց թե ի՛նչ պատուհաս կամ դժբախտություն պիտի լիներ այդ, չգիտեին, և դուշակություններն ահա՛ դրա մասին էին։

— *Թագավորը պիտի հաղթվի և այդ պարտությունը նոր անհաջողության դուռ պիտի բանա մեզ համար, այս է արևի խավարման նշանակությունը, վորոշեց վերջապես թագուհին։*

Բայց իշխանուհիներից վոմանք չհամաձայնվեցան նրա հետ։ Եվ այդ վոչ թե նրա համար, վոր չեին հավատում այդ դուշակության, այլ նրա համար, վոր թագուհու սիրտը վշտացնել չեին կամենում։

— *Արևը ծագում է շատ յերկրների վրա, բայց բոլոր այդ յերկրները միաժամանակ չեն դժբախտանում, նկատեց Սյունյաց Մարիամ իշխանուհին։— յեթե արևի խավարումը դուշակ է դժբախտության, ինչո՞ւ ուրեմն միևնույն յերկրում թագավորը պիտի հաղթվի, իսկ Ցլիկ-Ամրամը հաղթե, մինը դժբախտության և մյուսը՝ հաջողության հանդիսե։ Այդ ապացուցանում է ուրեմն, թե արևի խավարումը միայն չարիք չէ բերում մարդկանց, այլև յերբեմն բարիք։*

— *Ցնվ, դուցե, այս անդամ բարիքը մեզ վիճակվի, հարեց Մարզպետունի իշխանուհին։*

— *Գուցե, պատասխանեց թագուհին։ Բայց նա այդ հույսը չուներ։ Նա դիտեր, վոր ասված չարիքը չափում է հանցավո-*

րին, իսկ բարիքը՝ արդար մարդուն. դիտեր, վոր յուր թագավոր ամուսինը հանցավոր եր Ամրամի առաջ, և հետևապես պիտի հաղթանակեր վերջինը: Բայց նա այդ մասին վոչինչ չխոսեց, վորովհետև չեր կարող խոսել:

Մի քանի ժամից այստեղ հասավ Հովհաննես կաթուղիկոսը: Ամբողջ Գառնին յուր հոգևորականներով ընդառաջեց հայրապետին: Մուշեղ բերդակալը, վոր ոգևորում եր ամեն դեպքից յուր հարգանքը վեհափառին ցույց տալու համար, դուրս հանեց մարակոցներից ու աշտարակներից բոլոր ամրոցաբնակ զորքերը և կատարյալ սպառազինությամբ ու զրոշակներով տարավ նրանց կաթուղիկոսի առաջ: Թագուհին յուր իշխանուհիներով դիմավորեց հայրապետին ամրոցի դռների մոտ և նրա հետ միասին մտավ յեկեղեցի:

Յերբ կաթուղիկոսը յուր աղոթքը կարդաց և մուտքի մաղթանքն ավարտեցին, Թագուհին հրավիրեց նրան դղյակ, ուր հայրապետի և յուր հետևորդների համար պատրաստված եր ոթևան:

Վեհափառի այցելությունն ուրախացրել եր զառնեցիներին. ժողովուրդը ցնծության մեջ եր: Բայց դղյակում, ընդհակառակը, տխրել եին ամենքը:

Կաթուղիկոսը հայտնել եր Թագուհուն յուր գալստյան պատճառը: Վոստիկանի Դվին հանձնելու լուրը տարածվել եր դղյակի մեջ: Ամենքն ոկսել եին վախենալ և այս ու այն անկյունը ժողովված խորհրդածություններ անել: Իշխանուհիներին հուսադրում և սիրտ եր տալիս Գոռ իշխանիկը: Յեվ նրա խոսքերը, արդարև, հանդստացնում եին թե՛ հասակավոր տիկնանց և թե՛ դեռատի օրիորդներին:

— Գառնին չեն կարող զրավել վոչ միայն Ներսեհ, այլև ամիրապետի զորքերը, ասում եր նա նրանց: Յեթե մեր պահակ զնդերը չկռվին անդամ, զարձյալ Գառնու ամրությունը կմնա անխախտ: Թշնամին չի կարող վնասել նրա ժայռերին. իսկ Տրդատաշեն պարիսպներն ու աշտարակները կդիմադրեն թե բաբաններին և թե բաղխատրի ռումբներին:

Մուշեղ բերդակալը, սակայն, ավելորդ համարեց կանանց զրույցներին մասնակցել: Նա մինչև անդամ կաթուղիկոսի մոտ չմնաց, թեպետ և կցանկանար ամբողջ ժամերով կանգնել նրա առաջ և հայրապետի սուրբ խոսքերը լսել... Այդ, արդարև, մի մեծ բախտավորություն կլիներ նրա համար: Բայց նա պար-

սահմանակ մարդ եր և դիտեր, վոր իրավունք չունի յուր պարտքը ղվարճության զոհելու։ Այդ պատճառով հենց վոր նա վեհախոհի բերած լուրն իմացավ, անմիջապես դնալի զորանոցները զարթավ և առանց մի վայրկյան դանդաղելու՝ սկսավ ամբոցը պաշտպանելու մասին հարկ եղած կարգադրություններն անել։

Նա ռազմագետ մարդ եր, և բաղմամյա փորձառությունից գիտեր, վոր Քշնամին հանդում է շատ անգամ այնպիսի ժամանակ, յերբ վոչ վոք չի սպասում նրան։ Այդ պատճառով ցանկանում եր պատրաստել զորքը ժամ առաջ, վորպեսզի հանկարծակիի դալով՝ վտանգն չենթարկե ամբոցը, վորին ապաստանած եյին այդ միջոցին հայոց յերկրի ամենաթանկագին դլուխները, —թագուհին և կաթուղիկոսը։

Նա դինավորից բոլոր զորքը. բաժաններ նրանց զանազան խմբերի, վորոնցից վոմանք պատնեշների, վոմանք աշտարակների և վոմանք պարիսպների վրա պիտի հսկեյին կամ կռվեյին։ Կազմել ավավ մի քանի դիտարան ահագին քարափյաններ, վորով պետք և պարիսպների վրա բարձրացող զորքը հարվածելին կամ նրանց սանդուխները ջախջախելին։ Պատրաստեց մեծ քանակությամբ ճարպ, կպրաձյութ և ուրիշ դյութական նյութեր, վորոնցով պետք և պաշարողների վրա հրակ ձգելին։ Մինչ բանիլ հոդաց այն ամենը, ինչ վոր կարևոր եր համարձակ Քշնամուն դիմադրելու կամ ամրոցի սահմաններից դուրս հալածելու համար։

Բայց անցավ յերկու որ և տակավին Քշնամու հարձակման մասին լուր չեկավ բերդակալին։ Այդ հանդամանքը սակայն չմուլացրեց նրա յեռանդը։ Գիշեր-ցերեկ նա զորքի հետ եր և չարունակում եր յուր պաշտպանողական պատրաստությունները։

Ցեվ ահա մի յերեկո նա նկատեց մի խումբ հեծյալներ, վորոնք իջնում եյին Գեղա լեռան բարձրություններից։ Այդ նահությունը յերկյուղ պատճառեց նրան։

— Քշնամին, ուրեմն, մի քանի կետերից և կամենում հարձակվել ամրոցի վրա», մտածեց նա և մարդիկ ուղարկեց շրջակայքները լրտեսելու։

Բայց անցավ բավական ժամանակ և յերևացող հեծելախմբին չհետևեց վորևե ուրիշ խումբ։ Հեծյալները հետզհետե առաջանալով իջան Աղատի ձորը և խոտորեցին դեպի Գառնի։

Վա՛րքան մեծ յեղավ բերդակալի ուրախությունը, յերբ նա

այդ խմբի մեջ ճանաչեց իշխան Մարզպետունուն։ Մի յերկնային ղողուբյուն ազնուբյան հասավ իրան ծանր ճգնաժամի վայրկենին։

Իսկույն լուր տարան Թագուհուն իշխանի զալստյան մասին։ Հեծելախումբը, վորի առաջնորդները Մարզպետունին ու Վահրամ սեպուհն էյին, կազմված եր մի քանի տասնյակ վանականցիներից, վորոնք սեպուհի հետ միասին գնացել էյին Աղըստև՝ Թագավորին ողնելու համար։ Գևորգ իշխանը Թողեց նրանց բերդակալի մոտ և ինքը սեպուհի հետ միասին գնաց Թագուհուն ներկայանալու։

Բայց իշխանի զալստյան լուրը Թագուհուն վոչ Թե ուրախություն, այլ հուզմունք պատճառեց։ Մի քանի որ առաջ նա, արդարև, սպասում եր նրան սրտի անձկությամբ։ Նա ժամերով նստում եր Տրդատա հովանոցում և դիտում այն ճանապարհը, վորով պիտի վերադառնար իշխան Մարզպետունին։ Նա կամենում եր, այո՛, տեսնվել և խոսել նրա հետ ժամ առաջ. կամենում եր բանալ նրան յուր սիրտը և դարման խնդրել նրանից յուր վշտերի համար, վորովհետև այդ իշխանի մեջ եր տեսնում արքայական ընտանիքի միակ հավատարմին։

Բայց այժմ, քանի վոր Սեդան պատմել եր նրան ամեն բան, քանի վոր ինքը դիտեր, Թե Մարզպետունին վաղուց ծանոթ է յեղել յուր վշտերին և ասկայն նրանց մասին վոչինչ չեն հայտնել իրան, այժմ այլևս չեր կամենում հանդիպել նրան իրրև մտերմի։ Նա մտածում եր, Թե այդ իշխանն էլ անշուշտ ծիծաղել է մի որ յուր միամտության վրա, ինչպես այդ արել են յուր պալատի կանայքն ու նաժիշտները. և այդ միտքը ճնշում, նվաստացնում եր իրան՝ յուր իսկ աչքում։

— «Ի՞նչ, միթե նա այժմ պիտի ներկայանա ինձ՝ իրրև յուր Թագուհո՞ւն... իրրև յուր Թագավորի սմուսնո՞ւն... մի՞թե նա չդիտե, վոր յես իրավունք չունիմ այլևս այդ անունը կրելու, քանի վոր Թագավորն անարդել, արհամարհել է ինձ...», մտածում եր ինքն իրան Թագուհին և վախենում, վոր իշխանը չներկայանա իրան, չերևա բնավ յուր աչքին։

Բայց մի՞թե այդ հնարավոր եր։ Ձի՞ վոր ինքը մինչև այն վայրկյաններն եր հաշվում, Թե յե՞րբ արդյոք լուր կհասներ իրան Ուտիքից. չե՞ վոր նա ցանկանում եր և պատրաստվոր եր իմանալ, Թե ինչ հետևանք ունեցավ արքայի արշավանքը. հաղթե՞ց նա արդյոք, Թե՞ հաղթվեցավ։ Ցերկու դեպքումն էլ նա

չահ ուներ յուր անձի համար. մեկում՝ իբրև թագուհի, մյուսում՝ իբրև ամուսին...:

Ցերբ սենեկապան սպասուհին հայտնեց թագուհուն, թե Մարղկետունի իշխանը և վահրամ սեպուհը թուլյավոլթյուն են խնդրում իրան ներկայանալու, նա չփոթվեցավ և չգիտեր, թե վարի՞ն արդյոք ընդունել:

— «Թող դանդ, ասաց սպասուհուն: Բայց հենց վոր վերջինս կամեցավ հեռանալ՝

— «Ձե՛, չե՛. թո՛ղ միայն իշխանը ներկայանա» հրամայեց նա նորան և սպասուհին դուրս գնաց Մարղկետունուն հրավիրելու:

Թագուհու սիրան սկսավ տրոփել. մի ներքին անհանդստություն պաշարեց նրան և դեմքի խաղաղ արտահայտությունն անհետացավ:

Նա վեր կացավ տեղից, նայեց արծաթե հղկված հայելուն և տեսավ, թե ինչպե՞ս այլայլվել է ինքը: Նրա շրթունքները գալկացել, այտերը դունատվել և աչքերը խառնվել էին:

— «Ի՞նչ պատահեց ինձ...», հարցրեց նա ինքն իրան և սակայն յուր հարցին պատասխանել չկարողացավ: Նրա մեջ այդ րոպեին զարթել էին յերկու հակառակ, իրար դեմ մրցող և իրար ճնշող ըղացումներ.— դրանք թագուհու պատվասիրությունը և ամուսնու անձնասիրությունն էին: Յերկուսն էլ իրավատեր, յերկուսն էլ զորավոր... Հարկավ, դրանցից մինը պիտի հաղթահանակեր, բայց դեռ մինչև այդ՝ վորչա՛փ հուզմունք, վորչա՛փ ալեկոծություն պիտի խռովեցին նրա հոգվո ծովը...:

— «Ի՞նչ լուր կբերե ինձ արդյոք իշխանը...», մտածում եր նա. և այս մտածմունքը թունդ եր հանում նրա սիրտը: Նա կամենում եր, այո՛, լսել, թե թագավորը հաղթեց, թե Ամրամի ապստամբությունը ճնշվեցավ, թե արքայի զորքերը նորեն Ուտիքն ու Սևորդյաց աշխարհը դրավեցին... Այդ լուրը կղղվեր յուր դշխոյական պատվասիրությունը, վորովհետև այդ հաղթությամբ թագավորը կզղրանար, նրա անունը կփառավորվեր, հայոց զորքը կքաջալերվեր, թշնամիները յետ կքաշվեյին: Այդ հաղթությունը կժողովեր նորեն արքայի շուրջը վհատյալ իշխաններին, սիրա, հոգի կներշնչեր նրանց. դրանով վոստիկանի դեմ ուժ կկազմվեր, վորով նորեն Դվինը կգրավեյին, կաթուղիկոսարանը կազատեյին...

Այս բոլորը ճիշտ եր:

Բայց յերբ նա հանկարծ մտաբերում եր, թե ինչ պատճառից և առաջացել Ամրամի ապստամբությունը, յերբ մտածում եր, վոր Թագավորն այս հաղթությամբ ավելի ևս սիրտ համառե յուր մոլորության մեջ և Սևորդյաց յերկիրը նորեն դրավելով հաճախ սիրտ այցելե Ասպրամ իշխանուհուն և, հետևապես, բոլորովին թողնե, լքանե իրան... այն ժամանակ ցանկանում, ի սրտե փափաքում եր, վոր Մարզպետուհին հայտնե իրան, թե Թագավորը հաղթվեցավ, թե արքայական զորքերը ջարդվեցան, թե Ծլիկ-Ամրամը վերջնականապես տիրապետեց Ուտիքն ու Սևորդյաց ձորը, ուր այլևս Աշոտ-Ծերկեթը չի կարող յուր վոտքը դնել, յուր սիրեցյալ Ասպրամին այցելել...

— «Ո՛, դուցե այդ զոհաբերության գնով՝ յես նորեն դրանեմ իմ անդին կորուստը... դուցե նա մտածե՝ թե յուր հանցավոր սիրո համար պատժեց իրան աստված, և խղճահարվելով վերադառնա նորեն դեպի ինձ, դեպի յուր ամուսինն ու Թագուհին. դեպի այն սիրտը, վոր այնքան ջերմագին սիրեց նրան և վոր տակավին շնչում է՝ յուր կորած կեսը նորեն դտնելու հուսով...»:

Այս մտածմունքների մեջ եր Թագուհին, յերբ սենեկապանը նրա առանձնարանը մտնելով հայտնեց, թե իշխանն ասպատում է իրան:

Թագուհին դուրս գնաց դահլիճ առանց նաժիշտների ընկերակցության:

Գևորգ իշխանը, վոր կանգնած եր մուտքի առաջ, տեսնելով Թագուհուն՝ վողջունեց նրան խորը գլուխ տալով և ձախ յեկով ձեռքը համբուրելու:

Իշխանի լուրջ և խաղաղ դեմքը հանգստացնող տպավորություն արավ Թագուհու վրա:

— Ծերկե՛ր տպասեցինք քեզ, իշխան. անշուշտ մեզ համար ուրախ լուր ես բերել, ասաց նա սառը ժպտալով և աթոռի վրա բազմելով:

— Ուրախ լո՞ւր... այո՛, կցանկանայի բոթաբեր չլինել, բայց ստիպված...

— Ի՞նչ պիտի գուժես, հարցրեց Թագուհին անհանգստությամբ, աչքերն իշխանի վրա սևեռելով:

— Թագավորն պատրաստ է. պետք է վոտք տանք աստծուն:

— Ի՞նչ կենդանակե այդ, իշխան. ուրեմն արքայական զորքերը ջարդվեցա՞ն: Ամրամը հաղթանակե՞ց...

— Նա չհաղթանակեց, բայց մենք ամոթալի պարտություն կրեցինք։

— Ձեմ հասկանում քեզ։

— Ամբամբը մեզ պաշարեց մի կրճի մեջ։ Թագավորը վախենալով ազատվեցավ, իսկ զորքերի մեջ կռիվ չեղավ։

— Պատմի՛ր ավելի մանրամասնորեն, հրամայեց Թագուհին։

Ցնվ իշխանը սկսավ մի առ մի պատմել Քե՛ յուր դիմումներին և Քե՛ արքայի սպառազինման ու անհաջող ընդհարման բոլոր պատմությունը, ծածկելով, իհարկե ա՛յն ամենը, ինչ վոր ինքը կարևոր չեր համարում հայտնել նրան՝ Քե՛ իրրև Թագուհո և Քե՛ իրր ամուսնո։

Ցերբ նա վերջացրեց, Թագուհին չունչ առավ և կարծես դոհ իշխանի պատմածներից՝ ասաց.

— Ուրեմն արյուն չթափվեցավ... և սակայն Թագավորը վիրավոր, գլխակո՞ր... ամոթահա՞ր... այնպես չե՞։ Փառք ամենակարող աստծուն. նա դատում է արդարությամբ...։

Ցնվ Թագուհու դեմքի վրա վայլեց դոհության մի ժպիտ, վորից սակայն անբաժան եր դառնության կսկիծը։

— Մենծախառ սիկին, դու ինձ ապշեցնում ես. մի՞թե արքայի պարտությունը ուրախություն և պատճառում քեզ, հարցրեց Մարդպետունին Թագուհու խոսքերից բոլորովին շփոթված։

— Այո՛, Մարզպետունի՛ իշխան։

— Բայց այդ պարտության նախատինքը վերաբերում և արքայական դահին և...

— Ցնվ Թագուհուն, այնպես չե՞. այդ չեյի՞ր ուզում ասել։

— Այո՛, մենծախառ սիկին։

— Թագուհին այլևս հետամուտ չե փառքի, այլ հոգվո հանդստության... Անցան այն ժամանակները, յերբ իմ իղձերի լրումը Աշոտի հաղթություններն եյին կազմում. յերբ իմ հոգին սավառնում եր նրա հաղթական դրոշի շուրջը... Այդ ժամանակ, այո՛, փառքի մեջ եյի վորոնում իմ յերջանկությունը, վորովհետև յերիտասարդ եյի և անփորձ։ Իսկ այժմ այդ փառքն ատելի յե դարձել ինձ, վորովհետև նրա շնորհիվ իմ ամենաթանկագին յերջանկությունը կորցրի։

— Մի՞թե մի դժբախտություն և հասել իմ Թագուհուն, հարցրեց Մարզպետունին տարակուսելով։

— Դժբախտությո՞ւն... Վո՛չ. յես շատ յերջանիկ եմ. այդ դիտես դու. դիտե Մարզպետունի իշխանուհին, գիտեն իմ պա-

լատի կանայքը, իմ նաժիշտները... Այո՛, դուք ամենքդ գիտենք, բայց կամենում եյիք, վոր յես չիմանամ... Այնպես չե՞, տե՛ր Մարղպետունի, հարցրեց Թաղուհին հեգնաբար ժպտալով։

— Ցես... չդիտեմ... մեծափառ տիկին. ինչի՞ մասին է խոսքը։

Թաղուհին սևեռեց յուր աչքերը իշխանի վրա և մի վայրկյան լուռ նայելուց յետո՝ մեղմ ձայնով ասաց.

— Ուշ է արդեն, իշխան, մի՛ հողար այլևս իմ սրտի անդորրության մասին։ Ցես կարող եյի տանել իմ վիշտը, յեթե իմանայի, թե նա անհայտ է աշխարհին։ Բայց քանի վոր աշխարհն ինձանից առաջ է ծանոթացել նրան, ծածկելն այլևս ոդուտ չի բերիլ։ Դու մի՛ զարմանար, վոր քո բերած լուրն ինձ ուրախացրեց։ Այդ ուրախությունը խավարող հուսո վերջին ճառագայթն եր, վոր փայլեց իմ յերեսին, դուցե, վերջին անգամ...

— Հուսո՞... ի՞նչ հույս ունիս դու անհաղորդության վրա, մեծափառ տիկին, հետաքրքրությամբ հարցրեց իշխանը։

— Ինչ հո՞ւյս. լսի՛ր, քեղ կասեմ։ Մինչև այժմ իմ ամուսնո մեջ յես թաղավորն եյի վորոնում. նրա հաղորդություններով ուրախանում, նրա վատքերով պարծենում... կարծում եյի, թե դրանք են միայն, վոր յերջանկություն սիրտ բերեն ինձ։ Բայց այժմ... այժմ տեսնում եմ, թե վորքա՜ն խաբված եմ յեղել յես, թե ինչպե՜ս հալիճանակների աղմուկը, դահինների փայլը, դահույքի շուքը, արքայական պերճությունները հատել, ցամաքեցրել են իմ յերջանկության աղբյուրը. թե ինչպե՜ս այդ ամենի մեջ յես կորցրել եմ իմ ամուսնուն, համայն աշխարհի մեջ միակ սիրածս Աշոտին... Ցեվ այժմ, յերբ տեսնում եմ, թե բախտը յերես է դարձրել նրանից, յերբ տեսնում եմ, թե հանցավոր սիրո պատճառով ասուված նախատինք է դրկում նրան, յես ուրախանում եմ, վորովհետև հավատում եմ, թե դուցե հաղթված թաղավորի, անարդված դահակալի մեջ դառնամ վերջապես իմ կորցրած ամուսնուն, զարթեցնեմ նրա մեջ խիղճը... չունչ տամ, թերևս, նրա մեռած սիրուն...։

— Ցերբեք, մեծափառ տիկին, յերբե՛ք չեյի հուսալ, թե մեր ընդհանուր դժբախտության մեջոցին դու քո վիշտը կհիշեյիր... Նկատեց Մարղպետունին, ցանկանալով թաղուհու տխուր զրույցն ընդհատել։

— Ո՛, դու զարմանում ես, ուրեմն, սիրելի իշխան, վոր

ընդհանուր դժբախտության ժամանակ չես իմ անձն եմ տեսնում և իմ թշվառությո՞ւնը վողբում։ Զարմանո՞ւմ ես, որ թագավորի պարտությամբ հայրենիքին հասանելիք վտանգը ինձ չե սարսափեցնում. որ անտերության մատնվող ժողովրդի թշվառությունն իմ սիրտը չե հուզում... Մի՛ զարմանար, անբնական վոչինչ չկա այստեղ։ Ցես մի սիրտ ունեի, որ նվիրված եր Աչոտ դյուցազնին։ Նա այդ սիրտը ջախջախեց՝ իմ սերը դավաճանելով։ Այդ դեպքից հետո չես զարձա անդրա. իմ կրծքի տակ, սրտի փոխարեն, թաղնված է այժմ մի դիակ. միթե կարելի՞ չե պահանջել, որ դիակը շնչե, կամ զգա... Ցես, այո՛, սիրում եյի իմ ժողովուրդը, սիրում եյի իմ հայրենիքը ջերմ, անսահման սիրով. պատրաստ եյի զոհել նրան ամենը, ինչ որ ունեի թանկագին և անփոխարինելի. պատրաստ եյի զոհել նրան նույնիսկ իմ կյանքը... Բայց այդ ժամանակ Աչոտն ինձ հետ եր. նրա շունչը բույսլատում եր դեպի հայրենիքն ուղղած իմ սերը. նրա հոգին թևատարում եր իմ շուրջը և մարմնավորում իմ լավագույն մտածությունները... Այժմ նա չկա, Աչոտը մեռավ ինձ համար և նրա հետ միասին կործանվեց այն աշխարհը, վրեց այն յերկինքը, որ ամփոփում եյի չես այդ դյուցազնի մեջ... Ո՛, մի՛ մեղադրեք ինձ, մի՛ նախատեք իմ թշվառությունը և մանավանդ, թե խնայեցեք... Վոչինչ, վոչինչ մի՛ պահանջեք մի թշվառ, լքյալ և նվաստացյալ կնոջից...։

Այս խոսքերի վրա Թագուհին հանկարծ փղձկեցավ և թաշկինակն աչքերին սեղմելով սկսավ արտասվել։

Իշխանը նայում եր նրան լուռ և տխուր. զղում եր խեղճ կնոջ վշտի մեծությունը, նրա ներքին, հոգեկան տանջանքները և սակայն չեր կարողանում նրան մխիթարել։

Ցերկար լուռ սպասելուց յետո նա վերջապես հիշեց, որ Վահրամ սեպուհն սպասում է իրան և որ ինքն ու նա խորհուրդ ունեին Թագուհուն հայտնելու։ Ինդրի կարևորությունը և ժամանակի սղությունը չեյին ներում իրան Թագուհու վշտերով յերկար զրաղվելու. ուստի նա մի քայլ առաջ անցավ և համոզիչ ձայնով սկսավ խոսել.

— Ջո վշտերը, մեծափառ Թագուհի, վաղուց հայտնի եյին ինձ. բայց դրանց մասին քեզ հետ խոսել չեյի համարձակվում, որովհետև ինձ արգելում եյին նախ՝ պատշաճից որևէքը և յերկրորդ՝ այն միտքը, թե խոսելով վոչ մի շահ չպիտի բերեմ իմ սիրուհուն։ Ցևթե այս մտածությունը մի հանցանք է յեղել,

ապա հրամայիր պատժել ինձ ամենածանր կերպով. իսկ յերբ վռնչ, լսի՛ր քո ծառայի խոնարհ խորհրդին...

— Ի՞նչ ես կամենում ասել, հարցրեց Թագուհին Թաչկինակը արտասվաթոր աչքերից հեռացնելով։

— Վշտերի մասին հիշել ու տխրելն ավելորդ է այլևս, մեծափառ տիկին. ով վոր կարողանում է արիաբար համբերել, նա էլ ընկճում է բախտի կամակորությունը։ Անցյալն անդարձ է, այդ դու դիտես, այժմ ապագայի մասին պիտի հոգանք...

— Ի՞նչ, դու կարծում ես, թե նորեն պիտի կարողանա՞ս արքայիդ յուր ընտանիքի դիրքը ղարձնել, ընդհատեց հանկարծ Թագուհին։

— Քուր ընտանիքի դի՛րքը. այո՛։

— Ի՞նչ ձևով, ի՞նչ յեղանակով. նա ինձ չէ սիրում...։

Իշխանը կանգ առավ և սկսավ տարակուսական հայացքով դիտել Թագուհուն։

— Գուցե դու մի ուրիշ բան դիտես. դուցե նա քեզ խոստովանել է, վոր ղղջում է արդեն. դուցե... ասա՛, իշխան, ասա՛, վոչինչ մի՛ ծածկիր ինձանից։

— Մենք միմյանց չհասկացանք, մեծափառ Թագուհի։

— Ի՞նչպես. արքայի մասին չե՞ք խոսքը։

— Այո՛։

— Ուրե՞մն...

— Քնե ասացի, թե ապագայի մասին պիտի հոգանք. դու ինձ ընդհատեցիր, ապա կամենում եյի հարել, թե այժմ մենք ցավեր ունինք, նրանց հոգը պիտի քաշենք։

— Ասացիր՝ արքային յուր ընտանիքի դիրքը պիտի դարձնես...

— Այո՛, մեծափառ տիկին, այդպես ասացի. բայց չե՞ վոր ասվածը նրա ընտանիքի սահմանն ընդլայնել է շատ. արքայի ընտանիքը համայն աղքն է կազմում։ Նրա դիրքը պիտի դառնա նա։

Թագուհին մի անհանդիստ շարժում արավ և աթոռի մեջ ուղղվելով դժգոհ յեղանակով հարցրեց.

— Մի՞թե Թագավորն այդ ընտանիքի դրկում չի դանվում այժմ։

— Վո՛չ։

— Ինչպե՞ս. չասացի՞ր, թե նա Ամբամի հետապնդությունները փախչելով հասել և կաքավաբնրդ և նստել այնտեղ։

— Այդպես ասացի։

— Ե՛, կաքավաբերդը Սյունիքում չի՞. Սյունիքը Հայաստանի նահանգը չի՞։

— Այդպես է, մեծափառ տիկին. բայց Թաղավորը չի կամենում այլևս վերադառնալ Վոստան. նա քաշվել է կաքավաբերդ՝ այդտեղից չերթիք չելնելու պայմանով։

— Ի՞նչ նորություն է այդ, չեմ հասկանում։

— Թաղավորը հուսահատած է աստուկ. Ամրամի չերեսից վախենա տալը ամոթահար է արել նրան. «Այսուհետև, ասում է, չես վոչ սուր կհանանի, վոչ դահուկը կբարձրանաս. իմ իշխանները ամոթապարտ կացուցին ինձ աշխարհի առաջ, թո՛ղ նրանք ուրեմն պատասխանատու լինին իմ չերկրի ավերմանց»։

— Իշխանները... մի՞թե իշխանները ամոթապարտ կացուցին նրան, դառնությամբ հարցրեց Թաղուհին։

— Հապա ել ո՞վ... Եւթե նրանք միասան լինելին Թաղավորի հետ, Ցլիկ-Ամրամը չեր համարձակվիլ ապստամբել, ամենքը չեյին միանալ նրա հետ...

— Ինչպե՞ս մոռացկոտ ես դու, իշխան, ընդհատեց Թաղուհին. միթե չե՞ս հիշում մոտիկ անցյալը։ Ջե՞ վոր չերկու ամիս առաջ ամենքն արդեն արքայի հետ եյին։ Աբաս տաղրս ու Աշոտ ապարասկաը հաշտված եյին, նախարարները բարեկամ եյին. և այդ ընդհանուր միության չնորհիվ եր, վոր Թաղավորը կրկին Դվինն առավ և հաղթարացիներին այդտեղից հալածեց։ Դուք միևչև անգամ հաղթության տոներ կատարեցիք Դվինում։ Եւ սակայն Ամրամը հենց այս հաղորդության ժամանակ ապստամբեց... Ի՞նչ եր պատճառը։

Մարդպետունին լուռ նայում եր դեմքին։

— Դու չե՞ս կամենում պատասխանել. չես կամե՞մ—պատճառն այն եր, վոր իմ և քո Թաղավորը հեռացել եր արդեն առաքինության ճանապարհից, վոր նա անխղճաբար կործանել եր յուր և ընկերոջ ընտանիքը, և ատոված պատժից նրան հենց այն ժամանակ, յերբ նա կարծում եր, թե ինքն արդեն ամենազոր է և թշնամիներից ապահովված, թե նա կարող է դործել ամեն չարիք և մնալ անպատիժ։

Հնարկնիկ այն միջոցին, յերբ բախտը հաջողեց նրան մայրաքաղաքն այլազգիներից թափելու, նա, միտքանակ ատոծուն գահության պատարագ մատուցանելու, միտքանակ դնդի Եվրազդավորա, յուր ընտանիքի դիրքը վերադառնալու և այս ջչվառ,

խոցոտյալ սիրտը մի վոքր մխիթարելու, նա դարձյալ դիմում եր դնալի Ուտիքը, վորպեսզի Դվնո մեջ ունեցած հաղողությանց խրախճանքին մասնակից անե Ցլիկ-Ամրամի կնոջը, Սևորդյաց Ասպրամին... Ցեվ ահա՛ հենց այդտեղ աստուածո ձեռը ծանրացավ նրա վրա. դեռ Ուտիքին չհասած՝ լսեց, վոր Ամրամն ապըստամբել և իրանից... Այդ դույժը նրան չվախեցրեց. նրա հպարտ հոգին աստուածո առաջ չխոնարհեց. նա դիմեց յեղբայիներին և զենքի ուժով կամեցավ վանել այն արդար ձեռքը, վոր պատիժ եր չափում իրան... բայց սխալվեցավ. նա չեր կարող կռվել աստուածո հետ, Ցեվ այդ եր պատճառը, վոր վերջի-վերջո ընկճվեց և ամոթահար փախավ յուր խոր ղորքերի ձեռքից: Այժմ, ասում ես, կաքավաքար նստած՝ մեղադրական և կարդում յուր իշխանների դեմ: Բայց խղուր. նա իրավունք չունի մեղադրել ուրիշներին. նա ինքն է թե՛ յուր և թե՛ մեր դժբախտության պատճառը... Ցեվ անդուշտ ինքն էլ խոստովանում և այդ և, յերևի, դուշակում, վոր աստված այլևս չպիտի հաղողի յուր վոչ մի ձեռնարկությունը. այդ պատճառով ինքն իրան դատապարտել և անդործության...*)

— Այդ բոլորը ճիշտ և, մեծափառ տիկին. բայց ի՞նչ աննենք այժմ, ձեռքերնիս ծալած նստե՞նք: Ջո՞ վոր յերկիրը տաղնապի մեջ և:

— Արնք, ինչ վոր կարող եք:

— Կանննք. բայց դուս մեզ պիտի ոգնես:

— Ցե՞ս:

— Այո՛, մեծափառ թագուհի:

— Ի՞նչ կարող եմ անել: Ջեղ ասացի, թե մի թշվառ կին եմ յես, վոչինչ մի պահանջնք ինձանից:

— Իսկ յես միայնակ կարո՞ղ եմ գործել: Թագավորն անչարժ նստած և կաքավաքարում. Աշոտ ոսպրապետն ամրացել և բազմանում. Աբաս արքայեղբայրը քաշվել և Ցերազդաձորս. Մոկաց տերն ու Անձևացյաց նահապետը պաշտպանում են միայն

*) Ցեվ հայոց որն հետո Ի անդր (յետ վախճանումն յեղեսաց Ցիկին-Ամրամա) վոչ հաղողեցան հեռանալ արշավանաց Աշոտ վորպես յերկին և յերանդն: Թվի ինձ յեթե զաղջախոհություն զայն, զոր նախն եր ստացյալ, հանմաճուր բղջախոհությունն փախարկյալ և չքաղցրություն պաշտամանն աստուածո հանձնե ի բաց վարատյալ և ըստ սրինակի փարիսեցվույն դանդրատավան կամս կամեցուցյալ յուր, վոտն տխորիկ Քերևս դատապարտյալ անվանեք՝ վոչ ծամանյալ ի կատարս վիրուքյան յուրո:

Պատմ. Հովհ. Կաթ., յեր. 175:

իրանց լեռները. Գաղիկ Արծրունին վաստուրականից դուրս հայություն չի ճանաչում. կաթուղիկոսը վոխանակ մկլնորդ լինելու և իշխաններըը համախմբելու, յեկել, ապատանել է Գառնին. դու էլ ահա՛ հրաժարվում ես դործակցությունից. խնդ այս ընդհանուր անչարժության ժամանակ Ներսը յեկել, դրավել է Դվինը և յուր ասպատակները սկսել ամեն կողմ... Ել ի՞նչ ունինք մտածելու. կործաննենք ուրեմն արքայական դահը և գնանք խնարհենք արաբական դրոշակի առաջ...:

Մարզպետունին յուր խոսքերն արտասանեց այնպիսի մի բացակաևնչությամբ, վոր Թաղուհին ցնցվեցավ:

— Ի՞նչ է իմ անելիքն, իշխան, հարցրեց նա ճնշված ձայնով:

— Գործելու որինակ տալ նրանց, վորոնք նստած են անդործ:

— Իմ սիրտն այնքան հուզված է մխքս այնպես խռոված է, վոր վոչինչ դուշակել չեմ կարող: Սա՛ պարզ՝ ի՞նչ է իմ անելիքը:

— Ես վերադարձել եմ այստեղ Գարդմանա բերդակալ Վահրամ սպարուհի հետ: Մենք հավատացրիմ մնացող իշխանների մեջ դա ամենից անճնվերն է. աչքի առաջ ունենալով մեր արդի ճգնաժամը, մենք վորոշեցինք սպարուհի հետ միասին դիմել ամբողջ իշխաններին և ամեն մեկից մի կամ յերկու դունդ զորք առնելով՝ բանակ կազմել և դաշան իջնել: Ինչպես դիտես, բերդերի մեջ յեղողները ապահով են թշնամու հարձակումից, բայց անամրոց քաղաքները, դյուղերն ու ավանները մնացել են անպաշտպան. յերկրի ժողովուրդը դոնվում է ուղղակի մերկ սրի առաջ. պետք է չտալ ոչնության հասնելու նրան:

— Ես չեմ խանդարում ձեզ. դնացեք, ասուված Թաղ որհնե ձեր ճանապարհը:

— Աստված կորհնե. նա մեզ կաջակցե. բայց ամենից առաջ Թաղուհին պետք դրկվի յուր մի քանի վաշտերից:

— Ի՞նչ, դու կամենում ես Գառնին յուր պահակներից դրկե՞լ:

— Գանի վոր մեր բանակի նպատակն և թշնամու ուշադրությունը յուր վրա դարձնել, Գառնին կամ մյուս բերդերը պաշտպանության մեծ կարիք չեն ունենալ:

— Թշնամու զորությունը մեծ է. նա կարող է միաժամանակ Քեզ ձեզ հետ կռվել և Քեզ բերդերը պաշարել:

— Նա այդ չի կարող անել. մենք Քուրդ չենք առ Նրան, պատասխանեց իշխանը վստահաբար:

Թաղուհին լուռ և սկսավ մտածել՝ «Արդյոք իշխանի խնդիրը Քեզ վոչ»:

Մի քանի վայրկեանից յետ նա հարցրեց.

— Ուրիշ ումի՞ց հույս ունես ղորք առնելու։

— Սպարապետից, Աբասից, Սյունյաց տերերից, Անձևացի-ներից...

— Իսկ յեթե նրանք մերժե՞ն։

— Ցեթե Թագուհին առաջին որինակը չտա, վոչ վոք չի համարձակիլ։

— Ցես չեմ մերժում. դատարկիր Թե՛կուզ բոլոր Գառնին, վճռաբար պատասխանեց Թագուհին։

Իշխանը խոր գլուխ տալով չնորհակալություն հայտնեց նրան։

Ապա լրավունք խնդրելով՝ հրավիրեց դահլիճ Վահրամ սեպուհին, վորին Թագուհին ընդունեց սիրով ու քաղցրությամբ։ Նրանք յերկար միասին սկսան խորհուրդ անել ապագա ձեռնարկության համար և գործելու յեղանակները վորոշել։

Տակավին խորհրդակցության մեջ եյին նրանք, յերբ սենեկապան սպասուհին ներս մտնելով՝ հայտնեց Թագուհուն, թե կաթուղիկոսը կամենում է ներկայանալ իրան։

— Թո՛ղ չնորհ բերե, ասաց Թագուհին և ապա իշխաններին դառնալով ավելացրեց.— անշուշտ վեհափառն էլ կուզե մեղ մի խորհուրդ։

— Անշուշտ, հարեց Վահրամ սեպուհը։

Բայց Մարզպետունին չպատասխանեց։ Նա նկատել եր, վոր սպասուհին ներս մտավ դահլիճ այլայլված դեմքով և այդպես էլ դուրս գնաց։ Ցերևի կաթուղիկոսը գալիս եր հայտնելու մի տխուր նորություն, վոր հայտնի յեր արդեն ղրսում յեղողնեերին։ Նա սկսավ անհանգստանալ, բայց այդ անհանգստությունը վոչ թե յուր, այլ Թագուհու համար եր։ Նա վախենում եր, թե մի՛ գուցե վեհափառը հայտնե տիկնոջը այնպիսի մի նորություն, վոր խիստ ցավ պիտի ծածկվեր նրանից։

— Հրամայի՛ր մեզ, տիրուհի, ընդառաջել հայրապետին, ասաց Գևորգ իշխանը տեղից վեր կենալով։ Նա կամենում եր չտապել և մի վայրկյան առաջ տեսնվել կաթուղիկոսի հետ։

— Ընդառաջեցեք, ասաց Թագուհին։

Բայց հազիվ թե իշխանն ու սեպուհը հասան դահլճի դռանը և ահա՝ ներս մտան վեհափառի զավազանակիրը, ավազ սարկավագները, ապա ինքը կաթուղիկոսը, դռան յեպիսկոպոս Սահակը և մի քանի ուրիշ վարդապետներ։ Դրանց հետ միասին

գալիս եր և մի անապատական՝ գլխքն ու ձեռները ոչխարնոտ, վիրակապներով փաթաթած և վնդարն ու քուրձը պատառոտած։ Նրա ոխսուր, դունաթախի գլխքը ծանր ծալվորություն եր անում ուսնողի վրա։

— Այս ի՞նչ է, բացականչեց Մարդպետունին և առաջ անցավ, կարծես կամենալով անապատականի մուտքն արգելել։

— Թող դրան, իշխան, թող վո՛ր թագուհին մեր թշվառությունը տեսնե, արդահատական ձայնով խոսեց կաթուղիկոսը։

— Այդ ի՞նչ է, առաջ գալով բացականչեց թագուհին։

— Գաղան հաղթացիները Այրիվանքը քանդել, ավերել և միաբաններին զարհուրելի տանջանքներով նահատակել են։ Միայն սրան՝ այս ապաքինո վարդապետին թողել են կենդանի, վոր թե՛ յուր վերքերի ցավից տանջվի և թե՛ լուր բերելով մեր սիրտը կսիծեցնե, խղճալի ձայնով հայտնեց կաթուղիկոսը և աչքը համբուրելու տալով թագուհուն և իշխաններին, բազմեց նախատաճ աթոռի վրա։

— Ի՞նչպես պատահեց այդ. ինչո՞ւ վռոտիկանը բերդերը թողած Այրիվանքի վրա յե հարձակվում, չտապալ հարցրեց Մարդպետունին։

Կաթուղիկոսը չպատասխանեց. նա նայում եր թագուհուն, կարծես հուսալով, թե վերջինս ավելի անմեղ հարց կտնե իրան։

— Ի՞նչպես պատահեց այդ բոլորը, պատմի՛ր, դիմեց թագուհին վիրավոր անապատականին։

— Պամի՛ր, Մովսես վարդապետ, պատմի՛ր մեծախոս թագուհուն դաղանների բոլոր արարքը, հրամայեց կաթուղիկոսը, անհանդիստ չունչ քաշելով։

Մովսես վարդապետն առաջ անցավ և չնայելով յուր վիրավոր ու անկար վիճակին, սկսավ իրան հատուկ աշխուժով պատմել հաղթացիների հարձակման և յուր ընկերների նահատակության բոլոր պատմությունը, չմոռանալով մինչև անգամ սրի նահատակների մահվան ժամում արտասանած վերջին խոսքերը, վորոնք հուզեցին բոլոր լսողներին։

Երբ վարդապետը յուր պատմությունն ավարտեց, Գևորգ իշխանը մոտենալով կաթուղիկոսին հայտնեց՝ թե առանձին խոսելիք ունի, ուստի և խնդրեց նրան հեռացնել դահլճից յուր հետևորդներին, բացի դռնան յեպիսկոպոս Սահակ սրբազանից և Մովսես վարդապետից։

Վեհափառը կատարեց իշխանի խնդիրը։

Ծերը ավելորդ անձինքը հեռացան, Գևորդ իշխանը վերկացավ տեղից և թուլտվություն խնդրելով Թադուհուց ու կաթուղիկոսից՝ հետևյալը խոսեց.

— Այս հոգևոր հայրերը կատարել են այնպիսի մի դործ, վոր մեղանից վոչ վոք իրավունք չուներ նրանցից պահանջելու։ Նրանք խմբովին մատնվել են Քշնամու սրին, իրանց յեղբարց կյանքն ու Այրիվանից սրբությունները պահպանելու համար։ Այս անդեն հոգևորականները ցույց են տվել աշխարհին բոլորանվեր անձնազոհության մի որինակ, ապացուցելով, թե քաջ հովիվներ են և դիտեն հղնել զանձինս ի վերա վոչխարաց...»։ Այսպիսով նրանք բարձրացրել են հայ յեկեղեցվո փառքն ու պատիվը, և հետևելով Ղևոնդյանց չավղին, դարձել են մեղ համար պարծանաց աստեղ... Այս բոլորը լավ. բայց մենք ի՞նչ ենք անում. մե՛նք, ժողովրդյան առաջնորդներս. մենք, վորոնց ձեռքը աստված տուր և տվել և կառավարելու ու պաշտպաննելու իրավունք։

Իշխանը նայեց կաթուղիկոսին և ապա Թադուհուն. նրանք յերկուսն էլ հառած էլին աչքերը յուր վրա։

— Մենք վոչինչ չենք անում, շարունակեց նա յեռանդով. կամ անում ենք այն, ինչ վոր ամոթ և նախատինք է բերում հայ անվանը։ Մենք քաչլել, նստել ենք մեր բերդերում, չրջապատել ենք մեղ պահակ դնդերով, ապահովել ենք Քշնամու հարձակումից, իսկ ժողովուրդն ու յեկեղեցիները թողել անտեր-ունչ, անպաշտպան, կամ ավելի ճիշտն ասած, մատնել նրանց Քշնամու սրին...։ Ա՞յս է արդյոք առաջնորդի իրավունքը։

Իշխանն այս ասելով սևեռեց աչքերը կաթուղիկոսի վրա։

Վերջինս հասկանալով նրա հայացքի նշանակությունը, շտապով հարցրեց.

— Ո՞ւր է մեր Թադավորը. նա՛ պետք է առաջնորդե ղորքին։

— Ուր է Թադավո՞րը, վրդովված բացականչեց Մարզպետունին. կասեմ, թե ո՛ւր է նա։ Թադավորը յուր իշխաններից թողված, ապստամբներից հալածված՝ նստած է կաքավաքար։ Նա այն տեղից դուրս չի գալ, նա էլ սուր չի մերկացնիլ, էլ դրոշ չի բարձրացնիլ. հուսահատությունն ընկճել, խոնարհել է նրան... Բայց ո՞ւր է կաթուղիկոսը, հայոց հայրապետը, մեր հոգևոր ղինվորության վեհափառ դլուխը...

— Իշխան... տեսնում ես, վոր նա քո առջևդ է... ծանրությամբ, բայց ընկճված ձայնով նկատեց կաթուղիկոսը։

— Իմ առջև, այսօր՝ղ, Գառնիում. այնպես չէ՞... Բայց ինչո՞ւ համար...:

— Ո՞ւր կկամենայիր, որ նա լիներ:

— Դիվինում, մեր կաթուղիկոսարանում:

— Բայց վոստիկանը ծարավ է իմ արյանը. նա կամենում է ինձ սպանել:

— Նա հետևում է քեզ միայն այն պատճառով, որ դու խուսա՜ս նրա ձեռքից: Նա քեզ չէր վնասիլ, եթե դու վստա՜հ նստած լինեիր հայրապետական գահի վրա, և, մինչև անգամ, մի՞նչտրդ հանդիսանայիր նրա և հալածվող ժողովրդի մեջ: Քո լիակատար փախուստով դու զրկում ես նրա զայրույթը և ստիպում, որ նա բարկության թուրը թափե անպաշտպան անապատականների վրա:

— Ցնո չեմ կամենում հեռանալ Այրիվանքից, բայց աստված ինձ հրամայեց:

— Աստվա՜ծ, զարմացած հարցրեց իշխանը:

— Այո՛, աստված, այդ ամենքը դիտեն. այդ գիտե և Թադուհին, յես պատմեցի նրան:

— Այո՛, իշխան, աստված հրամայեց, խոսեց դռան յեղիսկոպոսը և սկսավ պատմել կաթուղիկոսի Այրիվանքից հեռանալու և արևի խավարման բոլոր պատմությունը:

Ցները նա վերջացրեց, իշխանն ասաց.

— Հավատում եմ այդ հրաշքին և խոնարհում աստուածային զորության առաջ: Բայց դուք ել պիտի հավատաք, որ յեթե աստված այսպիսի որում խնայում և առաքինորդի կյանքը, խնայում և միայն նրա համար, որ այդ կյանքը նա գործ դնե ժողովրդի ոգուին: Իսրայելացի մանկանց ընդհանուր կոտորածի ժամանակ՝ նա Եգիպտոս ալիքներից հրաշքով աղատեց մանուկ Մովսեսին և պատսպարեց նրան փարավոնի պալատում միայն նրա համար, որ վերջը նա յեգիպտացոց գերությունից յուր ժողովուրդը փրկե: Այսպե՞ս և թե ոչ:

— Այդպես է, իշխան, պատասխանեց կաթուղիկոսը. բայց աստված Մովսեսին հրաշքներ պարգևեց. և նա նրանցով յուր ժողովուրդը փրկեց. իսկ յես չունիմ այդ շնորհը. չեմ կարող հրաշք գործել:

— կարող ես, վեհափառ տեր. Մովսեսը դավաղանը ոճ եր չինում, դու ել նույնը կանես: Այնտեղ, ուր ուժը չի հաղթահարում, խոհեմությունը, լեզուն, անուշ խրատները կարող են

հաղթել։ Թո՛ղ այսօրվանից Գառնին և դարձիր Ճերտղեվորս, իմի՛ր Բագարան, անցի՛ր Աղձնյաց ու Մոկաց յերկրները, մտի՛ր Վասպուրական. խոսիր Աբասի, Աշոտի, Ագծրունի յեղբարց և այլ իշխանների հետ, խրատիր ու հորդորիր նրանց. համոզիր, վոր առնեն իրանց զորքերը և դան հավաքվին արքայի դրոշակի տակ, կռվեն միասնական ուժով և վանեն Թշնամուն յերկրի յերեսից, փրկեն ժողովուրդը վերահաս վտանգից. այդպիսով նրանք ույժ կտան արքային և ույժ կառնեն իրանք. կհալածեն մեջտեղից բաժանման վոգին և ընդհանուր հայրենիքը պաշտպանելով՝ կպաշտպանեն նաև իրանց յերկրները, հայրենի կալվածները, տունն ու ընտանիքը...։

— Բանավոր և իշխանի խորհուրդները, վեհափառ տեր, ասաց Սահակ սրբազանը։

— Ճեվ անհրաժեշտ՝ հետևել անմիջապես այդ խորհրդին, հարեց Թադուհին։

Բայց կաթուղիկոսը լուռ եր, աչքերը դահլիճի դռան հառած։

— Վոչ վոք ինձ չի լսիլ, վոչ մի իշխան զորք չի անջատիլ յուր բերդերից, խոսեց վերջապես կաթուղիկոսը, իշխանին դառնալով։

— Թող վեհափառը կատարե յուր պարտքը և յերբ նրան չեն լսիլ, այն ժամանակ «արյուն ձեր ի գլուխ ձեր» ասելով հեռանա, նկատեց Մարզպետունին։

— Վոստիկանի հրոսակները բռնած են Շիրակի ճանապարհները, վո՞րտեղից կարող եմ յես անցնել և դնալ Ճերտղեվորս, Բագարան կամ իմնել Աղձնյաց յերկիրը, պատճառաբանեց կաթուղիկոսը։

Վահրամ սեպուհը, վոր մինչև այն լուռ նստած եր, վեր թռավ տեղից և աչխուժով բացականչեց.

— Ճես կընկերակցեմ քեզ, վեհափառ տեր, իմ վանանդացի քաջերով. վո՛չ մի հազարացի չի համարձակվիլ ճեռք բարձրացնել քեզ վրա։

Կաթուղիկոսը նայեց սեպուհին և չկարողանալով ուրիշ առարկություն անել, ասաց.

— Թող մեծամիտ Թագուհու և իշխանների կամքը կատարվի. միայն թե խորհելու ժամանակ տրվի ինձ։ Մանր մի զորք և այդ մի՞նչորդությունը, անկասելի յե անխորհուրդ կերպով ճեռնարկել նրան։

— Ծորհի՛ր վորքան հաճելի յե քեզ, վեհափառ տեր, միայն

թե կատարի՛ր մեր առաջարկությունը, ասաց Մարզպետունին։ Ցերկրի վերկությունը կախված է այժմ իշխանների միությունից և այդ միությունը պետք է ստեղծել՝ զոհաբերության ինչ գնով ուզում է լինի։

— Կաշխատեմ, ասաց կաթուղիկոսը և խոստանալով հայտնել շուտով յուր վորոշումը, բարձրացավ աթոռից, վողջունեց Թադուհուն ու իշխաններին և հեռացավ Սահակ սրբազանի ու Մուշեղ վարդապետի հետ։ Վահրամ սեպուհը հետևեց նրան մինչև վեհարանը։

— Ինձալ հույս չունիմ վեհափառի վրա, ասաց Գևորգ եպիսկոպոսը, մի քանի մնալով Թադուհու հետ։

— Այս անգամ, ընդհակառակը, պետք է հուսալ, պատասխանեց Թադուհին. նա արդեն զղում է, վոր Դվինից հեռանալով՝ զժդոհություն է պատճառել ամենից, այժմ կաշխատե, վոր մի քանով պլոտանի լինի մեզ։

Բայց կաթուղիկոսը, վոր վիրավոր վարդապետին բերել եր Թադուհու և իշխանների մոտ՝ իբրև վկայող ապացուցանելու համար, թե ի՛նչ մեծ վտանգից և փախել ու ազատվել ինքը, չատ տխրեց, յերբ տեսավ, թե հակառակ ակնկալության առավ գործը։ Նա կամենում եր Այրիվանքի սրածությունը առիթ առնելով յուր վախուստն արդարացնել, այլև յուր գտանիում մնալն ապահովել, այժմ ընդհակառակը, նոր պաշտոն եյին հանձնում իրան և ուղարկում, համարյա, Թշնամու հանդեպ։ Զի՞ վոր յուր ուղևորության միջոցին հաղարացիք կպատահեյին նրան մի վոթևին տեղ և կձերբակալեյին։ Ի՞նչ կարող եր անել այդ բանի դեմ Վահրամ սեպուհը յուր մի խումբ վանանդացիներով։ Հաբկավ, վոչինչ։ Կաթուղիկոսը ձերբակալելուց յետո՝ կաթուղիկոսարանն ել կդրավվեր։ Այնուհետև ամեն ինչ կկորչեր անդարձ։

Այդպես եր մտածում կաթուղիկոսը, և այդ մտքերը խռովում եյին նրան։ Շուտով նա խորհրդի հրավիրեց յուր մերձավորներին և հայտնեց, թե մտադիր է մերժել Թադուհու և իշխանների առաջարկությունը, վորովհետև դրա կատարելու մեջ նա վտանգ է տեսնում աթոռի նկատմամբ։

Վոչ վոք չընդդիմացավ վեհափառի կամքին, վորովհետև սթևվի խավարման հայտնի հրաշքը տեսնելուց յետո, նրա ցանկությունները յերկինքից ներշնչված եյին համարում։ Բայց վորովհետև հիշյալ առաջարկությունը մերժելով՝ նա այլևս չեր կարող մնալ Գառնիում, ուստի վորոշվեցավ, վոր վեհափառը

հեռանա Սևան, ուր անապատականներն մեծ միաբանություն կար։ Այդտեղ նա կլիներ յուր հոգևոր զինվորների հետ. նրան այլևս չեյին բամբասիլ։ Բացի այդ, Սևանը ուներ անառիկ բերդ և ջրապարիսպ լինելու պատճառով՝ անմատչելի յեր թշնամիներին։

Վո՛րքան մեծ յեղավ Թադուհու զարմանքը, յերբ նա իմացավ, թե կաթուղիկոսը հեռանում է Սևան։ Վահրամ սեպուհը զայրույթից մինչև անգամ վողջերթ մաղթելու չդնաց։ Իսկ Մարզպետունի իշխանը, վոր Մուշեղ բերդակալի հետ միասին ճանապարհ դրավ նրան մինչև Ազատի կամուրջը, շատացավ մի այն մի դիտողությամբ.

— Դու վոր այդքան հոգում ես քո անձի համար, ասաց նա կաթուղիկոսին, կխրկես միայն քեզ։ Իսկ կաթուղիկոսական աթոռը ժառանգություն կմնա նրանց, վորոնք կարող կլինեն նրան պաշտպանել։

— Ցնս հեռանում եմ միայն այդ աթոռը պաշտպանելու համար, ասաց կաթուղիկոսը։

— Ջե՛, վեհափառ տեր, այսուհետև քո պաշտպանները կլինեն Հովհաննես կաթուղիկոսի՝ բայց յերբեք Լուսավորչի աթոռը։ Դու կորցրիր նրան այն որից, վոր հեռացար Դվինից։

Կաթուղիկոսն, իհարկե, չհավատաց իշխանի դուշակության և յուր ճանապարհը շարունակեց։

Սևանում ընդունեցին նրան մեծ ուրախությամբ։

Բայց Գևորգ իշխանը վերադառնալով Գառնի, նորեն խորհուրդ կազմեց Թադուհու մոտ։ Ցերկրի ճգնաժամն անցնելու միակ յեղքը բաժանված իշխանները միացնելու մեջ եր դնում. ուստի ինչ կերպ ել վոր լիներ՝ նա պետք է գլուխ բերեր այդ գործը։ Կաթուղիկոսի վարմունքը վո՛չ միայն չհուսահատեցրեց, այլ, ընդհակառակը, ավելի ևս վոգևորեց նրան յուր մտադրությունն առաջ տանելու։

— «Այժմ մենք պետք է մեղ վրա դնենք մեր հույսը», ասաց նա յուր խորհրդակիցներին և վորոշեց, վոր Թադուհին առաջվա նման մնա Գառնիում, վորպեսզի արքունական տունը դռնե համարվի Վոստանում։ Այդ անհրաժեշտ եր միության գործի համար։ Վորովհետև յեթե իշխաններն իմանային, թե Վոստանը, վոր յերկրի սիրտն եր, ամբողջապես դռնովում է հազարացոց ձեռքում, այն ժամանակ, հազիվ թե համաձայնվեյին միանալ նրանց դեմ։

Ինչ վերաբերում է իրան ու Վահրամ սեպուհին, վորոշեցին՝ վոր ինքը դիմեր Աբաս արքայեղբորը և Աշոտ սպարապետին, իսկ սեպուհը՝ Աղձնյաց ու Մոկաց իշխաններին: Դրանց համաձայնությունն առնելուց յետո նրանք պիտի դիմեյին նաև Վասպուրականի տերերին:

Կաթուղիկոսի հետանալուց մի որ հետո՝ դուրս յեկան Գառնիից Մարզպետունի իշխանը և Վահրամ սեպուհը, յուրաքանչյուրը թիկնապահներն մի փոքրիկ խմբով և դիմեցին դեպի իրանց առաքելության վայրերը:

Գ

ՄԻ ԴԱԼԱՐ ԲՈՂՔՈՋ ՀՈՐՑԱՅԱ ԹԱՏՈՒ ՄՈՏ

Մարզպետունի իշխանի հեռանալուց հետո՝ Թագուհու վրա մի տարօրինակ անտարբերություն յեկավ։ Նա, վոր մինչև այն աչալրջությամբ հսկում եր ամրոցի պահպանության, անձամբ այցելում եր պահականոցները, ներկա յեր լինում զորականի վարժությանց կամ թե դիտում եր պաշտպանության պատրաստությունները, հանկարծ հեռացավ, քաշվեցավ այդ բոլորից և ել ուշադրություն չեր դարձնում վոչ մի բանի վրա։

Բնակավից իշխանուհիները զարմանալով հարցնում եյին իրար, թե «ի՞նչ և պատահել արդյոք Թագուհուն»։

Ցեվ նրանք իրավունք ունեյին զարմանալու. վորովհետև այդ կինը, վոր այնքան շատ հոգում եր թե՛ յուր և թե՛ ամրոցականների ապահովության համար դեռ այն ժամանակ, յերբ վո՛չ մի տեղից վտանգ չեր սպառնում յերկրին, կամ՝ յերբ Թագավորը դեռ չեր հանդիպել ճախորդության, ինչո՞ւ ընդհակառակն անուշադիր եր Թողել ամրոցը այն միջոցին, յերբ վոտիկանն արդեն նստած եր Դվինում և ամեն վայրկյան կարող եր հարձակվիլ յուր վրա։

Գատճառը պարզ եր։ Հուսահատությունն ընկճել եր նրա կանացի հոգին։

Մինչև այն, վորքան ել ծանր վշտերի մեջ, նա դարձյալ հոգում եր յուր և շրջապատողների վիճակի մասին, վորովհետև նա սպասում եր արքայի վերադարձին, վորովհետև հույս ուներ, թե դուցե, Ամրամի ապստամբությունը մի նոր և յուր համար շահավոր փոփոխություն առաջ բերե Թագավորի մեջ...։ Բայց Մարզպետունու բերած լուրերը նրա հույսերը փշրեցին։ Մանավանդ Թագավորի կաքավաքար քաշվելը և յերկիրը բախտի

կամքին թողնելը նրան ավելի վհատեցրեց: Ցեթե Աչոա–Ցերկաթը հուսահատվում ու հեռանում էր, ո՞վ էր ինքը, վոր համարձակվեր ավելի յերկար տուժելու: Նա նմանում էր այժմ մի խեղդվող մարդու, վոր ալիքների հետ յերկար կռվելուց ու վոդոբելուց հոգնած, հանձնում և իրան վերջապես հոսանքի կամքին...:

Ճշմարիտ և, Մարդակուռնու Գառնիում յեղած ժամանակ նա համակերպվեց նրա խորհրդներին, ցանկություն հայտնեց դոբծակցել նրան, բայց այդ ամենը նա արավ առանց ինքն իրան հաշիվ տալու, առանց մի ներքին բնական յեռանդից առաջ մղվելու: Կյանքը նրա աչքում կորցրել էր արդեն յուր նշանակությունը. նա նրան այլևս չէր հրապուրում. ել ինչո՞ւ ուրեմն նոր հոգսերի յենթարկվեր, նոր ցավերով բեռնավորվեր: Թո՛ղ կատարվի, ինչ վոր կատարվելու յե, ինչ վոր նախասահմանված է... Մարդկային ճեռը չի կարող ջնջել այն ճակատագիրը, վոր դծագրել և հավիտենականի ճեռքը...:

Այսպես էր մտածում Թաղուհին և մի տեսակ թմրություն անձնատուր յեղած՝ վհկվում որերով դղյակի սենյակներում և կամ միայնակ պրոնում Տրդատա հովանոցում:

Մյուս կողմից սակայն Մուշեղ բերդակալն ու Գոռ իշխանիկը ծանր հոգսերի մեջ էին. պատրաստություններ էին տեսնում տպավոր հարձակմանց դիմադրելու համար. ավելացնում էին ամրոցի պահապանության պարապանները և ամրողջ որերով աշխատեցնում էին զորքը:

Այդ ամենը տեսնում էր Թաղուհին, նայում էր այդ աշխատության վրա սառն, անտարբեր աչքով և յերբեմն հարցնում ինքն իրան, Թե «ինչո՞ւ համար և այս ամենը. ինչո՞ւ մարդիկ կամենում են յերկար տպրել. քանի՞ որ կարող են նրանք բախտավոր լինել իրանց կյանքում... և մինե՞ վերջիվերջո չպիտի մեռնին...»:

Մի լուսընկա յերեկո, յերբ Թաղուհին Տրդատա հովանոցում յուր սովորական բազմոցի վրա նստած՝ հենց այսպիսի մտքերով էր զբաղված, հանկարծ հովանոցի աստիճանների մոտից անցնողի մի շշուկ յուր ուշադրությունը գրավեց: Նա բարձրացավ բազմոցից և նայեց դեպի վար:

Աչքաեղից մի նեղ կածան, վոր փորված էր ժայռերի մեջ, իջնում էր դեպի մի փոքրիկ, տափարակ գահավանդ, վոր տարվա մեծ մասը ծածկված էր լինում կանաչով: Նրա շուրջը գտնվում էին հինավուրց ուռենիներ, վորոնք արևի ժամանակ

պեղեցիկ հովանի էլին անում նրա վրա. իսկ գահավանդի կողքից լղկում էր մի վճիտ աղբյուր, որ հեզասահ վտռտում էր ուռենիները և ապա քաղցրակարկաչ դեպի ժայռերը գահավիժելով՝ թափվում էր խորաձորում շառաչող Աղատի մեջ: Այդ գահավանդակը յուր պեղեցիկ դիրքի պատճառով վաղուց արժանացել էր հոգածու ձեռքերի խնամքին: Ո՛վ գիտե, գուցե հենց հովանոցի անդրանիկ սիրուհու՝ հայոց Թագածին որիորդ Նորվիզուխտի հրամանով հարդարված էր նա իրրև զբոսանաց ճեմարան: Գուցե նա ինքն այդտեղ անցուցել էր մենակյաց մտածութեանց ժամերը, կուսական նվիրման հափշտակութեան վայրկյանները, կամ, թերևս, չարաբաստիկ սիրո տանջանաց որեր... սիրո, որ դատապարտեց նրան հավերժական կուսութեան...:

Ինքը, Սահականուշ Թագուհին, սիրում էր հաճախ նստել այդտեղ և ղրուշց անել իշխանուհիների հետ կամ վայելել յերեմն մի բացօթյա նախաճաշ:

Անցնող անձը, հովանոցի ստորոտը քերելով, խոտորեց դեպի այդ գահավանդակը տանող ուղին: Թագուհին զարմացավ՝ տեսնելով, որ դա մի նորատի աղջիկ է, անշուշտ դղյակի բնակչուհիներից մինը և այն՝ իշխանատուն որիորդ, որովհետև ծածկած էր մետաքսյա շղարշ և գլխին ուներ ասեղնագործ հյուսակեն, որի ծակոտիներից յերևում էր լուսնի առաջ փայլող նրա վսեմ ծամակալը: Բայց ո՞վ էր նա իսկապես և ինչո՞ւ միայնակ դեպի ժայռերի գահավանդն էր առաջանում, Թագուհին չիմացավ, որովհետև նա անցավ ինչպես այծյամ և ինքը նրա դեմքը չնշմարեց:

— «Մի՛ գուցե գաղտնի վշտերից տանջվող Քրվաուին մեկն է, որ գնում է իրան դեպի խորաձորը գահավիժելու. անշուշտ յե՛ս չեմ աշխարհում միակ Քրվաուը»... մտածեց ինքն իրան Թագուհին և առաջացավ դեպի հովանոցի աստիճանները: Նա կամեցավ նախ կանչել սպասուհիներին, որոնք հովանոցից հեռու սպասում էին յուր հրամանին, և ուղարկել նրանց հետացողի յետևից. բայց մեկե մտածելով, թե գուցե այդպիսով չտապեցնե վտանգը, որորշեց անձամբ հետևել անցնողին: Նա չտապ-չտապ լինալ տանդուխքներից և կամացուկ քայլերով ուղղվեցավ դեպի ժայռերի գահավանդակը:

Զնայելով որ աշնանամերջ էր, սակայն որը մեղմ ու տաքուկ լինելով, ախորժալի յեր կացուցել յերեկոն: Երկինքը պարզ էր և աստեղազարդ. լուսինը պայծառ շողերով լուսավո-

բում եր Գեղա լանջերը և Գառնո ձորը, Թուլլ չասլով, վոր անպատճառ ժայռերն ու ամբարտակները Թաղենին սովերի մեջ Ազատի հասանքը։ Գիշերային անասարանը դեղեցիկ եր և հրապուրիչ, բայց Թադուհին չեր հետաքրքրվում նրանով։ Այդ բոլորին իրան դրաղեցնողը խորհրդավոր յերևութասարդուհին եր, վոր սովերի նման անցավ ժայռերի վրայից և ծածկվեց մթության մեջ։

Հաղիվ հասել եր Թադուհին ներքուղու կեսը և ահա՛ մի խոսակցության չշուխ հասավ յուր ականջին։

— «Ուրեմն ժայռերից դահավիժելու չեր գնում անծանոթուհին», մտածեց Թադուհին և քայլերը ծանրացրեց։ Գարզ եր, վոր դաղանի մի ժամադրության պիտի հանդիպանան յերկուքը։ «Բայց հասարյանա՞լ, Թե վերադառնալ», մտածեց նա և կանդ առավ մի վայրկյան։

— «Ովքե՞ր են և ի՞նչ են խոսում», չգիտցավ Թադուհու ականջին հետաքրքրությունը և նա առավ անցավ։ Բայց յուր քայլերը վոխում եր այնպես, վոր խոսակիցները վոչինչ չլսեն և մանավանդ, Թե իրան չնշմարեն։

Ցերբ հասավ հաստարան ուռենուն, վորի խիտ ճյուղերը ծածկում եյին իրան դահավանդակի խոսակիցներից, նստավ նա ժայռի վրա։

Վո՛րքան մեծ յեղավ Թադուհու զարմանքը, յերբ խոսակիցներին մեջ նա ճանաչեց յերևութասարդ Գոռ իշխանին և արիսրդ Շահանդուխտին։

Նրանք սիրում եյին միմյանց. այդ պիտեր Թադուհին, դիտեյին և զդյակի մյուս բնակիչները։ Բայց վոր մինավար ճանապարհում ժամադիր լինեյին կամ Թադուն տեսակցեյին, այդպիսի բան չեր ապատում նրանցից Թադուհին։

Այդ հանդամանքը ա՛յն աստիճան զբաղեց ակնոջ հետաքրքրությունը, վոր նա վորոշեց ականջ նրանց։

— «Ցերևի կարևոր դաղանիք ունեն միմյանց հաղորդելու», մտածեց Թադուհին և լսողությունը լարեց։

Բայց մենք Թողնենք նրան յուր ժայռի վրա և ծանոթանանք արիսրդ Շահանդուխտի հետ։

Ո՞վ եր այդ աղջիկը, վորի անունը մի անդամ միայն հիշեցինք մենք մեր պատմության սկզբում։

Դա արքայի հորաքեռ Թոռը, Սյունյաց մեծ իշխան Վասակի

դուստրն էր, որը հոր մահվանից հետո յուր իշխանուհի մոր հետ միասին ապրում էր արքունիքում։

Մի քանի տարի աւաջ, ամիրապետը Եուսուֆ վոստիկանին կալանաւորելով՝ վերակացու յեր կարգել յուր մասի հայկական գաւառներում Ըսբուք անունով մեկին, որը յուր նախորդներից ավելի թուլլ և խաղաղասեր մարդ էր։

Դրա ժամանակ դեռևս Սյունյաց նահանգի Գողթն գավառը յուր Եերնջակ ամրոցով գտնվում էր մի պարսիկ ամիրայի ձեռքում։ Եուսուֆ վոստիկանը Սմբատ Թագավորին նահատակելուց յետ՝ Եերնջակ ամրոցը դրավելով հանձնել էր այդ ամիրային՝ Գողթան գավառի հետ միասին։

Արդ՝ յերբ Եուսուֆի տեղ Ըսբուքը նշանակվեցավ, Սյունյաց իշխանները հարմար ժամանակ գտան հայրենի կալվածքը ամիրայի ձեռքից ազատելու։ Ուստի բոլոր չորս յեղբայրները՝ Վասակ, Սահակ, Սմբատ և Բարձրն միանալով զորք ժողովեցին և հարձակվեցան ամիրայի վրա։ Պատերազմի ժամանակ սյունեցի զորքերը ջարդեցին հազարացիներին։ Բայց Վասակ իշխանի հետ յեղող սքյութացի ղինվորները, որոնք իրր քե հայերին ոչնչելու եկին յեկած, բայց իսկապես կաշառված եկին ամիրայից, յեռևից զարկելով ապանեցին իշխանին, որը կռվում էր աննահանջ։

Եերեք յեղբայրները թողեցին խակուլն ճակատը և քաջ ու աննման յեղբոր մարմինն առնելով Դեղարքունիք գարձան և մեծ սուգ արին նրա վրա։

Լսեցին այդ դույժը Աչոտ Թագավորը ու Սահականուշ Թագուհին և լացին դառնապես։

Բայց լինքն արքան, որը իշխանի կենդանության ժամանակ անիրավաբար բանտարկել էր նրան Կայան բերդում, ծանր վշտից զատ տանջվեցավ նաև խղճից։ Նա հիշեց Վասակ իշխանի արած բարիքները, յուր և Աչոտ բռնավորի մեջ հաշտություն տեղծելը, արքայական դահին ցուցած ծառայությունները և ի վերջո յուր նրան վերադարձած ազատախոսությունը, և վշտացավ։ Նա վորոշեց քավել մի բանով յուր հանցանքը։ Եվ այդ վորոշման արդյունքն յեղավ այն, որ նա վորդեդրեց նրա դուստրը Շահանդուխտը, որին և յուր մոր՝ Մարիամ իշխանուհու հետ միասին առավ յուր խնամոց ներքո։

Այնուհետև որևորդը ապրում էր արքունիքում իրր արքայազուստր. նրան սիրում և պատվում էին ինչպես մի հարա-

պատ պահակի թե՛ թագավորը և թե՛ թագուհին։ Նրան սիրում էին նույնպես իշխանուհիները։

Բայց այդ բոլոր սիրողների մեջ մինը պաշտում էր նրան։ Այդ Գևորգ Մարզպետունու որդին՝ Գոռ իշխանիկն էր։

Ինչպես սիսկսյալ նրանց սերը, այդ վոչ վոք չդիտեր և նույնիսկ իրանք չդիտեին։ Գոռը առաջին անգամ պատահեց այդ սևաչյա, դանդրահեր, դեղեցկադեմ և աշխույժ աղջկան Ցերազպավորսի արքունիքում, յերբ դեռ նոր էին բերել նրան Սյունիքից և սիրեց նրան. բայց սիրեց ինչպես մի քրոջ և առաջին անգամից էլ քույր անվանեց նրան։ Շահանդուխտը, վոր յեղբայր չուներ, հաճույքով լսեց այդ քաղցր անունը և Մարզպետունյաց միամոր ժառանգ դեղահասակ, դեղեցկադեմ և գեղաչյա Գոռին յեղբայր ընդունեց իրան։ Այնուհետև նրանք քույր և յեղբայր էին և յերկուսը միասին կաղմում էին արքունիքի զարդը։

Բայց վորքան էլ սկզբնական այդ սերը անմեղ եր ու մանկական, այսուամենայնիվ արքունիքում դուշակում էին, վոր մի որ նրանք «քույր» և «յեղբայր» անուններից ավելի գաղտնի ու անուշ անուն սիսկ տան միմյանց։ Այդ դուշակությունը ուրախացնում եր նրանց մայրերին, վորովհետև վոչ Գոհար իշխանուհին կարող եր ավելի լավ հարսնացու ընտրել յուր Գոռի համար և վոչ Սյունյաց տիկինը՝ լավագույն փեսա յուր դստեր համար։

Բայց և այնպես մայրերից վոչ մինը չեր ցանկանում, վոր այդ խաղը վատվեր նրանց սրտում պատշաճավոր տարիքին հասնելուց առաջ։ Գևորգ իշխանը, մանավանդ, շատ խելոք եր այդ մասում. նա պահանջում եր, վոր յուր Գոռը փեսացու լինելուց առաջ՝ լինի դեռ դինվոր, հայրենիքի ծառա, հետևապես և որինավոր մարդ։ Այդ պատճառավ, բացի խիստ կրթությունից, վոր ավել եր վորդուն, նա աշխատեցնում եր նրան ծանր դործերի մեջ, ընկերացնում եր շատ անգամ հասարակ դինվորներին. խակ յուր բացակայության միջոցին՝ հանձնում եր նրան կշիռ ունեցող պաշտոն, վորպեսզի վորդին չվարժվի անդործության, վոր մայր և ամեն չարյաց։

Գոռը կատարում եր իրան հանձնված ամեն մի պաշտոն արիությամբ, առանց տրտնջալու։ Նա հնազանդում եր հոր հրամանին՝ ինչպես յուր աստուծո ձայնին։ Հետևապես նա պարտք չեր մնում յերբեք։

Բայց և այնպես այդ բոլորն արդեն չեղան յերիտասարդ արաբներին մոտենալու և մտերմանալու մխիթարանքն, վոր չխմանային, թե իրանք ստեղծված են իրար պաշտելու համար: Վաղուց նրանց հայացքները դադարել էին «յեղբոր ու քրոջ» հայացքներ լինելուց. վաղուց նրանց աչքերում ցոլանում էին սիրո ամեն կայծերը, վորոնք այրում, ոտնոտում են արտի թագուն խորշերը... Սակայն արքունիքում դեռ չէին նշմարում այդ:

Բայց յերբ ճախողակ հանգամանքների չնորհիվ արքայական ընտանիքը տեղափոխվեց Գառնի և Գևորգ Իշխանը դնաց դեպի Ուտիք, յերիտասարդ զույգի աղատության համար բացվեց լայն ասպարեզ և նրանց հարաբերության պայմանները դյուրացան: Նրանք յերկուսն էլ ապրում էին այժմ դղյակում և տեսակցում ավելի հաճախ: Քնայելով վոր Թոռը որվա մեծ մասը գտնվում էր աշխատության մեջ, բայց և այնպես նա չէր զրկում իրան և ամեն այցելություններից, վորոնք մինչև էին տալիս իրան յուր սիրուհին տեսնելու կամ դեթ նրա հետ մի լուռ հայացք փոխանակելու: Շատ անգամ նա այցելում էր Թագուհուն կամ Սյունյաց տիկնոջը առանց կարևոր պատճառի: Նրա նպատակն էր լինում պատահել Շահանդուխտին մենակ կամ մյուսի մոտ. և յերբ այդ չէր հաջողում իրան, նա աստիճ տխրում էր, չկարողանալով հաղորդ անել նրանց յուր ներքին զգացմունքներին:

Այդ ամենը տեսնում էր Թագուհին և լուռ զվարճանում: Ճերքեմն նա կատակով հիշեցնում էր յերիտասարդին Շահանդուխտի անունը: Գոռը չտատանվում և գլուխը կախում էր, ինչպես մի ամոթխած աղջիկ: Նա չէր համարձակվում հայտնի կերպով յուր սերը խոստովանել, վորովհետև այդ սերը ուրիշ բնավորություն ուներ այժմ և իրան թվում էր, թե այլևս իրավունք չունի նրա մասին խոսելու:

Այս էր ահա պատճառը, վոր Թագուհին զարմացավ, յերբ զահավանդակին հասնելով, լսեց նրանց զրույցը: Այդ դեպքն այնքան տարօրինակ և անակնկալ էր յուր համար, վոր նա չկարողացավ հետաքրքրությունը զսպել և չլսել նրանց:

Բայց ի՞նչ էին խոսում ժամադիր սիրահարները:

— Մենկներս արդեն դողում են, ի՞նչպես պիտի վերադառնամ,— ասում էր Գոռին Շահանդուխտը — ասոլին անգամն է, վոր զաչարում է ինձ այսպիսի յերկյուղ:

— Ճերկյո՞ւղ. ինչո՞ւ համար. մի՞թե հանցանք գործեցիք:

— Անշո՛ւշտ. չի՛ վոր ամեն մի գործ, վոր կատարվում է դաղտուկ, հանցանք է ըստինքյան: Ճես կամեցա անցնել հովանոցի մոտով, այնպես, վոր մայր-Թադուհին ինձ չտեսնե:

— Թադուհի՞ն. մի՞թե նա հովանոցուհի եր:

— Այո՛. նա դեռ նոտան եր յուր բաղմոցի վրա ախուր, մտախոհ... Ինչո՞ւ այդքան տխրամած և նրա դեմքը, Գառ, սիրտս ճմլում է ամեն անդամ, յերբ տեսնում եմ նրան:

— Ինքս ել չգիտեմ. ասում են, վոր վիշտ ունի. և այդ վիշտը ծածկում են մեղանից:

— Ծածկո՞ւմ են. վոչ վոք վոչինչ չե ծածկում. ուրիշ ի՞նչ վիշտ կարող է դառնացուցն լինել, քան հոր ու յեղբոր կուրությունը, քան վշտահար մոր մահը...

— Անշուշտ չկա դառնացուցը:

— Ճեզ չե կարող լինել. այդ ամենից սարսափելին է:

«Չե կարող լինե՞լ... Ո՛, ինչպե՛ս անմեղ, ինչպե՛ս յերջանիկ եք դուք, սիրասո՛ւն զավակներ. յերանի՛ թե յերբեք ել այդ վիշտը չղպաք, այդ դառնությունը չճաշակեք...», շշնջաց ինքն իրան Թադուհին և ձեռքը սեղմեց կրծքին, վոր ալիքի պես յերնում ու իջնում եր:

— Ձա դիմավորումը լցրեց իմ սիրտը բերկրությամբ, շատունակեց Գառը. աշխարհի ամենամեծ փառքերը չեկին կարող բերել ինձ այն ուրախությունը, վոր ճաշակեցի յես այս վայրկենում: Բայց յեթե այդ շնորհն ինձ անելու պատճառով քո սիրտն անհանգստացել է մի վայրկյան, յես կցանկանայի, վոր դու չհանդիսանայիր ինձ այստեղ:

— Չհանդիսանա՞լ... մի՞թե կարող եյի. մի՞թե համբերություն կունենայի... Այն որից ի վեր, վոր դու պահականոցներից հեռացել և աշխատում ես կրճներում, յես դրեթե այլևս չեմ տեսնում քեզ: Դու առավոտը վաղ հեռանում ես դղյակից. ամբողջ որը հոգնում ու վատանում ես դրսում և յերեկոյան ուշ վերադառնալով՝ հազիվ խոնջացած մարմնիդ հանդիստ ես տալիս: Ել յո՞ր և ո՞ւր տեսնեմ քեզ...: Ամեն որ բարձրանում եմ դղյակի աշտարակը և ժամերով կանշնած նայում եմ կրճերին, ուր զորականի հետ միասին աշխատում ես դու: Լարում եմ տեսողության ուժը. աշխատում եմ քեզ տեսնել... սակայն հազիվ նշմարում եմ քո սպաղաբարտ ցցունքը և սրծաքեն դարդմանակը, վոր փայլում է արևի առաջ: Ո՛, ինչպե՛ս այդ վայրկենին կամենում եմ յես թռչել դեպի քեզ. կամենում եմ դալ և նայել

միայն քեզ վրա, կամ... սրբել իմ ձեռքով քո քրտնաթոր ճակատը... Ցեղ սակայն թռչում է միայն հոգիս, վոր չի կարողանում բերել քեզ իմ սիրտը. նա մնում է աշտարակի մեջ փակված, ինչպես վանդակի թռչնիկը, վորին թույլ չեն տալիս ոդի մեջ ճախրելու... Դժվար դրությունն է այս, Գոռ, այնպես չի՞. խոսի՛ր, ինչո՞ւ չես լռում...:

— Խոսի՛ր դու, իմ աննման Շահանդուխտ. խոսի՛ր միայն դու. քո ձայնը հնչում է ավելի քաղցր՝ քան այս ամբի կարկաչը, քան գարնան սոխակի առավոտյան մեղեդին...

— Այո՛, չես այլևս չկարողացար համբերել. տեսա, վոր չեթե քախտի կամքին հանձնվիմ, շատ ալիսի չարչարվիմ, ուստի վորոշեցի այս հանդուրժն քայլն անել... Ո՛, ների՛ր ինձ, Գոռ, չեթե մեղանչեցի չես համեստության դեմ... չդիտես, թե վորքա՛ն շատ տանջվել եմ չես:

— Ների՛ր. մի՛թե հանցանք է սիրելը. դու հնազանդել ես քո սրտին:

— Այո՛, իմ սրտին: Ահա՛, մի քանի որ է, ինչ տեսնում եմ, վոր դու կրճերից վերադառնալով՝ բարձրանում ես ժայռերը և այս զահավանդակից անցնելով՝ քերում մեր աշտարակի աստրոտը... Այդ ժամանակ չես արդեն լինում եմ ննջարանում. պատուհանի նեղ անցքից տեսնում եմ քեզ...

— Տեսնում ես, վոր հայացքս դեպի վեր սևեռած՝ անցնում եմ համրաքայլ...

— Այո՛, և աչխատում ես ինձ տեսնել: Դժբախտաբար դղյակի պատուհանները այնքան անճոռի են, վոր նրանց միջից դլուխ հանելն իսկ անկարելի չե... Ցեղ ահա՛ այդ պատճառով չես այս հանդուրժն միաքը հղացար. վորոշեցի գալ և ասլասել այստեղ քո դարձին:

— Իսկ դղյակի ապատուհանները...

— Վոչ վոք ինձ չտեսավ. չես խուլ սանդուխքներից իջա:

— Ցեղ չեկար ինձ դիմավորելո՞ւ. այստե՞ղ... մենա՞կ... Ո՛, վորքա՛ն բարի, վորքա՛ն սիրելի չես դու...:

Այս ասելով Գոռը բացավ յուր բազուկները և կամեցավ դրկել սիրուհուն, բայց նա բռնեց յերիտասարդի յերկու ձեռներից և քնքշաբար չետ մղելով նրան՝ ասաց ժպտալով.

— Վո՛չ, սիրեցյալդ իմ Գոռ, նախարարաղուն յերիտասարդները այդպես չեն պաշտպանում բարձակից որիորդներին...

— Շահանդո՛ւխտ...

— Այո՛, մենք մենակ ենք. դու ինձ պիտի պաշտպանես քո դեմ:

— Ո՛, ինչպե՛ս խիստ, ինչպե՛ս ահավոր ես դու:

— Ցնա՛ յնկա մխայն մի խոսք ասելու քեզ, վորովհետև առանձին չենք պատահում միմյանց, իսկ յերբորդի ներկայությամբ ասել չեմ համարձակվում... Ցնա՛ իսկույն պիտի վերադառնամ:

— Ա՛խ, ինչպե՛ս կխնայեմ կյանքս, վոր քո ճանապարհի վրա լեռները բուսնեյին այս վայրկենին...

— Այո՛, մխայն մի խոսք... Ցնկա՛ քեզ խնդրելու, վոր յեղևոնները արևի մուտքից դեթ մի ժամ առաջ վերադառնաս տուն... վորպեսզի ամեն որ պատշգամից կարողանամ քեզ վողջունել և քո վողջույնն առնել...

— Մխայն ա՞յդ:

— Այո՛, մխայն այս. և այս արդեն շատ է ինձ համար, մինչև վոր...

— Մինչև վոր ի՞նչ:

— Մինչև վոր դու քո աշխատությունները կավարտես և կվերադառնաս դեյակ:

— Ո՛, իմ աշխատությունները չպիտի ավարտին, քանի վոր...

— Քանի վոր ի՞նչ:

— Քանի վոր Շահանդուխտը գոնվում է Գառնո ամրոցում:

— Ի՞նչ կինչանակե այդ:

— Այդ կինչանակե ա՛յն, վոր յես դողդողում եմ քո անձի համար, քո ապահովության համար:

— Ինչպես և այն բոլորի, վորոնք գոնվում են այս ամրոցո՞ւմ:

— Վոչ. այդ բոլորի համար յես ուրիշ կերպ կմտածեյի. բայց քեզ համա՞ր... ի՛նչ ասեմ...

— Խոսի՛ր, ինչո՞ւ յես լռում:

— Այո՛, իմ անգին որիորդ, յեթե Քչնամու հրոսակները Գառնին շրջապատելով՝ վոչ մի կռվան չդռնեն ժայռերի վրա բարձրանալու, յեթե նրանց անդունդներն ու վայրահեղ մարտկոցները տակ հողը վերչելով՝ վերևն վայր կործանեն ամենքին, յեթե կալրաճյուքի կրակված հեղեղները լափեն խիղախներին վոչ միայն պարիսպների տակ, այլև գառիվայր ճանապարհներում, յեթե հաջորդիք ամիսներով շարունակ պաշարեն մեր

բերդը և սակայն վերջին դյուցազուն չկարողանան յուր խորհուրդը զրկել, կամ իշխանուհիների սովորական զբոսանքը խանգարել, խաչերը, վոր այդ ամենը լինում և քո շնորհիվ... վոր Գառնին անպարտելի չե դարձնում Սյունյաց որկորդը, վոր շատերն այստեղ իրանց կյանքը պարտական են մնում իմ հարատևությունին...

— Ինչ հնշանակե այդ, Գոռ, չես քեզ չեմ հասկանում:

— Այդ հնշանակե այն, վոր քանի դու Գառնիումն ես, Գոռը հանդուրժություն չունի: Գեղամ Նահատակի դուռը այս հսկայական ժայռերը փխրուն են յերևում իմ աչքում. Տրդատա կառուցած հռոմահաճո պարիսպները թվում են ինձ անդոր. մեզ չրջապատող այս խորաձորը յերևում եր իրրև հովիտ, դյուրամատույց ամենքին... վերջապես մեր զորքերի թիվը չես դնում իմ նվազ. մարտիկների յեռանդը՝ վոչ բավական դյուրավառ. քերդակալի աշխուժը՝ դրեթե մարած... Այդ պատճառով ահա՛ դադար չունիմ որ ու դիշեր. աշխատում եմ ինքս, աշխատեցնում եմ զորականին: Այն միտքը, թե Շահանդուխտը դանվում և Գառնիում և թե պետք և նրա թանկագին կյանքը ապահովել, լցնում և իմ սիրտը արիությամբ: Ցերը արշալուսին յելնում եմ դղյակից, դղում եմ իմ մեջ մի անպարտելի ուժ, մի անսպառ զորություն: Ցես հասնում եմ աշխատության վայրը զորականից շատ առաջ: Դիտում, քննում, հետազոտում եմ այն բոլոր անցքերը, վորոնք կարող են մատչելի լինել թշնամուն և աշխատում եմ, վոր այդ բոլորը կորստյան դուռը ու անդունդներ դարձնեմ նրա համար: Կամենում եմ, վոր Գառնու պարիսպները կրկնապատիկ սովարացնեմ, վոր բուրգերն ու աշտարակները կրկին չափով բարձրացնեմ. վոր ամեն լինչ և ամեն վայր դառնա ամուր ու անմատչելի...: Ցեթե դու միանգամ մեր ամրոցն ու պահակավայրերը չրջագայես, կտեսնես, թե վորքա՛ն շատ գործեր են կատարվել, վորքա՛ն մեծ զորություն և ամբարվել դրանց շուրջը... Ցեվ այս բոլորը միայն քեզ համար... իմ անդին, իմ աննման Շահանդուխտ...:

Ցեվ այս ասելով յերիտասարդը առավ նազելի որկորդի աջը և յերկյուղածությամբ սեղմեց յուր շրթունքներին: Նա չընդդիմացավ:

«Միայն քեզ համար... աննման Շահանդուխտ... Ո՛, վորքա՛ն յերջանիկ եք դուք...», չընջաց դարձյալ Թագուհին և արտասուքի կաթիլները գլորվեցան նրա դալկահար դեմքի վրա:

— Բայց ինչո՞ւ միայն ինձ համար. չէ՞ որ դղյակում ապրում են թագուհին, քո և իմ մայրերը, ուրիշ իշխանազն տիկնայք ու օրիորդներ և, վերջապես, չէ՞ որ Գառնիին լիքն է ժողովրդով, նկատեց օրիորդը ժպտալով:

— Այո՛, դրանց բոլորի կյանքը թանկ է ինձ համար. նույնիսկ վերջին ղեղկուհին պիտի վայելե իմ պաշտպանությունը, ինչպես իմ հարազատ քույրը. բայց մեկը դրանցից չէ ներշնչում իմ հոգուն այն բարձր զորությունը, որով կարծում եմ, անպարտելի պիտի մնամ յես թշնամու առաջ. այն զորությունը, որ հասարակ արարածին հերոս և անհնարինի՝ դյուցազն և դարձնում...: Իմ թագուհու համար յես կարող եմ լինել անձնվեր հպատակ. մեր մայրերի համար՝ անձնազոհ վորդի. ժողովրդի և հայրենիքի համար՝ անհաղթ զինվոր: Բայց քեզ համա՞ր... չդիտեմ, ինչ անուն տամ ինձ... ինձ համար չեմ զգում իմ անձը... բայց չէ՞. ինչ եմ ասում, խաբուկ կզգամ. նույնիսկ իմ հոգին կմատնեմ զինվորին, յերթ այդ հարկավոր է... Բայց յես չեմ մեռնիլ, վորովհետև պիտի ապրեմ քեզ խնամելու և պաշտպանելու համար: Ինձ թվում է, վոր յերթ հազարացիների ամբողջ բանակն անգամ հարձակվի ինձ դեմ՝ քեզ իմ գրկից հանելու համար՝ զարձյալ անզոր պիտի լինի ինձ հաղթահարելու: Ճերբ մտածում եմ, թե Շահանդուխտը այստեղ, Գառնիումն է, և նա հուշ ունի իմ պաշտպանության վրա, կարծես ուժգին ծնվում իմ սրտի մեջ և բազուկներս դառնում են յերկաթ: Ինձ թվում է, թե ամեն խոչ ու խութ պիտի կոտրանեմ, ժայռ ու ամբարտակ վիշտեմ, տապալեմ, յերթե համարձակվին չորրևիցե արգելել ինձ քեզ պաշտպանելու... Այո՛, ուղում եմ ապրել միայն քեզ համար, և սիրում եմ ամենքին՝ միայն քո պատճառով...

— Միայն իմ պատճառո՞վ... Ո՛չ, Գո՛ռ. չէյի կամենալ, վոր այդպես խոսես դու... Միթե սխալվոր արարածին մինը պիտի դառնայիր, յերթե յես չլինեյի...

— Ա՛խ, վոչ. այդ չէյի կամենում ասել...

— Հապա ի՞նչ:

— Կամենում եյի ասել, վոր քո սերը կրկնապատկում է իմ մեջ ամեն բան՝ և՛ ապրելու խղճը, և՛ հոգւոց արիությունը, և՛ սրտի կորովը, և՛ դնալի իմ յեղբայրակիցներն ու հայրենիքն ունեցած սերը... Բեղմով աչխարհը յերևում է իմ աչքին վար-

ջալիը, արևն՝ ավելի հրատապ, լուսինը՝ ավելի պայծառ... Դու ամեն ինչ ես ինձ համար՝ և՛ կյանք, և՛ դանձ, և՛ զորություն, և՛ փառք...

«Ո՛հ, բավական է, ել վոչինչ չեմ ուզում լսել... Անշուշտ մի չարության վոգի առաջնորդեց ինձ այստեղ՝ իմ ծանր վերքերը նորոգելու համար», մրմնջաց Թադուհին և բարձրանալով տեղից՝ հուժկու քայլերով հեռացավ դեպի հովանոցը:

Այստեղից նա ուղղվեցավ դղյակը մխայնակ, առանց նաժիշների ընկերակցության, ինչպես անում եր նա յերբեմն, և գնաց, փակվեցավ յուր առանձնարանում:

Քիչ ժամանակից հետո բաժանվեցան նաև սիրահարները: Գոռը, իհարկե խոստացավ յուր հարսնացուին կատարել նրա խնդիրը և տանեն յերեկո վերադառնալ դղյակ արևի մուտքից առաջ:

Բայց Թադուհու վրա մեծ ազդեցություն արավ այս դեպքը: Նրա վերքերը, արդարև, նորոգվեցան: Սիրահարների զրույցը դեռ հնչում եր նրա ականջին. նա կարծես տակավին ուներու մոտ նստած՝ լսում եր նրանց և մերթ ընդ մերթ վորոճում այն սիրաշունչ խոսքերը, վոր արտասանել եյին Գոռը կամ Շահանդուխտը:

«Ապրեցեք, ապրեցե՛ք մխայնց համար, յերջանի՛կ ապրածներ, ապրեցեք, դի սիրում եք կաթոգին, դի աստուծո աչը հավանի յեր ձեր սիրուն... խոսում եր ինքն իրան Թադուհին.— Ավա՛ղ. ինձ թվում ե՞, թե այլևս սեր չկա վոչ մի տեղ. թե նա ցամաքել, չորացել և ամենի սրտում, ինչպես հովտի այն ծառերը, վորոնց ղարնում և խորշակ, վորոնց չեն ջրում առուն, կամ ցող չեն տալիս յերաշտի դիշերը... այդպես յեղավ մեր սերը. չորացավ, դառացավ... ի՛նչ եր մնում մեզ անել, յեթե վոչ՝ «հատանել զայն և ի հուր արկանել...»: Բայց ահա՛ հենց այդ չորացած ծառի մոտ յես տեսնում եմ մի դալար բողբոջ՝ վոսկեկներով ու տերևով զարդարուն... ի՞նչ անել նրան. մի՞թե չորի հետ միասին կտրել ու այրե՞լ... Ո՛հ, վոչ. թո՛ղ նա ապրի, խնամվի, թող արևը ջերմություն և առուն՝ ջուր պարզևեն. թող խորշակը յուր թունավոր շնչով յերբեք նրան չդպչեն. թո՛ղ նա մեծանա, ուռճանա, դուցե նրա հովանվուն ներքո ապրին ու անանկին սիրո ուրիշ բողբոջներ...

Ա՛խ, անդը չի մնալ աշխարհում. նա կա, նա ապրում է։ Բայց ել ինչո՞ւ ծաղրում են ինձ. ինչո՞ւ ամենքը միացած կամենում են խեղդել այդ ղողանջունքը իմ չարաբաստ սրտում. ինչո՞ւ պահանջում են, որ ես նրա մասին ավելի չեմ մտածում քան այն բոլորի՝ ինչ որ կատարվում է իմ շուրջը. ինչո՞ւ ինձ հեղնում են, երբ ես իմ կյանքն ու բերկինքը նրա մեջ եմ տեսնում, նրա մեջ վորոնում. ինչո՞ւ կամենում են, որ ես աշխարհի այդ միակ արևը խավարի. չի՞ որ այնուհետև հաստատությունը պիտի ինձ տիրե...»։

«Բայց ինչ եմ ասում. նա արդեն ինձ սիրել է... ահա՛ ես քաշվել, ապաստանել եմ այս խորշերին. լուսթյունն ու միայնությունը դարձել են իմ միակ ընկերները, անդործությունը՝ իմ միակ զբաղմունքը... ինչ եմ անում ես, տեր աստված. ոչինչ այլևս ինձ չի հետաքրքրում. ոչինչ իմ սիրտը չի ջերմացնում... թշնամին հասել, նսեմել է իմ դեմն մոտ. բայց այդ ել ինձ չի սարսափեցնում. աչխարհի վրա նայում եմ հպծծած զազրոտի մի՞նչ... Մի՞թե ես ապրում եմ...»։

Ցնծի թափուհին նայեց հանկարծ իր շուրջը, տեսավ իր միայնությունը և խոր հառաչեց։

«Այսպես չէի ապրում ես. այսպես չէր անցնում իմ կյանքը, քանի նա սիրում էր ինձ...», չշնջաց նա և լռեց։

Մի քանի վայրկյանից նրա հայացքն ընկավ առանձնարանի պատուհանին։ Ցնծուցին Գեղա լեռան լանջերը՝ լուսնի լուսով լուսավորված։ Նրանց հիշեց թափուհին սիրահար զույգը, նրանց պրոբլեմները, Շահանդուխտի սիրախոսությունը, Գոռի վոգևորությունը և ինքն ել կարծես յերիտասարդացավ նրանց հետ (թեպետ յերիտասարդ էր և վչտերն էլին միայն իր սիրտը ծերացրել)։

«Ա՛խ, այսպես չպետք է լինի. դեռ կարելի է ապրել. կամ, դոնե, ուրիշներին ապրեցնել։ Մենք իրավունք չունինք մեզ շրջապատող մահը տարածել ամեն տեղ, կամ ամենքին մեզ հետ միասին մեռցնել։ Ի՞նչ իրավունքով ես պիտի զրկեմ իմ Շահանդուխտին սիրո անուշ վայելքներից, կամ պատանի Գոռին՝ կյանքի բարիքներից։ Ցնա տեսա իմ աչքով, լսեցի իմ ականջով... նրանք սիրում են և յերջանիկ են... Ինչո՞ւ չողնել նրանց, որ յերկար, շա՛տ յերկար յերջանկանան... Նրանք մեր աչակերտները, մեր վորդիներն են, բայց մի՞թե մենք մի,

կամ յերկո՞ւ վրդովի ունինք... քանի՛ քանի՛ նմանօրինակ տախտակներ կան մեր աշխարհում, վրոնք կամենում են ասլրել, կյանքի քաղցրությունները վայելել... Ինչո՞ւ զրկել, ինչո՞ւ չողնել նրանց...: Բայց մենք զրկում ենք, բարբարոսություն ենք անում. «մենք դժբախտ ենք, դուք ել դժբախտ կեղնք...», այսպես ենք ասում, այսպես ենք մտածում... Մեր անճնական վշտերի պատճառով մենք ձեռքերնիս լվացել, հետ ենք քաշվել-թաղավորը նստել և կաքավաբերդ, իսկ յես փակվել եմ այս դղյակում. «Քշնամին թո՛ղ անե, ինչ կամենում է. թո՛ղ նա հարվածե, հալածե, յերկիրը տակն ու վրա անե, մեզ ի՞նչ փուլթ. մենք հո չենք ասլրում, ուրիշներն ել թո՛ղ դժբախտանան...»: Այո՛, այսպես ենք մտածում: Բայց չե՞ վոր սա մի վոճիր, մի չարագործություն է, յերկնային անեծքի արժանի...»:

Այս նորածին մտքերն այնպես հուզեցին Թադուհուն, վոր վոչ միայն նրա վհատությունն անցավ, այլև մի նոր և մինչև այդ իրան անծանոթ վոգևորություն յեկավ վրան: Նա վորոշեց իրական մասնակցություն ունենալ յերկրի պաշտպանության գործում: Բայց ի՞նչ պիտի աներ, դեռ չգիտեր. նա մտածում էր դրա վրա:

Հանկարծ նրա դեմքը պայծառացավ և դեղանի շրթունքների վրա շողաց մի առույգ ժպիտ:

«Ճես կերթամ Աչոտի մոտ. կառնեմ նրան նորեն իմ գերկը. կջերմացնեմ նրա սիրտը իմ հրատապ ընչով... Կհիշեցնեմ նրան մեր անցյալը. կվոգևորեմ յուր քաջության և փառքի նախկին հիշատակներով... Այո՛, կհանեմ նրան կաքավաբերդից և կդարձնեմ վոստան... Նա նորեն կանցնի հայ քաջերի գլուխը, նորեն կվորոտա ինչպես մրրիկ և կահավաներ յուր Քշնամիներին... Այն ժամանակ խաղաղության հովանվուշն ներքո թո՛ղ ծլին, ծաղկին սերը բույսերը... Թո՛ղ մեր աշխարհի յերկնատարած սրտերը վայելեն նրա անույշ պտուղները...Այո՛, վորոշված է. յես կերթամ: Վոչ վոք ինձ չի խանդարիլ: Աթեն մարդու առաջնորդում է մի միտք: Մարզպետունի իշխանը վոգևորվում է ընդհանուր հայրենիքի սիրով. նա աշխատում է նրա ամբողջության, գահի հաստատության և, հետևապես, ժողովրդի բարօրության համար: Նրա վորդին՝ Գոռը վոգևորվում է այդ ամենով՝ միայն Շահանդուխտի համար. թո՛ղ ասլրեմ ինձ ել վոգևորե Գոռի ու Շահանդուխտի բախտը, թո՛ղ յես ել

աշխատանք այն օրերի համար, որոնք սիրում են և ցանկանում են սիրաշուրջ չլինել...»:

Ցնծ թաղուհին վեր կենալով, խնդուն ձայն տվավ նաժիշկաններին:

Ներանք ներս կիևան:

— Կանչեցեք այստեղ Սեդային, հրամայեց նա:

Մի քանի վայրկյանից ներս մտավ դայակը:

— Սե՛զա, պատրաստվիր. մենք վաղը ևեթ պիտի ճանապարհվինք:

— Ո՞ւր, մեծափառ տիկին, զարմանալով հարցրեց դայակը:

— Կաքսավարները:

— Կաքսավարնե՞րդ. թագավորի մո՞տ:

— Այո՛:

— Ինչո՞ւ, սիրուհի:

— Ինչպե՞ս թե ինչո՛ւ. գնում եմ կմ ամուսնու և թագավորի մոտ. մի՞թե տարօրինակ ցանկություն է այս:

— Ինա՛յ. ասում ես թո՛ղ որհնե այդ ցանկությունը և քո ճանապարհը... կամենում էլի իմանալ, թե ինչո՞ւ հանկարծ...

— Այսպիսի վորոշումն արի...:

— Այո՛:

— Դրա համար հետո. խոսելու ժամանակ շատ ունինք:

— Իսկ այժմ ի՞նչ կհրամայես:

— Կարգադրիր, վոր վաղ առաւ՛ոտվանից պատրաստ լինին յոթնեակ պատազարուկ, զույգ ջորիներով: Մեզ հետ կլինին յերկու ծպտաւոր, և յերկու ծառաս: Իմ պահանորդները թո՛ղ ժամ առաջ գնանն ամրոցից և սպասեն մեզ ճանապարհին: Դրյակում գնելիք կարգադրություններն ասին հարկ յեղածը կհանձնարարեմ Թահար խշխանուհուն: Իսկ ամրոցում բերդակալից զատ վոչ վոք չպիտի իմանա մեր հեռանալը:

Անգան գլուխ խոնարհեց թագուհուն և դուրս գնաց:

Գ

ԲՑՈՒՐՍԿԱՆԻ ՍՓՈՒՄԸ

Դեռ նոր արևելքն սկսել էր չառագունել, յերբ Սևանա վանուց միաբանությունը առավոտյան ժամերգությունն ու պատարագն ավարտելով, դուրս յեկավ ս. Առաքելոց յեկեղեցուց և ցրվեցավ դնալի բլրակի խուցերը։

Հովհաննես կաթուղիկոսը, յոր չորրորդ որն էր ինչ գտնվում էր այդտեղ, աղոթում էր նույնպես միաբանության հետ։ Թողնելով յեկեղեցին, նա փոխանակ դնալի վեհարան դառնալու, Սահակ յեպիսկոպոսի հետ միասին բարձրացավ բլրի դագաթը։ Ջնայելով վոր ցուրան զգալի յեր արդեն, այսուամենայնիվ նա ցանկացավ դիտել այդտեղից արևի յելքը, վոր կղզու դեղեցիկ տեսարաններից մինն էր կազմում։ Նա կանգ առավ Սևանա անդրանիկ յեկեղեցու, այն է՝ ս. Հարության տաճարի առաջ, վոր կառուցած էր բլրի դագաթին և սկսավ դնալի արևելք նայել։ Կապուտակ ծովակը, վոր պարփակում էր կղզին, խաղաղ էր այդ վայրկենին և միապաղաղ, ինչպես բյուրեղ։ Մինչև փոքրիկ մկանունքները դալիս, կոծում էին ժայռապատ լեզուները։ Համատարած կապուտակի վրա ձգվում էին դանազան ուղղությամբ սպիտակ ու յերկինագույն չերտեր, նման յերկարաձիգ ժապավենների, վորոնք տակավ առ տակավ փոխում էին իրանց գույնն ու ձևը, համակերպելով առավոտյան շողերքին։

Ցեղ ահա Այծեմնասարի յետևից ծագեցին արևի առաջին ճառագայթները, և հրաշալի սկսվառակը, ինչպես մի հրաշատան անոթ, սկսավ բարձրանալ յերկնակամարի վրա։ Նրա փնջաձև ճառագայթները վոսկեզոծեցին ամենածիր լեռները, Սևվանա բարձունքն ու ժայռերը և արևմտյան կուսի հանապատղուրկ դաշտերը։ Բայց ամենից դեղեցիկ և սքրալի տեսարանը

ներկայացնում եր Նահապետի ծովակը։ Նրա մույդ կապուտակը վախվում եր հետդհետե բայ յերկինադունկի։ Ժապավենները նվաղում կամ անհետանում եյին. ծովակի մակերևույթը մի տեղ վատվում եր բաց-բոսորագույն, մի ուրիշ տեղ փայլում դորշ-արծաթագույն, իսկ բյուրավոր միանունքները, վորոնց փոքրիկ հասը հետդհետե ալիքների յեր վոխում, փայլփլում եյին արևի առաջ ինչպես աղամանդ և կամ ջրածին, չրջուն աստղիկներ։

Կաթուղիկոսը նայում եր այդ բոլորին. նայում եր և դմայլում։

— Ինչպե՜ս դեղեցիկ, ի՜նչպես հրաշալի յե մեր յերկիրը, բացատրանչից նա հանկարծ. ինչո՞ւ, ինչո՞ւ չենք կարողանում հանդիստ սրտով ապրել այստեղ. ի՞նչու անիրավ ճակատագիրը հալածում է մեզ...

Ցնվ նա հաղով սլացավ դեպի հին դարերը, դեպի այն յերջանիկ, անդրանիկ որերը, յերբ այդ տեղերին տիրում եր Գնդամը յուր թոռներով, անխառն ընդծիններով. յերբ այդ-տեղ լսվում եր միայն հարազատի բարբառը, յերբ մարդիկ այդտեղ անծանոթ եյին ոտարին, նրա լուծին ու բռնության։

Նա հիշեց և այն բախտավոր ժամանակը, յերբ հղոր Տրդատը հրամայում եր այդ յերկրին. յերբ Լուսավորիչը խաչը ձեռին այցելեց այդ ծովակին. յերբ քրիստոնեության նորընծա դիվորները Սևան ամբողը մանելով՝ հալածեցին այդտեղից քրմերի խումբը և Այուձյաց տոհմական կուռ տաճարը ճչմարիտ աստուծո տուն դարձնելով՝ «սուրբ Հարությունն» անունը տվին նրան։ Նա պատկերացրեց յուր առաջ այն վայրկյանը, յերբ Հայոց առաջին Քրիստոսի խաչը հինավուրց կուռ-տան բարձունքը հանելով՝ նրա հովանավուն ու խնամողը հանճարեղ Գնդամա ծիծաղախիտ ծովակը՝ յուր համր ու խաղաղ բնակիչներով, յուր դեղագարդ ափերով...։

Իսկ ա՜յժմ... Ա՛յո՛, այժմ ել այդ ծովակն ու կղզին Այուձյաց աչերի կալվածն եյին. նա դառնում եր հայոց թագավորի հովանավորության ներքո։ Բայց յեթե հանկարծ հաղարագիլք չրջապատեյին նրան, յեթե արաբացոց վայրենի և գաբշաղեմ ղորքը խուժեր այդ կղզին, ավարի առներ նրա սրբությունները, սրի անցցներ մխարանության, դերի վարեր իրան՝ կաթուղիկոսին, ո՞վ արդյոք պիտի դիմադրեր նրանց...։

Այս մտքերը հուզեցին կաթուղիկոսի սիրտը և մի հանկարծական յերկյուղ պաշարեց նրան։

— Մի՞թե այստեղ ապահով ենք մենք Թշնամու հարձակումից, հարցրեց նա Սահակ սրբազանին:

— Ապահով ենք, եթե աստուծո աջը հովանի չի մեզ... պատասխանեց յեպիսկոպոսը:

— Բայց հովանի՞ չի արդյոք:

— Մեզ մահկանացուներիս հայտնի չէ վոչինչ: Կարելի չի մխայն հուսալ, թե այս բազմաթիվ միաբանութեան մեջ կգտնվին սուրբ մարդիկ, վորոնց չնորհիվ և նա կազատե մեզ վորձանքից:

— Այո՛. «եթե գտանիցի անդ տասն, վոչ կորուսից և վասն տասանցն», այդպես ասաց աստուծո հրեշտակը Աբրահամին՝ յերբ գնում եր նա Սոդոմը կործանելու: Բայց կգտնվի՞ն մեր մեջ տասն արդար մարդիկ:

Դեռ վեհափառը չեր վերջացրել խոսքը, յերբ նա նշմարեց մի լաստ, վոր ծամաքաբերդի կողմից հառաջանում եր դեպի կղզին:

— Ո՞վքեր են հյուր գալիս մեզ այսպես առավոտանց, հարցրեց կաթուղիկոսը յեպիսկոպոսին:

— Գուցե ուխտավորներ, պատասխանեց վերջինս:

Բայց վեհափառը, վորին անհանգստացնում եր կղզուն վերաբերյալ ամեն յել ու մուտ, դարձավ իսկույն դեպի վեհարան և հրամայեց յեպիսկոպոսին մարդ ուղարկել և յեկվորներն ո՛վ լինելն իմանալ:

Կես ժամից յետո, ներկայացավ կաթուղիկոսին Դվնո կաթուղիկոսարանի սպասավոր Թեոդորոս սարկավագը, վոր կղզին մտնողներից գլխավորն եր և հայտնեց վեհափառին՝ թե Բուչիր գորապետը պատրաստվում է մեծ գորքով գալ Սևան և պաշարել նրան կղզու մեջ:

Կաթուղիկոսը գունդը նետեց:

— Այսո՞ր եկ հանգիստ չեն տալիս ինձ, բացականչեց նա յեպիսկոպոսին, և ապա դիմելով Սահակ յեպիսկոպոսին, ասաց.

— Տեսա՞ր, սրբազան, ուրեմն տասն արդար եկ չկա մեր մեջ:

— Գուցե... Բայց ինձ թվում է, թե աստված չկորուսանե գարդարն ընդ ամբարշտին», կրկնեց յեպիսկոպոսը Աբրահամու խոսքերը:

— Ո՞վ է այդ ամբարիշտը, հարցրեց կաթուղիկոսը:

— Ո՞վ դիտե. գուցե յես. գուցե նա, վոր իրան արդար է համարում, պատասխանեց սրբազանը. անկարելի չե, վոր այս

չարիքները հասնում չլինեն մեզ մի Հովնանի պատճառով...:

— Բայց ո՛վ է այդ Հովնանը. ո՞ւր է գտնվում նա. ասա՛, թող բռնենք և ծովը նետենք, դուցե այդպիսով աստուծո բարկությունն անցնի:

Ցնծիկոպոսը չպատասխանեց:

— Ինչո՞ւ լռել ես, սրբազան, հարցրեց կաթուղիկոսը:

— Հովնանի տեղը չես չգիտեմ, յուրաքանչյուր մարդ կարող էր յուր դործերը քննելով ասել, թե վորքա՞ն հեռի չէ Հովնան լինելուց: Բայց չես մի բան դիտեմ. այդ այն է, վոր վեհափառը պիտի հեռանա Սևանից, վորպեսզի այստեղի միաբանությունն էլ Այրիվանից հայրերի բախտը չճաշակե:

Կաթուղիկոսը հասկացավ Սահակ եպիսկոպոսի ակնարկության նշանակությունը և խոր հառաչեց:

— Ուրեմն իմ յերկրի մեջ չկա մի անկյուն, ուր չես դլուխս դնել կարողանամ... ուր հանդչելու իրավունք ունենամ... խոսից ինքն իրան կաթուղիկոսը և ապա դիմելով Թեոդորոս սարկավագին հարցրեց. ի՞նչ են խոսում իմ մասին Դվինում:

— Գո վորոշումները, վեհափառ տեր, վոչ վոք անխորհուրդ չի համարում, բայց, ասում են, վոր յեթե դուռ աթոռակալրում լինեյիր, վոստիկանը չեր հանդգնիլ քեզ հալածել:

— Իմ աթոռակալրո՞մ...: Լավ. չես յերկուս որից այնտեղ կլինիմ... Կհասնինք, այնպես չե՞, սրբազան, դիմեց կաթուղիկոսը Ցնծիկոպոսին:

— Դիմի՞ն:

— Վո՛չ, Բյուրական ամրոցը. չե՞ վոր նա էլ իմ աթոռակալրն է: Այդտեղ լինելով չես մոռ կլինիմ կաթուղիկե յեկեղեցուն: Վոստիկանը դիտե, անշուշտ, վոր Բյուրականը իմ դաստակերտն է, վոր չես այդտեղ դղյակ ու յեկեղեցի ունիմ կառուցած և տարվա մեծ մասն անցնում եմ այդ ամրոցում:

— Կարող ենք յերկուս որից հասնել:

— Ուրեմն այսօր ևեթ ճանապարհվինք: Թո՛ղ մարդիկ լուր տանեն Դվին, թե կաթուղիկոսը յելավ Սևանից: Թշնամին անշուշտ ել չի դիմել այստեղ:

Ցնծ նույն ավուր յերեկոյան կաթուղիկոսն յուր հետևորդներով ու մերձավորներով յելավ Սևանից և ուղղվեցավ դեպի յուր ձեռակերտ ամրոցը՝ Բյուրական:

Մի քանի որ հետո ներկայացան Նըսրին կաթուղիկոսի նվիրակները դուռն յեպիսկոպոսի առաջնորդությամբ և հանձնեցին վռոսիկանին կաթուղիկոսի ճեռագիրը մի նամակը և դրա հետ միասին թանկագին ընծաներ:

Կաթուղիկոսը յուր նամակով չնորհավորում եր նախ վռոսիկանի դալուստը և աղոթում նրա հաջողության համար և ապա յուր ընծաներն առաջարկելով՝ խնդրում եր նրանից ապահովության հրովարտակ՝ թե յուր անձի և թե աթոռի համար:

Վռոսիկանին դիմելու ատյս խորհուրդը տվել եյին կաթուղիկոսին Բյուրականում յեղող յուր մերձավորները:

Բնչլերը այնքան տաղնապով հետևում եր հայրապետին, վոր միայն Նըսրի մինջամտությունը կարող եր նրա հետապնդության առաջն առնել: Ատյս պատճառով կաթուղիկոսը չմերժեց մերձավորների խորհուրդը, վոր արդարև, բարերար հետևանք ունեցավ:

Վռոսիկանը դրավվելով վոչ այնքան կաթուղիկոսի քաղաքավար նամակից, վորքան նրա դրկած ընծաներից, չնորհեց հայրապետին ազատության հրովարտակ, թույլ տալով նրան ապրել՝ ուր վոր ինքը ցանկանում եր:

Վեհափառը, իհարկե, յուր ճեռակերտ Բյուրականը դերադասեց Դվինից: Վորովհետև դիտեր, վոր մահմեդական իշխանավորի խոսքն ու ստորագրությունը չեյին կարող ապահովել յուր անձը մայրաքաղաքում, այդ պատճառով մնաց Բյուրականում մինչև վոր տեսնե, թե տերը ի՞նչ և հաջողում հայոց թագավորին:

Բայց Բնչլերը կատաղեց, յերբ Նըսրի հրամանը հասավ, վորով վռոսիկանը պատվիրում եր նրան հանդիստ թողնել հայոց կաթուղիկոսին:

Նա դիտեր, վոր վռոսիկանը ստացել և արդեն նվերների մի բաժին և այդ և պատճառը, վոր բարեկամացել և կաթուղիկոսի հետ: Բայց չե՞ վոր ինքն էլ յուրը պիտի ստանար. չե՞ վոր Այրիվանից ճեռնունայն վերադառնալով՝ նա վորոշել եր յուր վրեժը Սևանից առնել, իսկ յեթե այդ չհաջողեր՝ ապա Բյուրականից:

Բայց ահա վռոսիկանը խանգարում եր նրան: Ի՞նչ անել ուրեմն:

Նա դիմեց խոհուն Դվին, մահմեդական կրոնապետի ոգնության:

Վերջինս վտրտվհետև մեծ ազդեցություն ուներ ինչպես յուր ժողովրդի, նույնպես և վոստիկանի վրա, ուստի խոստացավ Բեշիրին՝ վոչնչացնել տալ վոստիկանի հրովարտակը և նորեն կաթուղիկոսին յուր վրեժխնդրության հանձնել։

Մինչդեռ Դվինում այս հռդևերով էին զբաղված և հայոց կաթուղիկոսը անցնում եր յուր ամեռը խաղաղությամբ, մերկերիս առաքյալները, այն է՝ Վահրամ սպասուհն ու Մարզպետունի իշխանը թափառում էին հայոց մեծ ու փոքր իշխանների զավառներում, մի բերդից անցնելով մյուսը, մի ամրոցից՝ դեպի մի ուրիշը։

Բայց նրանց առաքելությունը անցնում եր ապարդյուն և խոսքն ու հորդորը պտուղ չեր բերում։

Աղձնյաց իշխանն, որինակ, խոստանում եր միացնել յուր զորքը արքայական բանակին, յեթե Հիացած կտեռներ նրան Աշոտ սպարապետի զորքը և Աբաս արքայեղբոր դնդերը։ Մոկաց իշխանը նույն համաձայնությունն եր տալիս, յեթե հիշյալների հետ միասին իրար պատերազմելու վտտպուրականի թագավորը։ Աշոտ Բանակորը խոստանում եր մտնել դաշնակցության մեջ, յեթե արքայական հրովարտակով յուր իշխանության կհանձնվեին Արարատի հինգ գավառները։ Աբաս արքայեղբայրը, ընդհակառակը, ակնկորդ եր համարում կազմել մի դաշնակցություն, որ պիտի կռվեր Աշոտ-Գերիաթի դրոշի տակ։ Նրա կարծիքով թագավորն արդեն վհատված ու հեռացած եր. պետք եր ուրեմն թույլ տալ նրան հանդստանալ մի ամրոցում, իսկ դահը հանձնել որինավոր ժառանգին, այն է՝ իրան։ Վհատհատանել, ասում եր, կարիք չի լինել, որ Գևորգ իշխանն ու Վահրամ սպասուհը զորք մուրան իշխաններից և կամ միության մեջ նորդ հանդիսանան, դի քաջ թագավորին կմխիանան մեշտ քաջերը։

Այս բանակցություններն ամիսներ տևեցին։ Աշունն ու ձմեռը անցան և սկսավ Հայաստանի դեղեցիկ գարունը։

Ցնծ սակայն մինչորդ իշխանները վոչ մի մեռություն առնել չկարացին։

Բայց Դվինի հաղարացի կրոնապետը բնչիր զորապետին առած յուր խոստումը կատարեց։ Վորքան էլ վոստիկանը համառ եր ու ինքնակամ, այսուամենայնիվ դենպետը կարողացավ համոզել նրան, թե նա մեծ նախատինք և հասցրել Մահմեդի կրոնին, ապահովության դիր տալով հայոց կաթուղիկոսին։

— Աստված այդ սուրը տվել է քեզ նրա համար, որ դրանով մեր կրոնը անհավատների մեջ տարածես, որ Մահմեդի քարոզած ճշմարտությունն աշխարհին ծանոթացնես, որ այդ ճշմարտության հակառակորդներին փշրես ու ջախջախես: Բայց դու, ընդհակառակը, խնամում ու հովանավորում ես մեր կրոնի թշնամուն, Մահմեդի հայհոյչին, սրբազան ղուռանի անարգող մարդուն»:

Այս և սրանց նման գրույցներ շարունակ անում էր կրոնապետը, մինչև որ վոստիկանը համոզվելուց, թե՛ ձանձրանալուց հրաման տված Բեչիրին՝ հեռանել նորից կաթուղիկոսին և դարձնել նրան Դվին:

Բեչիրի ցանկությունն էլ այդ էր: Ամբողջ ճամբա նա Դվինում մաչվել էր անդորձությունից: Այժմ ահա՛ զարնան գեղեցիկ օրերի հետ, հասավ իրան վոստիկանի ավելի ևս գեղեցիկ հրամանը: Ի՞նչ էր մնում նրան անել, յեթե վոչ զորքերը հավաքել և դիմել Բյուրական:

Այդպես էլ նա արավ: Մի քանի որվա մեջ կազմեց, պատրաստեց յուր հզոր բանակը և հրաժեշտ տալով բարեբար վոստիկանին, դիմեց դեպի ծերուկ Արագածը:

Գարնան սկիզբն էր: Զնայելով վոր Արագածը, Արայի լեռը և նույնիսկ Ցեռաբլուրը պատած էին դեռ ձյունով, այսուամենայնիվ Անբերդու գավառը ծածկվել էր կանաչով: Նրա սերուն դաշտերը, գեղեցիկ հովիտները, սարավանդներն ու լեռնալանջերը զարդարվել էին ընտիր ու դույնզդույն ծաղիկներով: Աղբյուրները բազմացել, առուները հորդացել և գետերը վարարել էին: Ձաշնարածները իրանց ամեռային հանգիստը թողնելով՝ բարձրանում էին դեպի Արագածի լանջերը, վորպեսզի նրա հովասուն արոտներում իրանց հոտերն ու նախիրը արածացնեն:

Արարատյան դաշտի վրա դեռ խաղաղություն էր տիրում և գեղջուկն ու յերկրագործը սկսել էին զբաղել դաշտային աշխատություններով:

Հանկարծ վոստանից լուր հասավ, թե հազարացիք ստվար բանակով հառաջանում են դեպի Անբերդ: Նորին վսեմություն ու Քաջությունը սկսավ:

Կաթուղիկոսը սակայն դեռ հանգիստ նստած էր Բյուրականում, այլև զբաղված յուր դաստակերտի բարեկարգություններով: Այն որից ի վեր, վոր նա վոստիկանից ստացել էր ապստամբության հրովարտակ, բազմացել էին Բյուրականում վոչ

մխայն հոգևոր կոչման տեր անձինք, այլև աշխարհական ընտանիքները, որոնք ապաստանել էին այդ տեղին՝ ինչպես կաթուղիկոսի հավանավորությունը վայելող մի ամրություն:

Ահևիկ (տղբիլը) դեղեցիկ առավոտներից մինն եր: Վեհափառը յուր ղղյակի պատշգամում բաղմած դիտում եր այն փառավոր ու ակնապարար հորիզոնը, որ շրջապատում եր հովանոսն Բյուրականը:— Նրա հյուսիսային կողմից բարձրանում եր լայնադիր ու քառագագաթ Արագածը յուր ծաղկածին սարատարփերով, լեռնային լճակներով և ձյունապատ սոճիքներով: Հյուսիս-արևելյան կողմից յերևում եր Արայի լյառը յուր կանաչազարդ լանջերով: Արևմտյան կողմից փակում էին հորիզոնը բարդագի ձյունապատ կատարները. իսկ հարավից ձգվում եր մի դաշտահովիտ, որ Ճեռաբլուր լեռան սառորոտը քերելով՝ հասնում եր մինչև Քասաղի խառնուրդը և ապա դաշտանալով՝ տարածվում մինչև Մասիս: Այդ դաշտահովտի վրա ընկած էին բաղմաթիվ դյուղեր ու ավաններ, որոնց իշխում եր հիշատակաց արժանի Ոշականը, որ ամփոփում եր յուր մեջ Հայաստանյայց յերիցորդ լուսատուի, այն է՝ սրբուհի Մեսրոպյան Քանկաղին նշխարները: Մի փոքր հեռու յերևում եր քաղաքամայր Վաղարշապատը, իսկ նրա մոտ հայոց յեկեղեցիների թագուհին՝ նախաթոռ Ընմիածինը, սուրբ Գայիանեյի վանքը, Մարինե կուսի Շողակաթը և վերջապես հզոր արքայի սերն ու վիշտը մեծ-ժող՝ հրաշագեղ Հռիփսիմեյի հոյակապ վկայարանը: Այս բոլորից յետ ամրանում եր վեհապանծ Մասիսի սպիտակափառ կատարը, ծածկված հավիտենական ձյունով ու սառուցով, որ կարծես իշխում եր Արարատյան լայնածավալ դաշտի վրա իբրև հզոր ու անպարտելի միապետ:

Այս դեղեցիկ տեսարանները, որոնք դրեթե ամեն որ դրավում էին կաթուղիկոսին և զբաղեցնում նրան վերացական մտածություններով, այսօր, կարծես թե, կրկնապատկել էին իրանց հրապուրը: Նա զվարճանում եր, որ կարողացել եր յուր դասակիցների համար ընտրել այսպիսի մի դեղավայր, և վորոշում եր ընդարձակել նրան նորանոր շինություններով. ամրացնել մարտկոցներով և բաղմացնել յուր մենապանի միանձանց թիվը:

Բայց ահա՛ հենց այդ ժամանակ դուժարերը հասավ Բյուրական:— «Բնչերը գալիս են» խոսքը կայծակի արագությամբ տարածվեց բոլոր ամրոցում և ամենքին սարսափահար արավ: Ամ-

քոցի դռները ճռնչալով փակվեցան, պատրաստի չեղած զորքերը դինվեցան. ամրոցում դտնվող և զինք կրնկ դիտցող մարդկանց զենքեր բաժանվեցան, և բաց չառնելով նաև յերխտասարդ հոգևորականները:

Բայց ինչ. մի՞թե այդ տկար ուժերով պիտի կռվեկին նրանք հազարացիների դեմ. իհարկե վոչ. դա հուսահատ դիմադրության պատրաստություն եր:

Հետդհետե հասնող լուրերը հավաստեցին, թե Բեչիրը գալիս և վոչ թե Բյուրականը դրավելու, այլ կաթուղիկոսին ձերբակալելու: Ցեղ ահա այդ պատճառով նորեն խնդիր ծագեց վեհափառի փախստյան համար: Նրա այն մերձավորները, վորոնք վախենում եյին, թե Բեչիրը կաթուղիկոսին ձեռք ձդելուց յետ իրանց եղ պիտի կալանավորե, խորհուրդ տվին նրան Բյուրականից հեռանալ: Բայց Սահակ յեպիսկոպոսը, Մովսես վարդապետը և տեղվույն միաբանության դլխավորները հակառակեցան այդ խորհրդին:

— «Զգետք և մի անձի պատճառով չաւերին զոհել, ասում եյին նրանք.— կաթուղիկոսի փախստյան համար տեղ չի պակասիլ. բայց նրա սմեն մի փախուստը բաղմաթիվ զոհեր և տալիս թշնամուն: Ցեթե ատելած վեհափառի համար մահ և վրըդոշել, ապա նա չպիտի վարանի այդ վորոշման հետաղանդել. ըստ վորում ուր վոր եղ փախչի, դարձյալ պատուհասը կհասնի նրան. իսկ յեթե չե վորոշել, ապա Բեչիրի հարձակումը չի կարդող վնասել նրանց»:

Բայց այս դրույցները չփարատեցին կաթուղիկոսի և նրա մերձավորների յերկյուղը: Կայացավ մի դաղտնի խորհուրդ, վոր վորոշեց Բյուրականի բախտը. այն է՝ համոզել կաթուղիկոսին հեռանալ շուտով դնալ Բաղարան, Աչոտ ասպարապետի մոտ, և աղատել յուր անձը վտանդից: Ասպարապետը վոչ միայն մեծ զորք ու անսահման ամրություն ուներ, այլև վայելում եր վոստիկանի բարեհամություն: Հետևապես վեհափառը կապահովեր իրան, յեթե ապավիներ այդ իշխանին:

Ցերբ կաթուղիկոսը հայտնեց Սահակ յեպիսկոպոսին յուր վորոշումը և առաջարկեց նրան «խուսա տալ աստուածո բարկութեունեց» յուր հետ միասին, սրբազանը պատասխանեց.

— Ցես կմնամ իմ ժողովրդի հետ: Ցերբ նա կռվի, յես կաղոթեմ. յերբ մեռնի, կմեռնեմ նրա հետ միասին...:

Նույն վորոշումն արին կաթուղիկոսի հետևորդներից Մով-

սես վարդապետը, Թեոդորոս սարկավագը, յերկու յեղբայր՝ Մովսես և Դավիթ քահանաները իրանց աշխարհական յեղբոր՝ Սարգսի հետ, և մի քանի ուրիշները:

Բայց և այնպես նույն ավուր գիշերը կաթուղիկոսը յուր յերկչոտ մերձավորները ժողովելով, նրանց հետ միասին խուսյ տվավ գնալ Բաղարան:

Հետևյալ առավոտ մի քանի գունդ զինվորներ հառաջանում եյին գնալ Բյուրական: Ամբոցականները հեռվից նրանց տեսնելով՝ կարծեցին թե Թշնամու հառաջապահներն են և սկսան ատրնատով գնալ մարտկոցները վառել: Բայց յերբ այդ գնդերը մոտեցան, նրանք զարմանալով նկատեցին վոսմանիկների դրոշակները և ուրախությամբ լցվեցան: Գնդողները վոչ թե Թշնամիներ, այլ հայ զորքեր եյին. բայց վո՞ր իշխանի զորքերը, վոչ վոք չգիտեր:

Յերբ նրանք Բյուրականի պարսպներին հասան, ամբոցականները զարմանալով տեսան, վոր մի քանի հարյուր հոգուց բաղկացած այդ զորագունդը վոչ պետ ունի, վոչ գլխավոր, այլ մի ինչ վոր խարտաղանդվետ մարդ, խաչանիշ դրոշը ձեռին, առաջնորդում և նրանց:

Գնդը ամբոցի դռները բացին ոգնության հասնող զորքը ներս ընդունելու, Սահակ սրբազանը գնդի դրոշակակիր առաջնորդը առաջանալով, ասաց.

— Այո՛ ինչ եմ տեսնում... հայր-Սալոմոն: Ճղնավորը զորքո՞ւմ և դաշնե՛լ...

— Այո՛, սրբազան. յեկեղեցվո ազատության պաշտպանող զորքին ճղնավորները պիտի առաջնորդեն, պատասխանեց խարտաղանդվետ հայրը և պատմեց նրան, թե ի՛նչպես եր ժողովել այդ զորագունդը:

Սալոմոն ճղնավորը Սաղատոան աքսորված մի հայ քահանա յեր, վոր բախտի բերմամբ ազատություն գտնելով՝ վերադարձել եր հայրենիք և յուր օրերը վանքերում անցնում եր ճղնությամբ:

Լսելով Այրիվանքի կատարածը և հայոց կաթուղիկոսի հրած հալածանքները, նրա մեջ վառվեց ազգասիրությունը ոգնելու նախկին յուսանդը և նա սկսավ թախտառել շեներն ու ավանները և հորդորել ժողովրդին զենքի դիմելու և իրանց պաշտպանելու, քանի վոր իշխանները մերժում եյին նրանց այդ պաշտպանությունը:

Ճշնավորին ընկերացան մի քանի ազատ ղինվորներ, որոնց չնորհիվ նա հետզհետե կազմակերպեց մի դունդ, որ ազնության եր հասնում հարձակման ենթարկվող դյուղացիներին։ Ճերբ լուր տարածվեց, թե Բեչիրը դիմում է Բյուրական կաթուղիկոսին ձերբակալելու, ճշնավորը հրավեր կարդաց յուր դնդին՝ գնալ հայրապետին ազնության, որովհետև նա էլ նուչնչափ լքյալ ու անազնական եր, որքան զեղծուկ ժողովուրդը։

Այս հրավերը սիրով ընդունվեցավ գնդի կողմից։

Բացի այդ, ճշնավորի խմբին միացան նաև ավաններում դտնվող ուրիշ ազատ զորքեր, որոնք «մինչև այսօր յերկրի իշխանների համար կռվեցինք, այժմ էլ յեկեղեցվո իշխանի համար կռվենք» ասելով, հարել եյին խաչանիշ դրոշին և դիմել Բյուրական։

Ճշնավորի հետ յեկած զորքը վ. Հարթանի շուրջը պատած սպասում եր, որ վեհափառը յելնե և որհնե իրանց։ Այդ մի բնական և իրավացի ցանկություն եր այն զորականի համար, որ ինքնակամ յեկել եր յուր յեկեղեցին և նրա պետը պաշտպանելու։ Բայց որքա՞ն մեծ յեղավ Սոլոմոն Հոր ցավը, յերբ դռան յեպիսկոպոսը հայտնեց նրան, թե վեհափառը խույս է տվել Բագարան։

— Իմ զորքերը կցրվին, յեթե այդ իմանան, ասաց նա յեպիսկոպոսին. նրանք յեկել են այստեղ վեհափառին պաշտպանելու։ Իսկ յեթե նրանց հայտնվի, թե կաթուղիկոսը ձգել և միաբանությունը յուր անձն ազատելու համար, նրանք դուցե վերադառնան հենց այս վայրկենին։

— Ի՞նչ անենք ուրեմն. մենք կարող ենք այդ զորքի ողնության, հարցրեց յեպիսկոպոսը։

Փոքր մտածելուց յետո ճշնավորը պատասխանեց.

— Պետք է հայտնել նրանց, թե վեհափառը հիվանդ և ևս յելնել չե կարող։ Այս անմեղ սուտը ոգուտ կբերե մեզ։

— Ձե՛, հայր Սոլոմոն, չկա մի սուտ, որ հանցանք չհամարվի, և չկա հանցանք, որ անպատիժ մնա, նկատեց յեպիսկոպոսը։ Յես այդ սիրասեր զորքին խաբել չեմ կարող։ Ավելը լավ է, հայտնենք նրան ճշմարտությունը. իսկ մեր պաշտպանության գործը թողնենք նրա խղճին։

— Այդ միևնույն է, թե մենք մեր ձեռքով Բյուրականը հանձնենք Թշնամուն։

— Ինչ անենք ուրեմն, հարցրեց յեպիսկոպոսը տարակուսելով։

— Վոչինչ այլևս անելու չունինք. մնում է, վոր յես ինքս գործեմ այդ հանցանքը, յեթե արդարև դա մի հանցանք է, ապաց Ճղնավորը։ Ապա դուրս գալով վիհարանի բակը, հայտնեց գործքերին, թե ժվիհափառը հիվանդ է և իմ բերանով ուղարկում է ձեզ յուր հայրական որհնությունը»։

Գործքը, իհարկե, հավատաց Ճղնավորին և շատերը նրանցից յեկան այն համոզման, թե Թշնամու հարձակման լուրը վախեցրել է կաթուղիկոսին։

Այս համոզումը, մինչև անգամ, բորբոքեց նրանց մեջ վրեժխնդրության կրակը։

Նույն որն նեթ գործքերը կարգավորեցին։ Թե՛ ամրոցում յեղածները և թե՛ նորեկները բաժանեցին մի քանի խմբերի, վորոնց և կարգեցին զանազան տեղերում. այն է՝ վոմանց աշտարակների մեջ, վոմանց պարիսպների վրա և մնացյալներին՝ դռների առաջ կամ գաղտնի ծածկարաններում։

Ընդհանուր հրամանատարությունը հանձն առան տեղական գործքերի վրա՝ Թևոդորոս սարկավագը, վոր քաջ զինաշարժ եր, իսկ յեկվորների վրա՝ Սոլոմոն Ճղնավորը։

Արդեն ամեն ինչ պատրաստ եր, յերբ Թշնամին յերևաց, վոր հառաջանում եր Վաղարշապատի կողմից։

Իսկույն ամեն մի մարդ յուր տեղը բռնեց։

Սահակ յեպիսկոպոսը հրամայել եր, վոր ամրոցի հոգևորականներից նրանք, վորոնք զենք չեյին կրում, ժողովվին յեկեղեցի և հսկումն կատարեն։ Այդ հսկումը պիտի շարունակվեր բոլոր ժամանակ, քանի գործքը կռվում եր։ Կոչնակի ձայնն առնելուն պես յեկեղեցին աղոթողներով լցվեցավ։ Այդտեղ եյին ինչպես հսկումն կատարողները, նույնպես և այն կանայք ու ծերունիք, վորոնք գործքին պիտանի լինել չեյին կարող։ Ինքը յեպիսկոպոսը առաջնորդում եր աղոթողներին։

Թշնամու գործքը մոտենալուն պես հարձակումն սկսավ։ Բեւչերը կարծելով, թե կաթուղիկոսը ամրոցումն է և թե վերջինս թափուր և պաշտպանությունից միջոցներից, վորոշել եր հանկարծական հարձակումով վախեցնել կաթուղիկոսին և ստիպել նրան ինքնակամ անձնատուր լինելու։ Գոռոզ հաղարացին ավելորդ եր համարում մինչև անգամ բանակցություն սկսել նրա հետ։ Նա մտածում եր, թե իրավունք ունի հարձակվելու և կալանավո-

բելու նրան, ինչպես յուր վերջին ծառային. ինչ հարկ կար քաղաքավարական ձևեր դործ դնելու։

Բայց վորքա՜ն մեծ յեղավ նրա զարմանքը, յերբ տեսավ, վոր Բյուրականում այնպես չեն հանդիպում իրան, ինչպես Այրիվանքում, վոր ամրոցի պարիսպներից ու աշտարակներից տեղում է յուր զորքի վրա նետերի սաստիկ տարափ և հարյուրավոր սվիններ ու գեղարդներ ոդի մեջ թռչելով՝ շամփրում են հարձակվողների կրծքերն ու թիկունքը։ Այս դեռ բոլորը չեր։ Բերդի դռան աշտարակից թափվեցավ դուրը ջախջախել ճնշող զորքի վրա կպրածյութի կրակվող հեղեղ, վոր շատերին տեղն ու տեղը այրեց։

— Ուրեմն մենք դործ ունինք վոչ թե անպաշտպան կաթուղիկոսի, այլ զինավառյալ մի ամրոցի հետ, ասաց Բեչիրը յուր մերձավորներին. յետ քաշվենք, բանակ դնենք և կանոնավոր հարձակման պատրաստվենք։

Այս ասելով նա նահանջի փող հնչեցրեց և զորքերը պարիսպներից հեռացան։ Ամրոցականները ուրախության աղաղակ բարձրացրին և սկսան ծաղրել հաղարացիներին, անվանելով նրանց «յերկչոտ ու կնամարդի»։

Թշնամին վոչինչ չեր պատասխանում. նա միայն կրճատում եր առամները և վրեժխնդրության սպառնում։

Նույն ավուր յերեկոյան Բյուրականի պարիսպների վրա վառվեցան հարյուրավոր կրակներ և զորքն ու ժողովուրդը սկսավ ուրախության տոն կատարել։

Բայց Թշնամու բանակում ուրիշ դործի վրա եյին, բազմաթիվ վարպետներ զբաղված եյին բաբաններ, պալիսորներ և ուրիշ պարապահար դործիքներ պատրաստելով։ Կատուցանում եյին, մինչև անգամ, մի կրիա և փայտե շարժական աշտարակ։ Զորքը պարապած եր կախարաններ ու վերելակներ պատրաստելով, իսկ ինքը Բեչիրը անձամբ հսկում եր այդ աշխատությանց վրա։

Հետևյալ առավոտ ամրոցականները տեսան, վոր Թշնամին մի դիշերվա մեջ բավական դործ և կատարել և վոր շարունակվող աշխատությունները հետզհետե սպառնացող կերպարանք են առնում։ Բայց այդ բաներից նրանք չվախեցան. այլ իրանք ել իրանց կողմից սկսան համապատասխան պատրաստություններ տեսնել։ Ամենից առաջ աշխատեցին հրանյութի պաշարն ավելացնել և պարիսպների տակ դաղտնի անցքեր բանալով՝ կրկան

այրելու կամ աշտարակը կործանելու մասին հարկ չեղածը հարցալ։ Դարբիններն զբաղված էին յերկաթե կարթեր կամ ջախջախող գործիներ կռելով։ Կանայք հնոտիներից գնդակներ էին պատրաստում և յեռացրած ճարպի կամ ձյութի մեջ թաթախում։ Ջորքն այդ ամենը փոխադրում էր պարիսպների կամ աշտարակների վրա։ Ամեն տեղ աշխատանքը յեռում էր. ամենքն էլ մասնակցում էին մի վորոշ գործի։

Երեկ որից յետ վերջացրել Թշնամին նորեն սկսալ մոտենալ և առաջ վարել ռազմական գործիները։ Մի հարյուր հոգի զբաղած էին տավարակ ու լայնադիր կրիան գլաններով վրա գլորելով. մի հարյուրը առաջ էր վարում անիվների վրա հաստատած յեհարկյան աշտարակը։ Մի խումբ բերում էր բաբանն ու խոյը, մի ուրիշը պալիսաները, մի յերրորդը՝ ջրով լի տիկերը, վորոնցով պետք է պարիսպներից թափվող կրակը հանդցնեին. իսկ գենք չարժող զորականն սկսում էր ամրոցի շուրջը պատել։

Այդ միջոցին Բյուրականի յեկեղեցում հանդիսավոր պատրաստ էր մատուցանում Սահակ յեպիսկոպոսը։ Ժողովրդի հետ միասին գնում էր յեկեղեցում նաև զորքը։ Նա յեկել էր վերջին անգամ պատարագ տեսնելու, վերջին անգամ յուր սուրբ նախահարց հոգերուղխ յերդերը լսելու և փրկչի կենարար մարմնին ու արյանը հաղորդվելու։

Բացակա էին միայն պահնորդ զորքերը, վորոնք հսկում էին ամրոցի դռներին և Թշնամու շարժմանը։

Ջորքին հաղորդություն տալուց առաջ Սահակ յեպիսկոպոսը խոսեց նրա հետ բեմի վրայից.

— «Ձեր հարյուր յոթանասուն տարի առաջ, ով իմ սիրելի զավակներ, պատրաստվեցան Թշնամու հետ կռվելու Վարդանանց քաջերը։ Նրանք էլ ձեզ նման նախ աստուծո ողնության և ապա իրանց բազկի զորության դիմեցին։ Նրանք էլ աշխարհային փառքի կամ անձնական շահու համար չէին կռվում, այլ հայրենիքի և յեկեղեցու ազատության համար։ Ինչպես այսօր, այնպես էլ այն ժամանակ, Թշնամին կամենում էր այդ ազատությունը խլել, հայ ազգն ստրկացնել, բայց Վարդանանց քաջերը թույլ չտվին նրան այդ անելու։ «Ավելի լավ է ազատ մեռնենք, քան ստրուկ ապրենք», ասացին նրանք և անկեղծ սրտով հարձակվեցան Թշնամու դեմ, վոր կրկնապատիկ զորավոր էր իրանցից։—«Ջախջախենք չեթանոսների բազմությունից,

մահկանացուի ահավոր օրից, ասում եր Վարդանը յուր զորքերին ,դի յեթե աստված մեզ ողնե, մենք նրանց կստահկենք և ճշմարտության կողմը կբարձրանա: Բայց յեթե հասած է մեր մեռնելու ժամը, ապա ավելի լավ է, վոր մեռնենք սուրբ կռվի մեջ և քաջության հետ վատության չխառնենք...»: Եվ նրանք քաջարար կռվեցին. բազմաթիվ Քշնամիներ առաստկեցին և իրանք էլ քաջությամբ մեռան՝ սրերը ձեռքներին, հարվածները կրծքի մեջ... բայց նրանց անունը անմահ մնաց մինչև այսօր և անմահ պիտի մնա հավիտյան... Ո՞վ կկիմանար աշխարհում, թե յեղել են Վարդանանք, յեթե նրանք յերկչոտությամբ միայն իրանց անձն ապրեցնելին: Ձե՞ վոր նրանցից առաջ և հետո ապրել և մեռել են միլիոնավոր մարդիկ, ո՞վ է դրանց անունը հիշում: Իսկ Վարդանանց քաջերին չեն մոռանում, վորովհետև նրանք կռվել ու մեռել են ամենասուրբ գործի՝ հայրենիքի ազատության համար: Դուք էլ ահավասիկ կամենում եք հավատարվել Վարդանանց. դուք էլ նրանց նման պատրաստվել եք յեկեղեցու և հայրենի ազատությունը պաշտպանելու, դուք էլ կամենում եք անմահ անուն ժառանգել աղգի մեջ... Ուրեմն մի վախենաք քշնամու զորությունից, նրա ահավոր պատրաստությունից: Ձեր գործն արդար է և կռիվն իրավացի. իսկ աստված զորավիգ է լինում արդարության: Ցերեկ մինչև անդամ մահ հասնե ձեզ այս կռվում, ուրախությամբ ընդունեցեք նրան, դի դրա փոխարեն յերկնքում անանց կյանք, իսկ յերկրում անմահ անուն պիտի ժառանգեք: Այս հանդիսավոր ժամուն և աստուծո սեղանի առաջ յես էլ կրկնում եմ սուրբ Ղևոնդ յերեցի այն խոսքերը, վոր նա ուղղեց Վարդանանց քաջերին.

«Մի՛ թուլությամբ լքանիցեմք, յեղբարք, այլ պինդությամբ սրտիվ և հաստատուն հավատով կամակար հարճակեսցուք ի վերա Քշնամյացն, վոր հարուցյալ գան ի վերա մեղ: Մեր հույս մեղ կրկին յերևի. յեթե մեռանիմք՝ կյամք, և յեթե մեռուցանեմք, մեղ նույն կյանք առաջիկան...»:

«Մոտեցեք ուրեմն ճշմարտության և սուրբ իրավանց համար մեռնող վրկչի մարմնին ու արյանը. հաղորդվեցեք նրան. և այդ հաղորդությունը թող արիացնե ձեր սրտերը, ուժ տա ձեր բազկին և հաղթություն՝ ձեր սրին...»:

Ցերը պատարագիչ սրբազանը ս. հաղորդության սկիհը ձեռին խոնարհեց բեմի վրա, զորքերը կարգով առաջ յեկան և հաղորդվեցան: Նրանց հետևից ամբողջ ժողովուրդը՝ սկսած

փոքրից մինչև մեծը, վորովհետև ամենքն էլ պատրաստվում էին որհատական կռվի։

Փոքր ժամանակից յետ զորքերն արդեն պարսպի և մարտկոցների վրա էին։

Սրևն արդեն բարձրացել եր, յերբ Թշնամու նախահարձակ զնդերն ամրոցի շուրջը պատեցին և սկսան նետաձիգ լինել դեպի պարսպի հայ զինվորները։ Վերջիններս պատասխանեցին նրանց նույն զենքով։

Ապա հետզհետե մոտեցան կանոնավոր խմբերը, վորոնց մի մի շարքը ասպարավոկ անելով՝ ծածկում եր թե՛ իրան և թե՛ հետևող խմբերին։ Վերջիններս այդպիսով պատսպարված՝ նետաձիգ էին լինում անընդհատ։ Այդ դեպքում պաշարյալներին պաշտպանում էին միայն պարսպի ատամները։

Մի 'ու ժամանակ հակառակորդներն զբաղված էին այս հանդիսա ուր և առով։ Բայց ահա մոտեցրին պարսպին մի ասլարադուխ խոյ։ Դա վոչ այլ ինչ եր, յեթե վոչ մի ահագին ղերան, վոր հաստ շղթաներով կախված եր անիվների վրա ամրացրած մի ծածկի առաստաղից և դլխին հագցրած մի հաստ ու սրածայր յերկաթ։ Այդ կախարանավոր դերանը պարսպին մոտեցնելով նրա յեռանից չվանով քաշում էին ատանյակ մարդիկ և հանկարծ բաց թողելով՝ յերկաթե դլուխը զարկում պատին։ Այդպիսով նրանք քարերը խախտելով աշխատում էին պարիսպը կործանել։

Ուրիշ կողմերից մոտեցնում էին բարաններ ու պալխարաններ՝ լարած արջառի ամուր կաշերով։ Դրանց վրա դնում էին սահաղին քարեր և ուժգին թափով զարկում պարսպի շուրջերին։

Պարապահար զործիների շուրջը վխտում էին բազմաթիվ զորքեր։ Նրանցից վոմանք զործիներն էին շարժում, վոմանք զործավորներին պատսպարում և վոմանք զործիներն դեմ խոզախող մարտիկները վանում։

Բայց հաղիվ առաջին խոյը սկսել եր յուր հարվածները և ահա պարսպի վրայից թափեցին նրա վրա կրակված կպրի հնդող և նավթով թաթախուն խոտի խրճիկներ, վորոնք խոյի ատախտակե ծածկը վառելով, ահագին հրդեհ առաջացրին։ Ջնջելով վոր հրշեջները իրանց տակերը դասարկելով աշխատեցին հրդեհը հանգցնել, այնուամենայնիվ բոցը լափեց խոյի ծածկն ու կախարանը և զործին անպիտանացած ընկավ դետնի վրա։

Վոչնչացած խոյին փոխարինեց մի ուրիշը, վորի ծածկը

պատած եր Թրջած Թաղիքով և տամկոցած կաշիներով։ Ամբոցականները նրա դեմ եվ սկսան մրցել համատատախան հնարներով։

Իսկ քարեր արձակող պալիստրների դեմ մեյն մի միջոց ունեյին նրանք. այն է՝ չվաններով կապում ու կախում եյին պարսպից խոռի ահագին խուրձեր, վորոնց դիպչելով պալիստրի ռումբը, կորցնում եր յուր Թափի զորությունը և այդպիսով անվնաս դառնում պարսպի համար։ Բայց Թշնամին յուր յեր-կարաբուն ջահերով վառում եր այդ խուրձերը, վորից հետո ամբոցականները չվանը կտրելով՝ վայր եյին ձգում հրդեհված խոռը և ուրիշ խուրձեր փոխարինում նրանց։

Մինչդեռ Թշնամին մի կողմից յուր պարսպահար գործիներով աշխատում եր պարիսպներն ու պատնեշները վլցնել, մյուս կողմից նրա ավելի խիղախ խմբերը սանդուխքներ ու վերելակներ եյին ամրացնում պարսպի ու աշտարակների վրա և աշխատում եյին դեպի վեր բարձրանալ։ Նրանք վահանները գլխներին և սուրը ձեռքներին բռնած մագլցում եյին այդ սանդուխքները և զարմանալի արիությամբ դեպի վեր սուրալով՝ աշխատում եյին զորով ներս Թռչել դեպի ամրոցը։

Բայց հայ զինվորները ժամանակ չեյին տալիս այդ քայլերին։ Ցերկաթե ահագին ձողերով, սվիններով ու նիզակներով չարունակ հարվածում, վայր եյին գլորում նրանց, կամ յերկաթե ժանիքավոր կարթերով նրանց գլուխն ու մարմինը շամփրելով՝ դեպի վեր եյին քաշում և չարաչար սատակում։ Շատ տեղ եվ սանդուխքները գլորելով՝ գետին եյին Թոթափում վրան մագլցողներին։

Թշնամու հարձակումն անընդհատ չարունակվում եր։ Թե՛ դրսից և Թե՛ ներսից կռվում եյին կատաղությամբ։ Վոչ մի կողմը տեղի չեր տալիս մյուսին։ Նեատերի տարակի եր, վոր տեղում եր վերից—վայր և հակառակ. սվիններ ու գեղարդներ եյին, վոր չարունակ Թռչում եյին ոդի մեջ. սանդուխքներ եյին, վոր ջախջախվում, նիզակներ, վոր փշրվում, վահաններ, վոր ջարդվում եյին։

Իսկ բոցն ու կրակը ինչպես մի լայնածավալ հրդեհ պատում եր պարիսպները, պատնեշները և աշտարակները։

Բնչերը տեսնելով վոր բյուրեղականցիների ընդդիմությունը ահագին կոտորած և անում յուր զորքի մեջ, հրամայեց նրան նահանջել այդ օրը։ Պարիսպների տակ կուտակված եյին ահա-

դին թվով դիակներ, վորոնց թշնամին ժողովելով՝ հաղիվ մինչև յերեկո թաղել կարողացավ մի ընդհանուր փոսի մեջ։

Այս հանդամանքը կատաղեցնում եր Բեչիր զորավարին. նա փրփրում և ատամները կրճտում եր։ Բայց ի՞նչ կարող եր անել։ Գաշարյալները իրանց պարտքն եյին կատարում և պաշտպանվում եյին հերոսաբար։

Մի վայրկյան նա մտածեց թողնել Բյուրականին բռնությամբ տիրելու վորոշումը և առաջարկել կաթուղիկոսին անձնատուր լինել խաղաղությամբ։ Նա հավատացած եր, թե կաթուղիկոսը ամրոցումն և և թե ինքը վերջ ի վերջո ալիսի տիրեր նրա դղյակին և ձերբակալեր նրան։ Բայց մեկ ել մտածելով, վոր գաշարյալները կարող են յուր առաջարկությունը մերժել, իրան ել այդպիսով ծաղրել ու վիրավորել, թողեց այդ վորոշումը։

— «Ինքն ուժով կառնեմ և կհատակեմ այս ամրոցը», ասաց նա վերջապես և հրամայեց ավալ զորքին՝ նոր և ատակադուն հարձակման պատրաստվելու։

Հեռվայալ առավոտ, դեռ արևը չծագած, Բեչիրը նորեն յուր զորքերով դեպի բերդը դիմեց։ Նորեն նետաձիգներն ու պարբաշահարները իրանց դործն սկսան։ Բայց այդ, պաշարյալները յերկյուղով տեսան, վոր վիրատեսը աշտարակն ու ահագին կրվան, վորոնց նախընթաց որը թողել եյին պարիսպներից հեռու (վորովհետև հույս ունեյին ավելի թեթև դործիներով պարիսպները փլցնել), արդեն մոտեցնում են՝ առաջինը պարիսպներին, իսկ յերկրորդը՝ բուրդերից մեկին։ Նրանց յերկյուղը վոչ թե աշտարակի ու կրվայի տալիք հարվածներից եր, այլ այն մտատանջությունից, թե չլինի՞ այդ դործիները չմոտեցնեն այն տեղերին, ուր ցանկալի յեր, այսինքն ուր վոր զարան եյին լարել իրանք։ Այս պատճառով ինչպես նախընթաց, նույնպես և այդ որը, հայ զինվորները չմոտեցան պարսպի այն մասին, վոր ամեններից թույլն ու դյուրամատույցն եր, կամենալով մոլորեցնել թշնամուն։ Իսկ վերջինս, վոր որ առաջ արդեն նկատել եր՝ ինչպես այդտեղի հարմարությունը՝ աշտարակից կամուրջ ձգելու համար, նույնպես և այն, վոր զորքերը չեն պաշտպանում այդ մասը, յեկել եր այն յեղրակացության, թե ներսից ուրեմն կուվան չունի պատվերը և այդ և պատճառը, վոր զորք չէ կանդնում այդտեղ։ Ուստի չուտով յեհարկյան մարտկոցը, անելիների վրա տատանելով սկսավ մոտենալ պարսպի այդ մա-

սին։ Գաշարյալները ուրախությանը չափ չկար։ Վորովհետև նա կանդ պիտի առներ հենց այնտեղի վրա, ուր իրանք փորել էին ընդարձակ գետնափոր, վորի վերին յերեսը պահպանված էր ներսից զարկած և հենարաններին վրա հաստատած մի տախտակամածով։ Այդ գետնափորի մեջ տեղ-տեղ դարսված էին նավթով թաթախուն խուրձիկներ։ Ցերեկ աշտարակը կանգնեցնելին գետնափորի վրա, իրանք հենարանները հանելով՝ տախտակամածը պիտի քանդելին։ Այդպիսով հողի ծածքը աշտարակի ծանրության չդիմանալով՝ պիտի փլչեր, վորով և մարտկոցը վայրահակ կործաններ։ Այնուհետև խոտն ու խուրձը կրակելով՝ պիտի այրելին նաև աշտարակը։

Գաշարյալների ակնկալությունն ի դերև չելավ։ Փայտաչերտ մարտկոցը կանգնեցրին պարսպի դյուրամատույց տեղի մոտ, իսկ և իսկ գետնափորի վրա։ Հազարացիների մարտիկները աշտարակը մանելով իրանց գործն սկսան։ Նրա ներքին հարկից սակրերով ու նիզերով փորփրում էին պարսպի հիմքը։ Ցերկրորդ հարկից՝ փոքրիկ խոյերով խախտում էին նրա պրղունքի քարերը։ Այդ յերկու ժամանման աշխատավորներին պաշտպանում էր պաշարյալների հարվածներից տամուկ կաշվով պատած հաստ տախտակամածը, վոր յերկրորդ հարկի հատակից բացվելով՝ կառչում էր պարսպին և այդպիսով ծածկում պարսպահարներին։

Հայ զորքերի մի ստվար խումբ վազեց խնդուն աշտարակի կողմը և սկսավ կռիվ մղել նրա յերրորդ հարկի մարտիկների դեմ, վորոնք աշխատում էին յերկաթապատ կամուրջը պարսպի վրա իջեցնել։

Ցերկու կողմից էլ կատաղի կռիվ սկսավ։ Նետերը տեղում էին աջ ու ձախ. նիզակները ճոճում ու հարվածում. ժանիքավոր սվիններով խփում ու միմյանց կառչում. բայց կռվողներից վոչ մինը տեղի չէր տալիս մյուսին։

Հանկարծ յերկաթե ճողապատ կամուրջն աշտարակի բարձունքից ճռնչալով իջավ պարսպի վրա և հազարացի մարտիկները միմյանց յետևից սկսան նրա վրայով խուժել դեպի պարիսպը։

Այստեղ վերջից հուսահատ կռիվ. ներսիններն դիմադրում էին հերոսաբար, դրսիններն խիզախում համարձակորեն։ Նիզակներ էին՝ վոր փշրվում, վահաններ՝ վոր չախչախվում, սրեր՝ վոր չողում կամ թռչում էին աջ ու ձախ, և մարտիկներ,

վորոնք կամրջի ու պարսպի վրայից թոթափվում էին դեպի վայր: Հաղարացի ընկած զինվորներին չարունակ փոխարինում էին նորերը, վորոնք ներքին հարկից վազում էին դեպի վեր դիվական ճարպկությամբ. մինչդեռ հայ զորաց թիվը գնալով նվազում էր: Վորովհետև մյուս կողմերի վրա կռվողներից արանց աղնության հասնել չէին կարող. ամեն մի խումբ յուր դիմադիր հակառակորդն ուներ: Բայց և այնպես այդ սակավաթիվ քաջերը կռվում էին հուսահատ կատաղությամբ և մինչև նույն ժամանակ զարմանում կամ զայրանում, վոր աշտարակը այդքան ժամանակ կանգուն և մնում յուր տեղը:

Փոքր մի ևս և հայ կորինճները պիտի հաղթահարվեին, և աշտարակի զորքերը վերջին հարվածը տալով նրանց, պիտի խուժեին պարսպից ներս: Բայց ահա՛ հանկարծ լսվեց մի բոմբյուն, ապա մի դղրդոց, և միայնակերտ աշտարակը, ալիքների մեջ ընկղմող հսկայական նավի նման ճոճալով ու տատանելով սկսավ մի կողմից խրվիլ դեպի մեջ և մյուս կողմից հակվելով՝ զարնել պարսպին: Կամուրջն ու ներքին սախտակամածը վշրվեցան, վերին հարկը մյուս յերկուսից բաժանվելով կործանվեցավ, իսկ վերջիններին չրջապատեց մի սոսկալի հրդեհ, վոր սաստկացել էր դեռնափորի մեջ նավթով վողողած խուիլների վառվելուց:

Հաղարացիները այդ տեսնելով հուսահատության աղաղակ բարձրացրին, մինչդեռ հայերն ուրախության ու ցնծության ձայներ էին արձակում: Թեպետ հրշեջների խումբը չրջապատեց իսկույն վառվող աշտարակը և թափեց նրա վրա յուր այծատիկների ջուրը, սակայն հրակը հանդցնել չկարողացավ: Բոցեղեն լեզուները, վորոնք դեռնի մինչից անընդհատ ծառանալով չրջապատել էին աշտարակը, դրսից կես ժամում այրեցին ու մոխիր դարձրին նրան՝ յուր մեջ ունեցած զենքերով ու զորքերով:

Աշտարակից ավելի լավ բախտ չհանդիպեց կրնան, վոր դլխավոր բուրդին մտեցնելով՝ կամենում էին նրա ներքին հարկը խրամատել: Կրնան մի քաջասիրտ և լայնաձիգ տախտակամած եր, մի քանի կանգուն բարձրությամբ, հաստատված ութ ամուր անիվների վրա և չորս կողմից պատած աննի ու թաց կաշվով, վոր նրան վերին կողմից ազատ եր պահում հրդեհից: Այդ ծանրաշարժ դործին առաջ էին մղում դլանների վրա ձգած տախտակների վրայով: Բուրդին կամ պարսպին մոտեցնելուց յետո, նրա տակ մտնում էին մի քանի տասնյակ

մարդիկ, վերանք և բերով ու նիզերով սկսում էին քանդել պատվարը, չվախենալով ամբոցական հարվածներից, վորովհետև հատուցման տախտակամածը պաշտպանում էր նրանց:

Սակայն բյուրականցիք ուրիշ հնար էին մտածել նրան կրակելու համար: Հենց վոր հազարացիք առաջին փոքրիկ խրամատը բացին, իրանք այդ տեղով սկսան թափել ահագին քանակությամբ թեփախառն նավթ: Հեղուկը հոսելով լճացավ կրիայի տակ. ապա մի ակնթարթում կրակեցին նրանք այդ հեղուկը հենց խրամատի բերանում: Բոցը ծավալվելով մտավ կրիայի մեջ: Զարախահար դունդն սկսավ վախչել. շատերն էլ կրակից բռնվեցան, իսկ կրիան մնաց բոցեղեն լեզուների մեջ: Այդ միջոցին բուրդի վերևից սկսավ տեղալ նետերի առատիկ տարափ այն խիղախ խմբերի վրա, վորոնք կարթավոր չվանները ձեռքներին մոտենում էին կրիային՝ կրակների մեջից նրան ազատելու համար: Այդ անել, իհարկե, թույլ չավին նրանց հայերը, և կրիան հետզհետե այրվելով դարձավ մի մոխրակույտ:

Զորապետի կատաղությանը չափ չկար: Արաբական նժույգը հեծած, սուսերամերկ և սրարշավ նա դիմում էր մերթ այս և մերթ այն կողմը, և ահեղ վորոտալով՝ առաջ էր մղում մարտիկներին, վոմանց թշնամանում, վոմանց խրախուսում էր. հայ կուրծքերին որինակ էր տալիս նրանց. վառում, բորբոքում էր պատերազմը: Բայց բոլորն իղուր, բոլորն ապարդյուն: Հայոց նետերն ու կրակը ահագին կոտորած էին անում նրա զորքի մեջ: Շատերը նրանցից ձգում, փախչում էին և զորավարի հրամանն ու սպառնալիքը չէր վերադարձնում դասալիքներին:

Վերջապես մի քանի ժամվա կատաղի կռվից ու խիղախ հարձակումից յետո Բեշիրը հրաման արավ զորքին նահանջ տալու և բանակատեղը դառնալու:

Այդպես էլ կատարվեցավ:

Իսկ բյուրականցիք ուրախության աղաղակներով ծաղր ու ծանակ էին անում նրանց:

Այդ դիշեր Թշնամու բանակը կարծես սուգի մեջ էր, մինչդեռ Բյուրականը ջահերով ու ղամբարներով լուսավորված հաղթության ասն էր կատարում:

Հետևյալ երկու որը Թշնամին հարձակում չարավ, վորովհետև զբաղված էր յուր վնասները դարմանելու և նոր զորաբաժիններ կազմելու հոգսերով:

Չերրորդ և հետևյալ որերը նա չարունակ հարձակվում և

մի քանի ժամ անհաջող կռիվ մղելուց ու հարյուրավոր հոգիներ կորցնելուց յետո, վերադառնում եր բանակ։

Ցոթ որ անցավ այսպես և սակայն Բեչիրը չկարողացավ Բյուրականն առնել։ Ուխերորդին՝ նա պատրաստվում եր բանակը վերցնել և հեռանալ, յերբ մի դժբախտ ու անակնկալ դեպք հայոց բախտի անիվը դարձուց։

Սոլոման Ճղնավորի բերած ղորքերից յերկու հոգի, վորոնք պահանորդ խմբից եյին, վեճի բռնվեցան կաթուղիկոսարանի Թիկնապահների հետ։ Վեճը կռվի փոխվելով՝ բյուրականցիները նորևիններին ծեծեցին։ Վերջիններս առանց լրանց առաջնորդի խնդրին ու թախանձանացը ուշադիր լինելու՝ դիմեցին վեհարան կաթուղիկոսին դանդատվելու։ Սահակ յեպիսկոպոսը դիմավորեց նրանց և յուր քաղցր խոսքերով ու հորդորներով աշխատեց դինվորների սիրտն ամոքել. բայց վերջիններս անդրդվելի մնացին. նրանք կամենում եյին կաթուղիկոսին տեսնել։

Ցերբ վերջապես յեպիսկոպոսը հայտնեց, թե կաթուղիկոսը Բյուրականում չե, հետևապես նրան տեսնել չեն կարող, պահանորդ զինվորները կարծես սառեցան։

«Ի՞նչ. ուրեմն մենք մեր կաթուղիկոսին չեյի՞նք պաշտպանում. ուրեմն մեր անձը վտանգի եյինք յենթարկել մի քանի Թշվառ բյուրականցիների՞ համար...», ասացին նրանք յեպիսկոպոսին և առանց այլևս ուշադիր լինելու նրա խոսքերին լրանց տեղը վերադարձան։

Նույն ավուր յերեկոյան սև խորհուրդ հղացան այդ յերկու հայերը, վորոնք, դժբախտաբար, պահանորդ լինելով՝ վոչ յինդեցումն եյին դտնվել, վոչ յեպիսկոպոսի քարոզը լսել և վոչ հաղորդություն առել։ Նրանց սրտերը վոչնչով չեյին փափկացել այդ որհասական որերում։ Ընդհակառակը, դեռ ավելի խստացել ու անդթացել եյին Թե՛ պատերազմի արյան գոլորշիներով և Թե՛ կաթուղիկոսարանի Թիկնապահներից կրած վերավորանքով։

— Կաթուղիկոսն ինքը վախել և Բաղարան, իսկ յուր ժողովուրդը Թողել Թշնամու առաջ. որինավո՞ր բան և այս, հարցնում եր զինվորներից մինը մյուսին։

— Իհարկե, վոչ։

— Ինչո՞ւ ուրեմն մենք մեր դլուխը մահուն ենք տալիս։ Բեչիրը, յերբ ել լինի, Բյուրականն առնելու և մեզ ամենքիս սուր և քաշելու։ Ցեթե կաթուղիկոսը, վոր հայր ու խնամա-

կալ է, թողնում է ամենքին ու փախչում, մենք ինչո՞ւ չպիտի հետևենք նրա օրինակին։ Ո՞վ կպահե մեր կինն ու զավակները, եթե մենք ապանվինք։ Իհարկե, վոչ վոք։

— Ի՞նչ անենք ուրեմն. փախչի՞նք այստեղից, հարցրեց ընկերը։

Առաջին զինվորը մի վոքր մտածեց և ապա չչնջալով ասաց.

— Մենք կարող ենք մինչև անգամ վրեժխնդիր լինել մեզ ծեծողներին։

— Ի՞նչպես։

— Մինչև անգամ կարող ենք մեզ հարստացնել...

— Բայց ի՞նչ պիտի անենք։

— Բեչիրը հա ամրոցը վերջ ի վերջո պիտի առնե։

— Այո՛։

— Հո բոլորին պիտի կոտորե։

— Այո՛։

— Ե՛, եթե մենք կենդանի մնանք, բյուրակտանցիներին ի՞նչ վնաս։

— Իհարկե վոչինչ։

— Ուրեմն յես կերթամ այս գիշեր Բեչիրի մոտ։

— Հետո՞։

— Ելոսեմ նրա հետ։ Եթե նա կհամաձայնվի տալ մեղնից յուրաքանչյուրին հարյուրական վոսկի, այլև Վոստանում հարյուր արտավար հող, մենք ամրոցը կհանձնենք նրան...։

Գահանորդ զինվորի աչքերն ուրախությունից փայլեցին։ Վոչ խիղճը, վոչ յեղբոր թշվառությունը չչարժեցին այդ վայրկենին նրա սիրտը, վոր հրճվում եր ապագա հարստության ու յերջանկության հուսով։

— Գնա՛. խոկ յես կպահամ աշտարակի վոքրիկ անցքը... Ամրոցում ո՞վ կարող է իմանալ, թե մե՛նք առաջնորդեցինք Բեչիրին... չե՞ վոր շատ տեղերում կան անցքեր և պահանորդներ...

Առացին և կատարեցին։

Կես գիշերվա մեջ հաշարացինների վոդը հնչեց ամրոցում։ Հայոց ղորքն ու ժողովուրդը, վոր հանգիստ քնած եյին, և չեյին յերազում, թե հաղթված թշնամին կհամարձակվի մոտենալ բերդին, ապրսաւհահար վեր թռան տեղներից։ Աղմուկին ու աղաղակը բռնեց ամեն տեղ. հաշարացինները կոտորել սկսան... Ջնայելով վոր հայոց ղորքը ղենքի դիմեց իսկույն, չնայելով

վոր Թեոդորոս սարկավագն ու Սոլոմոն ճգնավորը սրերը ձեռքներին դրքի առաջն անցան, ահավոր ձայնով խրախուսյա կարգացին և սկսան կռվել ներս խուժողների դեմ, այսուամենայնիվ նրանց ընդդիմությունը չկարողացավ ընկճել Քշնամու զորությունը, վոր գնալով աճում և ամեն տեղ դրավում եր, վորովհետև ամբոցի մեծ դռները բացված եյին արդեն և հազարացիք դունդ-դունդ ներս եյին թափվում։

Անցան մի քանի ժամեր. որհասական կռիվն ու հաւասահաս ընդդիմությունը վերջացավ... Ամբոցն ամբողջապես վողողվեցավ արյունով. վողոցներն ու տները լցվեցան դիակներով. վորքան դրքեր ու ժողովուրդ կար ամբոցում, ամենքը գրեթե նահատակվեցան. բայց կրկին չափով հազարացիներ ընկվեցան, վորովհետև ամեն մի հայ դինվոր՝ մեռնելուց առաջ՝ սատակում եր մի քանիսին։

Ցերբ արյան զոլորշիներից արբած հրոսակները ներս խուժեցին յեկեղեցին, Սահակ յեպիսկոպոսը հսկումն եր կատարում այդտեղ։ Նրան շրջապատել եյին ծերունի միաբանները, անդոր կանայք և զառամյալ ծերունիք։ Աղոթք ու պաղատանք, լաց և կոծ իրար միախառնված դղրդեցնում եյին տաճարը։ Հանկարծ շրջապատեցին նրանց առաջնորդներն դինվորները, ահարկու դեմքերով, արյունոտ ձյուն հայացքներով և վայրենի աղաղակով։

Սակայն վոչ սրերի շողալը և վոչ դահիճների սպառնանքը չվախեցրին աղոթող նահատակներին։ Կարծես թե հենց դրան եյ սպասում եյին նրանք։ Ժողովրդի մի մասը դուրս փախավ յեկեղեցուց, մի մասը տեղն ու տեղը սրի ճարակ դարձավ, իսկ յեպիսկոպոսին ու միաբաններին դուրս քաշեցին իրանք, հատած դինվորները, և բերին կանգնեցրին Բեչիրի առաջ։

— Ո՞ւր և ձեր կաթուղիկոսը, հարցրեց նրանց զորապետը։

— Գնաց Բաղարան, պատասխանեցին նրան։

— Այս անդա՞մ եյ ուրեմն փախավ նա իմ ձեռքից... դոչեց Բեչիրը կատաղությամբ... և ապա առաջնորդը կրճտելով մրբմրմաց, հոդ չե, մենք Բաղարան եյ կհրթանք... Այժմ դեռ դուք տուժեցեք։

Այս ասելով նա հրամայեց դինվորներին մերկացնել քոլորին և ծանր տանջանքներով ու անարդ առականքով կոտորել նրանց։

Դինվորները կատարեցին խիստ զորապետի հրամանը։ Առաջին և դառնագույն մահը հասավ Սահակ յեպիսկոպոսին, ապա մյուս միաբաններին։

Այդ օրը, որ 924 թվականի ապրիլի 17-ն էր, միաժամանակ նահատակվեցան բոլոր այն պետավորները, որոնք հակառակելով կաթուղիկոսի հեռանալուն, իրանք մնացել էին Բյուրականում։ Դրանց թվումն էին և Մովսես վարդապետը, Դավիթ և Մովսես քահանաները, նրանց գինվորական Սահակ յեղբայրը և Սալոմոն ճգնավորը։

Թեոդորոս ասրկավագը, որը վիրավոր ընկած էր դիակների մեջ, մահվան հարված ստացավ մի սինլքոր ղորականից։

Բեչիրը Բյուրականն ավերելուց յետո, մեծ ավարով ու բազմաթիվ գերիներով վերադարձավ Դվին։

Ներկայացնելով վոստիկանին յերկու հայ մատնիչներին, զորապետը խնդրեց Ներսեին՝ վարձատրել նրանց։

Ցեվ Ներսեը, արդարև, ըստ արժանվույն գնահատեց այդ թշվառականների մատուցած ծառայությունը։

— Ձեր վարձատրությունը կլինի այն, ինչ որ ստանում են առհասարակ բոլոր մատնիչները, ասաց նա գինվորներին. դուք, որ չկարողացաք հավատարիմ մնալ ձեր տերերին ու հավատակիցներին, հարկավ, մեզ ավելի ևս անհավատարիմ կլինիք։

Այս ասելով նա հրամայեց դահիճներին խոշտանգել գերիներին։

Ե

ՀԵՐՈՍԻ ՎՈՐՈՉՈՒՄԸ

Մի քանի որ էր, ինչ Գևորգ Մարզպետունին և Վահրամ հնարում էին վերադարձնել հին Գառնին։ Նրանց առաքելությունը, ինչպես իմացանք, ապարդյուն էր անցել։ Վո՛չ Աբաս արքայից-արքայը, վո՛չ Աշոտ ապարասպետը, վո՛չ Գադիկ Արծրունին չէին կամեցել միության մեջ մտնել։ Աղձնյաց ու Մոկաց տերերն էլ՝ նրանց նայելով՝ մնացել էին ձեռնպահ։

Ի՞նչ պետք էր անել այժմ։

Այս մասին էր մտածում իշխ. Մարզպետունին, յերբ լուր հասավ, թե Բեչերը Բյուրականն առել, ավերել և քանակիչներին սրի յեն անցկրել։

Այդ լուրը ծանր ապտակություն տրավ իշխանի վրա։

— Ուրեմն ավերումն սկսավ և մենք չկարողացանք գոնե պատմի առաջն առնել... մտածեց նա և խորը հառաչեց։

Դղյակի լուռ և մենավոր մի առանձնատեղում ճեմում էր նա տխուր և մտախոհ։ Հիշում էր մի քանի ամսից ի վեր յուր գործ դրած ջանքերը, անխոնջ աշխատությունները՝ բժժանված ու պատակտված ուժերը միացնելու, յերկիրը ստարկ բռնությունից, իսկ զահը կործանումից ազատելու համար... Հիշում էր նաև յուր կրած անհաջողությունները, և հուսահատությունը պաշարում էր նրան։

Բայց չէ՞ վոր այդ զգացմունքն անծանոթ էր մինչև այդ Մարզպետունի իշխանին։ Չէ՞ վոր նա հավատում էր Քրիստոսի այն խոսքին, թե «վոր հայցե՝ դառնե, վոր թակե, բացցի ...»։ Իսկ ինքը չարունակ հայցեց և, սակայն, վոչինչ ստաց, բոլորի դուռը թակեց և վոչ վոք բացավ նրան...։

— Ուրեմն ստացած կամենում է, վոր այս ազգը կորչի,

վոր նրա հիշատակը յերկրի յերեսից ջնջվի...։ Այո՛, և այդ է պատճառը, վոր նա իշխանների սիրտը կարծրացրել, թագավորին մոլորեցրել, թագուհուն վհատեցրել է...։ Թողնենք ուրեմն ամեն ինչ բախտի կամքին, հեռանանք, քաշվենք մենք էլ մի անկյուն, և տեսնենք թե աստված ինչպե՛ս է պատժում այս ապերախտ ու նահատակ ժողովրդին...»։

Այս հուսահատ մտքերի մեջ եր իշխանը, յերբ սեպուհը մանելով՝ հայտնեց նրան մի ուրիշ նորություն։

— Սյունիքից դարձող մի ղինվոր տխուր լուր է բերել մեզ, ասաց նա Մարզպետունուն։

— Տարորինակ կլիներ, յեթե ուրախ լուր բերեր. վորովհետև չենք սպասում նրան, նկատեց իշխանը տխուր ժպտալով. ի՞նչ է հայտնում ղինվորը։

— Թագավորը կաքավաբերդից հեռանալով՝ յեկել, նստել է Սևան...։

— Սևա՞ն, զարմանալով հարցրեց Մարզպետունին։

— Այո՛, Սևան. և վորոշել է չելնել այլևս այնտեղից։

— Իսկ թագուհի՞ն։

— Նա էլ թագավորի հետ է։

Իշխանը, վոր մինչև այն նստած եր աթոռի վրա, վեր կացավ տեղից և սկսավ անցուդարձ անել սենյակի մեջ։ Նա վոչինչ չեր խոսում, բայց դեմքն արտահայտում եր հուզում և վրդովմունք։

Ցերկար անխոս ճեմելուց յետո նա կանգ առավ հանկարծ սենյակի մեջ և աչքերը սեպուհի վրա սևեռելով՝ հարցրեց.

— Վա՛հրամ, ի՞նչ ես մտածում այժմ անելու։

Սեպուհը չպատասխանեց. նա միայն ուսերը շարժեց։

— Ի՞նչ ես մտածում անելու. պատասխանի՛ր, կրկնեց իշխանը։

— Ցեթե ղորք ունենայինք, յեթե իշխաններից գոնե մի յերկուսը միանային...։

— Ձորք չունինք և իշխանները չեն միանում... այդ արդեն գիտենք... Ուրիշ ի՞նչ գիտես, ա՛յն ասա։

— Ել ուրիշ ի՞նչ ասեմ. մենք միայնակ ենք. «մի ձեռը ծափ չի տալ», «մի ծաղկով գարուն չի գալ»։

Իշխանը մի քայլ առաջ անցավ. ձեռքը դրավ սրին և գլուխը վեր բարձրացնելով՝ հպարտ-հպարտ նայեց սեպուհի վրա։

— Եվ ուրիշ վոչինչ չի՞ս կարող ասել, հարցրեց Նա կրկին։

— Վոչինչ, պատասխանեց սեղուհը։

— Իսկ յես կասեմ, վոր ամի ճևրը ծափ կաած և ամի ծաղկով զարուն կդաձ...։

Սեղուհը ժպտաց։

— Անկարելի յե, տեր Մարդկաուն է։

— Հաստատուն կամքի և անճնվեր աշխատութեյան առաջ անկարելի վոչինչ չկա։

— Մենք ամեն բան արինք և սակայն չշահեցանք վոչինչ։

—Մենք յերկուսս մեսսին, այո՛, ամեն բան արինք. բայց յես, Մարդկաունի իշխանս, ամեն բան չարի. յես դեռ ուրիշ պարտք ունիմ կատարելու։

— Ի՞նչ է մնում քեզ այլևս անելու։

— Այդ մասին կհայտնեմ յես վաղը, հրապարակով, բոլոր ամբոցական զորքերի և Գառնիին ապատանող իշխանատուններ առաջ։

Սեղուհը ճանաչելով իշխանի բնավորութեյունը, հետամուտ չեղավ ավելի հարցափորձելու. բայց հետաքրքրութեյամբ սպասում եր նրա վաղվա հայտարարութեյան։

Հետևյալ առավոտ, իշխանի հրամանով, ժողովվեցան Տըրդատա հովանոցի առաջ Գառնիում գտնվող բոլոր զորքերը իրանց պետերով ու առաջնորդներով։ Այդտեղ հավաքվեցավ և Գառնու ժողովուրդը յուր հոգևորականներով։ Եհկան և բազմեցին հովանոցում նաև դղյակի իշխանազուն սիկնայքն ու յերեսաստաբդները։ Մինչ բանիվ, Գառնին ամբողջապես ամփոփվեցավ արքայաշեն հովանոցի առաջ գտնվող հրապարակում, իսկ դղյակը՝ հովանոցի մեջ։

Մարդկաունի Գևորդ իշխանը հագած եր այդ որը տոնական զգեստ և զրահավորված ամբողջապես։ Նա ծածկած եր պողպատյա, արծաթազարդ սաղավարտ, սպիտակ ցցունքով և նախապատական զինանշանով. հագած եր պողպատյա վերարկու, պղնձյա, փայլուն լանջապանակով և նույնպիսի բազպաններով. սրունքներին ամրացրած յերկաթահյուս զանկապաններ և վոտքերին կարմիր, յերկաթագամ կոշիկ։ Ծանր, վոսկեզօծ սուրը, վոր քարշ եր ընկած նրա կողքից, լրացնում եր իշխանի զինվորական զարդարանքը։ Եվ այդ ամենի մեջ նրա բարձր ու թիկնավետ հասակը՝ դեղեցիկ և պատկառելի դեմքով, խմաստուն և թափանցող հայացքով, հպարտ և չնորհալի շարժվածք-

քով յերեւում եր ավելի հրապուրիչ՝ քան ուրիշ որեւէն տահասարակ։

Ցերբ ամենքը իրանց տեղերը բռնեցին, իշխանն առաջացավ դեպի հովանոցի այունաշարը և աստիճաններից վերնատունի վրա հանդնելով, բարձր ու խրոխտ ձայնով խոսեց.

— Աղնիվ իշխաններ և իշխանուհիք, սիրելի զինակիցներ և ժողովուրդ։ Անցան ահա մի քանի ամիսներ, հորմե հետե Թագավորը բացակա յե Վոստանից։ Ապստամբ իշխաններին նվաճելու համար նա հեռացավ այստեղից. բայց վորովհետև անհաջողության հանդիպեց, ուստի քաշվեցավ կաքավաբերդ և սպասում եր իշխանների ոգնության։ Վոչ վոք տեղից չշարժվեցավ. վոչ վոք յուր Թագավորին չհիշեց։ Ինձ Թվում եր, Թե յեթե մինը մեղանից հանձն առնե միջնորդի պաշտոն և հորդորե բաժանված իշխաններին միանալու, անշուշտ նրանք արքայի շուրջը կժողովվին։ Ցեվ ահա՛ այդ պաշտոնը հանձն առանք յես և աղնիվ սեպուհ Վահրամը։ Ցերկար ճանապարհորդեցինք, ամրողջ Շիրակը, Աղձնիքը, Մոկաց աշխարհը և Վասպուրականը շրջեցինք. բոլոր իշխաններին այցելեցինք. ամենքին խնդրեցինք, հորդորեցինք՝ վոր միանան և Թև ու Թիկունք լինին արքային, պաշտպան՝ հայրենիքին ու դահին. բայց վոչ վոք մեզ լսեց և վոչ վոք մեր խնդիրը հարգեց։ Ամեն մի իշխան յուր ղորքերով ու պաշարով ամրացած և մի անառիկ բերդի մեջ. ամեն վոք այդտեղ ապահով ապրում և յուր համար։ Բայց Թե յերկրի ժողովուրդը մնացել և անխնամ ու անպաշտպան, Թե դահը մնացել և Թավուր և արքան զրկվել աստանդական, այդ մասին վոչ վոք չե մտածում։ Նույնիսկ կաթուղիկոսը միայն յուր փրկության համար հոգալով, չարունակ մի ամրոցից դեպի մյուսն և փախչում։ Նա ել ղլանում և հասարակաց ոգուտի համար հոգալու։ Ցեվ այս ամենի արդյունքը լինում և այն, վոր վոստիկանը գրավում և մայրաքաղաքը, վոր Բեշիրը քանդում ու ավերում և Այրիվանքը, գրավում և Բյուրականը, կոտորում ժողովուրդը, նահատակում և հոգևորականներին, և այսուհետև ել զնալով ավելի պիտի ընդարձակվի յուր ավերումների չրջանը։

Այս ամենը տեսնելով Թագավորը, ավելի ևս հուսահատվում և Ֆաքավաբերդից քաշվում և Սևան։ Այն դյուցազնը, վոր մի որ Թշնամու ահն ու սարսափն եր, վոր չեր ընկճվում վո՛չ մի զորության առաջ, վոր չեր խուսափում վո՛չ մի վտանգից, այժմ ապաստան և վորոնում հոգևոր հայրերի խուցերում, վո-

բովհետև այլևս հույս չէ ատծում յուր զինակիցների վրա...: Ամո՛թ մեզ, հայեր, ամո՛թ, ո՛վ զինակիցներ...

— Ի՞նչ անենք մենք, ի՞նչ կարող ենք անել... ձայն ավին այս ու այն կողմից:

— Ի՞նչ կարող եք անել... լավ հարց է. լսեցեք, յես պիտի պատասխանեմ: Մեր արդի դրությունը հայտնի յե ձեզ բոլորիդ: Հայրենիքը, ժողովուրդը, արքայական և կաթուղիկոսական գահերը վտանգի մեջ են. այդ դիտեք: Գիտեք և այն, վոր յես ձեր բոլորի կողմից, վողջույն հայության կողմից դիմեցի կարող իշխաններին ողնության, աղաչեցի, պաղատեցի նրանց՝ ապառնացող վտանգի առաջն առնել և վոչ վոք ինձ լսեց, վոչ վոք ընդհատցավ: Դատապարտո՞ւմ եք այդ մարդկանց, թե՛ վոչ:

— Այո՛, այո՛, դատապարտում ենք, ձայն ավին այս ու այն կողմից:

— Բարի: Այժմ ուրեմն դառնում եմ դեպի ձեզ, ով Գառնո դինվորք և ժողովուրդ. դառնում եմ նույն խնդիրքով ու աաջակցության համար, վոր մեր իշխանները մերժեցին. այդ իմ վերջին պարտքն է, վոր կատարում եմ. լսեցեք.

«Գառնին ամուր է և անառիկ. թշնամին նրան վնասել չէ կարող, յեթե մեր մատնիչները չդուլաճանան, և յեթե պաշարը չսպառվի: Մատնիչներ չեմ ճանաչում այստեղ, իսկ պաշար շատ ունինք: Թողնենք ուրեմն Գառնո մեջ մեր մի հարյուր պահակ. մուշեղը նրանցով կարող է շատանալ: Իսկ մնացյալ զինվորներին, պետերին ու առաջնորդներին առաջարկում եմ հենց վաղվանից ընդհարման գնել և դաշտն իջնել: Յես ձեզ բոլորիդ համբերի կրաժանեմ, առաջնորդներ կկարգեմ, հրահանգներ կտամ: Բնչերը հրոսակների խմբեր և պատրաստում արքայական զավառներն ավարելու համար. մենք դրանց կհանդիպենք և գնա-գնա կչարգելենք: Չի անցնիլ մի ամիս և մեր բանակը կսպառվանա: Առաջին հաղթանակին կհաջորդե յերկրորդը, յերրորդը և հաղթավոր զինվորներ լինքնակամ հոժարությամբ կդան, կժողովվին մեր դրոշակի տակ... Այնուհետև մեր հաղթությունը հույս կներշնչե նաև թագավորին. նա նորեն դեպի յուր գահը կդառնա, նորեն յուր զորքի դլուխը կանցնի և իշխանները երանք կմխանան նրան... Այս վատքը, ո՛ դառնեցիք, մենք կարող ենք ժառանգել. ո՛ն, ուրեմն, դեպի դործ...»:

Իշխանը լուեց և աչքերը հառեց այս ու այն կողմը, տեսնելու համար, թե ո՞վ է արձագանգ տալիս իրան։

Բայց բոլորը միանման անխոս էին և անշարժ։ Ցերկու հոգի միայն իրանց հրացայտ աչքերը հառել էին իշխանի վրա և շրջապատի լռությունից դրդռված՝ բոլորի վոխարեն, կարծես, կամենում էին թռչել դեպի նրան։ Դրանցից մինը Գոռն էր, վոր կանդնած էր ղինվորականների հետ, և մյուսը՝ Շահանդուխտը, վոր դանվում էր իշխանուհիների խմբում։

Բայց Գևորգ իշխանը դրանց չէր վորոնում. նա հինավուրց ղինվորներին և նրանց առաջ-որդիներին ձայնին էր սպասում։ Սակայն յերբ տեսավ, վոր նրանք լուռ են և չատերը, մինչև անդամ, աշխատում են իրանց հայացքը նրանից թաղցնել, մեղմ ձայնով չարունակեց.

— Չեյի սպասում, թե այստեղ, Գառնիումն էլ այսքան չատ յերկչոտների կհանդիպեմ։ Ուրեմն չկան ձեր մեջ դեթ հարյուր հոգի, վորոնք ապացուցանեյին, թե քաջերի զավակ են իրանք։

— Տե՛ր իշխան, ինչ կարող է անել հարյուրը։ Թո՛ղ հազար ղինվոր ունեցողը դոնե ասպարեզ իջնե և մենք միանանք նրան, ձայն տվավ մի յերիտասարդ հարյուրապետ։

— Ո՛վ վոր չատերի ուժն է պտրտում, ապացուցանում է, վոր ինքը վատարանց մեկն է, գոչեց Մարզպետունին։ Վո՛չ մի ղինվոր, յեթե իրոք նա ղինվոր է, չպետք է սպասե ընկերին, յերբ հայրենիքը վտանգի մեջ է դտնվում։ Ո՛վ վոր ուժ ունի կռվելու, ո՛վ վոր կարող է հարվածը տալ թշնամուն կամ մի նետ ուղղել նրա կրծքին և սակայն թագչում է պարսպի տակ, կամ ձեռքը յետ քաշում, նա մի մատնիչ է։ Կամենո՞ւմ եք ապրել, կամենո՞ւմ եք կյանք վայելել, բարի՛ք։ Եվ ինչո՞ւ համար եք ղենք կրում, ինչո՞ւ անպատվում եք սուրն ու յերկաթը։ Դե՛ն ձգեցեք դրանց, առեք ձեռքերնիդ մուրացկի յեղեգը և դնացեք կանդնեցեք ամիրաների դռանը, գուցե նրանք չնորհ անեն ձեզ իրանց աորուկների թվում կարգելու...։

Ջորքերն ու պետերը մնացին ապշած, նույնիսկ իշխանազունները չէյին հավատում իրանց ականջներին։ Վոչ վոք մինչև այդ չէր լսել իշխանից վորևե ծանր խոսք կամ մի վիրավորանք։ Ի՞նչ էր պատահել այժմ. ինչո՞ւ այդ աստիճան վրդովվել էր նա։ Զգիտեյին։ Շատերն սկսան իրար նայել. մի քանիսը մինչև անգամ փորձ փորձեցին առաջ դալու և նրան իրանց

զժդհուԹյունը հայտնելու։ Բայց իշխանի հրացայտ հայացքը ամեն մի շարժում յուր տեղը մեխեց։ Նա լուեց մի վայրկյան, չուրջ հանեց աչքերը և վահրամ սեպուհին դառնալով դոչեց.

— Տե՛ր սեպուհ, յերեկ ասում եյիր ինձ, Թե ամի ձեռը ծաուի չի տալ, ամի ծաղկով զարուն չի գալ. քո խոսքը կրկնում են այժմ այս արեղացուները, վորոնք սխալմունքով զինվորական են զարձել։ Այժմ յես կամենում եմ ապացուցանել, վոր դուք ամեննդ. ել սխալվում եք։

Այս ասելով իշխանը սուրը հանեց և մի քայլ առաջ անցնելով վորոտաձայն դոչեց.

—Ահա՛ յես միայնակ դնում եմ հազարացոց դեմ. ո՞վ և այն քաջը, վոր կկամենա ինձ հետ միանալ, Թո՛ղ առաջ գա։

— Ե՛ս, հա՛յր իմ, վորոտաձայն դոչեց Գոռը և սուրը հանելով դիմեց դեպի նրան։

— Ի՛մ քաջ... չընջաց իշխանը և գրկախառնելով վորդուն, վոր հուզմունքից շառագունել եր, համբուրեց նրան ջերմագին։

— Ցնծ յես, տեր Մարզպետունի, ասաց վահրամ սեպուհը և մոտեցավ նրան խաղաղ ժպտալով։

— Աղնիվ սեպուհը մի դունդ արժե ինձ համար, պատասխանեց իշխանը և ձեռքը պարզեց դեպի նրան։

— Ցնծ յես, տեր իմ, խոնարհութեամբ մոտեցավ Եեղնիկը։

— Ցնծ մենք, առաջ անցան սեպուհի չորս Թիկնապահները։

— Ցնծ յես... և մենք... այս խոսքերով հետզհետե մոտեցան իշխանին մի քանի դառնեցի, բասեցին և վոտատնիկ զինվորներ։

Ընդհանուր Թիվը յեղավ տասն և ինն։

Վերջապես մոտեցավ Մուշեղ բերդակալը և դիմանոցը հանելով ասաց.

— Սպասում եյի, տեր իշխան, վոր ինձանից ավելի արժանավորները առաջ անցնեն։ Այժմ տեսնում եմ, վոր քաջերի Թիվը լրացավ. ընդունի՛ր ուրեմն ինձ ևս իբրև վերջին ծառա այս անձնվեր և քաջասիրտ խմբի, վոր քո հրամանի և դրոշի տակ սիխտ կռվի։

— Ա՛խ, իմ սիրելի և հավատարիմ Մուշեղ. ա՛խ, տո՛ւր ինձ քո ձեռը։ Քո ակակցությունը Թանկագին և ինձ, զի դու ծնորացել ես կռիվների մեջ։ Անշուշտ, տասված մեզ կզգնե հայրենիքի Թշնամուն հաղԹահարելու, քանի զեղ նման արդարներն ընկերակցում են մեզ։

Իշխանի զինվորների թիվը չեղավ քան։

— Դուք արդեն բավական եք. չես հաղարներ կշխոշխան ձեղմով, բացականչեց Գևորգ իշխանը և դիմելով վահրամ սպուհին ասաց.— գնանք այժմ չերդվելու։

— Ո՞ւր եք դիմում, չեկեղեցին այս կողմն է, նկատեց սեպուհը։

— Վո՛չ, մեր չերդման սեղանը այստեղ է, ասաց իշխանը և մոտեցավ Մաշտոց կաթուղիկոսի շիրմին, որ գտնվում էր հավանոցի արևելյան անկյունում։

— Սիրելի զինակիցներ, դիմեց իշխանը յուր խմբին, չերբ վերջինս շիրիմը շրջապատեց.— մեզ պիտի չերդվեցներ, մեր սրերը պիտի որհներ հայոց հայրապետը, չեթե նա յուր անձի փրկությունը վտանգելով թաքուռում չլիներ այս ու այն կողմը։ Բայց նա հավատարիմ չմնաց յուր կոչման. նա չնմանեց քրիստոսին և անձնվեր հովվին. այդ պատճառով մենք այլևս ներա հոտը լինել չենք կարող։ Այստեղ հանդչում են ամենից առաքինի և ամենից անձնվեր հովվի նշխարները։ Դրե՛ք ձեր սրերը այս սրբազան շիրմի վրա և հենց այստեղ էլ չերդվեցնեք հավատարմություն ձեր ուխտին, որ ե՝ այս վայրկենից իսկ լինել անձնվեր դինվոր և նահատակ հայրենիքի փրկության։ Ձեր սրերը թո՛ղ որհնե սուրբ Մաշտոցը և ձեր ուխտին ու չերդման թող վկա լինին նրա նշխարները։

Զինակիցները հանեցին իսկույն սրերը և կաթուղիկոսի շիրմի վրա դնելով՝ հավատարմություն ուխտեցին իշխանին, աքքային և հայրենիքին։

Ձերբ ամենքը իրանց չերդման խոսքն արտասանեցին, Գևորգ իշխանն առաջ անցավ և բարձ ձայնով ասաց.

— Սիրելի զինակիցներ, չես ձեր չերդումը լսեցի. այժմ էլ դուք իմը լսեցեք. «Ձերդվում եմ ձեր առաջ, չերդվում եմ հավիտենականի անունով, չերդվում եմ իմ հայրենիքի արևով և այս սուրբ դերեզմանով, վոր չես չեմ վերադառնալ այլևս իմ ընտանյաց գիրկը, չեմ մտնիլ իմ հարկի տակ, մինչև վերջին հազարացին չհալածեմ հայրենի սահմաններից։ Թո՛ղ կործանեն ինձ աստված. թո՛ղ քրիստոնյան ինձ Հուդա և հայը՝ վասակ անվանե, չեթե չես չերբեք դրժեմ իմ ուխտին ու չերդմանը։ Ձես պիտի ապացուցանեմ, վոր ամրոցների և իշխանական դռուբյան մեջ չե ամփոփվում հայրենիքի ուժը, այլ նրա վորդիների անձնվիրության մեջ. պիտի ապացուցանեմ, վոր քան

անձնատուր նահատակներն ավելի արժեն, քան քան հազար զինվորներից կազմած բանակը... Ո՛ն, ուրեմն, հառա՛ջ... Հայի ոսկրածը մեղ ոգնական, հայի խաչը մեղ ապավե՛ն...»:

Տակավին իշխանը չէր վերջացրել խոսքը, յերբ որիորդ Շահնդուխտը իշխանուհիների խմբից յելնելով իջավ հովանոցից և մոտենալով ս. Մաշտոցի վիմին, մեղմ ու անուշ ձայնով բացականչեց.

— Տեր իշխան. նեղիր իմ համարձակությանը, վոր, ասկայն, ներշնչից ինձ քո հրավերն ու յերդումը... Կանանց հրամայված չէ խառնվել արանց դործերին և վոչ ել մասնակցել ձարտի արհավիրքներին... Բայց վոչ վոք չի արդելիլ նրանց հայրենիքի համար մեռնել... Ընդունի՛ր և ինձ, աղաչում եմ քեղ, քո մարտիկների խմբում: Դու ասացիր, թե դուլ կարող և հարված տալ թշնամուն կամ մի նետ ուղղել նրա կրծքին և սակայն թաղչում և պարսպի տակ, կամ ձեռքը յետ քաշում, նա մի մտանիչ ե...». արդ՝ յես կարող եմ և՛ հարվածել և՛ նետահարել, ուրեմն և չեմ թաղչիլ պարսպի տակ: Ընդունի՛ր ինձ քո խմբում, տեր իշխան. յեթե յես պիտանի չլինիմ իրը պինդոր, պիտանի կլինիմ իրը հուշածու քույր. յես կկապեմ քո պինդորների վերքերը, յերբ նրանք վիրավոր վերադառնան պաշտից...:

Որիորդը, վոր հուդմունքից շառագունել եր, արդեն նամանում եր այդ վայրկենին մի հրաշագեղ դիցուհու, վոր իջնում եր յերկնքից յուր սիրած մահկանացուն անիրավ ճակատագիրը ջնջելու: Նրա դեղանի աչքերը կրակ եյին թափում. կարմրաթաթախ շուրթերը դեռ դողում եյին և պարկեշտ կուրծքը բարձրանում ու իջնում եր՝ տեղի տալով օրտի անհանդիստ տրոփյունին:

Այս անսպասելի դիմումը այն աստիճան հուղեց իշխանին, վոր նրա քարեղեն աչքերում արցունք ցոլացին: Նա բացավ թեվերը, առավ դեղանուն և սեղմելով կրծքին՝ ճակատը համբուրեց:

— Ո՛վ իմ դյուցազնասիրտ դավակ, բացականչեց նա, հուդմունքից արտասվելով. դու պսակեցիր մեր ուխտը, դու անպարտելի կացուցիր մեր սուրը... Եթե հայոց աշխարհը քեղ նման ծաղիկներ ունի, ապա այս քաջերը թույլ չեն տալ, վոր թշնամին նրա սահմանը կոխոտե... Քեղ իմ խմբի մեջ, սիրեցյալ դավակս, ընդունել չեմ կարող, վորովհետև քո քնքույշ

սիրտը, վոր այդպես չուտ հաղթահարվեց իմ խոսքերից և մանավանդ թե առ հայրենիքդ ունեցած սիրուց, անկարող կլինի տոկալ մարտի արհավիրքներին: Բայց չես գիտ կհանձնեմ մի պաշտոն, վոր նույնչափ ծանրակշիռ է, վորչափ և պինվորությունը. դու արժանի չես նրան:

Այս ասելով իշխանը բռնեց որիորդի ձեռքից, և մինչդեռ ամենքը հիացած նայում էին դյուցազնուհուն, նա հանեց նրան աստիճանների վրա և դառնալով ժողովրդին, բարձրաձայն հայտարարեց.

— Ջինվորք և ժողովուրդ Գառնո. այս մանկամարդ իշխանուհին ձեզ ամենքի հանցանքը քավեց. հայրենիքի փրկության համար նա յուր անձն է առաջարկում վողջակեզ... Անշուշտ դուք էլ ինձ նման չեք կամենալ, վոր այդ գոհն ընդունենք. բայց նրա քույրերին խրախուսելու համար մենք նրան պիտի վարձատրենք. նա ապացուցեց, վոր հարազատ ժառանգ է Սյունյաց դյուցազնոդի նախարարաց. մենք էլ պիտի ապացուցյանենք, վոր դիտենք մեծարել հայկազանց հարազատ նախարարազնի անձնվիրությունը: Արքայի հրամանով չես Գառնո տեր ու բերդակալն եմ: Իմ բացակայության ժամանակ այդ պաշտոնը չես հանձնեցի Մուշեղին. իսկ Մուշեղը, վորովհետև մեր ուխտի մեջ մտավ արդեն, ուստի բերդակալության պաշտոնը հանձնում եմ այժմ Սյունյաց դյուցազնասիրտ որիորդ Շահանդուխտին, վոր կհսկե և կհրամայե այս ամրոցին դղյակի խնամակալությամբ: Շահանդուխտը իմ Գոռի հարանացուն է, հետևապես և իմ տան ժառանգորդը. Գառնո այն ջինվորը կամ բնակիչը, վոր կհամարձակի նրա հրամանին անսասանել՝ այս սրին պատասխանատու կլինի...

Այս ասելով իշխանը, յուր սուրը կամարաձև բռնեց որիորդի դլխին:

«Ցեղ մեր արեգին», բարձրաձայն վորոտացին ուխտի ջինվորները սրերը միանվագ շողացրին ոդի մեջ:

— «Ապրի՛ Սյունյաց որիորդը», դոչեց ժողովուրդը և նրան մասնակցեցին Գառնո ջինվորները, վորոնք այս դեպքերից հետո, մնացել էին ամրոցահար:

Ցերբ իշխանը հրաման արավ նրանց հեռանալ, մի խումբ յերիտասարդ ջինվորներ մոտեցան նրան և խնդրեցին ընդունել իրանց ուխտի մեջ:

Իշխանը մերժեց նրանց խնդիրը՝ ասելով.

— Դուք հետևեցիք վոչ թե իմ, այլ որիորդի որինակին, ուրեմն մնացեք ամրոցում և ծառայեցեք նրան հավատարմությամբ։ Ապագայում, յեթե նա կմիջնորդե ձեր մասին, յես զարձյալ կընդունեմ ձեզ իմ դրոշի տակ։

Ցերբ իշխանի հրամանով ժողովուրդն ու պահակ զինվորները ցրվեցան, ուխտի անդամները բարձրացան հովանոցի սրահը։ Այստեղ իշխանազունների խումբը չրջապատեց նրանց և սկսավ գովություններով քաջերի նվիրումը դրվատել։ Տիկին Մարգարեանն և Մարիամ իշխանուհին զրկեցին և համբուրեցին Գոռին ու Շահանդուխտին, հայտնելով նրանց իրանց հիացումը այդպիսի անվեհեր ընթացքի համար։

Իսկ պատանի Գոռը, վոր մինչև այն մի անբացատրելի հուզման, մի յերանական հաճույքության մեջ եր զտնվում յուր հարևնացուի ցույց տված արիական վարմունքից, մոռացավ հորը և համեստությունից չառաջնորդվելով, ասաց նրան.

— Սիրելյալ հայր իմ, բոլոր Գառնո առաջ դու հանդիսավոր հայտարարեցիր, թե Շահանդուխտը իմ հարևնացուն է և նրան պատվելու համար մեծագույն պաշտոնը տվիր նրան և քեղ ժառանգորդ հռչակեցիր. իմ յերախտագիտությունը այդ մասին անսահման և դեպի քեզ. դու ինձ աշխարհի մեջ ամենապատվավորը և ամենաղորավորը կացուցիր... Այժմ իրավո՛ւնք տուր ինձ, վոր յես էլ իմ կողմից իմ նշանառուքի նվերը տամ իրան իբր առհավատչյա այն միության, վոր դու պիտի օրհնես։

— Տո՛ւր, սիրելյալ զավակս. նվիրի՛ր քո հարևնացուին՝ ինչ վոր հաճելի յես քեզ... պատասխանեց իշխանը խանդակաթ ձայնով։

Գոռը առաջ անցավ և լուծելով յուր մեջքից փոքրիկ վոսկեպատյան վաղակավորը, վոր նվեր եր ստացել հորից, կապեց որիորդի մեջքը առելով.

— Իմ սուրը բավական և ինձ. իսկ այս վաղակավորը թող ծառայե մեղ իբր նշանառուքի առհավատչյա և պաշտպանե իմ բերդակալ հարևնացուին զարանամուտ թշնամիներից։

— Դանակը սուր չեն կրում, Գոռ, բայց յես այս նվերը կկրեմ իբր հիշատակ քո սիրուն և կվերադարձնեմ քեղ այն ժամանակ, յերբ դու քո արշավանքից կվերադառնաս հաղթական վառքով... ասաց Շահանդուխտը ժպտալով և չառաջնորդվելով։

Գիտցի իշխանը, մայր-իշխանուհիները և ուխտի բոլոր ան-

դամները որհնեցին յերկաւաստղների նշանաղբութեան այս հանդիսը և բարեմաղթութիւններ արին նրանց համար։

Իսկ վահրամ սեպուհը, վոր բարյացակամ եր ամեն մի հոյի յերջանկութեան, այնքան ղգացվեցավ այս անակնկալ ու սրբասաչարժ տեսարանից, վոր տարածեց յուր հաղթ բազուկները և դրկեվոլ յերկուսին մխսին, բացականչեց.

— Եկեք հայրենիքն անգամ ինձ չվոդևորե, ձեղ յերջանիկ տեսնելու ցանկութիւնս արդին բավական է, վոր անպարտելի հարվածդ տառնամ յես թշնամու համար։ Եկեք մեր յերկրում շատ կան ձեղ նման սրտեր, ապա թո՛ղ բոլորը յերջանկանան։ Վահրամ սեպուհը չի մեռնիլ, մինչև վոր սուրբ պատկի խաչը ձեր դլխին չդնեն. իսկ յես այդ կանեմ այն ժամանակ, յերբ վերջին հազարացին կհալածեմ այս յերկրից...։

— Ա՛յո՛, այո՛, վերջին հազարացինդ, դոչեցին միաբերան ուխտի դինվորները և ուրախութիւնն ու վոդևորութիւնը ամենքի սրտերը դրավեցին։

Ցերբ Մարիամ ու Գոհար իշխանուհիները իրանց որհնութեան վերջին խոսքն ավարտեցին, Գևորգ իշխանը սուրը պատյանը դրավ և դիմելով դինակիցներին՝ ասաց.

— Սիրելի ընկերներ. մեղ մնում է դարձյալ մի վերջին պարտք կատարելու.— տիրասիրութեան և հավատարմութեան պարտք. այդ այն է՝ վոր մենք, թշնամուն վորոնելուց և նրան պատահելուց առաջ, գնանք մեր թագավորի մոտ և նրա հրամանն ու որհնութիւնն առնենք մեր արշավանքն սկսելու համար։ Վորքան էլ նա հուսահատ, վորքան էլ մեղանից հեռու, այսուամենայնիվ նա մեր թագավորն է և նրա հրամանն ու ցանկութիւնը պիտի առաջնորդե մեր սրերին։

— Գնացե՛ք թագավորը, դոչեցին միաբերան ուխտի դինվորները։

Ցեվ նույն ավուր յերեկոյան ամենքը միասին պրտհավոր-ված ու դինվորված յելան Գառնո քմրոցից և ուղղվեցան դեպի Սևան։

Գեղանի բերդակալուհին այսուհետև նժույդի վրա նստած և պրտհավոր չքախմբով չրջապատված՝ ճանապարհ դրավ ուխտի դինվորներին մինչև մոտակա հանդրվանը, ուր, սիրահարներին սիրելի առանձնութեան մեջ, դրկախառնելով փեսացուին, ուղեկից տվավ նրան յուր անդրանիկ համբույրը և արտասվաթոր աչքերով նրա ճանապարհն որհնելով վերադարձավ։

8

ՎԶՏԵՐԻՑ ԹՇՆԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Լուսնի չառաջուն սկալառակը յերևաց Այծեմնատարի յետևից և Գնդամա մթասատ ծովակն սկսավ լուսավորել։ Ցերեկուն դաշտի արևելյան կողմը հետզհետե վառվեցավ մութ, բոսոր դունով և մանրիկ, մեղմիկ մկանունքներն սկսան թավալել բյուր լուսնի դնդեր։

Սևանի վրա լուսթյուն եր տիրում, Շարժումը դադարել, ճրաղնները հանդել էյին։ Աշնապատականները որվա բաղմանվատ ժամատացուԹյուններից հոդնած, փակվել էյին խոնավ խուցերի մեջ և քնո գլխիկը մտել։ Մատուռներն ու յեկեղեցինները կարծես նիրհում էյին նույնպես և ծովակի ափնածիր ծփանքը սրոր եր յերդում նրանց համար։

Մի յայն կղզու արևելյան կողմը բարձրացող բլրակի վրա, ուր ս. Հարութթյան տաճարն եր և ուր ցերեկյան ընկած էյին մամռապատ խաչարձաններ, լուռ անցուդարձ եր անում մի բարձրահասակ մարդ։ Կղզու աշխարհական բնակիչներից եր նա, թե՞ հոդևոր, անկարելի յեր վորոշել, վորովհետև ծածկած եր լայնաքղանց վերարակու, նման հոդևոր հարց զրծածական աքսմին, և դլխին դրած հասարակ խուլբ, վորպիսին ծածկում էյին անապատականները իրանց խուցերում։ Գարեջև հասակը և սիրուճամ դնացքը միայն ցույց էյին տալիս, վոր անծանոթը վանական մթնոլորտին անընտել մի անճնասիրություն եր։

Ցերկար անցուդարձ անելուց հետո նա յեկավ նստեց բարձրավանդակի այն ծայրին, ուր պարեխավոր ժայռերը ծովի մեջից յելնելով՝ կուտակվում են միմյանց վրա և զրավոր տպատակներ կազմելով, պատում են կղզու արևելյան ու հարավա-

յին կողմերը, և այդպիսով անմատչելի կացուցանում նրան վոչ միայն լաստերին ու նավակներին, այլև մերկանդամ լուղորդին:

Լուռինը այդ ժամանակ հուշիկ բարձրանում էր յերկնակամարի վրա և ծովակի մութ բոսոր գույնը վոխվում էր հետզհետե փայլուն արծաթի և ծավալելով տարածվում դեպի հեռավոր ափերը, վորոնք շրջապատված էին՝ մի կողմից բարձրաշաղաթ լեռներով ու բլուրներով և մյուս կողմից՝ դաշտերով ու սարատափերով: Ամեն տեղ տիրում էր լուռանի խաղաղավետ լույսը: Խարակների բարձրության վրա նստած՝ անծանոթը դիտում էր ծովակի այդ տեսարանը, վոր ակնապարար ու հանդուցիչ լիներից զատ, դյութիչ էր և խորհրդավոր: Նրան թվում էր, թե հենց այդ վայրկենին, յերբ աշխարհը նիրհում է խաղաղական քնով, յերկնում են թաղատից չարության վոգիները, կամ աշխարհ իջնում բարվո հրեշտակները և ակար մահկանացուի վիճակը անորինում՝ մինին բախտ և յերջանկություն, մյուսին վիշտ կամ տանջանք սահմանելով...: Նրան թվում էր, թե հենց այդ խորհրդավոր ժամերումն էլ ճակատագրվեցան իրան վիշտեր ու դժբախտություններ..., Ցնվ տխուր մտքերը պաշարեցին նրան. անցյալի հիշատակները կենդանացան յուր առաջ և յերևակայությունը վառվելով՝ հանդես բերավ՝ նախ դաղար ու հաճոյական և ապա դաժան ու հոգետանջ պատկերներ...

— Ինչո՞ւ, ինչո՞ւ հատա յես նվաստության այս աստիճանին... դոչեց հանկարծ անծանոթը և ձեռքը դեպի ճակատը տանելով՝ կամեցավ կարծես վանել տխուր մտածմունքները, վորոնք անաթուր ամպերի նման՝ դալիս ժողովվում էին այդտեղ՝ յուր սիրտը հուղելու, յուր հոգին վրդովելու համար: Սակայն այդ մտածմունքները չէին ցրվում. տանջող պատկերները չէին հեռանում, ընդհակառակը անհայտանում էին բնության հանդուցիչ տեսարանները—ծովակը՝ յուր արծաթե ալիքներով, լեռները՝ իրանց խրոխտ դագաթներով, լուսինը՝ յուր մեղմ, ազատ շողերով... Նույնիսկ անուշ զեփյուռը, վոր ծովակի ալիքները քերելով՝ զալիս, դուրդուրում էր քարափի խոտերն ու ծաղիկները, վոչ մի զովություն չէր բերում նրան. ժայռերի ստորոտը կոծող ալիքների ձայնն անդամ չէր լսում նա, վորովհետև յուր հոգին այդտեղ, Սևանում էր. նա թրջում, թախտում էր հեռավոր տեղը, հեռավոր դալտաները...

Ցնվ ահա՛ մի քանի քայլ հեռավորության վրա լսվեցավ

մի թուլլ քայլատրուն: Կարծես մոտեցողի կողմից մի զաղանի զորություն լինում, ցնցեց անծանոթին: Նա, վոր վոչինչ չեր զգում և վոչինչ չեր լսում, սթափվեցավ հանկարծ և զլուխը զարձնելով տեսավ, վոր մոտենում և իրան շղարշով ծածկված մի կին:

— Ո՞վ և սա... ձայն տվավ նա և սպաս խոհուն ճանաչելով՝ վեր թռավ տեղից.— Թաղուհի՛, այս դո՛ւ յես... հարցրեց մեղմ ձայնով:

— Այո՛, իմ սիրելյալ Թաղավոր... պատասխանեց վերջինս դրկեն չընդալով:

— Այստե՞ղ... մի՞այնակ, այս դիշերաժամի՞ն...

— Մի՞թե մի՞այնակ եմ յես... չե՞ վոր ինձ մոտ և Աչոտ Թաղավորը...:

— Բայց մինչև այստեղ դա՞լդ... Ո՞ւր են քո նաժիշտները:

— Ցնս ինքս ցանկացա մի՞այնակ զալ այստեղ, կամենում եյի անպատճառ քեզ տեսնել: Մոտ քո առանձնարանը, քո ննջարանը. վոչ մի տեղ չկայիր. բարեպատներն ասացին, վոր դու ամեն դիշեր զրոսնում ես այստեղ մի քանի ժամ... Ցնս այդ չդիտեյի...:

— Այո՛. դեղեցիկ են այստեղի դիշերային տեսարանները... Բայց դու ինչո՞ւ կամենում եյիր տեսնել ինձ անպատճառ... մի՞թե մի նորություն ունիս հաղորդելու:

— Նորությո՞ւն... Վո՛չ:

— Հապա՞:

— Կամենում եյի քեզ տեսնել:

— Ինձ տեսնե՞լ. ի՞նչ կինշանակե այդ:

— Խոսել քեզ հետ մի քանի վայրկյան:

— Չեմ հասկանում... չե՞ վոր ցերեկով տեսնում ես ինձ ամեն ժամ. կարող ես խոսել ամեն վայրկյան: Ինչո՞ւ կամեցար դիշերային հանդիստդ խանգարել:

— Հանդի՞ստ... մի՞թե հանդիստ ունիմ յես, մի՞թե կարող եմ հանդիստ ունենալ...

— Թաղուհի՛...

— Այո՛, վաղո՛ւց կորել են ինձ համար հանդստյան ժամերը...:

—Մեր յերկրում վոչ վոք չունի այժմ հանդստություն:

— Այո՛, վոչ վոք. բայց յերբ Թշնամին հեռանա՝ բոլորը զործել իրանց հանդստությունը կվայելեն...

— Ներանց հետ և դու։

— Ցե՛ռ... Ո՛ւր եր թե այդպես լիներ...

— Մի՛թե վախենում ես ապաղա հարձակումներից։ Նույնիսկ այսօր վոչ մի վտանգ չե սպասում քեզ. Սևանն անառիկ է և անմատչելի։

— Իմ բերդն ու ամրությունները վաղո՛ւց առել ու կործանել է թշնամին... իմ հանդիսատն ու խաղաղությունը կորել և հավիտյան...։

— Ինչի՛ մասին է խոսքը. դու դարձյալ հին ցավի՛ն ես ակնարկում։

— Ո՛չ, թո՛ւյլ տուր, վոր խոսեմ քեզ հետ, դոնե, այս անգամ. թո՛ւյլ տուր, վոր բանամ քեզ իմ սիրտը, վոր համարձակվեմ արտասվել քո առաջ...։

— Թագուհի՛, դու հուզված ես, դու պետք է հանգստանաս։

— Թո՛ղ, աղաչում եմ քեզ. Թո՛ղ վոր հուզվիմ ու տանջվիմ. հանգստությունը միայն տանջանքների մեջ եմ գտնում յես...։

— Բայց ի՞նչ է պատահել. մի՞թե մի վորևէ մարդ մի նոր վիրավորանք հասցրեց քեզ։

— Նոր վիրավորա՞նք. վոչ։ Հին վերքը, հին վիշտն է, վոր չարունակ մաշում, կեղեքում է իմ սիրտը... և, ավա՛ղ, չկա մի ձեռք, վոր դեղ, կամ սպեղանի դնե նրա վրա. յես լքված, մենյակ եմ աշխարհում... բոլորովին մենյակ... Ո՛հ, չդիտես թե ինչպե՛ս ծանր, ինչպես դժվար է մենյակ ապրել աշխարհում...։

Այս խոսքերի հետ թագուհին փղձկեցավ և սկսավ լալ։

— Այդ ի՞նչ է, թագուհի. դու արտասվո՞ւմ ես...։ Այդ աղայություն է. ի՞նչ կասեն՝ յեթե լսեն։ Արի՛. արի՛ առաջնորդեմ քեզ դեպի քո կացարանը. դու պետք է հանգստանաս։

— Թո՛ղ վոր մնամ յես այստեղ. և դու, ո՛վ սիրեցյալ թագավոր, մի՛ հետանար ինձանից. նվիրվիր քո թագուհուն, քո ապրեցրած ամուսնուն, դոնե մի ժամ. նա կամենում է խոսել քեզ հետ. մի՛ մերժիր նրան այդ չնչին խնդիրը։

— Սիբելի՛ Սահանուշ...։

— Սիբելի Սահանո՞ւշ... աստվա՛ծ իմ. մի՞թե դու ինձ այդ անունով կոչեցի՞ր... արդյոք իմ ականջները սխալ չլսեցի՞ն... «Սիբելի» ասացիր, այնպես չի՞. ո՛, ի՛նչպես ուրախանում եմ այդ չնչին, այդ աղքատիկ խոսքի՛ց... սիրտ մի փշր-

բանքով... Ինչո՞ւ, ինչո՞ւ այսքան ուժգր և առեղծվել մեզ առաված... և դու, անշուշտ, խղճում ես ինձ, այնպես չէ՞. առա՛, մի՛ ծածկիր... խղճում ես ինչպես մի մուրացկի... Ո՛, յերեք պիտանայիր, քեզ վորքա՞ն ծանր և այդ ինձ համար, վո՛րքան դժվարաւա՛ր...

— Այսուամենայնիվ, սիրելի Թադուհի, դու չես հանդատանում. դու շարունակ հուզվում ես, այդ քեզ կարող և վնասել: Գնանք, գնանք այստեղից:

— Ո՛հ, վոչ. յես այլևս չեմ հեռանալ այստեղից. չեմ հեռանալ իմ սիրելի Աշոտից... Ո՛հ, նեղի՛ր ինձ. Թո՛ւյլ տուր վոր այս անունով անվանեմ քեզ...: Այո՛, այժմ արդեն հանդիստ եմ. այժմ կարող եմ խոսել. յես այլևս չեմ հուզվիլ. միայն քեզ ու՛ր ինձ քո ձեռը և խոստացի՛ր, վոր համբերությամբ ականջ դնես ինձ:

Արքան սկը պարզեց առանց խոսելու:

Թադուհին առավ այն, սեղմեց յուր դողդոջուն ձեռներում և շարունակեց.

— Շնորհակալ եմ... Տեսնո՛ւմ ես, քե վորպիսի՛ փոքր շնորհով եմ յես դոհանում... Իմ անդուդական դյուցազնի, իմ վհհատանձ Թագավորի անվն ու սիրտը կորցնելուց յետո, ուրախանում եմ, վոր ներվում և ինձ նրա սառն ու անտարբեր սկը անդմել... Ցավ յես կարողանում եմ այդ քեզ ասել... Ցավ դառը Սահականուշը այդ խոստովանությունն անում և յուր Թագավորին... Ո՛, ինչո՞ւ այսքան շատ նվաստացա...

Թադուհին նորեն հեկեկաց, և այլևս երան զսպել չկարողանալով՝ բացավ դողդոջուն բազուկները և փարեց Թագավորին:

— Սահանո՛ւշ... սիրելի՛ Սահանուշ, շշնջաց Թագավորը և սեղմեց նրան յուր կրծքին:

— Աղոթի՛ր, վոր մահ հասնե ինձ այս վայրկենին... կամենում եմ մեռնել քո գրկի մեջ... Այո և իմ միակ ուննչանքը... մրմնջաց Թադուհին և արտասուքը նրա ձայնը խեղդեց:

Տիկնոջ հեկեկանքն ու արտասուքը հուզեցին Թագավորին. նա մնաց սարսափած մեջ և չգիտեր ինչով սփոփել սպարախտ Թադուհուն: Նա սկսավ ավելի ևս քնքշությամբ սեղմել նրան յուր կրծքին, զգալով, կարծես, վոր այդ և միակ զսպմանը, վոր կարող և սիրող որսի հուզումը դադարեցնել:

Եվրևար այս դրության մեջ մնալուց յետո, վերջապես Թագավորը լռությունն ընդհատեց.

— Ինչո՞ւ, սիրելիս, այդքան շատ հուզվեցար։

Այս խոսքը, վոր թեպետ մեղմով ու դրեթե չշնչալով արտասանեց Թագավորը, այսուամենայնիվ կոշտ հնչեց Թագուհու ականջին, նա յուր գլուխը արքայի դրկից հեռացրեց։

— Ինչո՞ւ... Ցավ դու այդ հարցնո՞ւմ ես... Մի՞թե չդիտես, թե ինչից են թշվառ սրտերը հուզվում... մի՞թե իմ արտասուքները ամեն ինչ քեզ չպատմեցին...։

Թագավորը վոչինչ չպատասխանեց։ Նա զգուշանում եր Թագուհու սիրտը նորեն հուզելուց։ Ուստի դեպի խարակները հառաչանալով՝ նստեց ժայռի վրա և լուռ սկսավ դեպի ծովակը նայել։

— Դու ինձ այլևս չե՞ս կամենում լսել, բեկված ձայնով հարցրեց Թագուհին։

— Խոսի՛ր, սիրելիս, ինչ վոր հաճո յես քեզ. բայց անցյալից մի՛ հիշեցնիր ինձ վոչինչ։

— Վոչինչ էլ չպիտի հիշեցնեմ, հարեց խոհուն Թագուհին, և կարծես դոհ Թագավորի այս խոսքից (վորի մեջ նա նրա խոտոտվանությունն եր կարդում՝ յուր դեմ գործած հանցանքների համար), մոտեցավ նրան և ինքն էլ ժայռի վրա նստելով շարունակեց.

— Մի քանի ամիս է, ինչ քեզ հետ եմ յես, սիրելի Թագավոր, և սակայն բոլոր այդ ժամանակ չկարողացա խոսել քեզ այն, ինչ վոր անհրաժեշտ եր խոսել և ինչի մասին վոր յես կել եյի քեզ տեսնելու։ Այժմ, սակայն, համարձակություն առա և կարող եմ խոսել։ Ինդրում եմ միայն չխանգարել ինձ, յեթե մինչև անդամ իմ զրույցն անհաճո լինի քեզ։

— Խոսիր, յես լսում եմ։

— Գոնե հում կարծում եյի, թե հաշտվել եմ արդեն իմ վիճակի հետ. ուստի վորոշեցի մոռանալ իմ անձը և նվիրվել հասարակաց բարվույն։ Այդ նպատակին հասնելու միակ ճանապարհն այն եր՝ վոր դայի և միանայի քեզ հետ, ոտիմեյի անհաղորդություններից ու իշխանների տիրադրուժ վարմունքից վշտացած քո սիրտը և ստիպեյի քեզ վերադառնալ Վոստան, դեպի քո դահն ու արքունիքը... Այնուհետև արդեն հեշտ կլիներ վերսկսել խանգարված գործերը. ժողովուրդն ու զորքը քո գործին եյին սպասում. դու կարող եյիր ոդտվել նրանց ձեռնտվությունից։

Այս մտքով ահա՛ վոգևորված՝ յես յեկա քաջալերել։

Բայց քո սառն ընդունելութիւնը ինձ վշտացրեց: Դու կարծեցիր, թէ յես յանկել եմ ծաղրելու քո պարտութիւնը Ցլիկ-Ամբամից... Ո՛ն այդ կատկածը բաւական չեղաւ, վոր նորից իմ սիրտը տակն ու վրա լինի, վոր հին վերքերը նորոգվին... Ցնվ քանի դու չարունակում եիր քո սառնութիւնն ու անտարբերութիւնը, այնքան ավելի վառվում ու բորբոքվում եր իմ մէջ նախանձի դժոխքը... Ցնվ դրա հետևանքն եղաւ այն, վոր յես քո սիրտը ցավեցնել ուղեցով՝ պատմեցի, թէ ինչպե՛ս մեր բոլոր աշխարհը դիտակ է քո հանցավոր սիրուն, թէ զորքն ու ժողովուրդը զրպռված են քո դեմ, թէ իշխանական ընտանիքները յերես են դարձրել մեզանից, թէ հոդևորականութիւնը դատապարտում է քո վարմունքը... Ամա՛ղ, յես կարծում եիր, թէ այս հայտնութիւններով պիտի զգաստացնեմ քեզ... բայց չարաչար սխալվեցա: Նոստովանում եմ՝ յես դրծեցի իրրև թուլ կին, իրրև սիրող սրտի տեր: Չկարողանալով տանել քո սառնութիւնը, յես մոռացա իմ ուխտն ու նպատակը. յես խաղալիք դարձա նախանձի խռովյալ ալիքներին, վորոնք անդիտաբար կոծում, հարվածում եին իմ թշվառ սիրտը.... Այս բոլորի հետևանքը յեղաւ այն, վոր դու հուսահատվելով՝ վազ մէջ այն վոսոհան չվերադարձար, այլև կաքավաբերդից յերևելով՝ յեկար Սևան, խարազանադրված կրոնավորներէ հետ ապրելու...

Ցնս ճանաչեցի իմ սխալը. տեսա իմ անխորհուրդ վարմանց հետևանքը և չարաչար ղղջացի. բայց արդեն ուշ եր: Միակ միջոցը իմ հանցանքը քավելու այն եր, վոր յես հետևեյի քեզ, տեսնեյի ամեն որ քո՝ դևսի ինձ ունեցած սառնութիւնը, դիտեյի քո անտարբեր հայացքները և տանջվեյի... Քանի՛ քանի՛ անգամ կամեցա մոտենալ և խոսել քեզ հետ, խոստովանել իմ հանցանքը և ներումն հայցել... Ցնվ սակայն դու չարունակ խուսա եիր տալիս ինձանից, չեյիր կամենում մի րոպեկ ինձ հանդիպել, առանձնութեան մէջ իմ ձայնը լսել, իմ արտասուքը տեսնել... Ո՛ր, յեթե դիտենայիր թէ վորքա՛ն տանջվել եմ յես...:

Ամիսներ անցան այսպես և յես չկարողացա դեռ քեզ հետ խոսելու մի վայրկյան գտնել: Բայց յերբ դուժկան հասավ այստեղ և Բյուրականի առումն ու կոտորածը դուժեց, յես սարսափեցի. կարծես յերկնային մի չանթ հարվածեց իմ հոգին. յես հիշեցի իմ ուխտն ու վորոշումը. հիշեցի և իմ դրծած հանցանքը... «Ցնթե նախանձու կիրքը ինձ չհաղթահարեր, Ա-

չոան այժմ յուր զահի վրա կլիներ, հայոց զորքը նրա շուրջը կդասվեր, իշխանները զինակից կլինեին, Թշնամու դեմ արդեն բանակ կշարժվեր...», մտածեցի յես, և հուսահատությունը, քիչ մնաց, դեպի Ծովակի խորը սլիտի մղեր ինձ...: Բայց հետո զղաստացա և վորոշեցի գտնել քեզ անպատճառ քո միայնության մեջ և հարկ յեղածը խոսել: Այս է ահա՛ պատճառը, վոր այժմ յեկա քո մենավոր պրոսանքը խանգարելու: Գուցե այս հետապնդությունը տհաճություն է պատճառում քեզ, բայց յես ստիպված այդ եյի անելու, վորովհետև վտանգը դեռևս մոտ է և հապաղել այլևս անկարելի յե:

— Ի՞նչ է քո խնդիրն ինձանից, հարցրեց Թագավորը:

— Այն, վոր վերադառնաս Վոսպան, բազմես քո զահի վրա, ինչպես սաս արքունյացդ, շուրջդ հավաքես ավազանին, զորքն ու բանակը կարդավորես, Թշնամու առաջն առնես, յերկիրը ապստամբից ազատես...:

— Միով բանիվ, դու կամենում ես, վոր Աշոտ-Յերկաթը Թագավորե նորից:

— Այո՛, Թագավորե այնպես, ինչպես վոր Թագավորում եր առաջ...

— Բարի յե քո ցանկությունը, բայց կատարել նրան անկարող եմ յես:

— Ինչո՞ւ:

— Պատճառները բազմաթիվ են:

— Ծանոթացրո՛ւ ինձ այդ պատճառների հետ, յերեն կաթծում ես, թե դեռ անծանոթ եմ նրանց:

Թագավորը չպատասխանեց: Նա դեմքը դեպի Ծովակը դարձրած մտածում եր:

— Մի՛թե այդ պատճառներն ավելի զորավոր են քան Աշոտ-Յերկաթի կամքը, խոսեց նորեն Թագուհին, կամենալով արքայի ինքնասիրությունը գրգռել:

— Աշոտ-Յերկաթի կա՞մքը... Ո՛չ, նա այժմ ավելի անզոր է՝ քան հովվի յեղեգը, վորին տատանում է նույնիսկ հովի չունչը:

— Ինչո՞ւ հուսահատեցնում ես ինձ, տեր իմ և Թագավոր, չընկաց Թագուհին սրտահույզ ձայնով:

— Ի՛նչ, թե կամենամ քեզ հուսահատեցնել. ճշմարտությունն եմ խոսում ես:

— Բայց դու զրաված եյիր մի որ ինչպես անապատի աւյուծը...

— Վորի մանչյունը դող եր հանում դրացի պաղաններեի տիրոջը, ընդհատեց Թադեվորը:

— Այո՛:

— Ցնել սակայն առյուծն էլ տկարանում ու մեռնում է:

— Անշուշտ. բայց այդ այն ժամանակ, յերբ անցնում են նրա տարիքը, յերբ հասնում է ծերուԹյունը:

— Իսկ յերբ վորսորդի յերեքԹևյանը հարվածում ու ջախջախում է նրա սիրտը:

— Վո՞ր աննկուն վորսորդն արդյոք այդպես ուժգին կրաղացած քեղ հարվածել, հարցրեց Թադուհին խորհրդավոր յեղանակով:

Թադեվորը չպատասխանեց. ոխուր ժպիտը միայն նրա շուրԹները շարժեց:

— Դու չի՞ս կամենում խոսել, հարցրեց Թադուհին:

— Ցնեմ կամենում քո սիրտը վշտացնել, պատասխանեց Թադեվորը՝ չարունակ ծովակին նայելով:

— Աստված իմ, բացականչեց Թադուհին. մի՞Թե դու իմ որոի մասին ես մտածում... այդ արդեն չափազանց է, սիրեցյալ ամուսին, յես ուրախուԹյունից կարող եմ խելագարվել:

— Այո՛, մտածում եմ... կան ճշմարտուԹյուններ, վորոնք վորքան էլ դառնագույն, այսուամենայնիվ, տղամարդը կարող է լսել համբերուԹյամբ, բայց կնոջ ականջը չի հանդուրժել նրանց:

— Ո՛ն ուրեմն, վորը՛ր իմ քաջուԹյունը:

— Բարի. լսի՛ր ուրեմն ինձ:

Այս ասելով Թադեվորը դեմքը դարձուց Թադուհուն և չարունակեց.

— Մի վորը առաջ հարցրիր, Թե ո՞վ է այն վորսորդը, վոր այնքան ուժգին առյուծի սիրտը հարվածեց... այժմ պիտի ասեմ, Թե ո՛վ եր նա: (Թադուհին լռուԹյունը լարեց): Այդ աննկուն վորսորդը կնոջ սերն եր...

— Վո՞ր կնոջ... ընդհատեց հանկարծ Թադուհին:

— Դու արդեն քո քաջուԹյունը կորուսիր, նկատեց Թադեվորը:

— Շարունակի՛ր, յես այլևս չեմ խանգարիլ, հարկց Թադուհին և դլուխը կախեց:

— Մենք, սիրելի բարեկամ, թշվառ խաղալիքներ ենք բնության հզոր ձեռքում, չարունակեց Թաղավորը. իզուր են մարդիկ որենքներ դնում և կարդեր սահմանում՝ կառավարելու համար այն, ինչ վոր ինքը բնությունը պիտի կառավարե և վորի միահեծան տիրապետն է նա... : Մարդկային արտերի մասին և խոսքս... : Դու ինձ սիրում ես, այնպես չե՞ :

— Ինչո՞ւ համար է այդ հարցը :

— Պատասխանի՛ր, սիրո՞ւմ ես թե վոչ :

— Սիրում եմ անսահման սիրով :

— Բարի. ի՞նչ կարող է անել դրա դեմ մարդկանցից սահմանված որենքը : Կարո՞ղ է հրամայել, վոր սիրելուց դադարես :

— Որենքն՝ ընդհակառակը արթնացնում է իմ սերը, վորովհետև ես սիրում եմ իմ որինավոր ամուսնուն :

— Այդ մի դիպված է : Իսկ յեթե հանկարծ սիրում լիներ մի ուրիշի՞ն :

— Քրիստոնեական առաքինությունը, վորին հետևել եմ միշտ, չեր թույլ տալ ինձ մտածել ապորինի սիրո մասին : Իսկ յերբ մարդ չի մտածում ապորինության վրա, ապորինի գործ էլ չի կատարում յերբեք :

— Մտածության համար սահման վորոշելն անկարելի յե : Ի՞նչ անե այն սիրտը, վորին բնությունը հրամայել է սիրել նրան, վոր որենքով իրան չի պատկանում :

— Այդ մի լևենուշկն է, յեթե ասես. «Ինչ աննեն գողերն ու ավազակները, վորոնց սիրտը ցանկացել է հափշտակել ուրիշի ունեցածը...» : Կարո՞ղ ես մի՞թե արդարացնել այդ ավազակներին, յերբ քո հարստահարյալ հպատակը հանե նրանց քո դատաստանի առաջ :

Այդ խոսքերը խոցեցին Թագավորի սիրտը, վորովհետև հարվածն ուղղված եր բուն վերքին... Նա լուռ մի քանի վայրկյան :

— Էլ ուրիշ ասելիք չունի՞ս, հարցրեց Թագուհին մեղմությամբ :

— Ուրիշ ասելի՞ք. ի՛նչպես չե, ունիմ :

— Ասի՛ր ուրեմն :

— Լսի՛ր. դատավորը աչառո՞ղ պիտի լինի, թե՞ անաչառ :

— Անշուշտ, անաչառ :

— Ավազակին պետք է պատժի՞լ, թե՞ վարձատրել :

— Իհարկե պատժել :

— Ինչո՞ւ ուրեմն դու կամենում ես վարձատրել նրան, երբ անաչառ դատավորը հրամայում է պատժել:

— Ի՞նչ ես ուզում ասել, չեմ հասկանում:

— Ձի՞ս հասկանում. բայց չես պարզ խոսեցիր:

— Ո՞վ է ավազակը և ո՞վ դատավորը. ո՞ւմ համար եմ չես վարձատրություն պահանջում... Հարցրեց Թազուհին տարտնուղելով:

— Ճես եմ այդ ավազակը. և ինքս էլ, ահա, իբր անաչառ դատավոր, պատժել եմ ինձ, հեռանալով արքայական դահից և ապավինելով այս անապատին... Ինչո՞ւ կամենում ես հանել ինձ այստեղից և նորից դնել Վոստան առաջնորդել:

— Դու չափազանցում ես:

— Չափազանցո՞ւմ... Ինա՛վ:

— Չափազանցում ես, իմ սիրեցյալ Թազավոր:

— Մի՛ անվանիր ինձ վոչ սիրելի և վոչ Թազավոր. չես մի չարագործ եմ, աստուածուց և մարդկանցից անիծված. ինչո՞ւ համար ես դու ինձ սիրում. ինչո՞ւ ինձ փառք հայթայթելու մասին ես մտածում:

— Հավիտյան պիտի սիրեմ... Մի՞թե կարող ես հրամայել ինձ մոռանալ իմ ամուսնուն...

— Ամուսնո՞ւն... Ո՛հ, մի տանջիր ինձ: Ճես չեմ կարող այդ նախատինքը տանել:

— Նախատի՞նք... մի՞թե ինձանից սիրվելը նախատինք է քեզ համար:

— Վոչ, մեծախոս Թազուհի. այլ նախատինք է այն, վոր իմ անհավատարմությունը դու այդքան անտահման սիրով ես փոխարինում... Ճես հպարտ եմ. չես չեմ կարող տանել այն բարիքը, վոր հատուցվում է ինձ իմ գործած չարության համար:

— Ինձ վոչ մի չարիք չէ հասել քեզանից:

— Այդպիսի խոսքերը չեն կարող ինձ սիրուհել: Ճես այնքան անարի չեմ, վոր իմ գործած հանցանաց չափով պատիժ կրել չկարողանամ: Ճեմ դու կամենում ես սիրուհանք բերել իմ սրտին, ապա տուր ինձ քո հոգվո բոլոր ղորությամբ: Միայն քո տանելությունը, միայն ծանր տանջանքները կարող են դյուրություն տալ իմ սրտին:

— Ճես չեմ կարող քեզ տանել:

— Ասի՛ր, վորովհետև չես չեմ սիրում քեզ:

— Ո՛հ, մի՛ ասիր այդ...

— Չեմ կարող ասել. կես չեմ սիրում քեզ:

— Ո՛հ, անդուք...

— Միակ սիրածս կինը աշխարհում...

— Ո՛, մի՛ արտասանիր նրա անունը, բացականչեց Թագուհին՝ դրեթե ճչալով:

— Այո՛, միակ սիրածս կինը—այդ Աստրամ իշխանուհին է, Սևորդյայց նահապետի աղջիկը:

— Անի՛րատ... անդո՛ւք. ի՞նչ շահ ունիս ինձ տանջելուց... Ինչո՞ւ չես խղճում մի թշվառ, մի լքյալ կնոջ... չե՞ վոր կես մի որ քո ամուսինն եմ...

— Կամենում եմ սիրտդ խոցոտելով՝ դժոխային տանջություն ծնեցնել նրա մեջ. այդ կարող է մեղմել իմ ծանրատուչ վիշտը:

— Մի՛ հուսար... կես չեմ կարող քեզ առել. իսկույր տեղը մի՛ տանջիր իմ հոգին... Ասա՛ միայն վո՞րն է քո ծանրատուչ վիշտը. կես հնար կգտնեմ նրան թեթևացնելու:

— Ավելի վատ:

— Մի՛ համառիր, իմ սիրեցյալ Թագավոր. ամեն մի հիվանդություն ունի յուր դարմանը և ամեն մի վիշտ՝ յուր սփոփանքը: Հարկավոր է միայն բժշկող ճեռք և սիրող սիրտ:

— Ո՞վ կարող է, որինակ, բուժել այն հոգին, վոր տանջվում է խղճի խայթերից: Ո՞վ կարող է սփոփել այն մարդուն, վոր ճանաչում է յուր հանցանքի ծանրությունը, չափում է նրանից հառաջացած չարիքի մեծությունը և զգում է իրան անզոր ու անկարող՝ այդ չարիքը դարմանելու...:

— Ամենքը սխալական են աշխարհում:

— Ցավ ամենին կարելի կե ներել...

— Հեռևապես և քեզ:

— Մի՛ ընդհատիր ինձ. ամենքին կարելի կե ներել, բացի նրան, վոր կոչված է մարդկանց բախտը կառավարելու, վոր պաշտոն ունի ժողովուրդ հովվելու. առաքինության որինակ ու առաջնորդ հանդիսանալու... հասարակաց բարվույն ու կեցքանկության հսկելու...:

Ես այդպիսի մի պատասխանատու անձն եմ. ստացած ինձ պես ու առաջնորդ ես կարդել այս ժողովրդյան: Բայց մի՛թե պատկառ մնացի՞ կես իմ կոչման. մի՞թե իմ սրբազան պաշ-

տանը չանտրղնցի, մի՞թե բաղմաթիվ չարչայց պատճառ չդարձա... Ո՞վ կարող է ինձ ներել. և ինչո՞ւ պիտի ներե:

— Անցյալը հիշելով վոչինչ չես շահիլ, ասաց Թադուհին. մոռացի՛ր այն և աշխատիր մեր ներկա վիճակը բարվոքել:

— Անցյալը մոռանա՞մ... Մի՞թե կարելի, մի՞թե հնարավոր է այդ, բացակայնչեց Թադավորը: Ցերկնքի աստղերը կկոզոտելի՝ վարձատրելու համար այն մարդուն, վոր կկարողանար մոռացնել տալ ինձ իմ անցյալը... վոր յուր դեղերով կամ կախարդական հմայությամբ հնար կգտներ իմ հիշողությունները բթացնելու: Մոռանա՞լ... Այո՛. այդ եմ կամենում. այդ է իմ միակ փափագն ու ցանկությունը: Բայց ո՞վ կարող է լուսմն տալ այդ ցանկության: Ո՛, ինչպես յերջանիկ կլինեյի, յեթե կարողանայի չհիշել այլևս այն, ի՛նչ վոր կատարվել է... Այն, վորի հիշատակը բաղմադիմյան վիշապի պես կրծում, կեղեքում է իմ խիղճը... Կարո՞ղ եմ մի՞թե մոռանալ, վոր յես Սևաստյի, իմ բարյացակամ աղջկան տունն ավերեցի՝ հորն ու վորդուն միասին կուրացնելով... Կարո՞ղ եմ մոռանալ, վոր յես Ամրամի, իմ հավատարիմ դինակից ընտանիքը կործաննեցի, նրա խաղաղության օթևանը դժոխքի վոխարկելով... Կարո՞ղ եմ մոռանալ, վոր յես քո կյանքը թունավորեցի՝ կաթոգին աերդ անարդելով, յերջանկությունդ կապտելով... Վո՞րը արանցից կարող եմ յես չհիշել, կամ վո՞րն արդյոք մոռանալ... Գուցե ա՞յն՝ վոր այս չարիքներն ընորհիվ իմ իշխանների առ գահն ունեցած հավատարմությունը կորուսի և նրանց միությունը խանդարեցի. Թե՞ այն, վոր Ամրամի ապստամբությունը դրդեցի՝ հյուսիսային դավաններից դրկվեցա և Թե վերջապես այն, վոր ռազմական ուժերս թուլացնելով՝ իմ յերկրի սրտում հաստատեցի բռնապետությունը հաստատեցի...: Ասա՛, իմ սիրելի, արանցից վո՞րը մոռանամ. կամ ի՞նչպես չհիշեմ, վոր այս ամենը կատարվել և մի հանցավոր սիրո, մի տմարդ որբևնաղանցության պատճառով...:

Վո՛չ. յես արժանի չեմ ներման. մի՛ աշխատիր մոռացնել ասլ ինձ մեղքերով լի իմ անցյալը: Ցես քրիստոնյա յեմ և խիղճ ունիմ. այդ խիղճը տանջում և ինձ. նրա ձայնը խլացնում և իմ հոգվո լսելիքը. նա հրամայում և ինձ՝ հնազանդ արքայական գահից, փառքերից, պերճությունից և քաշվել, ապաշխարանքի մի անապատ, լալ այնտեղ իմ մեղքերը և խաստամբեր ճգնությամբ քավել նրանց:

Ես լավ գիտեի, որ ես Սևան՝ իմ ապաշխարության վայրը։ Իզուր ես կարծում, թե դու հեռացար Կաքավաբերդից նրա համար, որ դու իմ սառն ընդունելությունից վշտացած՝ պատմեցիր, թե աշխարհը դիտակ է իմ հանցավոր սիրուն, թե ժողովուրդը զրպարված է իմ դեմ, թե իշխաններն ու հոգևորականությունը դատապարտում են ինձ, և այլն։ Վո՛չ, դրանց պատճառով չհեռացար. վո՛չ էլ հուսահատությունն ինձ հալածեց։ Այլ խիղճը, իմ ներքին մարդը... Հանգիստ լիներ խիղճս, արդար լիներին իմ դործերը, այն ժամանակ թեկուզ բոլոր աշխարհը կանգներ իմ դեմ, դու չէիր ընկճվիլ. վո՛չ էլ հուսահատությունը կարող եր իմ հոգին հաղթահարել... Բայց խղճի անողոք խայթերին դու դիմադրել չկարողացար։ Ինձ հալածեցին, մանավանդ, քո տխուր աչքերը, վշտալի հայացքը, դալկահար դեմքը... Ես փախուստ էլի տալիս քեզանից. այո՛, բայց վո՛չ թե նրա համար, որ ատում էլի քեզ, այլ նրա համար, որ ամեն մի քեզ տեսնելիս սիրտս ատելն ու վրա չէր լինում. ամոթն ու խիղճը տանջում էլին ինձ չարաչար։

Վերջապես, դու դեկա այստեղ իմ վշտերը թաղցնելու և հանցանքները լալու։ Կարծեցի, թե այս անդամ կհեռանաս ինձանից և կկրթաս Վոստան, ուր դու դեռ հավատարիմներ ունես։ Բայց իմ հույսը պարապ դելավ. դու չկամեցար թողնել ինձ իմ վշտերի հետ, դու հետևեցիր ինձ իբրև ամուսնասեր կին և ապացուցեցիր հարյուրերորդ անդամ, թե դու արժանի չէիր քո սիրուն, թե բախտը իղուր եր կապել մեզ միմյանց հետ...։

Այս բոլորը դիտենալուց յետո, սիրելի սիկին, անկարելի չե ինձ այլևս մտնել այն աշխարհը, ուրտեղից խիղճս ինձ հալածեց. թո՛ղ ինձ այս ապաշխարանաց վայրում. դուցե կարողանամ իմ մեղքերը քավել. դուցե կարողանամ իմ հոգին դեհենից փրկել...։

— Մի թե ավելի հաճելի չի՞ լինել աստծուն, եթե դու հանցանքդ քավես ուրիշներին բարիք անելով, հարցրեց Թաւուհին։

— Ինչպե՞ս չե, այդ ավելի հաճելի կլինի նրան. դի լավ և բարիք գործել՝ քան անուղտ տեղը լալ։

— Ե՛հ, ուրեմն դարձի՛ր աթոռդ, ձե՛ռքդ առ կառավարության դեկը և փրկի՛ր ժողովուրդը սպառնացող վտանգներից։

— Այդ պետք է անեմ իբրև թագավոր, այնպես չի՞։

— Այնուշա։

— Բայց չես արժանի չեմ համարում ինձ այլևս այդ պահին, վորի վրա Աշոտ առաջինը և հայրենասեր ու առաքինի Սմբատը թաղեցին. Սևանն և իմ արժանավոր կացարանը. այնտեղ կապրեմ, այնտեղ էլ կմեռնեմ:

— Իսկ արքայական գահը:

—Թո՛ղ Աբասը պայազատ. նա չի իմ օրինական ժառանգը: Կարծես մի յերկնային շանթ հարվածեց Թաղուհուն: Այդ խոսքը նա առաջին անգամ էր լսում: Ցուր սիրտ կորտային վրա, այո՛, մտածել էր շատ, բայց դշխոյությունը կորցնելու մասին, նա յերբեք չէր յերազել:

Ե՞նչպես թե Աբասը թագավորե. ուրեմն և Գուրանդուխտը լինի Թաղուհի... Սևադայլի դստեր կենդանության ժամանակ՝ ամիսներից Գուրդենի աղջիկը հռչակվի հայոց գահի դշխո՞... և հայոց Սահականույշը վակվի Սևանի մնջ իբրև մի հարստահարիչ, իբրև ամիսներում մի Թշվառ դերի՞ն... Ենի՞ տեսնե, թե ինչպե՞ս հայոց իշխանները չրջապատում են նոր արքային, հաշտություններ են առնում նրա համա՞ր... խոնարհում են գլուխները նոր Թաղուհու առաջ և քծնում ու խնկարկում են նրա՞ն... Ո՛, այդ արդեն ամենից ավելի դժվարատարն է...», մտածեց ինքն իրան Թաղուհին և կենդ վրատասխրությունն ու հակառակորդի ինքնասիրությունը նրա կյանքը պաշարեցին: Նա մտածում, մինչև անգամ, յուր խնկական վիշտը. անարդյունաց դղրդումը դներահչեց նրա մնջ սիրտ դղրդման և կենդ հատուկ արամաբանությամբ նա չափեց խնդության յուր ներքին վշտի և արտաքին անպատվության մնջ յեղած անդրադառը և համոզվեց, թե ավելի հեշտ և ներքին վշտերով տանջվիլ, քան արտաքին անարդանքներից նվաստանալ...:

— Վա՛յ, իմ մեծամա՛ծ Թաղավոր. այդ վորոշումը չպիտի կատարվի. Սևանում դու չպիտի մնաս. գահն ու ժողովուրդը քեզ են ապատում, և դու պիտի վերադառնաս Վասպուր, խոսեց Թաղուհին վճռապես:

— Անկարելի չե... Այդ անելու համար նախ պետք է սիրտս խլեմ իմ կրծքից և դանդա դատարկեմ ուղեղից... Այս արտով և ուղեղով չես գահ բարձրանալ չեմ կարող:

— Զե՛, դու պիտի վերադառնաս. նա ձմռանում է այժմ հովվից պրկված և անապատներում ցրված անթիվ մի հոտի... գայլերը չորս կողմից հալածում են նրան. ձագերի ու պառավների մայուները խլացնում և ձորերը...

— Այդ հոսը կժողովվե Աբասը, նա ավելի սիտանիկ կլինի այժմ յերկրին՝ քան յես։

— Մի՛ ասիր այդ. մի՛ տար Աբասի անունը. հայոց թագավորը կենդանի յե դեռ։

— Վո՛չ, նա մեռել է վաղուց. նա մեռավ այն որը, յերբ Ցլիկ-Ամբամի յերեսից փախուստ տվավ Նվաստաբար...։

— Մի՛ ասիր այդ խոսքերը. մի՛ հիշիր անցյալը, աղաչում եմ քեզ...։

Այս ասելով Թագուհին բռնեց Թագավորի ձեռքը և քնքշաբար նայելով նրա աչքերին, վորոնք անթարթ ուղղված էլին լուսնին, կամացուկ ձայնով մրմնջաց.

— Աչո՛ւտ. իմ մեծափառ Թագավոր, իմ սիրեցյալ ամուսին. մի՛ թույլ տար, վոր ամենաղուհին ծաղրե քո Սահանույշի հպարտությունը. թո՛ղ վոր հայոց Թագուհին յուր կոչման մեջ հանդիսե մահվան...։

— Ա՛խ... ինչպե՛ս քիչ ես ծանոթ իմ վշտերին... չընկաց Թագավորը և դնմքը դնալի ծովակը դարձուց։

— Խոսի՛ր, յեթե դեռ մի ուրիշ ցավ ունիս, բա՛ց սրա իմ առաջ սրտիդ վարագույրը...։

Թագավորը չպատասխանեց. նա լուռ նայում էր ծովակին։

Ցնվ ի՛նչ պիտի պատասխաներ. ի՞նչպես կարող էր նա յուր սրտի վարագույրը բանալ... Այն վարագույրը, վորի յեռևը ծածկված էր իշխերից ծանրագույնը... կարո՞ղ էր միթե ասել՝ թե ինքը դեռ մտածում է Սևորդյաց իշխանուհու, յուր հանցավոր սիրո թշվառ զոհի վրա... թե ծանոթ է նրա ընտանեկան տանջանքներին, թե լսում է ամեն վայրկյան նրա արտասվող սրտի անձկությունը, նրա վոգևոտանջ հառաչանքները... Ի՞նչպես կարող էր նա այլևս զոհի վրա բաղմել, փառքի ու հաջողության հեռանել, քանի վոր ամեն վայրկյան պիտի հնչեին յուր ականջին նրա սխալ հնծութիւնները. քանի վոր շարունակ նա պիտի տեսներ յուր առաջ նրա արտասուքները և լինքն իրան ասեր.— բոլոր աշխարհը փառաբանում է լինձ, հաջողությունները պսակում են իմ վերադարձը. ժողովուրդը ցնծության առն է կատարում... Բայց այնտեղ, Սևորդյաց լեռների մեջ, Տավուշի մթնատոտ խորշերում հեծում է մի դժբախտ կին, սիրտ հարվածներից ջախջախված մի սիրտ, վորին թողել են ամենքը, վոր կսրված, բաժանված և աչխարհից, վոր ապրում է միայն յուր անարդանքի, յուր նվաստության հետ...Այդ կնոջ մրմունջը

հանուում և մինչև իմ դահույքը. նա չընկում և իմ ականջին դառն և սրատեսուղ խոսքեր. «Մի՛ ծիծաղիր դու, երբ լալիս եմ ես. մի՛ ղեկրճանար՝ երբ սգում եմ ես...», ասում և նա ինձ. արդ, ի՞նչ իրավունքով ես պիտի նորեն աշխարհ մանեմ, կյանքի բարիքները վայելեմ, քանի վոր յուր սիրտն ու երջանկությունը ինձ նվիրող կինը կենդանի թաղված և անհայտության մեջ։

Այս մտքերը, վորոնք վաղուց ի վեր ամենում էին Թադեվորին, այդ միջոցին այն աստիճան հուզեցին նրան, վոր նա ինքն իրան մոռանալով բացականչեց.

— Վո՛չ, անկարելի չե. չես չեմ կարող ապրել, քանի վոր նա մեռնում է...։

— Ո՞ւմ համար է խոսքդ. ո՞վ է մեռնողը... հարցրեց Թադուհին։

Թադեվորը ցնցվեցավ և ուղիղ բարձանալով աչքը պարզեց Թադուհուն.

— Դնա՛նք. լուսինն արդեն խոնարհում է... առայ նա խրոխտ ձայնով։

— Բայց ո՞ւմ համար էիր խոսում, հարցրեց էրկին Թադուհին։

— Անհայտության մեջ մեռնողի համար, պատասխանեց Թադեվորը և առաջ անցավ։

Թադուհին հետևեց նրան, առանց այլևս խոսել իշխելու։

Ը

ՄԻ ԹՍՉԿՈՎ ԳԵՐՈՒՆ

Կեսօր էր։ Ծամաքաթերդի ձկնորսները ուսվան եկին ձգում Ծովակը՝ Գեղամա համնդ ու բազմազան ձկներից վորոշելու, յերբ Գևորգ Մարզպետունու հնծնելախումբը հասավ այդտեղ։ Իշխանը զարմացավ՝ տեսնելով, վոր ձկնորսները վոհմանակ լաստերով դեպի լճի խորը գնալու, չարունակ նրա յեղերքն են պըտտտում, վորով հաղողակ վորս չպիտի կարենային անել։ Բացի այդ, լճի վրա, կամ յեղերքում, վոչ մի լաստ կամ նավակ չէր յերևում։ Այդ հանդամանքը շարժեց նրա հետաքրքրությունը, մանավանդ վոր իրան այն մինչոցին լաստ էր հարկավոր դեպի կղզին ուղղվելու համար։

Իշխանի հարցին՝ թե «ո՛ւր են ձեր նավակները», ձկնորսները պատասխանեցին.

— Սրբքայից հրաման յեկավ, վոր վոչ վոք յեղերքում լաստ կամ նավակ չպահե, այդ պատճառով ամեն վոք չուր ունեցածը ծածկել և գյուղում։

Իշխանը դուշակեց, վոր Թադավորի հրամանը արված է՝ Քշնամիների մուտքը դեպի Սևան արգելելու նպատակով։ Այսուամենայնիվ պատվիրեց, վոր իրանց համար նավակ իջեցնեն ծովը. բայց ձկնորսները դժվարացան։

— Թադավորը մեզ կկախե, յեթե համարձակվենք նրա հրամանն անարգելու, ասացին նրանք և խնդրեցին՝ չստիպել իրանց անհնազանդ դառնալ արքայի առաջ։

Իշխանը չպնդեց. բայց հրամայեց նշան տալ կղզեցիներին՝ լաստ ղրկել իրանց համար. իսկ մինչև այդ՝ հյուրասիրել յուր հնծյաններին Գեղամա քարմ ձկներով։

Ծովափը պատող ժայռերի վրա ձկնորսները կրակ վառեցին

խակուչն: Բացը բորբոքվելով ծառացավ, բարձրացավ դեպի վեր: Այդ եր այն նշանը, որով կղզեցիներից լաստ եկին խնդրում յեղբքում յեղողները: Շուտով կղզու պարիսպներից դուրս յելան յերկու սևազգեստներ, որոնք դեպի նավամատույցը հառաջանալով՝ լուծեցին այդտեղ կապած լաստերից մինը և դեպի ծովի խորը մղեցին:

Մինչև լաստի մոտենալը, ճկնորսները իրանց վորսած ընտիր իշխաններից ու վեզարքունիներից պատրաստեցին համեղ նախաճաշ և հյուրասիրեցին իշխանի հետյալներին:

Մի ջորնյի ժամերգությունը նոր եկին ավարտել կղզում, յերբ իշխանը յուր խմբով հասավ այդտեղ:

Թագավորը զարմացավ՝ տեսնելով յուր առաջ Գևորգ Մարզպետունուն:

— Դո՞ւ ել քո թագավորի հետ ճղնելու յեկար, հարցրեց նա իշխանին ժպտալով:

— Վո՛չ, տեր արքա. այժմ հանցանքներ գործելու և վոչ թե տպաշխարելու ժամանակ է, պատասխանեց Մարզպետունին:

— Հանցանքներ գործելո՞ւ.... հարցրեց թագավորը. մի՞թե հանցանք գործելու համար ել վորոշ ժամանակ է լինում:

— Այո՛, տեր արքա: Տասը պատվիրաններից մինը «մի՛ սպանանիր» խոսքն է: Այժմ հասել է այդ պատվիրանի դեմ գործելու ժամանակը. մենք չարունակ պիտի սպանենք:

— Հուլա ունիմ՝ ինձ քո հանցանքին մասնակից անելու՞ համար չես յեկած:

— Ցնեթե իմ գործքին թագավորն առաջնորդեր, յես քսան տարով կերկարատարեյանայի:

— Ֆո գործքի՞ն. մի՞թե գործ ունիս ժողոված, զարմանալով հարցրեց արքան:

— Այո՛, մեծամեծ տեր :

— Վո՞րտեղ և գանվում բանակիդ:

— Այստեղ, Սևանում:

— Սևանո՞ւմ, ավելի ևս զարմանալով հարցրեց թագավորը:

— Այո՛, տեր արքա, Սևանում...

Թագուհին, վոր ներկա յեր իշխանի խոսակցությանը, ընդհատեց նրան.

— Ցնս նայում եկի իմ դիտառնոցից, յերբ քո լաստը մոտենում եր կղզուն. քեղ հետ միայն մի խմբակ կար, հազիվ քսան մարդուց բաղկացած, իսկ մնացածները յո՞րը հասան տյստեղ:

— Իմ բանակը կազմած է հենց քսան մարդուց, չես ավելին ձեռք բերել չկարողացա, պատասխանեց իշխանը:

— Դուռ հիմա՞նդ ես, Մարզպետունի իշխան, հարցրեց թագավորը աչքերը նրա վրա սևեռելով:

— Գուցե կասկածում ես, թե խելագարվա՞ծ եմ, ժպտալով հարցրեց իշխանը:

— Այո՛, ինձ այդպես է թվում, հարեց թագավորը լրջությամբ: Ասում ես, վոր քսան մարդուց է բաղկացած բանակդ, և միևնույն ժամանակ վախկոտում, վոր քո թագավորն առաջնորդե նրան: Մտա՞ծ է այդ, թե չերդիծանք...:

— Ճա՛շ լիցի, չեթե համարձակվեմ այդ չափ լրբանալ քո առաջ, առ արքա... պատասխանեց իշխանը հուզվելով:

— Ի՞նչ զորք է ուրեմն այն, վորի անունով խոսում ես դու:

—Հենց հիշածս քսան հոգիներն են: Նրանք են իմ զորքն ու բանակը կազմում:

Թագավորն ու թագուհին զարմացած նայեցին իրար, կարծես կամենալով հարցնել միմյանց, թե չարդյոք այս մարդը չի՞ խելագարվել...»:

Մարզպետունին թափանցեց նրանց սրտի խորքը և դառը ժպտալով ասաց.

— Իրավունք ունիք ինձ խելագար անվանելու: Այս ընդհանուր ապշության որերում, յերբ զորեղ իշխանները իրանց հազարավոր զորքերով վակված են ամրոցներում, խելագարություն է, իհարկե, քսան հոգվով բաց դաշտն իջնել՝ թշնամու հետ ընդհարվելու համար: Բայց յես այդ անում եմ, վորպեզի կարողանամ ամբոխ կնիք դրոշմել բոլոր այն իշխանների ճակատին, վորոնք հայրենյան անունով խոսում, հայ ռահվիրանություն են, բայց հայրենիքը ճգնաժամում յեղած միջոցին մատը չեն շարժում նրան ոգնելու համար:

— Այդ դու կարող ես անել, յեթե հաղթությամբ պսակես հանդուգն ձեռնարկությունդ, նկատեց թագավորը. բայց ի՞նչ կարող են անել քսան հոգիները թշնամու ահավոր զորության առաջ:

— Իմ քսան հոգիներից յուրաքանչյուրը կարող է վանել հարյուր հազարացի: Յեթե հոգնախտամբ բանակիներն ոգի կտանեն չկարողանանք, դոնե նրանց ուժը ջլատել կամ կարդը խանգարել կարող ենք մի կերպ:

—Այդպիսով չատ փոքր ողնուԹյուն կարող ես անել հայրենիքիդ։

— Ամեն մեծ գործ նախ փոքրով է սկսվում։

— Ուրեմն դու հույս ունիս, Թե վերջ ի վերջո պիտի հազԹանակիս։

— Ցերկուսից մինը. կամ կհազԹանակեմ կամ Թե իմ խըմբով խաչաս կընդվեմ։ Ցես չեմ կարող նստել իմ բնդումս և իմ կյանքը խնամել այնպիսի մի ժամանակ, յերբ Թաղավորը գահը Թողած ճնշում է Սևանում, յերբ կաԹուղիկոսը աԹոռը կորցրած՝ Թափառում է աստանդական, յերբ ժողովուրդը հազարներով ճարակ է դառնում Թշնամուն... ՑեԹե իմ յեղբայրակիցները մնում են, յես ինչո՞ւ պիտի ապրեմ. մի՞Թե նըրանց կորուստը վողբալու համար։ Այդ վայել է կանանց, բայց յերբե՛ք այն մարդուն, վորի բաղուկը դեռ կարող է սուր շարժել, վորի ճայնը դաշտում կարող է վորոտալ...

Թաղավորն աչքերը հառած նայում եր իշխանի վրա, վոր խոսում եր ինչպես մարմնացյալ հայրենասիրուԹյուն. նրա սիրտը հուզում եր, նա կամենում եր դրկել և համբուրել այդ քաջին և միևնույն ժամանակ կամենում եր ասել.— «Վո՛րքան յերջանիկ ես դու, Գևորդ իշխան, վոր կարող ես իբրև հասարակ զինվոր մարտնչել հայրենիքի համար... իսկ յես զրկված եմ նույնիսկ այդ մխիԹարուԹյունից...»։

— Ինչո՞ւ ուրեմն յեկար Սևան, հարցրեց Թաղավորը յուր հուզումը ծածկելով։

— Իմ արշավանքն սկսելուց առաջ արքայի հրամանն ու արհնուԹյունն առնելու յեկա։

— Իմ քա՛ջ և հավատարիմ իշխան. դու ուրեմն միտքդ անդամ չես կամենում առանց քո արքայի հրամանին վայելել... Դու արժանավոր զինակից կունենայիր ինձ, բայց յես, ավա՜ղ, քեզ անարժան Թաղավոր...։

— Մի՛ ասիր այդ, տեր արքա. բախտը կարող է վանդակիլ մեզ փակել առյուծին, բայց նրա սիրտն ու կորովը կապտել չի կարող։ Այլևս դու այստեղ, մինչև վոր քո ծառան վանդակը զարբնող ձեռքերը կիչրե...։

— Իմ քաջ, իմ ազնիվ իշխան, վանդակը զարբնել են...։ Նա կամենում եր ասել՝ «այնպիսի ձեռքեր, վորոնց յեԹե վիշրեյիր, ինձ հավիտենական վիշտ պիտի պատճառեյիր...», բայց նա ընդհատեց խոսքը և վեր կացավ տեղից հանկարծ.

— Ո՞ւր են քո քաղերը. դնանք նրանց մոտ: Այդ հերոսներն արժանի չեն, որ Թագավորը նրանց ընդառաջն և վոչ Թե լրանք դան նրա կոչին:

Այս առելով Թագավորն առաջ անցավ և իշխանը հետևեց նրան:

Բարապանն արդեն ուրիշ ճանապարհով վազեց դեպի ուխտավորների կացարանը՝ խմբի անդամներին արքայի գալուստը հայտնելու:

Վահրամ սպասուհի հրամանով նրանք դուրս չկան իսկույն իրանց խուցերից և սպառազինված շարվեցան կլղու ծառաղարդ տափարակի վրա:

Թագավորն ու իշխանը իջնում էին բլրի կողմից: Ցերը նրանք հասան ս. Աստվածածնի տաճարին և խոտորվեցան դեպի տափարակը, ուխտի ղեկավորները մխիթարի վորոտացին՝ «Կեցցե՛ Թագավորը»:

Այդ գոչյունը հուզեց արքային: Վո՛րքան ժամանակ եր, որ նրա ականջին չեր հնչել այդ ձայնը. վո՛րքան ժամանակ եր, որ նրան վոչինչ չեր հիշեցնում, Թե ինքը հայոց Թագավորը, Հայաստանի իշխանատեան ե, Թե դեռ այդ յերկրում կան մարդիկ, վորոնք հավատարիմ են իրան և վորոնց ինքը կարող է հրամայել...: Ճղնաղէյաց միաբաններն ընկերակցությունը, նրանց հանապազորյա պաշտամունքները, վորոնց գրեթե միշտ ներկա յեր լինում ինքը, կղզու անչարժ ու խաղաղիկ կյանքը և նրա հետ միասին եղ յուր ծանրագույն վշտերը՝ ամեն ինչ մոռացրել, ամեն կենդանություն մեռցրել եյին յուր մեջ: Նրան թվում եր; Թե բոլոր աշխարհը քնած է Սևանի պես, Թե վոչ մի տեղ այլևս չկա կենդանություն, Թե մահը յուր Թևերը տարածել է արդեն համայն հայոց վրա...:

Բայց ուխտի ղեկավորների աղաղակը կարծես վայրկենապես սթափեցրեց նրան. մի հաճոյական և կենարար դող նրա մարմինը ցնցեց և քաղցնական ղողջունքով հոգին ու սիրտը լցվեցան:

Թագավորը Թեպետ ուներ կղզու մեջ հարյուրի չափ ղինվոր, բոլորն էլ ընտիր, ղինավարժ մարդիկ, բոլորն էլ քաջասիրտ և դիմադրավող, բայց նրանք էլ կղզում անդործ մնալով և արքայի նման հոգևոր պաշտամանց հաճախելով՝ Թուլացել, Թմրել եյին արդեն և զենքերն ու ղրահը մի կողմը ձգել: Նա տեսնում եր դրանց ամեն որ խուցերի առաջ նոտած և կամ ուռ-

կանը ձեռքներին կղզուռ շուրջը թափառելիս, և չեր վրդովվում, կարծելով թե՝ հենց այդ էլ պիտի լիներ դրանց զբաղմունքը։ Բայց յերբ նա տեսավ յուր առաջ Մարզպետունու սակավաթիվ, բայց զոռեղինդ, զրահաղեստ և զինավառյալ այդ խմբակը, պատրաստ, կարծես, հարձակվելու և ամեն զորութիւն ու ընդդիմութիւն ընկճելու և կործանելու, նա մի տեսակ աչխուժ առացավ և քայլերն արագացնելով հասավ զինվորներին։

— Ապրի՛ք իմ քաջեր, բացականչեց նա և խումբը նորեն վերոտաց։

— Կեցցե՛ Թագավորը։

Վահրամ սեպուհն առաջ անցնելով սաղավարտը հանեց և գլուխ խոնարհեց արքային։

Վերջինս աչքը պարզելով՝ ողջունեց նրան ջերմագին։

Սեպուհին հետևեց Մուշեղ բերդակալը, վորին Թագավորը բարեհաճ խոսքերով ընդունեց։

Առաջ անցավ ասպա Գոռ իշխանիկը։ Թագավորը նրան տեսնելուն պես բացականչեց.

— Դու ե՞լ այստեղ, իմ սիրեցյալ Գոռ... Դու ե՞լ անձնվեր քաջերի խմբում։

Այս ասելով Թագավորը թևերը բացավ և գրկախառնելով պատանուն, վոր սաղավարտը ձեռին մոտեցել եր իրան, համբուրեց նրան սրտագին։

— Վորի՞ պաշտպանութեան հանճնեցիր հարսնացուդ, Գո՛ռ, հարցրեց Թագավորը ժպտալով։

— Ծուր խոկ պաշտպանութեան, պատասխանեց պատանին չառագռունելով։

— Այո՛, հայրդ ինձ պատմեց։ Նրա պաշտպանութեան և հանճնված և Դաւնին։ Այսունյայ որիորդը արժանի յե այդ պաշտոնին։ Ճերբ այր մարդիկ կռվում են դաշտում, կանայք կռվող են բերդերը պաշտպանել... Թեպետ ցավալի յե, վոր հայոց յերկիրը միայն քսան տղամարդ և դաշտը հանում այսօր. բայց մյուս կողմից եկ ուրախալի յե, վոր այդ քսան քաջերին հետևվում և մի կին. և վոր այդ կինը իմ վորդեգրուհին և Գոռի հարսնացուն և.... Գնա՛, իմ քաջ, արժանի՛ յեղիր քո մրցանակին։

Այս ասելուց յետո Թագավորը մոտեցավ մյուս զինվորներին, բոլորի հետ խոսեց, բոլորին եկ քաջալերեց և ապա դառնալով

Մարզպետունուն, առաջարկեց նրան միացնել յուր խմբին Սևանում դտնված զինվորների կեսը։

Իշխանը հրաժարվեցավ արքայի առաջարկությունից, չկամենալով նվազեցնել նրա թիկնապահների թիվը։

— Վտանգի միջոցին մենք կարող ենք փախչել, ասաց նա նրան, բայց արքան այս կղզում խուլս տալու տեղ չունի. անկարելի է մի զորական անգամ հեռացնել այստեղից։

Թագավորը զոված յուր հավատարմի հոդածու ղդուշությունը և ապա դասնալով նրան ու վահրամ սեպուհին ավելացրեց.

— Իմ իշխանները թողեցին ինձ միայնակ և ամոթահար, այդ պատճառով չես մտա Սևան իբրև կամավոր դերի։ Ցերեկ դուք կհաջողիք ձեր ձեռնարկության մեջ և կկարողանաք սրբել այն արատը, զոր դրին մեր դրոշի վրա տիրադրուժ իշխանները, այն ժամանակ չես նորեն կելնեմ իմ բանտից և կպատակեմ ձեր հաջողությունը իմ արշավանքներով։ Այս որվանից իմ դրոշը չես կհանձնեմ ձեր խմբին. Թո՛ղ նա ամեն տեղ զոդևորե այս քաջերին և հիշեցնե, զոր Թադավորը կալանավոր է Սևանում...

Այս ասելով Թադավորը հրամայեց թիկնապահներին բերել արքայական դրոշը։

Նոր լռություն տիրեց։ Ուխտի զինվորները ակնածությամբ պատսում էին թիկնապահների դարձին։ Ցերբ դրոշը յերևաց, ամենքն իսկույն սաղավարտները հանելով միաբերան դոչեցին. «Կեցցե՛ Թադավորը»։

Վերջինս առավ դրոշը թիկնապահների ձեռքից և հանձնելով այն Մարզպետունուն, ասաց.

— Այս դրոշի հետ միասին տալիս եմ քեղ իրավունք՝ դործել ամեն տեղ իմ կողմից և անունից։ Այս դրոշը իմ փոխարեն կլինի քո խմբին և՛ առաջնորդ, և՛ զինակից։

Նույն որը ուխտի զինվորներին սեղանակից արին իրանց Թադավորն ու Թադուհին։ Իսկ հետևյալ առավոտ հեռացավ խումբը Սևանից՝ տանելով յուր հետ արքայական դրոշը և Թագավորի, Թադուհու և բոլոր միաբանության որհնությունը։

Հասնելով Ցամաքաբերդ՝ ուխտի զինվորները ձիանները հեծան և Արարատյան դաշտի ճանապարհը բռնեցին։ Նրանց նպատակն էր հանդիպել Բեշիրի հրոսակներին, զորոնք զանազան խմբերի բաժանված՝ շրջում էին այդ դաշտի անպաշտպան դյուղերը և ավարի տալիս նրանց։ Բյուրականի առումը և անխիղճ կոտորածն ավելի յեր նրանց համարձակություն տվել և

բարբարոսությունները դրդում է: Այժմ անարգել առաջ եկին դեպի նրանք, չակնածելով բնավ հայ իշխաններից, որովհետև դիակեցին, որ դրանք բերդերից չվերտի իջնեն և չինականի զորքն ու կյանքը պաշտպանելու համար իրանց անձը վտանգի մատնեն:

Արդ՝ Մարզպետունի իշխանը կամենում եր հանդիպել այդ հանդուգն հելուղակիներին, որովհետև հույս ուներ, թե առանձին-առանձին պատահելով նրանց՝ կարող է չատերին վոչնչացնել:

Բայց հաղիվ յուր հեծելախումբը Հրազդան գետն անցավ և ահա՝ դաղթականների մի բազմություն ընդառաջեց նրան:

— Վո՞րտեղացի յնք և ո՞ւր եք գնում, հարցրեց նրանց իշխանը:

— Գնդա բերդիցն ենք, տեր, պատասխանեց հաղթանդամ ու բարձրահասակ առաջնորդը. գնում ենք Սյունյաց լեռներում ամրանալու:

— Ուրիշները դիմում են դեպի Գեղ, իսկ դուք ինչո՞ւմ եք այնտեղից. ի՞նչ է պատահել. ո՞վ է հարձակվում ձեզ վրա:

— Բնչիրը, տե՛ր:

— Ո՞վ ասաց ձեզ:

— Դվինից լուր ղրկեց կաթուղիկոսարանի վերակացուն:

— Ե՛, լավ, եվ ինչո՞ւ յնք փախչում. չե՞ վոր Գեղա բերդն ամուր է բավական:

— Ամուր է, բայց ղորք քիչ ունի:

— Թշվառականնե՛ր, յնթե ամենքդ այդպես կփախչեք այնտեղից, իհարկե ղորք չեք ունենալ. ինչի՞ համար է այդ հաղթ հասակը, յնթե տադնապի բոպեին տուն տեղ պիտի ձգես. յնդա դարձեք այս վայրկենին, թե չե ամենքիդ սուր քաշել կհամ:

Առաջնորդը նայեց յուր ընկերներին. կանայք ծածկոցները բանալով սկսան դիտել խոսող իշխանին, իսկ յերեխաները վախկոտ նայվածքով նրանց չուրջը կծկվեցան:

— Ե՛ս դարձեք, կրկնեց իշխանը, այստեղ յեղող բոլոր աղամարդկանց պահակ պիտի կարգեմ Գեղա պարիսպների վրա:

Գաղթականները սկսան աղաչել իշխանին՝ թույլ տալ իրանց շարունակել ճանապարհը, բայց Մարզպետունին մնաց անողոք:

— Տե՛ր, դու մեզ, ուրեմն, մատնում ես Բհչիրին. նա մի յերկու որից Գեղա բերդը պիտի դրավե, խոսեց մի պառավ կին:

— Ես թույլ չեմ տալ, մայրիկ, որ Բեչիրը հասնե Գեղ-բայց յիշե ասածուց վիճակված է քեզ մահ, ապա լավ է, որ առնդ մնջ մեռնես, քան թե ուտարութեան մնջ։

— Ես ցավում եմ վոչ թե ինձ, այլ յերիտասարդների համար։

— Նրանք թող իրանք պաշտպանեն իրանց։

Այս ասելով նա հրամայեց դաղթականների առաջնորդին յետ դարձնել ամենքին. իսկ ինքը յուր խմբին դառնալով ավելացրեց.

— Մեր ծրագիրը փոխվեցավ։ Ուղեկցենք այս փախստականներին մինչև Գեղաստորոտը. իսկ այնուհետև կդիմենք ուր որ հարկավոր է։

Հետևյալ առուր յերեկոյան իշխանը յուր հեծելախմբով բաժանվեց դաղթականներից. նրանք բարձրացան դեպի Գեղա լանջերը, իսկ ինքը բռնեց Դվնո դաշտի ճանապարհը։

Վորովհետև մութը կոխում եր, իշխանն ու սեպուհը վորոշեցին շատ չհեռանալ Գեղա սահմաններից։ Ուստի ուղղվելով դեպի Ուրծաձոր, բարձրացան մի փոքրիկ լեռնադաշտ վրա, վոր ծածկված եր անտառով ու մացառուտով։ Այդտեղ գտան նրանք ծառերով հովանավոր մի անջուրջ ծածկարան, ուր և իջան հանդստանալու և պիշերելու։

Զինվորներից մի քանիսը ղրաղվեցան խնկույն խմբի առակավպետ կերակուրը պատրաստելով, իսկ մի քանիսը փութացին ջուր բերելու։ Լեռան լանջերի վրա աղբյուր չգտնելով, նրանք վայր իջան դեպի հովիտը՝ այդտեղ հոսող գետակից ջուր վերցնելու։ Դա Վեդիի վտակներից մինն եր, վոր խոխոջալով իջնում եր Գեղա բարձունքներից։ Հաղիվ մացառուտից յելան զինվորները և ահա՛ հանդիպակաց լանջերի վրա ղարկած տեսան բազմաթիվ վրաններ, վորոնցից չատերի առաջ խարույկներ եյին վառվում։

Դա հաղարացիների բանակն եր։

Զինվորները վերադարձան և պատմեցին այս մասին իշխաններին։

— Դրանք ուրեմն Գեղն առնելու յեն գնում, դուշակեց սեպուհը։

— Անշուշտ, պատասխանեց Մարզպետունին։

— Ի՞նչ պիտի անենք այժմ մենք։

— Մի՛թե դեռ չգիտես։

— Կխտամ. սիսի խանգարենք... բայց...

— Ուրիշ անելիք չունենք: Վայելենք մեր ընթրիքը և գործի սկսենք, վճռաբար ասաց իշխանը և բաղմեց խոտերի վրա, ուր բացված եր անպաճուճ սեղանը: Նրան բոլորեցին ամենքը միասին, որովհետև նրանց մեջ չկար այլևս իշխան ու ծառա. նրանք ամենքը յեղբայրներ եյին, մի խաչի ու մի դրոշի զինվորներ: Նրանց կերակուրը կազմում եյին Սևանի յեփած ձըկինները, մի քանի կտոր խաշած միս և Գեղարքունյաց ընտիր պանիրը:

Ընթրիքի վրա վոչ վոք չեր խոսում՝ ամենքը լուռ ուտում եյին: Բայց այդ՝ վոչ այն պատճառով, վոր ուշադիր եյին իրանց քաղցը հագեցնելուն, այլ այն, վոր ամենքն էլ մտածում եյին սկսելիք գործի մասին, վոր կարի հանդուգն և վտանգավոր մի ձեռնարկություն եր:

Ցերբ ընթրիքը վերջացավ, Գևորգ իշխանը վերկացավ տեղից և ասաց.

— Սիրելի քաջերս. ասաված թշնամին մատնել է մեր ձեռքը, պիտի ողուտ քաղենք այս հանդուգնությունից: Ամավուտը՝ դեռ լույսը չբացված մենք կհարձակվենք թշնամու վրա: Այս արդեն վճռված է: Պատվեցնենք ուրեմն և հանդստացենք, վորպեսզի հաղնություններդ առնենք և վաղվա համար ուժերնիդ կաղդուրենք. իսկ յես և վահրամ սեպուհը կերթանք նախ թշնամու դիրքերն ու բանակը հետազոտելու և ապա կպարձրանանք Գեղ, տեղացիներից հարկ յեղած ոգնությունը հայթայթելու:

— Թո'ւյլ տուր, հայր իմ, վոր յես ևս հետևիմ ձեզ, ասաց Գառ իշխանիկը:

— Վո՛չ, զավակս. դու մի պատվիր և հանդստացիր. զինվորը չպիտի զատվի յուր ընկերներից, պատասխանեց իշխանը լրջությամբ, կամենալով հասկացնել վորդուն, թե ինքը վոչ մի առավելություն չունի մյուսներից և, հետևապես, պիտի հնազանդի հոր ձայնին ինչպես յուր ընկերները:

Գառը ժպտալով գլուխը խոնարհեց: Իշխանն ու սեպուհը թողնելով զինվորներին՝ ուղղվեցան դեպի բանակի կողմը:

Հովիտը, ուր զարկած եյին թշնամու վրանները, ընկած եր յերեք բարձրության մեջ: Նրա հյուսիսային կողմը բարձրանում եյին Գեղա զարևանդները. արևմտյան կողմից ընկած եր այն լեռնապատումը, վորի վրա զանվում եյին ուխտի զինվորները. արևելյան մասը վահում եյին բարձրադիր բլուրներ, իսկ հա-

բավից բացվում եր Վեդիի դաշտը, ուր խոխոջում եր համանուն գետը։

— Ցնքե հարձակվենք այս կողմից,— ցույց եր տալիս իշխանը ձորահովտի հյուսիսակողմը,— այն ժամանակ կատիլենք թշնամուն վախչել դեպի հարավ։ Մեր գործը պիտի լինի հանկարծակիի բերել նրանց։ Ուրեմն ամեն հնար գործ պիտի դնենք՝ չփոթել թշնամուն և թույլ չտալ, որ կարգի գան կամ ճակատեն, որովհետև նրանց թույլ ընդդիմությունն անգամ կարող է մեր գործը խանդարել։

— Գլխավորը ջահեր ձեռք բերելն է. հենց որ մի յերկու վրան կարողանանք վառել, սարսափը կտիրե ամենքին, խոսել սկսավ սեպուհը, սակայն այդ պաշտոնը դեղեցիկները պիտի կատարեն, իսկ մերոնք պիտի հարվածեն։

Յերկար խոսելուց և այս ու այն կողմը հետաղոտելուց յետո՝ իշխանն ու սեպուհը վերաղարձան ղինվորների մոտ։ Նրանք ամենքն էլ քաղցր քուն եյին մտել. բայց մի քանիսը յեկողների քայլատրոփը լսելուց վեր թռան տեղներից։ Արթուն եր միայն մի ղինվոր, որ պահպանություն եր անում ձիաներին։

Գևորգ իշխանը տեսնելով Գոռին, որ ղլուխը մի կոճղի հենած՝ անուշ մրափում եր, ակամա կանդ առավ նրա առաջ։ Լուսինը, որ սահում եր յերկնակամարի վրա, պայծառ չողերը ծառերի միջից թափանցելով՝ լուսավորել եր պատանու դեղեցիկ դեմքը, ուր հանդչում եր այդ րոպեին մի հանգիստ և խաղաղ ժպիտ։

Գղնձե ղրահը, որ պատում եր նրա առողջ կուրծքն ու թիկունքը, վոսկեդրոշ սաղավարտը, որ ծածկում եր տակավին նրա դեղեցիկ դլուխը, բայց չեր կարողանում ամփոփել յուր մեջ նրա հարուստ խոպոպինները, որոնք զարդարում եյին պատանու ճակատն ու պարանոցը, և վերջապես կմբավոր, արծաթաղարդ վահանակը, որ բռնած եր ձախ ձեռքում և որով, քնի մեջ անգամ, պաշտպանում եր նա յուր կուրծքը, փայլում եյին լուսնի առաջ մեղմ ճաճանչներով։

Իշխանն սկսավ նայել վորդուն. ծնողական սիրտը կարծես զդաստացավ մի յերկարատև արբեցությունից. և մի տխուր զդացում սկսավ նրա սիրտը ճնշել։

«Գուցե իմ ձեռնարկությունը հաճելի չե աստծուն. գուցե նա բարկանում է, որ յես հանդուդն մտքեր եմ հղանում և խաղաղ քուն վայելող արարածների վրա անակնկալ հարձակու-

մըն եմ գործում... Գուցե նա ինձ պատժելու համար՝ հաղա-
րացիներից մինի սուրը մեռ իմ այս մեղմորը վորդու կողը և
նրա կենաց արևը խավարեցնե... Ենվ չես հավիտյան զրկվիմ
նրանից... իմ կյանքի այս միակ մխիթարությունից... Ո՛չ, և
տեսնեմ նրան արյունաշաղախ, ժպիտը դեղնկիկ դեմքի վրա
սառած և սիրուն աչքերը հավիտյան փակված... վո՛չ, անկա-
րելի չե. վո՛ր աստվածը այնուհետև կարող է իմ կսկիծը փա-
րատել... և ի՞նչ լուր առնեմ չես նրա մորը. ի՞նչ չերեսով նը-
րան չերևամ... Արդյոք մի անդութ, մի բարբարոս չե՞մ չես.
ինչո՞ւ չարդևեցի նրան Գառնիում... ի՞նչ ուժ պիտի ավելաց-
ներ նա ինձ համար. մի՞թե մի հասարակ զինվոր չեր կարող
նրա գործը կատարել. ինչո՞ւ կամեցա Մարզպետությաց տան
վերջին ճրագը խավարեցնել... Չե, սա պիտի հեռանա այստե-
ղից. և կամ մեր արշավանքը պիտի հետաձգվե»...:

Այս մտքերն եչին հուզում Մարզպետունու հոգին, չերբ սե-
պուհը մոտենալով՝ զորավոր ձեռքը դրավ նրա ուսին և ասաց.

— Մենք ուշանում ենք, տե՛ր Մարզպետուն. այստեղ պատ-
կած բոլոր զինվորները նուչնպիսի մայրեր ունեն, վորպիսին ու-
նի Գոռ իշխանիկը. գնա՛նք:

Սեպուհի այս խոսքը սասանեց իշխանին և նա կարծես ա-
նուրջից սթափվելով՝ բացականչեց.

— Գնա՛նք. թող բոլորի մայրերն էլ նահատակների ծնող
հռչակվին:

Համաձայն կանխավ ասած վորոշման՝ իշխանը պիտի բարձ-
րանար Գեղ, նրանցից ոդնական մարդիկ բերելու, իսկ սեպուհ
պիտի իջներ Վեղի ավանը և, չեթե այդտեղ չհաջողեր, անց-
ներ Ձերմանիս և այնտեղից մարդիկ հրավիրեր: Նրանց նպա-
տակն եր հայթայթել վոչ թե կռվող զորք, այլ միայն դռռացող
ու աղմուկ հանող ամբոխ, վոր դիշերային ժամում կարողանար
տարտամ աղդել Թշնամուն:

Ձիերին վտակի մոտ նրանք բաժանվեցան: Իշխանը լեռան
լանջերը բարձրանալով, դարձյալ սկսավ Գոռի վրա մտածել:
Բայց այս անգամ վոչ իրրև Թուլասիրտ հայր, այլ իրրև հայ-
բնասեր զինվոր:

«Մինչև այսոր բյուր մեղ նմանները զոհվել են Թշնամու
սրին. դրա պատճառը յեղել է այն, վոր ամեն մի իշխան, յուր
տոհմն ապահովել մտածելով կամ սիրելիների կյանքը խնայելով՝
ձեռնպահ և մնացել ընդհանուր գործին մասնակցելուց: Ցերկրի

ժողովուրդը զոհ է գնացել այն յերկչոտ զղացմունքներին, վորոնք մի ժամ առաջ պաշարել էին իմ սիրտը: Փրկության սեղանը դադարել է աղատություն բաշխելուց, վորովհետև այդ սեղանի վրա զոհ մատուցանող չկա... Բայց յես հրապարակական խոստում արի. յես ահավոր յերդում յերդվեցա. ի՞նչպես կարող եմ այդ յերդման դրժել... Իմ Գոռը հավիտյան հո չի ապրելու. մահը վաղ թե ուշ պիտի փակե նրա աչքերը. կարող է պատահել, վոր նա մեռնի հենց իմ հարկի տակ, մի ապիրատ դավաճանի թաղուն հարվածից... ինչո՞ւ ուրեմն չկամենալ, վոր այդ մահը հանդիպե նրան հայրենիքի համար մղած կռվի դաշտում. ինչո՞ւ չցանկանալ վոր անվատունակ մահվան փոխարենը՝ նա մարտիրոսական պսակը ստանա. ինչո՞ւ չմխիթարվել այն քաղցր մտքով՝ թե աշխարհի մեջ ունեցածս ամենաթանկագին հարստությունը իմ հայրենիքի աղատության նվիրեցի... և վերջապես մի՞թե իմ Գոհարը վորդվո մահը լսելուն պես՝ չի կարող հերոս հեղինուհու նման ասել, թե «հենց դրա համար ծընեցի վորդիս...»:

Այս մտքերն այնպես վոգևորեցին իշխանին, վոր նա չդղաց. թե ինչպես անցավ Գեղա դարևանդները և հասավ ամրոցի պարիսպներին:

Դռան մոտ թակ չդտնելով, նա վերցրեց մի ահագին վորձաքար և զարկեց յերկաթապատ դռներին: Փեղկերը դղրդացին, բայց աշտարակից պահապանի ձայն չլսվեցավ: Իշխանը նորից կրկնեց յուր հարվածը և այս անգամ մեկայն պահապանը յուր խռպոտ ձայնը լսեցրեց:

— Բացեք դուռը: Ի՞նչ քնելու ժամանակ է, հիմարներ, Քրշնամին ձեր առջևն է, դոչեց իշխանը:

Մարդպետունու ձայնը ծանոթ եր Գեղա պահակներին: Խուկուչն իրար զարթեցնելով դիմեցին նրանք բերդակալին, վոր և չտապեց դուռը բանալու:

Իշխանը ներս մտնելուն պես հրամայեց չեփոր հնչեցնել և ամրոցի բնակիչները զարթեցնել:

— Ի՞նչ կա, տեր իմ. մի՞թե թշնամին մոտենում է արդեն, սրտատրոփ հարցրեց բերդակալը:

— Ամեն մեկի հետ զատ-զատ խոսելու ժամանակ չունիմ. հավաքիր այստեղ ժողովուրդը, ասելիքս թո՛ղ ամենքը լսեն, պատասխանեց իշխանը:

Բերդակալի հրամանով զինվորներն խիստ աղդարար չե-

վոր հնչեցրին ամբոցի անցքերում: Բնակիչները սարսափահար վեր թռան տեղներից և յուրաքանչյուր ոտն կարող անճինքները դուրս թռան փողոց:

Կես ժամվա մեջ արդեն Գեղի բոլոր ժողովուրդը, թ ողց առնելով կանանց ու յերեխայոց, հավաքված եր բերդի դռան հրապարակը: Նրանցից չատերը մինչև անգամ դինված եյին սրբերով ու նիզակներով:

Այստեղ հասան և այն դինվորները, վորոնք պահպանության եյին անում բերդին: Իշխանը հրամայեց նրանց ջահեր վառել, վորպեսզի կարենային մեկմեկու յերես տեսնել: Ապա բարձրանալով ժայռի մի բեկորի վրա, սկսավ խոսել.

— Այսոր վերադարձրի Գեղ այստեղից փախչող բազմաթիվ անձանց: Նրանք պատմած կլինեն ձեզ, վոր մենք արքայի հրամանով յեկած ենք Թշնամու դեմ, վոր բանակած և այժմ Վեդիի հովտում: Այսքան մոտ չկարծելով Թշնամուն, մենք բուն բանակից առաջ անցանք (իշխանը դիտմամբ ասեց՝ ամբոխին սիրտ տալու համար). բայց վորովհետև Թշնամին վաղը պիտի հարձակվի ձեզ վրա, ուստի յես իմ խմբով վորոշեցի չսպասել նրա բանակը հենց այս դիշեր: Այդ մենք կանենք մեր անակնկալ հարձակումով: Դուք ամենքդ մեզ պիտի ողնեք այս գործում, հավատացած լինելով վոր հաղթությունը մեր կողմը պիտի լինի: Հակառակ դեպքում Գեղը վաղվանից ավերակ կդառնա:

— Մենք այստեղից յերբեք չենք կարող... մենք կռվելու ուժ չունենք... մենք դինվոր չունենք... ակսան խոսել ու գոչել այս ու այն կողմերից:

— Լռեցեք. ի՛նձ լսեցեք, հրամայեց իշխանը:

Ժողովուրդը լռեց:

— Ձես ձեղանից չեմ պահանջում վոչ գորք և վոչ գենք: Այլ միայն այն, վոր բոլոր այստեղ յեղողներդ հետևեք ինձ և Վեդիի հովիտը պատող բլուրների վրա կենալով ձեր դռռոցն ու աղաղակը միացնեք հարձակում գործող մեր դինվորների ձայնին: Ցեղ յեթե կլսանվեն ձեր մեջ մի քանի քաջեր, վորոնք կկամենան թաղտվորի ու թաղուհու չնորհակալության արժանանալ, նրանք ել ջահերով թշնամու վրանները կկրակեն: Հենց վոր աղաղակն ու հրդեհն ակսվին, Թշնամին չսպասված պիտի փախչի: Այն ժամանակ կուտարածը կանեն իմ գորքերը, իսկ ավարը կմնա ղեղեցոց:

Իշխանի խոսքերն աղդեցին ժողովրդի վրա: Թեպետ նրան-

ցից վոմանք դարձյալ ընդդիմության աղմուկ հանեցին, բայց իշխանի առաջարկությունն ընդունողների թիվը շատ մեծ եր։ Մի հասարակ աղաղակի կամ վորևե մի վրան կրակելու համար արքայական շնորհաց արժանանալու հույսը շատերի յեռանդը վառեց։ Իսկույն խմբեր կազմվեցան. զենք չունեցողը զենք առավ վրան. պահակներից շատերը ջահեր պատրաստեցին. վոմանք ել հողե ամաններով կամ վոջը տիկերով կպրաճյութ վերցրին։ Կային և մարդիկ, վորոնք զինվեցան տապարներով կամ բահերով, և այսպես ամենքը միասին խմբվելով լուռ ու մունջ դուրս յեկան բերդից և հետևեցին իշխանի ձիու սմբակներին։

Առաջին պայմանը անձայն ու անշշուկ ընթանալն եր, վորին սմբոխը հետևում եր զգուշությամբ։ Իսկ իշխանը դիտմամբ ծանր եր առաջանում, մտածելով՝ թե մինչև սեպուհի դարձը, ինքը կարող և տեղ հասնել։

Բայց վո՛րքան մեծ յեղավ նրա զարմանքը, յերբ ուխտի զինվորների կացած տեղը հասնելով՝ տեսավ, վոր սեպուհը վաղուց սպասում և իրան և վոր Վեդիից ու Ձերմանիսից բերած մի բազմաթիվ սմբոխ խլրտում և լեռնալանջի ծմակում։

Իսկույն սկսան իրանց կարգադրությունները անել։ Սմբոխը բաժանեցին յերկու հավասար մասի։ Ներանցից ամեն մինը պետք և բոներ հովտի մի զառիվայրը։ Զահավոր պահակները զաղտուկ պիտի մոտենային վրաններին։ Հարձակման նշանը պետք և տար Մարզպետունին. իսկ առաջին կրակը պիտի վառեր սեպուհը։ Այնուհետև պիտի բղդեր սոսկալի աղաղակ, վորին կմասնակցեին բոլորը, առանց ընդհատելու։ Կոտորածը կսկսեյին միայն ուխտի զինվորները, աշխատելով սակայն չվախեցնել վախշողների ճանապարհը։

Գիշերից բավական անցել եր. առավոտյան աստղը ծագում եր արդեն և արևելքի մեջ խավարն սկսում եր լուսից բաժանվել։

Հաղարացիների բանակը ընկղմած եր խոր քնո մեջ։ Կրակները վաղուց հանգել և շարժումն ու շշուկը դադարել եյին։ Զեր լսվում նույնիսկ պահապանների քայլատրուփը։ Ըստ յերեվույթին վոչ մի յերկյուղ չունեյին նրանք հայերից։ Ցեվ ո՛վ պիտի համարձակեր հազար մարդուց բաղկացած այդ բանակի հանգիստը վրդովել։ Նույնիսկ Բեչիրի վրանի առաջ պահապանները անուշ խոմփում եյին, յերազելով անշուշտ Գեղամ սմբոխի

առումը, բնակիչների կոտորածը և դեղնցիկ հայուհիների գերեվարությունը...

Հանկարծ հովիտ մեջ վորոտաց Մարղպետունու ձայնը:

— Հառա՛ջ, քաջերս, ասպետական մեղ ուղևորություն...

— Կեցցե՛ Թաղավորը, գոռացին ուխտի զինվորները և հարձակվեցան:

Բլուրների վրա և լեռնալանջերում ամբոխն սկսավ գոռալ: Արձագանքը վորոտաց հովիտ մեջ և բանակի վրաններն սկսան վառվել:

Հաղարացիք սարսափահար յեղած դուրս թռան վրաններից, աղմուկն ու շլոթը տիրեց ամեն տեղ և ուխտի զինվորները իրանց կոտորածն սկսան: Հետզհետե վառվող վրանների լույսն ընկավ բլուրների վրա և յերևան հանեց ամբոխի խմբերը, վորոնք իրանց դոյություն-դոչյունով և զանազան շարժումներով նմանում եյին այդ բարբարոսություններից ելնող սոսկալի բանակների: Հաղարացիք կարծելով թե չրջապատված են արդեն բազմաթիվ զորքերով, սկսան իրար կոտորելով փախուստ տալ դեպի Վեղիի հովտաբերանը. ամեն վոք աշխատում եր յուր անձը փրկել. ձի ունեցողը ձիով եր փախչում, հետևակը հետիոտն եր վազում, ամենքը թեպետ սրերը մերկացրած, բայց դրեթե վոչ վոք հարված չեր կշռում, այլ վահանը ղլխին բռնած՝ հարվածներից ազատվել եր աշխատում:

Զնայելով վոր Բեչիրը կատաղած դուրս թռավ վրանից, հնձավ խակուն յուր ձին ու սկսավ գոռալ և կարգի հրավիրել զորքը, բայց լսող չկար: Կրակի և մթության խառնուրդում չեր վորոշվում վորոնք են հայերը և վորոնք հաղարացիք: Բեչիրին այնպես թվաց, թե մի հսկայական զորություն սեղմել և յուր դրկում հաղարացոց բանակը. բայց և այնպես մի քանի թիկնապահների ոգնությամբ նա սկսավ վանել յուր վրանի վրա հարձակվող քաջերին, վորոց թվումն եր Գոռը:

Աբի պատանին կամենալով հաղթության պսակներից թանկագինը դրավել, խիզախել եր մինչև զորապետի վրանը: Հսկա հաղարացին ահագին սուրը բարձրացրած պատրաստվում եր յուր հարվածը կշռել պատանու ղլխին, յերբ Մարղպետունի իշխանը, վոր աչքից չեր թողնում քաջ վորդուն, յետևից վորոտաց.

— Թշվառական, ո՞ւմն ես հարվածում:

Այս ասելով նա պողպատիկ սուրը իջեցրեց Բեչիրի զրահա-

պատ Թիկունքին այնպես սաստկագին, վոր նա սասանելով դըլորվեցավ ձիուց։ Իշխանն առաջ վարեց նժույգը նրան կոխկրտելու համար, բայց Բեչերի Թիկնապահները յուր դեմն արձանացան և նա ստիպված եր յուր սրի հարվածները նրանց դըխին իջեցնել։

Բեչերը, չնայելով յուր հաղթանդամ հասակին, ճարպկությամբ դուրս սողաց խոնված մարտիկների միջից և մահը իրան հետամուտ տեսնելով, արագությամբ աչառնակեց Թիկնապահներից մեկի ձին և սրարշավ դուրս փախավ հուլտից։

Այնուհետև փախուստն ընդհանրացավ. եվ վոչ մի տեղ դիմադրող չկար, ամենքն իրանց կյանքը փրկելու վրա եին մտածում։

Այս տեսնելով բլուրների վրա կեղող խուժանը՝ վորոտընդոստ աղաղակով ընկավ փախչողների յետևից։ Ուխտի զինվորներից աղատվողները զոհ եյին դառնում նրանց բրերին և տապարներին։

Հաղթությունը կատարյալ եր։

Առավոտյան դեմ հալածողները յետ դարձան և զարմանալով տեսան, վոր ամբողջ հուլիսը ծածկված և թշնամու դիակներով։ Նրանք չեյին կարողանում հավատալ, թե այդ ահագին կոտորածըն իրանք են արել։

Իշխանի առաջին գործը յեղավ այն, վոր չուրջը ժողովե ուխտի զինվորներին և տեսնե, թե այս անհավասար կռվի մեջ ի՛նչ կորուստ ի ունեցել ինքը։

Նա համարեց բոլորին և ցավելով տեսավ, վոր յերեք հոգի պակասում եյին յուրայիններից, նրանք ընկել եյին կռվի մեջ։

Այսուամենայնիվ, հաղթությունն այնքան մեծ ու փառավոր եր, վոր այդ յերեք հերոսների կորուստը ծանր վիշտ չպատճառեց նրանց։ Ինքը իշխանը սեպուհի և Գոռի հետ միասին վորոնելով գտավ սպանված հերոսների մարմինները և խնկուն եվ հրամայեց վրաններից մեկի մեջ պատսպարել։ Ապա կարգադրեցին, վոր ամբոխը ժողովե ամբարը մի կողմ, իսկ դիակները ծածկե հողով։

Խնկուն սկսան վրանները քակել, դիակները կապտել և ամեն ինչ ժողովելով բերել իշխանների մոտ։

Ուժանի այդ տենդային աշխատությունը դիտելով՝ Գևորգ իշխանը զարճավ սեպուհին՝

— Հիշո՞ւմ ես, վահրամ, այն խոսքը, որ ասացիր ինձ Գառնո դղյակում։

— Ի՞նչ խոսք, հարցրեց սեպուհը։

— Այն, որ ասում եյիր, թե մի ծաղկով գարուն չի գալ։

— Հիշում եմ։

— Ե՛, ի՞նչպես յեղավ. մի ծաղկով գարուն բացվեցա՞վ թե վոչ։

— Որհնյա՛լ ե աստված, բացվեցավ, պատասխանեց սեպուհը և ժպիտը խաղաց նրա խոշոր դեմքի վրա։

Ը

ԹՈՎԸՄԵՐՏ

Մարդպետունի իշխանը յուր զիշերային հարճակումը հաջողությամբ պսակելուց յետո, սուրհանդակ ուղարկեց Սևան՝ արքայական զրոշի տարած հաղթությունը թաղավորին ավետելու։

Նույնպիսի ավետյաց լուրով չտապեց Գառնի Գոռ իշխանիկը, Գեղանի բերդակալուհին, վոր դիտանոցից արդեն նշմարել եր ուրախության հայտարար զրոշը, դիմավորեց փեսացուին ամրոցի դռներում։ Ավետյաց լուրը կայծակի արագությամբ տարածվեց բերդում։ Գոհար իշխանուհին, վոր ամուսնու և վորդու հեռանալու որից ի վեր չարունակ տանջվում եր տխուր մտքերով, յեկավ և փարվեց վորդուն ուրախության արտասուքով։ Դղյակի և ամրոցի բնակիչները խռնվեցան իսկույն պատանու շուրջը՝ հաղթության մանրամասնությունները նրանից լսելու։ Ալա ամենքը միասին մտան յեկեղեցի զոհություն մատուցանելու աստծուն՝ ուխտի ղինվորների ձեռքով կատարած այդ հրաշքի համար։ Այնուհետև որվա մնացորդն անցուցին նրանք տոնակատարությամբ։

Բայց Գևորգ իշխանը այդ միջոցին զբաղված եր ուրիշ դործով։ Նա հաստատ գիտեր, վոր Բեշիրը չի հանդստանալ, մինչև վոր յուր կրած պարտության վրեժը չլուծե։ Ուստի առանց ժամանակ կորցնելու, սկսավ նորանոր պատրաստություններ տեսնել, վորպեսզի վոչ միայն ապագա հարճակմանց դիմադրե, այլև ինքը, հաջարացիների ուժը ջլատելու համար, նորանոր հարճակումներ գործե։

Այդ նպատակով, ահա՛, թշնամու թողած ավարը յուր ղինվորների և կռվին մասնակցող խումբանի մեջ հավասարապես բա-

ժանելուց յետո, նա անմիջապես քաշվեցավ Գեղ, յուր բանակն այդտեղ կազմակերպելու համար։

Բնվ վորովհետև հաղողությունը միշտ հաղողություն է ծնունդ, ուստի այս անգամ նրա կոչին չատերն յեկան։ Գեղա ամբողի բոլոր ղորքերը, վեղի ավաների և ձերմանիս դյուղի զինավարժ բնակիչները, Ուրծաձորի մախատականները և այլն, դունդադունդ հասան Գեղ և մտան իշխանի դրոշի տակ։ Նույնպես Գառնո բերդապահ ղորքերից չատերը խնդրեցին Սյունյաց ոբիորդին՝ միջնորդել իշխանի առաջ, վորպեսզի իրանք ևս ընդունվին նրա բանակի մեջ։ Այդ միջնորդությունը տեղի ունեցավ և Գառնո զինվորները Գոռի հետ միասին փութացին Գեղ։ Այսպիսով Գևորգ իշխանի բանակն ամբարացավ։ Այժմ նա հինգ հարյուրից ավելի զինվոր ուներ, վորոնք կարող եյին կռվել բաց դաշտի վրա։

Բայց Բնչիրը Մարզպետունու հետ ընդհարվելու միտք չուներ։ Նուր պարտությունը, փախուստը և ղորքերի կոտորածը այն աստիճան եյին նրան կատաղեցրել, վոր մի Մարզպետունու հաղթելը, կամ նրա «հրոսակները» ցրվելը գոհություն չեր պատճառիլ նրան։ Նա վորոշել եր դիմել Սևան, առնել նրա բերդը և բռնել այդտեղ ապաստանող հայոց Թագավորին։ Այդպիսի արության դործը միայն կարող եր մոռացնել տալ նրան յուր կրած նախատինքը և սրբել այն արատը, վոր ինքը յուր ձեռքով դրել եր հաղարացոց դրոշի վրա։

Այդ միջոցներին Նըսր վոստիկանը հեռացել եր դեպի Ատրպատական՝ Գաբալոնացիների ապստամբությունը ճնշելու համար։ Նա Բնչիրին կարդել եր Դվինում իբրև լիազոր տեղակալ։ Այդ հանդամանքը, մանավանդ, տանջում եր ղորապետին, վորովհետև հենց յուր այդ լիազորության որերում նա ամոթալի պարտություն կրեց Մարզպետունու քսան զինվորներից։ Այդ անլուր նախատինքը նա պիտի աշխատեր մեծագույն մի հաղթանակով ծածկելու։

Բնվ ահա՛ նա հրամայեց ժողովել Դվինի բոլոր հաղարացի ղորքերը, բերդերի պահակախմբերը, յետ դարձնել, մինչև անդամ, արարացի հրոսակներին, վորոնք մինչև այն ավարում եյին անպատշաճան դյուղերը, և կազմել այդ բոլորից այնպիսի մի բանակ, վորի առաջից միայն Թագավորը սարսափեր։

Բերը ամեն ինչ կազմ ու պատրաստ յեղավ, նա յելավ Դվինից դիշերանց և ուղղվեցավ դեպի Սևան։

Ցնծ վորովհետև դեռ յերկյուղ եր կրում Մարզպետունու անակընկալ հարձակումից, այդ պատճառով նա Գեղամ լեռներից չանցավ. այլ Մաղաղը պատելով՝ մտավ Կոտայք։

Գևորդ Մարզպետունին, ընդհակառակը, սպասում եր Բեշիրին Գեղամ ամրոցում, վորովհետև հավատացած եր, թե նա իրանից մեկայն պետք և յուր պարտության վրեժն առնե։

Ցերեկ որից յետ հաղարացոց բանակը Գեղամա ծովափունքը բռնեց, զարկելով յուր վրանները ուղիղ Սևանա հանդեպ։

Բայց Բեշիրը, վոր քնավ զաղափար չուներ այդ կղզու մասին, մնաց տարակուսած, յերբ տեսավ նրան չորս կողմից շրջապատած։

— Ինչպե՞ս պիտի դրավենք այս տարօրինակ ամրոցը, մտածեց նա ինքն իրան և խորհրդի հրավիրեց յուր զնդապետներին։

Նրանցից վոմանք խորհուրդ տվին լաստեր կազմել տալ և նրանց միջոցով զորքը հանել կղզին։ Վոմանք ծովակի հատակը խոր չտեսնելով առաջարկեցին՝ հողով և քարերով լցնել այն անջրպետը, վոր կղզին բաժանում եր ափից, և նրա վրայով հասնել մինչև ամրոցը։ Իսկ մի ծեր զինվորական, վոր ծանոթ եր հաղարացիների դարեր առաջ Հայաստանում արած ավերածությանց պատմությանն, առաջարկեց զորապետին ծովակն արձակել։

— Ի՞նչպես թե ծովակն արձակել, զարմացած հարցրեց Բեշիրը։

— Այնպես, ինչպես վոր յերկու հարյուր տարի առաջ Մահմեդ Բ. վոստիկանն արավ, պատասխանեց զինվորականը։

— Բայց նա ի՞նչպես արավ։

— Ցերեկ տարի չարունակ այս կղզին պաշարեց, բայց զբաղվել չկարողացավ, վորովհետև կղզեցիները յուր բոլոր հնարները ի գերև եյին հանում. Քանի՛-քանի անգամ նա լաստեր չինեց և բազմաթիվ զորք հանելով նրանց վրա, կղզին չրջապատեց։ Բայց հայերը քարընկեց մեքենաներով ժայռեր եյին գլորում այդ լաստերի վրա և ջրի տակը խորասուզում նրանց։ Շատ անգամ էլ յերկաթե յերկար կարթերով քաշում եյին լաստերը դեպի կղզու ժայռերը և վառած նավթ ածելով զորքի վրա, կբակում նրանց։ Վոստիկանը փորձեց մինչև անգամ յերկրաքար պաշարմամբ սուսամահ անել կղզեցիներին, բայց այդ էլ չկարողացավ, վորովհետև նրանց վարժ լաստաավարները յեկնում

Եյին դղրդուց դիշեր ժամանակ և շրջակա ափերը հառնելով՝ ամառ պաշար եյին բերում կղզին այնպիսի ժամանակ, յերբ հարցասիներից վոչ վոք չեր կարողանում խանգարել նրանց։ Յերբ վոստիկանը ամեն կողմից հույսը կտրած կամենում եր պաշարումը թողնել և հեռանալ, մեր արաբացի դիտուններից մինը, վոր գտնվում եր այդ ժամանակ Մահմեդի բանակում, յեկավ և խնդրեց նրան հրաման տալ իրան՝ կղզին առնելու մի նոր հնարք գտնել։ Վոստիկանը շնորհեց արաբացուն այդ իրավունքը։ Եվ նա մի քանի որ շարունակ ծովակի շուրջը պտտելուց յետո յեկավ և հայտնեց վոստիկանին, թե գտել է ծովն արձակելու և Սևանն ափից բաժանող անջրպետը յամաքեցնելու հնարը։ Յերբ Մահմեդը զարմացած հարցրեց, թե «վո՞րն է այդը»։ նա պատասխանեց.— «Սևանա լիճը գտնվում է շատ բարձր լեռների վրա և այդ լճից յելնում է Հրազդան մեծ գետը։ Այդ հանդամանքը ցույց է տալիս, թե հնարավոր է Սևանը պատող ափերից մինը փլցնել և դեպի չրշակա ձորերը անցք բանալով՝ ծովակի ջուրը դատարկել»։ Արաբացի դիտնականի դյուտը հավանական գտավ Մահմեդը և հրամայեց խնդուն փորել այն ափը, վոր հարմար եր գտնում հնարագետը։ Մի քանի չարթվան ընթացքում արաբացի զորքերը պատրաստեցին մի հսկայական ջրանցք, վորտեղից ծովակի ջուրն սկսավ հոսել դեպի յուր չուրջը պատող ահավոր ձորերը։ Հոսանքը բանալուց յերկու–յերեք որ հետո այս անջրպետը, վոր ահա մեր առջևն է, ցամաքեց բոլորովին և Մահմեդի զորքը անարգել մտավ կղզին, գրավեց հինավուրց բերդը, վոր, ասում եյին, յուր հիմնարկության որից ի վեր դեռ վոչ մի զորավոր թշնամի չեր կարողացել գրավել։ ապա սկսան կոտորել բնակիչներին, կողոպտել գանձերով հարուստ յեկեղեցիները, դերի վարել այդտեղ ապաստանած հայերն իշխանուհիներին...

— Այդպես ել մենք կանենք, ընդհատեց Բեչիրը զինվորականին։ Ո՛վ վոր ձեղանից կարող է այդ հինավուրց ջրանցքը գտնել, թող շտապե, յես նրան ամենամեծ պարգևը կտամ։

— Այդ դիտնականը, տեր, իմ նախահայրերից մինն եր, շարունակեց զինվորականը, և այդ պատմությունը սովանդաբար մնացել է մեր ընտանիքում։ Գուցե դարձյալ նախկին հնարագետ թոռներից մինին հաջողվի այդ դյուտը, ուստի խնդրում եմ ինձ շնորհել այդ հետազոտության իրավունքը։

Բեչիրը զինյալ հնարագետի ժառանգին խնդրած իրավունքը

և նա յուր մի քանի ընկերներով չուաղեց Գեղամա Ծովամիւնքը հետազոտելու։

Բայց վորպեսզի այդ հնարը չհաջողելուց ժամանակ չկորցնե, նա հուշց նաև մյուս միջոցների մասին. այն է՝ վիայտահարներ ղրկեց մոտակա անտառը, վորպեսզի դնդաններ կարեն լաստերի համար։

Թողնենք այժմ հազարացիներին իրանց պատրաստութեանց հետ և տեսնենք, թե ի՞նչ էին անում այդ ժամանակ Սևանա կղզում։

Առավոտ էր, յերբ վանական հայրերից մի քանիսը ծովային իջնող հրոսակների գնդերը նշմարեցին։ Արաբական դրոշը ծանօթ էր նրանց. ուստի աճապարանօք խուցերը վազեցին՝ վանահորն ու մխաբաններին այդ նորութիւնը հայտնելու։ Յերբ վերջիններըը բլուրը յելան՝ ծովափը դիտելու, թշնամու հեծելազնդերը բռնել էին որդեն հանդիպակաց տափաստանները։

Մարզպետունու հաղորդած լուրը չէր հարմարում այս անակընկալ նորութեան։ «Յեթե Բեշիրը հաղթված եր, ասա վո՞րի զորքերն էին Սևանի վրա հարձակվողները...»։ Այս միտքը յերկյուղ բերավ մխաբանների վրա։

Բայց յերբ այդ մասին հայտնեցին Թադևոսին, նա ամենի հակառակը փարատեց՝ ասելով.

— Մարզպետունուց ջարդ ուտելու պատճառով է, վոր Բեշիրը հարձակվել է մեզ վրա. նա իշխանի վրեժը կամենում է լուծել Թադևոսից։

— Ի՞նչ պիտի անենք այժմ, սրտատրոփ հարցրեց Թադուհին, վոր մխաբանների հետ միասին գտնվում եր Թադևոսի մոտ։

— Վոչինչ, անհոգ յեղանակով պատասխանեց Թադևոսը. յեթե արաբացիք կվտրձեն մոտենալ մեր կղզուն, մենք կջարդենք նրանց լաստերը և իրանց էլ ջրի հատակը կխորասուղենք։

— Բայց ի՞նչ ուժով. մենք այստեղ ընդամենը հարյուր զինվոր ունինք, հարցրեց Թադուհին յերկյուղագին։

— Հարյուր էլ միաբան, հարեց Թադևոսը. ով վոր ազգի հացն ուտում է, ազգի համար էլ կարող է կռվել։

— Մենք պատրաստ ենք. մենք չենք փախչիլ կռվից, դիտեց վանահայրը. միայն թե զենք և պահաստում մեր յեղբարց։

— Զենք շատ ունին նրանք, պատասխանեց Թադևոսը. կղզին, վառք աստուծո, ժայռապատ է. իսկ լաստերի հետ կռվելու համար հարկավոր չէ սուր կամ նիզակ։ Հրամայիր, վոր

քարհատները ժայռեր պոկեն կղզու խարակներից և ժողովեն նրանց ափերի մոտ: Մեր սուրբ հայրերը, կարծում եմ, քարկոծել կարող են. հետևապես, յերբ իմ դինվորները կսկսեն նետահարել և կամ կարթերով լաստերը քաշել, նրանք էլ իրանց տարածիր կտեղան:

— Այդ կարող ենք անել...

— Թույլ չենք տալ, վոր կղզուն մի լաստ մոտենա...

— Բոլորին կխորասուզենք...

Այս ու այն կողմից յեռանդով խոսեցին միաբանները:

Տակավին այս խորհրդի մեջ եյին Թադավորն ու կղեցիք, յերբ արքայի Թիկնապահներից մինը ներս մտնելով հայտնեց, Թե Թշնամու կողմից ղրկված մի նավակ դալիս է դեպի կղզին:

— Թո՛ւյլ տվինք, վոր մոտենա. մի նավակը մեղ չարիք բերել չի կարող, հրամայեց Թադավորը: Ապա յելնելով յուր կացարանից՝ պատվիրեց Թիկնապահներին պատրաստվիլ խնդություն և իջնել կղզու տափարակը: Նույն տեղ ժողովելու պատվեր տվավ նաև միաբաններին:

Յերբ ամենքը հավաքվեցան, Թադավորը նույնպես իջավ այդտեղ և դինվորները առաջից, իսկ միաբանները վերջից կարգերով, կանդնեցրեց նրանց կղզու մուտքի կամ պարիսպների առաջ այնպիսի մի ձևով, վոր ափին մոտեցողը կկարծեր, Թե կղզին լիքն է զորքերով:

Նավակը, վոր վարում եր ցամաքաբերդցի մի հայ, մոտեցավ ափին: Նրա մեջ նստած եյին յերկու հազարացի իշխաններ և մի քանի զորական: Յելնելով ցամաք, նրանք հայտնեցին, Թե Բնչիր զորապետի կողմից պատգամ են բերել հայոց Թագավորին, ուստի կամենում են տեսնել նրան:

Արքայի հրամանով Թիկնապահները առաջնորդեցին նրանց դեպի արտաքին տունը, ուր գտնվում եր այդ ժամանակ Թագավորը: Նա չեր ցանկանում, վոր ոտարները կղզու ներսը տեսնեն, ուստի պատգամավորներին ընդունեց այդտեղ:

— Ի՞նչ բարի հրաման, հարցրեց Թագավորը ժպտալով:

Պատգամավորները դլուխ խոնարհելով պատասխանեցին.

— Բնչիր զորապետը բարևհաճեց յուր վողջույնն ուղարկել հայոց Թագավորին և հայտնել, վոր ամբարտավան հրամանով ու դրոշով նա յնկել և Սևան կղզին առնելու և իրան, Թագավորին, դերելու: Բայց վորովհետև ինքը Բնչիրը ի ներքուստ բարեկամ և արքային, ուստի առաջարկում է նրան զալ յուր վրանը՝ խա-

զաղության ու բարեկամության դաշն կռելու, իսկ Սևանը առանց կռվի հանձնել իրան, իբրև ամիրապետի իշխանության պատկանող կալվածք: Հակառակ դեպքում, ավելացրին պատգամավորները, զորապետը չպիտի խնայե վոչ ջո անձին և վոչ Սևանի բնակիչներին:

Թագավորը թնդետ խորը վիրավորվեցավ այս հանդուգն խոսքերից, բայց յուր սառնությունը պահել աշխատելով, ժըպտալով պատասխանեց.

— Հայոց յերկիրը ամիրապետինն է. վոչ վոք կարող է այդ ուրանալ. ուրեմն հարկ չկա կռիվ մղել այս կղզու դեմ, քանի վոր նրա մուտքը փակված չէ ձեր առաջ: Իսկ ինչ վերաբերում է ինձ, հայտնեցեք Բեչիր զորապետին, վոր շատ գղացված եմ նրա վողջույնի և ինձ առաջարկած բարեկամության համար: Ասացեք, վոր վաղ առավոտ անձամբ կգամ նրան վողջունելու: Տեսությունս հետաձգում եմ մի որ այն պատճառով, վոր կարողանամ պատրաստվել և պարտ ու պատշաճ մեծարանքով դիմավորել զորապետին:

Պատգամավորները հիացան Թագավորի խոնարհ ու քաղաքավար պատասխանի վրա, վորովհետև նրա սիրտը թափանցել չկարողացան. ուստի ուրախ-ուրախ իրանց նավակը դառնալով՝ դեպի բանակն ուղղվեցան:

Յերբ Բեչիրը Թագավորի պատասխանը լսեց, հրճվեցավ. նա հավատաց, վոր Թագավորը սարսափել և արդեն յուր զորքի բազմությունից և թե յուր տեսությունը հետաձգել է այն պատճառով, վոր արժանավոր ընծաներ պատրաստե յուր համար:

Բայց Թագավորը դառնալով յուրայիններին մոտ, հայտնեց, վոր պատրաստվին վաղն առավոտ Թշնամու վրա հարձակվելու:

Արքայի թիկնապահները, վորոնց թիվը հազիվ հարյուրի չէր հասնում, մնացին ապշած:

— «Ի՞նչպես թե հարձակվել Թշնամու վրա. ի՞նչ կարող ենք անել մենք այն ահագին բանակի դեմ...», մտածեցին նրանք:

Թագավորն այդ իմացավ և զինվորներին դառնալով հարցրեց.

— Կուզի՞ք, վոր ձեր Թագավորը դերվի Բեչիրից:

— Յերբե՛ք, դոչեցին նրանք միաբերան:

— Պատրաստվեցեք ուրեմն կռվելու: Իշխան Մարզպետունին քանի հոդվով ջանջանեց այս բանակը. մի՞թե դուք, հարյուր հոգիք, նույնը չեք կարող անել:

Մարզպետուհու քայլերն անունը ցնցեց զինվորներին։

— Առաջնորդի՛ր մեզ, տեր արքա. մենք յետ չենք մնալ նրանցից, դուչեցին նրանք յետադիմով։

— Ես ձեզ հետ կլինեմ մինչև իմ վերջին շունչը, ասաց Թագավորը։ Ապա դառնալով կղզու դարանապետին հարցրեց. քանի՞ լաստե պատրաստութիւն ունի կղզին։

— Բաւան, յիշեն դրծածական նավակները չհաշվենք, պատասխանեց դարանապետը։

— Այդ բոլորը թող հանվին դարաններից։ Վաղ առավոտ, դեռ արևը չծագած, նրանք պատրաստ պիտի լինին ծովն իջնելու։

— Պատրաստ կլինին նուչինակ այս գիշեր, հարեց դարանապետը և դուրս թռնարկելով արքային, հեռացավ։

Թագավորի ձեռնարկութիւնը ավելի քան հանդուգն էր։ Մի քանի տասնյակ զինվորներով դնալ հազարավորների դեմ և այն՝ ջրերի խորքից նրանց հետ կռվելու համար, կինչանակեր՝ դնալ իսկական մահվան դեմ։

Վանքի միաբանները, որոնք ավելի լավ էին կշռում վտանգի մեծությունը, խոսեցին այս մասին Թագուհու հետ, իսկ վերջինս յեկավ արքային համոզելու, որ յետ կանգնե նա յուր մտադրութիւնից։

— Այս կղզու մեջ մենք կարող ենք ապահովապես պաշտպանվել, ասաց նրան Թագուհին. մեր ունեցած զորքը և նրա հետ եվ վանքի միաբանութիւնը կարող են հաջողութիւնով յետ մղել ամեներից թշնամու լաստերը։ Դրա համար կղզին ունի առանձին հարմարութիւն։ Իսկ կղզուց դուրս՝ չկա քեզ համար հենարան. թշնամին յուր նետերի տարափով կծածկե քո հարյուր զինվորներին. այնուհետև կղզին կմնա արտաքոց կատաղութեան նշանակ։

— Երկու զորավոր պատճառներ ստիպում են ինձ այդ քայլն անելու, պատասխանեց Թագավորը.-առաջինը՝ իմ արքայական պատվասիրութիւնը։ Այս դռռոզ հաղարացին համարձակվեցավ պատգամավոր ուղարկել ինձ և Սևանը պահանջել, անվանելով նրան ամիրապետի կալված։ Բացի այդ, նա ինձ հրավիրեց յուր բանակը՝ բարեկամութեան դաշն կռնքելու, որը թռանց լեզվով կինչանակե՝ գերութեան չղթայով կապվելու...։ Այդ թշվառականը, որը չարդ և կերել Մարզպետուհու քսան զինվորներից, այնքան անզոր և համարում հայոց Թագավորին,

վոր համարձակվում է այսօրինակ նվաստացուցիչ առաջարկություն անել նրան: Այժմ իմ պարտականությունն է հասկացնել նրան, վոր առյուծը դառադրի մեջ էլ առյուծի սիրտ է կրում...: Բացի այդ, Մարզպետուհու որինակը իմ առջևն է. վո՛րքան էլ իմ զինվորների թիվը նվազ, այսուամենայնիվ չես պիտի հարձակվեմ, վորովհետև ամոթ է, վոր Աշոտ Ցերկաթը Գևորգ իշխանի չափ զոնե կորով չպատահայտե այս դեպքում:

Ցերկրորդ պատճառը, վոր առավել զորավոր է, այն է՝ վոր կյանքը կորցրել է յուր արժեքը իմ աչքում. նա դարձել է ինձ համար տանջարան. չես աշխատում եմ փախչել նրանից... Այս մասին չատ եմ խոսել քեզ հետ. և դու գիտես, թե վորքա՛ն իրավունք ունեմ չես մահվան վախեցելու... Այժմ ահա՛ հասել է ժամը և չես պիտի ոգուտ քաղեմ նրանից...չես վայրկյան առաջ կամենում եմ ազատվել խղճի խայթերից, հոգվո անվերջ տանջանքներից... Ցնել այս դեպքում ինձ մնում է տակավին մի մխիթարություն. այդ այն է, վոր այս կռվի մեջ ստացածս մահը կարող է իմ անունը փառավորել: Ցես, ի հարկե, չեմ մտածում իմ հիշատակի, այլ հետնորդների մասին. իմ մահվամբ չես մի իրավախուսափական որինակ կթողնեմ նրանց համար...:

— Առաջին պատճառը և՛ հարկավի և՛ իրավացի չե. բայց յերկրորդը՝ անիրավ, պատասխանեց Թաւուհին: Ցեթե կյանքը բեռն է դարձել քեզ համար և դու կամենում ես նրանից ազատվել, դա քո իրավունքն է. բայց քեզ հետ միասին տանել մահվան դեմ ուրիշ հարյուր հոգի, անիրավացի չե: Այդ մարդիկը, դուցե կղղում պատասպարվելով ազատ մնային վտանգից. ինչո՞ւ աշխարհից յեղնելու վայրկենին խակ ծանրաբեռնվել հանցանքներով... ինչո՞ւ պատճառ դառնալ ընտանիքների դժբախտության, զրկել նրանց կերակրող ձեռքերից...:

— Այդ դեպքում արդեն թուլ չեմ տալ, վոր ինձ մեղադրեն. չես արդեն չափել եմ, կշռել իմ քայլը և գիտեմ, թե ո՞ւմ կարոլ է վնասել: Այս հարձակումը դուցե մի զոհ ունենա. բայց այդ զոհը կլինի նա, ով հետամուտ է մահվան. մնացյալները հաղթանակով կվերադառնան:

— Տարօրինակ մի դուշակություն է այդ...:

— Այդպես է. Բեչիրն այժմ անհոգ նստած յուր վրանում ազատում է իմ անձնատուր լինելուն, կամ մեր կղղու վեճդպին դանձերին»... Նրա պատգամավորներն այնպիսի պատասխան տարան այստեղից, վոր նա ուրիշ բանի ազատել չի կա-

քող, Ուրնմն անխորհուրդ կերպով չեմ կես այս քայլն անում. Թո՛ղ անհող լինին մխաբաններըը, անհող լինի և Թադուհին:

— Ցնդ Թադուհի՞ն... Ուրնմն դու հավատում ես, վոր Նա կարող է անհող լինել, յերբ Թադավորը հետամուտ է լինում մահվա՞ն...:

— Ձեյի կամենալ վիշտ պատճառել քեղ... Բայց իմ վճիռն անդարձ է: Ինչ հետևանք էլ վոր Նա ունենա, դու պիտի հաշտվես Նրա հետ: Իմ յերջանկության որնըում անդամ կես Թուլլ չեմ տվել, վոր անձնասիրությունը դերակշռե իմ մեջ պատվասիրության, ի՞նչպես կարող եմ Թուլլատրել այդ ա՛յժմ, յերբ դեպի իմ անձը ուղղում եմ միայն ատելություն...:

— Ո՛, ինչպե՛ս անդութ ես... դռներ վերջին պատճառն ինձ չհայտնելիր. դռներ դրալ չտայիր ինձ, Թե դիմավորում ես մահվան այն պատճառով, վոր չունես աչխարհում այլևս մեկը, վորի համար կամենայիր դու ապրել...:

Այս ասելով Թադուհին հեռացավ Թադավորից և վշտահար սրտով յուր կայանը դարձավ:

Հետևյալ առավոտ, դեռ արևը չծագած, լաստերը պատրաստ ջրի վրա եյին: Թադավորի ներկայությամբ դինվորները նետաձգության փորձեր եյին անում: Նա կամենում եր ստուգել, Թե վորո՞նք կարող են պիտանի լինել արշավանքին, վորպեսզի լաստերի վրա անչահ մարդիկ չվերցնե:

Ցուր հարյուր դինվորներից Նա ընտրեց միայն յոթանասուն հոգի, վորոնք կորովի, մաղից չվրիպող նետաձիգներ եյին: Դրանց բոլորին տեղավորեց տասը լաստի վրա, յուրաքանչյուր լաստին հատկացնելով յոթը դինվոր. իսկ լաստավարներ կարգեց մխաբաններից, վորոնք հաջողակ եյին այդ դործում:

Ապա ընտրեց յուր համար մի Թեթևաչարժ նավակ, ուր վարողներից զատ տեղավորեց նաև յուր ազատանի Թիկնապահները: Այնուհետև հրամայեց տավալ կղզում մնացող զորքին և միաբանությանը, վոր չարունակ դիտեն յուր չարժումը և նշան տալուն պես բոլորը նետերով դինված յելնեն լաստերի վրա և առաջանան դեպի Թշնամին: Այդպես պիտի անեյին նրանք, ցույց տալու համար, Թե կղզուց նոր զորք և հասնում ողնության:

Ցերբ արևը Այծեմնասարի յետևից յելնելով՝ բարձրացավ մի ասպարեզ, Թադավորի վոտքերի նավատորմը սկսավ մեղմ ընթացքով դեպի Բնչերի բանակն առաջանալ: Արքայի նավակը, վոր զարդարված եր դրոշակներով, դնում եր առջևից, իսկ լաստերը

հետևում էին նրան զույգ-զույգ: Զինվորները թնդեցնում էին զրահազգեստ, բայց ամփոփած ունեին նիզակներն ու վահանները, վորպեսզի կարծել տան թշնամուն, թե զինվորված չեն զբաղված իրանց մոտ: Հաղիվ քանի մի հարյուր գրիկաչափ հեռացան նրանք կղզուց, և ահա Բեչիրի դունդերը յեկան խոնվելցան ափերի վրա՝ հայոց թագավորի և նրա շքախմբի դալուստը դիտելու: Նրանցից շատերն անզեն էին. շատերը, մինչև անգամ, բոկոտն կամ կիսով չափ հագված: Վոչ վոք նրանցից չեր սպասում հարձակման:

Իսկ Բեչիրը, վոր ճգված եր յուր զարդարուն վրանում, յերբ Աշոտ-Ցերկաթի դալուստն իմացավ, հրամայեց, վոր շքախմբի խմբերը դան և վրանը պատեն, վորպեսզի հայոց թագավորը տեսնե ամիրապետի ղորավարին կատարյալ շքեղության մեջ: Ապա նա հագավ յուր հարուստ զգեստները, ծածկվեց վոսկե ցցունքով զարդարուն սպարոյը, կապեց դամասկյան վոսկեզարդ սուրը և փառավոր ոթոցի վրա բազմելով սպասում եր հյուրին: Նա վորոշել եր պատվով պահել թագավորին մի քանի ժամ, մինչև վոր հետը բերած ընծաները նա կհանձներ յուր դանձապահին. իսկ հետո կհրամայեր չղթայի զարնել, վորպեսզի Սևանն առնելուց հետո, հետխոտն տաներ նրան Դվին:

— Այն ժամանակ հայերը թո՛ղ ճանաչեն Բեչիրին, թո՛ղ սարսափահար լինին նրա անունը լսելուց. և այն սրիկա իշխանը, վոր համարձակվեց դիշերանց իմ բանակի հանդիստը խռովել, թո՛ղ դա ծնկաչոք ներողություն խնդրելու և Դվինի զնդանում յուր դժբախտ դլուխը լալու...:

Այս մտքերով եր զրաղված Բեչիրը, յերբ Աշոտ արքայի տորմիղն սկսավ մոտենալ ափին: Հազարացի հրոսակները սկսան ավելի և ավելի խոնվել ալազոտի և ժայռերի վրա: Մոտեցող լաստերը իրանց զրահազգեստ զինվորներով՝ տեսնելու դեղեցիկ խաղալիքներ եյին թվում նրանց:

Հանկարծ թագավորը կապարճակրի ձեռքից արծաթե աղեղն առնելով դոչեց.

— Ժամանակ է, քաջեր. նետերնիդ տեղացե՛ք...:

Զինվորները մի ակնթարթում վահանները ձեռք առան և լայնալիճները լարելով՝ սկսան արագ-արագ նետաձիգ լինել դեպի հազարացիները:

Մի զարհուրելի աղաղակ ու իրարանցում բղխեց ծովափին: Արաբացիք գլուխները կորցրած սկսան իրար հրելով և կոխկրը-

տելով դեպի վրանները վազել. բայց քաջածին հայերն նետերը սաստիկ արագությամբ տեղալով հետևում էին նրանց և թափվում չաուերին ավազուտի մեջ, ժայռերի վրա, կամ նույնիսկ վրաններն առաջ։ Վոչ մի նետ ապարդյուն չէր սլանում, վոչ մի ճայթյուն առանց դոհի չէր անցնում։

Բնչերը սակավին դնդեցիկ յերաշներ էր տեսնում, յերբ յուր բանակի մեջ բղդող զարհուրելի աղաղակը լսեց. Նա չփոթված վեր թռավ տեղից և վրանի դռնում թիկնապահներին պատահեց, վորոնք սրտատրոփ, այլայլված հայտնեցին նրան, թե հայերը հարձակվել են իրանց վրա։

— Ո՛ն անդր, ի զի՛ն, դռռաց նա խռպոտ ճայնով և սուրը հանելով վազեց դեպի առաջ։ Բայց փախչող զորականի խոսքը պատահելով՝ սակաված յեղավ յետ մղվել դեպի յուր թիկնապահները։

Այսուամենայնիվ զորապետն իրան չկորցրեց. նա աշտանակից խնդրեց յուր ամեհի նժույգը, վոր բերավ նրան թիկնապահներից մինը և ահավոր սուրը հանելով դռռաց.

— Արաբացի քաջեր, մի՛ թուլանաք, մի՛ չփոթվիք. ո՛ն, հետևեցեք ինձ... հառա՛ջ, սուսերամարտներ. հառա՛ջ, նիզակամարտներ... Բշնամին սակավաթիվ է, հարձակվեցե՛ք, ջարդեցե՛ք նրան...։

Բայց զորապետին քչչերն էին հետևում իսկ թիկնապահները դռռում էին.

— Բշնամին ծովի վրա յե, տեր, ի՞նչ կարող են անել նրանց մեր սրերն ու նիզակները...։

— Ո՛ն ուրեմն, հառա՛ջ, նետաձիգ քաջեր. ցո՛ւյց տվիք անհավատներին ձեր բազկի զորությունը. ծովակուր արեք այդ արիկաներին, դռռում, դղրդում եր զորապետը։

Նետաձիգները, արդարև, խմբվեցան նրա շուրջը և տասըբանիակ կազմելով սկսան հառաջանալ դեպի ծովափը։ Ներանցից չատերն սկսան քաջաբար աղեղները լարել, նետեր արձակել, բայց բնությունն ինքը ոգնության եր հասնում հայերին։ Արևը նրանց յետևը լինելով՝ յուր հրափայլ ճառագայթներով խաղտում եր արաբացի պինվորների աչքերը. այդ պատճառով նրանք չէին կարողանում իրանց նետերն ուղղել նպատակին, այլ մեծ մասամբ ձգում էին ծովի դատարկ տարածության մեջ։ Մինչդեռ հայերն, ընդհակառակը, չէին չեզոում նպատակից։ Ներանց պողպատյա փքիններըը թռչունցում էին Բշնամու տապարակիսը,

պատահում էին կաշվե վահանակները և անարգել ցցվում զրահապատ կրծքերի մեջ, խլում զորականի սաղավարտը, փշրում նրա ջերեսակալը, կամ շամփրում ասպարից դուրս դռնվող օրունքները։ Ծովափը հետզհետե ծածկվում էր դիակներով. և սակայն Բեչիրը դիմադրում էր համառությամբ, հուսալով վերջ ի վերջո վանել ծովի միջից հերոսաբար կռվող քաջերին։ Բայց նրանք ընդհակառակը, հետզհետե զորանում և ավելի ու ավելի մոտենում էին ափին։ Այդ հանդամանքը զարմացնում էր արաբացիներին։

Հանկարծ Թազավորի նավակի մեջ բարձրացավ մի կարմիր դրոշ և սկսավ ծածանել ոդի մեջ։ Դա կղզեցիներին վորոշ հրաման տվող նշանն էր։

Իսկույն կղզու առաջ սկսան յերևալ նորանոր լաստեր, վորոնք հետզհետե դուրս էին գալիս խարակների յետևից և առաջանում դեպի հայոց նավախումբը։ Թշնամին պարզ տեսնում էր, վոր նրանք լցված էին մարդակուլյա բազմությամբ։ Ցեղակարաբուն նիզակները, վորոնք ճոճում էին լաստերի վրա, ցույց էին տալիս, վոր յեկողները նոր զորախմբեր են։ Գունաձե վահանները և բազմատեսակ զենք ու զրահները, վորոնք փայլում էին այդ լաստերի վրա, մի առանձին սպառնական տեսք էին տալիս նրանց։

Բեչիրի զորքերն սկսան վախենալ։ Նրանցից չատերը, մինչև անգամ, վորոշեցին նահանջել կամ միանգամայն փախչել։ Վորովհետև մտածում էին. «Եթե կռվող տորմիղը այսքան մեծ կոտորած և անում, ի՞նչ կլինի մեր դրությունը, յերե ուղնակատ լաստերն էլ հասնին»։ Իսկ այս վերջիններն ավելի բազմաթիվ էին։

Զորապետը նկատեց զորքի այդ խլրտումը և ավելի սկսավ խրախուսել նրանց. բայց յուր ձայնն այլևս չէր վոգևորում լքվածներին։ Իզուր նա դուռում և փրփրերախ նժույգն այս ու այն կողմն էր վազեցնում. յերկյուղը հետզհետե պաշարում էր ամենքին։ Նրա համհարզներից մինը, մինչև անգամ, մոտեցավ և խորհուրդ տվավ նրան նահանջի փող հնչեցնել։

— Այդ հայերը, տե՛ր, մեծ պատրաստություն ունին, ասաց նա զորապետին. փոքրիկ տորմիղով մեզ դեմ խիղախելը միայն մի պատրվակ եր, վորով նրանք կամեցան քաշել մեզ դեպի կռիվ և գրաղեցնել։ զորավոր հարձակումը անշուշտ նոր պիտի սկսեն։

— Այդ յեկողներին էլ կջարդենք մենք, դուռաց զորապետը։

— Զինք կարող, վորովհետև նրանց ուրիշները կհետևեն։ Եվրը յես պատրաստվոր դնացի թաղավորի մոտ, նրա կղզին լիքն եր ղորքերով. մենք պիտի խույս տանք կոտորածից, պնդեց համհարդը։

Նրանք դեռ այս վհևի մեջ եյին, յերբ նետաձիղների մի խումբ, վոր հանդիպակաց եր կուչող լաստերին, չկարողանալով այլևս դիմադրել նրանց՝ յերևս դարձրավ և սկսավ փախչել։

Բիչիրը կատաղած ու այլայլված արշավից դեպի նրանց. բայց հուսահատ խուժանին դիմադրել չկարողացավ։ Սաստիկ հոսանքն առավ յուր մեջ նրա նժույգը և առաջ վարեց։ Մյուս կուչող խմբերը, վորոնք տակավին դիմադրում եյին հայերին՝ անսանելով զորապետին փախչող խուժանի մեջ, կարծեցին, թե նա խույս և տալիս ճակատից, ուստի իրանք ել դիմադարձ յեղան և սկսան փախչել։ Նահանջն ընդհանուր դարձավ. Բիչիրը դադարեց դոռալուց և յուր զնդապետների հետ միասին հետևեց փախչող ղորքին։

Բայց Թշնամու նահանջը նոր յեռանդ ներշնչեց հայերին։ Նրանց լաստերն ալիքների վրա սուրալով՝ հասան յեղերքին. մարտիկները իրար յետևից դուրս թռան ցամաք և ահագին աղաղակով ընկան Թշնամու յետևից։ Հասան չուտով և այն լաստերը, վորոնք ահարևկել եյին Թշնամուն։ Դրանց վրա յեղողները վոչ այլ վոք եյին, յեթե վոչ մնացորդ յերեսուն զինվորները, վորոնց թաղավորը թողել եր կղզում, և Սևանի հողևոր միաբանությունը։ Վերջիններս որքայի հրամանով հանել եյին վեղարներն ու խույրերը և ծածկել սաղավարտներ, իսկ ձեռքներին բռնել վահան և նիզակ։ Նրանք, ի հարկե, չպետք է մասնակցելին կռվին, և վոչ իսկ ամին մոտենային, այլ միայն դրաստունդ կեղծելու պաշտոն ունեյին։ Այդ պատճառով նրանցից շատերը կրում եյին միանգամայն մի քանի հատ տեղեր, վորպեսզի հեռվից ավելի ահավոր յերևան Թշնամուն։

Թաղավորի հնարագիտությունը հաջողեց։ Եվրը նրա մարտիկները դուրս յեկան ցամաք, «խորովիլակի» տորմիղն ել հասավ այդտեղ։ Եվրեսուն զինվորները և նրանց հետ միասին յերիտասարդ արիզոները վուխացին, միացան կուչող քաջերին և ընկան փախչող հայաբացիների յետևից։ Հալածողներին ընկերացան մոտակա ցամաքարդ, Վարսեր, Գոմաձոր, Կասիճին և այլ դյուղերի հայ բնակիչները։ Նրանք Թշնամու ցրված զնդերի մեծ

մասը ջարդեցին և մնացյալները վախցրին դեպի հեռավոր լեռները ու հովիտները։

Դառնալով բանակատեղը, հայ կորիճները հավաքեցին թշնամու թողած ավարը, որը բավական հարուստ էր, կապտեցին ընկածների զենքերը և քակեցին բաղմաթիվ վրանները, որոնց հետ նաև բեչերի հարուստ տաղավարը, և այդ ամենը միասին փոխադրեցին կղզին։

Թագուհին, որը սրտատրոփ սպասում էր կռվի վախճանին, յուր նաժիշտների հետ միասին լիալով կղզու ափը՝ հաղթական յերգերով վերադարձող քաջերին դիմավորելու։

Հայերն այս կռվում կորուստ չունեցան. վիրավորվել էին մի քանի հոգի, որոնց կղզին հասնելուն պես, թագավորը հրամայեց փոխադրել հարմար կացարան՝ զղուշությամբ խնամելու համար։ Այնուհետև հոգևոր հայրերը մատուցին տաճարում դոհության պատարագ, որին ներկա եյին թագավորը, թագուհին և բոլոր զինվորները։ Ապա վերջինները կատարեցին հաղթության խրախճան, որին մասնակցեց շրջականերից ժողովված դյուղական ամբոխը։

Բայց թագավորը տխուր էր և դալկադեմ. նա ժամանակից առաջ քաշվեցավ յուր կացարանը առանց զորքի ուրախության մասնակցել կարողանալու։

Այս հանգամանքն անհանդստացրեց թագուհուն և նա դիմեց արքայի մոտ՝ նրա տխրության պատճառն իմանալու։

— Ես վիրավորված եմ, ասաց թագավորը մեղմ ձայնով։

— Վիրավորվա՞ծ... բացականչեց թագուհին. ինչո՞ւ ուրեմն չես հայտնում մեզ այդ... ո՞ւր է վիրաբույժը... կանչենք նրան այստեղ...։

— Թո՛ղ, չես չեմ կամենում զորքի ուրախությունը խանգարել... մի որից հետո եկ կարող ենք մենք այս վերքը դարմանել, ընդհատեց նրան թագավորը։

— Բայց դու դունատ ես և թախծադեմ. անչուշտ խոր է քո վերքը...։

— Ես տխուր եմ այն պատճառով, որը կենդանի վերադարձած այստեղ...։

— Աստվա՛ծ իմ... Դու դարձյալ նույն մաքերո՞վ ես զբաղված։

— Ես ցավում եմ, որ մահացու չէ վերքս։

— Ինչպե՛ս ինձ, աղաչում եմ... աղերսեց թագուհին։

— Այո՛, թշնամին արդեն նահանջում էր, երբ մի նետ յեկավ և ցցվեց իմ կողերի մեջ... Ես ուրախացա... կարծեցի թե իմ դրջի հաղթանակը կպատկվի իմ մահվամբ. այդ պատճառով էլ խնդություն դուրս քաշեցի նետը, վորպեսզի նրա հետ մի հատ յէլներ և իմ հոգին. բայց ավա՛ղ... Արաքացու բաղուկը չէր կարողացել Աշուա-Ցերկաթին սպանելու չափ ուժով ձգել աղեղը...

— Ո՛հ, ինչպե՛ս անօրեն ես դու, մրմնջաց թագուհին, և այլևս համբերել չկարողանալով՝ դուրս յեկավ խնդություն սրահը և դռան մոտ կանգնած բարապանին հրամայեց՝ վաղել վիրաբույժի յետևից։

Վիրջինա յեկավ. քննեց արքայի վերքը, վոր լայն բացված էր նրա կողերի մեջ. լվացավ այն զգուշությամբ, և վրան դալմանները դնելով՝ կապեց խնամքով։

Թագուհու հարցին թե՝

— Վո՞րքան վտանգավոր է նա, պատասխանեց.

— Փառք աստուծո, արքայի կյանքին վտանգ չէ սպառնում։

Բայց յերբ թագավորը առանձին առնելով հրամայեց նրան ճշմարիտը խոստովանել, նա ասաց.

— Հարվածող նետը, տեր արքա, թաթախված է յեղել թույնի մեջ. վերքի արագ բորբոքումը ծանր ապագա յե գուշակում։

Թագավորի դեմքի վրա վայրկեան մի ժպիտ, վոր սակայն զարմանք պատճառեց վիրաբույժին։

Թ

ՋՐԻՑ ՓԱԽՉՈՂԸ ԿՐՍԿԻ ՄԵՋ

Մարղպետունի իշխանը այնքան շատ եր զբաղված յուր նոր-բազուկն պատրաստութիւններով, վոր մինչև անդամ որեր անգրեց առանց Դվինից տեղեկութիւն առնելու, թե ի՞նչ եր կատարվում այնտեղ։ Նա հավատացած եր, թե բեշիրը Վեղիի հովտում կրած պարտութիւնից յետո՝ տակավին անշարժ նստած է Դվինում և թե առժամանակյա լռութիւնը պետք է վերագրել այն հանգամանքին, վոր նա զաղտնի պատրաստութիւններ է տեսնում յուր վրա հարձակվելու։

Այս պատճառավ ահա՛ իշխանը բավականացել եր միայն պահապաններ կարգելով Գեղամ բերդի սահմաններում, վորպեսզի թշնամու գալուստը իմանալուն պես հարկ յեղածը տնօրինե։

Բայց վո՛րքան մեծ յեղավ նրա զարմանքը, յերբ դեռ կարգված պահապաններից մինը յեկավ և հայտնեց, թե «Դվինի զարձող կարավանները պատմեցին, վոր Բեշիրը բազմաթիվ զորքով հասել է Գեղամա ծովը և Սևանը պաշարել...»։

«Ահա՛, նա ուրեմն անակնկալ հարձակում է դործել, վորպեսզի արքային հանկարծակիի բերի, մտածեց Մարղպետունին, անշուշտ նա կամենում է ինձնից կրած հարվածի վրեժը լուծել թագավորից... Ուրեմն արքան ծանր դրութեան մեջ է, պետք է չտապենք նրան ոդնելու»։

Այս մտածութեամբ դուրս դնաց իշխանը, վորպեսզի հրաման առ զորքին՝ ժամ առաջ պատրաստվելու և դեպի Սևան ուղղվելու։

Բայց հաղիվ թե նա հանդես արավ զորքին և հայտնեց նրանց յուր դիտավորութիւնը, ահա՛ Սևանից հասավ արքայի բանբերը, վոր ավետեց նրան թագավորի մղած կռվի և տարած հաղթութեան ուրախարար լուրը։

— Փա՛ռք ամենակարող աստծուն, վոր հաջողում է մեզ... բացականչեց իշխանը և սաղավարտը հանելով՝ աչքերը դեպի յերկինք բարձրացրեց և ղազվյած ձայնով Դավթի սաղմոսը ասաց.

«Տեր, ովՙ քաղում յեղեն նեղիչք մեր և քաղումք հարյան ի վերա մեր: Քաղումք ասեին զանձնե մերմե, թե չիք սոցա փրկութիյուն առ աստված յուրյանց: Այլ դու, տեր, ընդնական մեր ես, վառք մեր և բարձրացուցիչ գլխո մերո... Վոչ յերկիցուք ի բյուրուց ղորաց նոցա, վոյք շուրջանակի պատյալ պահյալ պաշարեցին զմեզ... ովՙ դու հարեր զամենեսեան՝ վոյք նյին ընդ մեզ թշնամութիյամբ ի տարապարտուց և զատամունս մեղալորաց փշրեցեր...»:

Ժողովուրդն ու զորքը ծնկան յեկան, խնդուքն զոհութիյան աղոթք մրմնջացին աստծուն:

Ապա որվա մնացորդը անցուցին նրանք ուրախ կեր ու խումով, վորին մասնակցեց ինքը իշխանը յուր համհարզներով և ուխտի անդրանիկ զինվորներով:

Մինչդեռ հայերը Սևանում ու Գեղում ուրախության տոն նյին կատարում, Բնչիքը, իրրև վերավոր վագը, զայրացած ու կատաղած զիմում եր դեպի Վաստան: Նա ժողովել եր յուր վախճող զինվորներին, կարդի յեր բերել նրանց և զալիս եր չարյաց սկզբնապատճառ Գեղը կործանելու: Նա գիտեր, վոր Մարզպետունին գանվում է Ուրծաձորում, բայց չեր կարծում, թե բարձրացած կլինի Գեղ:

Այս պատճառով, յերբ համհարզներից մինը զգուշացրեց զորապետին Գևորգ իշխանի անակնկալ հարձակումից, նա պատասխանեց.

— Այդ սրիկան թափառում է լիրճերում, նա չի կարող բաց դաշտ վրա հանդիպել մեզ, կամ մարդաշատ տեղերում ամրանալ: Ընթն գիշերները զգուշանանք, ցերեկով նա չի համարձակվիլ մեզ մոտենալ:

Այս հույսով Բնչիքը կոտայքն անցավ և մտնելով Վաստան, քանակ գրավ Ներանոս գյուղի առավ Աղատի ամին:

Այստեղից նա բանբեր ուղարկեց Գեղ և պահանջեց բերդի բանալիները: Նրան թվում եր, թե գեղցիք, ապստամբությունից վախենալով, չեն ընդդիմանալ յուր հրամանին:

Բայց վորքա՛ն մեծ յեղավ նրա զայրույքը, յերբ բանբերը չետ դարձավ բացասական պատասխանով:

— «Մեր բերդի բանալիները խիստ ծանր են, ասել էին ղեղցիք բանբերին, դու միայնակ տանել չես կարող. ասա՛ Բեչիրին, վոր ինքը դա այն ատանալուց»:

— Նրանք ուրեմն իմ հրամանը ծաղրեցին, դառաց Բեչիրը:

— Այո՛, սեր. մինչև անգամ հայհոյանք արձակեցին քո դեմ...:

— Հայհոյա՞նք... լավ. չես ջարդել կուամ այդ հայհոյող բերանները... Բայց... վո՞րքան ղորք ունին այդ արիկանները:

— Ձդիտեմ, սեր, ինձ թուլ չտվին բերդը մանելու. աչտաբակի վրայից խոսեցին հետս, պատասխանեց բանբերը:

Ղորքի ղլխավորները վախենալով անհայտ ուժի դեմ հարձակվելուց, խորհուրդ տվին Բեչիրին իջնել Դվին, հանդիսատալ ղորքերին և ապա կազդուրված ուժով վերադառնալ Գեղ:

— «Մինչև այն, մենք միջոց կղտնենք նաև զեղեցիների ուննեցած ղորքի մասին տեղեկություն առնելուց, ավելացրին նրանք:

— Վո՛չ, չես կրկնակի պարտություն կրելուց յետո՝ Դվին վերադառնալ չեմ կարող, պատասխանեց ղորապետը: Ես սովոր եմ հաղթանակով մտնել Դվին և այդպես էլ կմտնեմ:

Կամակոր հաւարացուն համոզել անկարելի էր. զնդապետները ատիպված էին նրա հրամանը կատարելու:

Մայիսյան առավոտ եր. բայց արև չկար. թանձր ամպերը պատել էին յերկինքը: Այդ յեղանակը հաճոյական եր Դվինա դաշտում, ուր միջոցին կիզում եր արևը. իսկ ղորքի համար հով եր հարկավոր: Բեչիրը ուրախացավ. նրան թվում եր, թե բնությունը հաջողություն է խոստանում իրեն՝ ծածկելով ամպերի տակ արևի ճառագայթները: Այդ պատճառով նա հրամայեց պետերին անմիջապես պատրաստել ղորքը և ուղղվել դեպի Գեղ:

Ցերանոսի դյուղապետը, համաձայն Մարղպետունու կարգադրության, ժամ առաջ արդեն մարդիկ եր ուղարկել Գեղ՝ հաւարացող դալուստը իշխանին հայտնելու: Վերջինս յուր ղորքերով կազմ և պատրաստ սպասում եր Բեչիրին:

Ցեվ վորովհետև հայերը յերկու հաղթություններից արդեն քաջալերված էին, ուստի իշխանը վորոշել եր չմիակվել բերդում, այլ հարձակվել թշնամու վրա, հենց վոր վերջինս Գեղա լեռան լանջերը կբարձրանար: Հայ ղորքերը անժուժ սպասում էին պահանորդների աղդարար նշանին: Ամեն մեկը նրանցից

վորոշել եր մի վորոշ սեթաղործութեամբ փառավորվել։ Այլևս չկար այն յերկյուղը, վոր պաշարում եր հայ զորականին՝ հաղարացու հարձակման լուրը լսելիս։ Իշխան Մարզպետունու ձայնը զերբնական ուժ եր ներշնչում նրանց. ամեն մեկը հավատում եր, թե չի կարող հաղթվել այն զորքը, վոր Գևորդ Իշխանի հետ միասին և կռվում։

Ցերը Բեշիրը Դվնո վտակն անցնելով՝ սկսավ դեպի Գեղա լանջերը բարձրանալ, տեսավ, վոր լեռան կատարը բռնված և թանձր մառախուղով։ Գեղա բերդը չեր յերևում ամենևին. իսկ լեռան վերին լանջերը ծածկված եյին մշուշով։

Այս հանդամանքը յերկյուղ ազդեց նրա սրտին. բայց յուր շրջապատողներին վոչինչ չասաց։ Նա լուռ, քայլալանջ առաջ եր վարում նժույգը և վոսկե ցցունքը հպարտ-հպարտ ծածանում եր յուր սպիտակ ապարոչի վրա։

Հաղարացիք արդեն հասել եյին լեռան կեսը և մանում եյին մառախուղի սահմանը։ Համհարձներից մինը հիշեցրեց զորապետին մշուշի վտանգավոր լինելու մասին։ Բայց Բեշիրը աներկյուղ պատասխանեց։

Հաղիվ զորապետը յուր խոսքը վերջացրեց և ահա հանկարծ հայոց դնդերի աղաղակը վորոտաց։ Ինչպես զայրացած մի հեղեղ թափվեցան նրանք հաղարացիների վրա և աննահանջ կատաղությամբ սկսան կոտորել։ Հարձակումն անսպասելի եր. թշնամին դյուխը կորցրեց և պատրաստվում եր փախչելու, բայց Բեշիրի աղաղակը և դնդապետների խրախուսյոը արդելք յեղան նրան։ Առանց անձա առ դիրքը ճանաչելու և հարձակվողների վորքանությունն իմանալու, հաղարացիք ճակատ կազմեցին լանջերի վրա և սկսան պաշտպանվել. բայց դիմադրությունը հուսահատական եր։ Նրանք կռվում եյին միայն զորավարի ներկայությամբ, բայց հենց վոր նա հեռանում եր մյուս կողմը, սկսում եյին քայլ առ քայլ նահանջ տալ դեպի զառիվայրերը։ Իսկ հայերի թափը այնքան զորավոր և հարվածները բազմաճեռն եյին, վոր մի ժամվա ընթացքում լեռնալանջը դիակներով ծածկվեցավ։ Նրանցից չատերը ձիանների դեչերի հետ միասին գլորվում եյին դեպի ձորերը։

Մարզպետունու կինակիցները, այն է՝ Վահրամ սեպուհը, Գառ իշխանիկը և Ծերունի Մուշեղը կռվում եյին յուրաքանչյուրը մի կեսի վրա. նրանց գնդերը, անտառի մեջ փրթած վո-

թորելէ նման, ավերում էին իրանց չուրջը, չարունակ դեպի վայր մղելով ընդդիմականներին։ Հղոր դիմադրութիւն եք ցույց տալիս միայն Բեչիրը մի խումբ արաբացի քաջերով, որոնց կառաղի նժոյդները ծառանում, սլանում էին լեռնալանջի այս ու այն կողմը՝ աշխատելով վտանգահար անել սուսերամերկ կամ նիզակավոր հայ մարտիկներին։

Գևորդ իշխանը, որ հերոսաբար կռվում էր սարատափի վրա, տեսավ Բեչիրի շահատակութիւնը և նրա խմբի ճիղը՝ դեպի վեր բարձրանալու։

Կարծես մի նոր ղայրույթ բռնկեց նրան։ Ձեղքելով հանդիպակաց խմբերը նա խոյացավ դեպի զորապետը։

— Դեպի ո՞ւր, թշվառական, վրդոված նա ահավոր ձայնով և մոտ հասնելով՝ ուղղեց նիզակը հազարացու կրծքին։ Նրա աչքեն, սակայն, չթափանցեց պողպատե սպսպարը, որով զորապետը դեմ դրաւ հարվածին, այլ բահելով ցցվեցավ նժոյդի կրծքում։ Ձերիվարը թաւալվեց, բայց Բեչիրը թռաւ դեպի յետ։ Յոնվեցան իսկույն նրա թիկնապահները և մեջ առին Մարզպետունուն։ Փոքր մի ևս և մահը անխուսափելի էր իշխանի համար, որովհետև նրա մի հարվածին պատասխանում էին մի քանի ուրիշները։ Բայց այս անգամ հորը ողնութեան հասաւ վրդին. նա յուր ընկերների հետ մխասին իջաւ վերին լանջերից ինչպես արծիվ և ընկաւ չրջապատող խմբակի վրա։ Նիզակներ էին, որ շամփրում էին և սրեր, որոնք արագ-արագ իջնում էին մարտիկների գլխին, կամ թափանցում նրանց կուրծքն ու կողերը։

Արաբացոց այս խումբն էլ չերկար չդիմադրեց. նա չետ նահանջեց դեպի վայր, որոնելով զորապետին։ Բայց Բեչիրը չէր չերևում վոչ մի տեղ. նա ձորակի ճանապարհով խուսա էր տվել դեպի Դվին, որովհետև յուր զորքի պարտութիւնն ակներև տեսել էր. ուստի փութացել էր դոնե յուր կյանքն ազատելու։

Այս հանդամանքը վհատեցրեց վերջին դիմադրողներին և նրանք հետզհետե նահանջելով՝ հասան լեռան ստորոտը և այդտեղից սկսան փախուստ տալ դեպի Դվնո դաշտը։

Այս անգամ Մարզպետունին չհնազանդեց փախստականներին, հաշվելով, թե Դվինը մոտ է և այստեղից կարող են ողնութեան հասնել փախչողներին։ Նա ժողովեց յուր քաջերին, ստուգեց ընկածների թիվը, որոնք միայն մի քանի տասնյակ էին, ապա

գոհության աղոթք կարդաց աստծուն նուիրելով ճակատի տեղը, և աչառնակելով նժույգը՝ վերադարձավ Դնեզ։ Երան հետևեցին յուր վիճակիցներն ու զորքը, ցնծության աղաղակներով և հաղթական յերգեր յերգելով։

ՅԵՐՐՈՐԴ ՄԱՍ

Ե

ԱՆՀԱՆԳԻՍՏ ՄԵՐԾԸ

Ախուրյան գետի արևմտյան ափի վրա, այնտեղ, ուր Տեկոր վտակը խառնվելով դրծում և Ջրապարփակ մի յեռանկյուն, կառուցած եր հինավուրց մի քաղաք։ Հարավային կողմից, վոր մեկ դյուրամատույցն եր, պատում եյին նրան բարձր պաշտպանները և հզոր աշտարակները. արևելյան և հյուսիսային կողմից ձգվում եր Ախուրյանի խորացրը, վորի հատակում մանչում եր դնոր ահավոր ձայնով. իսկ արևմուտքից պատում եր նրան մի ահագին անդունդ, վորի ափերի վրա բարձրանում եյին լեռնաձև ժայռեր ու անհեղնդ ամբարտակներ և ձգվելով տարածվում մինչև միջնաբերդը, վոր թառած եր քաղաքի հյուսիսային կողմը դոնվող մի ահեղ բարձրության վրա։

Ուրը դար առաջ այդ քաղաքը դիցապաշտական մի վեհարվայր եր։ Այդտեղ եյին ժողովված հեթանոս հայերի դլխավոր սրբությունները. այդտեղ եյին դոնվում նշանավոր կուռքերն ու նրանց մեհյանները և այդտեղ եյին կատարվում կրոնական հանդեսներն ու մեծածախ զոհաբերություններ։ Դա նշանավոր Բագարանն եր, Երվանդ Բ–րդի ձեռակերտը։ Այդտեղ կուռց տաճարներից զատ դոնվում եյին նաև հոյակապ ապարանքներ, վորոնց մեջ ապրում եյին արքայատն քրմապետները՝ իրանց դրսնիկներով և հարյուրավոր ծառաներով. այդտեղ վխտում եյին քուրմեր ու քրմուհիք, վորոնք բնակիչների մեծագույն մասն եյին կազմում։ Հեթանոս ժողովուրդը դիմում եր այդ քաղաքը Հայաստանի հեռավոր սահմաններից. զոհում եր մշտավառ բոցերների վրա և մատուցանում աստվածներին առատ նվերներ, վորոնցով որ ըստ որե հարստանում եյին մեհյանները և քրմապետների դանձարանը։ Երբեք դար չարունակ կանգնած եյին այդտեղ դիցական պատկերներ, և չուրջ յերեք դար աղոթում

եր նրանց առաջ հայոց ժողովուրդը. բայց այդ ժամանակ դըժբախտ չեր Բագարանը. նա յերկյուղ չեր կրում թշնամիներից և նրա պղնձապատ դռները չեյին փակվում հարձակվող հրոսակների առաջ: Այդտեղ ապրում եյին մխայն աղոթելու և զվարճանալու համար:

Անցան այդ դարերը: 925 թվականին Բագարանը ուրիշ պատկեր եր ներկայացնում: Չկային այլևս կուռ մնհյաններ. չեյին յերևում կռապաշտական հիշատակարանների հետքերը. դրանց փոխարեն զարդարում եյին Բագարանի բարձունքը հոյակապ յեկեղեցիներ և զեղաշեն մատուռներ: Հեթանոսական պաշտամանց փոխարեն լսվում եր դրանց մեջ բարեպաշտ քրիստոնեյի աղոթքն ու մրմունջը. մարդիկ պաշտում եյին այդտեղ ճշմարիտ աստծուն. բայց նրանք այժմ բախտավոր չեյին այնպես, ինչպես վոր եյին իրանց հեթանոս նախահայրերը... Նախկին ազատությունն ու խաղաղ կյանքը անծանոթ եր այժմ Բագարանին: Նա շրջապատված եր ամրություններով. բարձր պարիսպներն արգելում եյին ժողովրդի ազատ յել ու մուտը. մահյալ աշտարակները նայում եյին իրանց շուրջը ահավորու աչքերով, իսկ Ախուրյանի խորաձորը տխրեցնում եր անցորդին յուր ամայությամբ:

Այստեղ, այդ միջոցին, ամրացած եր Բագավորի հորեղբայր Աշոտ սպարապետը յուր զորքերով ու զանձերով: Այստեղից նա զղուշությամբ հսկում եր յուր կալվածներին և սեփական հպատակներին. բայց ղլանում եր յուր պաշտպանությունը նրանց, վորոնք Բագավորի հպատակներն եյին: Տարիներ առաջ Բագրատունյաց Շուտուի վոստիկանից, սպարապետն աշխատեց հեռացնել ղահից յուր յեղբորորդուն—Հարազատ Բագավորին և նրա տեղն անցնել. բայց նպատակին չհասավ և միայն յերկիրն ավերեց ու տակն ու վրա արավ. այդ պատճառով ժողովուրդը «բռնակալ» անունը տվավ նրան: Իսկ նա այդ որից անտարբեր աչքով եր նայում իրան հպատակ ընդող ժողովրդի ընչաուրթյան վրա և ուրախանում եր արքայի անհաջողություններով լսելով:

Այս ամենը, սակայն, չարդելեց Հովհաննես կաթողիկոսին սպաստան վորոնել աղդից անարդված «բռնավոր»-ի մոտ: Նա, ինչպես տեսանք, վախավ Բյուրականից հենց այն ժամանակ, յերբ Բեչիրը զորքով գալիս եր յուր դաստակերտի վրա և յերբ յուր ներկայությունը կարող եր Բյուրականի առումը խափանել:

Բայց նա յուր մերձավորներով դիմեց Բաղարան և ապավինեց Հրեաստանի պաշտպանության։

Այդ օրից սկսած սպարապետը հովանավորում էր կաթոլիկոսին և վերջինս կատարյալ հանգստություն էր վայելում նրա մոտ։

Բայց ահա մի դեղեցիկ օր Բաղարանի խորաճաշն իջավ սպասողին հեծյալների մի խումբ, որը գալիս էր վհատած հոր՝ ամիսներից ի վեր վայելած հանգստությունը խանդարելու։

Խմբի պետը Գևորգ Մարզպետունին էր. նրան ընկերակցում էին յուր թիկնապահները։

Բայց ինչո՞ւ համար էր նա դիմում Բաղարան։

Գաղտնիքը իշխանի մի նոր դիտավորություն էր։

Անցել էին ամիսներ։ Մարզպետունու տարած հաղթությունները իրանց արդյունքը բերին։ Հաղարացիք հետզհետե հայրենի դավառներից չքացան. Բնչիրը յուր ունեցած զորքով վակվից Դվինում՝ առանց այնտեղից չեզնել համարձակվելու։ Բերդերում ամրացած հայ իշխանները սկսա առան Մարզպետունու որինակից և թողնելով պաշարված դրություններ, հարձակվեցան իրանց սահմաններում վորջացող սպարապի հրոսակների վրա և վանեցին նրանց ամեն տեղից։ Նորին խաղաղություն տիրեց. ժողովուրդը չունչ առավ և չինականն ու քաղաքացին սկսան իրանց առանին գործերով զբաղիլ։

Բացի այդ, պետական գործակալները, վորոնք արքայի կարատաև բացակայության և, մանավանդ, միմյանց հաջորդող անհաջողությանց պատճառով ցրվել էին դանազան կողմեր և կամ այս ու այն իշխանի դրոշի տակ մտել, լսելով Մարզպետունու հաջողությունները և համանալով, վոր նա գործում է թագավորի հրամանով՝ դունդդունդ չեկան և միացան նրա զորքին։ Այդպիսով Մարզպետունու բանակը սովորականավով՝ զորքերի թիվը հասավ հաղարների։

Ճիշ ահա՝ հաջողությունները նոր միաք ծնեցրին իշխանի գլուխում։ Նա վորոշեց ձեռնարկել այնպիսի մի գործողոր մի ջոց, վորով կարողանար միանգամայն յերկիրը հաղարացիներից ազատել և գահի հաստատությունն ընդմիշտ ապահովել։ Նա կամենում էր հարձակվել Դվինի վրա, գրավել մայրաքաղաքը և հալածել այդտեղից Բնչիրին, քանի վոտիկանը չեր վերադարձել Աբրպատականից։

Բայց վորովհետև յուր այդ ձեռնարկությունն ավելի զբա-

վերին եր քան առաջիններըը, ուստի մտածեց ավելի հիմնավոր պատրաստություններ տեսնել դրա համար։ Նա խորհուրդ տրավ յուր զինակիցների, այն է՝ Վահրամ տեղուհի, Մուշեղ բերդակալի և Գոռ վորդու հետ և վորոշեց, վոր ղորաբանակը մնա ուսկավին Գեղա լեռներում, ուր Մազազի, Վոստանի և Ուրծաձորի ժողովուրդը առատ պաշար եր հոգում նրա համար, իսկ ինքը դնա Բագարան՝ խորհուրդ տալու կաթուղիկոսին՝ վերադառնալ յուր աթոռը—Դվին. ապա անցնե Ցերազդավորս՝ հորդորելու արքայեղբայր Աբասին՝ հաշտվել Թագավորի հետ և սիրով ընդունել նրան, յեթե վերջինս վերադառնալու լիներ յուր աթոռանիստը—Ցերազդավորս։ Այնուհետև նա սիսի դիմեր Սելյան՝ Թագավորին ու Թագուհուն հրավիրելու, վորպեսզի Դվինի վրա հարձակված ժամանակ՝ Վոստանում դտնվեր Թագավորը և ոգևներ իրան յուր մասնակցությամբ կամ խորհուրդներով։

Կես որ եր։ Իշխանը յուր խմբով Ախուրյանն անցնելով՝ սկսավ դեպի Բագարանի լանջիվերը բարձրանալ։ Այդ վերելքը, վոր դյուրաբնակ եր, սկսում եր դետաձորից և աստիճանաբար բարձրանում մինչև քաղաքի հարավային սահմանը, ուր կանգնած եյին պարիսպները. նրանց վրա շրջում եյին պահապորդներ, վորոնք ուշադրությամբ դիտում եյին մոտեցողներին։

Նժույգներն ընթանում եյին արշավասույր և նրանց առաջեները վայրում եր արևի առաջ։ Մի քի համարձակ ընթացքից դուշակեցին պահապանները, վոր յեկվորները բարեկամներ են։ Ուստի ամրոցի յերկաթապատ դռներն անարգել բացվեցան նրանց առաջ։

Իշխանը դիմեց ուղղակի սպարապետի ապարանքը՝ յուր առաջին վողջույնը նրան մատուցանելու։ «Բռնավորը», վոր տակավին Թագավոր եր անվանում իրան և նույն անունով ճանաչվում Թե՛ Շիրակա դաշտում և Թե՛ Արշարունյաց ձորում, ընդունեց իշխանին արժանավայել մեծարանքով։

— Յեթե իմանայի, վոր հաղթող Մարզպետունին սիսի մեզ այցելե, չքախսում հուղարկեյի նրան դիմավորելու, ասաց սպարապետը ժպտալով։

— Ջո խոնարհ ծառան, մեծավոտ տեր, գոհ և արդեն այս ընդունելությամբ, վորին, դուցե, և արժանի չե, պատասխանեց իշխանը համեստությամբ։

— Արժանի՞... ի՞նչ ասացիր դու, հարեց խնդույն սպարապետը. քեղ դավինիներով սիսի պռոշեն և հաղթական կամար

կանդնեն ամեն տեղ։ Բեչիրը փախուստի վրա չի մտածում, իսկ Իվինի ամբրանները դողալով են քո անունն արտասանում... Ինչո՞ւ այդ աստիճան սարսափեցրել ես դու նրանց։

Մարդկանունին ժպտաց և այդ ժպտի տակ թաղցրեց յուր կսկածը, որով նա վերաբերվում եր դեպի սպարապետի անհնազանդությունը։ Նա գիտեր, որ այդ դժվարությունները տրվում են նրան առ յերես և որ յուր ջենքի հաջողությունը քնավ ցանկալի չե Բռնավորին»։

— Կփափագեի երբեմն արժանանալ այդ դրվատյաց... բայց վորքա՞ն հեռի յեմ յես նրանցից, նկատեց իշխանը լրջությամբ։

— Ո՛, մի՛ ասիր այդ. իմ յեղբորորդին բախտավոր է, որ քեղ նման ղինակից ունի, բացականչեց սպարապետը. բոլոր Բեսարաբիացիները կնվիրեին նրան, ով քեղ դուրատիպ մի համհարդ կղտներ ինձ համար։

Իշխանը սևեռեց յուր հայացքը սպարապետի աչքերին, կամենալով, կարծես, թափանցել նրա սրտի մեջ և դուրս կորզել այդտեղից չարակամության ու նախանձի վոզին։ Նրան թվում եր, թե հենց այդ վոզին է, վոր խոսում է յուր հետ այդ վայրկենին. նա խոր վիշտ ղգաց և հոգվոց հանեց...

Բեվ ի՞նչպես չվշտանար։ Ուր առաջ կանգնած եր Սմբատ Բագրատունի հարազատ յեղբայրը. պարթև հասակով, դեղեցիկ դեմքով, քաջալանջ և հաստատակամ. նրա ձայնը վորոտում եր, յերբ խոսում եր յուր հետ, և դիտինը թնդում, յերբ քայլում եր նրա վրա։ Բեվ այս հզոր մարդը փոխանակ Բագրատունի, հետևապես, և հայրենիքի պաշտպանը լինելու, նրա թշնամին ու հակառակորդն եր. փառամոլությունը փակել եր նրա հոգու աչքերը, ուստի նենգամտությունը հիմարացրել եր նրան և մահմեդական մի վոստիկանի տված ունայն թագը մեռցրել եր նրա սրտում զգացմունքներից ազնվագույնը—սերը դեպի հայրենիքը...։ Բեվ այս դորավոր հակային փոքրացնում, վոչնչացնում եր չարակամության զգացումը. նրա լեզուն չեր կարողանում «Բագրատունի» անունը տալ Աչոտ-Բերկաթին. նրա մասին խոսելիս՝ նա ասում եր «իմ յեղբորորդին», կարծես վախենալով, թե մի՛ դուցե «տըրքա» կամ «Բագրատունի» անվանելով նրան՝ զրկի իրան աչխարհի բոլոր բարիքներից...։ Բեվ սակայն դրվատանում, բարձրացնում եր նրա հավատարմին, աչխատում եր գրավել Մարզպետունու սիրտը, վորպեսզի հարմար դեպքում կա-

քող լինի նրան կապել յուր հետ և միամ հեռացնել հաբաղատ թագավորից։

Այս ամենը հասկանում եր իշխան Մարզպետունին, կարդում եր նրա սիրտը յուր իսկ դեմքի վրա, այն դեմքի, որ այնքան վեհ ու հպարտ եր յերևում արտաքուստ, որ ստեղծվել եր կարծես հարդանք ու ակնածություն ներշնչելու համար, բայց որին նսեմացնում եին փոքրոգություն ատելությունը... Ի՞նչպես ուրեմն չվշտանար, ի՞նչպես չհառաչեր հայրենասեր հոգին։

Սակայն սպարապետը իշխանի հայացքից խուսափելու համար՝ չսպասեց հարցնել նրա գալստյան պատճառը։

— Բաղարանը, իշխան, դու չես սիրում բնավ. անշուշտ ունես դու մի կարևոր խորհուրդ, որ ստիպել է քեզ մեզ այցելելու, ավելացրեց նա ժպտալով։

— Այո՛, ունիմ, պատասխանեց Մարզպետունին և հայտնեց նրան յուր գալստյան պատճառը, որ եր՝ գտնել կաթուղիկոսը յուր տեղը։

— Ինչո՞ւ համար ես կամենում զրկել մեզ վեհափառի հովանավորությունից, հարցրեց սպարապետը խորհրդավոր ձեղանակով։

— Նրա համար, որ այսոր կամ վաղը վռասիկանը պիտի վերադառնա Աղրպատականից. և յեթե անտեր գտնե կաթուղիկոսարանը, անշուշտ կհափշտակե նրան, որպեսզի դրանով ինքնի կրած պարտության վրեժը լուծե մեղանից։

— Բայց ի՞նչ կշահե նա դրանով։

— Ինչ կշահի՞... մի՞թե հայտնի չէ քեզ այդ։ Հարյուրավոր վանքեր ու մխիթարությունները կերակրվում են կաթուղիկոսարանի կալվածոց հասույթով։

— Այո՛, այդ ուշադրության արժանի կետ է։ Վանքերը կորուստ կունենան... պատասխանեց սպարապետը և ապա մի խորհրդավոր հայացք ձգեց Մարզպետունու վրա։ Նրան թվում եր, թե իշխանը ուրիշ գաղտնի դիտավորություններ ել ունի, որոնք, սակայն, ծածկում և իրանից, բայց չեր կարողանում դուշակել թե ի՞նչ դիտավորություններ են դրանք։

Ինքը Մարզպետունին ել վոչինչ չհայտնեց և դադարեցրեց ավելին խոսելուց։

— Կարո՞ղ եմ այժմ տեսնել վեհափառին, հարցրեց իշխանը, կարծելով թե հայրապետը գտնվում է սպարապետի սպարանքում։

— Ի՞նչու չէ. բայց կցանկայի, որ հանդիսատ առնեիր մի վոքը. վհուհափառի տան ճանապարհը բավական հեռի չէ և դյուժ-վարաղնաց. դու կարող ես հողնել, մանավանդ որ արևը սաստիկ այրում է;

— Մի՞թե նա այստեղ, քո ապարանքում չէ՞, զարմացած հարցրեց իշխանը:

— Վո՛չ:

— Ուրեմն քաղաքացիներից մինի տա՞նն է ապրում:

— Դարձյալ վոչ, նա լինում է միշնաբերդում, պատասխանեց ապարատները ժպտալով:

— Միշնաբերդո՞ւմ... ի՞նչ է լինում նա այնտեղ, բացականչեց Մարդպետունին:

— Այն որից է վեր, որ դու քո խմբերով սկսար անհանդիստ անել հայաբացիներին, վհուհափառը փախավ միշնաբերդը. նա չէ վստահանում յուր պաշտպանությունը նույնիսկ իմ զորքերին:

— Ահա՛ մի մարդ, որ աստուծո տված պարգևը դնահատում է ըստ արժանվույն, հեգնական ժպիտով նկատեց Մարդպետունին:

Ապա ուղղելով հայացքը դեպի միշնաբերդը, որ ահագին հսկայի նման բարձած եր հանդիպակաց բարձրության վրա, հարցրեց.

— Ո՞ւմ հրամայեք առաջնորդել ինձ, տեր. յես կամենում եմ այժմ անել ներկայանալ վհուհափառին:

— Իմ թիկնապահների պետը քեզ կընկերանա, յեթե հնազանդ ընդունել պատասխանեց ապարատները:

Իշխանը շնորհակալություն արավ և յուր թիկնապահների ու ցույց տված առաջնորդի հետ ուղղվեցավ դեպի միշնաբերդը:

Ճանապարհը, որ տանում եր միշնաբերդը, անցնում եր ապառաժուտ դար ու վոսերի վրայով: Նա մերթ քերում եր խոբաձորի ժայռերը և մերթ բարձրանում թումբերի վրա: Այդպիսով ուղին դառնում եր դժվարագնաց, իսկ շատվոր մարդկանց համար անանցանելի: Այս պատճառով իշխանն ու յուր հետևվորդները դնում եյին շատ տեղ միմյանց յետևից, կազմելով այդպիսով մի յերկար շարք:

Վհուհափառն այդ միջոցին յեպիսկոպոսներից մինի հետ կանգնած եր դղյակի պատշգամբում: Նրա առաջ բացվում եյին դեղեցիկ տեսարաններ՝ մինը մյուսից գեղեցիկ, մինը մյուսից հա-

ճելի. բայց նա չէր նայում նրանց վրա։ Վո՛չ դեղեցիկ Արագածը, որ ամբառնում էր արևելյան-հյուսիսից, յուր չորս բլրաձև գագաթներով, վո՛չ կապույտ լեռը, որ յեղերում էր հորիզոնը հարավից և ծածկում յուր յետևում Ծերասխի ալիքները, վո՛չ Արշարունյաց ձորահովիտը, որ բացվում էր արևմուտքից, վո՛չ գեղադիր Բագարանը, որ տարածվում էր յուր առաջ հարուստ չինուԹյուններով և դմբեԹազարդ յեկեղեցիներով, վո՛չ արագահոս Ախուրյանը, որ խորաձորի ժայռերը կոծելով մոնչում էր յուր վոտքերի տակ և վիշապի նման գալարվելով՝ բերդի շուրջը պատում, և վո՛չ, վերջապես, ահարկու քերծերն ու խարակները, որոնք կախված էին անդունդների վրա, կամ սեպաձև ցցվում խորաձորի ափերին, չէին դրավում այդ րոպեին վեհափառ հոր ուշադրուԹյունը։ Նա յուր հայացքը սևեռել էր ապառաժուտ կածանով հառաջացող խմբի վրա։

«Ո՞վքեր են արդյոք դրանք, ինչո՞ւ յեն դեպի մինչնաբերդը գնում և այն՝ միջորեյի ժամանակ, յերբ արևը կիղում է վերևից, իսկ ջերմացած խարակները ներքևից», մտածում էր վեհափառն ինքն իրան. սակայն յեկվորների ով լինելը չէր կարողանում դուշակել։

Բայց ահա՛ վերջապես նրանք մոտեցան բերդի լանջին. մի քանի քայլ ևս, և նրանց ով լինելը կիմացվեր։

— Այդ նա՛ յե, այո՛, նա ինքն է. ի՞նչ ունի այստեղ... բացականչեց հանկարծ կաԹուղիկոսը, ճանաչելով Մարզպետունի իշխանին, որ մեծաքայլ ու քաջալանջ գնում էր դեպի բերդի դռները։

— Ո՞վ, վեհափառ տեր, հարցրեց յեպիսկոպոսը, որ մինչև այն խոսակցում էր նրա հետ։

— Նա՛, այն անհանգիստ մարդը... որ առևդծվել և հալիայան թափառելու համար... շշնջաց կաԹուղիկոսը, վախենալով, կարծես, Թե յուր ձայնը կհասնի մինչև բերդի սոորոտը։

— Բայց ո՞վ է նա, հարցրեց յեպիսկոպոսը յերկրորդ անգամ և բարձրացավ տեղից յեկողներին նայելու։

— Մարզպետունի իշխանը. անշուշտ անհաճո մի նորություն և բերում մեզ... հարեց կաԹուղիկոսը, դուշակելով, որ իշխանը գալիս է յուր հանդիսատը վրդովելու։

— Ինչո՞ւ անպատճառ անհաճո նորություն, հարցրեց յեպիսկոպոսը։

— Ընկնեմ, ինձ այսպես է թվում... պատասխանեց վեհափառը և անկյալը քաշվեցավ։

Մի քանի վայրկենից ճանչալով բացվեցան բերդի յերկաթյա դռները, որոնք դանվում էին յերկու աշտարակների մեջտեղամ և հանդեպն ունեին հաստատահիմն պատվար։ Բարձր պարիսպները, որոնց գրկում էին լայնատիր աշտարակներ, նեբսից ավելի անմատչելի էին կացուցանում բերդը։ Իշխանը նայելով յուր շուրջը և տեսնելով այն զորությունը, որ հավաքել էր այդտեղ սպարապետը, ակամա ժպտաց։ Ցուր այդտեղ դալը նա անմտություն համարեց։

— «Մի՞թե կարելի յե դաղանիք վստահանալ մի մարդու, կամ անձնվիրություն պահանջել մի հոդևորականից, որ զրպարտում է յուր կյանքի վրա և յուր անձը այսպիսի ամբաստանների մեջ է խնամում...», չընկաց նա ինքն իրան և առավ անցյալ հուսահատ սրտով։

Վեհափառը, սակայն, ընդունեց իշխանին սիրով ու որհնությամբ. և բաղմեցնելով կողքին՝ յուր գոհությունն ու անհամման հիացումը հայտնեց այն քաջագործության համար, որ նա կատարել էր միայնակ։

— Ցնս կամեցա սպացուցանել մեր իշխաններին և քեղ, վեհափառ տեր, թե մեծ գործեր կատարելու համար հարկավոր չեն մեծ ուժեր, այլ միայն հաստատուն կամք. թե հայրենիքը փրկելու համար՝ չեղեք և սպասել հաշող հանդամանքների և մոչ էլ իշխանների ձեռնամուխ լինել. այլ պետք է հուսալ միայն աստուծո և անխախտ բաղկի վրա և անձը նվիրելու չունի հայրենասիրություն ունենալ։ Ցնս ապացուցեցի այդ կարծյաց ճշմարտությունը. այժմ ձեզ է մնում հետևել իմ օրինակին, նկատեց իշխանը, ողջու քաղելով կաթուղիկոսի խոսքերից։

— Ի՞նչ պիտի անենք մենք, հարցրեց կաթուղիկոսը անհամբերատանալով։

— Զեզանից յուրաքանչյուրը պիտի կատարե յուր պարտքը։

— Այսի՞նքն։

Իշխանը հայտնեց նրան մի քանի խոսքով Դվինը գրավելու համար ունեցած յուր դիտավորությունը, այլև վեհափառի յուր աջեռը դառնալու մասին ունեցած ցանկությունը։

— Դու կամենում ես Դվինը գրավի՞լ... զարմացած հարցրեց վեհափառը։

— Այո՛, և վորքան կարելի յե շուտ։

— Ճիշ դու չե՞ս վախենում ամէրսպեակի քարկոծութիւնից, արաբական հզոր բանակներից։

— Ո՞վ է ամէրսպեակը. մենք մեր Քաղաքորդն ունինք, բացականչեց իշխանը յեռանդով։

— Բայց Դվինը նրա կալվածն է. նա տէրն է Վռամանի մեծ մասին, Ճակատքը, Կոգովիտը, մինչև անգամ Ծաղկոտը նա համարում է Տուրուբերանի մասն, վորին և տէրն է ամբողջապես։

— Ճիշ դրանք ուրեմն զարշելի հազարացու սեփականութի՞ւն են... բարկացած հարցրեց իշխանը։

— Աւ այժմ, այո՛, պատասխանեց կաթուղիկոսը հանդիստ ձայնով։

— Վո՛չ, հազար անգամ վո՛չ, բացականչեց իշխանը. հայոց յերկիրը հայերին է պատկանում։ Դվինը Խոսրով Քաղաքորդի ձեռակերտն է. Ճակատքը, Կոգովիտը, Ծաղկոտը մեր արքայատնից նահանգի գաւառներն են. Տուրուբերանը Մամիկոնյան տան սեփականութի՛ւն է. Հայաստանի ամեն մի գաւառը մի հատոր պատմութի՛ւն ունի. ո՞վ կարող է այն ուրանալ. դու վոր հայ ազգի պատմութի՛ւն ես դրում, ի՞նչպես ես կարողանում այդ վկայութի՛ւնը տալ զարշ արաբացու համար։ Ճիշ այս բոլորին յերևութանար այստեղ պատմաբաններիդ նախահայր Խորենացու վոգին, կկարողանա՞յիր արդյոք կրկնել նրա առաջ այդ վկայութի՛ւնը...

— Ճես ասացի «աւ այժմ»...

— Վո՛չ աւ այժմ և վո՛չ աւհաւասիր... ընդհատեց իշխանը. արաբացին Արաբիայում պիտի իշխե և վոչ Թե հայոց յերկրում։

— Թո՛ղ այդպես լինի. յես չցանկացողը չեմ։

— Այդպես կլինի, վեհափառ տեր, յեթէ չես հապաղիլ խնդիրս կատարելու։

— Ի՞նչ խնդիր։

— Մի վկայական առաջ հայտնեցի. դու պիտի վերադառնաս քո աթոռը։

— Դվի՞ն։

— Ա՛յո։

— Բայց ի՞նչ ոգուտ ունի քեզ համար իմ վերադարձը. յես կռվող չեմ, վոչ էլ զորախումբ ունիմ, վորով կարողանայի քեզ ողնել։ Ճեթե դու մտադիր ես Դվինը դրավել և հույս ունես քո գործերի վրա, դրավի՛ր նրան. աղաւնի՛ր քաղաքը հա-

դարացիներից, այն ժամանակ չես կվերադառնամ իմ աթոռը՝ քո կյանքը լիարժեքորեն որհնելով։

— Կամենում ես անիծիր ինձ, միայն վերադարձիր այժմեն իսկ, քանի վոստիկանը բացակա չե Դվինից և քանի իմ զորքերը չեն պաշարել նրան։

— Բայց ի՞նչ ոգուտ ունի իմ վերադարձը, բացառի՛ր վերջապես։

— Բացառե՞մ...։

— Այո՛։

— Արդյոք իղուր չի՞ անցնել իմ դաղտնիք հայտնելը, քանի դու դանվում ես այս բերդում։

— Վո՛չ, չես խոխոչ կհեռանամ, թեև համոդվիմ, վոր անհրաժեշտ է այդ։

— Բարի։ Ոգուտն ա՛յն է, վեհափառ տեր, վոր ինձ այս միջոցում հարկավոր են Դվինում հավատարիմներ։ Իմ մարդկանցից չեմ կարող վոչ վոքին մոցնել այնտեղ. բեչիրը նրանց ճանաչում է։ Մինչդեռ դու աղատորեն կարող ես քո աթոռը վերադառնալ և այդ, մինչև անդամ, կշոյե վոստիկանի ինքնասիրությունը։ Ինչ հետ վերադարձող հոդևորականների հետ չես կմտցնեմ քաղաք իմ մի քանի հավատարիմներին...

— Վոչ մի աշխարհականի թույլ չեն տալ անցնել Դվինի դռներով, ընդհատեց կաթուղիկոսը։

— Գիտեմ, բայց նրանք կմտնեն իբրև վեղարավորներ...

— Աստվա՛ծ իմ... դու ուրեմն վոստիկանի սուրը կախում ես իմ ղլխի՞ն... բացականչեց կաթուղիկոսը յերկյուղից այլայլվելով։

— Մի՛ վախեցար, վեհափառ հայր. չես թույլ չեմ տալ, վոր վոստիկանը քո սուրը մերկացնե, ո՛ւր մնաց թե կախե քո ղլխին։

— Ի՞նչ պիտի անեն քո հավատարիմները։

— Հարկավոր դեպքում խրամատ պիտի փորեն կաթուղիկոսարանի նկուղներից մինչև արտաքին պարիսպը։

— Ո՛ւմ և ո՛ւմ... չեմ կարող չես միանալ այդ խորհրդին։ Նա՛, վոր հրամայեց մեղ՝ «տալ դասուածոյին աստուածո», նույնը հրամայեց՝ «ղկայսերն տալ կայսեր»... խոսեց կաթուղիկոսը վճռական ձայնով։

— Ո՞վ և քո կայսրը, հարցրեց իշխանը բարկությունից դողալով։

Վեհափառը չպատասխանեց։

— Դու մի թաղավոր ունիս, որին և պարտավոր ես հարգել։ Դա Աչոտ-Ցերկաթն է, շարունակեց իշխանը։ Հազարապին իրավունք չունի այս յերկրի վրա. նա մի հափշտակիչ, մի ավազակ է։ Այն հայը, որ տիրապետ և անվանում նրան՝ մի դավաճան է. իսկ դավաճանին իրավունք ունի մեռցնել առաջին ղինվորը, առանց արդարության դեմ մեղանչելու։

— Ձես վախչում եյի բռնակալի վրեժխնդրությունից, խոսել սկսավ կաթուղիկոսը. դու ինչո՞ւ ուղարկում ես ինձ այդ վրեժխնդրության առաջ։ Ինչ ուզում կարող է բերել քեղ իմ մահը։

— Մի՛ ասիր «քեղ», այլ ասա՛ «հայրենիքին»։ Ցեթե կարծում ես, թե քո վերադարձը մահ պիտի պատճառե քեղ, ապա ուրեմն ուրա՛խ յեղիր։ Մի՞թե ավելի լավ չի՞ Ղևոնդյանց հետ դասվիլ, քան անհիշատակ վոչնչանալ...։

Իշխանի խիստ լեզուն փոխանակ վեհափառի բարկությունը գրգռելու, ընդհակառակը, ճնշում, մեղմացնում եր նրան։ Նա տեսնում եր, որ այդ մարմնացյալ յեռանդը խոսում եր վոչ թե յուր, այլ հայրենիքի ոգուն. ի՞նչպես ուրեմն՝ դայրանար նրա դեմ։ Ջե՞ որ ինքն էլ պակաս չեր սիրում այդ հայրենիքն ու նրա աղատությունը. բայց ի՞նչ աներ, որ աստված չեր տվել իրան Մարզպետունու սիրտը, Մարզպետունու հոգին. նա վախենում եր վտանգներից, սարսափում եր արաբական սրերից... Կկամենար, այո՛, ծառայել յերկության գործին. կկամենար, մինչև անգամ, զոհվել... բայց չեր կարող, բնությունը զրկել եր նրան այդ քաջությունից։

— Ղևոնդյանց հետ դասվիլ ասացիր, խոսել սկսավ վեհափառը, կցանկանայի, այո՛, արժանանալ այդ փառքին. բայց մի՞թե կարող եմ...

— Կամենալը՝ կարենալ է։ Ցեվ հարմար առիթը, ահա՛, հրավիրում է քեղ։ Ջա՛լ յեղիր, արհամարհի՛ր անցավոր կյանքը. կատարի՛ր այն՝ ինչ վոր քարոզում ես աշակերտներիդ. քո հիշատակը յեկող սերունդները կորհնեն...

—Ի՞նչ պիտի լինի իմ գործը Դվինում, հարցրեց վեհափառը։

— Պիտի հովանավորես այն մարդկանց, որոնք քո հոգևոր ծառաների անունով կապրեն կաթուղիկոսարանում։ Ցերևիը նրանք պիտի քննեն, իսկ դիշերը գործեն։

— Իսկ յեթե մասնիչները մեզ խանգարի՞ն։

— Այն ժամանակ մի քանի մարդկանց մահ կհասանէ, նրանց թվում, դուքն, և հայրապետին. բայց այդ դժոխքն անհրաժեշտ են։

— Ծանր պայման է այդ...

— Ի՞նչ, մեռնե՞լը։ Կա՞ մէկն ավելի դյուրին և սիրելի քան՝ քան հայրենյաց համար մեռնելը։

— Քաջի և հայրենասերի համար, այո՛, դյուրին է, բայց...

— Դու քաջ չես, վեհափառ տեր, այդ դիտեմ. բայց հայրենասեր ես, այդ չես ուրանալ։

— Թո՛ղ կատարվի քո կամքը, սիրելի իշխան. յեթե աստված մահ և վերոչնչ ինձ համար, կընդունեմ նրան հոժարությամբ։ Մարտիրոսների կարգը չեն դասիլ ինձ, դիտեմ, բայց անունիդը դարեր չի մոռանալ իմ շնորհն, խոսեց վեհափառը վըճռական յեղանակով։

— Աստուծով աղատ կմնաս վտանգությունից, վեհափառ տեր. բախտն արդեն ծիծաղում է մեզ, անկարելի չէ, վոր այս վերջին ձեռնարկությունը ևս չհաջողվի նա մեզ, հուսադրեց իշխանը կաթուղիկոսին։

— Տեսնենք. դուցե ասուված լսե արդարների աղոթքը։

Իշխանը վեր կացավ տեղից, համբուրեց վեհափառի աջը, և շնորհակալություն անելով նրան յուր խնդիրը չմերժելուն համար, հարցրեց, թե ի՞նչ կհաճի մեկնիլ Բաղարանից։

— Նույնիսկ վաղը, յեթե անհրաժեշտ է շտապել, պատասխանեց կաթուղիկոսը։

— Այո՛, անհրաժեշտ է. յուրաքանչյուր ավուր կորուստը անվտանգությունը վտանգ կարող է բերել մեզ։

— Ուրեմն մի կամ յերկու որից, յեթե սպարապետը չի ստիպել ինձ ուշանալ։

— Սպարապե՞տը... այո՛, չես մոռացա։ Այս գաղտնիքների մասին, վեհափառ տեր, չպիտի հայտնես նրան վոչինչ։

— Ի՞նչ պատճառ բերեմ ուրեմն Բաղարանից հեռանալու համար։

— Ճես արդեն պատճառը հայտնեցի նրան։ Դու գնում ես Դվին՝ կաթուղիկոսարանը վոստիկանի հավիշտակությունից ազատելու համար։

Վեհափառը բավարար դտավ այդ առարկությունը և պայմանի դրավ իշխանի հետ՝ յելնել Բաղարանից յերրորդ որը։ Իսկ մինչև այն՝ իշխանը պիտի պատրաստեր յուր մարդկին, վորոնք

կմիանային կաթուղիկոսի հետևորդներին Ծննդոց տոնառում և նրանց հետ միասին կուղևորվեյին Դվին։

Նույն որը ևեթ հրաժեշտ տվավ Մարզպետունին Աշոտ սպարապետին և յուր թիկնապահների հետ ուղղվեցավ դեպի Գեղամ լեռները։

Բ

ՑԵՐԵՔ ԿԵՏԻ ՎՐՍ

Հաղիվ Մարղսեռունի իշխանը հեռացավ Բագարանից, և ահա ապարատկաը դիմեց մի ընաբերդ, նրա գալստյան քուն պատմառը կաթուղիկոսից իմանալու։ Բայց վորովհետև համոզված եր, թե վերջինս նույնպես կարող է ծածկել այդ իրանից, ուստի վորոշեց դիմել խորամանկության։

— Իշխանի մտադրության մեջ չեմ համակրում, ասաց նա կաթուղիկոսին, առանց վորոշակի հարցեր անելու, դու պիտի ղեղչանաս այդ մարդուն գործիք դառնալուց։

— Ի՞նչ, նրա մտադրությունն արդեն հայտնի՞ չե քեզ, մեամամաարար հարցրեց կաթուղիկոսը։

— Ինչպե՛ս չե. սկզբում նա ծածկեց ինձանից. բայց յերբ քո մոտից վերադարձավ, չես տեսեցի նրան և նա յուր ծրագիրը բացավ իմ առաջ։

— Մի՞թե... Բայց նա ինձ ղեղչացնում եր...

— Ինձ վոչինչ չհայտնել, այնպես չե՞, հարցրեց ապարատկաը՝ խորամանկ ժպիտով։

կաթուղիկոսը մի տարակուսական հայացք ձգեց ապարատկատի վրա և լուեց. նա չդիտեր ի՞նչ պատասխանել։

— Մի՛ ծածկիր վոչինչ, վեհափառ տեր. նա արդեն ամեն ինչ ինձ խոստովանեց։ Միայն չկարծես, թե իմ արքայական ճաչը կամ ազնիվ դիմումները նրա սիրտը բացին. վո՛չ. չես նրան խոստացա իմ զորագնդերն ուղարկել յուր ողնության... Նրա վերջին մտադրությունը կարող և աշակցության։

— Ի՞նչպես, դու խոստացա՞ր, և այդ խոստումդ կկատարե՞ս... հարցրեց կաթուղիկոսը անհանգիստ ուրախությամբ։

—Անշուշտ. ընդհանուր հայրենիքի շահը այդ և պահանջում։

— Կեցցես, մեծաւխտաւ տէր, այդպէսով դուս կաղատես քո կաթուղիկոսին անարդ գործ կատարելուց։ Ձի՞ վոր յերկու տարի առաջ Դվինը մխասին գրաւեցիք. այժմ էլ կարող եք նույն ձևով գրաւել։

— Անարդ գո՞րծ... Այո՛, դուս չպիտի կատարես, յես այդ թույլ չեմ տալ։

— Ցես կադոքեմ քո և իշխանի համար. կաղաչեմ աստծուն, վոր նա անպարտելի կացուցանե ձեր բանակը, բայց կաթուղիկոսարանի մեջ դավադրություն սարքել անկարող եմ...

— Մխթե իշխանը քե՞զ հանձնեց այդ գործը։

— Այո՛. «Դուս հովանավորիր, ասում է, այն մարդկանց, վորոնք հոգևորականի հագուստով ծպտյալ կապրեն կաթուղիկոսարանում և նրա նկուղներից խրամատ կվորեն մինչև արտաքին սրարխսպը...» Մխթե այդ կարելի՞ յե։

Սպարապետն իմացավ արդեն ինչ վոր պետք եր. մի ներքին ուրախություն նրա եյությունը տոգորեց։

— Վո՛չ. այդ անարդ գործին չպիտի մասնակցես դուս։ Ցես թույլ չեմ տալ, վոր հայոց կաթուղիկոսը դավադիր հոչակվի աշխարհում, իմ բաղուկը դեռ զորավոր է և նա կդործե քո փոխարեն։ Ցես կմիացնեմ իմ զնդերը իշխանի զորքերի հետ, և մենք Դվինը կգրավենք բռնի ուժով. այդպես էլ յես ասացի նրան։

Կաթուղիկոսը, վոր արդեն այդպիսի մի առիթ եր վորոնում խոստացած վտանգավոր քայլից յետ կանդնելու, ուրախությունից իրան կորցրեց և Գևորգ իշխանի՝ յուր հետ ունեցած բոլոր խոսակցությունը ժանրամասն պատմեց սպարապետին։

Վերջինս կրկին և կրկին միամտացնելով վհհափառին, վերադարձավ յուր սպարանքը դոհ սրտով։

«Վոչ, այդ չի հաջողիլ քեզ, Մարզպետունի իշխան, ակռավ խոսել ինքն իրան սպարապետը, ճմռելով յուր դեղադարդ գահլիճի մեջ։— Դու կամենում ես արդեն մեռած և Սևանում թաղված թագավորին հարություն տալ. կամենում ես նորեն աթոռի վրա բազմեցնել նրան. բայց այդ թույլ չի տալ քեզ որինավոր թագավորը։ Ցեթե հայ ժողովուրդը խաղաղություն է կամենում, թող նա ինձ խոնարհի և իմ բաղկին սպավինե։ Աչոտ Սմբատյանը չի կարող փրկել նրան, յերբ Աչոտ Շապուհյանը այդ չի կամենում... Այո՛, յես եմ հայոց գահի պայազատը. ինձ են խոնարհում վոստանիկ զորքերը, սեպուհնե-

րի դուռը, դրանիկ վաշտերը... Ցեթե Աչոտ-Ցերկաթը թագավոր է, ինչո՞ւ չի Սևանում ճղնում։ Ինչո՞ւ չեն յուր թշնամիները հալածում։ Ցևվ դու կամենում ես իմ փառքը կասլտել և տալ ճղնավորին։ Զե՛, բարեկամ, այդ նվաստությունը կրելու համար չենք ծնվել աշխարհում. վոչ էլ դրա համար ենք այս հառնակն առել, պատերազմներում ծերացել, թագ ու դավաղան ձեռք բերել... այո՛, մեր թագը խուցերում չի ծածկվիլ. նա կվայլե աշխարհի առաջ. որինավոր թագավորի դործը ամենքը հասնանեն, պատմությունները կարձանագրեն...»։

Այդ մտածություններով վոդևորված նա մտավ առանձնասրանը, կանչեց դպրին և նրանից մատաղաթ ու մելան առանալով՝ նստեց և սկսավ դրել մի նամակ։ Ըստ յերևույթին դաղտնի հաղորդագրություն եր այդ, վորովհետև դպրին չհանձնեց դրելու. բացի այդ, նա չպիտի ուղղեր այն վորևե մի հայի, ըստ վորում դրում եր արաբերեն։

Ավարտելով յուր դործը, նա արքայական կնիքը դրավ ստորագրության փոխարեն, փակեց և տվավ դպրին կնքելու։ Այս կանչելով յուր հավատարիմ քաջերից մեկին, հանձնեց նամակը նրան և պատվիրեց մինչև յերեք որը հասցնել պատկանելույն։

— Մինչև յերեք որը, տեր, դժվար է հասնել Ատրպատականն, ասաց քաջերը։

— Մինչև յերեք որը տեղ պիտի հասնե այդ նամակը, կրկնեց սպարապետը։

Քաջերը չպատասխանեց. նա դլուխ խոնարհեց և դուրս գնաց։

Արշարունյաց ձորի արևելյան դոդում, մոտ այն տեղերին, ուր կառուցած եր դեղեցիկ Ցերվանդակերտը և ուր Ախուրյանը խառնվում եր Ցերասխի հետ, դտնվում եր մեծ անտառ։ Կապույտ լեռան ստորոտից սկսած՝ տարածվում եր նա մինչև Ցերասխի ափերը։ Դարերից ի վեր ապրում եյին այդտեղ հսկահասակ կաղնիներ, մայրեր ու կաղամախներ, վորոնց կատարները ծրարում եյին ամպերի մեջ։ Ցերեկը նրանք արդելում եյին արևի ճառագայթները, իսկ դիշերն ստեղծում անթափանցելի խավար։ Զկային այդտեղ անցքեր և ուղիներ. ծառերն ամեն տեղ աճել եյին վայրենի դրությամբ և իրանց սուվարասլատ ու անհեղեղ բուներով վաղեմի ճանապարհները ծածկել։

Դա հիշատակաց արժանի Մննդոց անտառն եր, Ցերվանդ

թաղավորի տնկած վորսարանը։ Թեպետ արքայազնն պատվարները չէին պաշտպանում այլևս նրա սահմանները, բայց անտառն աճել, զորացել էր, ավերող ձեռքերը չէին կարող այլևս վնասել նրան։ Արքայի ժողոված երեների սերունդները բազմացել, լցրել էին նրա ծմակները. բայց արքայազն վորսորդներ չէին վորսում այլևս նրանց մեջ։ Եերկրի անապահով դրությունը, միմյանց հալոցդող խռովությունները և ներքին ու արտաքին ընդհարումները ցամաքացրել էին իշխանների սրտում զվարճասիրության աղբյուրը։ Հաղիվ յերբեմն չինական վորսորդի նետը անհանդստացնում էր այդ անտառի խաղաղակյաց բնակիչներին, կամ այդտեղ թաղչող դասալիք մի ղինվորի դեղարդը պատահմամբ տապալում յուր առջևից փախչող երեին։ Ուրիշ զվարճասերներ չէին այցելում այդ անտառը, վորովհետև վաղուց նա դարձել էր հաղարացի ավազակների բուն։ Այդտեղ նրանք թաղչում էին՝ թե՛ անցորդներ կողոպտելու և թե՛ հետամուտ զորքերից փախուստ տալու համար։

Բայց մի քանի որ էր ինչ այդ հրոսախմբերը անհետացել էին Ծննդոց անտառից, կամ դուցե, նրա խորքերը քաշվել։ Այդ ավազակների տաղավարներում բնակում էին այժմ մի խումբ հայ ղինվորներ, վորոնք տիրել էին այդ ծածկարաններին բռնությամբ, հալածելով այդտեղի նախկին բնակիչներին և նրանց մի մասը կոտորելով։ Ղինվորներից վոմանք զբաղվում էին այդտեղից վորսորդությամբ, վորպեսզի դրանով կերակրեն իրանց և ընկերներին, իսկ վոմանք պահպանություն էին անում անտառի մուտքի մոտ և այդտեղից դիտում Դվինո դաշտը տանող ճանապարհները։

Դրանք Մարզպետունու մարդիկն էին, վորոնք ապատում էին այդտեղ կաթուղիկոսի դալստյան, վորպեսզի նրա հետևողների հետ միանալով՝ դիմեն դեպի Դվին։

Բայց որերը հալոցդում էին միմյանց և կաթուղիկոսը չեր յերևում։ Ղինվորները իրանց ճանճրությիւնը փարատելու համար պարապում էին յերբեմն զինվորական մրցությամբ և յերբեմն իրանց կատարելիք գործի վերաբերմամբ փորձեր էին անում։ Նրանք փորում էին խրամատներ, կապում էին ատրճղկյա կամարներ, կամ ներքնուղիով ռազմամթերք փոխադրելու վարժություններ էին անում։ Դրանցից էլ ճանճրանալով՝ ատեղծում էին զվարճալի խաղեր, հաղնում էին իրանց հետ բերած վարդապետական սքեմները, ծածկում էին խուրքեր և վեղար-

ներ և այդպիսով առեղծում վարդապետների մի խումբ, որ տարօրինակ պատկեր էր ներկայացնում մենաւոր անտառի մէջ։

Ճիշ տակայն այդպիսով չարաթը լրացաւ, բայց Բաղարան իրանից լուր չեկաւ իրանց։

Չինովնիներից վոմանք ցանկութիւն հայտնեցին ուղարկել Բաղարան իրանցից մեկին և կաթուղիկոսի ուշանալու պատճառն իմանալ։ Բայց մյուսներն արդելք յեղան, հայտնելով, թե իշխանը հրամայել է իրանց սպասել, ուրեմն և պիտի սպասեն, վորպեսզի վորևե սխալ քայլ անելով՝ իշխանի դիտաւորութիւնները չխանգարեն։

Բայց վո՞րտեղ էր այդ միջոցին ինքը, Մարզպետունին։

Նա գտնվում էր Ճերադղաձորում, Աբաս արքայեղբոր մոտ։ Դիմելի դրաւելու մասին հարկ յեղած վորոշումն անելուց և նախնական պատրաստութիւնները տեսնելուց հետո, նա գիմել էր Աբասին, նախ՝ Թագաւորի հետ նրան հաշտեցնելու և ապա այդ քաջի աջակցութիւնը ճեռք բերելու յուր մտադրյալ գործի համար։

Աբասն այդ ժամանակ ապրում էր յուր հոր, Սմբատ Թագաւորի կառուցած ապարանքում։ Ծուռ յեղբոր պես նա էլ դիւղնեցիկ, բարձահասակ, ամուր կազմվածքով և, մանաւանդ, աղդեցիկ դեմքով մի տղամարդ էր։ Թեպետ տարիքով ավելի փոքր էր քան Թագաւորը, բայց նրանից ավելի խոհեմ և չրջահայեաց էր։ Բացի այդ, նա ավելի պարկեշտ և բարոյասեր էր, քան Աշոտը։ և հենց այդ պատճառով էլ սրտմտած էր յեղբոր դեմ, վոր նա առաքինի հորից ժառանգած գահի պատիւն արատաւորել էր յուր պղորիների ընթացքով։

Արքայեղբոր այդ սրտմտութիւնից ոդուտ քաղեցին յուր ժամանակին նրա աներ ափխազաց իշխանը և հորեղբայր Աշոտ բունակալը և մեացրին նրան իրանց հետ՝ Թագաւորին դավով գահընկեց անելու համար։ Այդ դավադրութիւնը, ինչպես յուր տեղը իմացանք, անհաջող անցավ։ Թագաւորը չհամենալով յեղբորից վրեժ առնել՝ ափխազաց Գուրգենի յերկիրն ավերեց, վտրով Աբասին ավելի զրգռեց։ Այս յերբ յուր ուրն Աշոտ բրունակալի վրա դարձուց, սա կեղծավորաբար հաշտվեց նրա հետ, արքայեղբայրը, ասկայն, չմոռացավ Թագաւորին, վոչ էլ հաշտվելու վորձ արավ, վորովհետև յուր դժուխքյան պատճառը բոլորովին տարբեր էր Գուրգենն—ափխազի և Աշոտ բունակալի ուղեցած պատճառներից։ Նա անդորձ նստել էր Ճերադղաձորում

և այլևս վոչնչի չէր խառնվում: Նա, մինչև անդամ, մերժեց Մարզպետունու խնդիրը, երբ վերջինս մի քանի ամիս առաջ չեկավ խնդրելու իրան՝ միանալ, դաշնակցել ցանկացող իշխանների հետ:

Եվ այժմ, երբ նա նորեն մտավ Գերազդազորս՝ Աբասին յուր կեղծ հետ հաշտեցնելու դիտավորությամբ, մտածում էր, թե անկարող պիտի լինի զարձյալ համոզել նրան: Մխակ վստահությունը ներշնչում էին իրան յուր վերջին հաղթություններ: Դրանք իրավունք էին տալիս նրան ավելի ազատ խոսելու և այդ իշխանապետներից պահանջներ անելու: Այդ վստահությամբ նա դիմեց կաթուղիկոսին և այդ վստահությամբ էլ մտավ Գերազդազորս: Բայց այս անդամ, երբ նա ներկայացավ Աբասին՝ բոլորովին կերպարանափոխ գտավ նրան: Նա վոչ միայն ընդունեց իշխանի առաջարկությունը՝ թագավորի հետ հաշտվելու, այլև հայտնեց, թե պատրաստ է յուր զորքերը նրա հրամանատարության հանձնելու:

— Ես կատարած գործերն ամաչացրին ինձ, ասաց նա իշխանին անկեղծորեն. երբ դու Ուրծաձորում հարձակվել էս Բեչերի զորաց դեմ միայն քսան հոգով, և նույն հարձակումը կրկնել էս Գեղամ սրոցի մոտ և յերկու անգամ էլ հաղթություն տարել, այն որից արդեն ուխտեցի միանալ քեզ հետ: Այստեղ, Գերազդազորսում յես ունիմ բարեկարգ բանակ, առաջնորդիր նրան, ուր վոր ցանկալի յե քեզ: Իսկ թագավորին յես կպարզեմ իմ աչքը անկեղծ հաշտությամբ և կընդունեմ նրան այստեղ արժանավայել վառքով: Հարցն այն է, թե կելնե՞ նա Սևանից թե վոչ, ավելացրեց արքայեղբայրը:

— Եթե նա իմանա, թե դու հաշտության ձեռք ես պարզում իրան, նա ուրախությամբ յուր սթռոռանիստը կդառնա:

— Այո՛, յես հաշտվում եմ նրա հետ, յես ներում եմ նրան յուր թուլությունները, վորոնք ներելի չէին իրրև թագավորի... Այո՛, ներում եմ. բայց վախենում եմ, թե նա համառի յուր վորոշման մեջ, չվերադառնա Գերազդազորս: Իսկ յես որքանից կամենում եմ տեսնել նրան նորեն յուր աթոռի վրա... իսկ թագուհին շատ վիշտ է կրել, պետք է նրան սփոփել...:

Մարզպետունին զարմացավ՝ տեսնելով Աբասի խոսքերի մեջ այսքան մեղմություն ու զորություն: Ի՞նչ եր պատահել արդյոք. մի՞թե ղջմացել եր նա յեղբոր դեմ ունեցած զժտության համար.

քե՞ աներոջ հետ դրծած դավաճանության հիշատակը տանջում էր նրա խիղճը։

— Ցնա կվերթամ Թադավորի մոտ, կխնդրեմ նրան իմ և քո կողմից, ասաց Մարղսեւանին. հույս ունիմ, թե նա կհաթդե մեր խնդիրը։

— Ցնա նուչնպես կընկերանամ քեղ, ասաց Աբասը։

— Դո՞ւ, մնծամիտ տեր, հարցրեց Մարղսեւանին քաղցրությամբ դարմացած։

— Այո՛, յե՛ս. մի՞թե տարօրինակ է թվում քեղ իմ ցանկությունը։

— Վո՛չ թե տարօրինակ, այլ ընդհակառակը, շատ բնական... Միայն թե չդիտեմ ինչո՞ւ հանկարծ այսպես...

— Ի՞նչ։

— Փափկացավ քո սիրտը, որին յես այնքան անողոք եյի դտնում մինչ։

— Իշխան, հարազատ յեղբորը դժվար է մոռանալ։

— Իսկ յես ավելին կասեմ. անկարելի յե մոռանալ...։

— Այո՛, Թադավորն ինձ ինքնադիր նամակ է դրել... ընդհատեց Աբասը՝ աչքերը սխրությամբ դեսնին հառելով։

— Նամա՞կ, հարցրեց իշխանը զարմանալով։

— Այո՛, սխուր նամակ. մնծ ցավ պատճառեց նա ինձ յուր այդ դրությամբ։

— Ի՞նչ է դրել. ինչո՞ւ յե ցավ պատճառել, հետաքրքրությամբ հարցրեց իշխան Մարղսեւանին։

— Նա հիվանդ է։

— Հիվա՞նդ. ինչո՞ւ։

— Ձե՞ վոր Բեչիրի հետ ունեցած կռվում վիրավորված է եղել։

— Մի՞թե. այդ յես չդիտեյի, հարցց իշխանը վախենալով։

— Այո՛, վիրավորվել է Թունավոր նետով. վիրաբույժը, ասում են, հուսահատված է արդեն։

— Ո՛ւ, այդ մի դժբախտություն է, բացականչեց իշխանը. անկարելի յե ուրեմն Թողնել նրան Սևանում, չատպետք բնել այստեղ։

— Վաղը նետ կարող ենք ճանապարհվել։

— Իսկ Թադավորի նամակը չե՞յիր հաճել տալ ինձ կարդալու, ակնածությամբ հարցրեց իշխանը։

— Դու արքայական տան հավատարիմն ես, ի՞նչ պիտի ու-

Նենանք մենք քնդանից ծածուկ, պատասխանեց Աբասը վստահ-
բեն. ահա՛ նամակը, կարդա՛:

Այս ասելով նա մոտեցավ պահարանին և հանելով այնտե-
ղից արքայի ղրուքյունը, տվավ իշխանին կարդալու:

Նամակը հետևյալն էր.

«Հայոց Աշոտ ապարախտ Բաղաշորից յուր սիրեցյալ յեղ-
բոր Աբաս արքայորդուն՝

Վողջույն:

«Նախախնամության աջը, սիրեցյալ յեղբայր, ծանրացավ
արդեն ինձ վրա: Իմ գործած հանցանքների համար՝ նա պատ-
ժեց ինձ չարաչար: Ցես տեսա իմ յերկրի ավերումը, տեսա սի-
րելյացս յերեսղարձությունը, տեսա իմ Թագի նսեմանալը:

«Արժանի՛ եյի յես այդ ամենին թե վոչ, չգիտեմ. միայն
գիտեմ, վոր նախախնամությունն անարդար վոչինչ չե անորի-
նում: Գիտի խոնարհիմ ուրեմն նրա սուրբ կամքի առաջ և որ-
նեմ նրա անունը գոնե այն մխիթարության համար, վոր նա
ավալ ինձ իմ տանջանքների մեջ:

«Դա այն աներկյան հույսն է, թե քիչ ժամանակից յետ ոլո-
րի բաժանվիմ աշխարհից և դադարեմ այլևս տանջվելուց:

«Բիչերի դեմ մղած ճակատամարտում մահ եյի վորոնում
յես, բայց միայն վերջ ստացա. և այն այնպիսին, վոր յերկար
ինձ տանջեր և հանցանքներս հիշեցնելով՝ կեղեքեր իմ հոգին:
Անշուշտ այս էլ առաքյալ տնորինության եր. որհնում եմ նրա
կամքը: Բայց վորովհետև վիրաբույժս հուսահատած է արդեն,
և դուշակում է, թե չուտով սիրտ մեռնիմ, ուստի չուտափում եմ
գիմել քեզ, սիրեցյալ հարազատ, և խնդրել, վոր փութաս քո
հաշտության համբույրն ինձ բերելու: Ցես վորոշել եմ մեռնել
Սևանում. իմ մարմինը, հարկավ, կտանեք Բագարան իմ հարց
գամբարանում ամփոփելու. բայց հոգիս պիտի ավանդեմ այս
ապաշխարանաց վայրում. այդ կարի ցանկալի յե ինձ: Ուրեմն
լսիր իմ վերջին խնդիրը և կատարի՛ր նրան:

«Ցես մեռնում եմ անդամալուծ. դու յես մնում պայազատ իմ
Թագի և գահի, վորոնց և պիտի ժառանգես իրավամբ: Բայց կա-
մենում եմ, վոր դու տիրանաս նրանց վոչ իբրև իմ հակառա-
կորդ, այլ իբրև յեղբայր: Ի՛նչ ինձ ուրեմն քո հաշտության
համբույրը և դրա փոխարեն ստացիր ինձանից քո որինական ժա-
ռանգությունը: Նրա հետ միասին յես կամենում եմ հանձնել

քո ձեռը մի ավանդ, վորի պահպանությունը կարող եմ վստահել միայն քեզ, իբրև իմ միակ հարազատին»:

Վերջին խոսքերն ավարտելուց յետ իշխանն անհամբերությամբ հարցրեց.

— Ե՞րբ սատար այս նամակը, տեր:

— Ցերեկ որ առաջ, պատասխանեց Աբասը:

— Ցեղ մինչև այս բոպեն կարողացար համբերե՞լ:

— Համբերեցի տանջվելով: Ցեթե թագավորը միայն հաշտության մասին խոսեր, յես իսկույն ևեթ կշտապեյի նրա մոտ. բայց նա հիշում է նաև իմ ժառանգությունը... Մի՞թե այդ ժառանգության համար պիտի հաշվեմ նրա հետ...

— Ցեթե ա՛յդ է միակ տանջող մտածմունքդ...

— Այո՛, միայն այդ. ծանր է այժմ ինձ յերևալ նրա առաջ: Ցե՞ վոր նա կկարծե, թե ժառանգությունս առանալու համար եմ այցելել իրան:

— Մի՛ հոգար այդ մասին, տեր, հապաղիլն ավելի ցավ կարող է պատճառել քեզ, ասաց Մարզպետունին և խորհուրդ տվավ նրան շտապել, ճանապարհվել կարելվույն չափ վուբով:

Մի քանի որից յետ Աբաս արքայեղբայրն ու Մարզպետունի իշխանը յելան Ցերաղավորսից և ուղղվեցան դեպի Սևան: Նրանց ուղեկցում եր հաղար հոգուց կազմված և դեղեցկապես սպառազինված մի բանակ, վորի մի մասը արքայեղբոր և մյուսը՝ Մարզպետունու զորքերից եյին:

Կամենալով մի վոքր վոգևորել դավառներում ապրող ժողովրդին, նրանք Շիրակից չանցան դեպի Գուգարք, թեպետև կարճ ճանապարհն անցնում եր նրա միջով, այն է՝ Աղստև դեպի ուղղությամբ, այլ իջան դեպի հարավ, մտան Աբաղածոտն և ապա անցան Նիգ և Վարաժնունիք դավառները: Այդպիսով շրջան անելով՝ ամեն մի շենի կամ ավանի մոտեցած ժամանակ՝ հնչեցնել եյին տալիս նրանք փողեր ու շեփորներ, անցնում եյին հաղթական ընթացքով և պատրաստում եյին ժողովուրդին իրանց մոտալուտ հարձակմանց ազակցելու: Իսկ ինքը, ժողովուրդը, դիմավորում եր նրանց ուրախությամբ, սրտագին ցույցերով. հարդանք եր մատուցանում արքայական դրոշին, վոր կրում եյին այդ զորքերը և քաղցր հյուրասիրությամբ պատվում եր վերջիններին:

Այս ամենը տեսնելով արքայեղբայրը հուզվում և գառնալով Մարզպետունուն՝ հարցնում եր.

— Եթե ժողովրդի մեջ այսպիսի սիրտ ու հոգի կա, ինչո՞ւ մենք մնացել ենք անզոր. ինչո՞ւ չենք ոգևորում այս պատրաստի ուժից։

— Վորովհետև անձնական դժուրթյունները ժամանակ չեն տալիս ձեզ աչք բանալու և ժողովուրդը տեսնելու, վորովհետև անձերնիդ պաշտպանելու հոգսը գրավել է ձեր բոլոր ուշադրությունը... պատասխանեց իշխանը. ժողովուրդը, այո՛, ուժ ունի. ժողովուրդը մի հեղեղ է, վոր թե ղրացավ, կարող է թումբեր կործանել, ամբարդակներ տապալել։ Բայց պակասում է մեզ մարդ, վոր կարողանա ժողովրդի սրտի հետ խոսել, վոդինները վառել, հեղեղ պատրաստել։

— Ո՞վ կարող է լինել այդ մարդը, հարցրեց արքայեղբայրը։

— Նա, վոր կկարողանա բոլորանվեր կերպով ղոհել յուր անձը հայրենիքին, պատասխանեց իշխանը յեռանդով։

— Այդպիսի մեկին ճանաչում եմ յես, տե՛ր Մարզպետունի։

— Ո՞ւր է նա, հետաքրքրությամբ հարցրեց իշխանը։

— Ահա՛ այստեղ, իմ առաջ... Այդ դու յես, ասաց Աբասը ժպտալով. և ապա ձեռքը պարզելով իշխանին, ավելացրեց. յերկրորդը, ահա՛, դալիս է քեզ միանալու. նա կլինի քո անբաժան և անձնվեր ղինակիցը։

— Ցնծի իմ տերն ու իշխանապետը, բացականչեց Մարզպետունին և ջերմությամբ արքայեղբոր աջը սեղմելով՝ ավելացրեց. այս որվանից ուրեմն ծագում է նոր արև. նա կջերմացնե սառած սրտերը և կառաջնորդե յուր ժողովրդին։

Այն միջոցին, վոր արքայեղբայրն ու Մարզպետունին վոտք էյին կոխում Սյունյաց նահանգի հյուսիսային սահմանածայրը, նույն նահանգի հարավային մասում ուրիշ դործ եր կատարվում։ Նսեր վոստիկանը տեղեկանալով Աշոտ բռնավորի նամակից, վոր արաբացոց ղորքերը Ջարդող Մարզպետունին մտադիր է Դվինը պաշարել կամ դավադրությամբ գրավել, ժողովեց իսկույն յուր ղորքերը, կազմեց նույնպես Ատրպատականի պարսիկներից բազմաթիվ հրոսախմբեր և նրանց հետ միասին յելնելով այն յերկրից՝ մտավ Վասպուրականն։ Ցնծի վորովհետև վորոշել եր յուր մուտքը դեպի հայկական նահանգները հաղթական և ահարկու կացուցանել, ուստի փորձ փորձեց Վասպուրականի մի քանի ավանները գրավել։ Բայց Գադիկ Արծրունու մշտապատրաստ ղորքերը յետ մղեցին նրա հրոսակներին։ Նսերը տեսնելով, վոր յուր ուժը Վասպուրականում կարող է թուլանալ, յեթե կռվի

բանվի Դադիկ Թադեոսովի հետ, խուսա տվավ նրա յերկրի հյուսիսային կողմից և շտապավ Ցերասխան անցնելով՝ մտավ Սյունիք։

Նա գիտեր, որ այդ նահանգի տեր յերեք յեղբայրներից յերկուսը, այն է՝ Սահակ և Բարդեն իշխանները, բանտարկված են յուր ձեռքով Դվինում. մնում եր ուրեմն մինը, այն է՝ Սմբատ իշխանը, որ մնայնակ չեր խելագնել յուր դեմ։ Ուստի հանդուգն արշավանքով մտնելով Ցերնջակ, դիմեց դեպի նուիրանուն բերդը։ Նա կամենում եր գրավել նրան և ընդդիմացողներին ջարդել։ Այդ ճանապարհի վրա գտնվող բոլոր ավանները և շուրջն ահ ու սարսափ տարածելով հասնել մինչև Դվին։

Բայց վո՛րքան մեծ յեղավ նրա սարսափը, յերբ Դարիա լեռներում յուր հանդիպ յեկան Սմբատ իշխանի սպառազինված գնդերը։

Մարզպետությունը արինակը քաջալերել եր հայ իշխաններին. ամեն տեղ նրանք պատրաստված եյին սրդեն, իսկ Սյունյաց քաջ իշխանն ավելի ևս։

Իմանալով վոր Նաբրի բանակին անցել և Ցերասխա հոսանը, Սմբատ իշխանը, վոր հենց այդ միջոցին գտնվում եր Ցերնջակում, հրամայեց զորքերին առաջանալ դեպի Թշնամին, վորովհետև դիտեր՝ նա առանց վնաս պատճառելու չի անցնիլ Սյունիքից։ Ցավ ահա Դարիա լեռնաձորում հանդիպեցին նրանք միմյանց։

Իշխանը, վոր յուր գնդերով գտնվում եր լեռնալանջի վրա, պատգամ ուղարկեց Նաբրին՝ ասելով.

«Առաուծո վրեժխնդիր աչը առաչնորդել և քեղ դեպի այս լեռնաձորը. դու, վոր խաբեությամբ բանտարկեցիր իմ յեղբայրները, պետք և ուրեմն նրանց տված տանջանքների վրեժը լուծես այս ձորում։ Ձո զորքերն այս վայրկենին չրջապատված են իմ քաջերով. վո՛չ մի արարածի վողջ չի յելնիլ այստեղից, յեթե յես չկամենամ. ուստի իջիր վերկանք քո անձի և զորքերի՝ յես առաջարկում եմ, վոր Դվինն հասնելուդ պես ազատես իմ յեղբայրները բանտից և վերադարձնես նրանց այստեղ։ Դրա համար յես պահանջում եմ, վոր դու տաս ինձ յերդման դիր, այլև պատանդներ՝ քո գլխավոր իշխաններից։ Հակառակ դեպքում Դարիա այս ձորը գերեզման կդարձնեմ քո բանակի համար»։

Ցավ իրա՛վ, արարացոց բանակը վտանգի մեջ եր։ Սյունեցիք

տիպել էին նրանց կանդ առնել այնպիսի նեղ ճորում, որի մի մասը բռնած էր Ցերնոլակա գետը, իսկ մյուս մասի վրա հաղիվ դետեղվում էր քարաշղթայ այրուձին։ Ցերիւս կողմից բարձրանում էին Դարվա լեռնալանջերը, որոնց ամբողջապես ըլուն էին այուններից։ Նրանց սլաստնալից դիրքն ու դմբերը սարսափ էին ազդում արաբացիներին։ Սրանք տեսնում էին, որ այդ քաջերը ժայռերի տարափով միայն կարող էին ջարդել իրանց մի ժամվա մեջ. իսկ իրանք փախչելու մոչ մի յելք չունեյին։

Վոստիկանը նուչնպես տեսնելով յուր վիճակը և հակառակորդի զորութիւնը, դիմեց խնդրի մահմեդականի հատուկ խորամանկութեան։ Նա սիրով ընդունեց իշխանի պատգամավորներին։ Համաձայնվեցավ Դվին դաւոնալուն պես՝ ազատել իշխանի յեղբայրները և դրա համար յուր կնիքով կնքած յերդմնագիր, այլև պատանդներ տալ նրան։ Այս պատճառով իշխանն իջավ վոստիկանի բանակը, տեսնվեցավ նրա հետ բարեկամաբար և խոստացված յերդմնագիրն ու պատանդներն առնելով, տվավ Նըբրին թանկագին նվերներ և ուղեկցեց նրան մինչև Ցերնոլակա սահմանը։

Բայց վոստիկանը չտապով Նախիջևանի գավառն անցնելով, մտավ Շարուր և ապա Ուրծաձոր, որոնք յուր կալվածներն էին համարվում, և այս վերջինում ասպատակել տվավ հայրենական դյուղերը, որովհետև դրանց բնակիչները աջակցություն էին ցույց տվել Մարզպետունուն։ Ի վերջո մուտ գործելով Դվին, վոչ միայն չաղատեց Սյունյաց իշխաններին, ինչպես որ խոստացել ու յերդվել եր, այլև ավելի խստացրեց նրանց կապանքները։

Բացի այդ, հաշիվ պահանջելով Բեշիրից արաբական զորքի կրած վնասների համար, դտավ, որ դրանք անթիվ են, ուստի և ի տրիտուր այդ վնասուց դրավեց իսկույն կաթուղիկոսարանը։ Նրա կարծիքով հասած վնասների սկզբնապատճառը հայոց կաթուղիկոսն եր. որովհետև յեթե նա չարունակ փախուստ տված չլիներ իրան հետամուտ յեղող վոստիկանական զորքերի յերեսից, վերջիններս ուրիշ չեյին ունենալ կռվի բռնվիլ Մարզպետունու կամ արքայի զորքերի հետ։ Ցավ ահա այս պատճառով, իբր թե ամենից առաջ պիտի տուժեր ինքը կաթուղիկոսը։ Նրա ապարանքը վոստիկանը զարձրեց յուր ծառաների բնակարան. իսկ կաթուղիկոսարանի անունով նա դրավեց յեկեղեցական իշխանապետության պատկանյալ բոլոր կալ-

վածները, որոնց հասուլթով կերակրվում էին հարյուրավոր մխաբանութիւնները:

Այս ամենը լսեց Սմբատ իշխանը և շատ ղջացավ, որ ապատ և թողել ուխատդրուժ հաղարացուն: Բայց սխալն ուղղել այլևս անկարելի էր: Մնում էր նրան մխիթարվել այն միակ մտածութիւնով՝ թե յուր յեղբայրները մահից և կապանքից ազատելու համար դրծեց այդ թուլութիւնը:

Ցնով որովհետև նա հասատատ դիտեր, որ Բեչխրը չեր խնայել յուր հարազատներին, յերե նա ջարդեր հաղարացոց բանակը, ուստի այդ մտածութիւնը մեղմեց նրա վիշտը:

Այսուամենայնիվ նա ուխտեց տուժել տալ հաղարացուն ուրծաճորցինների վնասը և ազատել նուչնիկ կաթուղիկոսարանը, յերե ասուված հալողեր իրան հանել յուր յեղբայրները բանտից:

Բազարանի միջնաբերդում նստած խոսակցում էին կաթուղիկոսն ու Աշոտ բռնակալը: Վերջինս յեկել եր մխիթարելու վհատուած այն ծանր կորստի համար, որ կրել եր յեկեղեցական իշխանապետութիւնը կաթուղիկոսարանի դրամմամբ:

Բայց վհատուած անմխիթար եր: Նա տանջվում եր, մանավանդ, խղճի խայթերից:

— Ցերե յես լսած լինեյի Մարզպետունու խորհրդին, յերե կատարած լինեյի նրան տված խոստումը, կաթուղիկոսարանը չեր վտանդվիլ, նրա կալվածները չէյին հափշտակվիլ, ասում եր նա և կշտամբում, մանավանդ, Աշոտ բռնավորին, որ պատճառ դարձավ յուր հապաղելուն:

— Ընդհակառակը, յես ազատեցի քեզ անպատուութիւնից և անխուսափելի մահից, պատասխանեց բռնավորը: Դու արդեն մի քանի անդամ վախտատ ես տվել վոստիկանի յերեսից. ուրեմն այս վերադարձով չպիտի կարենայիր նրա սիրուն ամոքել: Վաղ թե ուշ, նա կձերբակալեր քեզ և, դուցե, զնդանի մեջ էլ մեռցներ: Այդպիսով Մարզպետունու տված խորհուրդը՝ մահ և անպատուութիւն միասին պիտի բերեր քեզ:

— Այժմ էլ արդեն մեռած ու անպատուված եմ, պատասխանեց կաթուղիկոսը. ի՞նչ իրավունք ունիմ այլևս ապրելու և ինձ զահակալ անվանելու, քանի որ յեկեղեցվո սուրբ հայրերից ինձ ավանդ տրված հարստութիւնը հափշտակութեան մատնեցի իմ թուլութեամբ:

— Վոչ թե քո, այլ նրա՛ թուլութեամբ, որ իրան հայոց

թագավոր և հռչակում, բայց յերկյուղից կծկվել և Մևանի խուցերում։ Եթե թագավորը, վոր զենք ունի ձեռքին և զորք յուր յետևում, վախչում և թշնամու յերեսից, մի՞թե նույնն անելու իրավունք չունի մի հոգևորական, վորի զենքն աղոթքն և միայն։

— Ո՛ւր եր թե այդպես մտածեր և իմ ժողովուրդը, բայց նա ամեն հանցանք ինձ վրա պիտի բարձի, մանավանդ՝ յերբ «հանհանդիստ իշխանը» մեղադրե ինձ ամենքի առաջ...։

— Մարդպետությո՞ն։

— Այո՛. յես սարսափում եմ նրանից։ Ի՞նչ պատասխան պիտի տամ արդյոք, յեթե նա վերադառնա այստեղ։

— Ցեվ վո՛չ մի պատասխան. ո՞վ և նա և ի՞նչ իրավունք ունի քեզ վրա։

— Նա արքայի հավատարիմն և և գործում և նրա հրամանով։ Նա բարի խորհուրդ տվավ ինձ և յես չլսեցի...։

— կամենո՞վ ես, վեհափառ տեր, աղաչվել անհաճո գրուցներից, հարցրեց հանկարծ բռնավորը։

— Ո՛, շատ կցանկանայի, բայց ի՞նչպես կարող եմ։

— Հեռացի՛ր Բագարանից։

— Հեռանա՞մ, և ո՞ւր կարող եմ դիմել. Այրարատում այլևս չկա ինձ համար հանգստյան անկյուն։

— Դու կաթուղիկոս ես վոչ միայն Այրարատի, այլ համայն հայոց համար և ուր ել վոր լինի քո աթոռը, հայերը պարտավոր են պաշտոն մատուցանել նրան։

— Բայց ո՞ւր կարող եմ հեռանալ, ո՞վ այլևս կպաշտպանե ինձ, հարցրեց կաթուղիկոսը վշտալի ձայնով։

— Նա, վոր այնքան հաճախ հրավիրում եր քեզ յուր մոտ, վոր կամենում եր քեզ հովանավորել, բայց վորի խնդիրը մեծ ժամում եյիր դու։

— Ո՞վ... հարցրեց վեհափառը, չկարողանալով մտաբերել անվնարկած անձին։

— Գագիկ Թագավորը։

— Գագիկ Թագավո՞րը... բացականչեց հանկարծ հայրապետը. և նրա տխրամած դեմքը ներքին ուրախությունից զվարթացավ։

— Այո՛, ընտ՛ վսեպազուարճան, Գագիկ Արծրունու մոտ. նա քեզ կհովանավորե և կպաշտպանե։ Ցեթե Արծրունյաց վոստանում ապրել չկամենաս, կարող ես քաշվել Աղթամարա կղզին. Թագավորն այնտեղ անառիկ բերդ, դեղեցիկ դղյակ և հրաշալի

յեկեղեցի յե կատուցել: Հաստատեր աթոռդ այդ կղզու մեջ, վոր Հայաստանի սիրան է. ժողովիր շուրջդ նոր մխիթարեցյան. Ծաղիկերո՛ւ այնտեղ հավատո ուսումը և ծերուքյանդ օրերն անցցրու հանդստության մեջ:

Բունավորի խոսքերն այն աստիճան հաճո թվեցան կաթուղիկոսին, վոր սա հուզվելով բռնեց նրա ձեռը և ջերմագին սեղմելով բացականչեց.

— Աստված, ուրեմն, չե թողնում ինձ, տե՛ր. նա քո բերանով խոսում է ինձ հետ և փրկության ճանապարհ է ցույց տալիս: Շնորհակալ եմ քեզանից, անչափ շնորհակալ. սիրտ օրհնեմ կյանքդ, քանի կենդանի յեմ: Այո՛, հերիքամ Վասպուրականս. կքաշվեմ Աղթամարա կղզին, ուր իմ ականջին չեն հասնիլ այլևս անհաճո զրույցներ: Ցնծ հայոց կաթուղիկոսի դահը թող անվախտա մնա այնտեղ, և իմ հաջորդները որհնեն քո հիշատակը, վոր պատճառ յեղար Լուսավորչի աթոռը ապահով վայրում հաստատելու: Ցնծ այդտեղ, այո՛, հիմնատեսեմ նոր ուխտ, կժողովեմ իմ շուրջը սուրբ դրոց աշակերտներ և հավատո ջահը կվառեմ Աղթամարում... Բայ և վորքան աստանդական թափառեցի, դառնամ այժմ մի անկյուն, ուր կարողանամ իմ գլուխը հանդչեցնել:

— Ցնծ այդտեղ կավարտես քո հայոց պատմությունը... հիշեցրեց բունավորը:

— Այո՛, այո՛, իմ պատմությունը, վոր ցայսոր մնաց թերի... Վորքա՞ն յերախտագետ պիտի լինիմ քեզ, յեթե ավարտեմ այն, բացականչեց կաթուղիկոսը:

Ցնծ այդ բանով նա այնպես ուրախացավ, ինչպես մի մանուկ, վոր դառնում է հանկարծ յուր կորցրած խաղալիքները: Կարծես այլևս չեր մնում ուրիշ ցավ, վոր կարողանար տանջել յուր հոգին, կամ թե հայ ազգի դժբախտությունը պիտի վերանար, յեթե նա յուր թերի պատմությունն ավարտեր:

Մի քանի օրից յետո կաթուղիկոսը յուր հավատարիմներով յելավ Բաղարանից և իջավ դեպի Ցերասխաձոր:

Ծննդոց անտառում սպասող հայ ղենվորները տեսան հեռվից վեհափառի դալուստը և ուրախացան: Նրանք արագ-արագ հագան իրանց վարդապետական վերարկուները և վեղարները ծածկեցին: Այդպիսով կազմեցին նրանք կղերականաց մի ստվար խումբ, վոր վայել պիտի տար հայրապետական դնացքին, յեթե վեհափառը միանար նրանց հետ և այդպիսով մուտ դործեր Դվին:

Բայց վո՛րքան մեծ յաղաղ ղինվորների սխրութիւնը, յորք կաթուղիկոսը հայտնեց նրանց, թէ վոստիկանն արդէն հասել է Դվին, հափշտակել է կաթուղիկոսարանը և հետևում է իրան ձերբակալելու: Հետևապես, չկարողանալով այլևս վերադառնալ յուր աթոռը և վոչ էլ մնալ Բագարանում, նա փախուստ է տալիս դեպի Վասպուրական՝ Գագիկ Թագավորին ապավինելու:

Զինվորներն, ի հարկէ, սխրութիւամբ լսեցին այդ նորութիւնները, վորոնք վոչնչացնում էին իրանց հույսերն ու զղջնցիկ ծրագիրները և սխրութիւամբ էլ բաժանվեցան վեհափառից: Միակ մխիթարութիւնը, վոր տանում էին իրանց հետ՝ այն էր, վոր արժանացան կաթուղիկոսի աջը համբուրելու: Նրանք վերադարձան Գեղա լեռները, վորտեղից էլ Վահրամ սեպուհի հրամանով ուղևորվեցան Սևան, իշխան Մարզպետունուն այս նորութիւնները հաղորդելու:

Իսկ կաթուղիկոսը ամենայն ապահովութիւամբ Ջերասխն անցնելով՝ մտավ Ճակատք գավառը. այդտեղից իջավ Բագրևանդ, ապա Կոգովիտ և վերջապես հասավ Վասպուրական նահանգը, վորի սահմանի վրա դիմավորեցին նրան Գագիկ Թագավորի մշտապատրաստ զորքերից մի քանի գունդ և պատվով առաջնորդեցին նրան դեպի Արծրունյաց հին վոստանը՝ Վան: Վասպուրականի ժողովուրդը մեծ չքով ընդունեց յուր հայրապետին, իսկ Գագիկ Թագավորն ընդառաջեց նրան յուր իշխաններով մի քանի վերստ ճանապարհ: Նրա ուրախութիւնն այժմ կատարյալ էր, վորովհետև յուր Թագավորութեան մխակ պակասը լրանում էր վեհափառի ղալատյամբ: Այն է՝ հանուր հայոց հայրապետական աթոռը փոխադրվում էր յուր յերկիրը և այդ մեծ պատիվ էր յուր համար:

Բայց մենք թողնենք կաթուղիկոսին այս հանգիստ Թագավորի յերկրում և վերադառնանք Սևան հարազատ Թագավորի մոտ:

Գ

ՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Տխուր կղզին և նրա բնակիչները հետզհետե իրանց աղեղ-
ցուքյունն արին հոգվով ու մարմնով վիրավոր արքայի վրա։
Նրա դրուքյունն այժմ ավելի յեր վատթարացել։ Թունավոր նե-
ուից հառաջացած վերքը որ ըստ որե քայքայում եր նրա յեր-
կաթե առողջուքյունը։ Թեպետ Թագուհին խնամում եր նրան
ամենաքնքուշ հոգատարուքյամբ և վիրաբույժը կրկնապատկում
եր յուր ջանքերը, այսուամենայնիվ, արդյունքը հուսահատա-
կան եր։ Թագավորը հետզհետե նիհարում և դալկանում եր.
նրա ամուր կազմվածքը կորցնում եր յուր զորուքյունը, ինչ-
պես հինավուրց կաղնին, վորի արմատները կրծում են վորդե-
րը... Նա որ ըստ որե դառնում եր ավելի լուսկյաց, վախչում
եր ամեն ընկերուքյունից և հանդիստ եր դառնում մխայնուքյան
մեջ։

Սակայն բժիշկը, Թագուհու համաձայնուքյամբ, խորհուրդ
տվավ արքային շտապել, անորինել յուր վերջին կամքը՝ պետա-
կան գործերի նկատմամբ և պատրաստվել՝ հրաժեշտ տալ աշ-
խարհին, վորովհետև յուր հիվանդուքյունը սուր կերպարանք
եր առնում։

Բժշկի այդ խորհուրդը մի խորամանկուքյուն եր։ Նա գի-
տեր, վոր արքայի վերքը վերջ ի վերջը պիտի մահացներ նրան.
բայց դիտեր և այն, վոր այդ վախճանը դեռ հեռու յեր։ Եվ
վորպեսզի ավելի ևս հեռացներ նրան, նա աշխատում եր հանել
Թագավորին շրջապատող մխայնուքյունից և տխրուքյունից։
Նրան հարկավոր եր տպրել ուրախ ընկերակցուքյան մեջ, կամ
զբաղվել պետական գործերով, վորպեսզի սովորական վշտերն
ու մտատանջուքյունները չմաշեյին նրա մարմինը և այդպիսով
չարագացնային վերքից առաջացող քայքայման ընթացքը։

Բայց վորովհետև Թագավորը հակառակ ցանկությանն էր և չեր կամենում Սևանից յելնել, ուստի բժիշկը այդ հնարը մտածեց, վորպեսզի դոնե ուրիշների ոգնությամբ կարողանա նպատակին հասնել։

Ցնվ այդ հաջողեց Նրան։ Թագավորն ուրախությամբ լսեց վիրաբույժի խորհուրդը և դրեց Աբաս յեղբորը մեզ հայտնի նամակը։

Ցնվ ահա՛ մի դեղեցիկ որ Գեղամա Ծովակի ափը ծածկվեցավ զորքերի բազմությամբ։ Թագավորը, վոր դղյակի պատուհանից նայում եր Ծովակին, զարմացավ՝ տեսնելով ափ իջնող դնդերը։ Սկզբում նա կարծեց, թե յեկողը Բեչիրն է, վոր վերադարձել է յուր պարտության վրեժը իրանից առնելու, ուստի յերկուղի նման մի բան Նրա սիրտը խռովեց։ Բայց յերբ նկատեց յուր արքայական դրոշակը, վոր լայն բացված ծածանում եր Ծովակիի վրա, Նրա անհանգստությունը փոխվեց ուրախության։

«Այդ Մարզպետունին է, իմ քաջ և հավատարիմ իշխանը...», չշնջաց Նա և դուրս յելավ՝ սենյակից՝ դնալի դիմառանը դնալու։

Նրան հանդիպեց Թագուհին, վոր պահապան հրեշտակի նման հսկում եր արքայի վրա։ Տեսնելով վերջինիս ուրախացած՝ տխինը զարմացավ։ Վորքա՜ն ժամանակ եր, վոր Թագավորի դեմքը չեր դիարթացել և շրթունքները չեյին ծիծաղել. այժմ ի՛նչ եր պատահել։ Մի՛ դուցե հիվանդության մի չարագուշակ փոփոխություն եր այդ, կամ թե հոդևնական տկարության ապացույց։

Այդ մտքերը վայրկենապես ծագեցին տիկնոջ դլխում, բայց և իսկույն անհետացան, յերբ Թագավորը հայտնեց Նրան Գեվորդ իշխանի գալուստը։

Վոչինչ այնպես չեր կարող ուրախացնել տարտղիր Թագուհուն լինչպես այդ անձի անակնկալ հայտնվիլը։ Թագուհին, վոր առվոր եր աղմկալից կյանքի, արդեն հոդնել եր յերկար մենակությունից և, մանավանդ, ընկճվել արքայի հիվանդությամբ։ Այժմ Նա պատրաստ եր մի մտերիմ բարեկամ, վորին կարենար յուր ցավերը պատմել։ Ցնվ ահա՛ այդ բարեկամը դալիս եր։ Բացի այդ, Նա դիտեր, վոր Մարզպետունին կյանքով ու յեռանդով լի մարդ է և կարող է հույս ու կենդանություն ներշնչել արքային. ուստի առաջիկ ուրախացավ այդ նորությունն լսանալով։ Նրանք յերկուսը միասին դիմեցին դնալի դիտարանը, ավելի մոտից Ծովակիի շարժումը դիտելու։

Ցնծ ահա հանդիսակաց ամբ չրջապատեցին լաստեր ու նավակները, որոնց մասին իշխանը հոդացել էր կանխավ։ Նրանց մեջ լցվեցան մի քանի հարյուր հոգի և փոքրիկ տորմիղն սկսավ սուրալ խաղաղ ալիքների վրա։

Հառաջընթաց մակույկի մեջ նստած էին Գևորգ իշխանը և արքայեղբայրը՝ իրանց հետևորդներով։ Նույն մակույկի վրա ծածանում էր արքայական դրոշը։ Մարզպետությունն ուրախ էր, որ դարձնում էր նրան հաղթական փառքով. որովհետև հիշում էր, թե որպիսի՛ անասուդ վիճակի մեջ առացավ այն արքայից։ Նա հրճվում էր մանավանդ, որ դրոշի հետ միասին վերադարձնում էր թագավորին յուր հարազատ եղբորը, որից նա վաղուց հեռացած էր դժտությամբ և որի ակակցությունը պիտի ապահովիր այժմ յուր նոր ձեռնարկությանց հաջողությունը։

Բայց Աբասն ուրիշ մտածությամբ էր զբաղված։— Նա այժմ դալիս էր յուր եղբորը և թագավորի մոտ և հիշում էր հետևյալ անցյալը, որի հետ կապված էին սրտառուչ հիշատակները։ Նա հիշում էր յուր մանկությունը, որ անցուցել էր Ցերաղյազորսի արքունիքում, խաղերի ու զվարճության մեջ, բայց միշտ անբաժան յուր Աշոտ ու Մուշեղ եղբայրներից։ Հիշում էր յուր պատանեկությունը, որի միջոցին սովորում էր հայրենիքը պաշտպանելու, կամ թշնամին վանելու դժվարին արհեստը և իրան դասակից էին լինում միշտ նույն եղբայրները. հիշում էր յուր յերիտասարդությունը, որի ժամանակ արդեն Աշոտ թագաժառանգը չահատակում էր պատերազմների մեջ և ինքն ու Մուշեղն ակակցում էին նրան, չխամենալով յերբեք բաժանվել յեղբորից և ուխտելով նրան մշտական ընկերակցություն։ Բայց և այդտեղ նա մտաբերեց Նիզ դավաճան պատերազմը՝ դավաճան Գաղիկ Արծրունու դեմ, որի ժամանակ իրանք կռվում էին առյուծի պես, բայց և այնպես հաղթվեցան, որովհետև Աշոտի դունդը կազմող ազգերները փախուստ տվին ճակատից, որով և պատճառ դարձան իրանց պարտության և քաջ Մուշեղի դերվելուն ու մահվան։ Մի վայրկյան հին զայրույթը բռնկեց Աբասի սրտում, նա հիշեց Աշոտի թուլությունը, ազգերդյաց ուրիորդի հետ ունեցած սիրո պատմությունը, որ պատճառ դարձավ իրանց անդրանիկ անհաջողության... և նա դղջաց, որ դալիս է այդ եղբոր հետ հաշտվելու։

Բայց հենց որ դեմքը դարձուց և տեսավ Մարզպետունուն,

վոր նայում եր յուր վրա իրրև մարմնացյալ յեռանդ, իրրև անհնազան հայրենասիրություն, վոր ամեն քեն ու վոխ ստորադրում եր միայն հայրենիքի շահուն, նա ամաչեց և զայրույթի իջավ:

Նրա աչքի առաջ արձանացավ այժմ ապստամբ հոր դիակը, խաչի վրա հանած. նրա ականջներին զարկեցին այդ դիակը ծաղրող մահմեդականների աղմուկը. նա հիշեց բռնավոր Ծուսուսին, նրա անգթությունները և միևնույն ժամանակ մտաբերեց այն քաջին, վոր ինչպես յերկնային արտասուք իջավ Ուսիքից դեպի Վոստան, ցիրուցան արավ հազարացիներին, ջարդեց նրանց հրոսախմբերը, տարածրեց զաղան Ծուսուսին և յուր հոր նահատակության վրեժը տասնապատիկ առավելությամբ առավ արարացիներից: Դա յուր յեղբայր Աշոտն եր. այն անհնազան հերոսը, վորի յերևույթը միայն սարսուռ եր պղտում թշնամիներին և վորին ինքն ուխտեց հավատարմություն և մշտական աջակցություն: Եվ այդ պատճառով հայդուկությունները հաջորդում եյին միմյանց, վորովհետև յեղբայրական սերն ու միությունը առաջնորդում եյին զորքին և նրա զրոշն ու սուրը հաղթական կացուցանում ամեն տեղ: Բայց հենց վոր այդ սերը սառեցավ, միությունը քայքայվեց, դժբախտություններն էլ իրանց դռները բացին... այժմ հին առյուծը վակվել եր վանդակի մեջ. թշնամիների սարսափը ծածկվել եր ճղնաբանում...

Եվթե թագավորը հանցավոր եր այդ բանում, միթե ինքը Աբասը անպարտ եր բոլորովին... ի՞նչպես ալիտի տեսներ այժմ յեղբորը յուր նվաստության մեջ, այն հաղթող ու հերոս Աշոտին՝ աբեղաների խուցերում...:

Վերջին մտքերն այնպես հուզեցին արքայեղբորը, վոր նրա աչքերը արտասուքով լցվեցան:

«Եես այնպես ջերմագին կսեղմեմ նրան կրծքիս, վոր յուր վշտերն իսկույն մոռանա...», չզնջաց ինքն իրան Աբասը և աչքերը սրբեց:

Եերբ նավակները հասան կղզու ափին, արքայի պահանորդները կանգնած եյին այդտեղ: Նրանք յեկել եյին իշխանին դիմավորելու: Բայց տեսնելով նրա հետ և արքայեղբորը, վոր սիրալիր կերպով վողջունեց իրանց, իսկույն ցնծության աղաղակ բարձին և «կեցցեներով» ողը թնդացրին: Ապա առաջնորդեցին նորեկներին դեպի վերին տունը, ուր ապրում եր թագավորը:

Վերջինս, վոր չեր սպասում Աբասին, տեսնելով նրան Մարզպետունու հետ՝ սաստիկ ուրախացավ: Նա մոռացավ իսկույն թե՛

յուր աստիճանը և թե՛ յեղորդից կրած զրկանութիւնները։ Նա հիշեց միայն, վոր Աբասը յուր յեղբայրն է, միակ հարազատն աշխարհում. ուստի չսպասեց, վոր նա հասներ դղյակին. նա ինքը փութաց կրասեր յեղորդը դիմավորելու։ Բլրակի կանաչ զառիվայրի վրա նրանք հանդիպեցին իրար — «սիրելի յեղբայր» — «սիրելացյալ թագավոր» բացականչութիւնները խեղդվեցան նրանց ջերմ գրկախառնութեան և համբույրների մեջ։

Իշխանը և բոլոր հետևորդները բլրի վրա արձանացած՝ դէ–ռում էին հարազատների սրտաշարժ հանդիպումը։ Այդ լուռ տեսարանն այն աստիճան հուզիչ եր, վոր ներկա յեղողներից շատերն արտասվեցին։ Նրանցից ամեն մին զղում եր, թե յեր–կիրը վորքա՞ն շատ և տուժել դրանց դժոութիւնից և միևնույն ժամանակ չափում եր, թե վորքա՞ն շահ կարող և ստանալ նա այդ քաղցր հաշտութիւնից։

Թագավորը, վոր արդեն տկար եր, սաստիկ հուզումից ա–վելի թուլացավ. նա հազիվ վողջունեց մյուս հետևորդներին։ Թայց աջը դնելի Մարզպետունին ուղղելով սեղմեց նրա ձեռը և ասաց.

— Այնքան շատ եմ պարտական քեզ, իշխան, վոր կուզենայի ապրել միայն քո յերախտյաց փոխարենը հատուցանելու համար։

— Ապրի՛ր քո զահի և հայրենիքի համար, տեր, Մարզպե–տունի իշխանը քո նվաստ ծառան է. նա յուր պարտքից ավելի ոչինչ չե արել, պատասխանեց իշխանը համեստաբար։

Այնուհետև նրանք բարձրացան դնելի դղյակը, ուր Թագու–հին սիրով ընդունեց յուր տոգրին և նրա հետ միասին իշխան Մարզպետունուն։

Արքայական կացարանը յուր տխրութիւնից մերկացավ և հանդիսավորյա հատակներին հաջորդեցին խնդութիւն, հրճ–վանք և համոյական պրույցները։

Շուտով կղզին հասան նաև մյուս զորքերը և Սեվանը կյան–քով ու կենդանութիւնով լցրին։ Ցավ վորովհետև իշխանը հրա–մայել եր նրանց հաշտութեան տոն կատարել, ուստի արևել–ների խուցերը զարդարեցին շուտով ճղնարան լինելուց. հոգևոր հայրերը հակումները մոռացան և Սյունյաց հինավուրց ամրոցը տոնական կերպարանք առավ։

Ուրախութեան օրերն անցնելուց յետո՝ Թագավորը հրավիրեց յուր մոտ Աբաս յեղորը և Թագուհու ու Մարզպետունի իշխանի ներկայութեամբ ասաց նրան.

— Վաղուց կամենում էի հաշտութեան ձեռք պարզել քեզ՝ իբրև իմ յեղբորն ու ժառանգին, վորովհետև տեսնում էի, թե վորքա՜ն շատ է տուժում յերկիրը մեր զժտութեան պատճառով։ Բայց անդրանկական իրավունքը և արքայական ինքնասիրութիւնը թուլ չտվին ինձ խոնարհիլ կրտսեր յեղբոր առաջ...։ Այո՛, կամենում էի, վոր դու դիմելիր ինձ. սպասում էի, վոր դու հաշտութեան առաջին խոսքն արտասանելիր։ Վո՛րքան իրավունք ունէի յես, չդիտեմ. բայց այդ իմ յանկութիւնն եր...։ Ցերը մարդ փափագ ունի տալելու, նա սիրով մոռանում է այդ ունայն ղդայմունքներին...։ Ցեվ սակայն իմ ակնկալութիւնն անցավ ապարդիւն. դու չմոտեցար ինձ և յես խոր վիշտ ղդացի այդքան անողոք սիրտ ունենալուդ համար...։ Հաղիվ անցավ մի տարի. բախտը ինձանից յուր յերեսը դարձուց և տալելու ունէը մեռավ իմ սրտում...։ Բայց թողնենք այդ պատմութիւնը, նա արդեն հայտնի յե քեզ։ Այո՛, յերբ վիրաբույժս ինձ հայտնեց, թե չուտով պիտի մեռնիմ, վոտք տվի ատծուն, վոր քեզ հետ հաշուելու պատեհ առիթը ներկայացավ։ Շնորհակալ եմ, սիրելի Աբել, դու իմ վերջին խնդիրը հարդեցիր և բերիր ինձ հարազատ յեղբոր համբուրը, վոր թանկագինն է ամեն համբուրներից, վոր յերջանկութիւն է բերում աշխարհին, վոր անիրավ դահեր չէ պահանջում, վոր սրբում է թշվառի արտասուքը և վշտահար սրտերը մխիթարում... Ավա՛ղ, ինչո՞ւ մարդիկ չեն դնահատում կամ չատ ուշ են ճանաչում նրան...։ Իսկ յես, ահա՛, դրա փոխարէն տալիս եմ քեզ այսօրվանից իմ թագն ու դահը, վոր ավանդ ատացա մեր հորից. տալիս եմ քեզ այն իրավ իմ և թագուհու միակ ժառանգին... Վայելի՛ր այն աստուծո, ազգի և մեր օրհնութեամբ։

Թագավորը վերջին խոսքերն արտասանելով՝ նայեց թագուհուն մի կարեկցական հայացքով և ապա նորին Աբասին դառնալով շարունակեց.

— Սակայն, սիրեցյալ յեղբայր, իմ թագը կրելուց և դահին բազմելուց առաջ՝ ընդունիր ինձանից նաև մի ուրիշ, թանկագին ավանդ և յերդվի՛ր պահել ու խնամել նրան ամենայնքնուշ հոգատարութեամբ.— այդ մեծագին ավանդը իմ թագուհի-ամուսինը և քո քույրն է, վոր շատ վշտեր կրեց աշխարհում և վորի բախտը կարող եմ հանձնել միայն քեզ, աշխարհի մեջ ունեցած իմ միակ հարազատին...։

Թագուհին, վոր լուռ ու տխուր լսում եր արքային, հան-

կարծ հևհևաց և արտասուքն աղբյուրի պես սկսավ հոսել նրա աչքերից։

— Մի՛ լար, սիրեցյալ Սահանուշ, վո՛չ վոք աշխարհում չե ապրում հավիտյան, ատաց Թադևոսը խանդաղատանքով։

— Մի՛ հոգար ուրեմն և իմ մասին...պատասխանեց Թադևոսին՝ արտասուքից խեղդվող ձայնով։

— Ինչո՞ւ համար են այս տխուր դրույթները, տե՛ր արքա, բացականչեց Աբասը տեղից վեր կենալով. մի՞թե արքայական դահը կարող է ավելի սիրելի լինել ինձ քան իմ պարտավորությունը, և Թադևոս ու դայլիսանը կարո՞ղ են փոխարինել ինձ այն կորուստը, վոր պիտի կրեմ իմ հարազատի մահվամբ... Ո՛չ ուրեմն, մի՛ վշտացնիր իմ սիրտը, վոր լի է ես սիրով դեպի քեղ և ցանկությամբ՝ տեսնել իմ Թադևոսը նորին յուր փառաց բարձրության վրա։ Առաված Թո՛ղ յերկարե քո կյանքի որերը և ես կլինեմ քո դահի ծառան. այդ է իմ մեկ տեսլյանը, այդ կլինի և իմ պարտավորությունը...։

— Հավատում եմ քո սրտի անկեղծության և կարի վշտանում, վոր այսքան ուշ սկսա վայելել քո սիրո քաղցրությունը, բայց իմ որերը հաշվված են, սիրելի Աբաս, յես պիտի հեռանամ աշխարհից... Առաված Թող որհնե և պահպանե քեզ, վորպեսզի մխիթարես քո ժողովուրդը, վոր այնքան շատ վշտացավ իմ Թադևորության որով։

— Ջո Թադևորության որով էլ նա կմխիթարվի, պատասխանեց Աբասը աշխուժով. դու մեզ հետ մխսեին կհեռանաս այստեղից. կմտնես չուտով քո սենեակները, կբաղմես նորին քո դահի վրա և մենք կաշխատենք փառքով այդ դահը շրջապատել...։

— Փառքո՞վ... վաղուց եմ յես այդ փառքի աղբյուրները ցամաքացրել, ընդհատեց Թադևորը վշտալի ձայնով։

— Վո՛չ, տեր արքա. այդ աղբյուրները չեն ցամաքել, այլ նվազել են և այն՝ վոչ թե քո, այլ իմ հանցանքով. ուստի ինձ և մնում այդ հանցանքը քավել։

— Դու մխայն մի պարտք ունիս կատարելու, այն է՝ քո արժանավոր Թադևորությամբ մոռացնել աշ հայ ժողովրդին Աշոտ-Ցևրկաթի անունը։

— Այդ անունն այսուհետև ավելի պիտի փառավորվի, հատեց Աբասը վճռական ձայնով։

— Իսկ ինձ շատ որ չե մնում ապրելու, նկատեց Թադևորը։

— Ընդհակառակը, տարիներ են մնում, խոսեց Մարզպետունին խորհրդավոր ժպտալով։

— Իսկ դու իմ վերջը տեսե՞լ ես, հարցրեց Թագավորը։

— Ցես լսել եմ քո վիրաբույժին, որի տված տեղեկությունները կարի մխիթարական են։

— Ի՞նչ կլնշանակե այդ, հարցրեց Թագավորը զարմանալով։

Մարզպետունին ներողություն խնդրեց վիրաբույժի համար, որ հասարակաց ոգուտն ի նկատի ունենալով՝ սխալ տեղեկություն և տվել արքային յուր հիվանդության նկատմամբ և հայտնեց, որ իսկապես վոչ մի վտանգ չե սպառնում յուր կյանքին և Թե շուտով կապաքինվի ինքը, յնթե հաճի յելնել Սևանից և վերադառնալ Վոստան։

Թագավորը յերկար ժամանակ համառում եր յուր վորոշման մեջ, որ եր՝ ապրել և մեռնել Սևանում. բայց Աբասի ու Մարզպետունու թախանձանքը և զորավոր խոսքերը, որ շատ յերկար շարունակվեցին, վերջ ի վերջո համոզեցին նրան վերադառնալ յուր աթոռանիստը—Ցերազավորս։

Ցեվ վորպեսզի արքայի վերադարձը լիներ փառավոր ու հանդիսավոր, արքայեղբայրն ու իշխանը հրաման ուղարկեցին Վոստանում գտնվող իրանց զորքերին շտապել Սևան։ Նույնպիսի առաջարկությամբ դիմեցին նրանք Սյունյաց Սմբատ իշխանին։

Վերջինս ժողովեց իսկույն յուր ազատ զնդերը և մտավ Գեղարդունիք՝ ամիսներից ի վեր այդտեղ հյուր յեղող արքային յուր մեծարանքը մատուցանելու։

Վահրամ սեպուհը նույնպես վերցրեց Գեղամ լեռներում գտնվող յուր բանակը և Գոռ իշխանի հետ միասին շտապեց Սևվան։ Նույն ոտը հասավ և Աբաս արքայեղբոր մնացորդ զորքը։ Այդպիսով մի ցայլ բանակի զորաց թիվը հասավ մի քանի հազարի։

Թագավորն այս պատրաստությունները տեսնելով՝ սկսավ ուրախանալ և մխիթարվիլ, և այդ լայլ աղեցություն արավ նրա հիվանդության վրա։ Իսկ թագուհին չդիտեր, Թե ինչ բաներով արտահայտեր յուր շնորհակալիքն ու յերախտագիտությունը յուր տոհերն ու Մարզպետունուն, վորոնք կարծես նոր կյանք եյին ներշնչում Թե՛ իրան և Թե՛ արքային։

Մի քանի որից յետո Թագավորը Թագուհու, արքայեղբոր և իշխանների հետ միասին հրաժեշտ տվավ Սևանի հյուրընկալ մի-

արանութեանը և միացեալ բանակի ուղեկցութեամբ ճանապարհ-վեց դնալի յուր աթոռանիստ գավառը—Շիրակ:

Մի չաբաթ եր, ինչ Վերաղդավորսը կերպարանափոխվել եր. նրա լուռ փողոցները լցվել էին աղմուկով, անցուդարձը մեծացել եր և հրապարակներում սիրում եր ժխոր:

Արքայական պալատը, վոր մինչև այդ անբնակ եր, նորեն կենդանացել, հանդիսավոր կերպարանք եր առել. նրա հոյակապ դահլիճները զարդարվել էին զորքերով, թավշով ու կերպասով, կամարները պճնվել ծաղիկներով և սյունաշարերը ծածկվել դույնզդույն դրոշակապերով: Այդտեղ այժմ սիրում եր անասելոր չարժում և դատարկ դահլիճները լցվել էին բնակիչներով: Իշխան Մարզպետունու կարդադրութեամբ որ առաջ հասել էին Վերաղդավորս Գառնո դղյակում ապրող սիւնացքն ու իշխանուհիները: Մարիամ և Գոհար սիւնանց հետ միասին յեկել եր նաև Շահանդուխտ որիորդը, հանձնելով յուր պաշտոնը Մուշեղ բդեշխալին: Վերաղդավորսի արքունիքում յեռում եր այժմ կյանքը. ամենքը պատրաստվում էին թագավորին ու թագուհուն դիմավորելու:

Վերջ նշանակված որը հասավ, աթոռանիստ քաղաքի բնակիչներն ընդ առաջ դնացին արքային մի քանի վարստա ճանապարհ. նրանց առաջնորդում էին աղատանիները: Իսկ պալատական սիւնանց և իշխանուհիների խումբը, վորոնց դլուխ անցած եր արքայորդոր ամուսին Գուրգենդուխտ սիւնին, սպասում եր արքային սուրբ Փրկչի տաճարում:

Վերջապես թագուհու, արքայորդոր և հետևորդ իշխանների հետ միասին մուտ գործեց թագավորը յուր աթոռանիստ քաղաքը, վորից բացակա յեր ամբողջ մի տարի: Նրա մուտքն այնքան փառավոր և բազմամարդ եր, վոր նմանում եր հաղթական մի դարձի: Բացի հաղարավոր զորքերը, վորոնց մեծ մասը մնացել եր քաղաքից դուրս, յեկել, խռնվել էին Վերաղդավորս լայնածավալ Շիրակա բնակիչները, վորով և անցուդարձը փողոցներում արդելվել: Ամենքը կարծես կարոտել էին թագավորին և չուսալ ժամ առաջ այդ կարոտը լցնելու: Եվ ամեն տեղ, ուր վոր անցավ արքան, ժողովուրդը դիմավորեց նրան ցնծության աղաղակներով: Այդ ամենը տեսավ թագավորը, հուղվեց և արտասվեց: Նա հիշեց յուր անցյալը, համեմատեց ժողովրդի այն և այն ժամանակվա վողևորությունը և դասավ նրանց համա-

նման. բայց ինքը, ավա՛ղ, այլևս հին դյուցազնը չէր. յուր հզոր ձեռքն աշխարհը դուրկ եր կենդանությունից, այդ վոգևորությունները չեյին ջերմացնում յուր սիրտը:

Բայց վորպեսզի չհուսահատեցնե յուր շրջապատողներին և մանավանդ Աբաս յեղբորն ու Մարզպետունի իշխանին, վորոնց անձնվիրությունը գնահատում եր ըստ արժանվույն, նա աշխատեց զսպել իրան և յերևալ ամենքին ուրախ և զվարթերես:

Բայլ այդ, նա վորոշեց, մինչև անդամ, խորհուրդ տալ Մարզպետունուն՝ ոգուտ քաղել ժողովրդի այդ վոգևորությունից՝ ծառայեցնելով նրանց յեռանդը աւսավել շահյակ մի ճնշունարկության, այն է՝ Դվինի դրավման, վորի մասին ինքը իշխանն աշխատել եր յերկար, բայց վորի հաջողության արդելք եր դրել Աշոտ բռնավորը՝ յուր մատնությամբ:

Ցերբ ժողովուրդն ու աղատանին արքայի զալստյան առթիվ առեղծած տոնախմբություններն ավարտեցին, Թագավորը հրավիրեց յուր մոտ Աբասին ու Մարզպետունուն և հայտնեց նրանց յուր խորհուրդը:

— Ջանի այսքան զորք ի միասին ունինք խմբած և Սյունյաց իշխանը յուր գնդերով գտնվում է մեզ մոտ, պատրաստվենք հարձակվիլ Դվինի վրա: Ձեր այս ուժին հազարացիք դիմադրել չեն կարող և դուք մայրաքաղաքը կխլնեք նրանցից, ասաց Թագավորը:

— Ինչպե՞ս. դու այդ կիմուլյատո՞ս մեզ... կես զարմացած և կես ուրախացած հարցրեց Մարզպետունին:

— Մի՞թե յես պարզ չխոսեցի... վո՛չ միայն Թուլյատոր, այլև խորհուրդ եմ տալիս, չկենք և բնավ հապաղել:

— Այդ իմ վհատիզն է, տեր արքա, հարեց Մարզպետունին. յերբ Սևանում կաթողիկոսի փախուստը լսեցի և իմացա ատուդիվ, վոր «բռնավորի» թելադրությամբ և խուսյ տվել նա, կամեցա աղաչել քեզ՝ ուղղել ճանապարհդ դեպի Դվին: Մենք կարող եյինք հանկարծակիի բերել հազարացիներին և մայրաքաղաքը գրավելով՝ վիշտ պատճառել սպարապետին: Բայց Շիրակում սպասում եյին մեզ, չկամեցա փորձության յենթարկել մեր բախտը և ժողովրդյան ուրախությունը: Իսկ այժմ քանի վոր այդ հրամանը տալիս ես մեզ արքան, յերկու որից արդեն բանակը կարող ենք շարժել դեպի Վոստան: Մնում է միայն ստանալ արքայեղբոր և Սյունյաց իշխանի հաճությունը:

— Ես պատրաստ եմ իմ զորքերով, ասաց Աբասը վճռաբար:

— Խոսեցնեք ուրեմն Սմբատ իշխանի հետ և արդյունքը հայտնեցնեք ինձ, հրամայեց Թագավորը։

Նույն ավուր յերեկոյան՝ արքայեղբոր սպարանքում խորհրդի ժողովվեցան Մարզպետունի իշխանը, Սյունյաց տերը, Վահրամ սպասուհը և Գոռ իշխանիկը։ Արքայեղբայրը հայտնեց ամենքին Թագավորի ցանկությունը և առաջարկեց նրանց հայտնել իրանց կարծիքը առաջադրյալ խնդրի մասին։

Մարզպետունի իշխանի տված մի քանի բացատրություններից յետո՝ ամենքը միաբերան ցանկություն հայտնեցին հետևել արքայի խորհրդին և ողուտ գտնել հանդամանքների հաջողությունից։

Սմբատ իշխանը, վոր յերդվել եր վրեժխնդիր լինել վոսոխականին նրա յերդմնազանցության համար, հավատաց, թե աստված ինքն և ներշնչել արքային այդ ցանկությունը։ Նրան ուրախացնում եր, մանավանդ, այն միտքը, թե չուտով պիտի ազատե բանտից իշխան յեղբայրներին և Թասիլ կաթուղիկոսապանը մահաժղականներն ձեռքից։ Այդ պատճառով հանձն առավ յուր ողջ մնացած բոլոր ուժը համախմբել Դվինո շուրջը։

Շուտով մյուս իշխաններն էլ պիտի կարողանային իրանց զորքը և պատրաստել նրան մոտալուտ հարձակման։

Ցերեկվա ժողովրդի շուրջը դանվող դաշտավայրերի վրա, ուր Ծիրնիկի վտակը խառնվում և Ախուրյանի հետ, զբաղված եյին զանազան իշխանների զորաց վրանները։ Մի քանի որ եր, ինչ այդտեղ ակսվել եր տաղնապալից շարժում. մարդիկ կարծես կրակի մեջ եյին։ Զորապետերի մի մասն ընդհարման վարժություններ եր անում, մի մասը հարձակման փորձեր եր կատարում. վոմանք մրցախաղերով եյին պարապած, իսկ վոմանք պարապահար զրնիններ կամ պաշարման համար պիտանի նյութեր եյին պատրաստում։ Այդ ամենի վրա հսկում եյին թե՛ իրանք՝ իշխանները, և թե՛, մանավանդ, Վահրամ սպասուհը և Գոռ իշխանիկը։ Վերջինս յերեք վիսիսգում եր որվա ղեկ մի ժամը անցնել յուր հարսնացուի հետ, վոր այդ մեջոցին գտնվում եր արքունիքում, այդ ել չեր կարողանում, վորովհետև ռազմական պատրաստությունները խլում եյին նրա բոլոր ժամերը։ Հաղիվ ղեկերվա մեջ հանդչում եր նա մի փոքր և վաղ առավոտյանից նորեն գործի սկսում։

Բայց արի պատանին վոչ միայն չեր տրտնջում, այլև ժպի-

տը չէր հեռացնում յերեսից։ Իսկ վահրամ սեպուհը նրան վոչնչացնելու համար սասում էր.

— Շուտով, սիրելիս, Դվինը կառնենք, հաղթական տոներ կկատարենք և մայր տաճարի մեջ քո պսակը կորհնենք։

Մինչդեռ Ցերաղդավորսում այս պատրաստություններով եյին զբաղված, տեղի ունեցավ մի անակնկալ դեպք, վոր սասեցրեց զորքի և զորապետների յեռանդը։

Այդ հետևյալն էր։

Արքայի Շիրակ գավառը մտնելու որից արդեն լուր էր հասել վոստիկանին, թե Թաղավորը մեծ զորքով վերադառնում է յուր վոստանը։ Նբսրը, վոր վաղուց ծանոթ էր Աշոտ-Ցերկաթի քաջության և դիտեր, թե նա քանի՛ անգամ է ընկած տեղից քարձրացել, նորից զորացել և յուր իշխանության վնասներ է հասուցել, սաստիկ վախեցավ, յերբ նրա վերադարձը լսեց։ Նրա յերկյուղը զորացրին մանավանդ արքայի ղնացքին հետևող յուր այն լրտեսները, վորոնք յեկան և պատմեցին նրան այդ մեծադղրդ վերադարձի մանրամասնությունները. հայտնեցին զորքերի քիվը, նկարագրեցին նրանց սպառնական ընթացքը, ժողովրդական վոգևորությունը, արքայի ընդունելության փառահեղությունը և այլն։

Արդեն Աբասի հաշտությունը Թաղավորի հետ այնպիսի մի դեպք էր, վորից վոստիկանը պիտի վախենար, վորովհետև այդ յերկու քաջերի միությանն արաբացիք դիմադրել չեյին կարող։ Բայց յերբ նա իմացավ, վոր Սյունյաց Սմբատ իշխանը ևս միացել է նրանց հետ յուր զորքերով, ել սրտի բոլոր քաջությունը կորցրեց։

«Այո՛, միությունը ուղղված է իմ դեմ, մտածեց նա ինքն իրան. Թաղավորն ուզում է հալածել ինձ այստեղից. նա չէ դոհացել իմ զորքերը ջարդելով և աշխատում է ուրեմն ամբողջապես իշխանությունը վերացնել այս յերկրից։ Իսկ Սմբատ իշխանը միացել է նրա հետ, վորպեսզի վրեժ լուծե այն անարգանաց համար, վոր յես հասուցի նրան՝ իմ յերդման դրժելով և յուր յեղբայրները ընդանում պահելով...»։

Այս մտածությամբ ընկճված՝ նա հրավիրեց յուր մոտ Բեչիր զորապետին և Դվնո դենպետին և խորհուրդ արավ նրանց հետ, թե ի՞նչպես կարող է սպառնացող վտանգը հեռացնել իրանից։

Բեչիրը հայտնեց, վոր քաղաքում գտնվող արաբական զորքը հաղիվ կարող է տասնորյա պաշարման դիմադրել, ըստ վորում

համբարանոցներում պաշարը նվազած է և չուտով այն հայթայթել չեն կարող։ Միակ փրկությունը Դամասկոս սուրհանդակ ուղարկելը և ամբարավոից ոշնական ղորք խնդրելն է, թայց այդ միջոցը յերկար կաևի և հայերը մինչև այն կարող են Դվինը պաշարել։

— Ի՞նչպես կլինի, յեթե մենք ինքներս հաշտություն առաջարկենք նրանց և թաղավորի բարեկամությունը խնդրենք, հարցրեց վոստիկանը։

— Մեր կրոնն իրավունք և տալիս քեզ խոնարհիլ և կեղծավորել անհավատին, յեթե բռնությամբ չես կարող հաղթել նրան, ասաց դևնպետը. մխայն պիտի դիտենաս, վոր մի անդամ խոնարհելուդ համար՝ տասն անդամ պիտի խոնարհեցնես, յերբ հանդամանքները նորեն հաջողին քեզ։

— Այո՛, ինչ մխայն մի անդամ և անհրաժեշտ խոնարհիլ այդ թաղավորին, վորպեսզի նրա շուրջը խմբված ղորքերը հեռացնեմ, պատասխանեց վոստիկանը, իսկ այնուհետև, դիտեմ, նոր յերկպառակություն կծագի, իշխանները կրկին կելնեն մեմյանց դեմ. ջրերիս հայի դլուխ մի կաթսայում չի յեփվիլ, այդ հո հին առած է. և ահա՛, յերբ այդ առածը կճշտվի, այն ժամանակ նորեն մենք մեր սուրը կհանենք։

— Այո՛, այդպես լավ է. այդ և միակ խոհական միջոցը, ասաց Բևչիրը, և դևնպետը համաձայնվեցավ նրա հետ։

Ցնծ ահա՛ մի դեղեցիկ որ, յերբ դաշնակից իշխանները վերջին ղորահանդեսն էին կատարում և թաղավորը յուր նժույգը հնծած և վոստանիկ թիկնապահներով չրջապատված ներկայանում էր հանդիսին, վորպեսզի անձամբ վողջուրե և քաջալերե ղորքերին, ահա՛ հանդիպակաց դաշտի վրա յերևաց հնծյալների մի խումբ, վոր արշավասույր դիմում էր դեպի հայոց բանակը։ Ցերբ նա բավական մոտեցավ, Մարզպետունի իշխանը նկատեց սրարական դրոշը և հրամայեց Գոռին՝ ընդառաջել յուր զնդով և տեղեկանալ, թե ո՛վքեր են և ինչո՛ւ յեն դալիս։

Վո՛րքան մեծ յեղավ յերիտասարդի զարմանքը, յերբ նա հնծելահմբին մոտենալով՝ տեսավ նրա հետ Սյունյաց Բաբգեն իշխանին պատվավոր ղրահավորության մեջ և վոստիկանի ավադանիներով չրջապատված։ Մինչդեռ նա անակնկալ հանդիպումով չփոթված պատրաստվում էր յուր զարմանքը արտահայտե-

րու, իշխանը դիմեց դեպի նրան և վարելով յերիտասարդին՝ համբուրվեցավ նրա հետ։

— Ի՞նչ դիպք և ի՞նչ հողմ հայտնեցին քո դարձը, աեր... բացականչեց Գոռը ուրախանալով։

Իշխանը մի քանի խոսքով հայտնեց նրան յուր առաքելության նպատակը և ապա յերկուսը միասին, իրանց հետևորդներով, դիմեցին դեպի բանակը։

Սյունյաց Սմբատ իշխանը հեռվից ճանաչեց յեղբորը և առաջ վազելով վարեց նրան ջերմագին։ Հարտպատանների հանդիպումն այնքան սրտաշարժ եր և ուշագրավ, վոր ստիպեց վոստիկանի պատգամավորներին սպասել մի առ ժամանակ բանակից դուրս, մինչև վոր յեղբայրական սիրո հուզումն անցներ և սրտերը հանդստանային։ Ապա Բարդեն իշխանը միանալով նրանց հետ՝ ներկայացավ Թագավորին, վոր ընդունեց պատգամավորներին բացօթյա և բոլոր յուր իշխանների ներկայությամբ։

— Ամիրապետի վոստիկանը, Նորը ամիրան, չնորհավորում է մեր բերանով քո արքայական վերադարձը դեպի շահնշահիդ աթոռանիստը, առաջ դալով խոսեց արքայի հետ պատգամավորության առաջնորդը. ընդ սմին, ցանկանալով մշտական բարեկամություն հաստատել հզոր շահնշահի հետ, ամիրան խնդրում է մոռանալ ամեն դժտություն, վոր տեղի յե ունեցել մեր մեջ, ամեն քեն ու վոխ, վոր առաջացել է ցավալի ընդհարումներից և դնել միմյանց հետ խաղաղության ուխտ՝ թե՛ ամիրապետի և թե՛ ձեր ժողովրդի շահուն համար։ Ենվ ահա՛ յուր բարի դիտավորությունն ապացուցանելու համար, վոստիկանը հանել է բանտից Սիսակյան իշխաններին, վորոնցից մինը յուր աղաս կամքով առաջնորդեց մեզ մինչև այստեղ, իսկ մյուսը, այն է՝ Սահակ իշխանը, պատվով ապրում է Դվինո մեջ, հայոց Թագավորների կառուցած ապարանքում։

Այս ամենից հետո՝ ամիրան ուղարկում է շահնշահին արժանավայել ընծաներ, վորոնց և խնդրում է ընդունել՝ իբր իսկական հավաստիք դեպի հայոց ազգն ու Թագավորը ունեցած յուր անկեղծ բարեկամության։

Այս ասելով առաջնորդը նշան արավ և ընծայակիրները մատուցին արքային իրանց բերած ընծաները։

Թագավորը, թեպետ դժգոհ այս անակնկալ պատգամավորությունից, այսուամենայնիվ, ի պատիվ Բարդեն իշխանի՝ սիրով ընդունեց նրանց, չնորհակալություն արավ վոստիկանի բարի

դիտավորության և դրկած ընծաների համար. ապա հրավիրելով պատգամավորներին քաղաք, խոստացավ նրանց՝ պատասխանել ամիրայի առաջարկության մի քանի որից յետո։

Բայց այս նորությունն անախորժ տպավորություն արավ ինչպես իշխանների, նույնպես և ղորքի վրա։ Ամենքն արդեն պատրաստված էին Դվինն հարձակվելու. ղորքերին, մանավանդ, վառել բորբոքել էին Աբասը մի կողմից, Մարզպետունին մյուս կողմից։ Իսկ Դուռ իշխանիկը ժամեր էր համարում Դվնո դաշտն իջնելու համար։ Նա մտածել էր անձամբ մուտ գործել քաղաքի ներքնուղին, որի գաղտնի յելքը ծանոթ էր իրան և յուր ճեռքով տնկել հաղթության դրոշը Դվնո միջնաբերդի վրա։ Դրանից ավելի լավ հաղթության առիթ չէր կարող նա յերազել. իսկ այդ հաղթության մրցանակը պիտի լիներ այն որիորդի համբույրը, որ սպասում էր իրան Ներաղաւորսի արքունիքում։

Այսուամենայնիվ խորամանկ հաղարացու պատգամավորությունը ի դերև էր հանում քաջերի հույսը։ Շատերը նրանցից ցանկանում էին, որ թագավորը մերժե վոստիկանի առաջարկությունը և խաղաղությունը ճեռք բերե վոչ թե արաբացոց հետ բարեկամանալով, այլ նրանց յուր յերկրից ընդմիշտ արտաքսելով։

Այս առիթով, ահա՛, խորհուրդ կայացավ թագավորի մոտ։ Բոլորն սկզբում հարձակման կողմն էին։ Բայց յերբ Բարդեն իշխանը հայտնեց, թե Նսրրը առանձին հասկացրել և իրան, որ յուր Սահակ յեղբորը—թեկուզ աղատած, այսուամենայնիվ, պահում և Դվնում իբրև պատանդ և յեթե թագավորը մերժելու լինի յուր առաջարկությունը և մոտենա Դվնին՝ ղորքով յուր քաղաքը պաշարելու, առաջին որն իսկ նա կախել պիտի տա իշխանին պարսպի աշտարակի վրա—ամենքը մնացին չվարաժ։

— Ճեղբորս կյանքը վտանգի չենթարկելու համար, գոնե, պիտի ընդունենք վոստիկանի առաջարկությունը, խոսեց խաիւսն Սմբատ իշխանը, վախենալով, կարծես, մի՛ գուցե ուրիշները հակառակ կարծիք հայտնեն։

— Դուռ չտատանեցիր, սիրելի իշխան, նկատեց թագավորը ժպտալով. վորքան եվ մեր ղորքի և իշխանների պահանջը՝ Դվինն հարձակվելու նկատմամբ իրավացի յե, այսուամենայնիվ յես ավելորդ մի զինվոր չեմ զոհիլ այնպիսի ժամանակ, յերբ թշնամու բարեկամությունը հնարավոր և ճեռք բերել խաղաղությամբ։ Թեպետ մեր ուժը գերազանց, թեպետ հանդամանքները

նպաստավոր, այսուամենայնիվ մենք չենք կարող Դվինը գրավել, առանց դրան մի քանի հարյուր զինվոր զոհելու. իսկ այդ զոհերը մենք պիտի խնայենք, քանի որ առանց այն էլ բավական շատ ենք զոհել... Սկզբում, ճշմարիտ է, անհաճո տպավորություն արավ ինձ վրա վոստիկանի պատգամը, բայց այդ այն պատճառով, որ ես էլ վարակված եմ ձեր ազգասիրությամբ: Իսկ հետո սկսա լրջությամբ կշռել և տեսա այն համոզման, թե ավելի լավ և դիմո տիրապետ թողնել ամիրապետի վոստիկանին, քան թե նրան հալածելու համար զոհել մի քանի հարյուր հոգի: Արդ, տեսե հասարակ զինվորների նկատմամբ այս մտածմունքն է մեզ առաջնորդում, որ՝ երբեմն ևս առավել զգուշությամբ պիտի հոգանք քո յեղբոր և իմ հարազատի համար, որ սիրելին է թե՛ մեր արքունյաց և թե՛ համայն այսունեցոց և որի կյանքն այս րոպեիս գտնվում է գաղտն հաղարացու ձեռին: Այս պատճառով, ահա, ես որոշում եմ ընդունել վոստիկանի առաջարկությունը և բարեկամության դաշն կռել նրա հետ: Այնուհետև, տեսե մեզ ազատ ժամանակ կմնա, կզրաղվենք մեր յերկրի ներքին շինությամբ, մինչև որ մի որ բախտը կհաջողե Սահակ իշխանին ևս վոստիկանի ձեռից փրկելու:

Թագավորի վորոշումը սիրով ընդունեցին ամենքը, իսկ Սյունյաց իշխանները արտահայտեցին նրան իրանց յեղբոր նկատմամբ ունեցած խնամոց համար:

Նիրկա յեղոդների մեջ դժգոհ եր միայն Գոռ իշխանիկը, վորովհետև արքայի վորոշումը խլում եր նրանից այն փառքը, վոր նա հույս ուներ ձեռք բերել Դվնո առման ժամանակ:

Այդ բանը նկատեց թագավորը և ժպտալով դարձավ յուր խորհրդականներին.

— Ձեզանից ո՞վ կարող է առաջարկել ինձ մի միջոց, վորով կարողանանք փոխարինել Գոռ իշխանին այն կորուստը, վոր նա կրում է այս հաշտությամբ:

— Ճես, տե՛ր արքա, բացականչեց Վահրամ սեպուհը:

— Խոսի՛ր, սեպուհ, յես շնորհապարտ կմնամ քեզ, առաջ թագավորը շարունակ ժպտալով:

— Մի քանի ամիս առաջ, տե՛ր արքա, մենք Գառնիում որսնեցինք Գոռ իշխանի և քո հուժկուսատր որիորդ Շահանդուխտի նշանադրությունը: Մենք պայման դրինք՝ այն ժամանակ պսակվել նրանց, հենց վոր հաղարացիք հեռանան մեր յերկրից և խաղաղություն տիրե: Այդ պայմանը, ահա՛, լրումն առավ

այսօր. թեպետ հազարացիք դեռ չեն հեռացել Հայաստանից, քայլ մի՛ևնույն է, նրանց ուժն արդեն խորտակված է, քանի վոր իրանք են հաշտութիւն խնդրում մեզանից. ուրեմն հասել է պահի ժամը: Հրամայի՛ր մեզ հարսանյաց տոնախմբութիւնն ներն սկսել և դրանով մեր իշխանի կորուստը կիսխաբինվի:

— Կեցցե՛ս, սեպուհ, ավելի խմաստուն առաջարկութիւն անկարելի էր անել, բացականչեց Թագավորը. վաղուց մեր սրքունիքը կարոտ եր ուրախութեան: Թո՛ղ ուրեմն վաղվանից սկսեն ինչ պատրաստվի: Սյունյաց որիորդի հարսանյաց, ի դեպ, կմասնակցեն որիորդի հորեղբայրները և Սյունյաց քաջերը:

Մարզպետունի իշխանը վեր կացավ տեղից և չնորհակալութիւն արավ արքային յուր այդ ուրախարար հրամանի համար. իսկ Դոռը, վոր ամոթխածութիւնից չառաջունել եր բոլորովին, ծնկաև չկիսվ և Թագավորի ձեռը չերմութիւնամբ համբուրեց:

Հետևյալ առավոտ հաշտութեան դաշնագիրը դրվեցավ, վոր Թագավորը կնքելով հանձնեց վոստիկանի պատգամավորներին, տալով նրանց նաև զանազան ընծաներ՝ Դվինո վոստիկանին տանելու համար:

Իսկ մի քանի որից յետո, Ամենափրկչի հոյակապ տաճարում, վոր կառուցել եր Սմբատ Թագավորը, մեծ հանդիսով ու շուքով կատարվեց Դոռ իշխանի և Շահանդուխտ որիորդի ամուսնութեան պսակը: Այդ հանդիսին ներկա եյին Թագավորը, Թագուհին, բոլոր արքայազուները և համայն իշխանատեսական գասակարգը: Դուռնո ամբողջում արած խոստման համաձայն՝ նոքա պսակներն իսկը բռնեց Վահրամ սեպուհը, վոր այդ որը յուր հանդիսական զնն ու զարդի մեջ նմանում եր մի հոյակապ դյուցազնի:

Ինչ վերաբերում է Դոռ իշխանին և Շահանդուխտ որիորդին, նրանք արդեն բոլոր համախմբված քաջերի և գեղեցկուհիների անզուգական պսակն եյին կազմում:

Մի քանի որ չարունակ տևեցին հարսանյաց տոնախմբութիւնները: Բոլոր Շիրակը, համարյա, մասնակցեց արքունյաց ուրախութեան. իսկ զորքերը նրանով ա՛յն աստիճան զբաղվեցան, վոր մոռացան, մինչև անդամ, Դվինո առման արդելք յեղող վոստիկանի պատգամավորներին:

Դ

925 թվականը վերջացավ և սակայն Հայոց յերկիրը, չնորհիվ տեղի ունեցած հաշտութեանց, վայելում եր դեռ կատարյալ անդորրութիւն։

Այս պատճառով դաշնակից իշխանները իրանց զորքերով հեռացել եյին Յերազավորսից։ Մարզպետունի իշխանը միայն չեր կարողանում վերադառնալ յուր ամրոցը—Գառնի, ուր վաղուց արդեն գտնվում եր Գոռը՝ նորապսակ հարսի և իշխանուհի մոր հետ։

Արքայի հարցին, թե «ինչո՞ւ իշխանը չե կամենում հանդըստանալ», վերջինս պատասխանեց.

— Իմ հանդստութեան ժամը չե հասել տակավին։

— Ի՞նչ հինչանակե այդ, հարցրեց Թագավորը։

— Ցես դեռ պարտք ունիմ կատարելու, ավելացրեց իշխանը։

— Դու քո պարտքերը հատուցել ես արդեն, նկատեց Թագավորը. ահա՛ լրանում է յերկրորդ տարին, ինչ դու չարունակ հոգսերի մեջ ես։ Դու աղատեցիր ինձ ապստամբների հետապնդութիւնից. դու չարչարվեցար իշխանների միութեան համար. բանակ կազմեցիր՝ գրեթե, չեղած տեղից. հաղթանակ տարար Թշնամիների վրա. հաղարացող հրոսախմբերը ցրվեցիր, վերջապես Աբասին ինձ հետ հաշտեցրիր և Դվինս վոստիկանին ահաբեկելով, ստիպեցիր նրան բարեկամութիւն խնդրել մեզանից. ուրիշ ել ի՞նչ պարտք է մնում քեզ կատարելու։

— Ամենից գլխավորը, տեր։

— Այսինքն։

— Ցերդմանս պարտքը։

— Ի՞նչ յերդման, հարցրեց Թագավորը զարմանալով։

— Այն, վոր յերդվեցի Գառնիում, ս. Մաշտոցի գերեզմանի վրա, իմ ուխտի ընկերների և Գառնո ժողովրդյան առաջ։

— Այսի՞նքն։

— Չվերադառնալ ընտանեյացս գերիկը, չմտնել իմ հարկիդ տակ, մինչև որ վերջին հաղարացին չհալածեմ հայրենի սահմաններից։

Թագավորը նոր հիշեց այդ պատմությունը, որ արել եր նրան իշխանը Սևանում և տաբակուսելով հարցրեց.

— Ինչո՞ւ, ուրեմն, թուլլ տվիր ինձ հաշտվել վոստիկանի հետ, քանի որ այդպիսի ուխտ դնելիր արած։

— Մտածելի, թե ավելի լավ և տարագիրը մնամ իմ տանից, քան թե մեր բանակը վտանգի ենթարկեմ։

— Դու առաջ արդեն մտադիր եյիր Դվնո վրա հարձակվելու, նկատեց թագավորը. մի՞թե այն ժամանակ գերծ պիտի մնար գործը վտանգից։

— Այն ժամանակ հույս ունեյի իմ հավատարիմների վրա, որոնք կաթուղիկոսի հետ միասին Դվին պիտի մտնեյին։ Բայց հետո այդ հույսը վոչնչացավ, որովհետև «բռնավորը» մեր պաղտնիքը մատնեց։

Թագավորը լռեց և ընկավ մտածության մեջ։ Նա ճանաչում եր իշխանին. գիտեր, որ վորչափ քաջ և անկուն եր նա թըշնամիների առաջ, նույնչափ և փափկասիրտ ու խանդակաթ եր դեպի յուր ընտանիքը։ Այդ պատճառով վչտացավ, որ իշխանը հետու չի դանվում Գառնիից յուր յերդման պատճառով և այդ՝ այնպիսի մի ժամանակ, յերբ նրա միամոր վորդի Գուրը նորապսակ հարսի և իշխանուհի մոր հետ վայելում է այնտեղ ընտանեկան կյանքի քաղցրությունները։ Նա գիտեր, դղում եր, թե վո՛րչափ սրտագին կփափաքեր իշխանը մատնակցել յուր վորդվո ուրախության՝ սեփական հարկի տակ։ Ձի՞ որ յուրաքանչյուր ծնող տենչանք ապագում է այն որին, յերբ պիտի տեսնի վորդուն արժանավոր ամուսնությամբ բախտավոր... Ցավ ահա՛ իշխանի համար հասել եր ցանկալի որը, բայց բախտ անողոք վորոշմամբ նա չեր կարողանում այժմ վերադառնալ յուր տունը, տեսնել վորդուն յերջանիկ և նրա յերջանկությունը հրճնապատճել յուր հայրական դղվանքներով։

Այս մտքերը հուղեցին թագավորին։ Նա պատրաստ եր ամեն անձնվիրության, միայն թե ազատեր սիրելի իշխանին յերդման կապանքներից։ Այդպիսով, գոնե, կփոխարիներ մի փոքր նրա յերախիքը։ Բայց ի՞նչ կարող եր անել։ Միակ հնարը վոս-

տիկնանի հետ դրած ուխտին դրժելն ևր, վոր, ասկայն, նա չեր կարող անել։

Բայց նա սիրով ընդունեց իշխանի մի առաջարկությունը, վորի նպատակն ևր որինական ճանապարհով առիթ վոստիկանին՝ կատարել իրենց մի պահանջը և կամ պատերազմել իրանց հետ։

— Ներսի բարեկամությունը մերժելու մենք առիթ չունինք, բայց մեր հափշտակած գույքը յետ պահանջելու իրավունք միշտ ունինք, ասաց իշխանը Թագավորին։ Կաթուղիկոսարանի դրամները վոչ միայն հափշտակություն, այլև սրբապղծություն է, վորի նմանը չեն կատարել վոչ պարսից մարզպանները և վոչ Ներսից առաջ յեղող վոստիկանները։ Եթե այդ անարդանաց վրեժը մենք չլուծեցինք, դոնե պիտի պահանջենք, վոր յեկեղեցուց հափշտակածը վերադարձնեն նա յեկեղեցուն։ Այս պատճառով ահա՛ յես կամենում եմ դնալ Վասպուրական և համոզել կաթուղիկոսին, վոր նա նորեն վերադառնա այստեղ և իրեև յեկեղեցվո գլուխ՝ պահանջե յեկեղեցվո սեփականությունը։ Վերհափշտակ այժմ չի վախենալ նրանից, վորովհետև մենք արդեն հաղորդության մեջ ենք։ Եթե վոստիկանը նրա պահանջը կատարե, վերջինս կրկին կմտնե յուր աթոռանիստը, իսկ եթե վոչ, այն ժամանակ մենք սրով ձեռք կբերենք այն՝ ինչվոր մեզ է պատկանում։ Վորովհետև վոչ մի պատվասեր ազգ բարեկամության դաշն չի կոխել մի դրացու հետ, վոր բռնաբարում է յուր սրբազան իրավունքները։

Թագավորն իրավացի գտավ իշխանի խոսքերը և հաճություն հայտնեց նրա մտադրության։ Եվ վորովհետև վերջինս միտք ուներ նաև դաշնակցել Գագիկ Արծրունու հետ, վորպեսզի պատերազմի դեպքում նա էլ միանա Արարատյան իշխանապետության, ուստի յետևյալ խնդրեց Թագավորից, վորպեսզի իրեև լիազոր ներկայանա Գագիկին։ Թագավորը տվավ նրան ննջեցեղբ նամակ։

Մի քանի որից յետ Մարզպետունի իշխանը յուր թիկնապահներով յելավ Շիրակից և ուղղվեցավ դեպի Վասպուրական։

Բայց դեռ չեր հասել Արծրունյաց վոստանին, յերբ լուր հասավ նրան, թե Ծովհաննես կաթուղիկոսը վախճանվել է Զարեհավանքում։

Իշխանը ասպիկ վերացավ այդ գրույժն առնելով, վորովհետև կաթուղիկոսի մահվամբ մի քանի չարիքներ միասին եյին ա-

առաջնում: Առաջին՝ խանգարվում էր յուր մասդրությունը, վոր էր Դվնո առումը և հաղարացոց հալածումը: Ցերկրորդ՝ կաթուղիկոսարանն ու յեկեղեցական կալվածները մնում էին Նըսրի իշխանության ներքո, վորով բազմաթիվ վանքեր ու մյուսանություններ յենթարկվում էին կարոտության: Ցերրորդ՝ ինքը իշխանը զրկվում էր յերդումից ազատվելու և յուր ընտանյաց զլիրը վերադառնալու հնարավորությունից, և չորրորդ՝ կաթուղիկոսական գահը մնում էր Վասպուրականում և այդ առթիվ պիտի հաստաջանային զանազան դժտություններ ու պատակառումներ և չարունակվելին, ո՛վ գիտե, քանի՛–քանի՛ տարիներ և առեղծելին անչուշտ հակաթոռ կաթուղիկոսություններ, վորով և կազմալուծելին յեկեղեցական իշխանատեսությունը, վոր առանց այն էլ հետզ յեր նախանձելի վիճակ ունենալուց:

Այսուամենայնիվ իշխանն չատալեց Զորո–վանքը՝ ներկա լինելու կաթուղիկոսի թաղման:

Վասպուրականի բազմաթիվ ժողովրդյան հետ մխալին խոնըված էին այդտեղ նաև նրա վանքերի հոգևոր հայրերը և զըլխավոր յեպիսկոպոսները: Այդտեղ էր նաև Գագիկ Թաղավորը յուր մեծամեծ իշխաններով և պալատական տիկնանցով: Մարզպետունի իշխանը ներկայացավ Զորո–վանքում իրրև Արարատյան իշխանատեսության ներկայացուցիչ և Գագիկ Թաղավորն ընդունեց նրան արժանավայել մեծարանքով:

Ցերբ կաթուղիկոսի մարմինն ամփոփեցին վանքի գամբարանում, Գագիկ Թաղավորը հրավիրեց Մարզպետունուն յուր արքայական վոտանը՝ ման:

Այստեղ իշխանը մնաց մի քանի ժամանակ և ապրելով Թագավորի արքունիքում՝ յուր իմաստության և աղնվական հատկությանց չնորհիվ սիրելի դարձավ վոչ միայն Թագավորին, այլև նրա բոլոր իշխաններին ու պալատական տիկնանց: Այս առավելության արդյունքը յեղավ այն, վոր Գագիկ Թագավորն ընդունեց Աշոտ արքայի ինքնագիր նամակով առաջարկած բարեկամությունը և միության ուխտ հաստատեց նրա հետ, զրեվով այդ առթիվ դաշնագիր և վավերացնելով այն յուր առորոշությամբ ու կնքով:

Այդ միջոցներում ահա՛ հոգևոր միաբանություններին մեջ սկսավ արծարծվիլ նոր կաթուղիկոս ընտրելու խնդիրը և մի քանի նշանավոր վարդապետանոցներ Մարզպետունու գլուխակած յերկպառակության գրոշը պարզեցին:

Հայաստանի հյուսիսային նահանգներում հոդևորականությունը ցանկանում եր, որ կաթուղիկոսն ընտրվի իրանց եպիսկոպոսներից և բաղմե անպատճառ Վաստանում, իրև կաթուղիկոսի մշտական վեհավայրում. մինչդեռ հարավային նահանգներում ցանկանում էին, որ նա լինի Վասպուրականի վանականներից և բաղմե Զորո-վանքում, ըստ որում կաթուղիկոսը վախճանվել եր այդտեղ:

Հոգևոր միաբանության արծարծած խնդիրը դրավեց նաև հուսակից իշխաններին և յերկպառակություն հետևեալ ընդհանրացավ: Փոքր իշխաններին միացան մնծերը, իսկ այս վերջիններին՝ նախարարական տները:

Մարզպետունի իշխանը յուր վորճառու իմաստությամբ զդաց, որ այդ շփոթը կարող է վնասել յուր նոր ստեղծած միությանը և, հետևաբար, արդելք լինել ապագա ձեռնարկությանը, վորովհետև տեսնում եր, թե հյուսիսային նահանգների դեմ բողոքող ձայներին միանում եր նաև Գագիկ արքայի տունը: Նա խնդուն մի նամակով դիմեց Աշոտ Թագավորին և ծանուցանելով նրան դալիք վտանգները, խնդրեց այս հարցի մեջ համաձևրպիլ վասպուրականցիներին, վորպեսզի դրանով Գագիկի ինքնասիրությունը չոյվի:

Այդպիսով Արծրունյաց տունը ավելի սերտ կկապվեր Բագրատունյաց հետ, իսկ այդ բարեկամությունն ոգուտներ կբերեր ապագայում թե՛ դահին և թե՛ հայրենիքին:

Այդպիսի մի նամակ եվ նա դրեց արքայեղբորը, խնդրելով նրան՝ հորդորել Թագավորին յուր խնդիրը չհանտեսել:

Եվ ահա անմիջապես նա ստացավ պատասխան, վորով Թագավորն ու արքայեղբայրը իրավունք էին տալիս նրան տնորինել այդ խնդիրը ըստ յուր ցանկության:

Իշխանն այդ ժամանակ ներկայացավ Գագիկ Թագավորին և հարցրեց նրան, թե ո՞ւմ կկամենար ընտրել կաթուղիկոս և ո՞ւր կցանկանար բաղմած տեսնել նրան:

Գագիկ Թագավորը պատասխանեց, թե յուր ընտրելին Վասպուրականի մեջ հայտնի Ստեփաննոս յեպիսկոպոսն է. իսկ կաթուղիկոսարանը նա ցանկանում է տեսնել Աղթամար կղզում, ուր ինքը կառուցել է հոյակապ յեկեղեցի և հզոր դղյակ և ուր չուտով արքունիքը պիտի տեղափոխե:

Իշխանը հայտնեց, թե Աշոտ Թագավորը և Աբաս զահաժառանգը հրամայել են իրան, իբր Արարատյան իշխանապետու-

թյան լիազորին՝ հարկել այդ խնդրում Գաղիկ Թադևոսի կամքը։ Հետևապես թող հանի արքան ընտրել հայրապետական գահի ժառանգ նրան, որին ինքը կցանկանա և այդ ընտրության համար կտան իրանց հաճությունը հյուսիսային նահանգների նախաթոռ վարդապետարանները։

Գաղիկ արքային մեծ հաճույք պատճառեց այդ լուրը։

— Աշոտ Թադևոսը և Աբաս դահաժառանգը յերախտապարտ կացուցին ինձ այդ դեղեցիկ ընտրհով, բայականչեց նա ուրախությամբ. այսուհետև Արծրունյաց տունը թող անբաժան դինակից լինի Բագրատունի թագավորաց և նրանց թշնամին՝ թշնամի հոչակվին նա'և մեր դահին։

Մի քանի ժամանակից յետո՝ Արծրունյաց վոստանում խորհված համաձայնությամբ ժողովում կաթուղիկոս ընտրվեցավ Ստեփաննոս յեպիսկոպոսը և այդ ընտրության, ինչպես խոստացել էր Մարզպետությունն, իրանց հաճությունը տվին Աշոտ Թագավորը և հյուսիսային նահանգների վարդապետանոցները։

Գաղիկ Թագավորը մեծ վուռքով տարավ նորընտիր կաթուղիկոսին Աղթամարա կղզին և ոծել տալով նրան յուր նորակառույց ս. Խաչի տաճարում, բաղմեցրեց այդտեղ իբրև հայոց ընդհանրական կաթուղիկոս։ Իսկ յուր շնորհակալիքը Աշոտ արքային հայտնելու համար ուղարկեց նրան թանկագին ընծաներ և նույնպիսի նվերներով էլ պատվեց Մարզպետունի իշխանին։

Բայց վերջինս ուրախ էր վոչ թե այդ սին ընծաներով, այլ այն բարեհամբույրով, վոր ձեռք բերավ Վասպուրականում և վոր ապագա հաջողության համար պիտի ծառայեր իբրև հիմնաքար։

Ինչ վերաբերում է կաթուղիկոսական խնդրին, իշխանը նրան այն նշանակությունը չեր տալիս, ինչ վոր տալիս էր Գաղիկ Արծրունին։ Վերջինս կաթուղիկոսական աթոռը Աղթամարում ունենալը մեծ վուռք էր համարում յուր համար. և մինչև անգամ մի առավելություն Սբարատյան իշխանապետության նկատմամբ. մինչդեռ Մարզպետունին ավելի դին էր տալիս Արծրունյաց տան նիղակակցության, հաստատ հավատացած լինելով, վոր Վասպուրականի իշխանների մի քանի դումարտակները ավելի շահ կարող են բերել դահին, քան թե Վոստանում նստող կաթուղիկոսը, մանավանդ վոր յուր ժամանակի ընտրելիներին մեջ չեր նշմարում նա մինը, վոր ժառանգ համարվեր Գևորդ կամ

Մաշտոց արժանավոր հայրապետներին, այլ ամենքն եւ Հովհաննես կաթուղիկոսի թուղթքյան հաջորդներն էին։

Այդ հայացքն ունէին այս խնդրի վրա նաև Աչոտ Թագավորն ու արքայեղբայրը։ Այդ պատճառով և լիարիւրան չնորհակալութիւն մատուցին Մարզպետունուն, վոր նա իմաստնաբար խորհելով՝ փոքրը զոհել եր՝ մեծագույնը ձեռք բերելու համար։

Մարզպետունի իշխանը վերադարձավ Ճերազլավորս՝ գոհ յուր առաքելութեամբ։ Նա թեպետ անկարող յեղավ վերադարձնել Հովհաննես կաթուղիկոսին, բայց դրա փոխարէն բերավ յուր հետ Գագիկ Թագավորի բարեկամութեան դաշնագիրը, վոր առավել մեծագոյն յեր, քան հայրապետի վերադարձը։

Իշխանը հանդիսաւոր առաւ արքունիքում և սկսավ խորհել նոր ծրագրների մասին, ըստ վորում հանգամանքները փոխվել էին արդեն և նա պարտավոր եր հարմարվել նրանց։ Սկզբում նա մտածում եր տիրել մայրաքաղաքին զաղտնի ճանապարհներով կամ ներքին դաւադրութեամբ, վորպեսզի յուր զորքերը կորուստ չունենային։ Բայց այժմ, յերբ Գագիկը միաբանել եր արքայի հետ, եւ յերկյուղ կրելու տեղիք չեր մնում։ Հայերը կարող էին դրավել Դվինը նուիրական հարձակումով, յնթե խաղաղ պայմանները յերկարաձգվեր։ Ճեւ ահա իշխանը մտածում եր ոգտվել ձմեռային ամիսներից և հարկ յեղած պատրաստութիւնները տեսնել, վորպեսզի գարունը բացվելուն պես առաջ վազեր զորքը։

Բայց անողոք բախտը խանգարում եր նրան։ Հազիվ նա մի քանի զորձեր կարգադրեց և հավատարիմներին հրահանգներ ավավ, ահա՛ դուրս հասավ Ուտիքից, թե Ցլիկ-Ամրամը Գուգարաց և Տաշրաց իշխանների հետ միանալով՝ հյուսիսային այդ յերեք նահանգները հանձնում և ամենայն Բեր Թագավորին։

(Այդ ժամանակ արդեն վախճանվել եր վերջինի հայր Գուգդենը, վոր միևնույն ժամանակ Աբաս արքայեղբոր անունն եր, և վորի տեղ Ախլաղիայում իշխում եր Բերը)։

Այս լուրն ընդհանրապես ծանր տպավորութիւն արավ արքունիքում. բայց ամենից ավելի վշտացրեց արքային և իշխան Մարզպետունուն։

Ճերը վերջինս մտավ Թագավորի մոտ՝ Ամրամի այս նոր դավաճանութեան պատճառի մասին նրա կարծիքն իմանալու, արքային դուռը տխուր և տկար։ Այսուամենայնիվ նա սիրով ընդունեց նրան և հետն սկսավ մտերմաբար խոսակցել։

— Այդ դավաճանությունը նոր չէ. դա հնի չարունակությունն է, ասաց Թաղավորը։ Այդ սեպուհը, ինչպես մի անգամ էլ ասացի քեզ, վոչ թե ազգի, այլ իմ թշնամին է։ Հետևապես նրա այս չարությունն էլ ուղղված է իմ անձի դեմ։ Նա լուռ ու մինչև այսոր, վորովհետև չես վախուստ էլի տվել յուր յերեսից և ապրում էլի Սևանում անիսառունակ վիճակի մեջ։ Իմ այդ դժբախտությունը դոհություն ևր պատճառում նրան և վրեժխնդրության կրակը հանդել ևր նրա սրտում։ Բայց այժմ, վորովհետև դարձա իմ աթոռը և քո չնորհիվ մեր դործերը մի քիչ հաջողեցան, ուստի հին վոխն ու վրեժը նորեն նրան դրդեցրին և նա այդ ազդակավ չարությունը հղացավ։ Այդ մարդը կարծում է, թե Աշոտ Թաղավորը բախտավոր է արդեն, թե ինձ համար յերջանկության նոր արև է ծագել և այդ պատճառով մեր նահանդները հանձնում է Բերին, մեր հինավուրց թշնամուն, վորպեսզի իմ սիրտը նոր վշտերով դառնացնե... Բայց չթե դիտենար, վոր այս սիրտը վիրապատ ու մահամերձ է արդեն, դուցե, իրրև մարդ, խղճահարվեր... դադարեր չարիքներ դործելուց...։

— Ես կամենում եմ թողնել այս տեղի դործը կամ հանձնել այն մեծ իշխան Աբասին և դիմել Ուտիք. դուցե կարողանամ վոտանդի առաջն առնել, քանի սիսիանցց Թաղավորը չէ հեկել յուր կապուտը դրավելու, ասաց Գևորգ իշխանը։

— Գնալ Ուտի՞ք... Այո՛, այդ կարևոր ևր... բայց դու չատ հոդնեցար. Հայոց աշխարհը ուրիշ Մարզպետունի չունի, դու պետք է խնայես քեզ։

— Մարզպետունիները աննշան մարդիկ կլինեյին, չթե անդործ նստեյին։ Հրամայիր ինձ, արքա, վոդն ևթե ճանապարհվել, դուցե կարողանամ դեռ պիտանի լինել դործին, հարցց իշխանը։

Թաղավորը մի քանի վայրկյան մտածեց և ապա նայեց Մարզպետունու աչքերին։ Նա, կարծես, կամենում ևր մի նոր բան ասել, բայց քաշվում ևր։

— Մի՞թե վորևև միտք արդելում է քեզ՝ տալ ինձ այդ հրամանը, հարցրեց իշխանը Թաղավորին։

— Վո՛չ. դու կարող ես դնալ, և դուցե այս անդամ աղդես նրա վրա... Բայց վո՛րտեղ հույս ունիս պատսխանել Ամբռոսին։

— Ամբռոզ Ուտիքը կարող եմ չքշել։

— Վո՛չ, ավելի լավ է գնալ ուղղակի Տավուշ... դուցե նա դեռ այնտեղ լինի։

— Տավո՞ւշ... շատ քարի. յես ամենից առաջ կմտնեմ Գուգարք։

— Ուրեմն կարող ես մի քանի օրից ճանապարհվել։

— կճանապարհվեմ նույնիսկ վաղը. այստեղ լինճ վոչինչ չի աշացնում։

— Վա՞ղը... այդպես շո՞ւտ։

— Այո՛. վորքան շուտ, այնքան լավ։

Թագավորի սիրտը, կարծես, տեղահան յեղավ. մի ուրախ անհանդստություն, վորից սակայն անբաժան եր վշտերի ղրացումը, նրա սիրտը պաչարեց։ Եվ նա մոռացավ իսկույն հյուսիսային նահանգները. մոռացավ Բերին, Ցլիկ-Ամրամին... Նրա միտքը սլացավ դեպի Տավուշ, թափանցեց նրա դղյակի ներքին խորշերը և այդտեղ վորոնում եր Թշվառ բանտարկյալին, այն դեղանի իշխանուհուն, վորի հրաշալ աչքերը դժբախտ սեր վառեցին յուր սրտում և վոր պատճառ դարձավ մի շարք չարիքների...։ Վորքա՜ն ժամանակ եր, վոր նա չեր տեսել նրան, վորքա՜ն ժամանակ եր, վոր լուր չուներ նրանից։ Արդյոք մնո՞ւմ, թե՞ ապրում և դեռ. սիրո՞ւմ է իրան, թե՞ անիծում... վոչինչ չգիտեր։

Միանգամ միայն, յերբ յեգերացող ղորքով մտավ նա Գուգարք, լսեց վոր Ամրամը փակել է յուր կնոջը դղյակի ընդանում և պահում է նրան ինչպես մահապարտի... Այնուհետև այլևս ուրիշ լուր չարավ։ Իսկ այժմ, ահա՛, յերբ Գևորգ իշխանը դնում է Տավուշ, հարկավ մի տեղեկություն կբերե Ամրամ տիկնոջից... Եվ ի՛նչպես կցանկանար պատվեր տալ նրան այդ մասին... հրամայել... Վոչ, խնդրել, աղաչել, վոր նա մոռնե այն խուցը, այն խավարչտին բանտը, ուր փակված է Թշվառ սիրո զոհը. խոսե նրա հետ, հայտնե, վոր հայոց Թագավոր Աշոտ-Ներկաթը դեռ հիշում, դեռ սիրում է նրան... վոր նա չարաչար տանջվում է տիկնոջ մեծ վիճակը հիշելով. նրա դալկահար դեմքը, նրա լացող աչքերը յերևակայելով...։

Բայց մի՞թե կարելի յեր այդպիսի պատվեր տալ Մարդպետունուն. այն առաքինի հերոսին, վոր աշխարհի մեջ միայն յերկու սրբություն եր ճանաչում—հայրենիք և ընտանիք, և վոր միայն այդ սրբարանների առաջ եր խոնարհում։

Այդ է հարկե պիտեր Թագավորը, ատատ և նրան վոչինչ

չքաւոլիքից։ Նա դոհ չեղաւ միայն այն մտածութեամբ, թե իշխանը տիկնոջ մասին կլսե անշուշտ Տավուշում մի նորութիւն և կրնրև այն իրան։

Հետևյալ որը, ինչպես վոր վորոշված եր, իշխանը յուր թիկնապահներով չեկաւ Ցերազդավորսից և ուղղվեց դեպի Գուդարք։

Ե

ՀԻՆ ՎԱՀՏԵՐԻ ՎԱԽՃԱՆԸ

Զնայելով վոր ձյունը պատել եր արդեն Դուդարաց լեռները և ճանապարհները փակել, այսուամենայնիվ Տավուշի բերդում հեռավոր ճանապարհորդության պատրաստություն էին տեսնում։ Իշխանական դղյակում բազմաթիվ ծառաներ զբաղված էին իրեղեններ դարսելով, բեռներ կապելով կամ պաշար պատրաստելով։ Հզատակ դյուղացիները ներս ու դուրս էին անում դղյակի բակը՝ քաշելով իրանց յեռևից զրաստների շարքեր։ Նրանցից վոմանք բեռներ էին բարձում և վոմանք դատարկ վերադառնում, նայելով թե վո՛րքան ուժեղ կամ առողջ եր լինում բերած զրաստները։ Այս բոլոր աշխատությանց հսկում էին այր մարդիկ և ամբողջ դղյակում չեր յերևում վոչ մի կին։ Նույնիսկ հազուստներն ու չորեղենը զարսում էին ծառաները, չնայելով վոր դա աղախինների զործ եր։ Կարծես մի հարվածող խստապան հալածել եր այդ դղյակից բոլոր այն արարածներին, վորոնք կին անունն էին կրում։

Աչտարակազարդ դղյակի վերին դահլիճներից մինում, ուր ընդարձակ ծխնելույզի մեջ վառվում եր մեծ կրակ, անցուդարձ եր անում Ամրամ սեպուհը։ Նրա դեմքը տխուր, ճակատը կնճռած և հայացքի մեջ կրակը հանդած եր։ Հարուստ մորուքը, վոր իջնում եր մինչև դոտին, ծածկվել եր արդեն սպիտակ ալիքներով և կազմում եր հակապատկերը յուր հազուստին, վոր կարմիր եր միայն սևերից։ Նրա մեջքը չեր դրկում այլևս արծաթե կամար և վոչ էլ դոտին կրում եր վոսկեպատ սուր։ Ցուրտ ձեռքի զարդը մի սև համրիչ եր, վորի հատիկները նա շարունակ քաշում եր և համր քայլերով յետ ու առաջ ընթանում։

Հանկարծ նա կանգ առավ դահլիճի նեղ և դունավոր ապակիներ ունեցած պատուհանի առաջ և սկսավ ուշադիր նայել դեպի

Տավուշի ձորակը, վորի լանջերով սրընթաց բարձրանում էր հնձյալների մի խումբ։ Վորքան էլ վոր սեպուհը լարեց յուր տեսողությունը, այնուամենայնիվ չկարողացավ ճանաչել խմբի առաջնորդին, վոր հասարակ մարդ չէր յերևում. բայց հետևորդներն հաղուստից դուշակեց, վոր Վոստանի կողմից էին յեկողները։

Ցերբ հնձյալները հասան բերդի դռանը, նա ճանաչեց խուլոյն Մարզպետունի իշխանին և դուրս պրծավ քարաշեն պատըշգամբ՝ հրամայեց արագ խնդույն բանալ բերդի դռները։

«Ինչո՞ւ համար և նա դալիս այստեղ. ի՞նչ ունի այժմ ինձ հետ....», մտածեց ինքն իրան սեպուհը և չկարողանալով պատճառը դուշակել, ներս մտավ դահլիճը։

Գևորգ իշխանն իջնելով ձիուց՝ տեսավ դղյակի բակում տեղի ունեցող շարժումն ու պատրաստությունները և ինքն իրան չհնշաց.

«Մենք ուշացանք. նա արդեն հեռանում է...»։

Բարձրանալով դղյակի վերին դասիկոնները, իշխանն ամեն տեղ տեսավ ամայություն.— դորդերն ու ղարդերը հավաքած, թաղմոցները քակած, կանթեղներն իջեցրած, մեկով բանիվ դղյակը բարեղարդությունից մերկացրած եր։

«Ինչո՞ւ այսպես շուտ. այս ճմեռ ժամանակ...», մտածեց ինքն իրան իշխանը և սակայն յուր հարցին պատասխան դանել չկարողացավ։

Ցերբ մտավ սեպուհի մոտ, վերջինս նստած եր կրակարանի առաջ և քաշում եր յուր համբիչը։

— Դու այստե՞ղ, Մարզպետունի իշխան, բացականչեց սեպուհը և դիմաց դնալի նրան մի բռնադրոսիկ ժպիտով, վոր առկայն չեր մեղմում յուր դեմքի տխրությունը։

— Ինչպես տեսնում ես, տե՛ր սեպուհ, յես այստեղ եմ, յեկա քո դղյակը հյուր, բայց դու յերևի հենց դրա համար էլ մերկացրել ես նրան բարեզարդությունից։

— Առավոտ մերկացրեց, սիրելի իշխան։ Նա՛ խլեց իմ դղյակի թանկագին զարդը... պատասխանեց սեպուհը դողացող ձայնով և սեղմելով իշխանի ձեռքը տարավ և բազմեցրեց նրան կրակարանի առաջ։ Նստի՛ր այստեղ, տաքացիր, ցուրտն անշուշտ նեղացրած կլինի քեզ. մեր Տավուշի ձորն առատ և բուքերով... չարունակեց իշխանը և յերկաթե ունելիքը վերցնելով սկսավ կրակը խառնել։

— Այո՛, ձեր լեռները մի փոքր սեղմեցին մեզ. այծենակաճ-ները հաղիվ էին մեզ սառելուց պահպանում:

— Ինչո՞ւ այս ձյուն-ձմրան հիշեցիր ինձ, տեր Մարզպե-տուն, հարցրեց սեպուհը, չկարողանալով կարծես համբերել, վոր հյուրասիրության համար սահմանված ժամերն անցնեն:

— Իսկ դո՞ւ ինչու յես այս ձյուն-ձմրան մեջ հեռանում քո յերկրից, հարցրեց իշխանը մեղմով ժպտալով:

— Ես իմ յերկիրը հանձնեցի ախխաղաց Թագավորին և փոխարենն ստացա Ճորոխի ափերը... դնում եմ իմ նոր կալված-ը ժառանգելու, պատասխանեց սեպուհը առանց ակնածության:

— Այդ յես դիտեի... Բայց ինչո՞ւ անպատճառ այս ձյուն-ձմրան մեջ:

— Մի որ ավելի մնալը մահ և ինձ համար... Այս դղյակի սենյակներում պարում են այժմ դժոխային ճիվաղներ, վորոնք որ ու գիշեր անհանգիստ են անում ինձ. յես վախենում, հեռա-նում եմ նրանցից...:

— Դժոխային ճիվաղնե՞ր... ի՞նչ կենդանիներ այդ, հարցրեց Մարզպետունին, տարակուսական մի հայացք ձգելով սեպուհի վրա:

— Այո՛, ճիվաղներ... դու պատահե՞լ ես, տեսե՞լ ես նրան:

— Ես... Վո՛չ... պատասխանեց իշխանը և նրան այնպես թվաց, թե սեպուհը խելագարված է:

— Բախտավոր մարդ ես ուրեմն, ում վոր ճիվաղները չեն հարձակում, նա անպայման բախտավոր է... այո՛, յես էլ մի որ այդպիսին էի, բայց իմ բախտը քո թագավորը կործանեց...

— Տե՛ր սեպուհ...

— Հա՛, ի՞նչ է անում այն թշվառականը. պարում է, այն-պես չէ՞. հանդիսանե՞ր է կատարում արքունյաց մեջ... մայրա-քաղաքն առնելու վրա յե մտածում... և չե հիշում յուր չարա-գործությունը...

— Տե՛ր սեպուհ, յես քաղցած եմ, հրամայի՛ր նախ կերակ-րել ինձ, ընդհատեց իշխանը դիտմամբ, կամենալով արգելել սե-պուհի զայրույթը:

Վերջինս մի վայրկյան մնաց լուռ և ապա իշխանին պատ-նալով՝ ասաց.

— Ների՛ր ինձ, տե՛ր Մարզպետունի. յես գրգռվեցա. այդ-պես չպետք է անեի, այո՛, բայց... ի՞նչ ասեմ, հիվանդ եմ,

աիբառ ու հոգիս ծածկված են վերքերով. իմաստությունն այլևս չի կառավարում իմ զղացումները...:

Այս ասելով՝ նա ծալի զարկեց և դռնապանը ներս մտավ:

— Աա՛ թող ճաշ բերեն մեզ, հրամայեց սեպուհը:

Ծառաները խնկույն ջուր բերին, վորով իշխանները լվացվեցան և սկսա պաշտեցին ճաշը, վոր կազմված եր մի քանի համադամ խորտիկներից:

Սեպուհը ճաշից յետո զրաղեցրեց հյուրին աննշան զրույցներով, վորպեսզի առիթ չունենա նորեն զրգռվելու և իշխանի խաղաղ տրամադրությունը խանգարելու:

Բայց հետևյալ առավոտ նա խնդրեց Մարզպետունուն՝ Հայտնել յուր առաքելության նպատակը, ըստ վորում ինքը յնքկար չպիտի մնար Տավուշում:

— Վատատնում լուր առանք, թե դու մխացել ես Գուդարաց և Տայոց իշխանների հետ, խոսել սկսավ իշխանը, և պայման դրել՝ հանձնել ամխաղաց Թաղավորին Տայք, Գուդարք և Ուտի նահանգները: Այդ լուրն անախորժ տպավորություն արավ արքունիքում, իսկ ինձ ուղղակի ոարսափեցրեց: Ճես յեկա խանգարելու այդ աղտավաճառ գործը:

— Դու ուշացել ես, նկատեց սեպուհը սառնությամբ:

— Ի՞նչպես թե ուշացել եմ:

— Այնպես: Մենք արդեն մեր գործն ավարտեցինք:

— Ի՞նչպես թե ավարտեցիք:

— Հիշածդ նահանգները հաստատուն դաշնագրերով հանձնեցինք Իեր Թագավորին, իսկ դրանց փոխարեն առացանք նրանից զանազան կալվածներ Ամիսաղիայում:

— Վա՞ր իրավունքով արիք դուք այդ բանը:

—Այն իրավունքով, վոր մեզ տրված եր հայոց Թագավորից:

— Նա ձեզ սոսկ վերակացուներ եր կարդել այդ նահանգների վրա:

— Բայց հետո մենք ապստամբեցանք, ոչնչեցինք այդ նահանգներին և ոչպատեհ Թագավորը չկարողացավ խլել այն մեղանից:

—Այսուամենայնիվ, այդ նահանգները ձեր ժառանգական առացվածները չեյին, դուք հափշտակեցիք այն տիրաննություն ամբ:

— Այո՛, յես չեմ ուրանում, հափշտակեցինք: Զլիներ Ցլիկ-Ամրամը, Գուդարքն ու Տայքը չեյին բաժանվիլ հայոց Թագավո-

բից: Ճես ինքս ստեղծեցի այդ բժշանումը. պատմությունը հայտնի չի քեզ. հայտնի չե նաև այն պատճառը, որը ստիպեց ինձ այդ անելու:

— Այո՛, հայտնի չե. բայց չի՞ որ դու արդեն քո վրեժը լուծեցիր. ղրկեցիր Թաղավորին յուր ստացվածներից, ստիպեցիր նրան փախուստ տալ քո յերեսից, Թաղչել Սևանում յերկար ամիսներ և ի վերջո՝ կռվի բռնվել Բեշիրի հետ և մահացու վերք ստանալ յուր կողերում. մի վերք, որ վաղ թե ուշ դերեզման պիտի տանե նրան: Ել ուրիշ ի՞նչ ես պահանջում նրանից. ինչո՞ւ քո մի ղրկանքի պատճառով հարյուրն ես կամենում փոխարինել: Ցավ վերջապես ի՞նչ հանցանք ունի այդ նահանջների հայ ժողովուրդը, ինչո՞ւ մատնում ես նրանց ոտար գաղանին:

— Տե՛ր Մարդպետունի, յերբ դու խոսում ես, ինձ թվում է թե հանցավոր եմ յես: Բայց յերբ սկսում եմ անցյալը մտաբերել կամ ներկան քննել, այն ժամանակ արածներս շատ չնչին են յերևում ինձ:

«Աչուռ Թաղավորը, այո՛, պատճառեց ինձ անփոխարինելի ղրկանք, անդառնալի կորուստ: Նա հափշտակեց իմ անդուզական դանճը, իմ աննման հարստությունը... Ինձ թվում եր, թե վրեժխնդրությունս չի հաղնել, յեթե Արարատի ահավոր ժայռերը նրա դլխին չկուտակեմ... Բայց իմ ապստամբությունն ու Ուտիքը դրավելը և ապա յուր փախուստը և Սևանում Թաղչիլը բավական հանդերձին վրեժխնդրությանս բոցը: Ճես սկսել եյի արդեն հաշտվել իմ դժբախտության հետ: «Ինչնամուս կործանեցի, այժմ Թող մոռանամ նրանց», մտածում եյի ինքս ինձ և պիտի մոռանայի... Վոչ, արդեն մոռացել եյի... Բայց ի՞նչ ասեմ, չեմ կարողանում հիշել, ամրապնդում եմ...

— Ի՞նչ, մի ուրիշ արդի՞լք պատահեց:

— Ո՛հ, իշխան, յեթե կարողանայի այլևս չխոսել...

— Բայց ուրիշ ի՞նչ պատահեց:

— Ուրիշ ի՞նչ. վոչինչ... վոչինչ չպատահեց...

Վերջին խոսքերն արտասանելիս սեղուհի դուչեր Թռավ. նա հեռացրեց Մարդպետունուց յուր հայացքը, որրի մեջ այդ վայրկենին հրդեհվում եր մի հնոց:

— Բայց ի՛նչ պատահեց, ասա՛, Թախանձեց իշխանը:

— Ի՞նչ պատահեց... Ճերկինքը կործանվեց, հասկանո՞ւմ ես, յերկինքը. բայց չե, այդ դու չես հասկանալ... Դժոխքը յուր բոլոր արհավիրքներով փոխադրվեց յերկիր վրա՝ ինձ նման

Թշվառականին տանջելու, չարչարելու, իմ սիրտն ու հոգին կեղքելու համար...:

— Հավատա՛ ինձ, տեր սեղուհ, չեմ կարողանում քեզ հասկանալ, ասաց Իշխանը յերկյուղալին:

— Չե՞ս հասկանում... Ուրեմն ավելի մեկին խոսեմ... Տանջվիմ դարձյալ մի քանի վայրկյան. հիշեմ զարհուրելի պատմությունը...: Այս ասելով սեղուհն ուղղվեցավ բաղմոցի վրա և թիկունքը հենարանին տալով՝ քաշեց համբիչը մի քանի անգամ, ապա շարունակեց.

— Զարմանալի դաղտնիքն իմանալուց յետո մի ժամանակ կատաղությունն յեկավ վրաս. հրամայեցի չղթաներ զարկել իմ Թշվառ ամուսնու վոտքերին և ձգել նրան այս դղյակի խավարչին բանտը... Ո՛, ինչո՞ւ առաված միայն դաղտնիքին և տվել պատառող ժանիքներ. մեթե մարդ արարածը չի՞ զերազանցում նրանց յուր անգթությամբ... Այո՛, վակել տվի նրան գնդանի մեջ. հրամայեցի չայցելել նրան. լուր չհաղորդել և վոչ խոկ լուր առնել իրանից... Այլ միայն տալ ամուր պարեները, վորպեսզի ապրե խավարի մեջ և տանջվի այդտեղ յուր հանցանքի համար:

«Այնուհետև յես հեռացա Տավուշից և սկսա իմ ապստամբության դործը անորինել, վորի սկիզբն ու վախճանը հայտնի յե քեզ արդեն:

«Երբ նորին վերադարձա Տավուշ՝ հրամայեցի հանել զընդանից Թշվառ ամուսնուս: Բեվ նա չղթայակապ, դողդողալով յեկավ և կանդնեց իմ առաջ... Ո՛, ինչո՞ւ այն վայրկենին իմ աչքերը չհուրացան. ի՞նչպես կարողացա յես տեսնել նրան այն դրության մեջ և տակավին համառել... Ներա դերուկ մարմինը նկատելի, զվարթ դեմքը դալկացել և վառվռուն աչքերը մարել եյին... Նա նայեց ինձ վրա, կամեցավ խոսել, բայց յես արդելեցի նրան... Ինչո՞ւ արդյոք աստուծո ձեռը այդ րոպեյին ինձ չհարվածեց. դուցե նա կամենում եր բողոքել, դուցե կամենում եր արդարանալ իմ առաջ և կամ բերել ապացույցներ, վորոնք յուր անմեղությունը պիտի հաստատեյին... Բայց յես անդութս ամեն բան մերժեցի: Նայեցի նրան դաղանային աչքերով և դուժեցի յուր սիրահար թագավորի ամոթահար պարտությունն ու անարդ վախճանը:

«Այնուհետև մյակ չնորհը, վոր յես կարողացա անել նրան,

այն եր, որ հրամայեցի հանել յերկաթե շղթաները և առանց կապանքի փակել նրան վերին դատիկոններից մինում:

Վերջին խոսքերի վրա Ամրամը խոր հառաչեց և գլուխը ձեռքերի մեջ առնելով՝ մնաց լուռ: Թվում եր, թե նա չի կարողանում այլևս սկսածը շարունակել, ուստի իշխանը խնդրեց նրան լռել՝ յերթե մի ծանր վիշտ արդելում եր իրան խոսել:

— Ընդհակառակը, վիշտն ոտիպում է ինձ խոսել, շարունակեց սեպուհը՝ գլուխը վեր առնելով: Վորքա՜ն ժամանակ է, որ յես չեմ խոսել. վորքա՜ն ժամանակ է, որ այս սրահները միայն իմ տխուր հառաչանքներն եյին լսում, միայն իմ դառն արտասուքները տեսնում... Ո՜, ծանր, դժվարին, կաբի անտանելի մի դրություն է այս. և սակայն նա վիճակված է մեզ, թշվառ մահկանացուներիս... Բայց ինձ թվում է, թե վըրտերն առհասարակ կմեղմանային, նրանք չեյին տանջիլ մեզ անողորմաբար, յերթե մեզ շրջապատողները, մեր պատկերներն ու հոդին կրող մարդիկ՝ կարողանային մի վայրկյան մեր սիրտը քննել և նրան կեղեքող վշտերը տեսնել...: Աստ՛ այժմ ինձ, տեր Մարդպետունի, ի՞նչպես կվարվիլիր, յերթե իմ վիճակում գտնվեյիր:

— Ի՞նչ վիճակում, որինակ:

— Յերթե հանկարծ իմանայիր, վոր սիրածդ անձը դավաճանել է քեզ:

— Յես վոչ մի մարդու կատարյալ չեմ համարում. ամեն մինը մեզանից ունի յուր թերությունը. այդ պատճառով էլ յես ներողամիտ եմ լինում միշտ դեպի ամեն մարդ, վոր հանցանք և դործում իմ դեմ:

— Բայց մի՞թե չկա հանցանք, վորին անկարելի լիներ ներել, վորի համար մարդկանց այունից կախեյին, կրակում սրեյին, ջրահեղձ անեյին...

— Ի՞նչպես չե, կա:

— Վո՞րն է այդ, ասա՛... Աստ՛, իշխան, կամենում եմ լսել...

— Հայրենիքի դեմ արած դավաճանությունը:

— Միայն ա՞յդ:

— Միայն այդ հանցանքն է, վորին չե կարելի ներել:

— Իսկ յերթե դավաճաներ քեզ քո սիրած... Բայց ի՛նչ եմ խոսում. մի՞թե կարող ես դու ինձ հասկանալ... Ահա՛, ինչու

համար եյի ասում, թե մեր վշտերը կմեղմանային՝ յեթե ընկերը մարդիկ կարողանային նրանց եյությունն ըմբռնել։

— Խոսի՛ր, տեր սեղուհ, յես կարող եմ հասկանալ։

— Կարո՞ղ ես... Դեհ, ասա՛. ի՞նչ կանեիր, յեթե հանկարծ իմանայիր, ներիր համարձակությանս, թե Գոհար Իշխանուհին դավաճանել է քեզ... Մի՛ դատիր քո այժմյան սրտով, դարձի՛ր դեպի քո անցյալը, յերիտասարդացի՛ր, հիշիր այն խանդն ու կրակը, վոր վառել, բորբոքել է քո սիրտը...։

— Զղիտեմ, այդ վիշտն անծանոթ է յեղել ինձ։

— Անծանո՞թ է յեղել... Ո՛, վորքա՜ն ուրեմն յերջանիկ ես դու. և ահա՛ այդ է պատճառը, վոր Մարդկանությաց տերը մաքուր խղճով, խաղաղ սրտով յուր տան չինության և հայրենյաց վաստքի համար է աշխատել, մեծ հայրենասերի հռչակ է ստացել. իսկ Ցլիկ–Ամրամը, վորի սիրտը պակաս չի բաբախել հայրենյաց սիրո համար, դարձել է մի մատնիչ, դավաճան... Այո՛. յեթե մի ժամ, մի վայրկյան դու կարողանայիր ըմբռնել այդ վշտի եյությունը, այն ժամանակ կհասկանայիր, թե ինչո՞ւ յես նրան աշտարակում վակեցի... նրան, իմ Աասլրամին, վորին սիրում եյի այնպես, ինչպես վոր չեյին կարող սիրել տասն անգամ տասը սրտեր միասին... Այո՛, վակեցի նրան աշտարակում, բայց յեթե դիտեիր, թե վորքա՜ն տանջվում եյի յես՝ տեսնելով նրան դուրկ արևի ջերմությունից, սիրո խնամքներից, մեն–մենակ յուր վշտերի հետ... Քանի՛–քանի՛ անգամ կամեցա գնալ, մոնել այն մենարանը, ուր հեծում եր թշվառ կինը. բռնել նրան նորեն իմ գիրկը, սեղմել իմ կրծքին և ասել՝ «Ասլրամ, ներում եմ քեզ...»։ Բայց, ի՞նչ մեղքս թաղցնեմ, այն միտքը, թե դուցե նա ավելի յերջանիկ և համարում իրան յուր սիրո համար տանջվելով, քան թե հմամարեր նորեն իմ գիրկը դառնալով, վտանգելու կասեցրին...։

«Եվ այսպես ամիսներ անցան։ Ներքին հայրտությունս թույլ չեր տալիս ինձ մոտենալ հանցավորին և ասել նրան լեզվով այն, ինչ վոր վաղուց ասել եյի սրտով։ Բայց հոգիս հետըզհետե ավելի յեր խռովվում։ Լինում եյին վայրկյաններ, յերբ տխրությունը ծանրանում եր վրաս, անճարությը խեղդում եր ինձ և յես լուռ, անխոս, առանց հառաչել խոկ կաբենալու, սկսում եյի դառնապես արտասվել...։

«Մի անգամ դիպվածով տեսա, վոր կերակուր տանող աղախինը վերադառնում եր աշտարակից՝ բերելով յուր հետ կերակ-

ըի խանը բոլորովին անձեռնամուխ։ Իմ հարցին, թե «ինչո՞ւ չի կերել տիկինը», աղախինը պատասխանեց, թե «Հաճեցավ ուտել և հրամայեց այլևս կերակուր չտանել իրան»։ Այս տարօրինակ պատվերը կասկածի մեջ ձգեց ինձ։ «Գլինի՛ թե կամենում է սովամահ անել իրան», մտածեցի ինքս ինձ և սկսա իմ խղճիկ տանջվել չարաչար։ Նորին հին մտքերը պաշարեցին ինձ. նորին վորոշեցի դնալ նրա մոտ, հանել Թչվառին աշտարակից, վերադարձնել իրան յուր տիկնությունը... Ճիվ սակայն հակառակ մտքեր ել ունեցա, ուստի և յերկար մնացի իմ խցում։ Անցան շատ ժամեր։ Դղյակի յկեղեցու ժամհարը, վոր դռների յեռանից «ալելուիա» հնչելով և կոշնակը զարկելով հրավիրում եր մարդկանց աղոթելու, սթափեցրեց ինձ Թմրությունից։ «Ինչո՞ւ համար եմ ուշանում. աղատենք վերջապես Թչվառին», մտածեցի ինքս ինձ և վեր թռա տեղից։ Ֆայց... Ո՛, ի՛նչ վայրկյան եր այն, ինչո՞ւ չանթահար չեղա յես...

— Ի՞նչ պատահեցավ, հարցրեց իշխանը վախենալով

— Ի՞նչ պատահեցավ... Ահա թե ինչ. շտապ-շտապ դիմեցի դեպի աշտարակը. հրամայեցի պահապանին յերկաթապատ դուռը բանալ. ներս մտա և ի՞նչ տեսա, ասումեմ իմ... Իմ կինը, իմ սիրած Ասպրամը կախված առաստաղից...

— Կախվա՞ծ... բացականչեց իշխանը սարսափելով։

— Այո՛, կախված... Նա հանել եր յերկաթե կանթեղը և նրա պարանը յուր վիզն անցուցել... Թեթև մարմինը տակավին ճոճում եր ոդի մեջ... Այդ տեսարանը զարհուրեցրեց ինձ, յերկինքը կարծես փլավ իմ դլխին և դժոխոց վոգիները պատեցին իմ շուրջը իրանց արհավիրքներով... Մի վայրկյան միայն տեսա զարհուրելի պատկերը. մանչացի ինչպես անապատի առյուծը, վոր դոռում և հսկայի հարվածն առնելուց. իմ ձայնը վրդոված դղյակի կամարներում. մարդիկ իրար անցան, խակ յես հափշտակեցի նրան, սեղմեցի կրծքիս և խելագարի նման դուրս փախա աշտարակից...Մի վայրկյան ինձ այնպես թվաց, թե նա կենդանի յե. թե շուռով սիրտ խոսե իմ ականջին. թե յուր լուսավոր աչքերը սիրտ բանա... Ավա՛ղ, այդ միայն ցնորք եր, Ասպրամը մեռել եր անհարբեր. նրա սիրուն դեմքը կապտել, դեմքի աչերը հանդել, շրթունքները փակվել և սիրտը դադարել եր տրոփելուց. յես այդ տեսա, դղայի, ձեռքերով շոշափեցի և նորին անշնչացած մարմինը դրկելով սկսա դառնապես նրա մահը վողբալ։

Ի՞նչ պատահեց ինձ այնուհետև, չգիտեմ. մի քանի որ չարունակ կես խելագարկ էի... Վերջին վայրկենին միայն, երբ գոհի դաշույը իջնելու էին վերեվման, նորեն իմ սիրտը ցնծաց, նորեն արտասվաց աղբյուրները բացվեցան և կես ակա իմ կորուստը լողրալ:

Այս խոսքերի վրա սեպուհը խոր հառաչեց և գլուխը կախելով լուց մի րոպե:

Իշխանը, որ քաշ ըմբռնում եր նրա վշտի ծանրությունը, կամեցավ մխիթարական խոսքեր ասել նրան, բայց դրանք հակառակ ազդեցություն արին Ամրամի վրա:

— Մի՛ խոսիր ինձ մխիթարությունից, տեր Մարդպետունի, բացականչեց նա կարծես վրդովված. դու չես կարող մխիթարել այն մարդուն, որը կորուսել է յուր կյանքից ավելի թանկագին դանձը, որի հոգին մեռել, սիրտն ընդարմացել և և որը ապրում է միայն տանջվելու համար...: Կամննո՞ւմ ես ինձ մխիթարել, ցո՛ւյց տուր, թե ո՞ր ճանապարհով կարող եմ կես ավելի լավ վրեժխնդիր լինել իմ թշնամուն և քո թագավորին... Այո՛, միայն վրեժխնդրությունը, անողոք, կործանիչ վրեժխնդրությունը կարող է ինձ մխիթարել... Իմ սիրտը կուրախանա, հոգիս կհրճվի, երբ տեսնեմ Աշոտին իմ ձեռքով պատրաստած դժոխքի մեջ տանջվելիս... Դու կարծեմ ասացիր, թե նա մեռնում է, բայց ասուած մի՛ արասցե. կես չեմ կամենում, որ նա մեռնի: Մի՞թե հավիտենականության մեջ կարո՞ղ են այնպիսի տանջանքներ տալ նրան, որոնցիսին կես եմ ցանկանում: Զնի՛, թո՛ղ նա ապրի, մինչև որ Ճլնիկ-Ամրամը յուր դժոխքը պատրաստե...:

— Տե՛ր սեպուհ, դու զրդռվում ես... Բայց թո՛ւլ տուր հարցնել: Ընդ որ մի ժամ առաջ ասացիր, թե Թագավորի փոխուստից կես հաշտվել եյիր քո դժբախտության հետ, արդ, ինչո՞ւ նորեն բորբոքում ես առելությունդ:

— Ասացի, այո՛, հաշտվել եյի իմ դժբախտության հետ. բայց չի՞ որ այդ հաշտության հաջորդից մի ուրիշ, առավել ասկալի դժբախտություն. չի՞ որ Թշվառ ամուսինս կախվեցավ...

— Ճիվ ուրեմն դրա՞ համար մեր հայրենի նահանգները հանձնեցիր Բերին:

— Այո՛, դրա համար: Ճես չեյի կարող ապրել այլևս Տարվուշում. այս դղյակին ինձ համար դառնել և դժոխք: Սրա պահ-

ներում ճիվաղներ են ապրում. որա ամեն մի անկյունը հիշեցնում է ինձ Աապրամին. կամ այն մենաբանից, ուր Թշվառ կինը կախվեցավ, դիվական ձայները են հնչում իմ ականջին... Ո՛, սոսկալի մի վայր է այս. այդ է ահա՛ պատճառը վոր յես վախչում եմ այստեղից:

— Տեր սեպուհ, դու կարող եյիր հեռանալ Տավուշից. ինչ հարկ կար բերին հանձնել քո նահանգը:

— Վորպեսզի ինձանից յետո Աշոտը չտիրեր նրան:

— Ցավ մ'ինչե կարծում ես, թե Բերը կկարողանա ժառանգել այս յերկիրը:

— Ցնեթե չի կարողանա, դոնե կպատերազմե Աշոտի հետ, կխանգարե նրա հանգստությունը, կավերե նրա յերկիրը... Իսկ ինձ այդ է հարկավոր:

Իշխանը տանջելով վոր մյայն կիրքն է խոսում սեպուհի մեջ և վոր ինքը խրատներով չկարող չի նրա ապստամբ սիրտը նվաճել, ղրկաց, վոր յեկել է Տավուշ, ուսուի և դադարեց նոր հարցեր ու դիտողություններ անելուց:

Մի յերկու որից յետո Ցլիկ-Ամրամը յուր առացվածներով ու հավատարիմներով հեռացավ Տավուշից, թողնելով յուր սերած կալվածները ավելացաց Թադավորին, վորի հավատարմատարները հասել եյին արդեն Տավուշ:

Հեռացավ նաև Մարզպետունի իշխանը: Բայց նա չգնաց Վոստան, այլ դիմեց Գուգարաց և Տայոց իշխաններին, վորպեսզի կարողանա յետ կանգնեցնել նրանց Բեր Թադավորին տված խոստումներից:

Բայց նախքան Տավուշից հեռանալը՝ իշխանն արքային դրեց մի նամակ, վորի մեջ բացատրեց սեպուհի նոր դավաճանության պատճառը: Ցնել նկարագրելով հարվածի այն ծանրությունը, վոր ճնշում եր ապստամբ սեպուհին, արդարացրեց մինչև անգամ նրան, առարկելով, թե ամենքին չե տված անձնականը ընդհանուրին զոհելու քաջությունը, և թե սեպուհը հայ և հայրենասեր լինելուց առաջ՝ մարդ եր, մսից ու արյունից կազմված, հետևապես չեր կարող տանել բարեկամի կողմից իրան հասած անխիղճ զրկանքը...:

Իշխանը սեպուհի խոսացների և մանավանդ նրա տխուր հրաժեշտի աղեցության տակ լինելով՝ յուր նամակը դրեց այնպիսի վոգվով, վոր ուղղակի դատապարտում եր արքային. նա չկարողացավ դուշակել, թե այդ դրությունը ծանր աղդե-

ցություն կանե հիվանդ Թագավորի վրա, վոր առանց այն ել բավական շատ ել տանջվել ճակատագրի հարվածներից։

Սակայն մի յերկու որից, յերբ սուրհանդակը հեռացել է, դուցե, արդեն Շերակ ել մտել, նա մտաբերեց այդ նամակը, հիշեց յուր զրածները և սաստիկ ղղջացավ։ Բայց արդեն ուշ ել։ Նամակն այլևս անկարելի յեր վերադարձնել։

Մարզպետուհին յուր նամակում խնդրել ել Թագավորին՝ ուղարկել շուտով Ուտիք Վահրամ սեպուհին մի քանի զորավոր գնդերով, վորպեսզի մինչև ափխազների գալը լրանք զրավելին Ուտյաց, Գուղարաց և Տայոց աշխարհները։

Զանցավ մի տասն որ և ահա՛ սեպուհը յուր Արարատյան գնդերով մտավ Ուտիք և առանց Մարզպետուհու հանդգնություն ասասելու, առաջ վարեց յուր զորքերը և այդ նահանգի բոլոր ամրությունները զրավեց, հալածելով ամեն տեղ ափխազաց հավատարմատարներին։ Ցեվ վորովհետև ժողովուրդը հակառակ ել ոտարին հնազանդելու և նրան հարկ տալու անխորհուրդ մաքին, ուստի և ամեն տեղ արքայական զորքերին աջակցեց։ Նույն հաջողությունները ունեցավ Վահրամը նաև Գուղարքում։

Ապա խոտորելով դեպի արևմտյան հարավ՝ նա մտավ Տայոց աշխարհը, ուր հանդիպեց Գևորգ Մարզպետունուն։ Վերջինս հայտնեց նրան, թե Գուղարաց և Տայոց վերակացու իշխաններն իրանց հավատարիմներով հեռացել են արդեն Ափխազիա և թե Տայոց ամրությունները, իրրև ավելի մոտ այդ յերկրին, բռնված են արդեն ափխազաց զորքերով։

Բայց վորովհետև ճմրան որներ եյին և Տայոց յերկիրը զրավելու համար պետք և նրանք կռվեյին շատ բերդերի հետ, իսկ այդ առթիվ հարկավոր կլիներ թե նոր զորք բերել Վոստանից և թե ճմեռվա խոտության դեմ զրծել, այդ պատճառով իշխանն ու Վահրամը խորհուրդ արին բանակ դնել Փանասկերտի մոտերքը, համաձայն ճորում, վոր Գուղարաց ու Տայոց սահմանն եր և սպասել այդտեղ մինչև գարնան որերը կբացվելեյին։

Ցեվ վորովհետև Դվինո առումն ու հայրապետից հալածելը մահու և կյանքի խնդիր եր դարձած Մարզպետունու համար, ուստի նա չեր կամենում հյուսիսային նահանգները թողնել մի ուրիշ թշնամու ձեռքը, ըստ վորում վերջինս կարող եր ամեն ժամանակ հարձակվել ներքին դավառների վրա և խանգարել լրանց այնպիսի մի ժամանակ, յերբ լրանք զրաղված կլինեյին հաղարացիների հետ կռվելով։ Այդ պատճառով, ահա՛, վորքան

եւ Տայոց աշխարհի ճանապարհը սաստիկ եւ այդտեղ բանակելը դժվարին, այսուամենայնիվ նա վորոշեց չհետանալ այդ նահանգից, մինչեւ վոր այն ամբողջապես ոտարի ձեռքից չազատե։

Այս նպատակին ունենալով աչքի առաջ, իշխանն անդորձ չնստեց նաև ձմեռվան ամիսներում։ Նա դաշտնի բանակցություններ սկսավ յերկրի վոտքերիկ իշխանների հետ եւ ամեն մեկից դրած դրավ նրանց բարեկամությունը վաստակելու։ Եւ վորովհետեւ դրանք դեռ հավատարիմ էլին դահին, ուստի սիրով ընդունեցին այն ամեն առաջարկությունները, վոր արավ իշխանը՝ ապիրաղինների դեմ դործելու նկատմամբ։

Վերջապես դարունը հասավ, ոդերը ջերմացան եւ հալոցի սկսվելով՝ ճանապարհները մաքրվեցան։ Մարզպետունի իշխանը, յուր նվիրակների հետ միասին, զորքերի գլուխն անցնելով՝ դիմեց ամենից առաջ Փանասակերտի վրա։ Ամրոցի վերակացուն, համաձայն իշխանի հետ դրած պայմանին, բերդն ու ավանը հանձնեց նրա ձեռը։

Իշխանը վերակացուին հաստատեց նորեն յուր պաշտոնի մեջ և թողնելով նրա մոտ պահակների մի խումբ՝ ինքը յուր բանակով հառաջացավ դեպի Ուխտիք, ուր դտնվում էլին ապխազաց զորքերը։

Եւ վորովհետեւ Ուխտիքում անխուսափելի յեր հակառակորդների ընդհարումը, ուստի իշխանը կանխավ սուրհանդակի ղրկեց Թաղավորին, խնդրելով նրան՝ ոդնական զորք հասցնել իրան Աբարատյան Բասենի վրայով։ Մարզպետունին հաշվում եր, վոր յեթե նոր դնդերը Բասենից մտնելին Տայք, ինքը նրանց կհանդիպեր Ձորսթի ակունքների մոտ, վորտեղից և միասին կառաջանայլին դեպի Ուխտիք։

Բայց հաղիվ նա յուր սուրհանդակը ճամբեց և ահա՛ վոտանից հասավ մի բանբեր, վոր Աբաս մեծ իշխանի կողմից հանձնեց իրան մի նամակ։

Կարդալով արքայական դրուեթյունը, իշխանն այլայլվեց։ Աբասը հայտնում եր, վոր Թաղավորն անհուսալի հիվանդ է, ուստի խնդրում եր իրան՝ չտապել դեպի Վոստան։

— Մի չար վոդի հալածում է մեզ, ասաց իշխանը յուր նիզակակիցն։ Դու մնա՛ այստեղ քո դնդերով և պահպանի՛ր դրաված նահանգների սահմանը, մինչեւ վոր յես յերթամ Վոստան՝ տեսնելու թե ուրիշ ի՞նչ չարիքների դեմ պիտի պատրաստվենք մաքառելու։

— Գնա՛, ասաց սեղուհը. յես յետ կնահանջեմ դեպի փանահկերտ՝ բանակը հարձակումից ապահովելու համար: Բայց հենց վոր կարիք ղռաս իմ ուղնուբյան, սուրհանդակ ղրկիր ինձ խնդրելն և յես անմիջապես կվերնեմ դեպի Շիրակ:

Մարզպետունին շնորհակալ եղավ սեղուհին յուր պատրաստակամության համար և հրաժեշտ տալով նրան՝ մի վաշտ թիկնապահներով ուղևկցությամբ ինքավ դեպի Բասեն և այնտեղից Շիրակ:

Ներք Մարզպետունին մտավ Ներքաղաքվորս, Թաղավորն արդեն մերձ ի մահ եր: Այսուամենայնիվ նա ուրախացավ հավատարիմ իշխանի դարձուստը լսելով:

— Կանչեցեք նրան այստեղ, հրամայեց Թաղավորը և իշխանն խնդրին ներկայացավ:

— Միակ ցանկությունս եր՝ տեսնել քեզ վերջին անգամ, ասաց Թաղավորը յուր դողդողուն ձեռքը պարզելով դեպի նրան. ապրի, մոտեցի՛ր ինձ, իշխան, և ասա, վոր ներում ես ինձ:

— Վո՞ր հանցանքիդ համար, տեր, բացականչեց իշխանը և հաղիված ծնկան բերկալ արքայի ձեռքը համբուրելու:

— Հանցանքներս շատ են, նրանց թվել չեմ կարող... այսքանը միայն կասեմ, վոր կրածդ նեղությանց պատճառը յես եմ... Ների՛ր ինձ. ների՛ր քո Թաղավորին...

— Տեր արքա, մենք մաքառում ենք արտաքին չարիքների դեմ, նրանք հասնում են մեզ հեռվից...:

— Վո՛չ. այդ չարիքների հեղինակն ել յես եմ... Տավուշից գրած քո նամակը ճշմարտության մի քարող եր... Շնորհակալ եմ. նա աղատության դուռ բացավ ինձ համար... Ցնթե իմանաս, թե վորչա՛փ ուրախ եմ կեղեքող տանջանքներից աղատվելու համար...:

Իշխանը հասկացավ արքայի ակնարկության խորհուրդը և թեպետև համոզված, վոր նա ուրախ և մեռնելու համար, այսուամենայնիվ սրտի խորքից վշտացավ, վոր յուր նամակն և տագնապն չտապեցրել:

— Դո՛ւ պիտի ներես ինձ, տեր, խոսեց իշխանը վշտաձին. յես իմ անդրդուշ քայլով վտանգել եմ քո քաջառողջությունը:

— Ինչո՛վ. իմ դահին արած քո մեծամեծ ծառայությանց պատճառ և կաղմում այդ քայլը, վորը դու «անզգուշ» ես անվանում... Աչուռ-Ցերիաթը հանցավոր Հովնան և. հայրենիքի ծովը նրա՛ պատճառով և ալեկոծվում... Մարզպետունու ջանքերը

չեն կարող խաղաղեցնել նրան, քանի հանցավորը պտնվում է փրկության նավի վրա... Հանեցնք, ձգեցնք ինձ ծովը և նավը յուր նավաստներով վտանգից կազատվի...:

Թագավորը մի վայրկյան լռեց և ապա աչքերը բանալով նայեց յուր շուրջը: Նա տեսավ սնարի մոտ՝ վշտահար Թագուհուն և նրա հանդեպ՝ Աբաս յեղբորը:

— Ահա՛ յես հեռանում եմ, շարունակեց նա ավելի նվաղ ձայնով. շուտով պիտի խորասուզվիմ անհայտության ծովի մեջ... ձեզ և մնում կյանքը յուր չարիքներով և հրապույրներով... աշխատեցեք վայելել նրան իմաստնաբար և չնմանիլ ինձ, չվատնել այն անոգուտ...: Ինձ եմ թողնում իմ զահը, սիրեցյալ Աբաս, քե՛զ եմ թողնում և հայրենիքը ցավերով ծանրաբեռնված...: Ժառանգիր առաջինը և խնամող յեղիր վերջնույն... Դու բախտավոր ես ընտանյաց մեջ, բախտավոր կլինես և Թագավորության մեջ... դի ով որինավոր հայր և վորդվոց, նա կլինի և որինավոր հայր յուր հպատակաց...:

— Իսկ քեզ, իմ ապաբախտ Թագուհի, Թողնում եմ միայն վիշտ, հնծություն և դառն հիշատակներ... կցանկանայի, վոր մոռանայիր ինձ. չհիշեյիր իմ անունն ու գործերը... բայց ավա՛ղ, այդ անհնարին է քեզ... դոնե չանիծեյի՛ր ինձ, չանիծեյիր քո Թշվառ ամուսնուն ու Թագավորին... դի գնհհնում կրկնապատիկ պիտի տանջվիմ, յեթե քո անեծքը հասնե հավիտենական աթոռին...:

Մի յերկու որից Թագավորը վախճանվեց: Արքայի բժիշկը հաստատում եր, թե նա մեռավ յուր հին վերքի ցավից: Այդպես եվ հավատում եր ժողովուրդը: Բայց արքունիքում պնդում եյին, թե նրա վախճանն արագացրեց Ասպրամ իշխանուհու ինքնասպանությունը: Թշվառ Թագավորը չեր կարողացել տանել խղճի անողոք խայթերին. մեռած զոհի վոգին և կենդանի Թագուհու արտասուքը հալածում եյին նրան անվերջ և ահա՛ նա վորոշեց մեռնել... Բայց վոչ վոք չիմացավ, թե վո՞ր հրեշտակի ձեռքը մահ բերավ նրան...:

ՀԻՆ ԹԶՆԱՄԻՆ ՑԵՎ ՆՈՐ ԹՇՆԱՎԱՐԸ

Արքայի մահվան լուրը արագությամբ տարածվեց ամեն տեղ: Հայոց իշխաններն ու նախարարազունները, յուրաքանչյուրը յուր պահանջը դնելով, փութացին Ներազդավոս՝ նորիկա լինելու թագավորի հուղարկավորության:

Այստեղ էին Բագարանի տեր Աշոտ բռնավորը, Վասպուրականի արքայորդին՝ Աշոտ-Դերենիկը, Տուրուբերանի իշխանը, Աղձնյաց տերը, Մոկաց նահապետը, Սյունյաց իշխանները, Աղվանից սեպուհը, Գարդմանա տեր Դավիթը և ուրիշ շատ մանր իշխաններ ու կողմնապահներ: Ներկա չէր միայն Վահրամ սեպուհը, վորովհետև նա հակում էր հյուսիսային նահանգներին:

Վասպուրականի արքայորդու հետ միասին յեկել էր նաև Թեոդորոս կաթուղիկոսը: (Այդ ժամանակ Սահակյանոսը վանճանած լինելով՝ նրա տեղ Աղթամարում նստում էր վերջինս):

Թագավորի մարմինը, վոր պետք է ամփոփվելիր Բագրատունյաց պապական քնարանում, այն է՝ Բագարանում, դուրս բերին Ներազդավորսից հանդիսավոր չքեղությամբ: Արքայական դագաղը, վոր չինված էր անփուտ փայտից, զարդարել էին վոսկով ու արծաթով: Նա դրված էր վոսկեզոծ պատգարակի վրա, վոր կրում էին վեց ասլետակ ջորիները: Դիակիրը ծածկված էր վոսկեճամուկ դիպակներով և վոսկեթել վառերով, վորոնք արևի առաջ վայրկում էին ինչպես մի վոսկեղեն զանգված: Դագաղի առաջից գնում էր կաթուղիկոսը՝ շրջապատված գահերից յեպիսկոպոսներով, վարդապետներով և յերդեցիկ քահանաներով ու դպրաց խմբերով: Դագաղին հետևում էին՝ արքայորդյոր Աբասը, նստած սևասքող նժույգի վրա և շրջապատված զրահիկներով, ապա Սահակյանույշ թագուհին և Գուրգեն-

դուխտ տիկինը, նստած սպասարդ պատդարակի մեջ և շրջապատված պալատական տիկնանց ու իշխանուհիների խմբով։ Սրանց հետևում եկին Աշոտ բռնավորը, Աշոտ–Գևորգիկը և մյուս իշխանները՝ ավազակության կարգով։ Ապա լացող դուստրների խումբը և շնորհավոր յերաժիշտները։

Դրանցից հետո բերում եկին արքայական վոսկեեռար նժույգները՝ ծածկված սպասվոր շղարշներով։ Ամենից վերջը գալիս եկին արքայական զորախմբերը, վորոնք եկին՝ Արարատյան, Դրանիկ և Սեպուհ կոչված գնդերը, Բասենյան վաշտը, Վոստանիկների խումբը, Աղատաց դուստրատակը, Վանանդացոց հեծելազորը և ուրիշ պատասխանով վաշտեր, վորոնց բոլորին գլուխ եկին անցած Մարզպետունի Գևորգ իշխանը և յուր վորդին՝ Գուրգ։ Աբասն այս պաշտոնը հանձնել եր նրանց իրրև պետության միակ հավատարիմներին. ըստ վորում արքայի մահվան ժամանակ ավելի կարիք կար զորքը զգուշաբար կառավարելու։

Զորքին հետևում եր ժողովրդյան ահագին բազմություն, վոր և գնալով ստվարանում եր, վորովհետև ճանապարհի վրա գտնվող ավաններից ու գյուղերից հետզհետե յելնում և միանում եկին նրանց ուրիշ շատ խմբեր։ Այսպիսով հուղարկավորության թափորը հասավ Բագարան՝ մի քանի հազար հոգուց կազմված բազմության ուղեկցությամբ։

Արքայի մարմինն ամփոփեցին Տապանատան ս. Կաթողիկե կոչված յեկեղեցում, ուր նրանից առաջ ամփոփված եկին յուր նահատակ հայր Սմբատը և նահատակ յեղբայր Մուշեղը։

Թագավորի գերեզմանի վրա մեծ կոծ արավ Թագուհին՝ յուր հետևորդ տիկնանց և դուստրական խմբի մասնակցությամբ։ Սրտագին լացին նրա վրա նաև Աբաս յեղբայրը և մյուս աբքայազունք։

Բայց ամենից ավելի դառնապես արտասվեց Գևորգ Մարզպետունին, վոր մանկությունից ի վեր նրա մտերիմն եր յեղած. ապրել ու դրծել եր միասին, մանկության որերում՝ իրրև խաղընկեր, պատանեկության միջոցին՝ իրրև մարզակից, յերիտասարդ ժամանակ՝ իրրև համհարզ և հոր գահը ժառանգելուց յետ՝ իրրև միակ հավատարիմ պինակից։ Ցերկար տարիներ նա աջակցել եր նրան, պատերազմել եր նրա հետ միասին, հաղթել և հաղթվել միասին, մասնակցել նրա ուրախության ու տխրության, ծիծաղել և լացել նրա հետ... Նա հիշում եր այդ վայրկենին բոլոր անցյալը. Աշոտ–Ցերկաթի բազմահոգ ու ալեծուփ

թագավորությունը... Հիշում եր այն որերը, յերբ ինքը հիանում, հափշտակվում եր նրա դյուցազնական քաջագործությունները. հիշում եր նրա ձայնի վորոտը՝ պատերազմի դաշտում, նրա խիզախ հարձակումները թշնամիների վրա, նրա սրի հարվածները՝ հակառակորդի դեմ... Հիշում եր, թե ինչպե՞ս ժըղտում եր նրա բախտը, թե ինչպե՞ս ինքը հրճվում եր յուր սըրտում, դուշահելով, թե ստալած նրան և վիճակել հայրենիքի փրկիչ լիններու, ստորի նախասինքը բառնալու և հայրենական դահի նախկին փառքը վերադարձնելու դերագույն կոչումը... Բայց ավա՛ղ, խառնվածքի մի թուլություն նրա դյուցազնական մեծությունը թունավորեց... սիրո փանաքի վորդը հսկայական հրաշակերտը տապալեց... Այժմ, նա անշնչացած պառկած և սառ հողի տակ. նրա սիրան այլևս չի զդում վոչինչ, սերն ու արտասուքը չեն չարժում նրան... Ցավ սակայն նա յուր հետ գերեզման տարավ մեծամեծ հույսեր, ակնկալություններ... Լայնատարած մի աշխարհ, բազմամարդ մի ընտանիք, վորի անդամները միլիոններ են կազմում, զրկվեցան նրա շնորհիվ բազմադան բարիքներից. նրանք այժմ դտնվում են անապահով դրության, ծանր եղնաժամի մեջ. նրան սպառնում են թե՛ թըշնամիները և թե՛ փառամոլ հարազատները. բայց այս ամենն ուրիշ կերպ կլիներ, յեթե միակ մարդը, վորի ձեռքն եր հանձնված հայրենիքի բախտը, չնմաներ մյուս մահկանացուներին, չխոնարհեր թունավոր զգացմունքների առաջ և կամ զոհեր նրանց առավել մեծադույն, առավել սրբազան մի զգացման — հայրենասիրության:

Այս մտածություններն եյին պաշարել իշխանին այն տխուր ժամին, յերբ արքայի մարմինն իջեցրին գերեզման և ծածկեցին հողով, և այս մտածություններն եյին, վորոնք և դառնապես արտասվել տվին նրան:

Բայց հենց այդ միջոցին մի ուրիշ սիրտ՝ ուրիշ զգացմունքներով եր տուրբված. արքայի վախճանը նրան ուրիշ մտքեր եր թելադրում. այն հողը, վոր ծածկեց մեռնող թագավորին, նա կարծում եր, թե նոր կյանք ու նոր փառք պիտի ծնե յուր համար... և դա Աշոտ բռնավորն եր, վորի սրտում դեռ չեր մարել մխահեծան տեր լիններու տենչը, բոլոր Հայաստանին թագավորելու փափագը...: Տեսնելով այն աշխարհախումբ բազմությունը, վոր լցվել եր Բագարանի ներսն ու դուրսը, նա հարմար միջոց համարեց նախ՝ զորքին ու ժողովրդին յուր կարո-

զուրկ չէին ու առատաձեռնությունը ցույց տալու և ընդունելու իրենց սիրտը զրավելու և յերկրորդ՝ սեր որերն անցնելուց յետո՝ յուր գահակալական հարցը հրապարակ հաներու, վորովհետև հանդամանքները շատ նպաստավոր էին, այսինքն զորքը հեռու յեր աթոռանիստ քաղաքից, իսկ թագաժառանգն ու իշխանները գտնվում էին Բազարանում: Այդպիսով, առանց դիմադրության, նա կարող եր թե՛ արքունիքն ու նրա գանձերը գրավել և թե՛ Աբասին ու նրա իշխաններին ձերբակալել:

Այս նպատակով ահա՛ նա մի քանի որ չարունակ առատապես հյուրասիրեց վոչ միայն արքայազն ու իշխանաղն հյուրերին, այլև արքայական զորքերին և բոլոր այն աշխարհախումբ բազմությանը, վոր հեռավոր թե՛ մոտակա տեղերից ժողովվել, լցվել եր Բազարան: Բացի այդ նա մեծաքանակ վողորմություն բաշխեց կարոտյալներին, իբր թե հանդուցյալ թագավորի հոգվո փրկության համար: Այս ամենը, արդարև, փոխեցին ժողովըրդի ու զորքի կարծիքը «բռնավորի» նկատմամբ, իսկ իշխաններից մի քանիսը, մինչև անգամ, հավատան նրա մեծանձնության վրա:

Ձեռնելով այդ հաջողությունը, «բռնավորը» սիրտ առավ «դլխավոր նպատակին» վերաբերյալ մյուս պատրաստությունները տեսնելու:— Ամենից առաջ նա մարդ ուղարկեց Նըսրի մոտ և հայտնելով նրան յուր դիտավորությունը, խնդրեց ոդնել իրան՝ յեթե հարկը պահանջե: Նըսրը, վորովհետև հենց այդպիսի առիթ եր վորոնում յուր հին վրեժը լուծելու համար, սիրով ընդունեց «բռնավորի» խնդիրը:

Այնուհետև վերջինս հրաման արավ Ճերասխաճորում գտնվող յուր զորքին տակավ առ տակավ առաջանալ դեպի Ճերազավորս, առանց սակայն կասկածի առիթ տալու հետաքրքիր հետամուտներին:

Ապա նա մտածեց Աբասին ու նրա հավատարիմներին ձերբակալելու: Բայց վորպեսզի այդ անելուց յետո պետական զորքը հնազանդվի իրան, նա մեծ դումար տվավ յուր մտերիմների ձեռքը, վորպեսզի նրանք զորքի դլխավորներին կաշառեն:

Այս ամենը կարգադրելուց յետո՝ նա սկսավ խոսիլ չեզոք իշխանների հետ և նրանց կարծիքն իմանալ ապագա թագավորի վերաբերմամբ: «Բռնավորը» հույս ուներ գտնել նրանց մեջ զժդհոհներ, վորոնք սիրով կմիանային յուր հետ և գործը դրա-

նով կհեչատանար։ Բայց նա հիասթափվեցավ, երբ իշխաններըը մխաթեան մատնացույց արին Արասի վրա։

— Միակ օրինական թագավորը նա չէ և ժողովուրդը նրան և ոպասում, ասացին նրանք և փափագ հայտնեցին որ առաջ անանել իշխանաց իշխանին յուր յեղբոր գահի վրա։

Կաթուղիկոսը մինչև անգամ խորհուրդ տվավ նրանց՝ չատպել, թագավոր պսակել Արասին, քանի դեռ Թշնամիներից վտանգ չեր հասել գահին։

Այս ամենն, ի հարկե, անհաճո տպավորութիւն արին «երրորդ նավորի» վրա. բայց նա յուր դժդոհութիւնը ծածկեց, մինչև վոր իշխանների մեծ մասը հեռացավ Բագարանից։

Սպո առաջին որերն անցնելուց յետ՝ այդտեղ մնացել էին մխայն թագուհին յուր պալատական տիկնանցով, Արասը՝ յուր զրանիկներով, Գարդմանա տեր Դավիթը և Մարզպետունի իշխանը՝ Գոռ վորդու հետ միասին։

Վերջինս, սակայն, զանվում եր քաղաքից դուրս, վորովհետև հսկում եր զորքերի վրա, վորոնք բանակած էին Ախուրյանի մոտ։

Բայց Գևորգ իշխանի համար ծանր էին անցնում որերը, վորովհետև կատարելու շատ գործեր ուներ, ուստի անհամբերութիւնով սպասում եր այն որին, յերբ Արասը սպահան լինելով՝ հիվերպատասար Ներսեղաձորս և յեղբոր գահը ժառանգելու մասին հարկ յեղածը կկարգադրեր։ Մարզպետունին մտածում եր կաթուղիկոսի նման, այսինքն, թե քանի թշնամիները խռովութիւններ չեն հարուցել, պետք եր շտապել թագավոր պսակել Արասին, վորովհետև գահի թափուր ժամանակ ամեն մի գործաճան հրապարակ և հանում յուր հին հաշիվները և հեչտութիւնով կուսակիցներ վորոնելով՝ խռովում և յերկրի խաղաղութիւնը։ Այս մասին, ի հարկե, նա խոսել եր արդեն հավատարիմ իշխանների հետ և կարևոր դեպքում ձեռնավութիւն պիտի ստանար նրանցից։

Բայց վորքա՜ն մեծ յեղավ նրա զարմանքն ու յերկյուղը, յերբ Սյունյաց Սմբատ իշխանը լուր ուղարկեց իրան, թե բազարանից յելնելուց յետ՝ նա հանդիպել եր Աշոտ բռնավորի մի քանի վաշտերին, վորոնք Ներսեխաճորից առաջանում էին դեպի Ներսղաձոր։ Իշխանն ավելացնում եր, թե ինքը վտանգավոր մի նպատակ և նկատում զորքերի այս չարժման մեջ և հետե-

վաղեմ խորհուրդ է տալիս Մարզպետունուն՝ զգուշության մի-ջոցներ ձեռք առնել դալիք վտանգների առաջն առնելու համար:

Իշխանն այդ լուրն առավ բանակում. նա տակավին վրան-ման մեջ էր, երբ յուր հավատարիմ Եզնիկը մոտենալով հայտ-նեց մի ուրիշ նորություն:

— Եզրկու որ է, ասաց նա, ինչ մի քանի բազարանցիք ձրի պաշար են բաժանում մեր զորքին, ասելով, թե Բագարանի շըր-ջանում գտնվող ամեն հայ ընտիր կարող է ձրիաբար ոգովել ապստամբի համբարանոցից: Բացի դրանից՝ նրանք շարունակ ապստամբի գյուղատեղ են անում, ասելով, թե նա առատ թո-շակ է տալիս զորքին և թե նրա տասնապետները ավելի հա-րուստ են մեր հարյուրապետներից:

Այս ամենը լսելով՝ իշխանն այլայլվեցավ: Նա կանչեց խո-հուրդն գոռալին և հայտնելով նրան այս նորությունները, ասաց.

— Բոլոր նշաններից յերևում է, վոր «բռնավորը» պատ-րաստվում է յուր հին խաղը խաղալու: Ես չեմ կարծում, թե նա այնքան սաստ կլինի, վոր կոգտվի նույնիսկ սգո որերից: Այժմ յես գնում եմ քաղաք և պիտի ստիպեմ Թագուհուն և ար-քայեղբորը թողնել իսկույն Բագարանը, վորքան էլ վոր դա ընդդեմ լինի ընդունված սովորության: Թո՛ղ նրանք իրանց տունը պահեն արքունիքում: Իսկ դու զգո՛ւյշ կաց և ուշադրու-թյամբ հսկիր թե՛ մեր զորքերին և թե՛ քաղաքի յելումուտքին: Ինձ թվում է, թե անախորժ դեպքերի պիտի հանդիպենք:

Այս ասելով իշխանը յուր նժույգը հեծավ և սպարշավ դեպի «բռնավորի» ապարանքը դիմեց:

Եզնիկը հետևեց նրան:

Մարզպետունին հասավ ապարանքին հենց այն ժամանակ, յերբ «բռնավորն» ու Աբասը պատրաստվում եյին բարձրանալ դեպի մինջնաբերդը, իրր թե Աշոտի նորահաստույց դղյակը դի-տելու: Ապարանքի առաջ կանգնած եր մի պահակախումբ, վոր սպասում եր յուր իշխանապետի հրամանին:

— Ո՞ւր եք դիմում, տե՛ր, հարցրեց իշխանը արքայեղբորը, նայելով նրա վրա խորհրդավոր հայացքով:

— Հորեղբայրս կամենում է իմ թախիծը փարատել. նա ա-ռաջարկեց ինձ բարձրանալ մինջնաբերդ՝ յուր նորահաստույց դղյակը դիտելու, պատասխանեց Աբասը միամտաբար:

— Դու էլ յերթ կամենում ես, ընկերացիր մեզ, հարևց «բռնավորը» քաղցրությամբ. շատ պիտի ուրախանամ, յերթ

Մարզպետունի իշխանը հավանեց իմ ճարտարապետական ճաշակին:

— Դու մոռացել ես, տեր, բայց ես տեսել եմ քո ձեռագիրը դեռ այն ժամանակ, երբ Հովհաննես կաթուղիկոսը ապաստանած էր նրան, պատասխանեց իշխանը սառնությամբ:

— Հոգ չէ, ընկերացի՛ր մեզ. լեզանակը ջերմ է և հաճելի, պնդեց Աշոտը:

— Մենավոր տեր, քո դղյակը դեղեցիկ է և ամուր. իշխանաց-իշխանն անշուշտ կհավանեն նրան, բայց ցանկալի չեր, վոր մենք դժդոհություն չպատճառեյինք թագուհուն, առարկեց իշխանը:

— Ի՞նչ կինչանակե այդ, հարցրեց Աբասը զարմացած:

— Մենք տակավին սգո մեջ ենք և մեր թախիծն անցնելու վրա չկիսի մտածենք, պատասխանեց Մարզպետունին:

— Կենդանիները մեռելների հետ չեն թաղվում, Գևորգ իշխան, նկատեց «բռնավորը» կեղծավորաբար ժպտալով:

— Այդ ճիշտ է. բայց մեռյալներին այդքան էլ շուտ չեն մոռանում:

— Տե՛ր Մարզպետունի, քեզ չի հանձիլ հրահանգել քո իշխանապետին, նա քո թագավորն է այժմ, խոստությամբ նկատեց «բռնավորը»:

— Այո՛, իմ թագավորն է. կեցցե՛ Աբաս հայոց թագավորը, բացականչեց իշխանը սաղավարտը հանելով և խոժոռ աչքերով ապարանտեսի վրա նայելով:

— Ի՞նչ կինչանակե այս ամենը, տարակուսած հարցրեց Աբասը՝ ղղալով, վոր յերկու հակաճառողներին հայտնի չե արդեն մի դաղտնիք, վորը սակայն անդիտանում է ինքը:

— Տեր, դո՞ւ ցանկություն հայտնեցիր դղյակը բարձրանալու, հարցրեց իշխանը Աբասին, առանց նրա հարցին պատասխանելու:

— Վո՛չ, հորեղբայրս առաջարկեց և յես չնորհակալ եմ նրա հոդածության համար:

— Ցես առաջարկեցի, այո՛. իսկ դու, Մարզպետունի իշխան, ինչո՞ւ ավելորդ բացականչություններ ես անում իմ արքայական մեծության առաջ, դոչեց «բռնավորը»՝ աչքերը զայրացած իշխանի վրա սևեռելով:

Վերջինս չպատասխանեց նրան, այլ դառնալով Աբասին՝ ծեղմությամբ ասաց.

— Տեր իմ, քո ծառան աղաչում է, վոր դղյակը բարձրա-

նալու փոխարեն բարեհաճիս լինել բանակը, յեթե կարիք ես ղղում թախիծդ փարատելու. Ախուրյանի ափերը ավելի ղեղեցիկ յեն այժմ և արևն այնտեղ ավելի և ջերմացնում:

Աբասը դեռ չեր պատասխանել, յերբ «բռնավորը» դուխեց

— Ի՞նչու իմ հարցին չես պատասխանում, Մարզպետունի իշխան:

— Ես հարցին պատասխանելուց առաջ՝ ինքս սիրով նոր հարց տամ քեզ. ասացե՛ք, ինչո՞ւ Ցերասխաձորի քո զորապետը հառաջանում և դեպի Ցերաղբավորս...

— Իմ զորապե՞տը... այլայլած ու չփոթված հարցրեց Աշոտը:

— Ցերասխաձորից դեպի Ցերաղբավո՞րս... Այդ ի՞նչ և նշանակում, վրդովված հարցրեց Աբասը:

— Այո՛, մինչդեռ մենք ապահով նստած ենք այստեղ, մեր հյուրընկալը մտածում և մեզ հանկարծակիի բերելու... հարեց իշխանը:

— Դու ստում ես... բացականչեց «բռնավորը»:

— Ստում է քո «արքայական մեծությունը», զայրացած պատասխանեց Մարզպետունին, առանց այլևս համբերել կարողանալու:

— Դու հանդգնում ես մինչև այդտե՞ղ, զոռաց «բռնավորը» և ապա զորականին դառնալով հրամայեց. կալանավորեցեք խնդույն այս թշվառականին:

Զինվորներից մի քանիսը առաջ անցան:

— Մի՞թե ստեղծվել և այն մարդը, վոր պիտի համարձակվի Մարզպետունուն կալանավորել նրա մեռնելուց առաջ... վորտաց իշխանը և սուրը հանելով՝ հրավեր կարդաց զորականին: Ո՞ն, ուրեմն, փորձեցեք ձեր ուժը, բազարանցի քաջեր...:

Ցեղնիկն այս տեսնելով՝ թռավ ձիու վրա և դեպի բանակը սլացավ: Բայց հառաջացող զինվորները տեղերնին մեխվեցան:

— Այս ի՞նչ և նշանակում, մեծափառ տեր. մի՞թե Բագրատունյաց պայազատը կարող և այս աստիճան նվաստանալ... վրդովված խոսեց Աբասը:

— Ի՞նչ. նվաստանա՞լ ասացիր... և ա՛յն՝ իմ պահակների՞ առաջ... բացականչեց «բռնավորը»:

— Դու վոտնակոխ ես անում հյուրասիրության սրբազան օրենքը, դու անարգում ես հանգուցյալ Թագավորի հիշատակը. ուրիշ ի՞նչ անուն կարող եմ տալ այդ վարմունքին:

— Դու ուրեմն կրկնո՞ւմ ես հայհոյանքդ։

— Ամենքին կարող եմ ասել. դու մի դավաճան ես... զայրացած պատասխանեց Աբասը և ապա դառնալով Մարզպետունուն՝ հրամայեց.

— Իշխա՛ն, խնդրի՛ր իմ կողմից թագուհուն պատրաստվել խնկույն. մենք այսօր ևեթ պիտի հեռանանք այստեղից։

— Վոչ վոք չպիտի հեռանա, կտրուկ ձայնով դոշեց «բրոնավորը»։

— Հեռանալը մեր կամքից է կախված, նկատեց Աբասը։

— Իսկ թողնելը իմ կամքից, պատասխանեց Աշոտը։

— Թողնե՛լը... Ի՞նչ, դու ուրեմն կալանավորո՞ւմ ես մեզ, բացականչեց Աբասը զայրույթից դողալով։

— Վոչ, յես կամենում եմ ավելի յերկար հյուրասիրել ձեզ, պատասխանեց «բռնավորը» հեգնորեն ժպտալով։

— Ա՛յդ նպատակով եյիր ուրեմն ինձ քո դղյակն առաջնորդում, ա՛յնտեղ եյիր կամենում ինձ բանտարկել, հարցրեց Աբասը զայրագին։

— Այո՛... Ցնթե հաճելի յե քեզ հավատալ քո կասկածին։

— Այդ վոչ թե կասկած, այլ ճշմարտություն է. Մարզպետունի իշխանն ավելի շուտ դուշակեց քո դիտավորությունը։

— Ցնթե այդպես է, թո՛ղ ուրեմն մարմնանա այդ ճշմարտությունը... Վո՛չ վոք այլևս իրավունք չունի յելնել այս ապարանքից... Պահակապետ, կատարիր քո պարտքը... Այս առելով նա նշան արավ պահակախմբի գլխավորին և ինքը շուտ յեկավ ներս մտնելու համար։

— «Սալո՛ւղ, Սալո՛ւղ, խիստ է քեզ ընդդեմ խթանի աքացել...», դոշեց Աբասը և սուրը մերկանալով «բռնավորի» առաջն ուավ.— Ո՞ւր ես դնում, կանգնի՛ր, յերկրորդի՛ր հրամանդ... վորոտաց նա ահավոր ձայնով. Բազբատունյաց գահի պայազատին իրավունք չունիս անարգելու, կանգնի՛ր և ասա՛ ինձ՝ ո՞վ ես դու։

— Ցնս հայոց Թագավորն եմ, իսկ դու իմ հպատակը, պատասխանեց «բռնավորը» և նորին դառնալով պահակներին՝ դոշեց. Ի՞նչ եք կանգնել, Թշվառականներ։

— Ցնվ իրավ, ի՞նչ եք կանգնել, բացականչեց Մարզպետունին և սուրը քաշելով դիմաց առաջացող պահակների վրա։

Վերջիններըը չրջապատեցին իշխանին և կամենում եյին սուրը խլել նրանից։ Այս տեսնելով Աբասը, հարձակվեց նրանց վրա։

— Ո՛ն ուրեմն, կատաբենք մեր պարտքը, դուշեց նա և սկսավ որի հարվածներով դիմադիր վահաններըը ջախջախել։

Ընդհարման աղմուկն ամբողջ ապարանքը բռնեց. այս ու այն կողմից դուրս վազեցին արքայեղբոր թիկնապահները և տեսնելով նրան վտանգի մեջ, հարձակվեցին դավադիրների վրա։ Սկսվեցավ կանոնավոր կռիվ։

Բարեբախտաբար ընդհարումը հեռու չեր կանանոցից և «բռնավորը» փակել եր տվել այդ կողմի անցքերը, այնպես վոր թագուհուն ու իշխանուհիներին չեր սարսափեցնիլ այդ կողմի շչուկը։ Բայց դավադիրների խումբը հետզհետե ստվարանում եր, նրանց հարձակումը ծանր կերպարանք եր առնում. վոքր մի ևս և պիտի ընկճեին նրանք արքայեղբորն ու Մարզպետուհուն։ Բայց ահա՛, հենց այն վայրկենին, վոր մի քանի զորեղ ձեռքեր պրկեցին Գևորգ իշխանի բաղուկը և կամենում եյին սուրը հանել նրա ձեռքից, դալարափողերը վորոտացին ապարանքի առաջ և Գոռը սուսերամերկ ընկավ դավադիրների վրա։

— Դժոխքի վորդիք, ի՞նչ եք անում, դուշեց նա զայրոդին և սկսավ հարվածել հոր հակառակորդներին։

Ներխուժարդ իշխանին հետևեցին յուր թիկնապահները, հետո՝ Դրանիկների խումբը, վերջը՝ Վանանդացիք։ Ջանցավ մի քանի վայրկյան և ապարանքի ընդարձակ բակը լցվեցավ զորքերով, վորոնք որեր չողացնելով և նիզակներ ճոճելով սպառնում եյին քանդել, կործանել՝ ինչ վոր միանգամ կդիմադրեր իրանց։

Փոքր ժամանակից յետո հասան ուրի՛շ զորախմբեր, վորոնք «բռնավորի» ապարանքը ամեն կողմից պատեցին։

Դավադիր պահակները մի ակնարկում փախել, չքացել եյին։ Ընդհարման տեղում մնացել եյին միայն մի քանի դիակներ, վորոնց արքայական զորքը տրորեց յուր վոտքերի տակ։

Ինչ վերաբերում է «բռնավորին», նա անհայտացել եր հենց զալարափողի ձայնը առնելուն պես։

Արքայեղբայրն ու Մարզպետուհին ազատվելով վերահաս վտանգից, փութացին իսկույն կանանոցը՝ թագուհուն ու պալատական տիկնանց հանդստացնելու, վորովհետև դավադրության յերեան գալը դուժել եր նրանց փողերի ձայնը։

— Հեռանանք այստեղից, հեռանանք շուտով, ասաց թագուհին. յես չեմ կամենում ապազա չարիքների պատճառով անիծել այն քաղաքը, վորին ավանդ եմ տված իմ սիրելին...։

— Հեռանանք հենց այսօր, պատասխանեց Աբասը. մինչ

Թե ժամանակ տուր ինձ ձերբակալել դավաճանին, վորովհետև ոճը միշտ պետի խայթե, քանի մահանը չէ ջախջախել նրա ղլուխը...:

— Թո՛ղ դրան, սիրելի Աբաս, ասաված ինքը կպատժե չարին, յեթե արժանի յե նա պատժի... Աչոտը դավաճանեց յուր հյուրերին, բայց հյուրերը թո՛ղ ապերախտ չլինեին դեպի հյուրընկալը:

—Ասացե՛ք՝ դեպի դավաճանը, բացականչեց Մարզպետունին:

— Անվանեցեք, ինչպես կամենում եք, բայց թողե՛ք նրան և հեռացե՛ք, կրկնեց Թադուհին:

Նույն թախանձելին և Դուրգենդուխտ տիկինը, Գոհար ու Շահանդուխտ իշխանուհիները և մյուս պալատական տիկնայք:

Դրանիկները, ընդհակառակն, պահանջում էին կալանավորել «բռնապետին»:

Բայց Աբասն ապաղա խոսովություններից խուսյ տալու համար դիջավ Թադուհու առաջարկության:

Նույն ավուր յերեկոյան արքայորայրը՝ յուր դրանիկներով, Թադուհին՝ յուր տիկնանցով և Մարզպետունի իշխանը՝ պետական զորքերով յելան դավադիրների քաղաքից և ուղղվեցան դեպի Բերազավորս:

Գարդմանա տեր Դավիթ սեպուհն ուղեկցեց յուր Թադուհի քրոջը մինչև արքունիքը:

Աչոտ բռնավորի այն զորախմբերը, վորոնք նրա հրամանով դիմել էին Բերազավորս՝ քաղաքն ու արքունիքը դրավելու, լուր առնելով «բռնավորից», թե յուր մտադրությունը չեր հաջողած և թե Աբասն ու Մարզպետունին իրանց զորքերով վերադառնում են Բերազավորս, ձգեցին խնդույն քաղաքը և խույս տվին դեպի Շիրակաչատ, վորպեսզի չրջան անելով՝ վերադառնան Բագարան, առանց արքայական զորաց հետ ընդհարումն ունենալու:

Բայց վո՛րքան մեծ յեղավ Բագարանից դարձողների զարմանքը, յերբ նրանք Հռոմոսի վտակի մոտ հանդիպեցին արքայական հնծելազոր մի դնդի, վոր նույնպես վերադառնում եր Բերազավորից:

Հնծելազորը հեռվից նկատելով հայոց բանակը, աշխատեց խույս տալ նրանից, բայց Մարզպետունու հրամանով վրա հասան նրա հառաջապահ դնդերը և չրջան կազմելով՝ վակեցին իրանց մեջ արաբացիներին:

Վերջիններս տեսնելով իրանց սակավությունը և հակառակորդի առավելությունը, ընդհարվելու վորձ անդամ չարին։

Աբասի հարցին, թե ո՞վքեր են իրանք և ի՞նչ ունին յուր սահմաններում, զորքի պետը պատասխանեց.

— Նորը ամիրայի հրամանով մենք դնացել եյինք Վերազավորս բադարանի թադավորի զորաց ոգնության. բայց վերսվհետև նրանք ձեր դալուստը լսելով փախան, ուստի մենք ևս ահա վերադառնում ենք Դվին։

Աբասը սաստիկ զայրացավ և քիչ եր մնում, վոր հրաման արձակեր՝ սուր քաշել ամենքին։ Բայց Մարզպետունին հանդրտացրեց նրան ասելով.

— Աստված հալոդում է մեզ, տե՛ր, վոստիկանի հետ դրած դաշինքը մենք չեյինք կարող վոտնակոխ անել՝ առանց ամիրապետի ցասումը դրդռելու։ Բայց ահա՝ Նորը ինքն է առաջինը դրժում յուր յերդման։ Այժմ ուրեմն մենք ազատ ենք Դվնո վրա հարձակվելու և ամիրապետն ինքը կարդարացնե այս վրեժխնդրությունը։

Աբասը բանավոր զտավ իշխանի առարկությունը և հրամայեց խլել բոլոր հադարացիներից զենքերն ու ձիերը և իրանց հետուտն արձակել Դվին։

— Գնա՛ և ասա՛ վոստիկանին, թե չուտով մենք կզանք յուր հաշիվը քննելու... ասաց նա արաբացի դլխավորին և հեռացավ։

Հայոց զորքերը վինաթափ արին հադարացիներին, խլեցին արաբական նժույդները և արձակեցին նրանց։

Հասնելով Վերազդավորս՝ Մարզպետունու առաջին դործն եղավ՝ սուրհանդակ ուղարկել վասպուրական և հիշեցնել Գադիկ Թադավորին հանդուցյալ արքայի հետ դրած բարեկամության դաշինքը և խնդրել նրան՝ վերցնել կաթուղիկոսին և դալ Վերազդավորս Աբասին Թադավոր պսակելու։

Գադիկը պատճառ բերելով յուր ծերությունը՝ խնդրեց Աբասին իրան ինքնել Վասպուրական և Արծրունյաց հին վոստանում Թադավոր պսակվել։

«Ինչի վոր արտաքին ու ներքին թշնամիները այդքան մոտ են ձեզ, ասում եր նա յուր նամակում, նրանք կարող են մեզ խանդարել նույնիսկ Թադադրության ժամին։ Ուստի յես բարվոք եմ համարում այդ արքայան հանդեսը կատարել Վանում, ուր յես կհրավիրեմ բոլոր իշխաններին և ուր հայոց

թագավորը կարող է վայելել ապահով հանգիստ, վորչափ ժամանակ է ինքը կկամենա։

Աբասն ու Մարդպետունին չհավատալ ղտան այս առաջարկությունը և խնդուն էլ իրանց համաձայնությունը հայտնեցին Դադիկին։

Այն ժամանակ վերջինս սուրհանդակներ ղրկեց Հայաստանի նահանգներն ու գավառները և հրավիրեց հայոց բոլոր իշխաններին ու նախարարներին վուխթալ յուր Վոստանը՝ Վան, և թագավոր պսակել Աբասին Բաղրատունյաց գահի վրա։

Ցնծալ վորովհետև գրանավորը դավադրության լուրը հասել էր ամեն տեղ և դրդռել ամենքին, ուստի իշխանները, առանց ժամանակ կորցնելու, շտապեցին Վան՝ հայոց գահի պայազատին իրանց բարեկամության ու հարդանաց հավատիքը մատուցանելու։

---

928 թվականի գարունն էր։ Բզնունյաց ծովի ափերը ծածկվել են կանաչով։ Սևիանն ու Վարագը, Աբտոսն ու Գրգուռը՝ թևակոտ դեռ ճյունապատ՝ բայց արդեն հալոցի առուներ էլին հոսում դնալի հինավուրց ծովակը։ Դաշտային կյանքը յեռում էր ամեն տեղ և այգեստանները պճնվել էլին փայլուն կանաչությամբ։

Բայց ամենից ավելի ակնապարար պատկեր էր ներկայացնում ծովի արևելյան ափը, ուր բարձր դիրքի վրա, իրրև պերճապաճույճ թագուհի, բազմած էր Շամիրամա դեղեցիկ ղաստակերտը։ Նրա հյուսիսային կողմից բարձրանում էր յերկայնանիստ մի քարաբլուր, վոր արևելքից դեպի արևմուտք ձգվելով և անշեղ ու միապաղաղ դեպի վեր բարձրանալով՝ ներկայացնում էր բնության մի դեղեցիկ հրաշակերտ ,վորին սակայն մարդկային ձեռքը զարձրել էր հզոր և ահարկու։ Նրա քարեղեն սրտի մեջ ծածկված էլին բազմաթիվ դաշտնարաններ՝ փորված անհիշատակ ժամանակներից, վորոնք ծառայում էլին ղաղաքը ոիրապետող բազմազան պետքերին, վոմանք իրրև դանձարան, վոմանք իրրև զնդան և վոմանք իրրև փրկության ապաստանարան։ Տիտանական այդ զանգվածի վրա ամբառնում էր վանա անմատչելի բերդը, վոր հյուսիսային ու արևմտյան կողմերից պատած էր մի քանի կարգ պարիսպներով ու մարտ-

ձոցներով, իսկ մյուս յերկու կողմերից ապահովված միապաղաղ ժայռերի բնական պատնեշներով։ Բերդի հարավային կողմից ընկած եր քաղաքը, վոր աջ ու ձախ տարածվելով՝ դրավում եր քարաբլրի ստորոտը բաղմաթիվ շինություններով. նրանց մեջ աչքի եյին ընկնում հոյակապ ապարանքներ, այնպես նաշար սարավուլքներ և վիմարդյան յեկեղեցիներ ու մատուռներ։ Այդ ամենի վրա, յուր ընդարձակությամբ ու հոյակապությամբ իշխում եր Գագիկ Թագավորի արքունիքը, վոր զարդարված եր կամարակապ պատշգամներով, այնպես ազդու սարավուլքներով և վոսկեզոծ ու դրվագազարդ դահլիճներով։ Քաղաքի փողոցները հովանավորում եյին սաղարթախիտ ծառեր, վորոնց վոտքում եյին սրբատաշ քարերի միջով հոսող բաղմապտույտ առուներ։ Այդ բոլորի շուրջը պատում եր հզոր կրկնապարիսպը լայնադիր աշտարակներով, իսկ դրանց ամենին վտակում եր ընդարձակ խորամ։

Բայց բնության գեղեցկագույն հարստությունը վիճակվածեր քաղաքի արևելյան մասին, վորտեղից սկսված տարածվում եր ընդարձակ ծառաստան, վոր կազմված եր զվարճալի պարտեզներից ու այգիներից և վոստվում եր քաղցրահամ պտղատուներով ու առուներով։

Ճիշտ ահա՛ զարնանային գեղազվարճ որերին Արծրունյաց այս հոյակապ վոստանն եյին ժողովվում հայոց տոհմական իշխանները, նախարարները և սեպուհները՝ իրանց ազնվազարմ ընտանիքներով և պահանորդական խմբերով։ Այստեղ յեկավ և կաթուղիկոսը՝ Աղթամարի դահերեց միաբաններին հետ։ Ամենից վերջը հասավ Աբասը՝ յուր զրանիկներով ու ազատաններով, Գուրգենդուխտ տիկինը՝ յուր իշխանուհիներով ու նաժիշտներով և Մարզպետունի իշխանը՝ Արարատյան թագավորության զորախմբերով։

Աչոտ-Դևրենիկը դիմավորեց Աբասին Արծրունյաց տոհմի պատգամաների և վասպուրականի իշխանների հետ և վողջունելով նրան Տոսպա սահմանի վրա, մեծ պատվով ու փառքով առաջնորդեց դեպի Վան—յուր հոր Գագիկ արքայանիստը։

Քաղաքի դռների մոտ դիմավորեց զահաժառանգին ինքը՝ Գագիկ Թագավորը։ Նրա հետ եյին թե՛ արքունի իշխանները և թե՛ հրավիրյալ նախարարներն ու ազատանիները, վորոնք և վտահավեղ հանդեսով ուղեկցեցին նրան մինչև Գագիկ հոյակապ արքունիքը։

Թեպետ բոլոր քաղաքը զարդարված եր արդեն դույնզդույն դրոշներով և պատշգամներն ու սարավուլքները պճնված շղարշներով, լիմոներանդ պատառոններով և այլնման դորգերով, բայց արքունյաց զարդարանքը շլացնում եր ամեն աչք:

Նրա այնպաշարները պճնված եյին դալարով և դույնզդույն ծաղիկներով, կամարներն ու բարավորները՝ սքողված ծիրանիով և վոսկեթել վառերով: Դահլիճների հատակը ծածկված եր դորգերով, թավշով ու կերպասով, իսկ կարասների վրա, վորոնց մեծ մասը չինված եր փղոսկրից ու սատափից, վայլում եյին առատորեն արծաթ և վոսկի: Միով բանիվ ամեն տեղ յերևում եր հարստություն և արքայական պերճություն:

Վասպուրականի թագավորը, վոր սիրահար եր շքեղության, դրա հետ միասին ուներ անհուն վառասիրություն: Ցեթե մի կողմից նա շքեղազարդել եր արքունիքը և պատիվ Արարատյան վեհապետի, մյուս կողմից եվ այդ արել եր յուր վեհազնյա հյուրերի, իշխանների և իշխանուհիների առաջ պարծենալու համար:

Ցեվ չատերի աչքը, արդարև, նա շլացրեց, բայց այդ չատերի թվում չեյին վոչ Մարզպետունին և վոչ Սյունյաց հարազատները, վորոնք դիտեյին, թե ի՞նչ գնով և Գագիկն այդ ամենը ձեռք բերել, ի՞նչ գնով և նա թագավոր հռչակվել և վորքա՞ն չարիք, վորքա՞ն թշվառություններ և պատճառել աղքին, մինչև վոր արքայի կոչումն և ստացել:

Սակայն հանգամանքներն ստիպել եյին այժմ դրանց՝ դիմել հենվուրց մատնչի ողնության և նրա վոստանում թագավոր պահել Աբասին:

Ցերբ այս մասին դիտողություն արավ Սյունյաց իշխանը, Մարզպետունին պատասխանեց.

— Ընտրեցինք չարիքներից փոքրագույնը...:

Մի քանի որից յետո Թեոդորոս կաթուղիկոսը՝ Վանա ս. Հովհաննես կոչված հոյակապ տաճարի մեջ, Գագիկ թագավորի, նրա պալատականների և բոլոր հրավիրյալ իշխանների և իշխանուհիների ներկայությամբ՝ թագավոր պահեց Աբասին և թագուհի՝ Գուրդենդուխտ տիկնոջը:

Այդպիսով Հայաստանի նախազահ իշխանատեա կամ արքայից-արքա հռչակվեցավ Աբասը. և նրա թագավորությունը սըրատային վողջունեցին ինչպես Գագիկ Արծրունին, նույնպես և հայոց բոլոր իշխանները, յերդվելով նրան հավատարմություն և անխախտ բարեկամություն:

Սրաս թագավորը մեծամեծ ընծաներով պատվեց թագադրության ներկա եղող իշխաններին։ Բայց ամենից արժանավոր պարգևը տվավ Դևորդ Սարզսեանուն, կարգելով նրան յուր բոլոր զորքերի վրա հրամանատար ապարապետ, և տալով նրան իրավունք վայելել այդ պատիվը վորդվոց վորդի։

Ե

ԳՎՆՈ ԱՓՈՒՄԸ

Գագիկ Արծրունին մի քանի շաբաթ շարունակ հյուր պահեց յուր մոտ Աբաս Թագավորին և, ի պատիվ նրա, նաև հրավիրյալ իշխաններին: Այդ բոլոր ժամանակ նա նրանց զբաղեցնում էր հաճոյական զրոսանքներով: Մի որ հրճեցնում էր յուր անառիկ բերդում և ցույց տալիս նրանց՝ նրա հրաշալիքները, բնության ու մարդկանց և, մանավանդ, յուր ձեռքով կերտված ամրությունները, ահավոր մարտկոցները, վիմափոր անճավները՝ իրանց զաղանի ճանապարհներով, քարակոփ մատուռները և ջրաղից ավազանները: Ցույց էր տալիս այդ լեռնակարկառ բարձրության առաջ բացվող զեղազվարճ տեսարանները, որոնց վրա նայում էին նրանք՝ բազմելով քարաբլրի ծովահայաց կողերում ամֆիթեատրաձև փորված նստարանների վրա: Այդտեղից յերևում էր քաղաքը յուր բազմազան շինություններով, ծովակը՝ յուր զեղածուփ ալիքներով և ազատաժուռ կղզիներով. յերևում էին ծովախնյա այլիներ ու դարաստաններ, կանաչազարդ դաշտեր ու բլուրներ և կապուտակ լեռների ձյունազագաթ գագաթներ, վորոնք Իղնունյանց ծովակը պատում էին չորս կողմից՝ Սիսիանը հյուսիսից, Արտազը հարավից, Վարագը արևելքից և Գրգուռն ու Ընձաքիսաորը արևմուտքից:

Մի ուրիշ որ նա զրոսեցնում էր նրանց վանա զեղազվարճ այդևտաններում, վորոնք քաղաքի արևելյան կողմից սկսված տարածվում էին զեպի ծովակի հարավակողմը մի քանի ժամվա ճանապարհ, ամփոփելով իրանց մեջ փոքրիկ ավաններ, շինություններ ու դյուղեր և իշխանական ամարանոցներ: Ամեն մի ուշադրության արժանի վայրում, կարկաչահոս աղբյուրների մոտ և հովանավոր ծառերի տակ՝ նա պատրաստում էր հյուրերի հա-

մար զվարճալի խրախուճյունները, համեմված ճոխ հացկերույթներով և դուսանական յերգերով ու կայթերով, վորոնցով մանավանդ հարուստ եր յուր արքունիքը:

Հաճախ նա առաջնորդում եր հյուրերին դեպի արքայական վորսարանները, վորոնք գտնվում եյին վարդատ ապատաժուռ ընձյերում, կամ ծովի հարավակողմը գտնվող անտառներում, ուր և երեների առատ վորսորդությամբ զվարճացնում եր նրանց:

Յերբեմն եվ նա պատեցնում եր նրանց վասպուրականի այն վանքերը, վորոնք հռչակավոր եյին իրանց դպրությամբ կամ միաբանական կարգավորությամբ՝ ցույց տալու համար յուր յերկրի մտավոր ու կրոնական զարդացման հառաջադիմությունը:

Վերջապես նա յուր արքայական նավակներով զբոսնեցնում եր հյուրերին նաև վանա ծովի վրա՝ այցելելով նրանց հետ միասին ծովափնյա ամրաստանները և ծովի մեջ գտնվող Լիմ, Կտուց, Առտեր և մանավանդ դեղադիր ու բարեշեն Աղթամար կղզիները: Վերջինի մեջ այդ ժամանակ նստում եր Հայոց ընդհանրական կաթուղիկոսը: Այդտեղ Գագիկ Թագավորը կառուցել եր հրաշակերտ յեկեղեցի, հոյակապ արքունիք, անառիկ բերդ ու ղղյակ, ուր և անցնում եր ամարային ամիսները: Այդ բոլորը նա ցույց եր տալիս յուր բարձրաստիճան հյուրերին, բացատրում եր նրանց յուր ճարտարապետական գաղտնիքները և հրճվում եր նրանց զովությունները լսելով:

Բայց այս բոլոր զբոսանքների ժամանակ Աբաս արքայի ուշադրությունը դրավում եյին միայն Գագիկ Արծրունու ռազմական ամրությունները: Նա գտնում եր, վոր դրանց չնորհիվ ե նրա յերկիրը ազատ մնացել թշնամու ավերումներից, չնայելով վոր այլտեղ բազմից արշավել եյին թե Ծուռուի վոստիկանը և թե նրա տեղապահները: Թեպետ Վասպուրականը բնությունից արդեն ոժտված եր դեղեցիկ ամրություններով, այնպես, վոր վոչ միայն Գագիկ Արծրունու նման բազմափորձ զինվորականը, այլև նրանից ավելի տկար մի իշխանապետ կարող եր այդ ամրություններով ապահովել յերկիրը թշնամու հարձակումներից, բայց և այնպես, Գագիկ Արծրունին բնության տվածների վրա ավելացրել եր նաև յուր ստեղծագործությունները: Վասպուրականի ամեն մի կիրճը, քարաբլուրն ու լեռնալանջը, վանքն ու մենաստանը նա դարձրել եր պաշտպանության վայր, ժողովրդյան ապաստանարան. խոր բերդերն ու ամրոցները

չինել եր անմատչելի։ Ցնծ ահա՛ այս պատճառով վասպուրականցի ժողովուրդը ավելի բարեվիճակ, վանքերն ավելի շեն, մխիթարությունները բարեկարգ եյին, քան թե Աբասյան յերկրում։ Ցնծ Աբասն ինքն իրանի մտածում, ծրագիրներ եր կազմում, վոր յուր յերկիրը դառնալուն պես՝ ամեն ջանք դրած դնե յուր թագավորությունը նույն ձևով բարեկարգելու։

Սակայն Գևորգ Մարզպետունին բոլորովին այլ դրծով եր դրազված։ Նախ՝ նա մտածում եր Աբարատյան ու Հարավյան իշխանապետությանց մեջ առեղծած մխիթյունն հաստատուն կապերով ամրապնդելու և յերկրորդ՝ համոզել բոլոր մխացած իշխաններին՝ հավաքական ուժով Դվինը վրա արշավելու, վորպեսզի մայրաքաղաքը դրավելով՝ միանգամ ընդմիշտ ոտար տիրապետության անհարատատ ազդեցությունը յերկրի վրայից հեռացնե։

Այս նպատակով, ահա՛, նա շարունակ խոսում եր մերթ Աղձնյաց ու Մոկաց տերերին, մերթ Սյունյաց իշխաններին և հաճախ՝ Դավիթ Արծրունուն կամ արքայորդի Աշոտ Ոսկանիկին։ Նա հարյուրերորդ անգամ կրկնում, ապացուցանում եր այդ ձեռնարկության անհրաժեշտությունը և նրանից դալիք ոգուտները մեծությունը թե՛ Հայաստանի ժողովրդի և թե՛ նույնիսկ իրանց՝ իշխանապետների համար։

Ցնծ նա այնքան աշխատեց, վոր բոլորին համոզեց՝ հինավուրց մայրաքաղաքը պաշարմամբ դրավելու վորոշումն անել։

Վասպուրականը նույնպես անհոգ չեր այդ ժամանակ։ Նա դիտեր վոր Աբասը թագավոր և պսակվել Վասպուրականում և վոր հայոց իշխանները մեծ մասամբ նրա հետ են։ Ցնծ վերոհիշեալ ինքը անհամեմատություն եր սրել՝ Աշոտ բռնավորի դավադրության աջակցելու, և այդպիսով յուր յերդման դրժելով՝ քակել եր Աբասի հետ ունեցած բարեկամության կապը, պարզ և վոր վերջնա, թագավոր պսակվելուց յետո, վրեժխնդիր պիտի լիներ, մանավանդ վոր նա այդ մասին ապատնացել եր իրան։ Հետևապես վասպուրականն էլ յուր կողմից եր պատրաստվում։

Ամենից առաջ նա մխացավ Աշոտ բռնավորի հետ և խոստումն առավ նրանից ղնել իրան յուր զորքերով՝ յեթե Աբասը հարձակվելու լինի յուր դեմ։ Ապա՛ զորքեր խնդրեց ամիրապետից՝ առարկելով, թե Հայաստանի արաբական կալվածները վտանգի մեջ են, հետևապես անհրաժեշտ և այդ վտանգի դեմ

պինվելու։ Բայց ամիրապետն զբաղված լինելով յուր յերկրի ուրիշ կողմերում ծագած խռովություններով՝ անուշադիր թողեց Նորրի խնդիրը։ Այն ժամանակ վերջինս միացավ Միջագետքի և Կորդվաց կողմերում ինքնագլուխ իշխող ամիրաների հետ և ողնական զորք առնելով նրանցից, սկսավ Դվինն ու նրա շրջականերն ամրացնել։

Ամենից առաջ նա ընավեր պահակախմբերով և առատ պաշարով ապահովեց Դվինո և Արտաշատու բերդերը (վորոնք միմյանց մոտ լինելով՝ ունեյին միմյանց հետ և զաղտնի հաղորդակցության ճանապարհները), վորպեսզի վտանգի դեպքում ինքը ապատանե զրանցից մեկին։ Ապա յուր զորքերը բաժանելով մի քանի տուլար մասերի, նրանցից մինին հանձնեց քաղաքի ներքին պարիսպների և աշտարակների պահպանությունը, յերկրորդին՝ արտաքին մարտկոցների հսկողությունը, յերրորդին՝ քաղաքի խրամը ջրով լցնելու և շարժական կամուրջները կառավարելու զործը, չորրորդին՝ Արտաշատու Տափերական կոչված նշանավոր և մեծատարած կամրջի պաշտպանությունը, վորի վրայով թշնամին պիտի հառաջանար դեպի Դվին։ Բացի այդ նա յուր ուղեցած հնծելազորը չորս հառաջապահ գնդերի բաժանելով՝ ուզարկեց նրանց Դվնո նշանավոր ճանապարհները բռնելու։ Դրանցից մինը Ալաթա ուղին եր, վոր սկսվում եր քաղաքի արևմտյան հարավից. յերկրորդը՝ Նախիջևանի պողոտան հարավ–արևելքից. յերրորդը՝ Բերդկանց ճանապարհը արևելյան կողմից. չորրորդը՝ Կողբափորի ուղին, վոր ձգվում եր հյուսիսից։ Ինչ վերաբերում է կարնո ճանապարհին, վոր քաղաքի արևմտյան կողմն եր ընկնում, այդտեղ վոստիկանը պահապաններ չկարզեց, վորովհետև այդտեղից նա սպասում եր յուր դաշնակից Աշոտի զորքերին, մինչդեռ մյուս կողմերից, նրա կարծիքով, պիտի հառաջանար թշնամին. այսինքն՝ Ալաթա կամ Նախիջևանի ճանապարհով Աբասը, Բերդկանց ճանապարհով՝ այսունեցիք, իսկ Կողբափորի կողմից՝ Վահրամ սեպուհը, վոր տակավին զոնը–վում եր Գուղարքում։

Զնայելով այս պատրաստությանց, վոստիկանը, սակայն, հույս ուներ դեռ ազատ մնալ հայոց վրեժխնդրությունից, վորովհետև ծանոթ եր նրանց խաղաղասեր բնության և հավատում եր, թե կարող է նորեն գրավել թագավորի սիրտը և նորոգել նրա հետ յուր բարեկամությունը։

Այս պատճառով նա ընծաներով մարդիկ ուղարկեց Վասակ–

բական՝ Աբաս արքայի դահակալության ու թագադրության շնորհավորելու և նրա հետ հաշտության նոր դաշն կռնքելու։

— Ասացեք ամիրային, թե հայոց թագավորը Դվինո մեջ կընդունան նրա շնորհավորությունները... պատվիրեց Աբասը ա-թաբացի դեսպաններին և յետ դարձրեց նրանց իրանց ընծաներով։

Այսքանն արդեն բավական եր, վոր վոստիկանը հասկանար, թե թագավորն այլևս չի կամենում խաբվել և յուր ուխտադրուժ վարմունքը ներել։ Այս պատճառով յերբ դեսպանները հասան Դվինն և թագավորի պատվերը հայտնեցին, Նաբրը հրամայեց զորքին կռվի պատրաստվել։

Բայց Աբաս թագավորի բանակը, վոր կազմված եր միայն Աբարատյան դնդերից և Արծրունյաց զորքերից, ծանրությամբ եր հառաջանում։ Վորովհետև, համաճայն կանխավ արած վորոշ-ման, Մոկաց տերն ու Աղձնյաց նահապետը իրանց զորքերով պիտի մնանային արքայի հետ Շարուրի դաշտում. Սյունյաց իշ-խանները պիտի մտնեին Մաղազ և Գուռնո ու Գեղա զորքերի հետ միասին իջնեյին Ուրծաձոր։ Իսկ Վահրամ սեպուհը, վոր ապահովված եր որդուն ափխազների կողմից (վորովհետև ամ-բողջ Գուգարքը դինել եր արդեն նրանց դեմ), յուր զորքերն առ-նելով պիտի իջներ Շիրակ և Ցերազավորսի շրջանում յեղած դնդերի հետ միանալով՝ դիմեր Դվինո դաշտը։ Ուրեմն, մինչև վոր այդ իշխանները կհասնեյին վորոշյալ տեղերը, թագավորի զորքը չպիտի շտապեր, վորովհետև դաշնակից իշխանները նպա-տակ ունեյին միահամուռ կերպով պաշարել Դվինը և յեթե կա-րելի յեր, գրավել նրան հարձակումով։

Բայց այստեղ արդեն արաբացիք տենդային պատրաստու-թյանց մեջ եյին. քաղաքի պարիսպների մոտ ժողովում եյին ռազմական մթերքներ. դարանները լցնում եյին դյուրավառ նյութերով. խրամատների համար պատրաստում եյին խցաններ. մարտկոցները զինում եյին յերկաթյա կարթերով ու չախչախող զրահիքներով. բուրգերի մեջ հավաքում եյին վորձաքարի բե-կորներ, վորով պետք է փլիլիկիաններն ու սանդուխքները ջար-դեյին. միով բանիվ առավոտվանից մինչ յերեկո մարդիկ զբաղ-ված եյին մահաւորի աշխատությամբ և հույս ունեյին, վոր դրա-նով մեծ կոտորած պիտի անեն պաշարողների մեջ։

Ներքին պատրաստությունները ավարտելուց յետ՝ վոստիկա-նը հրամայեց խրամը ջրով լցնել։ Եվ ահա արաբացի զինվոր-ները հարյուրավոր բահերով դիմեցին դեպի Արտաշատու ջրանց-

քը, վորպեսզի նրա թուռթերը բանալով՝ ջուրը դարձնեն դեպի Դվին:

Այդ ջրանցքը շինվել էր Քրիստոսից մոտ 200 տարի առաջ Արտաշես կուսակալի օրով և կարթագենացոց հնչակավոր ըրաված Աննիբալի ծրագրով: Ցերը վերջինս հայրենիքից տարագիր՝ դնելուում էր Հայաստանի մեջ, Արտաշեսն առաջնակարգ նրան սիրով և ողջա քաղելով բազմափորձ զորավարի ներկայութիւնից, նրա խորհրդով հիմնեց Արտաշատ քաղաքն ու բերդը Ցեղասխ գետի վրա: Ցետ վորովհետև տեղը, ուր հիմնված էր քաղաքը, յերեք կողմից պատած էր Ցեղասխ ու Մեծամոր գետերով, ուստի չորրորդ կողմը ջրափակ անելու համար փորեցին այդ ջրանցքը, վորով քաղաքը դառնում էր թշնամուն անմատչելի:

Բայց վորովհետև հնչակավոր Արտաշատը վաղուց արդեն դադարել էր շահատան լինելուց, և նրա փառաց ու ճոխութեան ժառանգորդ այժմ Դվինն էր հանդիսանում, ուստի նրա հինավուրց ջրանցքն էլ Դվնո խրամը սիրուն վողողիլ: Արտաշատի անչքանալուց յետո՝ հայոց թագավորները՝ սկսած Մուսրով բ.-ից, վոր Դվինը շինեց և յուր աթոռն այդտեղ փոխադրեց, մինչև Բագրատունյաց պարպատանները, իրանց հզոր ու խնամքը Դվինին նվիրեցին և ռազմական ամրութիւններով հարստացրին նրան: Ուստի այդ ժամանակից հիշյալ ջրանցքն էլ ծառայում էր Դվինին:

Բայց որերն անցնում էին և Արաս արքայի զորքերը դեռ չէին յերևում: Մինչև անգամ Նախիջևանի ճանապարհը պահող հնծելազորը չարունակ լուրեր էր ղրկում Դվին, թե Արաքս դեռ բանակած և Շարուրում: Այս պատճառով արաբացիք սկսան մի առժամանակ անհոգութեան տալ իրանց և կեր ու խումով զվարճանալ: Մինչև անգամ ջրանցքի վրա աշխատողները ծանրութեամբ էին շարժվում և մի քանի որվա մեջ հազիվ էին վերջ թուռթերի մի մասը:

Սակայն Արաս թագավորի զորքը, վորին միացել էին արդեն աղձնեցիք և մոկացիք, վաղուց հեռացել էր Շարուրից և այն՝ դիշերանց:

Նրա բանակատեղում մնում էին միայն դառարկ վրաններ՝ մի քանի վաշտ պահապաններով, վորոնք պաշտոն ունեին՝ խաբել Նախիջևանի ճանապարհը պահող արաբացիներին, ցույց տալով նրանց, թե հայոց զորքը դեռ բանակած և այնտեղ:— Այդ

ղորքը, սակայն, զանազան մասերի բաժանված, անծանոթ ճանապարհներով դիմում էր Դվին:

Արդեն ամեն կողմից մոտենում էին դաշնակիցները միմյանց, երբ լուր հասավ Մարզպետունուն, թե արաբացիք սկսել են ջրանցքի թումբերը փլել՝ Դվինը խրամը լցնելու համար: Սպարապետ իշխանը, վոր միտք ուներ դեռ ևս հանդիստ տալ ղորքին Ուրծաձորում, սաստիկ այլայլվեցավ, վորովհետև խրամի լցվելով ահագին դժվարություններ պիտի առաջանային իրանց համար. նախ՝ ղորքն անկարող պիտի լիներ մոտենալ քաղաքի ջրատար պարսպին կամ դռներին, հետևապես մտադրված հարձակումը չպիտի հաջողեր. յերկրորդ՝ մեծ աշխատություն և յերկար ժամանակ պիտի դործ դներին ջրանցքի բերանը փակելու և ջրալից խրամը, դոնե մի քանի տեղ, խիճով լցնելու, վորպեսզի այդ տեղերով ղորքը կարողանար մոտենալ պարսպին. յերրորդ՝ այդ դործները կատարելու համար աշխատող հազերից շատերը նեստահար պիտի լինեյին Թշնամուց, վորովհետև պարբսպի վրա յեղողները թույլ չեյին տալ վոչ վոքին՝ պարապի տակ դործելու:

Այս ամենն աչքի առաջ ունենալով՝ սպարապետը հայտնեց Թադավորին, թե անհրաժեշտ է մի քանի դնդերով դիմել անմիջապես Արտաշատու կողմը և ջրանցքի բացումն արդելել: Մարզպետունու առաջարկությունը բանավոր դատեն նաև դաշնակից իշխաններից:

Ուստի Թադավորի ընտրությամբ այդ դործի համար նշանակվեցան վանանդացոց ու այլունյաց դնդերը, վորոնց պիտի առաջնորդեր Բարդեն իշխանը, իրեև քաջածանոթ Արտաշատու շրջականերին:

Ճերեկը յեր, յերբ Բարդեն իշխանը յուր ղորքերով մտավ Աղատ դետի հովիտը և սկսավ առաջանալ դեպի Դվին: Վորովհետև ճանապարհը, վորով առաջանում եյին նրանք, անցնում էր Մոսրովակերտ անտառի միջով, վոր Աղատի հովտից սկսած տարածվում էր մինչև Գեղամ սարերը, այդ պատճառով ղորքերի ընթացքը աննկատելի մնաց արաբացի պահակորդներին, վորոնք խմբերով թափառում եյին Դվինո դաշտում:

Մուրճը կախելու վրա հայերը Մեծամորն անցան և նրա ուղղությամբ սկսան առաջանալ դեպի Արտաշատ: Ճնայելով վոր ղորքերը հոդնած եյին, այսուամենայնիվ իշխանը չէր կամենում հանդիստ տալ նրանց, վորովհետև ամեն մի կորցրած ժամը կա-

բաղ եր մի վտանգ առաջ բերել իրանց համար: Բայց Արտաշատից մի քանի վարսախ հեռու նա ստիպված եր կանգ առնել՝ մինչև վոր ջրանցքը դիտելու համար ղրկված յուր լրտեսները կվերադառնային: Նա կամեցել եր նախ տեղեկանալ, թե ինչ դրություն մեջ է գտնվում գործը և ապա ղորքերն առաջ վարել: Ըստ վորում, յեթե ջրանցքը բացված լիներ և խրամը ջրով լցված, ել իրանց Արտաշատ դնալը միտք չեր ունենալ: Այդ քաջը, ընդհակառակը, կարող եր վնաս բերել, նախ յուր փոքրաթիվ զնդերը վտանգելով և յերկրորդ՝ թշնամուն թագավորի դալը հայտնելով:

Բայց լրտեսները վերադարձան և հայտնեցին, թե մնացել է միայն մի քանի քայլ տարածություն, վորպեսզի ջրանցքի արգելքը բացվի, և թե այդ ել արաբացիք շուտով կպեղեն, վորովհետև գործի վրա աշխատում են հարյուրավոր ձեռքեր:

— Ո՛ն ուրեմն, հառա՛ջ, ել ապասելու ժամանակ չէ, դոչեց Բարդեն իշխանը և առաջ անցավ: Զորքը սրընթաց հետևեց նրան:

Ցեվ արդարև, ջրանցքի առաջը բանալու համար մնացել եր միայն մի քանի քայլ: Գործավոր ղորքի դլխին կանգնած եր բեչիր ղորապետը և շտապեցնում եր նրանց, վորպեսզի հենց նույն դիշեր ջուրը դարձնեն դեպի խրամը: Զնայելով վոր մութը կոխել եր, այսուամենայնիվ, ղորապետը չեր հեռանում այդտեղից: Արաբական նժույդի վրա նստած՝ նա դիմում եր մերթ այս և մերթ այն կողմը՝ գործավորներին շտապեցնելու համար: Ըստ յերևույթին նա չեր կամենում հեռանալ այդտեղից, մինչև վոր յուր աչքով չտեսնե ջրանցքի բացումը:

Ցեվ ահա՛ հանկարծ Արտաշատու կողմից վորոտընդոստ աղաղակներով արաբացոց վրա թափվեցան հայոց ղորքերը և սրերով ու նիզակներով սկսան անխնա և աղ ու ձախ հարվածել: Հարձակումն ա՛յնքան անակընկալ և թափն ա՛յնքան զորավոր եր, վոր արաբացիներից վոչ վոք չհամարձակվեց դիմադրել: Նրանք չփոթված ու սարսափահար ձգեցին բահերն ու գործիքները և սկսան փախուստ տալ դեպի Դվին և Արտաշատու կողմերը: Զնայելով վոր բեչիրը սուրը հանեց և գոռալով խրախուսյա հարդաց ղորականին, բայց նրան լսող չեղավ: Մի քանի տասնյակ հոդի, վորոնք բահերով ու վաղակավորներով խիզախեցին հայերի դեմ, տեղն ու տեղը ջարդվեցան: Այս տեսնելով բեչիրը, ինքն ել ձգեց ճակատը և ձին մտրակելով փախավ դեպի Դվին: Հայերն աղաղակելով ընկան փախչողների յետևից և հալածեցին

Նրանց մինչև քաղաքի սահմանը, և ապա դառնալով՝ դրավեցին Ջրանցքը և կանգ առան այդտեղ:

Բայց Բեչիրը խուսա եր տվել վոչ թե վախչելու, այլ Դիլնից նոր զորք բերելու մտքով: Սակայն վոստիկանը, վոր ավելի շըրջահայաց ու հեռատես եր, Թուլլ չտվավ նրան զորք հանել քաղաքից:

— Գանի վոր չդիտենք, թե ի՞նչ ուժով են հայերը հառել այստեղ, կամ թե ի՞նչ կետերում են համախմբված նրանք և մուքին արդելում և մեզ ճիշտ տեղեկություններ առնել այդ մասին, ավելի լավ և ուրեմն զորքը վտանգի չենթարկել. առավոտը մենք ամեն ինչ կտեսնենք առաուձո լուսով և ըստ այնմ հարկ յեղածը կկարենանք անորինել, ասաց Նըբրը Բեչիրին և վերջինս բանավոր դասալ այդ խորհուրդը:

Ցեվ վորքա՞ն մեծ յեղավ արաբացոց զարմանքը, յերբ առավոտը վեր կենալով տեսան, թե Արտաշատու Ջրանցքը զրավող զորքը կազմված և ընդամենը մի քանի վաշտերից: Ամոթի հետ միասին մի կատաղի զայրույթ յեկավ Բեչիրի վրա, յերբ նա համոզվեց, թե ինքը արաբական քաջերի առաջնորդ լինելով հանդերձ, վախել և մի քանի վաշտերի առաջից:

— Հենց այս վայրկենին կկարդամ բոլորին. թո՛ղ վոչ մի զորական չազատվի իմ սրից, դուռաց զորապետը և արաբական կատաղիներից մի քանի դունդ առնելով՝ պատրաստվում եր դուրս դալ Դվնո պարիսպներից:

Վոստիկանը, վոր այդ ժամանակ կանդնած եր յուր ապատանքի մինարեթի վրա և դիտում եր Դվնո շրջապատը, տեսնելու համար թե ել ուրիշ վո՞րտեղ կան հայ զորախմբեր, նկատեց վոր քաղաքի արևմտյան կողմից, այն է՝ կարնո ճանապարհով, ուր ինքը պահակախումբ չեր կարգել, առաջանում և տավար հեծելախումբ:

— Ահա դալիս են և մեր դաշնակից Աշոտի զորքերը, ձայնեց նա դեպի Բեչիրը, վոր դեռ կանդնած եր ապարանքի առաջ և հրահանգներ եր տալիս զորքին:

— Առանց նրանց ել մենք գործը կավարտենք, հոխորտաց զորապետը և յուր հրոսախումբը կարգավորելով, դուրս յեկավ Դվնո պարիսպներից:

Բարձեն իշխանի դրությունը խիստ ծանր եր: Նա յուր հետ ուներ ընդամենը հինգ հարյուրի չափ զորք: Ցեվ թեպետ դրանք հայոց ամենաընտիր քաջերից էլին, այսուամենայնիվ չէլին կա-

բող յերկար դիմադրել, յեթե նրանց չրջապատեր ավելի մեծ բազմություն: Բացի այդ, նրանք գտնվում էին Արտաշատում և Դվինը մնջտեղը, բայց դաշտի վրա և չունեին վոչ պատսպարվելու տեղ, վոչ էլ ժամանակ՝ պատնեշ շինելու: Արաբացիք կարող էին չրջապատել նրանց և տեղն ու տեղը կոտորել: Միակ փրկություն ձգել հնարանքն էր: Բայց այդ էլ չէին կամենում անել, վորովհետև այն ժամանակ Ջրանցքը կմնար արաբացոց ձեռքը, և նրանք մի կես ժամում թումբն մնացորդը փլելով՝ Ջուրը կդարձնեին դեպի խորքը, վորով և կվոչնչանային թե՛ ամրած հաղթությունը և թե՛ ապագա հաղորդության հույսերը:

Աբաս Թագավորը ղրկելով Իշխանին այստեղ, ապահովացրել էր նրան՝ թե ինքը հնարավոր առավոտ, յուր բոլոր զորքերով, կդտնվի Դվինս առջև: Բայց արևն ահա ծագում էր և, ահա՛յն, արքայական բանակը չէր յերևում վոչ մի տեղ, նույնիսկ հառաջապահ գնդերը չէին նշմարվում... Բարդեն Իշխանը հետամուտները, վորոնք Արտաշատու բլուրներից դիտել էին ամեն կողմ, յեկան և պատմեցին, թե միայն կարնո ճանապարհի վրա տեսան մի հեծելախումբ, վոր չատ-չատ հառաջանում էր դեպի Դվին, իսկ մնացյալ տեղերում արաբացի պահակներից զատ վոչինչ չնշմարեցին:

— Կարնո ճանապարհով կարող է միայն դավաճանի զորքը դալ, ասաց Բարդենը. մեր փրկությունը պետք է սպասել Դվինս դաշտից:

— Մեկ էլ յերկնքից, նկատեց համհարզներից մինը:

— Ցնթե՛ տեսնեմ հաճի... հարեց Իշխանը և լռեց:

Բայց հենց այդ ժամանակ բացվեցան Դվինս հարավային դռները և արաբացոց զորքը դալարափողերը հնչեցնելով, սկսավ դուրս խուժել և դիմել դեպի Արտաշատու Ջրանցքը:

Բարդեն Իշխանն արդեն կարդալորել էր յուր փոքրաթիվ զորքը, հանձնեցնելով նրանց յեռանկյունաձև և հրամանատով, վոր հարձակման դեպքում աշխատեն միջամուխ լինել հարձակվողների մեջ և յերկու մասի բաժանելով նրանց՝ այնպես սկսեն իրանց քաղխումը: Այդ յեղանակին այն առավելություն ուներ, վոր կթուլացներ հարձակման թափը և հրոսակախմբի ամբարությունն արդելք չէր լինիլ ազատ դինաշարժության:

Իշխանը հենց վոր լսեց փողի ձայնը, աշտանակեց խիզուն յուր նժույգը և սուրը մերկացնելով՝ ձայն տվավ դեպի զորքերը.

— Սիրելի քաջե՛ր, մենք սակավաթիվ ենք և թշնամին զո-

բավոր։ Բայց մեր դատն արդար է, իսկ նրանցն անիրավ։ Աստված ընդունի և արդարին և յուր բաղուկը հզորացուցի և ամենից։ Դիմավորենք Թշնամուն աներկիւղ և առանց դիմադարձութեան, ասելով ուխտ ընել յերկրորդ անգամ նրան խորտակելու, իսկ ում վոր մնալից մահ կվիճակվի, նա թող մխիթարվի, վոր մնացում և հայրենիքի և այն խաչի համար, վոր ահա Դվինս բարձունքից նայում է մեզ վրա։

Այս ասելով իշխանը սաղավարտը հանեց և դնդքը դնելե ս. Գրիգորի գմբեթը դարձնելով՝ — «Տե՛ր մեղ ողնիր, ո՛վ սուրբ կաթողիկե. մեր կռիւն ու մահը քո և քո վորդվոց աղատութեան համար է. թող Թշնամին չզարծենա թե կիսատուսինը հալվեց սուբ Խաչին...»։

Այս ասելով նա սուրը շողացրեց և «ո՛ր հառաջ...» գոռալով դիմեց դնալ Թշնամին։

Սյունյաց և վանանդացոց քաջերը վորոտընդոստ ազաղակով հետևեցին նրան։

Նախնյաին վոգևորութեամբ և գոռյուն-գոչյունով դիմում էին հայերի դեմ արաբացիները։

Վերջապես նրանք հասան և քաջերը գոռալով ընկան մեմեանց վրա։ Սրերն սկսան շողալ, նիզակները ճռճել և աշ ու ձախ կատաղի հարվածներ տեղալ։ Հարձակումն այնպես սաստիկ և բազմամբ գործվոր եր, վոր յերիւս կողմից եկ կարծեցն իսկույն խանդարվելան։ Վանանդացիք քաժանվեցան այսենց-ննելից, իսկ այս վերջիններն իրարից. նույնպես և արաբացիք չկարողացան իրանց միութիւնը պահպանել։ Հայերն մի մասը յետ մդից նրանց աշ թևը, իսկ սրանք դրա փոխարեն ճնշեցին նրանց ձախը։ Այդպիսով խմբերը ճաստազելով՝ կռիվը գործքեցին մի քանի կետերի վրա։ Այս հանդամանքը ձեռնտու յեր հայերին, վորովհետև չարժվելու ազատութիւն ունենալով՝ ավելի հաջողութեամբ կիրավելին։ Բայց վոստիկանը, վոր յուր մինաթեից դիտում եր կռվի ընթացքը, տեսնելով հայերի գործող ընդդիմութիւնը, նոր զորքեր դրկեց յուրայինների ոգնութեան։ Այդ պատճառով հայերը նոր հարձակման հանդիպելով, հետզհետե տկարացան։ Նրանց յուրաքանչյուր խմբակին չորս-տասն եր մի ահավոր դառնդ։ Վայրկյանը հուսահատական եր։ Բարդն իշխանը, վոր կռվում եր կատաղաբար, նոր հարձակման առաջ յետ կանչեց մի վայրկյան. ապա հայացքը Դվինս կաթուղիկին ուղղելով՝ սրտառուչ ձայնով բացականչեց. — «Մի՛թե

դու, ով լուսավորչի խաչ, պիտի հանդուրժես մեր կատարածին և հաղթություն տաս դարձ հազարացուն, վոր ծաղրում է քո սրբությունը... Ցույց տուր, ով քառաթև, վոր իզուր չենք մենք ապավինել քեզ, և վոր հզորագույն և այն բաղուկը, վոր քո թևին զամվեցավ...»:

Այս ասելով նա սուսերամերկ խոյացավ դեպի հարձակվող զորքերը և աննման հերոսությամբ սկսավ պաշտպանել յուր մարտիկների ակարացող կողմը: Բայց վոչ իշխանն և վոչ նրա զորքի հերոսական ջանքերը չկարողացան հաղթել արաբացոց դնդերին, վորոնք հետզհետե սոսկարանում էին: Ընդհակառակը, մի քանի վայրկենի վրա հայերն սկսան վերջնականապես ընկճվել. նրանք, հոժարությամբ փախուստ կտային, թե չվախենային խոպատ ընկնելուց. այս պատճառով հույսը էին հուսահատ կատաղությամբ: Փոքր մի ևս և արաբացիք հաղթության փողը պետք է հնչեին... Բայց ահա՛ հենց այդ վայրկենին լսվեցավ հանկարծ հայախումբ զորքերի վորոտաձին աղաղակը և Վահրամ սեպուհը, ինչպես չանթառաք մի հարվածի՝ ահավոր սուրը ձեռին ընկավ արաբացոց վրա: Նրան հետևում էին դուզարացիք, բասենցիք և Շերակավանի քաջերը: Ինչպես հանկարծահաս մի փոթորիկ կամ զարնանային մի հեղեղ թափվեցան նրանք արաբացիների վրա և սկսան անխնա կտտորել, ջարդել, ջախջախել՝ վոմանց սրախողխող անելով, վոմանց նիզակահար սատակելով և շատերին նժույգների վոտքի տակ տալով:

Բաբգեն իշխանը զարմացավ: Վո՞րտեղից բուսավ արդյոք սեպուհը: Վո՞րտեղ էին թաղնված նրա զորքերը, չէր կարողանում դուշակել:

Բայց Դվինս արևմտյան ճանապարհով յեկող հեծելազորը, վոր խրախուսել էր վոստիկանին և, ընդհակառակը, յերկյուղ ազդել Բաբգենին, հենց Վահրամ սեպուհի զորախումբն էր յեղած: Վերջինս արքայի հրամանով շտապել էր իշխանին ոգնության, ըստ վորում բուն բանակը փոքր ինչ պիտի ուշանար: Սեպուհը հաղթացոց պահակներից խույս տալու և Արտաշատի ջրանցքին անարգել հասնելու համար՝ շրջան էր արել Դվինն գաշտի բարձրից և Խոսրովու անտառը անցնելով՝ մտել Կարնո հովիտը ճանապարհը:

Սեպուհի և նրա զնդերի հարձակումը փոխից խուճապ էավի

կերպարանքը: Հազարացիք հանկարծակիի յեկան, իսկ այնուցիք ու վանանդացիք նոր վոգի առնելով՝ սկսան ավելի կատաղարար հարձակվիլ հակառակորդների վրա: Նորին կռիվը բորբոքվեց. նորին խմբերն ընդհարվեցան: Հազարավոր սրեր շողում եյին ու հարվածում, նիզակները՝ ճոճում ու շամփրում, սաղավարտներ ճեղքում, ղրահներ պատառում, վահաններ ջախջախում... Հաղթողների աղաղակը, ընկնողների վայնասը, զենքերի շաչյունը թնդացնում եր ոդն ու դաշտը...:

Սակայն հաղթության աստղը թեքվում եր հայոց կողմը, արարացիք նորեկների հարձակումից շվարելով և մանավանդ թե սաստիկ հարված առնելով՝ մի քանի կիսերում սկսան նահանջել: Ինչերն այդ տեսնելով՝ հրամայեց խսկույն նահանջի վոգ հնչեցնել, վորպեսզի մնացորդ ղորքն ազատե կոտորածից: Բայց արարացիք վոգի ձայնն առնելուն պես՝ վոխանակ քայլ առ քայլ յետ նահանջելու, սկսան միահամուռ վախուստ տալ դեպի Դվին:

Հայերն ընկան վախչողների յետևից և սկսան չարաչար կոտորել նրանց: Շուտով Դվնո դռները բացվեցան և ներս առան վախչող ղորականը:

Սենուհն այդ տեսնելով՝ հանդուգն միտք հղացավ. այն է՝ հրամայել յուր ղորքերին՝ ներս խուժել քաղաքը վախչողների յետևից:

Բայց Բարդին իշխանը, վոր ավելի հեռատես եր, արդելեց նրան այդ քայլն անել, առարկելով, թե քաղաքում կարող է վտանգ հասնել ղորքին:

Նրանք բավականացան տարած հաղթությամբ և ղորքը ժողովելով վերադարձան դեպի Ջրանցքի հովիտը:

Ցերեկոյան դեմ, յերբ կռիվն արդեն ավարտած, հաղթությունը տարած, իսկ հազարացիք Դվնո մեջ փակված եյին, հասավ Թագավորը՝ Գևորգ սպարապետի, դաշնակից իշխանների և արքայական համախումբ բանակի հետ:

Վերջինս, սպարապետի կարգադրությամբ, շրջապատեց քաղաքը, բոլոր մատչելի կողմերից:

Տեսնելով Դվնո խրամը ամենալին չոր և լցելով տեղն ունեցած հովի և տարած հաղթության համար՝ Թագավորն ուրախացավ և ի նշան յուր գոհության՝ դրկեց ու համբուրեց Բարդին իշխանին և վահրամ սպարապետին: Ապա հրամայեց վառոտվոր հրավառությամբ ամբողջ բանակը լուսավորել այդ գիշեր:

Կարճ ժամանակվա ընթացքում, Դվինն հինավուրց անուանից դուրս հանվեցան հարյուրավոր մայրեր ու կաղամախիներ և սարիներով ջնջախոտվելով՝ դիրքուվածև դիզվեցան թե՛ բանակի մեջ և թե՛ քաղաքի շուրջը, պարսիկների և աշտարակների հանդիպ:

Ցնորք մուքը կոխեց և ահագին խարույկները վառվեցան, Դվինը, կարծես, դյութական կիրպարանք առավ: Հարյուրավոր կրակների բոցը բարձրանում, ծառանում էր դեպի յերկինք և շրջապատի ամբողջական բոսոր դունով լուսավորում: Մայրաքաղաքի պարիսպներն ու մարտիկները պատած էին կրակով և հեռվից նայողը կարծում էր, թե քաղաքն ամբողջապես դառնում է հրդեհի մեջ: Նրա բարձրաշեն աշարանքները՝ իրանց այնպատվող աշտարակներով, դմբեթապարդ յեկեղեցիները՝ փայլուն խաչերով և արաբական մզկիթն ու վոսոխականական տան ուղղաձիգ մինարեթները՝ վոսկյա կիսալուսիններով՝ փայլում էին դիշերային խավարի մեջ մերթ պայծառ լուսով և մերթ քրքմատուշ և տալիս քաղաքին մի անսակ տխուր և խորհրդավոր կիրպարանք:

Իսկ Դվինս բարձունքներից նայողի առաջ ուրիշ պատկեր էր բացվում: Արքայական բանակը, վոր պատած էր քաղաքը ամեն կողմից և վոր ցերկվա լուսով խիտ ահավոր էր յերևում, դիշերվա մութին ավելի յերկյուղ և սարսափ էր աղդում: Թարուխների բոցածավալ լույսը կարծես թե կրկնապատկում, յերեսպատկում էր զորախմբերի թիվը, բազմաթիվ կրակների շուրջը դալթող և հագթական յերդերով ողը թնդացնող զորականի ազմուկը խառնում, անհանդստացնում էր պաշարյալ մահմեդականների սիրտը:

Դվինս հայերը, ընդհակառակը, զաղտնի հրճվանքի մեջ էին, թեպետ և չկային համարձակվում յերևան հանել իրանց ուրախությունը: Այն մխաքը, թե շուտով մահմեդականի բռնապետությունը պիտի վերջանա, թե դուռդ հազարացին պիտի խոնարհվի վերջապես արքայի հաղթական դրոշակի առաջ, նրանց սիրտը լցնում էր անասահման բերկրությամբ: Եվ ամենքի շրթունքները մրմնջում էին աղոթքներ, մանուկ և ծեր, հին թե՛ աղամարդ ազաչում էին աստծուն, վոր այս վերջին անդամ էլ փառավորե յուր անունը՝ հաղթություն տալով հայոց խաչին և Լուսավորչա հավատին...:

Բայց վոսոխականը, վոր յուր ապարանքի մինարեթից դի-

տում եր այդ մեծատարած խարուկինները և տնօրում հայ զորքերի խաղերն ու պարը և լսում նրանց վորոտաձայն երգերը, վորոնք շարունակվում էին մինչև ուշ գիշեր, կատաղությունից, կարծես, ուղում եր խնդրադարձել: Նա մտաբերում եր մի-մյանց յնեվից երան հասած անհաջողությունները, և այդ բոլորը վերագրում յուր զորապետի ու պաշտոնյաների անհոգության և անմտության, ուստի և հայհոյում ու անիծում նրանց:

«Ձի՞», վոր կարող էին դեռ մի որ առաջ ըրանցքը բանալ և քաղաքի խորամը վողողել... խոսում եր ինքն երան վոտի-կանը. բայց չարին, անհոգության ավելն երանց և պատճառ դարձան թե՛ քաղաքի գլխավոր պաշտպանությունը վերջացնելուն և թե՛ զորքերի կոտորածին... Ինչ իմ պահակ հնձելախմբերը. ո՞ւր մնացին նրանք, ինչո՞ւ մինչև այժմ պահպանության չորս կետերից դեռ մի գլխավոր չհասավ, վոր Թշնամու գալուստան ինձ հայտնեց...

Բայց վոտաթիանն ի զուր եր տրտնջում վերջին կետի նկատմամբ: Վորովհետև վոչ թե յուր պահակ հնձողներն անուշադրությունն եր պատճառը՝ վոր ինքը ժամանակին չեր իմացել յուր հակառակորդի մոտենալը, այլ հայոց ապստամբների բազմաթիվ զգուշությունը. վորովհետև նա զորքերն առաջ եր վարել այնպիսի ճանապարհներով և ա՛յնքան մեխյանցից անջատ խմբերով, վոր հազարացի պահանորդները չեյին կարող նրանց նշմարել: Նույնիսկ Շարուրում բանակած զորքի վրաններեր այն ժամանակ միայն սկսեցին քակել հայ պահակները, յերբ բուն բանակին իջնում եր արդեն Դվինս դաշտը:

Վերջապես վոտաթիանը կանչեց յուր մոտ Բեշխրին և սկսավ խորհուրդ անել նրա հետ:

— Այս հայերը, ըստ յերևույթին, պաշարել են մեզ այնպիսի զորությամբ, վորին դիմադրել չկարող անանք, յեթե նրանք հաճախ հարձակվին մեզ վրա, ասաց նա զորապետին, ինձ թվում է, թե մի հնար միայն կա ընդհատումն արդելելու և Արտաշին մեզ հետ հաշտվել տանելու:

— Վո՞րն է այդ, հարցրեց Բեշխրը, վորի դառնությունն ընկճվել եր արդեն կրած պարտության պատճառով:

— Այն, վոր հայանանք հայոց Թագուհուրին, թե կկարենանք աշտարակից մեզ մոտ պատանդ կեղծ յուր հորաքեռ վորդուն՝ Սյունյաց Տահակ իշխանին, յեթե նա մեր առաջարկած հաշտությունը չի ընդունել և յուր զորքերը չի հեռացնել Դվինից:

— Աբասը չեթե ցանկացող լիներ հաշտությանն, քո դեմ-տանններին ու ընծաները չետ չեր դարձնիլ Վասպուրականից։

— Ուրմ՞ան...

— Կամերժե քո առաջարկությունը։

— Այն ժամանակ չես եղ կկախեմ այդ իշխանին. Թո՛ղ այնուհետև նրա Սմբատ ու Բարգեն չեղբայրները խիզախեն մեղ դեմ և Դվինն առնելուց առաջ՝ իրանց չեղբոր դիակը դրկեն։

— Իսկ չեթե, հանկարծ Դվինն առնո՞ն։

— Թո՛ղ առնեն, չեթե կարող են. ճակատագրից չպիտի փախչենք, չես, դոնե, այդ ապանության խաղաղին կխոցոտեմ նրա հարազատների սիրտը։

— Բայց, տեր իմ, այդ վորոշումը կարի վտանգավոր է, նկատեց Բենչիրը. այս հայերը բնավ խաղաղասեր չեն. նրանք չեթե դրավում են մի քաղաք, մեղ նման չեն կոտորում նրա բնակիչներին։ Այդպես եղ, չեթե Դվինը դրավեն, մնաս չեն հասցնիլ մեր անձին կամ նուիրիակ մեր զորքերին, չեթե միայն քո ցասումը գործադրած չլինես դու. բայց չեթե Սահակ իշխանին ազատես, այն ժամանակ մենք ամենքս անխնա կկոտորվինք։ Դու չես ճանաչում այս ժողովրդներին. բայց չես հաճախ ընդհարվել եմ նրանց հետ և ծանոթ եմ այդ ցեղի անսահման կատաղությանը։ Նրանք չեն կարող տանել այն անարդանաց, վոր դու կհասցնես նրանց իրանց իշխանին ազատելով։

Վասակիկանի վրա ազդեցություն արին զորապետի խոսքերը և նա գլուխը կախելով ընկավ մտածության մեջ։

— Ի՞նչ անենք, ուրեմն, հարցրեց նա վերջապես մտախոհ աչքերը զորապետին ուղղելով և յուր նոսր, աղերսկ մորուքը հուշիկ շոյելով։

— Պիտի պաշտպանվինք, վորքան կարող ենք և պաշտպանվենք մեր բոլոր զորությամբ, վճռական ձայնով պատասխանեց Բենչիրը։

Այս վորոշման գալով՝ Վասակիկանն ու զորապետը բաժանվեցան իրարից։

Բայց հայոց բանակում խորհուրդ չկար այդ դիշեր։ Թագավորն ու իշխանները ազատվել եկին, վոր ամեն կողմից շրջթայած են Դվինը, մնում եր ազատել առավոտյան լուսին, վորպեսզի հարկ չեղած հետազոտություններն անելով, ըստ այնմ վորոշեին, թե արդյոք հարձակմա՞մբ թե պաշարումով պիտի դրավեն քաղաքը։

Բայց կես դիշերվա մոտ պահակ զինվորները լուր տվին սպարապետին, թե Նախիջևանի ճանապարհով սուրաց հնծելաղոր և առաջանում դեպի հայոց բանակը: Դրանք վոչ այլ վոք էին, յեթե վոչ վոստիկանի կողմից Դվնո այդ սահմանում կարգված պահանորդները, վորոնք վերջապես հայոց Շաբուհից հետանալն իմանալով՝ չտապում էին թե նրանց ճանապարհը փակելու (հուսալով մի վորևե տեղ հանդիպել նրանց) և թե վոստիկանին տեղեկություն տալու:

Սպարապետն ընդունելով, թե դրանք իրանց յետևից չըլափառելու և Դվնո կողմից լինելիք հարձակման նպաստելու մըտքով են դալիս, պատվիրեց խոհուն Վահրամ սեպուհին դիմավորել նրանց յուր հնծելամարտով: Վերջինիս միացան նաև Մոկաց քաջերը:

Վեղիի ներքին հովիտներից մեկում սեպուհը հանդիպեց սրարապի հնծյալներին և հրամայեց նրանց զինաթափ լինել:

Սրարապիք, վոր մթան պատճառով հայոց բազմությունը չտեսել էկարողացան, պատասխանի փոխարեն՝ հարձակվել սկսան:

Այն ժամանակ սեպուհի հզոր ձայնը վորոտաց և հայոց քաջերը մեծաղդորդ աղաղակով ընկան թշնամու վրա:

Տեղի ունեցավ կատաղի ընդհարում: Բայց նա յերկար չտևեց: Սրարապիք խոհուն զդացին թե վորքա՛ն բազմաթիվ են իրանց դեմ սուր շարժող բազուկները, ուստի մի փոքր ընդդիմությունից յետո, վոր, սակայն, տասնյակ զինվորներ արժեց իրանց, դինադուլ խնդրեցին:

Վահրամ սեպուհը հրամայեց կոտորածը դադարեցնել և սրարապի հնծյալներին զինաթափ անելով և ձիանը խլելով՝ իրանց դերի վարել բանակը:

Ցավ վորովհետև հետևյալ որը նրանք տեղեկություններ տվին սպարապետին այն պահակախմբերի մասին, վորոնք դտնվում էին Ալաթա, Բերդկանց և Կողբակորի ճանապարհներում, ուստի Մարզպետունի իշխանը՝ հրաման առնելով արքայից, մի քանի տասար զորախմբեր ուղարկեց այդ կողմերը սրարապի հնծյալներին հալածելու համար, վորոնցից քաղաքի հետ ունեցած ընդհարման դեպքում նրանք յետևից հասնելով չխանգարեն իրանց: Հայոց զորախմբերը, վորոնք դիմեցին հիշյալ ճանապարհները՝ Վահրամ Սեպուհի, Սմբատ իշխանի և Մոկաց տերոջ առաջնորդությամբ, պատահելով հազարացի պահակախմբերին, հարձակվեցան նրանց վրա և քիչ կամ շատ կոտորած

անելուց յետ՝ նրանց մի մասը հալածելին դէպի Աղբակատակա-
նի կամ Կորդվաց կողմերը և մյուսը դէպի՝ բանակը բերին։

Աչոտ բանալորը, վոր խոստացել եր յուր ղորքերով ողնել վոստիկանին, լսելով Աբաս Թադալորի՝ յուր դաշնակիցների հետ միասին Դվին հասնելը, այլև նրա ղորքերի տարած քանի մի հաղթութիւնները, վոչ միայն յետ կացավ Նորին ողնելուց, այլև յուր ղորքերը Բաղարան ժողովելով՝ ինքը ևս ամրացավ այդտեղ։

Իսկ Աբաս Թադալորը Դվինս հաղորդակցութիւններն ամեն կողմից կտրելուց յետ՝ խորհրդի հրավիրեց յուր իշխաններին վճռելու համար, թե ի՞նչ կեղանակով սկսեն հարձակումը։

Գևորդ սպարապետը, վոր քանի եր գնահատում հայ ղորականի կյանքը, խորհուրդ տվավ Թադալորին՝ ամենից առաջ Նորին առաջարկել՝ քաղաքը հանձնել իրանց առանց պատերազմի։

— Ենթե նա կհոժարվի, բարի, ենթե վոչ, այն ժամանակ մենք մեր հարձակումը կսկսենք, առաց սպարապետը։

— Այո՛, ենթե նա իմանա, թե ինքը ղուրկ և ամեն ճնշումներից, դուցե չկամենա դրդռել մեր զայրույթը և այդ հանդամանքը հավասարապես շահ կբերե թե՛ մեզ և թե՛ իրան, ավելացրեց Սմբատ իշխանը։

Աբքային հաճո թվեցավ այս առաջարկութիւնը, և դաշնակից իշխանները ևս համաձայնեցան նրա հետ։

Նույնիսկ այդ որը Աղնձայց Նահապետը մի քանի աղատանների ընկերակցութիւնով դիմեց Դվին՝ վոստիկանի հետ խոսելու։

Նորը ամբրան պատվով ընդունեց նրան յուր սպարանքի չքեղ դահլիճներից մինում և հաճութիւն հայտնեց լսել հայոց Թադալորի պատգամը։

— Աբաս արքան հրամայեց ինձ ասել մեծափայլ ամիրային՝ խոսել սկսավ Նահապետը, թե Դվինը հայոց աշխարհի մայրաքաղաքն է, թե նրան հիմնել և տիրել են հայոց Թադալորները, և թե վերջին տարիներում նա պատճանել է հայ իշխանապատութեան։ Ամիրապետի վոստիկանները կարող եյին նստել այդտեղ՝ իբրև յերկրի շահատանում և դանձել ամիրապետի հասույթները։ Բայց նրանք իրավունք չունեյին նրան դրավելու և նրա միջոցով էլ յերկրի աղատութեան վրա բռնանալու։ ըստ վորում այդ յերկրի կառավարը հայոց Թադալորն է, իսկ ժողովրդի աղատութեան տերը՝ ինքը ժողովուրդը։ Ճուտուխը և նրա

նախորդները անիրավ հափշտակությանց հետ միասին՝ հաճախ քամահրել են նաև Դվինս վրա։

Բայց այդ պատահել է այն ժամանակ, երբ հայոց իշխանները անջատվել են իրանց թագավորից և կամ վատաբար դավաճանել են նրան։ Իսկ այժմ վորովհետև հայ իշխանները միացած են ինձ հետ և իմ զորքերը հավատարիմ են ինձ, ուստի չես զարմանալ եմ և հենց այդ պատճառով էլ թույլ չեմ տալ, վոր Յուսուֆի հաջորդը դնա նրա չավղով, կամ թե բռնանա իմ ժողովրդի վրա։ Չհիշելով անգամ այն, վոր Նորը ամիրան բարեկամության ուխտ և դրել հանդուգնյալ արքայի հետ և վերջը դրժելով յուր ուխտին՝ պատերազմել է հայոց գահի դեմ լարած դավաճանության...չհիշելով այն՝ վոր նա անիրավաբար հափշտակել և հայոց կաթուղիկոսարանը և կաթուղիկոսի աթոռը տարաշրել վոստանից, վորի համար չես իրրև իմ յնկերցվո պատշաճան, պարտավոր էլի արժանավոր հատուցումն անել նրան, այսուամենայնիվ, չկամենալով արյունհեղության պատճառ դառնալ, չես առաջարկում եմ վոստիկանին խաղաղությամբ հանձնել ինձ իմ քաղաքը, վորից չետ և չես կթուլատրեմ իրան ալլսա ապրել յուր ապարանքում։ Հակառակ դեպքում, յերեթ չես Դվինը գրավելդ ուժով, այն ժամանակ թո՛ղ վոստիկանը իմանա, վոր առաջին սրն իսկ բնաջինջ կանեմ թե յուր զորախմբերը և թե Դվինս բոլոր ամիրաներին, վորոնք կալվածներ ունին վոստանում և ապարանքներ՝ Դվինս հրապարակներին վրա... Բայց այս, չես չեմ խնայիլ նույնիսկ իրան վոստիկանին։ Եվ այս ամենն անելով հանդերձ՝ չես թշնամացած չեմ լինիլ ամիրապետին, այլ պատժած միայն նրա զործակալին, վոր անխոհեմությամբ խռովում է իմ յերկիրը...»։

Վոստիկանը, վոր սկզբում խաղաղ սրտով ականջում եր պատգամավոր իշխանին, վերջին խոսքերը լսելուն պես վեր թռավ տեղից և հուզված բացականչեց.

— Ջո այդ նոր թագավորն ավելի հանդուգն է քան յուր նախորդը...։ Ասա՛ նրան, վոր չես չեմ ընդունում հաշտության վո՛չ մի պայման և վոր չես իրավունքով տիրում եմ այն քաղաքին, վոր յերկու հարյուր տարի սրանից առաջ գրավել է արաբական սուրը։ Թո՛ղ հառաջ վարե նա յուր զորքերը և ուժով գրավե այս քաղաքը, յերեթ կարող է։ Բայց միևնույն ժամանակ թո՛ղ չմոռանա, վոր նա կռվում է արաբացոց յերկինավոր ամիրապետի և վոչ թե նրա վոստիկանի հետ...։

Պատշամավոր իշխանը վերադարձավ յուր հետևորդների հետ և հայտնեց արքային Նորբի պատասխանը։

— Լավ ուրեմն, մենք մեր պարտքը կկատարենք և ցույց կտանք այդ հաղարացուն, վոր ամիրապետի անունով տրված պատանալիքները չեն կարող վո՛չ մեղ վախեցնել և վո՛չ էլ մեր իրավունքները շղթայել, ասաց Թաղավորը և ապա հրամայեց պարապետին հարձակման պատրաստությունները տեսնել։

Ներաղդավորից հետո հետ բերում էին պաշարման վերաբերյալ դործիներ և պարապահար մեքենաներ, վորպիսիք էին՝ խոյեր, բաղիստրներ, բարաններ, հրացան պարսեր և յերկաթե դանդաղանակներով սանդուխքներ, բարձած բաղմալուծ սայլերի վրա։ Այդ ամենը պատրաստել էր տվել Մարդպետունի իշխանը դեռ ևս արքայի Վասպուրականում յեղած ժամանակ։ Նրա հրամանակատարները, վորոնք ռազմական մեքենասլործություն հմուտ վարպետներ էին և վորոնք այդ բոլորը պատրաստել էին կատարյալ յեղանակով, այժմ էլ բանակում զբաղված էին նույնպիսի աշխատությամբ։ Նրանք կառուցանում էին փայտե շարժական աշտարակներ, կամ յեռահարկ մարտկոցներ, վորոնց պետք է մոտեցնեին քաղաքի պարիսպներին՝ նրանց քանդելու կամ այդ մարտկոցներից քաղաքը ղորք մտցնելու համար։

Բայց վորովհետև մեքենաները պարսպին մոտեցնելն արդելում էր լայն ու խոր խրամը, վորին մի քանի տեղ լցնելու համար դեռ բավիք կար ժամանակի, ուստի Թաղավորը հրամայեց առաջին հարձակումն առանց մեքենաների սկսել։

Այդպես էլ արին։ Ցեվ վորպեսզի պաշարյալների ղորությունը ցրեն, հայերը հարձակվեցան քաղաքի ամեն կողմերից։ Այնպես վոր հաղարացիք, բոլոր շրջապատի հետ կռվելու համար, ստիպված էին մարտկոցների պաշտպանությունը կիսով չափ նվազեցնել։

Հայերը, վոր հայտնի էին իբրև ընտիր նետաձիդներ՝ սկսան իրանց տարափը նախ ասպարապահակ շարքերի յետևից տեղալ, ապա հետզհետե պարիսպներին մոտենալով սկսան վանել դիմադիր հաղարացիներին։ Վերջիններս, սակայն, ղորապես կռվում էին այն խմբերի հետ, վորոնք կամենում էին սանդուխքներ մոտեցնել պարսպին։ Բացի կարթավոր յերկաթյա ձողերից, վորոնք մահ էին սպառնում սանդխքավոր ղորականերին, նրանց նետերն էլ քիչ չէին նեղում հարձակվող հայերին։

Այդպիսի մի ղորեղ դիմամարտ բռնկել էր Դվինո ամրոց

գան առաջ, ուր մի քանի մարտկոցներ պաշտպանում էին թե՛ բերկաթյա դուռը և թե՛ կրկնապարիսպը: Այդ մարտկոցները դրավելուց յետ հեշտ էր առաջին պարիսպը փլել, որով քաղաքի պաշտպանությունը կարի կ՚ուներ: Այդ պատճառով քաջերի մի հզոր խումբ դարձում էր այստեղ:

Բայց մարտկոցների բարձրից տեղացած տարափը և նամանավանդ դյուրավառ նյութերի հրահոսանը թույլ չէին տալիս հայերին անդուլ քայլեր մոտեցնել: Այդ պատճառով հարձակվողներին ողնության հասան հրձիգ զնդերը: Նրանք գլխներին վահաններ բռնած և խուճի ու խոտի խրճիթներ դրկած՝ արագ-արագ անցան խրամի վրայից և պարիսպներին մոտենալով կրակեցին խուրձերը մարտկոցների առաջ: Դրանց հետևեցին փայտակիրները, վերոնք մի քանի վայրկյանում ահագին քանակությամբ փայտ ու խոիլ դիզելով կրակված խուրձերի վրա, մեծ հրդեհ բորբոքեցին թե՛ պարիսպների տակ և թե՛ մարտկոցների առաջ:

Բոցածավալ կրակի ջերմությունն ու ծուխը վանեցին մարտկոցների վրայից արաբացի զինվորներին: Այն ժամանակ հրդեհից ազատ անջրպետներում հայերն անմիջապես սանդուխքներ դրին և սկսան բարձրանալ պատնեշների վրա և այդտեղից էլ մտնել մարտկոցները:

Արաբացիք այդ տեսնելով՝ ամբակապես հարձակվեցան խեզախողների դեմ. բայց վերջիններին չարունակ հետևում էին ուրիշ խմբեր: Զնայելով որ կրակի ջերմությունն ու ծուխը խեղդում էր մարդկանց, այսուամենայնիվ մարտկոցների վրա տեղի ունեցավ կատաղի ընդհարում: Հայերն ու արաբացիք կըռվում էին ինչպես վագրերի վոհմակներ. մի կողմից հանդուգն հարձակումը, մյուս կողմից հուսահատ ընդդիմությունը՝ կռիվը տարբերել էին զարհուրելի. սրեր էին, որ հարվածում էին, նիզակներ՝ որ չամփրում էին, վահաններ՝ որ ջախջախում էին և դիահներ՝ որոնք աչնան տերևների պես մարտկոցների բարձունքից թափթփում էին աջ ու ձախ: Ցեխ սակայն քաջերը քաջերի պատահելով՝ յերկու կողմերն էլ մնում էին անպարտելի:

Բայց վորովհետև ընդհարման կեսերում արաբացիք հետզհետե նվազում էին և հայերը, ընդհակառակը, բազմանում, այդ պատճառով առաջինները վերջ ի վերջո նահանջեցին: Հայերը տիրեցին հառաջապահ մարտկոցներին և անցան կրկնապարիսպը: Այդտեղ խռնվող հայերի և անջրպետը պաշտպանող ա-

բաբացիների մեջ դարձյալ փոթորկեց ընդհարումն։ Ցերկու կողմից էլ կոտորած չեղավ, բայց վորովհետև հազարացիք նոր ոգնություն չստացան, ուստի այստեղ էլ նրանք պարտություն կրեցին։ Հայերը դրավեցին կրկնապարսպի տարածությունը և սկսան քանդել նրա պատվարները և հետզհետե լցնել խրամի մեջ։

Այս անսպասելի հաջողությունը, վոր ուրախություն պատճառեց թե թաղավորին և թե դաշնակիցներին, ստիպեց նաև Մարզպետունուն դոհ լինել տարած հաղթությամբ և զորքի ուժը խնայելու համար՝ հարձակումը դադարեցնել։

Զորքի մեծ մասը վերադարձավ բանակ, իսկ մյուսը դեռ աշխատում էր կրկնապարսպի վրա։ Ցերեկոյան դեմ բավական մեծ տարածություն նրանք վրել, հատակել էին և դրա հետ միասին խրամը լցրել, այնպես վոր հետևյալ որը հայերը կարող էին մոտեցնել ներքնապարսպին վոչ միայն մեքենաները, այլև պայտակերտ մարտիկոցները։

Բայց վորովհետև հայերի ունեցած կորուստն էլ աննշան չեր, ուստի արքայի հրամանով յերկրորդ հարձակումը մի քանի որ ուշացրին։ Այդ բոլոր ժամանակ պայտահարները լրբաղված էին Դվնո անտառում ծառեր կտրելով, խոխլ պատրաստելով, վորոնց մի մասը բերում լցնում էին խրամի մեջ, վորպեսզի, վորքան կարելի յեր, մեծ տարածություն ծածկեն ու հատակեն, իսկ մյուսը դնում էին պարիսպների առաջ, վորպեսզի ժամանակին հրդեհեն նրան։

Մի քանի որ անցնելուց յետո՝ թագավորն ու իշխանները վորոշեցին յերկրորդ հարձակումն սկսել։ Դրա համար վաղ առավոտվանից սկսան առաջ վարել պարսպահար մեքենաները։ Քոյերն ու եշ կոչվածները, վորոնցով գրաղվում էին ավելի քիչ։ մարդիկ և վորոնցով միայն խրամատները սլիտի բացվեր, մոտեցնում էին պարիսպներին։ Ծանրաշարժ բարանները, վորոնց սպասավորում էին հարյուրավոր հոգիք և վորոնցով ահագին ուժերը էին նետում պատվարները վրցնելու համար, կանգնեցնում էին աշտարակների առաջ։ Թեթև բաղխարանները, վորոնք խոյերի ու բարանների նման պատասպարաններ չունեյին, և վորոնցով յերկարարում նետեր կամ սվիններ սլիտի արձակվեյին, շարում էին պարիսպներից բավական հեռու, վորպեսզի պարսպից տեղացող նետերը չհասնեյին նրանց։ Իսկ պայտահարները, վորոնց թիվը շատ չեր, բայց վորոնք իրանց

Հզոր կազմությամբ ամենաապահով պատնեշներն էին պաշարող-ների համար, կանդնեցնում էին բուրգերի հանդեպ, վորտեղից կարող էին կամուրջներ ձգել դեպի այդ բուրգերը, զորքեր վոխադրել նրանց վրա և կամ ներքին հարկում հարմարեցրած խոյերով բուրգերը խրամատել: Այդ մարտկոցներն առաջանում էին հանչալով ու տանդաչելով, թնթևներն անիվների վրա, իսկ ծանրաշարժները գլանների ողնությամբ:

Այդ պատրաստությունները, վորոնք մի քանի որ տևեցին, հաճախ խանդարում էին պաշարյալները՝ մերթ հախուռն նետաձգությամբ և մերթ պարսատիկներից քար ու կրակ տեղալով: Թնդանոթ այդ բոլորից հայ զորականը չէր վնասվում, վորովհետև զործում էր զգուշությամբ և չարունակ պաշտպանվելով, այսուամենայնիվ զործը դանդաղում էր բավական:

Ցուրաքանչյուր յերեկո սպարապետի հրամանով զորքերը մտնում էին պարիսպներին, վորպեսզի գիշերվա պահուն ապրատիք վնաս չհասցնեին մեքենական պատրաստությանը: Նրանք այդ կարող էին անել պարիսպներից իջնելով և դյուրավառ նյութերով մեքենաները կրակելով:

Ցերբ ամեն ինչ պատրաստվեցավ, Թագավորը հրամայեց զորքերն առաջ վարել:

Մայիսյան առավոտ էր. մինն այն որերից, վոր գիշերամեն էլ կացուցանում Դվինը շրջակայքը, քանի չէ ծագել արևը, բայց վոր չուտով այրում ու մրկում է նրա դաշտը, յերբ արևը կանդնում է յերկինակամարի վրա:

Հայոց զորքերը նոր էին սկսում յերեել բանակից և դաշնակից իշխանները նոր սկսել էին քննել իրանց հարձակման գիրքերը, յերբ լուր հասավ Մարզպետությունն, թե Արտաշատի մոտ խլրտումն է սկսվել և զորքերը մի կողմից իջնում են գետի քաղաք: Այդ նշան էր, թե արարացիք պատրաստվում են պաշտն իջնելու:

Դվինո հրամանատարները վորոշումն էին արել անսպառ հարձակվել հայերի վրա և այն՝ յերկու կողմից, այն է՝ Դվինո և Արտաշատու: Դվինեցիք առվելից պիտի հարձակվեին, իսկ արտաշատցիք՝ յետևից: Այս կարգադրությունը մեծ հաջողություն կունենար, վորովհետև հարձակման համար ընտրել էին ամենահաջող միջոց. այսինքն այն վայրկյանը, յերբ հայերը կսկսեին բանակատեղը ձգել և պատնեշներից յետնելով դիմել գետի Դվին: Այդ ժամանակ նրանք հուսա չունենալով հանդիպել

վորևէ հարձակման, ավելի անհոգ և անպատրաստ կլինեին. ըստ վորում կռիվը դեռ պիտի սկսելին մի որ հետո:

Սակայն այս ամենը դուշակեց սպարապետը և հրաման արավ զորքին՝ բանակից չլինել կատարյալ պատրաստությամբ: Բացի այդ, նա կարգադրեց, վոր Մոկաց իշխանն ու Վահրամ սեպուհը իրանց դնդերով վերջինը լինեն բանակից և հետևապես զգուշանան, վոր Արտաշատու կողմը վորևէ խլրտումն տեսած ժամանակ՝ իսկույն իրանից անջատվին և հարձակվին նրանց վրա: Մյուս հառաջապահ դնդերը՝ ամենայն ապահովությամբ կարող եյին չերջափակել իրանց մեջ արաբացիներին, չեթե նրանք հանդգնեյին լինել Դվինից:

Սեպուհն ուրախությամբ լսեց այդ կարգադրությունը և նորեն հղացավ մի հանդուգն միտք. այն է՝ Արտաշատից չեզնողներին աստուծո ողնությամբ վանելուց յետո, թափանցել, մուտ գործել քաղաքը: Ցավ վորքա՞ն մեծ յեղավ նրա ուրախությունը, յերբ Մոկաց իշխանը, վոր յուր պես աներկյուղ՝ բայց իրանից ավելի ճեռներեց մի մարդ եր, համաձայնվեցավ նրա հետ: Հենց այս պատճառով սեպուհին ընկերացավ նաև Գոռ, իշխանը յուր քաջարի դնդով:

Ցավ իրավ, հաղիվ հայերը բանակատեղը թողեցին և վերջապահ դնդերը պատնեշներից հեռացան, ահա՛ Արտաշատու լայն հարթերան դռներից դուրս խուժեցին արաբացիք և վայրենի աղաղակով հայերի յետևից ընկան:

Հայոց վերջապահ դնդերը, վորոնց առաջնորդում եյին Գոռը, Վահրամ սեպուհը և Մոկաց իշխանը, և վորոնք բոլոր առ բոլոր սպասում եյին Արտաշատու կողմից լինելիք այդ հարձակման, յետ դարձան իսկույն և վորոտագին աղաղակով դիմեցին արաբացոց վրա:

Վերջիններըը, վորոնք չեյին սպասում հայերի կողմից վորևէ դիմադրության, կարծես հանկարծակիի յեկան, վորովհետև տեսան, վոր իրանց դաղտնիքը նախատեսնված և նրանցից: Այստուամենայնիվ չարունակեցին իրանց ընթացքը, մինչև վոր մեմյանց հանդիպելով՝ սկսան ընդհարվել:

Հայերը յերեք կողմից չրջապատեցին արաբացիներին, վորովհետև թվով գերազանցում եյին և սկսան նրանց հետ զորեղ դիմամարտ:

Անցավ կես ժամ. կռտորածը չարունակվում եր: Արաբացիք կռվում եյին քաջությամբ. բայց միևնույն ժամանակ չարունակ

նայում էին դեպի Դվին, հուսալով, թե ահա կրացվին շուտով նրա դռները և վոստիկանի զորքը դուրս կխուժե այդտեղից հայերին չփոթելու և իրանց ալակելու համար։ Բայց ժամանակն անցնում էր. հայերը չարունակում էին իրանց ջարդը և սակայն Դվնո կողմից ոչնուրյուն չէր հասնում։

Գաղտառը հետևյալն էր։ Վոստիկանն ու Բեչիրը տեսնելով թե հայոց զորքերի մի մասը արագությամբ շուռ եկավ ու ընկավ արտաշատցոց վրա, իսկ մյուս մասն անշարժ սպասում է Դվինից յելնողներին, զգացին, վոր նրանք դուշակել են արդեն իրանց դիտավորությունը, ուստի վտանգավոր համարեցին քաղաքի դռները բանալ և զորք հանել այդտեղից։

Իսկ Արտաշատու կողմը կռվողները տեսնելով, թե դվնեցիք իրանց խոստումը չեն կատարում, բավական յերկար դիմադրելուց և բաղմաթիվ զոհեր տալուց յետո, դիմադարձ յեղան և սկսան դեպի քաղաքը փախչել։

Հայոց առաջնորդները հրամայեցին զորքերին խառնվել արտաշատց հետ և միջամուխ լինել քաղաքը։ Ցնվ վորովհետև առաջին որինակը Գոռն ու սեպուհը տվին, ուստի զորքն անելկյուղ խառնվեցավ թշնամու հետ։ Հաղարացիք, վորոնք իրանց դլուխները կորցրած անձերնին փրկելու վրա էին մտածում, չկարողացան արդելք լինել ներս խուժող հայերին։ Ցնվ յերբ բերդապահը վտախտղներին ներս առած կարծելով՝ հրամայեց քաղաքի դռները դոցել, սարսափելով տեսավ, վոր յերկաթապատ վինդիները ջախջախվել են արդեն հայերի ձեռքով և թե նրանցից շատերը ներ կոտորած են սկսել քաղաքի մեջ։

Հուսահատությունը տիրեց հաղարացիներին, մանավանդ, յերբ դեպի վեր նայելով տեսան, թե միշնաբերդի վրա ծածանում է արդեն հայոց հաղթական դրոշակը։ Ուրեմն փրկության վերջին ապավենն էլ դրավված էր։ Այդտեղ բարձրացել էր Գոռը յուր քաջերով։ Վորովհետև հարձակվող հաղարացոց թիվը բաղմացնելու պատճառով միշնաբերդի զորքերը էս միացել էին նրանց հետ, ուստի բերդը մնացել էր անպաշտպան։ Գոռն այդտեղի սահմանթիվ պահակները ջարդելով՝ դրավել էր բերդը և յուր դնդի դրոշը ցցել հինավուրց դղյակի ճակատին։

Արտաշատ իրանց կատարյալ պարտությունը տեսնելով՝ դինադուլ խնդրեցին։ Ցնվ վորովհետև հայերը նույնպես հոգնել էին, ուստի անմիջապես կռիվը դադարեցրին և դինադադի

անելով արաբացիներին, քաղաքն ու բերդն առան իրանց հըսկողության տակ։

Հաղթության լուրը հասավ հայոց բանակը և ուրախությամբ լցրեց ամենքին, վորովհետև Արտաշատու դրավումով վոչնչանում եր այն միակ ամրությունը, վոր Դվինից զատ՝ կարող եր վտանգ սպառնալ հայոց հաջողությանը։

Հետևյալ առավոտ արքայական բանակը մոտեցավ Դվինս պարիսպներին և Գևորգ սպարապետի, Վահրամ սեպուհի և Սյունյաց, Մոկաց և Աղձնյաց իշխանների առաջնորդությամբ սկսավ յուր յերկրորդ և հղորագույն հարձակումը։

Արևը դեռ նոր եր Գնդա բարձունքը վոսկեզոծում և սակայն կռիվն սկսված եր արդեն։

Նետաձիգ գնդերը իրանց նետերի տարափն եյին տեղում, բաղնատրավորները ավիններ եյին արձակում, պարսատիկներից՝ կրակ եյին ցրվում, բարաններից ահավոր ռումբեր եյին նետում, իսկ խոյերն ու եչերը փորում, խրամատում եյին պատրիսպները։ Ինչ վերաբերում և չարժական աշտարակներին, նրանք մարտնչում եյին բուրդերի ու մարտկոցների հետ՝ մի տեղ վանելով պահակախմբերը, մյուս տեղ չարժական կամուրջներ վարտելով, յերրորդ տեղում բուրդի հողերը փլելով, և այլն։

Սաստիկ և աննահանջ հարձակումը մեծ վնասներ եր պատճառում պաշարյալներին, հյուծում եր զորքերը, հրդեհում եր մերձակա շինությունները և խախտում, անպիտանացնում եր ամրությունները։ Այսուամենայնիվ արաբացիք դիմադրում եյին քաջությամբ։ Նրանց նետաձիգներն ու սվինավորները փոխարինում եյին հայերին՝ որանցից առացած վնասը։ Բացի այդ, նրանք այրեցին հայոց մի աշտարակը, անպիտանացրին մի քանի խոյեր և իրանց յերկաթե կարթերով ու ճոպերով գլորեցին և կործանեցին բազմաթիվ սանդուխքներ և վերելյակներ։

Բայց և այնպես դիմադրության յեռանդը քանի գնում՝ նվազում եր պաշարյալների մեջ, մանավանդ վոր նրանք ստիպված եյին կռվել քաղաքի բոլոր շրջապատի հետ։ Մի քանի կետերում հայոց հարձակումն ու հասցրած տպավորությունը այն աստիճան սաստիկ եր, վոր արաբացիք ստիպված եյին նահանջել դեպի ներքին պատնեշները, արտաքինը թողնելով բախտի կամքին, վորոնց և հայերն անմիջապես գրավեցին։

Բացի այդ սպարապետի առաջնորդությամբ կռվող զորա-

դունդը հաջողել էր քաղաքի չերկաթյա դռներից մինը՝ բարձրանից արձակված ռումբերով՝ ջախջախել, որից հետո զորականն սկսել էր դռան յուրին սրահակը փորել: Այդտեղ լցված խիճն ու ավազը դուրս հանելուց յետո, արդեն պիտի բացվեր քաղաքի մուտքը: Թնդանոթ արաբացիք կարող էին նրա առաջ փայտի ու նավթի հրդեհ բորբոքել՝ ներս խուժողներին արգելելու համար, բայց պիմաղրության այդ միջոցը չերկար էր տևել. հրդեհի նյութը վերջ ի վերջո կապառեր կամ հայոց հրչիները կհանդցնեյին նրան:

Բնչերն այդ անդադրմանելի վնասը տեսնելով՝ չտատեց խուսյն վոսոխիանին ապարանքը և հայտնեց նրան, թե թշնամին կարող է շուտով ներս խուժել, ուստի խորհուրդ տվավ չտապել, ամրանալ միջնաբերդում և քանի հայերը չեյին խանգարում իրանց, զորքերը հետզհետե վերադրել այնտեղ:

Նորը ամենան, վոր չեր մոռացել Թաղավորի այն պատգամը, թե «յեթե յես Դվինը բռնությամբ գրավեմ, պետք է բոլորիդ սուր քաշել տամ», ոտտունկ վախեցավ, չերբ զորապետի խոսքերը լսեց:

— Միջնաբերդը մեզ չի պաշտպանել, քանի վոր քաղաքի պարիսպներն ու պատնեշները չեն կարողանում պաշտպանել, ասաց նա Բնչերին. յեթե Աբուսաշաը գրաված չլիներ, այն ժամանակ դուն կարելի չեր հուսալ միջնաբերդի վրա, վորովհետև նրա դնդնամթերքով կարող էյիր ապահովել Աբուսաշային, յեթե անխուսափելի վտանգ հասներ մեզ: Փախստյան այդ ճանապարհը փակված լինելով՝ մեծ չարիք կհասնի մեզ, յեթե ամրանանք միջնաբերդում: Դրանով նախ՝ մենք չենք կարող ապահովել մեզ, վորովհետև հայերը կամ վերջ ի վերջո բերդը կգրավեն, կամ չերկար պաշարումով ոսկամահ կանեն մեզ. յերկրորդ՝ մենք այդ ընդդիմությամբ ավելի կդրգռենք մեր թշնամու զայրույթը և նա միջնաբերդը գրավելուց յետո, այլևս չի խնայիլ վոչ զորականին և վոչ մեր անձին:

— Ի՞նչ անենք ուրեմն, վտանգը դռան մոտ է, հարցրեց Բնչերը:

Վոսոխիանը չպատասխանեց նրան. նա աչքերը գետնին հառած մտածում էր:

— Ի՞նչ անենք, տեր իմ, պատասխանու ժամանակ չիա, կրկնեց զորապետը:

— Գիտե՞ս ինչ...

— Հրամայի՛ր։

— Քաղաքը մեր կամքով պիտի հանձնենք հայերին։

— Ինչպե՞ս... հապա մեր այրքան կորուստն ու կտտորածը, բացականչեց Բեչիրը։

— Ով վոր խնայում է մնացորդը, վորքան էլ այն աննշան լինի, նա իմաստնարար է գործում, նկատեց ամիրան լրջությամբ. լեթե մենք համառինք, ավելի պիտի կորցնենք...

— Ուրե՞մն...

— Պիտի հանձնենք Թաղավորին յուր մայրաքաղաքը՝ մեր զորքն ու անձը փրկելու համար։

Բեչիրը գլուխը կախեց և լռեց։

Մի ժամից յետո, քաղաքի մեծ դռան աշտարակի վրա վայրահակ կախեցին մի կանաչ դրոշ, վոր նշան եր, թե պաշարյալները հաշտության են առաջարկում, խնդրելով ընդ նմին հարձակումը դադարեցնել։

Իսկ վորքր լինչ հետո դռները բացվեցան և յերևացին Նորբի պատգամավորները, վորոնք քաղաքի բանալիները բերում եյին հայոց արքային հանձնելու։

Իսկույն սպարապետը զինադադարի վողը հնչել տվավ և կատաղի ընդհարումը կանգ առավ մի վայրկենում։

Արաբացոց պատգամավորները հասան արքայի վրանը և վոսոխականի հաշտության պատգամը հաղորդելուց յետո՝ հանձնեցին Թաղավորին բերած բանալիները։

Հետևյալ առավոտ տեղի ունեցավ հայոց զորքերի հաղթական մուտքը դեպի Դվին։

Ամենից առաջ ներս մտավ Գևորգ Մարզպետունին՝ Արբատյան գնդով, վոր կրում եր սպարապետական դրոշը և դրավեց քաղաքի կարևոր դիրքերը՝ անսպասելի խլրտումներից ապահով լինելու համար. նրան հետևեցին դաշնակից իշխանները՝ յուրաքանչյուրը յուր զորախմբով և իշխանական դրոշով։ Ապա դալիս եր Վահրամ սեպուհը, առաջնորդելով հեծյալ գնդերին։ Դրանց հետևում եր արքայական հեծելախումբը՝ Թաղավորական դրոշակով, և ապա ինքը, Աբաս Թաղավորը՝ շրջապատված յուր աղատագունդ թիկնապահներով։

Ամենից հետո գալիս եր Գոռ իշխանը, բանակի վերջապահ գնդերով, վորոնք կրում եյին Մարզպետունյաց տան դրոշը։

Քաղաքի կարևոր կետերը բռնելուց յետո, սպարապետի առաջին գործն յեղավ տեղեկանալ, թե վո՞րտեղ է դտնվում

Սյունյաց Սահակ իշխանը։ Ցավ յերբ իմացավ, վոր նա փախ-
ված և մինչնաւերդում, իսկույն մի զորախմբով դիմեց այդ-
տեղ և մտնելով հինավուրց ղղյակը, ուր մնում եր իշխանը՝
և վորին տակավին հսկում էին արաբացի պահապանները, հա-
նեց նրան այնտեղից և պատվով ու շուքով բերավ արքայի մոտ։

Թագավորը, տեսնելով հորաքեռորդուն վողջ և առողջ, ու-
բախացավ և վարելով իշխանին ասաց.

— Մխայն ի պատիվ քո ազատութեյան՝ ներում եմ յես վոս-
տիկանին։ Թո՛ղ ապրե նա յուր ապարանքում և վայելե մեր
Դվնո բարիքները։

Ապա Սյունյաց հարազատները հանդիպեցին միմյանց և
ցնծութեյան արտասուքն աչքներին փարեցին իրար։ Ներանց ու-
բախութեյան մասնակցեցին բոլոր իշխանները։

Այնուհետև թագավորը Գևորգ սպարապետի և բոլոր իշ-
խանների ու զորքերի ուղեկցութեյամբ դիմեց ս. Գրիգորի տա-
ճարը, դոհութեյուն մատուցանելու աստծուն այն մեծ հաջողու-
թեյան համար, վոր նա պարգևեց իրանց։ Արքային դիմավորեց
Դվնո հոգևորականութեյունը յեկեղեցական չքեղ թափորով։

Տաճարից դուրս գալուց յետո Աբաս թագավորը դնաց Տիկ-
նոնի կոչված պալատը, վոր թեպետ մյուս ապարանքների
նման զրված եյին արաբացիք, բայց սպարապետն շտապել,
պատրաստել եր տվել արքայի բնակութեյան համար։

Հետևյալ որն աղատեցին նաև կաթուղիկոսարանը՝ հալա-
ծելով այդտեղից արաբական պաշտոնյաներին։ Դրա հետ մի-
ասին խլեցին նաև մյուս արքայազնի ապարանքներն ու աշքի ընկ-
նող վինութեյունները, վորոնցից ամեն մինը զրված ուներ մի
ամբար։

Ցերբ Գևորգ Մարզպետունին առաջին անգամ մտավ կաթու-
ղիկոսարանի մեծ դահլիճը, ուր առհասարակ զրված եր լինում
հայրապետական դահույքը, զղացվեց և արտասվեց։

— Ահա՛ վերջապես աղատեցինք և կաթուղիկոսարանը, բա-
ցակայնչեց նա հուղված ձայնով, բայց ու՞ր է կաթուղիկոսը,
ո՞ւր է նրա դահույքը... ինչո՞ւ այդ մարդը չհամբերեց այն-
քան, վոր աստուծո աջը ողնության հասներ...։

Նա ակնարկում եր հանգուցյալ Հովհաննես կաթուղիկոսին,
վոր յուր թուլ և կամաղուրկ բնավորութեյան չնորհիվ պատ-

ճառ դարձավ կաթուղիկոսական գահը դեպի հեռավոր Աղթամար փոխադրելու։

Այսուամենայնիվ ընդհանուր ուրախությունը մեծ եր, որովհետև մայրաքաղաքը վերջ ի վերջո զրավվեցավ հայոց քաջերի ձեռքով։

Ը

ՏՇՄՆ ՑԵՎ ՀԻՆԴ ՏԱՐՈՒՑ ՀԵՏՈ

Դվինո առումից անցել էին տասն և հինգ յերկար տարի-ներ։ Այդքան ժամանակի մեջ Արտսը թաղավորում եր խաղաղութեյամբ։ Հայաստանի ժողովուրդը մոռացել եր արդեն թըշնամիների հարձակումը, հափշտակութեյան, ավարառութեյան և նման արհավիրքների դադարումը։ Շինականն աղատ արորա-ղրում ու սերմանում եր արտը, այգեպանը՝ զարմանում յուր վողկները, պարտիզպանը՝ յուր ծառերը, առանց յերկյուղ կրելու, թե ահա՛ մի վորևե անակնկալ հարձակում կավերե, կվոչնչացնե յուր նեղութեյան ու քրտանց արդյունքները։ Այդպիսով խոպան դաշտերը, վոստաքանց այգիները, վոտնակոխ պարտեզները նորեն մշակվել, դեղազարդվել էին և լցվել բնութեյան բազմատոհմ բարիքներով։ Լինութեյան յեղյուրը սփռել եր ամեն տեղ յուր առատ պարգևները։ Ցեվ վորովհետև յերկրի խաղաղութեյունը յերկար ժամանակ չխանգարվեց, ուստի վոչ միայն հնաոավոր կողմեր վերաշինվեցան, այլ և ուրիշ տեղերից խաղաղակյաց ժողովուրդներ դունդադունդ հայոց յերկիրը դալթեցին, վորով հետզհետե դյուղերը բազմամարդացան, քաղաքները բարգավաճեցին, արհեստները ծաղկեցան և առևտուրը կենդանանալով՝ յերկրի մեջ էլ շահավոր շարժում ու կենդանութեյուն ստեղծվեց։

Ցեվ վորովհետև յերկրի խաղաղ դրութեյունից կախում ուներ նաև դպրութեյան ու արվեստի բարգավաճումը, ուստի Հայաստանի այն վանքերը, վորոնք խռովութեյան որերից արևեն ամայացել և շատերն էլ ավերվել էին, նորեն սկսան շենանալ և բարեկարգվիլ։ Վորովհետև այս ու այն կողմերը փախած կամ տարագիր յեղած առաջնորդներն ու մխաբանները նորեն

զարձան դեպի իրանց ուխտերը, ամէրածները նորոգեցին, քանդածները չինեցին, միաբանակիցներ ժողովեցին և փութաջան աշխատութեամբ սկսան այդ վանքերում ուսումն ու դպրութիւնը ծաղկեցնել: Ցեղ վորովհետև հայոց վանքերը մեծին Ներսէսի և ս. Սահակա որերից սկսած՝ դպրութիւն տարածելուց և ժողովրդի հոգևոր պետքերը հոգալուց զատ՝ պաշտոն ունէին նաև տկարները խնամելու, հիվանդները դարմանելու, ուսուցիչները ժողովելու և այլն, ուստի այդ վանքերից չատերում հիմնվեցան նաև վորբանոցներ, հիվանդանոցներ, հյուրանոցներ և ուրիշ կարևոր ապաստարաններ:

Այդ բոլոր հասարակական հաստատութիւններին հովանավորում եր ինքը Աբաս Թագավորը՝ վոմանց նպաստելով արքայական գանձարանից, վոմանց կալվածներ նվիրելով, ուրիշներին հասույթներ սահմանելով, և այլն և այլն:

Այդպիսով Աբաս Թագավորի որով վոչ միայն յեղած վանքերը բարեկարգվեցան, այլև նորերը հիմնվեցան և ծաղկեցին. ինչպես որինակ՝ Աբշարունյաց գավառի «Կամրջաձորի վանքը», վոր 300-ից ավելի միաբաններ ուներ: Նույն գավառի «Կապուտաքար վանքը», վոր հայտնի յեր յուր հառաջադեմ վանականներով: Շիրակ գավառի «Հոռոմոսի վանքը», վոր նշանավոր յեղավ յուր հյուրանոցով, ուր կարոտները վոչ միայն կերակուր, այլև հանդերձներ եյին ստանում: Նույն գավառի «Դպրեվանքը», վոր անչուշտ հայկական դպրութիւնը զերազանցապես ծաղկեցնելուն համար նույն անունն ստացավ: Դերջան գավառի «Մլաձորի վանքը», վոր Սիոն անունով մի ճգնավոր չինեց, վորով ապացուցվում եր, թե յերկրի մեջ տիրող խաղաղութեան շնորհիվ, վոր աստիճան եր հոգեկան դործերով պարապելու յեռանդը զարդացել: Այդպիսի վոգևորութեան արդյունք եյին՝ Խարբերդ գավառի «Մուսխասավանքը», կարնո «Հնձուց մենաստանը», վայոց-ձորի «Ցախայաց վանքը», վորոնք հայտնի յեղան իրանց չինարար միաբանութիւններով. և վերջապես Ուշունյաց գավառի «Նարեկա վանքը», վոր հայ ազգին տվավ փիլիսոփայութեան և բանաստեղծութեան մեջ հայտնի վարդապետներ: Ինչպես որինակ՝ Անանիա Նարեկացուն, վոր Թոնդրակեցոց հաղթահարիչը յեղավ և աստվածային վոդերդակ Գրիգոր Նարեկացուն, վոր յուր բանաստեղծական անզուգական հանճարով՝ կարողացավ արժանապես յերգել հավիտենականի գործութիւնն ու

բարութիւնը, վորի հոգեբուղխ աղոթքները ղարուց ի դալ մխինջային հայոց բարեպաշտները...:

Ենվ սակայն խաղաղութեան տարինների բերած անդորրութիւնը չթուլացրեց Թադեոսի քաջաղնական յեռանդը: Նա թեպետ մեծ ուշադրութիւն դարձրեց յերկրի ներքին բարեկարգութեան վրա, վորի մեջ և դտնում եր ժողովրդի իսկական յերջանկութիւնը, այսուամենայնիվ, բարձի թողի չարաչ նաև արտաքին թշնամիներից քաջասիրտ պաշտպանելու միջոցները: Վորովհետև դիտեր, վոր յուր յերկիրը շրջապատված և անկիրթ և բարբարոս դրացիներով, վորոնք յեթե վոչ այսօր, դուցե վաղը հարձակվելին յուր վրա, յեթե իմանային, վոր ինքը զուրկ և պաշտպանութեան միջոցներից:

Այս նպատակով արքայական բանակը դորացնելու դործը իշխան Մարզպետունուն հանձնելով՝ ինքն զբաղվեցավ արքայական դահի համար ապահովադրութիւն մի կայան ընտրելու և արհեստ ամեն կատարելութեամբ նրան ամրացնելու դործով: Վորովհետև Բերդզաւորը զուրկ եր անհրաժեշտ ամրութիւններից, իսկ Դվինն ընդարձակ դաշտի վրա լինելով՝ մեծ ուժ եր պահանջում պաշտպանելու համար:

Ենվ վորովհետև Վանա անառիկ բերդի պատկերը չեր հեռանում Թադեոսի աչքի առաջից, ուստի նա մտածում եր նորնյնիսկ մի ամրութիւն, յեթե չդտնվի իսկ, ստեղծել յուր յերկրում, վորպեսզի յուր նախորդների կրած նեղութիւններից ընդմիշտ ազատ մնա ինքը:

Այս դեպքում, ի հարկին, նա խորհուրդ արաւ Գևորգ Մարզպետունու հետ, վոր ռազմապետական փորձառութեան հետ միասին քաջածանոթ եր, մանաւանդ, հայրենի յերկրին և տա ամենից հարմար և բնական ամրութիւններով ուժոված տեղը Վանանդ դաւառի կարս քաղաքը դտաւ, վոր, նորա ասելով, կարող եր դահի համար ապահով ու դորաւոր կայան դառնալ:

Այդ բերդաքաղաքը հին ժամանակներում պատկանում եր քաջպդի Վանանդացոց նախահայրերին: Բայց նրան սեղմնաւորութիւնն անհայտ եր մարզպանց և, հարկաւ, վերարերում եր անհիշատակ ժամանակներին: Նա բաղկած եր ուղղակի Վանանդ դաւառի սրտում, կարուց դետի վրա և ուժոված եր բնական չորս մի ամրութիւններով:

Արևմտյան և հյուսիսային կողմից նրան արմնկաձև պատում եր դետը, վոր ուներ խոր հատակ և ժայռապատ ափունք,

վորոնք և քաղաքս պաշտպանում էին նրան այդ կողմից։ Իսկ արևելյան և հարավային կողմից բարձրանում էին պարիսպները և ժայռաշեն աշտարակները, վորոնք և կազմում էին այդ կողմի ամրությունները։

Ջաղաքի հյուսիս–արևմտյան անկյունում գտնվում էր միշնաբերդը, վոր բարձր և անկովելի քարափանց վրա թառած, պաշտպանվում էր միայն բնության ստեղծած ամրություններով, այն է, յերկու կողմից՝ դեպի խորահատակ հոսանքով և առատապար ափափաներով, իսկ մյուս յերկու կողմից՝ ուղղաբերձ և պարեխառը ժայռերով, վորոնք անմատչելի էին դարձնում նրան նույնիսկ ճարպիկ քարափնացներին։

Այդ տեղը ընտրելով յուր համար աթոռանիստ, Աբաս Թագավորը նախ և առաջ սկսավ միշնաբերդը զորացնել, ըստ վորում նրա ունեցած ամրություններն բավական չեր համարում։

Ցնվ այսպես չդոհանալով բնության ստեղծագործությամբ նա ավելացրեց նրա վրա արհեստի դյուտերը։ Նախ միշնաբերդի շուրջը պատեց հզոր պարիսպով և ատամնավոր աշտարակներով, իսկ բերդի շուրջը քաղաքս դիտելու համար՝ նրա արևելյան անկյունում կանգնացրեց բարձր և մեծամուր բուրդ։ Բերդի մուտքերը փակեց յերկաթյա դռներով, իսկ նրանց առաջ կանգնեցրեց քարաշեն պատնեշներ։ Սպա բերդի ներսում շինեց մթերանոցներ զենքերի և պաշարի համար, իսկ դրանց մեջ տեղում փորել տվավ ահագին ջրամբար, յերեք հարյուր քարակտուր սանդուխքներով, վորոնց վերջինը հավասարվում էր քաղաքի հատակին։ Դրանով ջրի պաշարը, վոր հաճախ անճնաուր լինելու պատճառ էր դառնում, ապահովվում էր ընդմիշտ։

Միշնաբերդի ամրությունները վերջացնելուց յետո, Թագավորն սկսավ քաղաքն ամրացնել։ Նախ՝ նրա արևելյան և հարավային կողմերը պատեց կրկին պարսպով, քառակուսի աշտարակներով և դժվարամատույց պատնեշներով։ Ապա նույն կողմերից փորեց ահագին խրամ, վոր և մինացնելով քաղաքի արևմուտքն ու հյուսիսը փակող դեպի հետ, քաղաքը յուր միջնաբերդով և քառակուսի դիրքով ընթե կղզիացրեց։ Ցնվ վերջիվերջո կարսը յերեք կողմերից, այն է՝ արևելքից, արևմուտքից և հյուսիսից շրջապատված էր Թումբերով, բլուրներով և խորաձորներով, ուստի Թագավորն այդ ամենի վրա հարմարավոր դիրքեր ընտրելով, կանգնեցրեց բազմաթիվ մարտկոցներ և փոքրիկ, պատնեշապատ բերդեր, վորոնք պատերազմի դեպքում

պետք ծառայելին քաղաքին իրրև հատուկատակ պատնեշներ։ Այդ բոլոր տեղերը նա լցրեց զորքերով, պահակախմբերով և պատերազմական զենքերով ու մեքենաներով։

Այդ ամենը վերջացնելուց յետո, Թագավորն սկսավ քաղաքը բաբելկարդել։ Նախ այդտեղ չինեց արքայական հոյակապ ապարանք, իսկ մի քանի տարում զեղեցիկ դղյակ, վորից հետո և ամբողջ Ներսղամավորից փոխադրեց կարս և վերջինս հռչակեց արքայանիստ վոստան։ Այդպես սկսավ զարդարել նրան նորանոր շինութիւններով, զեղեցիկ սարահարթներով, հասարակական ապաստարաններով, բաղանիքներով, աղուղաներով, նոր ուղիներով և համապատասխան կամուրջներով։

Այդ պատճառով արքայական վոստանը կարճ ժամանակի մեջ լցվեցավ բազմաթիվ ու բազմազան բնակիչներով, վորոնք և հիմնեցին այդտեղ ազգի ազգի արհեստանոցներ, վոստայնանկութեան դործարաններ, ընդարձակ վինարաններ և անընդհատ յերթևեկութեամբ ու կենդանի տուրևառուվ կարսը դարձրին բազմամբոխ և շահավետ քաղաքներից մինը։

Հասավ 943 թվականը։ Այդ տարին բոլորում էր Արաս արքայի գահակալութեան տասնևհինգերորդ տարեդարձը և սակայն դեռ նոր էր ավարտում կարսի դլխավոր շինութիւններից մինը, վորի հիմքը դրվել էր 13 տարի առաջ։

Դա տուրբ Առաքելոց հոյակապ յեկեղեցին էր, վոր բաբելաշէն Թագավորը հիմնարկեց 930 թվականին, իրրև յուր գահակալութեան առաջին առաւած ուղղած շնորհակալական առհավատչյա։ Նա դտնվում էր մի քանի տարորոտում, դեղադիր բարձրավանդակի վրա և կառուցած էր ժամանակակից հարստաբանական կատարելութեամբ։ Արտաքուստ նա հոյակապ էր, քանդակազարդ և ուներ բոլորշի—ութանկիւն ձև։ Իսկ ներքուստ կերտված էր խաչաձև, բաժանված տասներկու յերեսների վրա, վորոնցից ամեն մինը կրում էր առաքյալներից մինի պատկերը։ Սրածայր դմբեթը բարձրանում էր անյուն կամարների վրա և յուր վայրկեան խաչով հովանավորում էր թե յուր շուրջն ապրող բարեպաշտ ժողովրդին և թե հեռու, ժայռերի տակ չտառչող կարուց դետակին։

Վորովհետև ս. Առաքելոց յեկեղեցու ավարտման հետ մեր-

ին, ինչպես ասացինք, լռանում եր, նաև, արքայի զահակալության տասնևհինգ ամյակը, և այդ բոլոր ժամանակ հայրենիքն ու ժողովուրդն ապրել էին խաղաղ կեղծանկության մեջ. ուստի Աբաս Թագավորը ցանկացավ այդ առիթով չքեղ նվակատիք կատարել:

Այս նպատակով նա կարգադրեց՝ հրավեր ղրկել նախ կաթուղիկոսին և ապա յուր կերկրի իշխաններին, նախարարություններին, աղնվականության, հոգևոր միաբանություններին և նույնիսկ դրացի իշխողներին, վորպեսզի ամենքը հավաքվեն արքայանիստ կարսը, յուր կատուցած տաճարն ոծելու և նրա նվակատիքը տոնելու:

Այդ դեպքից կամեցավ ողուտ քաղել Մարզպետունի իշխանը և աղաչվել այն կերդման կապանքներից, վորով նա կապկանդել եր իրան Գառնո ամրոցում:

Ընակելով վոր նրա անորինակ անձնվիրության, աննման հայրենասիրության և անխոնջ ջանքերի շնորհիվ հայրենիքն արդեն վայելում եր անդորրություն, իսկ զահը՝ ապահովություն, այսուամենայնիվ նա դեռ իրան կապված եր համարում Գառնիում արած ահավոր կերդումով:

Նա խոստացել եր հալածել Հայաստանից վերջին հագարացին. և մինչև վոր այդ չաներ, չկիտի վերադառնար յուր ընտանյաց գիրկը, չկիտի վոտք դներ սեփական հարկի տակ:

Եթե այս պատճառով, ընակելով վոր հագարացիք արդեն ջախջախվել, յետ եկին քաշվել, ընակելով վոր Դվինը գրավվել եր հայերից, և արաբական իշխանությունն էլ չեր համարձակվում դավազան շարժել հայ ժողովրդի դեմ, այսուամենայնիվ վորովհետև Դվինում դեռ արաբացի ամիրաներ եկին նստում, իսկ Հայաստանի նահանգներում ապրում եր խաղաղ հագարացի ժողովուրդ, վորին պատճառ չկար հալածել յերկրի միջից և իրուր տեղը արաբացոց ամիրապետի արդար գայրույքը գրգռել, այս պատճառով Մարզպետունի իշխանը մնացել եր Գառնիից տարագիր, ասելով թե՝ վորովհետև ասուված չհաջողեց ինձ բոլոր հագարացիներին Հայաստանից վոնդել, ուրեմն նա չի կամենում նաև իմ վերադարձը:

Այս պատճառով այդ բոլոր տարիների ընթացքում նա ապրում եր Թագավորի մոտ, յերբեմն Եկրաղավորում, իսկ վերջերը Կարսում: Նրան այցելելու գալիս եկին, թե Գոհար

իշխանուհին, թե Շահանդուխտ հարսը և թե Գոռ վորդին: Բայց ինքը յերբեք չեր դնում նրանց մոտ:

Այսուամենայնիվ, վորովհետև իշխանը դեպի Ծերուքյուն եր դնում, և նրա մազերը արդեն սպիտակել էյին, ուստի վերջին տարիներում նրա մեջ ծնվել եր ցանկություն խնդրել կաթուղիկոսից աղաչել իրան յերդման կապանքներից, վորպեսզի, գոնե՝ մնացած ժամանակ կարողանա թաղվել Գառնո ամրոցում, ս. Մաշտոցի դերեզմանի մոտ:

Ծերուքյունը շատ անգամ բերում է յուր հետ այնպիսի քնքուշ ցանկություններ, վորոնք յերևաստորեվ զղացմունքների համար աղայական են թվում, բայց կյանքի դառնագույն վորձերից անցնող և աշխարհի ունայնության խակությունն ըմբռնող հոգիները հասկանում ու հարգում են այդ ցանկությունները:

Այդ եր պատճառը, վոր յերբ Աբաս թագավորն իմացավ, թե յուր սիրելի սպարապետը ցանկանում է արքայաշեն յեկեղեցու նավակատյաց առնին յերդման լուծումն առնել կաթուղիկոսից, չուզեց որ առաջ դրկել վեհափառին յուր հրավերը, վորպեսզի դրանով հաճույք պատճառե հայրենիքի լուսերևորին:

Հաղիվ սկսել էյին Կարսում նավակատյաց տոնի պատրաստությունները տեսնել, և ահա՛ մի անակնկալ դեպք արքայի և սպարապետի մտադրությունը խանգարեց:

Տայոց իշխանը լուր տվավ նրանց, թե ավխազաց Թագվորը՝ Աբաս արքայի դահակալության սկզբից սրդեն՝ հեռացած եր Հայաստանի սահմաններից: Վորովհետև յերբ նա իմացավ, թե հայոց հյուսիսային՝ ու հարավային իշխանությունները միացել են և ընդհանուր ուժով Դվինը վրա յեն գալիս, ինքը, չնայելով վոր այդ ժամանակ Ջլիկ-Ամրամի հետ ունեցած դաշնադրության զորությամբ զրաված եր Տայոց աշխարհը և դեռ տպատնում եր Գուգարքին, այսուամենայնիվ, վախենալով միացյալ զորության հետ ընդհարվելուց, յուր զորքերը հետզհետե հայոց աշխարհից հանեց: Իսկ յերբ Դվինո տանտեր լուրը հասավ նրան, նա զատարկից այդ նահանգի նույնիսկ յուր տահմանին մոտ յեղող բերդերը և զորքերն առնելով՝ քաշվեց Ախիսպիա:

Բայց վորովհետև Հայաստանի խաղաղություն, ընդհանրապես, խաղաղություն եր բերում նաև դրացի յերկրներին, ուս-

ակ այդ հանգամանքը, չատ անգամ, ծառայում եր և վնաս հայոց չահերին։ Եվ ահա՛ թե ինչ պատճառով։

Հայաստանը գտնվելով Միջին և Փոքր-Ասիայի, այլև Կովկասյան լերկրների մեջտեղում, հաճախ մի կողմից դեպի մյուսն արշավող ազգերի համար ծառայում եր կամ լրբև կամուրջ և կամ իրը պատնեշ։ Այնպես վոր՝ հարավից դեպի հյուսիս, կամ արևելքից դեպի արևմուտք անցնել ուզող աշխարհակալները կամ հակառակորդ ազգերը, ամենից առաջ ընդհարվում եյին հայաստանցոց հետ։ Եվթե սրանց ընկճում եյին, այն ժամանակ ազատորեն դիմում եյին դեպի մատչելյալ նպատակը. իսկ յեթե, ընդհակառակը, հաղթվում եյին որևեցից, այն ժամանակ յետ եյին քաշվում և այդպիսով հայոց ղրացիները, նույնիսկ հայոց ղոհաբերության դնով, ազատվում եյին սպառնացող չարիքից։ Այդպես սկսվել եր դարերից ի վեր և այդպես շարունակվում եր։

Եվ հենց այդ պատճառով, Հայաստանի խաղաղ յերջած ժամանակ, նրա դրացի ազգերն էլ խաղաղության եյին վայելում։ Բայց փոխանակ դրա համար քաջ կամ նահատակ հայերին չբնորհակալ լինելու, ընդհակառակը՝ հայոց չնորհիվ ձեռք բերած այդ խաղաղության արդյունքը, վոր լինում եր իրանց ղորացնելը, դործ եյին դնում հենց բարերար դրացու դեմ։

Այդպես էլ արին ափխազները։

Աբաս արքայի դահակալության որով, ինչպես աղվաններըս վրացիք, յեղերացիք, խաղտիացիք, քուրայեցիք, մկրեչիք և մյուս հյուսիսային ազգերը, նույնպես և ափխազիք՝ վայելում եյին կատարյալ անդորրություն։ Իսկ դրա հետևանքը յեղել եր այն, վոր նրանք ներքին բարեկարդություններով զբաղվելու ժամանակ դտնելով, հետզհետե ղորացել եյին։ Տասնևհինդ տարուց յետո, Բեր թագավորը նորից հիշեց Ցլիկ-Ամրամի հետ ունեցած դաշնադրությունը, վորի ղորությամբ Հայաստանի հյուսիսային նահանգները իրան պիտի անցնեյին, բայց վորոնցից նա ղրկվել եր այն ժամանակ՝ մասամբ վահրամ սեպուհից հալածվելով և մասամբ հայոց միությունից վախենալով։ Իսկ այժմ վորովհետև իրան բավական ղորեղ եր ղդում հայոց թագավորի հետ ընդհարվելու, ուստի հիշեց հին դաշնադրությունը։ Եվ չնայելով, վոր Ցլիկ-Ամրամն արդեն մեռած, իսկ ինքը Ափխազիայում նրան տված դավառները նորեն ստրկած եր, այնուամենայնիվ, ցանկացավ ոգուտ քաղել յերջած դաշնադրու-

թյունից։ Ցնծ հավատացած լինելով, թե կարող է ցանկացած նահանգները բռնությամբ խլել հայերից, մեծ զորք ժողովից և մատակ Տայոց յերկիրը։

Արաս Թագավորն այդ լուրն առնելով՝ չվարեց, վորովհետև չեր կամենում պատերազմ սկսել վորևէ դրացու հետ։ Նա դնահատում եր խաղաղության արժեքը և, մանավանդ, խնայում զորքերի կյանքը, վորոնց սիրում եր յուր վորդիների պես։ Բացի այդ, Բերը յուր անձնական եր, ուստի հույս ուներ, թե կարող է առանց պատերազմի՝ բանավոր հորդորներով համոզել և վերադարձնել նրան յուր յերկիրը։

Այս պատճառով Թագավորը խորհուրդ արավ Գևորգ սպարապետի հետ, և ինքնագիր նամակ գրելով Բերին, հարցրեց նրան, թե ի՞նչու համար և զորքով յուր յերկիրը մտել։ «Ցնթե մի կարևոր պատճառ քեզ չե ստիպում իմ և քո յերկրի խաղաղությունը վրդովել, ավելացնում եր Թագավորը յուր նամակում, ապա ուրեմն հիշիր, վոր յես քո քեռայրն եմ և քրիստոնյա դրացիդ։ Հեռևապես իմ բարեկամությունն ավելի չահ կարող է բերել քեզ, քան քո թշնամությունը։ Մտածիր ուրեմն լրջությամբ։ Հեռացիր աշխարհակալ ցնորքներից և դիտցի՛ր, վոր ա՛յն ազգը, վոր ստիպեց քեզ լուռ մնալ տասնևհինգ յերկար տարիներ, կստիպե այժմ հավիտյան լռել, յեթե չես կամենալ հաժարությամբ քո յերկիրը վերադառնալ»։

Նամակը Թագավորը հանձնեց Գոռ իշխանին, վորպեսզի տա, ապիսաղաց Թագավորից անհաջող պատասխան առնելու դեպքում, ուշի ուշով ծանոթանա նրա պատերազմական զորության հետ և այնպես վերադառնա Կարս։

Մինչև Գոռ իշխանի հասնելն՝ ապիսաղաց Թագավորը հասցրել եր դևալի Գուդարք և մտնելով նրա Արտահան գավառը, բանակ եր դրել Կուր գետի ալ ափին, Արտահան բերդից դեպի հյուսիս։

Իշխանը հասնելով ապիսաղաց բանակը, ներկայացավ Թագավորին։

Վերջինս, ել առաջվա նրբակազմ յերիտասարդը չեր։ Նա տրարտրացել եր և մարմինը յուր բարձր հասակի համեմատ աճելով, ստացել եր նրան մի զորեղ հսկայի կերպարանք։ Ցերիտասարդական դեմքը փոխվել եր առնականի, աղու աչքերը դարձել խստահայաց, իսկ քնքուշ, միշտ ժպտող յերեսը՝ ծածկվել հա-

բուսաց ընչացքով ու մորուքով, վորոնք նրան դարձնում էին խիստ ու խոշորաչեզ։

Բերը Դոռ իշխանին ընդունեց յուր վրանում, բայց կարի սառնությամբ, և առնելով նրանից հայոց թագավորի նամակը, ավանդ յուր դպրապետին՝ հրամայելով նրան կարդալ ի լուր ամբոխազաց իշխանների։

Նամակի ընթերցանության ժամանակ, նա ղեմքի վրա խաղացնում էր արհամարհական ժպիտ, իսկ յերբեմն էլ հոնքերը պատռելով՝ պատրաստվում էր կարծես չանթ ու կրակ թափելու։

Յերբ դպրապետը հասավ վերջաբանին, ուր Աբասն ասում էր՝ «Հայերը կստիպեն քեզ հավիտյան լռելու, յեթե չես կամենալ հոժարությամբ քո յերկիրը վերադառնալ», Բերը զայրույթից կատաղեց։

— Գնա և ասա՛ քո թագավորին, վորոտաց դեմքի Դոռը, վոր յես կարևոր չեմ համարում բացատրել նրան, թե ի՞նչ պատճառով եմ յուր յերկիրը մտել։ Այսքանը միայն կասեմ, վոր յես լսել եմ, թե նա նոր ու հոյակապ յեկեղեցի յե կառուցել Կարսում և պատրաստվում է նրա ոծման նավակատիքը կատարել։ Սա՛ վոր յես յեկել եմ այդ յեկեղեցին վրաց Տեսով ոծել տալու և մինչև վոր յես չմտնեմ Կարս, նա չպիտի համաձայնի վրևէ հանդես կատարել...։

— Շատ բարի, մեծազոր թագավոր, մենք ուրեմն կընտրանջենք քեզ պավելի պատվով մեր մայրաքաղաքը տանելու համար, պատասխանեց Դոռը հեղնությամբ և դուրս դալով թագավորի վրանից, ժողովեց խնդուն յուր մարդիկը և վերադարձավ վանանդ։

Ներկայանալով արքային՝ նա հաղորդեց նրան ամենայն թագավորի պատասխանը, ընդ նմին և պատմելով յուր առաքելության մանրամասնությունները։

Յերբ թագավորը տեղեկացավ նաև Դոռ իշխանի ամաչ պատասխանի մասին, ուրախությամբ բացականչեց.

— Կենցե՛ս, ի՛մ քաջ, դու պատասխանել ես նրան այնպես, ինչպես վոր վայել է հայոց արքայի պատգամավորին և քաջ ազարակեսի վորդուն։ Մենք ուրեմն կդիմավորենք այդ դառը թագավորին, և յեթե աստված հաջողե, կսովորեցնենք նրան վրաց յեկեղեցին հայոց Տեսով ոծելու յեղանակը։

Այնուհետև Թաղավորը հայտնեց սպարապետին յուր կամքը, որ նա՝ ճանապարհվելով շուտով դեպի Գուգարք և Թուլ չտալ Բևբին առաջանալ մինչև Վանանդ։

Մարզպետության իշխանը, որ մինչև վերադարձն արդեն կազմել ու պատրաստել էր զորքը, յերբ իմացավ Դուինից, որ ախխազաց հետ միացած են նաև մի քանի կովկասային ցեղերը, առաքհանդակ ուղարկեց Սյունյաց իշխաններին՝ շտապել իրանց զորքով դեպի Գուգարք։ Իսկ ինքը յուր բանակը չորս զորավոր մասի բաժանելով՝ առաջինը հանձնեց Ա.ստա արքայորդուն, որ արդեն չափահաս յերիտասարդ էր և ռազմական կրթություն առացել էր իրանից. յերկրորդը հանձնեց Գոռին. յերրորդը՝ Վահրամ սեպուհին, որ դեռ չէր դադարել ծերունի սպարապետի համհարզը լինելուց, թեպետ տարիքով պակաս չէր նրանից, իսկ չորրորդին՝ առաջնորդ յեղավ ինքը։

Աբաս Թաղավորը չկամենալով միայնակ թողնել սպարապետին, ինքը ևս միացավ նրա հետ՝ յուր վոստանիկ զորախմբերով։

Սակայն ախխազաց Թաղավորը, չնայելով յուր սպառնական պատասխանին և ունեցած զորությանը, մի քայլ անգամ չէր առաջացել դեպի հարավ։

Նա դեռ բանակած էր Արտահանում։ Եվ վորովհետև իմացել էր, որ հայոց զորքերը ժողովվում են Վանանդ, ուստի չէր վատահանում նույնիսկ Կուրն անցնել, վորպեսզի հանկարծ բնդդիմության չհանդիպի։ Նա ապատում էր դեռ տեսնել հայաստակորդին, ծանոթանալ նրա զորության հետ և այնուհետև միայն յուր զորքերի չարժման յեղանակը վորոշել։

Մի քանի որից յետո հայոց բանակը մտավ Արտահան և պատրաստվեց առաջանալ դեպի հյուսիս և հասնելով ախխազաց դրնդերին, բանակ դրավ նրանց հանդեպ, Կուր գետի ձախ ափին։

Գետրդ սպարապետը թեպետ ծեր էր և արքունիքում վարած խաղաղ կյանքի որերում զղում էր իրան ուժասուրկ, սակայն թշնամի ախխազների բանակը տեսնելուն պես, կարծես նորեն յերիտասարդացավ, նոր վոգի ու յեռանդ ստացավ։ Մի քանի ժամ հանգիստ առնելուց և զորքին էլ հանգիստ տալուց յետո, նա պատրաստվեց յուր նժույգը և վոտի հանելով զորքը, սկսավ նրա կազմվածքը կարգավորել։ Վորովհետև կասկածում էր, թե

դուցե ախխաղցիք անակնկալ հարձակում անեն իրանց վրա, հանկարծակի թե այդպիսով կչփոթեն հայոց հոգնած բանակը։

Այն մարդը, որը վերջին ժամանակները միայն յերդումից ազատվելու և գառնո մեջ թաղվելու վրա յեր մտածում, հանկարծ մոռացավ ամեն բան, յերբ հայրենիքի թշնամու բանակը տեսավ։ Նրան թվում եր, թե մահմեդական հավատացիներից ավելի դարշելի յեն քրիստոնյա դրացիները, որոնք ազատության և անարգ շահախրության պատճառով՝ հեյին խղճահարվում խաղաղակյաց մի ժողովրդի, կրոնակից մի դրացու անդորրությունը խանգարել, որոնք գալիս եյին ավեր ու ապականություն սփռելու մի ազգի մեջ, որ յուր բյուրավոր նահատակների արյամբ գնել եր արևելյան յեկեղեցու փրկությունը և որի վրդովից անձնվիրության եյին պարտական դրանք իրանց յերկրների խաղաղությունը։

Վրեժխնդրության վոգին ծնունդ առավ այդ ծերունու մեջ և նա ինքն իրան յերդվեց. կամ մնռնել այլևևս, կամ վերջնականապես ջախջախել այս թշնամուն...»։

Ցնվ նա իղուր չեր այդ յերդումը յերդվում. նա ղդում եր այդ վայրկենին, որ տարիքը իրանից վոչինչ չի պակասեցրել, որ նա այժմ էլ կարող է ա՛յնպես սուր շարժել, ինչպես ջուաջ, կամ նիզակով չամփրել նույնքան շեշտակի, որքան և յուր յերեսնամյա հասակում։ Ցնվ իրավ, այն միևոցին, որ նա կրակոտ նժույգի վրա նստած արշավում եր աջ ու ձախ և հրամաններ տալիս զորքին, նա կայտառ եր և աշխուժոտ, ինչպես մի յերիտասարդ։ Սպիտակ մազերն ու ալեզարդ մորուքը վոչ միայն չեյին նվազեցնում սպարապետական արժանիքը, այլ և կրկնապատկում եյին, տալով նրա դեմքին մի ազանձին վեհություն, իսկ զեն ու զարդին՝ ասպետական շուք։ Ցերբ նա հրամայում եր տալիս զորքին, նրա ձայնը դարձյալ վորոտում եր ինչպես տասնյակ տարիներ առաջ, իսկ ղորականն այդ ձայնին հնազանդում եր կուրորեն, վորովհետև նա վոչ թե սիրում, այլ պաշտում եր յուր հինավուրց զորապետին։

Առաջին որը ևնթ սպարապետն ու զորավարները ժողովվեցան թաղավորի մոտ խորհուրդ անելու, թե յե՞րբ և ի՞նչ յեղանակով սկսեն պատերազմը։

Մարզպետունի իշխանը, իբրև ամենից փորձառուն, խորհուրդ տվավ հարձակումն անել հենց այդ միևնույն գիշերը, կամ դոնե, լուսաբացին։

— Այդ կարևոր է նրա համար, ասում էր իշխանը, որ ախխաղցիք հուսալով թե մենք դեռ հոգնած ենք և, հետևապես, խույս պիտի տանք ընդհարվելուց, անպատրաստ և անկարող կլինեին մեզ դիմադրելու։

— Այդ միջոցը, դիտեմ, ամենահարմարն է թե թշնամուն չվոխելու և թե քիչ կորուստով հաղթություն ճեռք բերելու, խոսեց Թաղավորը։ բայց ի՞նչպես կարող ենք մեր հոգնած բանակը կուռ դիտից անցնել, քանի որ դրա համար պատրաստություն չունինք։

— Այստեղ կուռ դետը խորություն չունի, պատասխանեց Մարզպետունին, վորովհետև սա առաջին վտակն է, որ ինում է կարսա լճեներից։ Այրուձին հեշտությամբ կարող է անցնել, իսկ հետևակները ափից միայն պիտի ողնեն։

— Ո՞վ պիտի առաջնորդե այրուձին, հարցրեց Թաղավորը։

— Ես և Վահրամ սեղուհը, իսկ արքայորդին և Գուրը էշտրծեն արքայի հրամանատարության ներքո, պատասխանեց սպարապետը։

Թաղավորը հարցնելով իշխանի առաջարկության, համաձայնեցավ նրա հետ, միայն պայմանով, որ հարձակումն առնեն վո՛չ թե դիշերը, այլ լուսադացին, վորպեսզի հետևակների աշխատությունը ևս, որ նետաձգություն պիտի լիներ, ոգուտ բերե հեծյալներին։

Առավոտյան պահուն, յերբ արուսյակը նոր էր բարձրանում յերկնակամարի վրա, իսկ լուսո յելքը դեռ վորոշ չէր յերևում, հայոց բանակը վոչ մեկն վոտքի վրա էր, այլև պատրաստվել էր հարձակումն սկսելու։

Արքայորդին ու Գուրը իրանց հետևակ զնդերը կանգնեցրել էին կուռ դետի ուղղությամբ՝ բանակատեղից մի ստադարեղ հեռու, այնպես վոր զանվում էին ախխաղցիների հանդիպ և այդ կողմից էլ սպասում էին սպարապետի կողմից տրվելիք նշանին։

Իսկ Գևորգ Մարզպետունին վերցնելով յուր հետ հեծելազորը, անցել էր կուռի հանդիպակաց ափը։ Եվ վորպեսզի յուր անցքը ախխաղցիներից չնկատվի, նա հեռացել էր բանակից մի քանի վերաստ և չորսն անելով՝ դեռն անցել։

Յերբ արևելքն սկսավ չառագունել, սպարապետը հրամայեց զորքին՝ պատրաստել յուր ընթացքը։

Այդ ժամանակ ախխաղաց բանակում հանդստություն էր տիրում։ Թաղավորն ու իշխաններն դեռ քնած էին, իսկ զորքի

մեծ մասը վրաններում փակված։ Ճերը լուսը թաղվեցավ այնքան, վոր կարելի չեր դեսի մյուս ափը նշմարել, պահակները տեսան, վոր հայոց պղծերը շարեշար կանգնած են իրանց հանդեպ։ Ահա մասին նրանք տեղեկացրին պղտպետներին, վորից և խևուշն խլրտում ընկավ ախխաղցիների մեջ։ Վերջիններս, արդարև, մտադիր էլին այդ օրն ևեթ իրանց հարձակումն սկսել. բայց այդքան վաղ կռվելու վրա նրանք չէլին մտածել։ Ջորապետը յերկյուղ կրելով դարանակալ հարձակումից, հրամայեց պրծքին զինքի դիմել խևուշն։

Բայց նրանք դեռ այդ պատրաստության մեջ էլին, յերբ հայոց հնծելազորը, ինչպես հանկարծահաս մի փոթորիկ, վրա-բռնաճայն ավազակով ընկավ նրանց վրա։

Ախխազցիք չփոթվելով դուրս թափվեցան վրաններից, խառնվեցան իրար և աշխատում էլին ճակատ կազմել. բայց ի զո՞ւր։ Նրանցից շատերը դեռ անզեն էլին, վոմանք կիսամերկ և քիչերը միայն զինաւոյալ։ Բացի այդ, պրծքերի մի մասը խմբվում եր, իսկ մյուսը ցրվում, ըստ վորում հայերը հարվածում էլին ասատկությամբ՝ թույլ չտալով վոր նրանք միանան իրար հետ։ Վրա հասնող իշխանների և մանավանդ պրտպետի ձայներն ու խրախուսը վոգի տվին մի վոքր չփոթված պրտակներին և նրանք կարգի դալով՝ ճակատ կազմեցին։ Հետևհետե հասան և նոր զինված խմբեր, վորոնք մեյցան առաջիններին և սկսան քաջարար դիմադրել հայերին։ Այսուամենայնիվ, վերջիններն թափն այնքան զորավոր եր, վոր ախխազցիք, չնայելով վոր կռվում էլին հերոսաբար, բանակատեղը պաշտպանել չկարողացան։ Հայերը նրանց դուրս քշեցին պատնեշներից և կռիվը բորբոքեցին բաց դաշտի վրա։

Այդ ժամանակ ահա՛ յերևաց Բեր Թաղավորը շրջապատված հանկարծակիորեն թիկնապահներով և սկսավ խրախուսը կարդալ յուր զորականին։ Վերջինս թեպետ բավական վերջուանել եր, սակայն վոգի առավ Թաղավորի ճայնից և սկսավ նոր ուժով խիղճել Թշնամու դեմ։

Բայց վորովհետև հայերը մղել էլին նրանց դեպի Կուբի ափը, վորպեսզի իրանց նետաձիգներին մոտեցնեն, ուստի հենց այդ վայրկենին էլ հայ հետևակները սկսան իրանց նետերը առաղել և այն՝ այնպես առատիկ, վոր ախխազցիք մի վայրկյան մըհացին չվարած։ Նրանք չդիմեցին հնծելազորի՛ հետ կռվելն, թե՛

նետաձիղների դեմ պաշտպանվելն, որոնք ժամանակ չէին տա-
լիս իրանց, մինչև անդամ, վահանափակ կազմելու։

Վերջապես, չնայելով իրանց հերոսական դիմադրության, ափ-
սոդցիք տեսան, որ չափից կարողանան յետ մղել հայե-
րին, և մանավանդ թե՝ յերկար դիմադրել յերկու կողմի հար-
ձակման, ուստի ձգեցին ճակատը և սկսան փախչել։ Վոչ թա-
գավորի հրամանները և վոչ զորապետի խրախուսը այլևս չը-
կարացին յետ դարձնել զորականին, որին հալածում էր թշնա-
մու բերած սարսափը։

Հայերն աղաղակով ընկան նրանց յետևից։ Այդ տեսնելով
մյուս ափի հետևակները, խուժեցին դեպի զետի ծանծաղուտը,
որի ջուրը նվազ էր, և հանդիպակաց ափը յելնելով սկսան
իրանք ևս հալածել փախչողներին։

Թշնամուն բավական հեռու քշելուց և նրա զնդերը ցիրու-
ցան անելուց յետո՝ հայերը վերադարձան, ժողովելով ափխաղ-
ցիների կապուտն ու կողոպուտը և հաղթանակով իրանց բանակը
մտան։

Նույն որը սպարապետը աւրհնանդակ ղրկեց Սյունիք, որ-
պեսզի այս հաղթության լուրը Սիսական իշխաններին հաղորդե-
լով՝ միևնույն ժամանակ հայտնի նրանց՝ զորքերն իզուր տեղը
չհանել Սյունիքից։ Բայց աւրհնդակն այդ զորքերին հանդիպեց
Ճանապարհի վրա, հենց Արտահանի սահմանի մոտ։ Սահակ և
Բարդեն իշխանները, որոնք իրանց յերախտապարտ էին հա-
մարում Արտա Թագավորին, ցանկացան ներկայանալ նրան և
անձամբ շնորհավորել յուր հաղթությունը։ Այդ պատճառով նր-
բանք առաջացան դեպի Արտահան՝ իրանց հետ բերելով նաև
իրանց զորքերը։

Արքայական բանակը, որ արդեն ուրախության մեջ էր,
Սիսական իշխանների և նրանց զնդերի զալստյամբ ավելի ու-
րախացավ։ Ճերմուկ որ շատունակ տոն էին կատարում նրանք,
խրախճություններ էին անում և իրանք իրանց տվել էին ղվար-
ճության, չհիասհածելով ընտել, թե ափխաղցիք կարող են վե-
րադառնալ կամ անակնկալ հարձակումն անել իրանց վրա։

Բայց հենց առավոտյան միևնույն պահուն, որ հայերը
հարձակվել էին իրանց հակառակորդների վրա, հասան ափ-
խաղցիք։

Բեր Թագավորը, որ չէր կարողացել տանել յուր պարտու-
թյան անարգանքը, նորեն համախմբել էր զորքը, դեղեցկապես

զինավառել նրան և բերել հաղթողների դեմ։ Դիչերանց կուռ գնան անցնելով՝ նրանք մոտեցան հայերին հենց առավոտյան ազդեքի ժամանակ։ Ճեվ յեթե լուսթյամբ հարձակվելին նրանց վրա՝ մեծ կոտորած պիտի անելին։ Բայց ասիսաղաց Թաղավորը կամենալով սարսափահար անել Թշնամուն, հրամայեց հարձակվել՝ գոռալը հնչեցնելով։

Այդ անակնկալ ձայները, արդարև, Թունդ հանեցին հայ զորաց սրտերը, վորովհետև անպատրաստ էլին. բայց միևնույն ժամանակ զգուշացրին նրանց՝ չելնել վրաններից առանց զենքերի։

Զորավարները, սակայն, դուրս վազեցին մի ակնթարթում և պահակախմբերի գլուխն անցնելով՝ դիմեցին դեպի պատնեշապատը՝ Թշնամու առաջն առնելու համար։ Իսկ սպարապետը յուր նժույգն աշտանակելով՝ սլացավ դեպի հեծելազորը, հեռևակախմբերը և առանց չսոթվելու՝ սկսավ կարգի բերել նրանց, խրախուսել խուճապող զորականին և արգելել խռնվուլների չսոթռթյունը։

Մինչ այս, մինչ այն, ասիսաղինները բանակատեղը վառեցին և բարձրագոչ աղաղակով սկսան գեռալ այս ու այն կողմը։ Նրանց մի մասը յելավ ցցապատ պատնեշների վրա և սկսավ այդտեղից վանել պահակներին, իսկ մյուսը՝ չրջապատեց վրաններն հրապարակը։

Հայերը Թեպետ արդեն զինավառ՝ բայց վհատված էլին Թշնամիներով. այսուամենայնիվ սպարապետի խրախուսյոր առաջ մղեց նրանց և մի քանի կետերի վրա սկսավ կատաղի դիմադարձ։ Ասիսաղինները մոռածել էլին զինաթափ անել հայերին. և հենց այդ պատճառով աշխատում էլին չարունակ յետ մղել նրանց դեպի վրանները։ Հայերը, ընդհակառակը, ջանք էլին անում ասիսաղաց գնդերը ճեղքելու։ Այս պատճառով ընդհարումը գնալով ատամկացավ և յերկու կողմերն սկսան կռվել սասկությամբ, առանց մինը մյուսին մի քայլ տեղի տալու։

Աբատ Թագավորը, վոր վատահ եր սպարապետի փորձառության վրա և բոլոր աու բոլոր սպառում եր, Թե պիտի հաջողե նա Թշնամու շղթան պատառելու և նրան դեպի դաշտը վանելու, տեսավ, վոր ասիսաղինք հետզհետե զորանում են, իսկ հայերը, ընդհակառակն, յետ մղվում դեպի վրանները, չատակց, զրահն ու զենքերը հագավ, ամեհի նժույգն աշտանակեց և փայլուն սուրը մերկացնելով՝ դիմեց դեպի Թշնամին։

— Ո՛ն, հառա՛ջ, քաջերս, վորտեղ նա և արքայի ձայնը ցնծաց հայերին: Մարտիկները տեսնելով վոր Թադավորն ինքը աջակցում է իրանց, կովելով հատարակ զորականի չարքում, նոր վոգի առան և ուժգին թափով ընկան Թշնամիների վրա: Թադավորի սուրը ճանապարհ բացավ նրանց համար և ամենքից քաջերը յետ մղվեցան մի վայրկյան:

Բայց վորովհետև ընդհարումը կենտրոնացած եր բանակատեղում, ուր հայերը շարժվելու աղատություն չունեյին, ուստի հուշտ եվ չկար, թե նրանք կարող են դուրս վանել Թշնամուն: Բայց մի հանգամանք հաղորդեց նրանց զորձը:

Սխտական իշխանները, վորոնք իրանց զորքերով բանակած եյին մի առատարեղ հեռու՝ խմանալով ամենայնիվ անակնկալ վերադարձը և արքայական բանակի վրա արած հարձակումը, պատրաստեցին խոշուն իրանց զորքերը և յերկու մասի բաժանելով նրանց, ընկան Թշնամու վրա յերկու հակառակ կողմերից և սկսան սաստկապես հարվածել նրանց:

Ամենայնիվ սակայնյան կռվել նոր ուժերի դեմ և այն՝ իրանց մեծությունը մի քանի տեղ բաժանելով: Այդ պատճառ յեղավ, վոր զանազան կետերում նրանք սկսան վերջոնել: Յեվ տպա հետզհետե դուրս մղվեցան դեպի դաշտը: Այդպիսով հաղողության ստորը հայոց կողմը թեքվեցավ և նրանք ուժգին թափով ընկան հակառակորդների վրա: Կռվելը բորբոքվեցավ ընդարձակ դաշտում և հետզհետե կատաղի կերպարանք առավ: Յերկու կողմերն էլ խիզախում եյին քաջությամբ, վորովհետև յուրաքանչյուր կողմից կռվում եր մի թագավոր, իսկ նրան հետևում եյին քաջ զորավարներ, վորոնք չարունակ դրդելով ու խրախուսելով՝ իրանք էլ կռվի դաշտում պտրում եյին հակառակորդներ:

Բայց ուժգին ընդհարումը մեծ կոտորած պիտի աներ և հաղթությունը յերկար անորոշ պիտի մնար, յեթե հայոց զորավարապետը՝ յուր զորքի ճակատագիրը վորոշելու համար, հին պարթևական հնարագիտության չդիմեր: Նա հրամայեց Գոռին և արքայորդուն վերադառնալ իրանց նետաձիգ գնդերով և հրապուրել ամենայնիվ իրանց հետևելու:

√ Գոռն ու արքայորդին հնչեցնել տվին վերադառնալու պայմանական փողը և հայոց նետաձիգ գնդերն սկսան արագությամբ փախչել:

Ամենայնից հեծելազորը հաղթական աղաղակով ընկավ նր-

բանց յետևից և բուն բանակից բաժանվելով՝ սկսավ հալածել վախչող հայերին։

Այն ժամանակ կռվող հայերն ընկան մնացորդ սիխաղլինեբի վրա և ուժգին թափով յետ մղեցին նրանց դեպի Կուրի ափը։

Իսկ փախչող հայ զինվորը յերբ տեսան, թե հետամուտներին բաժանել են բանակից և բավական հեռացրել, յետ դարձան մի ակնթարթում և սկսան նետերի տարափ տեղալ նրանց վրա։

Այս հնարը, վորին վաղուց վարժված էին հայերը, շվարեցրին սիխաղլիներին։ Նրանք տեսան, վոր չարաչար խաբվել են։ Ցեղ վորովհետև վոչ նետերի դեմ կարող էին դնալ և վոչ էլ նորին իրանց բանակը դառնալ, ըստ վորում հայերը փակել էին ճանապարհը, այդ պատճառով ապատության միակ յելքը փախուստի մեջ դտան։

Միևնույն ձևով սկսան վերջոռնել նաև գետափում կռվողները, կամենալով իրանց ուժերը ժողովել մյուս ափի վրա։ Այդ պատճառով նրանք ճակատը ձղելով դունդ-դունդ դեպի գետը խուժեցին։ Բայց հայերը նրանց միջոց չտվին փախչելու։

Շարունակելով իրանց ջարդը, նրանք հետամուտ յեղան սիխաղլիներին՝ նույնիսկ մինչև գետի ալիքները և արյից ապատվածներին սկսան խեղդել ջրերի մեջ։ Գետափը դիակներով ծածկվեցավ, իսկ Կուրի ջուրը արյան դույն առավ։

Բեր Թագավորը, վոր դեռ մի դունդ քաջերի գլուխ անցած կռվում եր կատաղությամբ, տեսնելով յուր զորքի տկարանալն ու վերջոռնելը, ինքը ևս վորոշեց փախուստ տալ ճակատից, վորովհետև համառելն այլևս անոգուտ եր. բայց նրան չրջապատեց Վահրամ սեպուհի դունդը։

Տեսնելով ապատնացող վտանգը, Բերը մոռչաց ինչպես առյուծ և ահագին սուրը տատանելով՝ սկսավ հարվածել ալ ու ձախ և ճանապարհ բանալ յուր համար։ Նրան հետևեցին յուր հուժկու թիկնապահները։ Բայց չրջապատողները վանանդացիք էին, հսկայակերպ ու կատաղի, իսկ նրանց հրամայողը՝ Վահրամ սեպուհը, այդ պատճառով Բերը հաղթել չկարողացավ։

Սկսավ կատաղի դիմամարտ. սրերը փայլում և հարվածում էին, նիզակները ճոճում ու չամփրում. ընկած քաջերին հաջորդում էին քաջազունները. և սակայն ափխազաց Թագավորը դեռ կանդուն եր ինչպես քարաժայռ։ Փոքր մի ևս և նա պիտի պատռեր վանանդացիների չղթան...։ Բայց հենց այդ միջոցին վորսաբնդոսա Թափով նրա վրա իջավ Վահրամ սեպուհի ահա-

վոր լախտը և հսկա Թաղավորին ամեհի ձիու վրայից գլորեց գետին։

Բերը նորից վեր թռավ, փորձ փորձեց յուր նժույգն աչառնակել, բայց շրջապատող քաջերը բռնեցին նրան, կապտեցին ահավոր սուրը և քաշ ավին իրան դնելի վրանափակը։ Նրա բախտին հանդիպեցին նաև նրա Թիկնապահները։

Թաղավորի դերվիշը. իբրև չանթ հարվածեց մնացորդ ախոյեաններին։ Առանց շրջելու հապաղելու կամ դիմադրել փորձելու, ձգեցին նրանք իւրեր ճակատը և ցրվեցան աջ ու ձախ, աշխատելով մի վայրկյան առաջ ազատել իրանց կյանքը վրնջխնդիր Թշնամու սրից։

Այսուամենայնիվ հայերը հալածեցին փախչողներին և ընբռնեցին շատերին անխնա կոտորեցին, ըստ որում հավատում էին, Թե որքան քիչ լինի Թշնամիների Թիվը, այնքան ավելի հանդիստ կլինի հայրենիքը։

Սարա վերադառնալով ճակատի տեղը, նրանք ժողովեցին ընկածների կողոպուտը և ուրախ սրտով դնելի բանակատեղը գնացան։

Թ

ՎԵՐՋԻՆ ԹԶՆԱՄՈՒ ՎԱԽՃԱՆԸ

Հետևյալ առավոտ Թագավորը ղորահանդես տրավ իմանալու համար, Թե ի՞նչ գնով և ձեռք բերել յուր մեծ հաղթությունը, վորի պատկեն եր Թշնամի Թագավորի ձերբակալումը: Ցեվ նա տխրությամբ տեսավ, վոր մի քանի ժամվա համառ ու դաժան ընդհարումը կորղել եր իրանից մոտ հինգ հարյուր կինվոր:

Ցեվ Թեպետ Թշնամու կորուստը քառապատիկ ավելի յեր, բայց նա դրանով չմխիթարվեցավ, վորովհետև ուրիշի դյանք չեր կարող յուր վնասը ծածկել:

Նա հրամայեց բերել յուր առաջ ամբոխազաց Թագավորին, վորի պահպանության հսկում եյին վանանդացինները:

Արքայական վրանի շուրջը դտնվող ընդարձակ դաշտի վրա՝ չարեչար կանգնած եյին հայոց զորքերը, վորոնց Թիվը հասնում եր մի քանի հազարի: Վրանի աջ կողմը բռնել եյին դրանիկները, իսկ ձախը՝ ազատաց դունդը: Դրանց հետևում եյին սեպուհ կոչվածները, ապա՝ Արարատյան, Բասենյան, Սիսական, Ուտիացի, Տայեցի և այլ գնդերը, վորոնցից հետևակները՝ առաջին, իսկ հեծյալները՝ վերջին շարքերում, բոլորն էլ ապառազինված: Դրանցից ամեն մեկի առաջ կանգնած եր յուր գնդապետը զրահազեստ և առնական դեմ ու դարդով:

Արքային, վոր կանգնած եր վրանի առաջ, շրջապատել եյին սպարապետը, արքայորդին, Վահրամ սեպուհը, Սյունյաց իշխանները և վոստանիկ Թիկնապահները: Դրանք բոլորը ապառում եյին գների Թագավորին, վորի հետ պիտի խոսեր արքան:

Ցեվ ահա՛ բանակի վերջում յերևաց Գոռ իշխանը, վոր նժույգի վրա նստած և սուսերամերկ առաջնորդում եր շղթայա-

կաղ թագավորին։ Նրա հետ եկին նաև յուր իշխանները, իսկ զրանց բոլորին շրջապատել էին նիզակավոր վանանդացիք։

Դեբի թագավորին անցկացրին զորքերի յերկար շարքերից և բերին կանգնեցրին արքայի առաջ։

— Վողջո՛ւյն քեզ, ափխազաց դյուցազն, խոսեց Աբասը խաղաղ ձայնով։

— Վողջո՛ւյն, քեռայր, պատասխանեց Բերը, հպարտ նայվածքով։

— Քեռա՞յր... մի՞թե այդ անունն ես տալիս ինձ, հարցրեց թագավորը։

— Ա՛յո՛։

— Բայց քեզ հետ խոսում է քեզ հաղթող թագավորը...

— Նա իմ ժառանգության հափշտակիչն է, և ուրիշ վոչինչ, ընդհատեց Բերը հանդգնորեն։

— Կարծում էյի, թե քո մեջ կդտնեմ մի ընկճված հոդի և ղղջացող սիրտ, նկատեց թագավորը ծանրությամբ. կարծում էյի, թե սիտի խոնարհիս և ներումն խնդրես այն չարչաց համար, վոր հասուցիր ինձ և այն վնասուն, վոր պատճառեցիր քեզ քո բանակին և թե իմ զորքին, անլրավարար և անխղճորեն կոտորել տալով հաղարավոր հոդիք, վորոնցից մինի՝ դեթ մի անդամը՝ դու տանջելու կարողություն չունիս... բայց դու տակավին անդեղջ ես և անդարձ և խոսում ես ինձ հետ նույն հանդուգն լեզվով, վորով խոսել էյիր իմ պատդամավորի հետ։ Արդյոք ճանաչացի՞լ ես կյանքից և մա՞հ ես պտրում, թե՞ ում հետ խոսելդ ես անդիտանում։

— Կյանքից չեր կարող ճանճրանալ Ափխազիո թագավորը, վոր իշխում եր ընդարձակ յերկրների վրա, վոր ուներ հարստություն, վառավոր ապարանքներ և գեղանի հարճեր... այդ պիտի դիտնա իմ քեռայրը։ Իսկ թե ո՞ւմ հետ եմ խոսում, այդ էլ չեմ անդիտանում։ Դու հայոց արքան ես, այո՛, և հաղթել ես ափխազներին ու դերել նրանց քաջ թագավորին. այդ մեծ վաստք է քեզ համար, խոստովանում եմ, բայց յես այդ վաստքը չեմ կրկնապատկիլ՝ քո առաջ խոնարհելով և ներումն հայցելով։ Շղթաները թո՛ղ իմ վոտքերը կապեն, բայց իմ սեղ հոդին նվաճել չեն կարող։ Յես քո թշնամիդ եմ և թշնամիդ էլ կմնամ. մի՛ կարծիր, թե անհաղողությունը կստիպե ինձ ձերբ և խլե իմ դլուխը խոնարհելու։

— Ցնթե այդպես է, յես ուրիշն կվարվիմ քեզ հետ ինչ-

պես իմ թշնամու և վոչ աներձագի հետ. հապ՛րտ յեղիր այսուհետև, վորքան կարող ես, բայց դիտցիր, վոր այդ հպարտությունը չի պակասցնիլ քո չղթաներից և վոչ մի ողակ և վոչ ել իմ հարդանքը կավելացնե դեպի քեղ՝ իբրև դեպի ազատասեր մի թագավոր. ըստ վորում ազատ հոգին չի բռնանալ ընկերոջ ազատության վրա: Բայց դու վոչ միայն այդ ճգտությունն ունեցար, վոչ միայն իմ դավառները հափշտակեցիր, և իմ ժողովրդի ազատությունը բռնաբարեցիր, այլև սպառնացիր՝ գալ և հայոց յեկեղեցին վրաց ծեսով ոծել... Դու ուրեմն վոչ թե ազատասեր թագավոր, այլ մի բռնավոր ես, և վոր չարագույնն ե՝ իմ գահի թշնամին: Իսկ աստված, վորովհետև հակառակ է բռնավորներին և կործանում է նրանց, ուստի քեղ ել ա՛մ մատնել և իմ ձեռքը: Ցես կարող եյի խնայել քեղ իբրև սուկ բռնավորի. բայց իրավունք չունիմ խնայել՝ իբրև իմ հայրենիքի թշնամուն:

Այս ասելով՝ նա դիմեց Գուրին և հարեց.

— Դու խոստացել եյիր, իշխան, առաջնորդել Ցեր թագավորին մինչև մեր արքայանիստը: Կատարի՛ր ուրեմն խոստումդ՝ և թո՛ղ այդ քաջը սովորեցնե մեզ այնտեղ՝ թե ի՞նչպես պետք է հայոց յեկեղեցին վրաց ծեսով ոծել:

Այս ասելով թագավորը դարձավ վրանը, առանց այլևս Ռիբրի յերեսին նայելու. իսկ վանանդացիները վերադարձրին զենքերնին դեպի իրանց կայանը:

Մի քանի որից յետ արքայանիստ կարսը տոնական հերարանք առավ: Նրա բազմաթիվ շինությունները, իշխանական ապարանքները, սարավուլները և մինչև անգամ բուրդելն ու մարակոցները զարդարվել եյին դուշնդուշն դորդերով, վառելով ու դրոշներով: Քաղաքի դռներից սկսած մինչև արքայական ապարանքը՝ մի քանի տեղ կանգնացրել եյին հաղթական կամարներ՝ դալար վոստերից հյուսած և ծաղիկներով ու նշաններով զարդարած: Փողոցների մեջ և հրապարակների շուրջը պատրաստել եյին խարույկներ՝ դիշերային լուսավառության համար: Իսկ անցուդարձի ճանապարհները լցվել եյին ժողովուրդով, շարժումը մեծացել եր և չչուկն ու ժխորը տիրել ամեն տեղ: Տանիքների, պատշգամների և դեպի վողոցները բաց-

վող պատուհանների վրա խռնվել էին կանայք ու աղջկունք, վորոնք դրսում պատելու սովորություն չունեին և հետաքրքիր աչքերով ու անհամբերությամբ նայում էին դեպի հեռավոր շրջականները:

Դրանք բոլորն էլ պատրաստվել էին մի փառավոր և հայ մարդու սրտին ուրախություն բերող դեպքի հանդիսատես լինելու:— Դա Աբաս արքայի և յուր քաջերի զորաց հաղթական վերադարձն էր:

Կարսի ժողովրդյան մեծագույն մասը քաղաքից յելնելով՝ դունդադունդ դիմում էր դեպի արքունական պողոտան՝ ժամ առ ժամ վողջունելու հաղթողների վերադարձը: Շատերն էլ խմբված էին քաղաքից դուրս դանվող պատնեշների չուրջը և կամ բարձրացել հանդիպակաց բլուրների վրա՝ անցնող զորահանդեսը ավելի լավ դիտելու համար:

Հայոց հաղթության և ափխազաց թագավորի ու նրա իշխանների դերվելու շուրը հասել էր քաղաք յերկու որ առաջ և ամենքին լցրել ուրախությամբ, ամենքի մեջ վառել հետաքրքրությունն՝ մի վայրկյան առաջ տեսնելու այն ամբարտավան թագավորին՝ վոր սպառնացել էր մտնել Կարս և արքայազնին յեկեղեցին վրաց ծեսով ածել:

Այժմ ահա՛ նա դալիս էր: Պետք էր, ուրեմն, տեսնել թե ի՞նչ յեղանակով և նա մտնում քաղաք· արդյո՞ք իբր թագավոր, թե՞ իբրև դերի··· Պետք էր տեսնել, թե ի՞նչ պատկեր ունի նա, ի՞նչ հասակ, ի՞նչ դեմք, ի՞նչ հայացք··· Զի՞ վոր այս ամենը ժողովրդի հետաքրքրությունը գրգռող բաներ էին:

Ցեղ ահա՛, վերջապես լսվեցան դալարափողերի ձայները և յերևաց հառաջապահ դնդերի դրոշակը: Ժողովուրդը, կարծես, մի աննկուն ոգորությունից մղված՝ միահամուռ կերպով հորդան ավալ առաջ և ուրախության աղաղակներով ողը թընդացրեց: Հնադհնադ յերևացին և հետևակ խմբերը, ապա և հնձելադորը, վորոնք տակավ առ տակավ հառաջանալով՝ Կարսի արևելյան դաշտահովիտը լցրին բազմամարմս մարդկությամբ:

Քաղաքի սահմանին մոտենալուց ժողովուրդն արդեն դորախմբերը չընդատեց, չկամենալով, կարծես, ճանապարհ տալ նրան: Յերբ հառաջապահ դնդերն անցան և յերևաց արքունական դրոշակը, կեցցեների վորոտընդոստ աղաղակն ողը թնդացրեց: Մի վոտքր հետո յերևաց և ինքը թագավորը, սեդ և վհատ, հագած վոսկեփայլ զրահներ և ծածկած նուշնափսի սա-

զավարտ, վորի ձյունաթույլ ցցունքը ծածանում եր աջ ու ձախ և հովանավորում վոսկեձույլ արծվին, վոր զարդարում եր նրա ճակատը: Նա նստած եր վոսկեսար նժույգի վրա և շրջապատված աղատախումբ թիկնապահներով, վորոնց դրահներն ու սպաղները փալփլում էյին արևի առաջ: Մոտենալով աջ ու ձախ ծովացած և հետզհետե աճող ժողովրդին, վոր վորոտաձայն կենցեներով յուր զալուստն եր վողջունում, նա քաղցրահայաց ու սիրաժպիտ պատասխանում եր նրանց՝ դլխի շարժումով:

Թագավորից հետո զալիս էյին վանանդացյի հետևակները, վորոնք իրանց հետ բերում էյին Բեր Թագավորին և նրա իշխաններին, բոլորին էլ հետիոտն և շղթայակապ:

Ժողովուրդը նրանց տեսնելով ցնծության աղաղակ բարձրացրեց. իսկ ավելի յեռանդոտներն սկսան ծաղրական բացականչություններ անել: Սակայն սպարապետը, վոր հետևում եր վանանդացիներին, ձեռքի շարժումով սաստեց ժողովրդին և անախորժ բացականչությունները լռեցին:

Յերբ Թագավորը ներս մտավ քաղաքի դռնով՝ հայ հոդևորականությունը դիմավորեց նրան յեկեղեցական թափորով և առաջնորդեց մինչև մայր յեկեղեցին: Իսկ ղորքերը հետզհետե ներս դալով՝ լցրին քաղաքի փողոցներն ու հրապարակները, հանդիսավելով ամեն տեղ սրտագին ընդունելության, վոր տղամարդիկ արտահայտում էյին բարձրադոչ կենցեներով և ցնծության աղաղակներով, իսկ կանայք՝ տների բարձունքից ծաղիկներ և կանաչ վոստեր ցրվելով:

Գուրգենդուխտ Թագուհին սպասում եր Թագավորին մայր յեկեղեցում: Նրան շրջապատել էյին պալատական տիկնայք ու իշխանուհիները: Այդտեղ ամենքի սիրտն էլ ուրախ և յերեսները ժպտում եր: Տխուր եր միայն Թագուհին, վորովհետև տեղի ունեցող հանդեսը, հայ ժողովրդի վոգևորությունը և դրսից լսվող ցնծության աղաղակները յուր հայրենի յերկրին, յուր հարազատ յեղբորը հասած դժբախտության համար եր լինում: Ի՞նչպես կարող եր նա այդ բոլորին ուրախանալ, քանի վոր գիտեր, թե յուր հայրենիքում ժողովուրդը սգում է:

Այսուամենայնիվ, իբրև հայոց դահի Թագուհի, նա պարտավոր եր ծածկել յուր տխրությունը, յերևալ ժողովրդին... և յեթե չուրախանար իսկ, չվիտի խանգարեր ուրիշների ուրախությունը: Եվ այդ ամենից ծանր դրությունն եր: Դխոյական պարտավորությունը բռնանում եր նրա բնական զգացմունք-

նների վրա։ Թագուհին հրամայում էր ջրոջը՝ մոռանալ յեղբոր դժբախտությունը և հրճվել ամուսնու և թագավորի տարած հաղթանակով...։ Եվ միայն կնոջ սիրտը, վորին բնությունն ավելի ճկունություն և տվել, կարող էր տանել այդպիսի վիշտը՝ կամ ծածկվել նրան ժպտալ շողերով...։

Ցերը թագավորն սպարապետի, արքայազն դրանիկների և հետևորդ իշխանների հետ մտավ յեկեղեցի և հոգևորականաց գլուխը դոհաբանական մաղթանք կատարեց, թագուհին մոտեցավ արքային և շնորհավորեց նրան հայոց բանակի հաղթությունը։

Թագավորը, վոր խանդակաթ էր դեպի թագուհին, կարդաց նրա աչքերի մեջ հայտնի վշտից առաջացած տխրությունը և ասաց.

— Վկա յես աստված և այս սուրբ յեկեղեցին, վոր հայոց բանակը արդարությամբ և զործել։ Բեր յեղբայրդ սպառնում էր իմ գահին և հայրենիքի ազատության. իսկ հայոց քաջերը պաշտպանեցին այդ գանձերը, վորովհետև իրանք ձեռք են բերել նրանց թանդ դոհաբերության դնով։

— Նա, վոր սպառնում էր քո գահին ու հայրենիքին, չի կարող իմ յեղբայրը լինել, ասաց թագուհին հանդիմարար։

— Ցեվ յեթե աստված չարաչար պատժե նրան, դու չպիտի տխրես, հարեց թագավորը. վորովհետև նա արդարությամբ և հատուցանում։

Այդ խոսքերը դող հանեցին թագուհու սիրտը. նա զգաց, վոր մի ինչ վոր նոր դժբախտություն պիտի հասնի յեղբորը, սակայն չրջասպատող պալատականներից, իշխանների և իշխանուհիների ներկայությամբ չկարողացավ հարցնել վոչինչ։

Բայց յերբ կարդպատից իմացավ, վոր թագավորը յուր հետևորդներով ս. Առաքելոց յեկեղեցին պիտի դնա, իսկ իրանք վերադառնան պալատ, կանչեց յուր մոտ Գոհար իշխանուհուն և շշնջալով ասաց նրան.

— Իմացի՛ր սպարապետից, թե ո՞ւր թողեցին յեղբորս...։

— Նա այստեղ քաղաքումն է, պատասխանեց Գոհարը։

— Գիտեմ, բայց վո՛րտեղ է բանտարկված։

— Ասում են, թե նրան ս. Առաքելոցը տարան։

— Ս. Առաքելո՞ցը, և ինչո՞ւ համար, հարցրեց թագուհին վախեցած։

— Չգիտեմ...

— Հարցրո՛ւ ուրեմն սպարապետին. իմացի՛ր, ի՞նչ պիտի

անեն նրան. արքայի խոսքերը լավ բան չեյին գուշակում... յես վախենում եմ. սիրտս ճմլվում է... Գնա՛, իշխանուհի. գնա՛ տեղեկացիր, յեթե մի դժբախտ վորոշումն են արել, պիտի աշխատենք արգելել...:

— Իսկո՛ւյն, մեծափառ թագուհի, ասաց իշխանուհին և դիմեց դեպի Գոռը՝ վորպեսզի նրա միջոցով տեսնվի ամուսնու հետ:

Թագուհու և պալատական տիկնանց դեսպանները արդեն հեռանում եյին յեկեղեցուց, յերբ վերջապես Գոհար իշխանուհուն հաջողվեցավ տեսնվել սպարապետի հետ:

— Ո՞ւր տարան Բերին, իշխան, և ի՞նչ են ուզում անել նրան, հարցրեց տիկինը:

— Ինչո՞ւ համար ես հարցնում, սիրելի իշխանուհի, զարհուրած Մարզպետունին կնոջը:

— Կամենում եմ իմանալ...

— Ուղարկեցինք ս. Առաքելոց յեկեղեցին:

— Բայց ինչո՞ւ համար:

— Վորպեսզի աղոթեն այնտեղ:

— Աստված իմ, դու կատա՞կ ես անում, բացականչեց իշխանուհին:

— Իսկ դո՞ւ:

— Ցես լրջորեն եմ հարցնում:

— Ցեվ լավ բան չես անում. միթե չգիտե՞ս, վոր Մարզպետունի իշխանը՝ դեռ մինչև այսօր՝ վոչ մի կին արտածից չի հայտնել այն, ինչ վոր պիտի կատարեր... Դու կարող ես հարցնել ինձ միայն կատարվածի մասին:

— Բայց...

— Հա՛, ի՞նչ կա, խոսի՛ր:

— Թագուհին ինքն է կամենում այդ իմանալ:

— Թագուհի՞ն... Ո՛ւ, այդ չպետք է ինձ հայտնեիր. յես արդեն գուշակում եյի: Բայց վոր հայտնել ես, յես պարտավոր եմ մի բանով պատասխանել: Գնա՛, ուրեմն, և ասա՛ նրան, թե պատերազմի դաշտում մենք կորցրել ենք հինգ հարյուր քաջարի զինվոր, և նրանցից վոչ մեկի քույրը դեռ չի յեկել և հարցրել ինձանից, թե ո՞ւր մնաց յուր յեղբայրը և ի՞նչ արինք նրան:

Այս ասելով սպարապետը շուռ յեկավ և հեռացավ իշխանուհուց, առանց այլևս նոր հարցի սպասելու:

Գիտեի՛ր, գուշակում եյի... Հո չենք կարող քրոջ սրտին

հրամայել, վոր դադարե... չտալենը ուրեմն քանի կանանց խարխափանքը յուր դործը չէ սկսել, չընկաց ինքն իրան սպարապետը և հետևելով Թալավորին, վոր յեկեղեցուց յելնելով՝ աշտանակում եր չհրխվարը, ինքը ևս Թռավ նժույդի վրա և առաջ անցավ։

Բայց ի՞նչ պիտի անեին նրանք ս. Աստքելոց յեկեղեցում։

Մի քանի որ առաջ, մինչդեռ դորքը բանակած եր Արտահանում, Թագավորը խորհրդի յեր հրավիրել իշխաններին վորոշելու համար, Թե ի՞նչ պիտի անեն դերի ընկած Բերին։

Իշխաններից մի քանիսը խորհուրդ տվին՝ սպանել, մյուսները՝ բանտարկել, իսկ սպարապետը, վորին շատ նեղությունները եր պատճառել այդ հինավուրց Թշնամին, պահանջեց, վոր կուրացնեն նրան։

Թագավորը, վոր Թագուհուն վիշտ չպատճառելու համար՝ բանտարկելու կողմն եր, բայց, միևնույն ժամանակ, բաղմերախտ սպարապետի պահանջը մերժել չեր կամենում, ասաց նրան.

— Աչքեր կուրացնելը նույնպիսի հանցանք է, վորպիսին և սպանությունը։ Ես չեմ կուրացնեմ Բերին, այդ հանցանքը քեզ վրա պիտի ծանրանա, բայց չես չեմ կամենում, վոր այդ պիտով լավագույն նպատակներիդ մեկը մնա անդործադիր։

— Ի՞նչ նպատակ, հարցրեց սպարապետը զարմանալով։

— Դու ցանկանում եյիր յերդումից ազատվել և Գառնի՝ քո տունը վերադառնալ. բայց դիտցի՛ր, վոր Բերին կուրացնել մասից յետ կաթուղիկոսը չի լուծիլ քո յերդումը։

— Թո՛ղ հավիտյան չես իմ տունը չվերադառնամ. Թո՛ղ իմ վոսկորները հայրենական հողի մեջ չթաղվին, միայն Թե հայրենիքս այս դաժան Թշնամուց ազատվի, բացականչեց Մարզպետունին։ Ես Թե չես համոզված լինելի, Թե Բերը ազատությունը ստանալուն պես մեր սահմանները չպիտի խռովե, կխնդրեի ներել նրան։ Բայց դա ոճի սերունդ է և չի դադարիլ Թունավորելուց, մինչև վոր չջախջախվի։ Ես Թե դու կարծում ես, Թե բանտարկելով պիտի ազատվիս նրանից, սխալվում ես, վորովհետև մենք չունինք մի բերդ, վորի դռները կաշառներով չբացվին... Իսկ կաշառվող սիրելիքներս ամեն տեղ կգտնվին։ Այդ մարդուն պետք է սպանել կարս, ցույց տալ նրան ա՛յն յեկեղեցին, վոր կամենում եր վրաց Ծեռով ոծել և ապա հենց այդ յեկեղեցու առաջ էլ կուրացնել, վորպեսզի Թե՛ ինքը և Թե՛ յուրայինները ճա-

նաչեն հայոց յեկեղեցու զորութիւնը։ Այս պատիժը, արդարև, խիստ է. բայց յեթե կայիափան անմեղ Հիսուսին սպանելու համար կարող եր ասել՝ «լաւ է մի այր մի մեռանիլի ի վերայ ժողովրդեան և մի՛ ամենայն ազգս կորնչեսց», արդյոք նույն խոսքերը չի՞մ կարող կրկնել յես այս չարագործի նկատմամբ, վոր հաղարավոր զինվորների կորստյան պատճառ դարձավ... Վորքա՛ն վնասներ և կրել մեր յերկիրը դեռ ևս դրա հայր Գուրգենն իչխանից։ Եթե մինչդեռ նրա մահվամբ հույս եյինք ստանում աղատվել հյուսիսային սահմանի մշտական թշնամուց, նրան հաջորդեց վատթարագույնը...։ Բայց ասում՝ վոր քաղցր աչքով է նայում մեզ վրա, ահա մատնել է նրան մեր ձեռը. յեթե մենք այժմ չկուրացնենք նրան, հետո նա ինքը մեզ կկուրացնե, նորեն մեր հայրենի յերկիրը խռովելով։ Այն ժամանակ մեզ կանիծե մեր ժողովուրդը, կանիծեն և հոգիները ա՛յն զինվորների, վորոնք զոհվեցան այդ ամբարտավանի քմահաճույքյան...։

Թագավորի վրա տպավորություն արին սպարապետի խոսքերը և նա, չկարողանալով այլևս դիմադրել նրա պահանջին, մանավանդ վոր մյուս իշխաններն ել համակերպել եյին արդեն Մարզպետունուն, խոստացավ կուրացնել Բերին։

Բայց վորովհետև սպարապետը կասկածում եր, թե թագավորը կարս վերադառնալուց կարող է թագուհու թախանձանքներից հեշտությամբ հաղթահարվիլ, ուստի հրաման տալ, վոր հենց կարս մտնելու որ վորոշյալ պատիժը գործադրե։

Եվ ահա՛ այդ եր պատճառը, վոր Բերին ուղարկել եյին ս. Առաքելոց յեկեղեցին և իրանք ել աճապարում եյին այնտեղ։

Յերբ թագավորը յուր հետևորդներով հասավ նորակառույց տաճարը, այդտեղ արդեն ժողովված եր հանդիսատեսների մեծ բազմություն։ Այդտեղ եր և Բերը՝ յուր զերված իշխաններով, վորոնց բոլորին դարձյալ հսկում եյին նիզակավոր վանականե։

Թագավորը, վոր կարծես խուսափիլ եր թագուհու աչքից, վորպեսզի կարելություն չտա վերջով յուր խոստումը կատարե, ըստ վորում վախենում եր՝ թե գուցե ուշացնելով՝ ստիպված լինի հետո դժվել խոստմանը, ձիուց իջնելուն պես մոտեցավ Բերին և բռնելով նրա ձեռքից, ասաց.

— Արի՛, տե՛ս այն յեկեղեցին, վոր կամենում եյիր վրաց ծեսով ծնել...

Այս ասելով՝ նա ներս մտցրեց Բեր Թաղավորին յուրաչեն տաճարը և ցույց տալով նրան նրա ներքին դեղեցկություննե-րը՝ շարունակեց.

— Տե՛ս, վորքա՜ն դեղեցիկ է: Նա չինված է քառաթև, բա-ժանված և տասներկու յերևաների: Ներանցից ամեն մինի վրա նկարված է առաքյալներից մինի պատկերը. այն առաքյալների, վորոնցից և վոչ մինը վոտք չէ դրել քո յերկիրը քրիստոնեու-թյուն քարոզելու համար: Նայի՛ր դմբեքին, վո՛րքան բարձր և դեղեցիկ: Նա կանղնած է անույշն կամարների վրա: Նա-յի՛ր նույնպես խորանին, նրա բարձրադիր բեմին, վոր չի նման-ում վրաց ցածուն բեմերին, ուրեմն և չի կարող վրաց ծեռով ածվել: Նայի՛ր, տե՛ս բաց աչքերով, վորովհետև այլևս չպիտի տեսնես նրան:

Այս ասելով Թաղավորը դուրս հանեց Բերին, և ցույց տա-լով նրան յեկեղեցու արտաքինը՝ ասաց.

— Տեսնո՞ւմ ես, տաճարն արդեն պատրաստ է, մենք պետք է նրա նավակատիքը կատարեյինք, բայց դու մեղ խանգարե-ցիր, վորովհետև ցանկանում եյիր քո ծեռով ածել նրան: Այդ, ի հարկե, աստված չհաջողեց քեզ, ըստ վորում նա հակառակ է ամբարտավաններին: Բայց մեր յեկեղեցու ածման դու կմաս-նակցես ուրիշ կերպ: Մենք սովորություն ունինք յեկեղեցին ածելուց առաջ դոհ մատուցանել աստծուն: Ահա՛ դոհի այդ վոչ-ջակերը դո՛ւ կմատակարարես մեզ, վորպեսզի գործած հանցան-քըդ մի փոքր քավես...:

Այս խոսքերից յետո նա թողեց Բերին և դառնալով Մարդ-պետունուն, ասաց.

— Սպարապետ, ահա՛ այն մարդը, վոր մահ պատճառեց քո հինդ հարյուր քաջերին. տո՛ւր նրան այն պատիժը, վոր վո-րոշել և ռազմական խորհուրդը:

Այս ասելով՝ Թաղավորն աշտանակեց յերիվարը և յուր ա-զատախումբ թիկնապահներով հեռացավ յեկեղեցուց:

Սպարապետը մոտեցավ Բերին, վոր արդեն ընկճված և վշտահար նայում եր յուր շուրջը, և ասաց.

— Որենքներ կան աշխարհում, ո՛վ ասիսատց Թաղավոր, վորոնք ծառայում են հասարակաց բարվոքուն և յերջանկությա-ն. այդ որենքներն անարդողին՝ պատիժ և հասնում յերկնքից.... Դու քո կյանքում շատ այդպիսի որենքներ ես ոչոնահարել և չատերի բարիքն ու յերջանկությունը կապտել: Արդ, յեթե այ-

սոր ծանրանա քեղ վրա յերկնային մի պատիժ, մի անիծք դա-
ժեզ, այլ անիծքը նրա՛ն, վոր պատճառ դարձավ քո դժբախտու-
թյան և վորի անունն և ինը, անվանյալ Ախիաքարայ Թադա-
վորց...:

Այդ ասելով՝ նա հրամայեց դահճապետին՝ կատարել կան-
խավ իրան տրված պատվերը:

Վերջինս առաջնորդեց ինին մերճակա զնդանը, ուր և ան-
միջապես նրա աչքերը վորեց:

Ցերը Աքաս Թագավորը հասավ պալատ, Թադուհին, վոր
արտատրուփ սպասում եր նրան, առաջ յեկավ և հարցրեց.

— Ո՞ւր մնաց յեղբայրս, մեծափառ տեր:

— Նրան Թողեցինք յուր պատժարանում, պատասխանեց Թա-
գավորը, աչխատելով խուսյս տալ Թադուհու հայացքից:

— Ի՞նչ. պատժեցի՞ք ուրեմն նրան... բացականչեց Թադու-
հին սարսափելով:

— Կուբացրինք, յեղավ արքայի պատասխանը:

Թադուհին մի սուր ճիչ արձակեց և նվազելով ընկավ նա-
ժիշտների գիրկը:

Անցավ մի քանի չաբաթ: Ախիաքիո ժողովուրդը և նրա
իշխաններն իմացան իրանց Թագավորի դժխին հասած չարիքը:
Ուստի վերջիններս մեծամեծ ընծաներով յեկան Աքաս արքայի
մոտ և խնդրեցին իրանց կուռ Թագավորի և դերյալ իշխան-
ների ազատությունը:

Աքասը վոչ միայն ծանր փրկանք նշանակեց դրա համար,
այլև պահանջեց պատերազմական այն վնասը, վոր իրեր յուր
անխոհեմ քայլով պատճառել եր իրան:

Ախիաք իշխանները կատարեցին արքայի պահանջը, հատու-
ցին նրան թե վորոշյալ փրկանքը և թե ռազմական վնասը և
մշտական հաշտության դաշն կռնքով նրա հետ, վերադրին կուռ
Թագավորին ու դերյալ իշխաններին և դեպի իրանց յերկիրը
վերադարձան:

Այս հանդամանքը մի կողմից Թագուհու վիշտը մեղմեց,
քան վորում յեղբայրը՝ Թեպետև կուռ, այսուամենայնիվ, յուր

պիտուը վերադարձավ, իսկ մյուս կողմից՝ արդյունք բերավ դանձարանին, լիովին ծածկելով պատերազմական վնասները։

Այսպիսով ահա վերջացավ Ցլիկ-Ամրամի առեղծած հյուսիսային ուսումնական ճանապարհը և հայոց յերկիրը՝ այդ կողմից ևս ապահովվելով, սկսավ վայելել յերկարամյա խաղաղության պտուղները։

ԺԵ

ՀԵՐՈՍԻ ՎԱԽՃԸՆԸ

Աբաս թագավորն այնուհետև յուր ուշադրությունը նորին յուր յերկրի ներքին բարեկարգության վրա դարձրեց, աշխատելով ընդ նմին դաշնակից իշխանների հետ ունեցած բարեկամությունն ամրապնդել, իսկ դժդոհ իշխանների մտերմությունը վաստակել։

Այդ բանի համար հարկ տեսավ յուր նորաշեն Կաթուղիկեյի նավակատյաց հանդեսը, վոր նա կատարեց 943 թվականի աշնանը։

Այդ հանդիսին, թագավորի հրավիրանոք, ներկա յեղան՝ Անանիա կաթուղիկոսը, վոր նոր եր Աղթամարա աթոռը բարձրացել, Հայաստանի նախագահ յեպիսկոպոսները, վասպուրականի թագավոր Աշոտ-Դերենիկը, Աղձնյաց, Մոկաց և Տուրուբերանի տերերը, Սյունյաց, Գուգարաց, Տայոց և այլ տեղերի իշխանները, այլ և Սահակ սևադայի Դավիթ վորդին և ուրիշ շատ նշանավոր մարդիկ ու աշխարհախոսմբ բազմություն։

Այդ բոլորի ներկայությամբ կարսի արքայաշեն կաթուղիկեն ծծելուց և մի քանի որ շարունակ չքեղ տոներ ու հանդեսներ կատարելուց յետո, Մարզպետունի Գևորգ իշխանի առաջարկությամբ կազմվեցավ հայկական իշխանապետության մի ընդհանուր դաշնագրություն, վորի զորությամբ բոլոր հայ իշխանները, նախարարները և թագավորող տները՝ կապվում, մխիթարում եյին իրի սիրտ և հոգի և յերդմամբ պարտավորվում, վոր հայրենիքի վորևե մի մասին վտանգ սպառնացած դեպքում՝ ամենքը միահամուռ ղինվին հակառակորդի դեմ և պատրաստ լինին Արարատյան նախագահ արքայի հրամանով գործելու։

Այդ դաշնագրությունը կարդաց նոր ծծված Կաթուղիկեյում ինքը Անանիա կաթուղիկոսը և նրան ստորագրեցին Արարատյան

ու վասպուրականի թագավորները և բոլոր հայ իշխանները, ընդ նմին և յերդվելով՝ սուրբ և անխախտ պահել այդ միությունը, վոր սլիտի ծառայեր ընդհանուր հայրենիքի զորացման և հայ ժողովրդի մշտական բարօրության։

Արտա թագավորն այնուհետև ինձադին ընծաներով պատվեց յուր բարեբաստիճան հյուրերին, վորոնք և բաժանվեցան նրանից մտերմական սիրով։

Բայց թագավորն իշխաններից մի քանիսին առանձին շնորհներ արժանացրեց։ Այսպես՝ որինակ, Աղձնյաց ու Մոկաց տերերին, վորոնք իրանց մշտապատրաստ զորքերով ողնում էլին զրքայական բանակին, նվիրեց նոր կալվածներ և տվավ իշխանատեության սիրաղան։

Սյունյաց հարազատներին, վորոնք սկզբից մինչև վերջը հավատարիմ մնացին զահին, նվիրեց իրանց նահանգի ամեմանակից մի քանի գավառներ։

Վահրամ սեպուհին, վոր Աշոտ արքայի ձախողակ որներից արդեն միացել եր Մարզպետունու հետ և անձնվիրաբար մասնակցել նրա կրած նեղությանց, մղած կռիվներին և տարած հաղթանակներին, կարդաց լիազոր վերակացու Ուտյաց և Արվանից աշխարհների վրա, հատկացնելով նրան այն բոլոր արտյունքներն ու իրավունքները, վոր վայելում եր Ցլիկ-Ամրամը Աշոտ-Երկաթի որով։

Իսկ Սահակ Սևադայի վորդուն, այն է Դավիթ իշխանին կարգեց նորեն Գարդմանա տեր, տալով նրան այդ յերկրի իշխանությունը, վորպեսզի այդպիսով՝ արքայական զահի դեմ ունեցած դժտությունը, վոր սկսված եր Աշոտ-Երկաթի որով, մեջտեղից վերացնե։

Ցեվ վորովհետև այդ միջոցներում Սահականույշ թագուհին Երազգավորից քաշվել եր յուր հայրենի յերկիրը Գարդման, վորպեսզի կյանքի մնացորդը յուր յեղբոր հետ անցուցանե, ուստի Աբաս թագավորը՝ ի պատիվ այրի թագուհու՝ նվիրեց նրա յեղբորը նաև Աղվանից յերկրի մի քանի գավառները։

Գալով Գևորգ Մարզպետունուն, թագավորը չկարողացավ ոչինչ արժանավոր հատուցումն անել այդ իշխանին, վորի անզուգական հայրենասիրությանն եր պարտական ինքը՝ յուր զահի հաստատությունը, իսկ հայրենիքը՝ յուր բարօրությունը։

— Իմ բոլոր թագավորության մեջ չկա այնպիսի մեծագին գանձ, վորով կարողանամ քո յերախտիքը փոխարինել, ասաց

նա մի որ Մարզպետունուն յուր բոլոր իշխաններն ներկայությամբ.— Միակ և արժանավոր պարգևը «Հայրենյաց յերախտավորի» անուն է, վոր այսորվանից յես տալիս եմ քեզ...

Այս ասելով Թաղավորը բռնեց Մարզպետունու ձեռը և ջերմագին համբուրեց։

Ներոնի իշխանն զգացվեցավ և գրկելով Թաղավորին, համբուրեց նրա գլուխը և ասաց.

— Իմ վարձատրությունը յես ստացա արդեն աստծուց, այդ այն է՝ վոր տեսնում եմ հայրենիքս խաղաղ ու յերջանիկ, արքայական գահը՝ ապահով, հայ իշխանները՝ միաբան, քշնամիները՝ հալածական։ Այժմ արդեն կարող եմ հանդիստ սրտով ասել. «Արդ, արձակյա՛ զծառայս քո, տեր, զի տեսին աչք իմ զփրկութիւն Իսրայելի...»։

Ի՞նչ եր անում այնուհետև «Հայրենյաց բարերարը»։

Նա զարձյալ ապրում եր արքունիքում, իրավունք չտալով իրան վերադառնալ Գառնի, և հետզհետե զարդարվում ծերության ալիքներով։

Ճիվ Թեզետ տակավին կրում եր արքայական ղորաց սպարապետի կոչումը, այսուամենայնիվ, նրա պաշտոնը կատարում եր Գոռը. իսկ ինքը վայելում եր անդորր հանդիստ, վերապահելով իրան «ընդհանուրի հոր» և բազմափորձ խորհրդականի անունն ու պարտավորությունները։

Արքունիքում նրան սիրում ու վայելում եյին՝ սկսած Թաղավորից մինչև վերջին դրանիկը. իսկ դրսում՝ պաշտում եր նրան ժողովուրդը։ Գևորգ Մարզպետունու անունը նվիրական եր դարձել ժամանակակից հայի համար, և յերբ նա դուրս եր յելնում արքունիքից՝ վոստանում շրջելու կամ ղորքերին այցելելու ցանկությամբ, նրան դիմավորում եյին ամենքը ցնծության աղաղակներով։ Ամեն վոք փափագում եր տեսնել նրան, լսել նրան և վոգևորվել նրա գրույցներով։ Վորովհետև ծերունի սպարապետը, վոր արդեն վաստակել եր դործելուց, չեր դադարում սակայն յուր հայրական խրատներով և իշխանական հորդորներով կարող յերիտասարդությունը դեպի դործունեություն մղելուց։ Նա նրանց մեջ զարթեցնում եր սիրտ և մխության հոդին և հայրենասիրական զգացմունքները վառում։

— Ձեղանից ամեն մինը կարող է ինձ ղերապանծիլ, ասում եր-նա հաճախ յուր շուրջը խմբված յերիտասարդներին. հարկավոր է միայն անկեղծությամբ սիրել հայրենիքը, անձնվիրաբար գործել և վտանգներն արհամարհել։

«Ձերը չես դժբախտության ոլորում ասպարեզ ինձ միայնակ գործելու, ինձ հետ ունեցի միայն քսան մարդ. շատերն ինձ խելագար համարեցին, իսկ շատերն էլ իմ հանդգնությունը ծաղրեցին։ Դրանց թվումն էին և այն իշխանները, վորոնք հազարավոր զինվորներով վակվել էին սեփական բերդերում...։ Բայց յես հույս դրի աստուծո և իմ կամքի վրա, և, ինչպես դիտեք, հաղթեցի ամեն դժվարության. ցույց տվի աշխարհին, Ձև ի՞նչ կարող է անել մի մարդը, յերբ նրան վոգևորում եր ղեպացմունքներից աղնվագույնը, այն է՝ հայրենիքի սերը։

«Ձեղանից ամեն մինը թո՛ղ դինվի այն հավատով, վոր ունեցի յես դեպի հայրենյացս ազատան, ա՛յն սիրով, վոր տածում եմ դեպի իմ յեղբայրները և այն հուսով, վոր դրել եմ աստուծո վրա և կտեսնեք, վոր անկարելին՝ կարելի կդառնա, արդելքները իրանք իրանց կվերանան և վտանգներն անհետ կկորչեն։ Ամենից ավելի սիրեցեք միությունը, վորովհետև դա այն ուժն է, վոր լեռներ և պատառում, ամրարտակներ և կործանում, դետերի ընթացքն և կասեցնում։ Սովորեցեք գոհել այդ միության ամենը՝ ինչ վոր ունիք աշխարհում թանկագին և նա կրերև ձեղ և ձեր վորդոց ա՛յն յերջանկությունը, վորին շատերն են վորոնում, բայց շատ քչերն են ժառանգում...։

Ահա՛ այդպիսի ղրույցներով եր վոգևորում Մարդպետունի իշխանը յուր շուրջը խմբվող և գործելու ուժ ու ցանկություն ունեցող մարդկանց, հավատացած լինելով, վոր այդ ղրույցները ևս արդյունք սիրո բերեն այնպես՝ ինչպես և բերավ յուր գործունեությունը։

Անցան գրեթե մի քանի խաղաղ տարիներ և «Հայրենյաց բարերարը» որ ըստ որե խոնարհեց դեպի յուր կյանքն յերեսին։

Ձերը նա մոտ ղրաց յուր վախճանը, կանչեց յուր մոտ Գոռ վորդուն և Շահանդուխտ հարսին, վորոնք արդեն զավակներ ունեյին և ավալ նրանց վերջին պատվերը.

— Աղջիկ զորությունը ընտանիքների մեջ է, ասաց Բունին. զորավոր է այն աղջիկը, որը ունի զորավոր ընտանիքներ. սիրով, միությամբ, առաքինի և հավատարիմ կենակցությամբ ապրող ընտանիքներ: Այն գեղջուկ խրճիթները, այն աննշան տնակները, որոնց մեջ ապրում են ցնցոտիներով ծածկված մանկտիք և որոնց շատ անգամ արհամարհում են մեծ մեծ իշխանները, նույնիսկ ղրանք են, որ ամփոփում են իրանց մեջ հայրենիքի ուժը: Ով որ կամենում է զորավոր տեսնել յուր աղգը և հաղթող՝ հայրենիքը, նա ամենից առաջ ընտանիքները պիտի խնամե. ինչպես մի հոգատար արքայադուստր, որ ծառի ճյուղերը զորացնելու և նրանից պտուղ քաղելու համար խնամում է ծառի արմատները, որոնք թեպետ հողի մեջ են թաղված և չեն յերևում մարդկանց, բայց իրանց մեջ ամփոփում են ծառի կենդանությունը: Ինչպես որ չի կարող ապրել այն տունկը, որի արմատները չորացած են կամ որոշ նակեր, այնպես և կանդուն չի մնալ այն աղգը, որի ընտանիք ներում տիրում է ապականություն, որոնցից հալածական սերը, միությունը, առաքինությունը, և, համառանալով, առաջ ծո յերկյուղը:

«Եթե այսքան վնասակար են հանդիսանում աղգի և հայրենիքի համար հասարակ ժողովրդի ապականյալ ընտանիքները, ո՛րքան ևս առավել վնասակար ու կործանիչ կարող են լինել իշխող կամ տիրող անձանց ընտանիքները, յեթե արատավոր են նրանք: Ձեզ որինակ Աչոտ-Յերկաթի ընտանիքը... որքա՛ն չարվերի, արատավոր և հեծծոթյան պատճառ դարձավ այդ հղոր ղյուցազնի մարդկային մի թուլությունն յուր ընտանիքում. որքա՛ն վնասներ պատճառեց նույն այդ թուլությունն նուր հայրենիքին...

«Այս ամենը դիտենալով, իմ սիրասուն զավակներս, չեզնի՛ք իմ վերջին պատվերը և կատարեցեք նրան սրբությա՛մբ. այդ պատվերը ամփոփում է յուր մեջ յերկու բառ.— «սիրեցի՛ք միմյանց»:

«Այդ սերը, այո՛, կերջանկացնե ձեզ, կերջանկացնե և ձեր զավակներին: Նա ուրախության աղբյուր կբղխե ձեր ընտանեկան սրահի մեջ և աստուծո որհնությունը կիջնեցնե Մարդկության տան վրա, որի ժառանգներն եք դուք...»:

Ներունին լռեց: Գոռն ու Շահանդուխտը ծունկ խոնարհեցին նրա առաջ և ջերմագին համբուրելով նրա աջը, խոստացան

...րութ չամբ կատարել այդ արժանավորագույն հոր սրբազան ...ամքը:

...աս Թադավարն իմա...վ, վոր ծերունի իշխանը որբատուր ...նում է, ուստի դիմեց նրա մոտ իմանալու համար, թե կկամենար, վոր մահվանից հետո յուր մարմինն ամփո-...:

...Իմ յերդումն արդելում է ինձ Թաղվել Գառնիում, ասաց ...Թադևոսի իմ հայրենիքի վո՛ր անկյունում վոր կկա-...:

...կցանկանայի քո մարմինը տանել Բագարան և Թաղել ...ունյաց պայազատների դամբարանում, ասաց Թագավորը:
...Բագարան... այո՛, տա՛ր ինձ այնտեղ. բայց մի՛ Թաղիր ...դամբարանում: Այնտեղ, այո՛, Թաղված են քո հա-...հայրը և նահապետ յեղբայրը. կցանկանայի հանգչել ...մոտ: Բայց այնտեղ Թաղված է նաև Աշոտ բռնավորը: ...հեռացրել է ինձ այդ դավաճանից. մահը չպիտի միացնե...
...Ա՛ւր կցանկանաս ուրեմն, հարցրեց Թագավորը:
...Ամփոփի՛ր ինձ մի՛շտ աբերդի առաջ, ժայռերի բարձրու-...յրա, վորտեղից կարողանամ հսկել Աշոտ բռնավորի շեր-...վորների նա յուր շուրջն ամփոփված սրբերին չդավա-...պատուհասեցնց իշխանը նվաղած ձայնով:
...քանի որից յետ ՀՀայրենիքի բարեբարբը յուր արդար ...ավանդեց:
...Թագ արքունիքը, աթոռանիստ կարսը և Արտաշատյան ...ը ապագին նրա մահը, իսկ Արտա Թագավորը արքայա-...րութիւն պատրաստեց «մեծ հայրենասերի»

...րդ պատուհասի իշխանի մարմինն ամփոփեցին Բագարանի ...նդրի առաջ, ժայռերի մի ահավոր բարձրության վրա, ...որտեղ կսնամ էին Ախուրյանի ալիքները՝ հավիտենա-...հնչող մրմունջով հայրենասեր դյուցազնի սիրազարծու-...համար:

...Յետ Թագավորը ազատասիրության պաշտոնը Հանձնեց ..., իբրև «մեծ հայրենասերի» արժանավոր վորդուն, իսկ ...նատուռ. չիմանի վրա հրամայեց կառուցանել տուբր Գիւտ ...յ յիշատակին, վոր Բագրատունի անհետացած ավերակների ...ակ կանգնած է մինչև այսոր:

ՎԵՐՋ

Գլխ. խմբագիրներ՝ Հր. Գրիգորյան, Հ. Գոնոյան
Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալթունյան
Սրբագրիչներ՝ Վ. Ավագյան և Մ. Խոխոռուձի
Գլխավոր սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

[20 к.]

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Պատվեր 244. Տիրաժ 5000.
Թուղթ 62×94. Տպագր. 34 մամ.
Մեկ տառ. 38·400 նշան.
Ներս. տրոհվելիք և արտադրության 9 մարտի 1939 թ.
Տպագրության համար 11 մայիսի 1939 թ.

Հայկական ՍՍՀ ԳԱ տպագրատուն, Ծերենց, Լենինի 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220028699

A 28699